

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
ասպիրանտների և հայցորդների
2013թ. նստաշրջանի
նյութերի ժողովածու**

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2014

ՀՏԴ 340:06

ԳՄԴ 67

Ե 540

Հրատարակության է երաշխավորել Երևանի պետական
համալսարանի գիտական խորհուրդը

Գլխավոր խմբագիր՝

իրավ. գիտ. դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
պրոֆեսոր Գ.Ս. Ղազինյան

Խմբագրակազմ՝

իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Յ. Գաբուլյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս.Ա. Դիլբանդյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Ղանիելյան
իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Մ. Հայկյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Քոչարյան

Ե 540 ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ-
ների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի
ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ:
Խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ հրատ., 2014, 384
էջ:

Ժողովածուն ընդգրկում է 2013թ. դեկտեմբերի 14-ի նստաշր-
ջանի զեկուցումները, որոնք վերաբերում են իրավունքի տարբեր
ճյուղերի հիմնախնդիրներին: Կարող է օգտակար լինել ուսանողնե-
րին, մագիստրոսներին, ասպիրանտներին և իրավագիտության
հարցերով հետաքրքրվողներին:

ՀՏԴ 340:06

ԳՄԴ 67

ISBN 978-5-8084-1853-0

© Հեղ. կոլեկտիվ, 2014

© ԵՊՀ հրատ., 2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սայաթ Բաղայան Ժողովրդական Նախաձեռնություն՝ ՈՐՊԵՍ ԱՆՄԻՋԱԿԱՆ Ժողովրդավարություն ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ.....	7
Անահիտ Եսայան ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ.....	14
Մերի Սարգսյան ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՐՈՇ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱԿՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	23
Նելլի Առաքելյան ԱՆՁԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ.....	35
Լևոն Շախապոյան ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 1990-1995 թթ.43	
Արսեն Թավադյան ՀԱԿԱՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՆՎԱԿԵՐ ԳՈՐԾԱՐՔ.....	63
Տաթևիկ Ասատրյան ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.....	71
Նաիրա Մանուչարյան ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ.....	89

Անճա Ավետիսյան ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ	101
Հեղինե Հախվերդյան ՊԱՐՏԱԴԻՐ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՀՀ-ՈՒՄ. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ.....	111
Վարդուշ Եսայան ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅՑԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՏՆՕՐԻՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԱՐ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ	124
Վահագն Դալլաթյան ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	137
Վահագն Գրիգորյան ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՐԸ ԲԵԿԱՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՅԱՑՎՈՂ ՈՐՈՇՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ...	156
Աշխեն Դարսլյան ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՎԱՐՏԸ ԳՈՐԾԸ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՓՈՒԼՈՒՄ	181
Գոհար Սիմոնյան ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ՍԿԻՋՐ. ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ	191
Անճա Ասատրյան ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՎԻԿՏԻՄԱՅՆԱՑՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՒՂԴԻՉ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ	203
Գոհար Հակոբյան ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ	221

Ժենյա Ստեփանյան
 ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
 ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԵՑԻԴԻՎԻ ԴԵՊՔՈՒՄ 238

Տաթևիկ Սուլջյան
 ՎՃՌԱԲԵԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ
 ՇԱՀԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 250

Հայկ Սարգսյան
 ԴԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ Ի
 ՊԱՇՏՈՆԵ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐՈՒՄ 269

Անահիտ Դարոթյունյան
 ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ
 ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 283

Նելլի Աղաբաբյան
 ԱՆՉԱՓԱՅԱՍԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՀԱՆՑԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
 ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ԱՊԱՑՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ
 ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 299

Քնարիկ Վարդանյան
 ՓԱՆՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
 ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ 318

Զինավոր Մեղրյան
 ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
 ՄԱԿ-Ի ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
 ԱՅԼ ԴԱՏԱԿԱՆ ԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ 338

Լաուրա Բադալյան
 ԼԵՈՒՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԿԱՆ
 ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ
 ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ 351

Անի Աթանեսյան	
ԱՅԿ-ՈՒՄ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԶԱՐԳԱՑՈՂ	
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ	
ԱՌԱՆՋՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	365

Անի Խլղաթյան	
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ	
ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ	
ԱՌԱՆՋՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	377

**Ժողովրդական նախաձեռնություն՝
ՈՐՊԵՏ ԱՆՄԻՋԱԿԱՆ Ժողովրդավարություն ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ**

Ժողովրդական օրենսդրական նախաձեռնությունը (այսուհետ՝ ժողովրդական նախաձեռնություն) անմիջական ժողովրդավարության ինստիտուտներից է և իրենից ներկայացնում է ընտրական իրավունք ունեցող անձանց խմբի իրավունքն օրենսդիր մարմնում հանդես գալու օրենսդրական նախաձեռնությամբ, որը պառլամենտի կողմից ենթակա է պարտադիր քննարկման²: Մեր կարծիքով, նպատակահարմար է Հայաստանի Հանրապետությունում նույնպես ներդնել ժողովրդական նախաձեռնության ինստիտուտը՝ ներքոնշյալ հիմնավորումներով.

1. ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ իշխանությունը պատկանում է ժողովրդին, որն այն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Ժողովրդի կողմից իր իշխանության անմիջական իրագործումը ՀՀ սահմանադրական կարգի հիմունքներից մեկն է և օրենքների ստեղծմանը քաղաքացիներին մասնակից դարձնելը կարևոր նշանակություն ունի հենց օրենսդիր մարմնի համար՝ որպես «հետադարձ կապի» գործոն: Սահմանադրությամբ արդեն իսկ ամրագրված անմիջական ժողովրդավարության մյուս ինստիտուտների հետ մեկտեղ ժողովրդական նախաձեռնության ամրագրումը լրա-

¹ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ն.Ա. Այվազյան:

² Казакова В. В. Институт народной законодательной инициативы в России и в зарубежных странах // Современные аспекты правоприменительной практики в России: сборник статей Всероссийской научно-практической конференции (Казань, 30-31 марта 2009 года). - Казань: Печать-Сервис XXI век, 2010. - С. 101.

ցուցիչ իրավաբանական երաշխիք կհանդիսանա անմիջական ժողովրդավարության ամրապնդման, ժողովրդաիշխանության գաղափարների առավել ամբողջական իրացման և զարգացման համար: Ժողովրդական նախաձեռնությունը հնարավորություն է տալիս օրենսդրությամբ առավել համակողմանիորեն արտացոլել իրական հասարակական պահանջունքը և հնարավորինս համակարգված համադրել առանձին քաղաքացիների բազմազան շահերը:

2. Չնայած որոշ նմանություններին՝ օրինաստեղծագործությանը քաղաքացիների մասնակցության խթանմանն ուղղված մյուս ինստիտուտները, ինչպիսիք են օրինագծերի հանրային քննարկումները, պատգամավորների հանդիպումներն ընտրողների հետ, չեն կարող փոխարինել ժողովրդական նախաձեռնությանը: Ճիշտ է, քաղաքացիների նախաձեռնողականությունը նշված դեպքերում ևս կարող է ելակետ հանդիսանալ պատգամավորների, պետության կողմից նախաձեռնություն դրսևորելու համար և նման նախաձեռնությունները կարող են մեծապես նպաստել իրավաստեղծ գործունեությանը, սակայն դրանք, ըստ էության, իրավաբանական իմաստով իրենցից չեն ներկայացնում օրենսդրական նախաձեռնություն, այսինքն՝ քաղաքացիների խմբի հնարավորությունն է ուղղակիորեն օրենսդիր մարմնին ներկայացնելու օրենսդրական առաջարկություններ:

3. Ներկայիս ընտրական համակարգերի պայմաններում ենթադրվում է, որ ներկայացուցչական մարմիններում պետք է հայտնվեն միայն ժողովրդի մեծամասնության վստահությունը վայելող անձինք, իսկ ընտրողների այն մասը, որի կողմից քվեարկված թեկնածուները չեն ընտրվել, մինչև հաջորդ ընտրությունները զրկվում է ներկայացուցչական մարմնում իր պահանջունքներով և հայացքներով հավուր պատշաճի ներկայացված լինելու հնարավորությունից: Նման պայմաններում ժողովրդական նախաձեռնության ինստիտուտը թույլ կտա հասարակության այդ շերտին, ինչպես նաև պառլամենտում չներկայացված կուսակցություններին հանդես գալու օրենսդրական նախաձեռնություններով, որոնք կարտահայտեն հասարակությունում գոյություն ունեցող քաղաքական և

գաղափարական հայացքների առավել ամբողջական պատկերը¹:

4. Ժողովրդական նախաձեռնության ինստիտուտը օրենսդիր մարմնում իրենց հուզող և օրենսդրական կարգավորում պահանջող հարցերը պարտադիր քննարկման առարկա դարձնելու հնարավորություն կստեղծի նաև այն քաղաքացիների համար, ովքեր թեև քվեարկել են պառլամենտում ներկայացված քաղաքական ուժերի օգտին, սակայն իրենց հետաքրքրող հարցերն ընտրված ներկայացուցիչների մոտ այս կամ այն պատճառով մնում են անարձագանք: Ընդ որում, Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով, որպիսի պարագայում չի բացառվում տարբերությունը հասարակական պահանջմունքի և դրա՝ պատգամավորի կողմից ընկալման միջև: Ժողովրդական նախաձեռնության ինստիտուտը թույլ կտա մեղմել այս հնարավոր տարբերությունը:

5. Այս ինստիտուտը կարելի է համարել անձնական և հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու իրավունքի դրսևորումներից մեկը²: Տարբերությունն անգամ նշված երկու նախաձեռնությունների առարկայի մեջ չէ, քանի որ քաղաքացիները Սահմանադրության 27.1 հոդվածով նախատեսված իրենց իրավունքի իրագործմամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին կարող են ներկայացնել նաև իրավական ակտերի նախագծեր, ինչն ուղղակիորեն բխում է նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածից: Սահմանադրության 27.1 հոդվածով ամրագրված իրավունքի և ժողովրդական նախաձեռնության տարբերությունը դրանց հետևանքների մեջ է. ժողովրդական նախաձեռնության կարգով ներկայաց-

¹ Волкодаева Н. А. Народная законодательная инициатива Российской Федерации и необходимость ее правового регулирования // Проблемы права. - Челябинск, 2010, № 3. - С. 42.

² Нудненко Л. А., Попова М. А. Концепция Федерального закона "О народной законодательной инициативе в Российской Федерации" // Конституционное и муниципальное право. - М.: Юрист, 2008, № 9. - С. 5.

ված օրինագիծը, ի տարբերություն Սահմանադրության 27.1 հոդվածով ամրագրված իրավունքի իրագործմամբ ներկայացված օրինագծի, սկիզբ է դնում օրենսդրական գործընթացին, առաջացնում է օրենսդիր մարմնի պարտականությունը քննարկելու այն օրենսդրական գործընթացի համար սահմանված կանոններով և ընդունելու որոշում:

6. Ժողովրդական նախաձեռնությունը նմանություններ ունի նաև ժողովրդական հանրաքվեի ինստիտուտի հետ, սակայն տարբերությունը կրկին հետևանքների մեջ է: Հանրաքվեի պարագայում վերջնական որոշումն ընդունում է ժողովուրդը, օրենսդիր մարմինը տալիս է միայն իր համաձայնությունը հարցը հանրաքվեի դնելու վերաբերյալ, իսկ ժողովրդական նախաձեռնության դեպքում ժողովուրդը հանդես է գալիս միայն հարցը բարձրացնողի դերում՝ վերջնական որոշում ընդունելու խնդիրը թողնելով օրենսդիր մարմնին:

7. Ժողովրդական նախաձեռնությամբ հանդես գալու համար պահանջվող ընտրողների նվազագույն թվի որոշման հարցում համաշխարհային սահմանադրական պրակտիկայում հանդիպում է երկու մոտեցում՝ բացարձակ թվի նշում կամ տոկոսային (կոտորակային) մեթոդի սահմանում: Իհարկե, առավել համարժեք պատկեր ստանալու համար նպատակահարմար է առաջնորդվել ոչ թե բացարձակ թվի նշումով, այլ կոտորակային կամ տոկոսային մեթոդով: Սակայն այս դեպքում առաջ են գալիս մի շարք խնդիրներ՝ կապված այն հարցի հետ, թե որը պետք է հիմք ընդունենք հաշվարկներ կատարելու համար՝ ընտրական իրավունք ունեցող անձանց թիվը, թե բնակչության թիվը: Առաջինի դեպքում հաշվարկի մեջ կընդգրկվեն անձինք, որոնք միգրացիոն տեսանկյունից բացակայում են երկրից և նպատակահարմար չէ վերջիններիս ընձեռել ժողովրդական նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորություն, քանի որ այս ինստիտուտի նպատակն, ի վերջո, երկրի մշտական բնակչության պահանջմունքների բացահայտումն ու օրենսդրական կարգավորումն է: Իսկ եթե հիմք ընդունենք պետության բնակչության ընդհանուր թիվը, ապա հաշվարկի մեջ կընդգրկվեն նաև ընտրական իրավունք չունեցող անձինք, ինչը նույնպես անթույլատրելի է: Նման պայմաններում լուծումն այն է, որ հաշվարկների համար

հիմք ընդունվի ընտրական իրավունք ունեցող և ՀՀ-ում մշտապես կամ առավելապես բնակվող անձանց ընդհանուր թիվը: Իհարկե, դրա համար անհրաժեշտ կլինի կատարել նաև օրենսդրական համապատասխան փոփոխություններ՝ լիազոր մարմինների վրա դնելով որոշակի պարբերականությամբ այդ թիվը հրապարակելու պարտականություն:

8. Ժողովրդական նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք վերապահող տոկոսային հարաբերության սահմանմանը նույնպես պետք է չափազանց կշռադատված մոտենալ: Մի կողմից այն չպետք է լինի շատ մեծ, քանի որ խոչընդոտ կհանդիսանա այս ինստիտուտի լայնորեն կիրառման համար: Մյուս կողմից էլ այդ թիվը չպետք է լինի շատ փոքր, որպեսզի կանխվի ժողովրդական նախաձեռնության կարգով նեղ խմբային շահեր հետապնդող օրինագծեր ներկայացնելու ձգտումը: Մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության պարագայում նման հավասարակշռված թիվ կարող է լինել ընտրական իրավունք ունեցող և երկրում մշտապես կամ առավելապես բնակվող անձանց 2%-ը:

9. Գոյություն ունեն որոշ խումբ հարցեր, որոնք, իրենց բնույթից ելնելով, չեն կարող լինել ժողովրդական նախաձեռնության առարկա, այլապես կարող է խաթարվել պետական իշխանության բնականոն գործունեությունը: Դրանք են հարկաբյուջետային, համաներման, ներման վերաբերյալ հարցերը, ինչպես նաև այն հարցերը, որոնցով օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու բացառիկ իրավունքը Սահմանադրությամբ վերապահված է կոնկրետ սուբյեկտի: Նման հարցերով ժողովրդական նախաձեռնությամբ հանդես գալու հնարավորության սահմանափակումը կարևոր է նաև անձանց մոտ անտեղի ժողովրդահաճո նախաձեռնություններով հանդես գալու գայթակղությունը մեղմելու համար:

10. Ժողովրդական նախաձեռնության իրականացման կարգի հետ կապված բարդությունն այս ինստիտուտի լայնորեն կիրառման հիմնական խոչընդոտներից է: Ժողովրդական նախաձեռնությամբ հանդես գալու համար անհրաժեշտ ստորագրությունների ավանդական եղանակով հավաքումը, ճշտության վավերացումը և ստուգումը բավական աշխատատար և ծախսատար գործընթաց է:

Մինչդեռ կարծում ենք, որ այս ինստիտուտի կիրառումը կարելի է շատ ավելի պարզեցված և արդյունավետ կազմակերպել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ներկայիս պայմաններում՝ ժողովրդական նախաձեռնության ներդրման հեռանկարներն առհասարակ քննարկելով էլեկտրոնային ժողովրդավարության զարգացման համատեքստում: Տեղեկատվական տեխնոլոգիաները ոչ միայն ծառայում են որպես պետության և հասարակության միջև արդեն իսկ գոյություն ունեցող հարաբերությունների առցանց ձև, այլ նաև թույլ են տալիս ավելի խորացնել քաղաքացիների մասնակցությունը ժողովրդավարական ինստիտուտների գործունեության մեջ, որի դրսևորումներից մեկն էլ կարող է հանդիսանալ ժողովրդական նախաձեռնության համար անհրաժեշտ ծայները հավաքելն առցանց եղանակով՝ էլեկտրոնային ստորագրությունների միջոցով: Իհարկե, ստորագրություններ հավաքելու ավանդական եղանակը ևս պետք է պահպանել որպես այլընտրանք՝ հաշվի առնելով անհրաժեշտությունն այս ինստիտուտի կիրառմանը մասնակից դարձնելու նաև հասարակության այն շերտերին, որոնց համար տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելը դեռևս կարող է խնդիրներ հարուցել:

Այսպիսով, ժողովրդական նախաձեռնությունը Սահմանադրությամբ ամրագրված անմիջական ժողովրդավարության մյուս ինստիտուտների հետ մեկտեղ լրացուցիչ միջոց կարող է հանդիսանալ ժողովրդաիշխանության ամրապնդման համար: Ժամանակակից հասարակությունում ժողովրդական նախաձեռնությունը կարող է լինել այն գործիքներից մեկը, որը թույլ կտա հաղթահարել հնարավոր խզվածքը քաղաքացիների և իշխանության միջև՝ օրենսդրությամբ առավել համակողմանիորեն արտացոլելով իրական հասարակական պահանջմունքը:

Sayad Badalyan
PhD student at the Chair of Constitutional Law , YSU

PROBLEMS OF THE INSTITUTION OF POPULAR INITIATIVE AS A MEANS OF DIRECT DEMOCRACY

The direct exercise of sovereignty by the people of Armenia is one of the pillars of the constitutional order of Armenia. The introduction of the institution of popular initiative will enable the citizens directly to participate in the law-making process. As a result, real social needs will be better reflected, and the different interests of different citizens will be better balanced. This institution together with the other institutions of direct democracy, that have already made their way into the Constitution, will strengthen the direct democracy.

Саяд Бадалян
Аспирант кафедры Конституционного права
Юридического факультета ЕГУ

АКТУАЛЬНЫЕ ПРОБЛЕМЫ СТАНОВЛЕНИЯ НАРОДНОЙ ИНИЦИАТИВЫ КАК ИНСТИТУТА ПРЯМОЙ (НЕПОСРЕДСТВЕННОЙ) ДЕМОКРАТИИ

Непосредственное осуществление своей власти народом является одним из основ конституционного строя Армении, поэтому задействование граждан в законотворчестве посредством внедрения института народной инициативы может в большей части способствовать всестороннему отражению истинных общественных потребностей в законодательстве и, по возможности, систематическому сопоставлению разнообразных интересов отдельных граждан. Совместно с иными институтами непосредственной демократии, закрепленными Конституцией РА, предусмотрение института народной инициативы будет являться дополнительной гарантией для укрепления непосредственной демократии.

Բանալի բառեր՝ օրենսդրական նախաձեռնություն, ժողովրդական նախաձեռնություն, անմիջական ժողովրդաիշխանություն, էլեկտրոնային ժողովրդավարություն, օրինաստեղծագործություն, հանրաքվե

Keywords: legislative initiative, popular initiative, direct democracy, e-democracy, law-making process, referendum

Ключевые слова: законодательная инициатива, народная инициатива, прямая демократия, электронная демократия, законотворчество, референдум

**ԸՆՏՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆՆ ՈՒՂԴԱԾ ՄԻ
ՔԱՆԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ**

Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական, իրավական պետության կառուցման գործընթացն ուղղորդող կարևոր գրավական է հանդիսանում այնպիսի ընտրական օրենսդրության և ընտրական համակարգի առկայությունը, որը համահունչ կլինի երկրում ընթացող ընտրական զարգացումներին և կառաջադրի ընտրաիրավական հարաբերությունների կարգավորման լավագույն լուծումներ: Գործնական հետազոտությունները, թերևս, վկայում են, որ պարբերաբար իրականացվող դատաիրավական բարեփոխումների արդյունքում գործող ընտրական օրենսդրությունը շարունակում է մնալ խոցելի, վիճահարույց, անկայուն և նվազ վստահելի:

Ընտրական վեճերի համակողմանի քննություն ու լուծում երաշխավորող ընթացակարգերի մշակումը նույնպես հանդիսանում է իրավական բարեփոխումների կարևոր բաղադրիչներից մեկը: Այդ իսկ պատճառով, մեր կողմից փորձ է արվել քննարկել հիշյալ օրենսդրության մի քանի թերություններ և համակարգված առաջադրել դրա կատարելագործմանն ու ներդաշնակեցմանն ուղղված առաջարկություններ, եզրահանգումներ, հատկապես ներկայումս ընթացող սահմանադրական բարեփոխումների համատեքստում:

1. Ընտրական իրավասուբյեկտության համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բացի քաղաքացիական իրավասուբյեկտության համար ներկայացվող ընդհանուր պահանջներից, ընտրական իրավունքի սուբյեկտների համար օրենքը սահմանում է լրացուցիչ չափանիշներ² (քաղաքացիությունը, առողջական վիճակը, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազա-

¹ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Բ. Ղանիեյան:

² Ст'я Избирательное право. Под ред. К. К. Гасанова. 2-е изд., перераб. и доп.. М.: ЮНИТИ-ДАНА, 2007, стр. 134

տագրկման վայրում գտնվելը, բնակության վայրը և այլն)՝ կարևորելով դրանց դերն ու նշանակությունը պետական համակարգի կայացման գործընթացում: Այս ընդհանուր բնույթի պահանջների համատեքստում ՀՀ ընտրական օրենսգիրքն (այսուհետ՝ Ընտր. օր.) ամրագրում է նաև վարչական կարգով քննվող ընտրական վեճի սուբյեկտներին ներկայացվող պայմաններ, որոնք, կարծում ենք, ոչ միայն չեն նպաստում, այլ նաև խոչընդոտ են հանդիսանում ազատ և թափանցիկ ընտրությունների անցկացման գործընթացին: Մասնավորապես, Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողություններն ու անգործությունը կարող է բողոքարկել.

1) յուրաքանչյուր ոք, եթե գտնում է, որ խախտվել կամ կարող է խախտվել իր սուբյեկտիվ ընտրական իրավունքը.

2) վստահված անձը, եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքները,

3) դիտորդը, եթե գտնում է, որ խախտվել են դիտորդի՝ սույն օրենսգրքով սահմանված իրավունքները և այլն:

Կարծում ենք, «յուրաքանչյուր ոք» ձևակերպմամբ օրենսդիրն ի նկատի ունի տասնութ տարին լրացած բոլոր ՀՀ քաղաքացիներին (օրենքով սահմանված դեպքերում՝ փախստականներին ու երկքաղաքացիություն ունեցող անձանց), որոնք դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված չեն ազատագրկման և գործունակ են¹:

Ինչպես տեսնում ենք, Ընտր. օր-ը կիրառում է նաև «սուբյեկտիվ ընտրական իրավունք» արտահայտությունը, այսինքն՝ յուրաքանչյուր ոք միայն իր սուբյեկտիվ ընտրական իրավունքի խախտման կամ այդպիսի խախտման հնարավորության առկայության դեպքում կարող է դիմել համապատասխան մարմին՝ բողոքարկելու հանձնաժողովի որոշումը, գործողությունը կամ անգործությունը, ինչը, կարծում ենք, ինքնին հակասում է ազատ ընտրությունների անցկացման սկզբունքին և անհարկի սահմանափակում է ընտրական իրավունքների արտադատական պաշտպանության իրականացման հնարավորությունը: Այն չի բխում նաև ՀՀ Սահմանադ-

¹ Տե՛ս ՀՀ Ընտրական օրենսգիրք. 26.05.2011թ., 2-րդ հոդված.

րության 27.1-րդ հոդվածի պահանջներից, որոնց համաձայն յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք:

2. Մեր համոզմամբ, իրավական պետության կերտման ճանապարհին արդար ընտրությունների դերն անգնահատելի է, քանի որ յուրաքանչյուր ընտրական գործընթաց ենթադրում է հասարակության զարգացման նոր փուլ, ուստի ընտրական գործընթացի յուրաքանչյուր փուլում թույլ տրված խախտման, տվյալ դեպքում ընտրական հանձնաժողովների ոչ իրավաչափ որոշման, գործողության կամ անգործության արդյունքում հասարակական շահի պաշտպանության անհրաժեշտության առաջացումն անժխտելի է, ինչի կապակցությամբ յուրաքանչյուր ոք, անկախ իր սուբյեկտիվ իրավունքի խախտումից կամ հնարավոր խախտումից, պետք է հնարավորություն ունենա օրենքով սահմանված կարգով ապահովել հասարակական շահի պաշտպանություն: Բացի այդ, պետական իշխանության յուրաքանչյուր ընտրովի մարմնի գործունեությունն անմիջականորեն առնչվում է տվյալ հասարակության յուրաքանչյուր անդամի անձնական շահերի հետ (հատկապես տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ՝ փոքր համայնքներում), հետևաբար այդ մարմինների ձևավորման ընթացքում դրսևորվող յուրաքանչյուր անօրինական քայլ, անկախ անձի սուբյեկտիվ իրավունքի խախտման հանգամանքից, հանդիսանում է ընտրողի անձնական շահի ոտնահարում:

Հիշյալ նկատառումով Ընտր. օր-ի համապատասխան ձևակերպումը անձին, թերևս, զրկում է իր՝ վերը նշված սահմանադրական իրավունքից օգտվելու հնարավորությունից և հող է ստեղծում հասարակության անտարբերության ձևավորման համար:

Նմանատիպ մոտեցում է դրսևորվում նաև ընտրական իրավունքի մյուս սուբյեկտների, մասնավորապես դիտորդի և վստահված անձի առնչությամբ: Մեր համոզմամբ, օրենսդրի նման մոտեցումը հակասում է վերը նշված ինստիտուտների գործառնական նպատակային նշանակությանը, քանի որ դրանցից յուրաքանչյուրի գործունեությունն ավելի մեծ արժեքների պահպանմանն ու պաշտ-

պանությանն է ուղղված, քան պարզապես իրենց սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունը:

Նկատենք, որ Ընտր. օր-ն ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունն ու անգործությունը բողոքարկելու իրավասություն ունեցող սուբյեկտների մեջ չի ներառել զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներին: Խնդիրն այն է, որ Ընտր. օր-ի 31-րդ հոդվածն ամբողջովին վերաբերում է դիտորդի և զանգվածային լրատվամիջոցի ներկայացուցչի իրավունքներին, պարտականություններին և գործունեության երաշխիքներին: Համապատասխան հոդվածով վերը նշված երկու սուբյեկտներին տրվում են բավականին լայն լիազորություններ, ուստի դիտորդին այդ իրավունքների պաշտպանության հնարավորությամբ օժտելը, իսկ զանգվածային լրատվամիջոցի ներկայացուցչին՝ ոչ, կարծում ենք, որ բավարար չափով տրամաբանական չէ, քանի որ գործնական վերլուծությունը ցույց է տալիս, որ ընտրական զարգացումների ընթացքում հաճախ խոցելի վիճակում են հայտնվում հենց զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները՝ իրավունքների ոչ պատշաճ ապահովման տեսանկյունից: Չպետք է անտեսել նաև, որ լրատվության միջոցներն ընտրական գործընթացում օժտված են որոշակի կարգավիճակով:

Ինչպես տեսնում ենք, գործող օրենսդրության համաձայն՝ ընտրական իրավունքի՝ օրենքով ամրագրված սուբյեկտն ընտրախախտում բացահայտելու դեպքում հնարավորություն չունի հանդես գալու այդ խախտման վերացման պահանջով և աջակցելու արդար և թափանցիկ ընտրությունների անցկացման գործին: Ակնհայտ է, որ այդ երևույթը գործող ընտրական օրենսդրության թերացման արդյունք է:

3. Ինչպես վերը նշվեց, Ընտր. օր-ի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել...յուրաքանչյուր ոք...»: Տվյալ նորմի վերլուծությունից բխում է, որ օրենքն ամրագրում է ընտրական հանձնաժողովի որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման կարգը, իսկ նրա անդամների գործողությունների (անգործության) վարչական կարգով բողոքարկման վերաբերյալ այն որևէ դրույթ չի պարունակում: Կարծում ենք՝ ընտրական հանձնաժողովների անդամներն այնպիսի ծավա-

լի իրավունքներով ու պարտականություններով են օժտված, հատկապես քվեարկության անցկացման և ձայների հաշվարկման ընթացքում, որ իրենց իրավասության իրացման կամ դրանց չարաչափման միջոցով ձեռք են բերում քաղաքացիների ընտրական իրավունքները խախտելու անհարկի հնարավորություն¹: Այսպես, Ընտր. օր-ի 59-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է քվեարկության ընթացքում ապահովել սույն օրենսգրքով նախատեսված պահանջների կատարումը և անհրաժեշտ կարգ ու կանոն հաստատել տեղամասային կենտրոնում: Այսինքն, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է ապահովել ընտրական գործընթացի մասնակիցների (ընտրողներ, թեկնածուներ, վստահված անձինք, դիտորդներ, լրագրողներ և այլն) ընտրական իրավունքների իրականացումն ու պաշտպանությունն ընտրական տեղամասում, իսկ եթե վերջինիս կողմից դա չի իրականացվում, ապա Ընտր. օր-ը չի անդրադառնում տվյալ պաշտոնատար անձի գործողության կամ անգործության բողոքարկման խնդրին: Ուստի ընտրական հանձնաժողովների անդամների գործողությունների (անգործության) բողոքարկման կարգի վերաբերյալ Ընտր. օր-ի «լուծությունը», կարծում ենք, արդարացված չէ, քանի որ նմանատիպ հարցերի ոչ հստակ օրենսդրական կարգավորման արդյունքում քաղաքացիների խախտված ընտրական իրավունքները կարող են մնալ առանց համապատասխան պաշտպանության, ինչը և հասարակության շրջանում կարող է թերահավատություն ձևավորել ընտրական վեճերի լուծման վարչական ընթացակարգի նկատմամբ: Հետևաբար առաջարկվում է օրենքի վերոնշյալ նորմը շարադրել հետևյալ ձևակերպմամբ. «Ընտրական հանձնաժողովի կամ դրա անդամի որոշումները, գործողությունը (անգործությունը) կարող է բողոքարկել...յուրաքանչյուր ոք...»:

4. Հարկ է անդրադառնալ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի (այսուհետ՝ ԿԸՀ)՝ որպես հայրենական ընտրական իրավունքի եզակի սուբյեկտի ձևավորման առանձնահատկություն-

¹ Ст'у Мостовщиков В. Д. Территориальные избирательные комиссии: система, государственно-правовой статус, порядок формирования и компетенция/ Учебно-методическое пособие.-Екатеринбург, 2002

ներին: ԿԸՀ-ն կազմված է յոթ անդամներից, որոնցից երեքը նշանակվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, երկուսը՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի, երկուսը՝ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջարկությամբ՝ ՀՀ Նախագահի կողմից: Պատահական չէ, որ ԿԸՀ-ի ձևավորմանը մասնակցում են մի քանի մարմիններ, քանի որ, այսպիսով, օրենսդիրը փորձել է պետական կյանքի առանցքային ոլորտ կարգավորող այս մարմնին գերծ պահել քաղաքական շահերի բխումից և ազդեցությունից, որպեսզի այն ղեկավարվի բացառապես Սահմանադրությամբ և օրենքներով՝ ապահովելով ժողովրդավարական, թափանցիկ ընտրություններ: Սա ընդունված պրակտիկա է միջազգային փորձի համատեքստում, սակայն այստեղ կարևոր է այն հանգամանքը, թե ինչպիսի ինստիտուտների ներկայացուցիչներով կհամալրվի հանձնաժողովը¹, որպեսզի վերջինիս գործունեության ընթացքում իրականում հնարավոր լինի ապահովել շահերի լիարժեք հավասարակշռություն: Այս հարցում պետք է հետևել այնպիսի չափորոշիչների, ինչպիսիք են չեզոքությունը, անկողմնակալությունն ու արհեստավարժությունը:

Ներկայացուցչական ժողովրդավարության տեսանկյունից ելնելով՝ անհրաժեշտ է, որ ընտրական հանձնաժողովները, հատկապես վերադաս ընտրական հանձնաժողովը, ձևավորվեն բացառապես անկախ, մշտապես գործող այնպիսի մարմինների ներկայացուցիչներից, որոնց գործունեությունն ամբողջապես չի վերահսկվում պետական իշխանության կողմից: Նմանատիպ նկատառումներից ելնելով՝ Ընտր. օր-ը սահմանել է, որ ընտրական հանձնաժողովի անդամը չի ներկայացնում իրեն նշանակողին և գործում է անկախ (Ընտր. օր. 37-րդ հոդվ. 1-ին մաս), այնուամենայնիվ, մեր կարծիքով, ներկայումս դրանց նշանակման ընթացակարգն ի գործ է լիովին բացառելու սուբյեկտիվ դրսևորումներ: Մասնավորապես, ՀՀ նախագահի կողմից ԿԸՀ բոլոր անդամներին նշանակելու պարագայում Վճռաբեկ դատարանի նախագահին հանձնաժողովի անդամների թեկնածուներ ներկայացնելու իրավասությամբ օժտելը

¹. St' u European Union Election Observation Handbook, Second edition, European Commission, Printed by Elanders Sverige AB, Brussels. 2008. էջ 35-41:

չի բխում ներկայացուցչական ժողովրդավարությունից և հակասում է չեզոքության, անկողմնակալության սկզբունքներին, ինչը չի կարելի ասել մյուս մարմիններին նման իրավասությամբ օժտելու վերաբերյալ: Նկատենք, որ տվյալ դեպքում ներկայացուցչական մարմին կարող էր համարվել առնվազն դատարանների նախագահների խորհուրդը:

5. ԿԸՀ-ն վարչական կարգով ընտրական վեճի քննության ժամանակ հանդես է գալիս ոչ միայն որպես ընտրական վեճը քննող վերադաս մարմին, այլև որպես այնպիսի մարմին, որն առանձնահատուկ իրավասությամբ է օժտված ընտրական օրենսդրության կիրառման ոլորտում: Մասնավորապես, ԿԸՀ-ն օժտված է ընտրական օրենսդրության միատեսակ կիրառման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, իր կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ պարզաբանումներ տալու իրավասությամբ («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվ.):

Կարծում ենք, վերը նշված լիազորությունը կարող է նույնիսկ խոչընդոտել իր որոշ գործառնությունների արդյունավետ իրականացմանը: Մասնավորապես, ընտրական վեճի քննության ժամանակ իր կողմից կիրառվող իրավական ակտի վերաբերյալ իր իսկ տված պարզաբանումը հաճախ կարող է ոչ իրավաչափ լինել և կողմի իրավացի դժգոհության տեղիք տալ, ուստի, կարծում ենք, իր կողմից քննվող վեճերի դեպքում վերջինիս կողմից կիրառվող կամ ընդունված իրավական ակտերի վերաբերյալ պարզաբանումներ տալու իրավասությունը պետք է որոշակի վերապահումով կիրառվի:

Այս ամենը թույլ է տալիս նշել, որ ՀՀ ԿԸՀ-ն հանդիսանում է ընտրական օրենսդրության կիրառման ոլորտում հիմնական պետական մարմինը, այդ պատճառով էլ նրա առաջնահերթ խնդիրն է հանդիսանում ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները քաղաքացիների ընտրական իրավունքների իրացման համար, ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ այդ իրավունքների պաշտպանության՝ հատկապես ընտրական վեճերի քննության և լուծման ընթացքում: Չնայած ընտրական օրենսդրության կողմից ԿԸՀ-ի գործունեությունը անկախության, թափանցիկության և ազատության հիման վրա կազմակերպելուն ուղղված ջանքերին, այնուամեն-

նայնիվ, ԿԸՀ-ում իրականացվող վարչական վարույթները գրեթե մեծամասամբ ավարտվում են հանձնաժողովների օգտին¹: Կարծում ենք, որ այս հանգամանքը խորհելու տեղիք է տալիս և առաջադրում հետևյալ հարցը. արդյո՞ք բոլոր դիմումներն ու բողոքներն անհիմն են, թե ԿԸՀ-ն մեծ ջանք է գործադրում դրանք այդպիսին դիտարկելու համար: Ընտրական հանձնաժողովների գործունեության վերաբերյալ Գ. Հարությունյանը նույնպես իր մտահոգությունն է հայտնել՝ մատնանշելով. «Այսքան խոսելով ընտրակեղծիքների բացառման մասին, տարօրինակ ձևով ընտրական հանձնաժողովները, այդ թվում ԿԸՀ-ն, կարծեք թե անտարբեր են անցնում արդեն իսկ կատարված փաստերի կողքով,.....այսպիսի վերաբերմունքի պարագայում նման խախտումները հետագայում անխուսափելիորեն կբազմապատկվեն»²:

Կերը նշվածը թույլ է տալիս փաստել, որ օրենսդրական անկատարությունների շտկումն, իհարկե, բարենպաստ ազդեցություն կունենա քննարկվող հարաբերությունների արդյունավետ կարգավորման հարցում, եթե պետական իշխանությունն իսկապես ձգտի ազատ և թափանցիկ ընտրությունների անցկացմանը, հետևաբար՝ նաև ընտրական վեճերի արդար քննությանը և լուծմանը: Այլ կերպ ասած՝ քննարկվող ոլորտում, ավելի քան որևէ այլ ոլորտում, խիստ անհրաժեշտ է համարժեք քաղաքական կամքի դրսևորումը:

Анаит Есаян

Соискатель кафедры конституционного права ЕГУ

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ СВЯЗАННЫЕ С УСОВЕРШЕНСТВОВАНИЕМ ЗАКОНОДАТЕЛЬСТВА ОБ ИССЛЕДОВАНИИ ИЗБИРАТЕЛЬНЫХ СПОР

В данном тезисе автор одновременно обратил внимание на несколько вопросов об усовершенствовании законодательства касающихся исследования избирательных споров, регулирование которых может иметь важное значение для справедливого исследования и решения этих споров. В особенности, автор представил круг субъектов имеющее право на обжалование

¹ www.elections.am ՀՀ ԿԸՀ պաշտոնական վեբ կայք.

² Տե՛ս Գ. Հարությունյան «ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները և ընտրական իրավունքի դատական պաշտպանությունը», ՀՀ Սահմանադրական դատարան տեղեկագիր. 3(12) 1999թ. էջ 10-11

решений, действий и бездействий избирательных комиссий и обратил внимание на те законодательные нормы, которые ограничивают пределы реализации этих прав. Кроме этого, автор представил особенности формирования Центральной избирательной комиссии и для некоторых проблем предложил альтернативные решения.

Anahit Yesayan

Post graduate researcher at the Chair Constitutional Law, YSU

SEVERAL ISSUES ON IMPROVEMENT OF LEGISLATION OF ELECTORAL DISPUTES INVESTIGATION

The author of this thesis is focused on the several issues on improvement of legislation on electoral disputes whose resolution may be crucial for the fair and transparent investigation and resolution of electoral disputes. In particular, the author submitted the range of subjects having the right to appeal electoral commission's decisions, actions and inactions and pointed out the legislative norms limiting framework of the realization of rights. In addition, the author has referred to formation of the Central Electoral Commission and proposed alternative solutions to the problems.

Բանալի բառեր` ընտրություններ, ընտրական օրենսդրություն, ընտրական վեճեր, ընտրական հանձնաժողովներ, ընտրական իրավասություններ, ընտրական իրավունքների պաշտպանություն, ընտրական վեճերի քննություն և լուծում, ներկայացուցչական ժողովրդավարություն, ընտրական հանձնաժողովի որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկում:

Ключевые слова: выборы, избирательное законодательство, избирательные споры, избирательные комиссии, избирательная правосубъектность, защита избирательных прав, исследование и решение избирательных споров, представительная демократия, обжалование решений, действий и бездействий избирательных комиссий.

Keywords: the elections, electoral legislation, electoral disputes, electoral commissions, election legal personality, protection of electoral rights, investigation and resolution of electoral disputes, representative democracy, to apeal electoral commission's decisions, actions (inaction).

**ԳՈՐԾԱԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՈՐՈՇ ԿԱՌՈՒՅԱԿԱՐԳԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Նկատի ունենալով Հանրապետության Նախագահի կարգավիճակն ու իշխանության մյուս մարմինների փոխհարաբերության բազմաճյուղ գործունեությունը՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված են գործադիր իշխանության ձևավորման առնչությամբ ՀՀ Նախագահի լիազորությունների իրականացման այնպիսի ընթացակարգեր, որոնք, թերևս, երկակի բնույթ ունեն. մի կողմից՝ միտված են իշխանության մարմնի սահմանադրական կարգավիճակի չխաթարմանը, մյուս կողմից՝ անհրաժեշտ համագործակցության, իրավական նշանակության դիրքորոշում հայտնելու հնարավորության ապահովմանը:

Նկատենք, որ ՀՀ Սահմանադրությունը (հոդվ. 55, կետ 4), բացառությամբ խորհրդարանական խմբակցությունների հետ խորհրդակցություններ անցկացնելու պահանջի, չի սահմանում Հանրապետության Նախագահի կողմից պատգամավորների վստահությունը վայելող անձին որոշելու կոնկրետ ընթացակարգ: Ակներև է, որ բերված նորմն իր բովանդակությամբ զուտ ձևական է, քանի որ դրանում բացակայում են սահմանադրական այն կառուցակարգերը, որոնք կարող էին ապահովել (վարչապետ նշանակելու դեպքում) Հանրապետության Նախագահի կողմից պատգամավորական խմբակցությունների կարծիքները հաշվի առնելը: Հ² որ փաստորեն ոչինչ չի խանգարում Հանրապետության Նախագահին պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցելուց հետո վարչապետ նշանակել իրեն «ծեռնտու ցանկացած անձի»², առավել

¹ ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հեռակա ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ն.Ա. Այվազյան:

² Տե՛ս Այվազյան Ն., Եղյան Ռ. ՀՀ գործադիր իշխանությունը փոփոխված Սահմանադրության համատեքստում: Իրավագիտության հարցեր, Երևան, 2006, էջ 24:

և, որ այդ խորհրդակցության ժամանակ, բնականաբար, յուրաքանչյուր խմբակցություն Հանրապետության Նախագահին որպես վարչապետի թեկնածու (ուստի՝ որպես հեղինակություն վայելող անձ) կներկայացնի իր կուսակցության առաջնորդին: Մինչդեռ պետական շինարարության համաշխարհային փորձը վաղուց ի վեր մշակել է այդ գործընթացի առավել արդյունավետ տարբերակը. վարչապետ է նշանակվում (կամ ընտրվում) խորհրդարանում մեծամասնություն ունեցող կուսակցության ղեկավարը կամ կոալիցիայի կողմից առաջադրված անձը:

Այլ է խնդիրը, որ Հանրապետության Նախագահի կողմից առաջադրված թեկնածուն ստանա Ազգային ժողովի պատգամավորների մեծամասնության վստահությունը՝ քվեարկության արդյունքում ստանալով պատգամավորների մեծամասնության ձայները¹:

Արտասահմանյան պետությունների սահմանադրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս հարցի լուծումն, առաջին հերթին, պայմանավորված է կոնկրետ պետության մեջ արմատավորված քաղաքական ավանդույթներով, քանզի գործադիր իշխանության կազմավորումը հիմնականում քաղաքական գործընթաց է: Նշված ասպեկտից էլ, որպես կանոն, սահմանադրություններն այդ առնչությամբ ամրագրում են սոսկ ընդհանուր կարգավորումներ: Սակայն, կարծում ենք, նկատի ունենալով հայրենական սահմանադրական մշակույթի դեռևս ոչ բավարար վիճակը, նպատակահարմար է գործադիր իշխանության կազմավորման ընթացակարգը նշված հարցադրման շրջանակներում դարձնել հնարավորինս կանխատեսելի:

Ստորև բերված վարկածներում (թեզիսներում) համակարգված տեսքով առանձնացվել են այն հիմնավորումները, որոնք միտված են ՀՀ Նախագահի կողմից գործադիր իշխանության նկատմամբ ներգործության որոշ հարցադրումների համակողմանի վերլուծությանը, հիմնախնդիրների բացահայտմանը և դրանց լուծման նկա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենսդիր իշխանության կազմակերպման և գործունեության սահմանադրական հիմունքները, պատուխմբ. Ն. Ա. Այվազյան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2011, էջեր 136-137:

տառուճով համարժեք եզրահանգումների առաջադրմանը:

1. Մեր կարծիքով, ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված ոչ միանշանակ ձևակերպումները կանխատեսելի չեն դարձնում Հանրապետության վարչապետի պաշտոնում համապատասխան անձի առաջադրման ու նշանակման գործընթացը, ինչն էլ, իր հերթին, չի նպաստում անհրաժեշտ քաղաքական ավանդույթների մշակմանը: Առավել ևս, եթե նկատի ունենանք ՀՀ Սահմանադրության 74.1-րդ հոդվածի առաջին մասի պահանջը, համաձայն որի՝ Նախագահն արձակում է Ազգային ժողովը, եթե վերջինս երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի տալիս կառավարության ծրագրին, ապա խորհրդակցելու ընթացակարգի բացակայությունն է՛լ ավելի է արժեզրկում հիշյալ ինստիտուտը:

Եթե առաջնորդվենք քաղաքական տրամաբանությամբ, ապա սույն նորմի սահմանադրական ամրագրումը միանգամայն արդարացված կարող է թվալ, քանզի եթե վարչապետի պաշտոնում նշանակված խորհրդարանական մեծամասնության (առավել թվով պատգամավորների) վստահությունը վայելող անձի կողմից խորհրդարան ներկայացված կառավարության ծրագիրը երկու անգամ անընդմեջ չի արժանանում Ազգային ժողովի հավանությանը, ուրեմն ակնհայտ է, որ երկրում առկա է քաղաքական ճգնաժամ, որը կարող է հանգուցալուծվել ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ կետով ամրագրված՝ Հանրապետության Նախագահի կողմից իր լիազորությունն իրացնելով: Մյուս կողմից, Ազգային ժողովը, գտնվելով արձակման վտանգի առջև, կարող է «հարկադրված» համաձայնություն տալ կառավարության ծրագրին: Գիշտ է, ՀՀ Սահմանադրության 74.1-րդ հոդվածի առաջին մասում ամրագրված նորմը վերաբերում է ոչ թե վարչապետի թեկնածությանը, այլ կառավարության ծրագրին հավանություն չտալուն, այնուամենայնիվ գործնականում չի բացառվում, որ Հանրապետության Նախագահը վարչապետի պաշտոնում նշանակի իր նախընտրած թեկնածուին՝ վստահ լինելով, որ Ազգային ժողովը, արձակումից խուսափելու նպատակով, հավանություն կտա խորհրդարանին ներկայացվելիք կառավարության ծրագրին՝ դրանով իսկ իրավական ճանապարհ

հարթելով կառավարության և դրա ղեկավարի՝ վարչապետի ապագա գործունեության համար: Այս կապակցությամբ հարկ ենք համարում նշել, որ թեև սահմանադրական նմանատիպ կարգավորումը խորթ չէ նաև արտասահմանյան որոշ պետությունների (Բելառուս¹, Ռուսաստանի Դաշնություն² և այլն), այնուամենայնիվ այն ապագայում մեր Հանրապետությունում նախատեսվող սահմանադրական փոփոխությունների համատեքստում, թերևս, կարիք ունի վերանայման: Հավելենք, որ տվյալ դեպքում առաջնային է դառնում ոչ այնքան խորհրդարանի պաշտոնական տեսակետը համարժեք հաշվի առնելու, որքան խորհրդարանը «կառավարելի» դարձնելու հնարավորությունը, ինչից պետք է զերծ մնալ:

2. ՀՀ Նախագահի հայեցողության շրջանակները լայն են նաև կառավարության անդամների նշանակման և ազատման հարցում՝ նկատի ունենալով Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրված այն ձևակերպումը, որի համաձայն՝ կառավարության անդամները նշանակվում և ազատվում են Նախագահի կողմից՝ վարչապետի առաջարկությամբ (հոդ. 55, կետ 4): Մեր կարծիքով, վարչապետի առաջարկությամբ վերաբերող սահմանադրական դրույթն, ըստ էության, գործնականում չի կաշկանդում Հանրապետության Նախագահին, օրինակ՝ պաշտոնի նշանակել որևէ նախարարի կամ նրան պաշտոնանկ անել սեփական հայեցողությամբ: Հայաստանի Հանրապետությունում կառավարության կազմավորման վերջին տարիների պրակտիկան ցույց է տալիս, որ քննարկվող հարցում ՀՀ Նախագահի և վարչապետի միջև քաղաքական տարաձայնություններ չեն ծագել, ինչը, թերևս, պայմանավորված է այն հանգամանքով, որ խորհրդարանական մեծամասնություն կազմող քաղաքական ուժի ներկայացուցիչներն են հանդիսանում և՛ Հանրապետության Նախագահը, և՛ վարչապետը: Այլ կերպ ասած՝ տվյալ դեպքում «կայունության» գրավականը ոչ այնքան ժողովրդավարական ա-

¹ Стѣи Конституция Республики Беларусь 1994 года (с изменениями и дополнениями, принятыми на республиканских референдумах 24.11.1996г. и 17.10.2004г.), հոդվ. 106):

² Стѣи Конституция Российской Федерации (принята 12.12.1993г., с учётом поправок, внесѣнных Законами РФ о поправках к Конституции РФ от 30.12.2008 N 6-ФКЗ, от 30.12.2008 N 7-ФКЗ), հոդվ. 111):

վանդույթներն են, որքան քաղաքական ուժերի իրական կշիռը:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է Սահմանադրությամբ չնախատեսված մոր ինստիտուտ՝ կառավարության անդամների առաջադրումը կոալիցիայի անդամ կուսակցությունների կողմից: Նման պրակտիկան ակնհայտորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածին՝ համաձայն որի՝ ժողովրդին պատկանող իշխանությունն իրականացվում է... «Սահմանադրությամբ նախատեսված պետական... մարմինների... միջոցով»: Իսկ պետական մարմինները կազմավորվում են Սահմանադրությամբ նախատեսված կարգով: Այս առումով կուսակցությունների կողմից կառավարության անդամների թեկնածուներ առաջադրելու եղանակ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված չէ: Ուստի հստակ չէ, թե նման դեպքերում ինչպիսի՞ն են Հանրապետության Նախագահի կամ վարչապետի հնարավորությունները առաջադրված թեկնածուների նշանակման հարցում: Արդյո՞ք վարչապետը պարտավոր է դրանց ներկայացրած թեկնածու(ներ)ին առաջարկել նշանակել նախարար(ներ)ի պաշտոնում: Օրենսդրորեն այս հարցը չի կարգավորված: Իսկ կոալիցիոն հուշագրերը վերաբերում են բացառապես կառավարությունում ստացած տեղերին: Մինչդեռ անհամաձայնություն կարող է լինել կոնկրետ անձի թեկնածության շուրջ: Այդ հարցը նույնպես լուծված չէ: Այս առումով նպատակահարմար է համարվում նշված դեպքում կուսակցությունների կողմից այլընտրանքային թեկնածուների առաջադրումը, որպեսզի Հանրապետության Նախագահն ու վարչապետը կողմնորոշվեն նրանց արժանիքների հարցում¹:

Կառավարության անդամների պաշտոնի նշանակման և ազատման հարցի հետ կապված՝ ուշադրության են արժանի արտասահմանյան որոշ պետություններում գործող իրավակարգավորումները: Այսպես, օրինակ, Սլովենիայում նախարարները պաշտոնի են նշանակվում և պաշտոնանկ արվում խորհրդարանի՝ Պետական ժողովի կողմից՝ Կառավարության ղեկավարի առաջարկությամբ: Թեկ-

¹ Տե՛ս Վ. Այվազյան, Նախագահ-կառավարություն փոխհարաբերությունները սահմանադրական փոփոխությունների համատեքստում (Գիտաժողովի նյութերի ժողովածու (29 նոյեմբերի 2007թ.)), ԵՊՀ հրատարակչություն, Երևան-2007, էջ 65:

նածուն, նախքան նշանակումը, պետք է ներկայանա Պետական ժողովի իրավասու հանձնաժողով և պատասխանի իրեն ուղղվող հարցերին (Սահմ. հոդվ. 112): Բուլղարիայում Նախարարների խորհրդի անդամներին ընտրում և պաշտոնից ազատում է խորհրդարանը՝ նախարար-ղեկավարի առաջարկությամբ: Խորհրդարանն է փոփոխություններ կատարում կառավարության կազմում, ստեղծում, վերակազմակերպում և լուծարում նախարարություններ՝ նախարար-ղեկավարի առաջարկությամբ¹:

3. 2005 թվականի ՀՀ սահմանադրական փոփոխությունները նպատակաուղղված էին նաև կիսանախագահական կառավարման ձևի «խորհրդարանական-նախագահական» մոդելին անցմանը, ինչը հանգեցրեց Հանրապետության Նախագահի լիազորությունների որոշակի սահմանափակման մասնավորապես գործադիր իշխանության ոլորտում: Այս կապակցությամբ պետք է փաստել, որ մեր Հանրապետության կառավարման ձևը՝ պետության գլխի գերակա դերակատարմամբ, այսօր գործում է առանց իմստիտուցիոնալ խոչընդոտների, ինչի հիմնական պատճառն այն է, որ խորհրդարանում կա քաղաքական մեծամասնություն, և հենց Հանրապետության Նախագահն է հանդիսանում խորհրդարանական մեծամասնություն կազմող քաղաքական ուժի առաջնորդը: Այս առումով չպետք է բացառել Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի միջև քաղաքական տարաձայնությունների առաջացման հավանականությունը կառավարության կազմավորման գործընթացում այն դեպքում, երբ պետության գլուխը և խորհրդարանն ունենան քաղաքական հակադիր կողմնորոշումներ, ինչը կարող է հանգեցնել տևական քաղաքական ճգնաժամի: ՀՀ գործող Սահմանադրությամբ լուծումներ նախատեսված չեն այն իրավիճակների համար, երբ ընտրվում է խորհրդարանական մեծամասնությանը ընդդիմադիր Նախագահ, կամ էլ, երբ նորընտիր Ազգային ժողովն է «հակադիր» Հանրապետության գործող Նախագահին: Այս իրավիճակում կարող է կասկածի տակ դրվել ՀՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի գործողությունը, և Հանրապետության Նախագահն ականայից անգործ կլինի ապահովելու իշխանության թևերի բնականոն գործունեութ-

¹ Стѣ Конституция Республики България (обнародована в “Държавен вестник”, бр.56 от 13 июля 1991г.), հոդվ. 84:

յունը:

Քննարկվող հիմնախնդրի համատեքստում ուշադրության են արժանի կառավարության կազմավորման իրավական կառուցակարգերը որոշ պետություններում (Լեհաստան¹, Սլովենիա², Բուլղարիա³), որոնց որոշ տարրեր, մեր կարծիքով, կարելի է ներդնել Հայաստանի Հանրապետությունում:

Հարկ ենք համարում նշել, որ ՀՀ Նախագահի կողմից Ազգային ժողովին կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ ներկայացնելու իրավական հիմքերը ո՛չ ՀՀ Սահմանադրության, ո՛չ էլ ընթացիկ օրենսդրության մեջ կոնկրետացված չեն, ինչը ևս վկայում է Հանրապետության կառավարության նկատմամբ ՀՀ Նախագահի ակտիվ ներգործության մասին՝ չնայած այն հանգամանքին, որ սույն հարցով վերջնական որոշում կայացնողն Ազգային ժողովն է:

4. Ինչպես ՀՀ Սահմանադրության, այնպես էլ սահմանադրական մշակույթի համակողմանի վերլուծությունը հնարավորություն է տալիս հանգելու այն եզրակացությանը, որ ՀՀ Նախագահն առանձին դեպքերում ոչ այնքան իրավաչափ ներգործություն ունի գործադիր իշխանության մարմինների համակարգի և դրանց գործունեության կազմակերպման գործընթացի վրա: Այսպես, ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան վարչապետի ներկայացմամբ կառավարության և դրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանված է Հանրապետության Նախագահի 18.07.2007 թվականի ՆՀ-174-Ն հրամանագրով: Մինչդեռ իշխա-

¹ Տե՛ս Конституция Республики Польша от 02.04.1997г. (Дневник Законов от 16 июля 1997г. N 78, поз. 483), հոդվ. 154, 155:

Լեհաստանում Նախարարների խորհրդի անդամները Սեյմի առջև կրում են պատասխանատվություն կառավարության գործունեության համար, ինչպես նաև անհատական պատասխանատվություն՝ իրենց իրավասությանը ենթակա կամ Նախարարների խորհրդի նախագահի կողմից իրենց հանձնարարված հարցերով (Սահմ. հոդվ. 157):

² Տե՛ս Սլովենիայի Սահմանադրության 111-րդ հոդվածը:

Սլովենիայում կառավարությունը և առանձին նախարարները պատասխանատու են Պետական ժողովի առջև (Սահմ. հոդվ. 110):

³ Տե՛ս Конституция Республики Болгария (обнародована в “Държавен вестник”, бр.56 от 13 июля 1991г.), հոդվ. 99, հոդվ. 111 § 1:

նության մյուս երկու ճյուղերի (օրենսդիր և դատական) մասով գործող Սահմանադրությամբ նախատեսված են միանգամայն այլ իրավակարգավորումներ, որոնց համապատասխան՝ դրանց գործունեության կարգը սահմանված է Սահմանադրությամբ և օրենքներով:

Գտնում ենք, որ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված վերը նշված կարգավորումը ներքին հակասության մեջ է գտնվում սահմանադրական հիմնարար՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի բովանդակության հետ: Մեր համոզմամբ, ՀՀ կառավարության՝ որպես գործադիր իշխանության բարձրագույն կոլեգիալ մարմնի և դրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգի ենթաօրենսդրական կանոնակարգումը որևէ կերպ չի բխում գործադիր իշխանության սահմանադրաիրավական կարգավիճակից և չի նպաստում իշխանության մարմինների համակարգում գործադիր իշխանության դերակատարության բարձրացմանը:

5. Նշված խնդրին նվիրված ենթաօրենսդրական ակտերում, թերևս, առկա են, մեր կարծիքով, Սահմանադրության հետ աղերսներ չունեցող առանձին նորմեր: Ուշադրության են արժանի, օրինակ, «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի հավելվածի մի շարք կետեր: Այսպես.

«7. Կառավարության քաղաքականությունն առանձին բնագավառներում մշակում և իրականացնում են հանրապետական գործադիր մարմինները (այսուհետ՝ ՀԳՄ), որոնք ստեղծվում, վերակազմակերպվում և լուծարվում են վարչապետի առաջարկությամբ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

8. ՀԳՄ-ներն են՝ Հայաստանի Հանրապետության նախարարությունները և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինները»:

Կարծում ենք՝ նշված դրույթները որոշակի հակասության մեջ են «Իրավական ակտերի մասին» 03.04.2002 թվականի ՀՀ օրենքի (հոդ. 3, մաս 5) հետ՝ համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտը պետք է կարգավորի միաբնույթ (մեկ ոլորտ կարգավորող) հարաբե-

րություններ, քանզի գործադիր իշխանության մարմինների համակարգին առնչվող վերոնշյալ դրույթները, ըստ էության, դուրս են հանրապետական գործադիր մարմինների գործունեության կազմակերպման ինստիտուտի շրջանակներից: Մեր կարծիքով, նմանատիպ խնդիրներ են առկա՝ կապված նաև վերոնշյալ հրամանագրի հավելվածի մի շարք այլ կետերի հետ, որոնցով կարգավորված են հանրապետական գործադիր մարմինների ներքին համակարգին առնչվող մի շարք հարցեր (կետեր 16, 17 և այլն):

6. Խնդրո առարկայի հետ կապված՝ արտասահմանյան մի շարք պետությունների սահմանադրությունների համապատասխան նորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործադիր իշխանության գործունեության կազմակերպման կարգը սահմանված է օրենքներով: Այսպես, օրինակ, Սլովենիայի Սահմանադրությամբ ամրագրված է, որ կառավարության կազմի և գործունեության, նախարարությունների քանակի, կազմակերպման և լիազորությունների վերաբերյալ հարցերը կարգավորվում են օրենքով (հոդվ. 114): Իսկ, օրինակ, Ռուսաստանում «Ռուսաստանի Դաշնության կառավարության մասին» դաշնային սահմանադրական օրենքով են կարգավորվում այնպիսի հարցեր, ինչպիսիք են ՌԴ կառավարության տեղը պետական իշխանության մարմինների համակարգում, դրա կազմը, կազմավորման կարգը, լիազորությունները, դրա գործունեության կազմակերպումը, ՌԴ կառավարության փոխհարաբերությունները Դաշնության Նախագահի, Դաշնային ժողովի, դատական իշխանության մարմինների և Դաշնության սուբյեկտների պետական իշխանության մարմինների հետ, ինչպես նաև ՌԴ կառավարության գործունեության ապահովումը¹: Նշված օրենքի 4-րդ գլխում, որը վերաբերում է ՌԴ կառավարության գործունեության կազմակերպմանը, մասնավորապես սահմանված են ՌԴ կառավարության ղեկավարի լիազորությունները կառավարության աշխատանքի կազմակերպման ոլորտում, կառավարության ղեկավարի տեղակալների, դաշնային նախարարների լիազորությունները, կառավարության նիստերին վերաբերող դրույթներ, ինչպես նաև հարցերի այն շրջանակը, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունվում են բացա-

¹ Стн Федеральный конституционный закон от 17 декабря 1997г. N 2-ФКЗ "О правительстве Российской Федерации" (ред. от 07.05.2013г.):

ռապես կառավարության նիստերում: Համանման օրենք է գործում նաև Ղազախստանի Հանրապետությունում, որի գլուխներից մեկը վերաբերում է Հանրապետության կառավարության գործունեության կազմակերպմանը¹: Դրա շրջանակներում ընդգրկված են նաև հոդվածներ, որոնք վերաբերում են հանրապետական գործադիր մարմիններին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նպատակահարմար է, մեր կարծիքով, նախատեսվող սահմանադրական բարեփոխումների համատեքստում ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 6-րդ մասը վերանայել այն տրամաբանությամբ, որ կառավարության և դրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանվի օրենքով կամ էլ նախատեսվի կառավարության կազմավորման կարգի, կառուցվածքի, կառավարությանը ենթակա պետական կառավարման այլ մարմինների համակարգի, կառավարության և դրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգի սահմանման պահանջը մեկ միասնական ակտով՝ օրենքով:

Mary Sargsyan

PhD student of the Chair of Constitutional Law, YSU

TENDENCIES OF IMPROVEMENT OF CERTAIN CONSTITUTIONAL STRUCTURES OF INFLUENCE OF THE RA PRESIDENT REGARDING FORMATION AND ACTIVITY OF THE BODIES OF EXECUTIVE BODIES

The theses systemically emphasize the substations, which are tended to highlight comprehensive analysis of certain inquires, revealing basic issues and raising adequate conclusions regarding their solutions made by the RA President concerning executive authorities. In our opinion, it mainly concerns non-unequivocal wordings envisaged in Point 4 of Article 55 of the RA Constitution, which does not make the process of nomination and appointment of the Prime-Minister of the Republic predictable, as well as wide range

¹ Стен Конституционный закон Республики Казахстан от 18 декабря 1995г. N 2688 "О Правительстве Республики Казахстан (ред. от 19.06.2007г.), գլուխ 4:

of discretion of the RA President concerning the issue of appointment and dismissal of the members of the RA Government, related to the process of formation of the Government and the issue of arising political disagreement between the President of the Republic and National Assembly in the case when the head of the state and the parliament express opposing political orientation. In this concern, studying the legal structures of formation of government in certain states (Poland, Slovenia, Bulgaria) allows to conclude that some of their elements may be introduced in the Republic of Armenia.

In our opinion, the sub-legislative regulation of the order of conduct of activity of the RA Government and other bodies does not derive from the constitutional – legal status of the executive power and does not assist fostering of the role of the executive power in the system of public authorities. Deriving from the logics that the abovementioned order of formation of government shall be by envisaged law or stipulate the requirement of prescription of conduct of activity of other bodies within jurisdiction of the state governance by on joint act, i.e. by law, we consider appropriate to review Article 85, Part 6 of the RA Constitution.

Мери Саргсян

Аспирант кафедры Конституционного права ЕГУ

НАПРАВЛЕНИЯ УЛУЧШЕНИЯ НЕКОТОРЫХ КОНСТИТУЦИОННЫХ МЕХАНИЗМОВ ВОЗДЕЙСТВИЯ ПРЕЗИДЕНТА РА НА ФОРМИРОВАНИЕ И ДЕЯТЕЛЬНОСТЬ ОРГАНОВ ИСПОЛНИТЕЛЬНОЙ ВЛАСТИ

В представленных тезисах систематизированы обоснования, направленные на всесторонний анализ некоторых вопросов воздействия Президента РА на исполнительную власть, выявление основных проблем и выдвижение равноценных предложений по их решению. Речь, в частности, идет о неоднозначных, по нашему мнению, формулировках, закрепленных в пункте 4-ом статьи 55 Конституции РА, которые делают непредвиденными процесс выдвижения и назначения соответствующего лица на должность премьер-министра Армении, широких рамках полномочий Президента РА по вопросу назначения и освобождения членов Правительства РА, проблеме возможного возникновения политических разногласий между Президентом Республики и Национальным Собранием в

связи с процессом формирования Правительства в случае, когда глава государства и парламент придерживаются противоположных политических ориентаций. В связи с этим, изучив правовые механизмы формирования правительства в некоторых государствах (Польша, Словения, Болгария), пришли к выводу, что некоторые их элементы можно внедрить в Республике Армения.

По нашему убеждению, законодательное регулирование порядка формирования правительства РА и подчиняющихся ему других органов управления никоим образом не вытекает из конституционно-правового статуса органов власти и не способствует повышению роли исполнительной власти в системе органов власти. Считаем целесообразным пересмотреть часть 6-ую статьи 85 Конституции РА, исходя из той логики, чтобы вышеупомянутый порядок был установлен в силу закона либо чтобы требование об установлении порядка организации, структуры правительства, системы других подчиняющихся правительству государственных органов управления, порядка организации деятельности правительства и других подчиняющихся ему государственных органов управления, было предусмотрено единым актом – законом.

Բանալի բառեր՝ ՀՀ Սահմանադրություն, Նախագահ, Ազգային ժողով, վարչապետ, կառավարության անդամ, թեկնածու, գործադիր իշխանություն:

Key words: RA Constitution, President, National Assembly, Prime-Minister, the member of the Government, candidate, executive.

Ключевые слова: Конституции РА, Президент, Национальнӛй Собрание, премьер-министр, член Правительства, кандидат, исполнительнаӛ власть.

ԱՆՁԻ ԱՐԺԱՆԱԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Հայրենական իրավական համակարգում «անձի արժանապատվություն» եզրույթը սահմանադրաիրավական հարթությունում հիմնականում քննարկվում է որպես բոլոր իրավունքների հիմք², սահմանադրական սկզբունք³: Արդյունքում անձի արժանապատվությունն ընկալվում է որպես վերացական, հռչակագրային դրույթ, որի ինքնուրույն իրավական պաշտպանությունն առավելապես դիտարկվում է խոսքի ազատության իրավունքի հետ հարաբերակցության շրջանակներում: Ընդ որում, մասնագիտական գրականության մեջ, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում անտեսվում է անձի արժանապատվության պաշտպանության հիմնարար կառուցակարգերից մեկի՝ բարոյական վնասի ինստիտուտի առկայությունը, հետևաբար՝ դրա համարժեք իրավական կարգավորման անհրաժեշտությունը:

Ակնհայտ է, որ հիշյալ մոտեցումները համարժեք չեն մարդու արժանապատվության էությանը, չեն նպաստում դրա բովանդակության ճշգրիտ բացահայտմանը, պաշտպանության համալիր կառուցակարգերի ներդրմանն ու միջազգային իրավունքի սկզբունքներին հնարավորինս համահունչ արժեհամակարգ ձևավորելու խնդրի լուծմանը:

Ձևավորված կարծրատիպը հաղթահարելու և անհրաժեշտ իրավական դիրքորոշումներ ձևավորելու նկատառումով, կարծում ենք, նպատակահարմար է ելակետ ընդունել հետևյալ եզրահան-

¹ ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Գ. Հարությունյան:

² St' u Co.Co..A..Comparing Constitutional Adjudication, Summer School on Comparative Interpretation of European Constitutional Jurisprudence, 2nd Edition – 2007, էջ՝ 2 The Dignity of Man in Constitutional Adjudication:

³ St' u B.Я. Марченко, Достоинство личности в конституционно-правовом измерении, М.2002, автореферат. (Աղբյուրը՝ <http://www.dissercat.com/content/dostoinstvo-lichnosti-v-konstitutsionno-pravovom-izmerenii>)

գումները՝

1. «Արժանապատվություն» եզրույթը պետք է դիտարկել իրավափիլիսոփայական հարթությունում՝ մեկնաբանելով այն որպես մարդու անքակտելի, անօտարելի այնպիսի հատկանիշ, որն արժևորում է մարդուն, առանձնացնում է նրան ոչ միայն հասարակական համակարգի մյուս տարրերից, այլև ցանկացած այլ մարդուց: Արժանապատվության փիլիսոփայական ուսմունքը ձևավորվել է դեռևս Ցիցերոնի աշխատություններում, սակայն իր համակողմանի զարգացումն է ստացել միջնադարյան փիլիոսափայության շրջանակներում¹:

2. Անձի արժանապատվությունն իրավական հարթությունում ծեռք է բերում երկակի նշանակություն՝ լայն և նեղ առումներով: Լայն առումով այն հանդես է գալիս որպես բոլոր իրավունքների նախահիմք, որպես անձի իրավունքների շրջանակը կանխորոշող աղբյուր: Այլ կերպ ասած՝ արժանապատվությունը դիտարկվում է որպես արժեքաբանական գործառույթ, իսկ անձի արժանապատվության պաշտպանությունն իրականացվում է միջնորդավորված կերպով՝ այլ հիմնական իրավունքների պաշտպանության միջոցով: Այսպիսով, լայն իմաստով արժանապատվության հիմքում դրված է վերջինիս զուտ փիլիսոփայական ընկալումը: «Արժանապատվություն» եզրույթը հենց վերոնշյալ բովանդակությամբ էլ ամրագրվել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում:

«Արժանապատվություն» հասկացությունն իր անմիջական կիրառման համատեքստում, այսինքն՝ իր նեղ իրավական բովանդակությամբ, արդեն չի կարող ընկալվել որպես բոլոր իրավունքների հիմք: Այս դեպքում այն հադես է գալիս որպես ինքնուրույն հասկա-

¹ St'u Cicero De Officiis / translated with an Introduction and Notes by Andrew P. Peabody (Boston: Little, Brown, and Co., 1887): Աղբյուրը՝ http://oll.libertyfund.org/?option=com_staticxt&staticfile=show.php%3Ftitle=542&chapter=83344&layout=html&Itemid=27 (08.10.2012):
The Catechism of the Catholic Church, Part One: The Profession of Faith, Section 2: The Profession of Human Dignity and Bioethics: Essays Commissioned by the President's Council on Bioethics, աղբյուրը http://bioethics.georgetown.edu/pcbe/reports/human_dignity/chapter13.html#endnote5, (16.11.12 թվ.):

ցություն, որը բաղկացած է որոշակի ոչ նյութական արժեքներից, որոնցով անձն օժտված է մարդկային բնույթի որոշակի առանձնահատկությունների ուժով: Այդպիսի ոչ նյութական արժեքների թվին են դասվում մարդու կյանքը, ազատությունը, անձնական կյանքի անձեռնմխելիությունը:

3. Արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանությունն արտացոլված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով, որն արգելում է մարդու հանդեպ ցանկացած նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը վկայում է, որ դատարանն ինքնուրույն քննության է առնում արժանապատվության՝ որպես մարդուն պատկանող արժեքի խախտման հարցը և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում, հաշվի առնելով գործի հանգամանքները, որոշում է, թե արդյո՞ք տեղ է գտել արժանապատվության խախտում, թե ոչ: Այլ կերպ ասած՝ նաև միջազգային հիշյալ դատական ատյանի իրավակիրառ պրակտիկայում է այն դիտվում միանգամայն ինքնուրույն իրավական արժեք՝ ինքնուրույն իրավական պաշտպանության լծակներով:

Բոլոր դեպքերում, նշված դատական ակտերի վերլուծությունը բերում է այն համոզման, որ դրանցում չի որակվում արժանապատվության խախտում ցանկացած իրավունքի խախտման փաստն արձանագրելիս: Ասվածից բնավ չի բխում, որ իրավունքի խախտումները, ի վերջո, աղերսներ չունեն արժանապատվության խախտման հետ, սակայն այս դեպքում վճռորոշն այն է, որ դատական ակտերում ընդգծվում է այն գաղափարը, որ անգամ իրավունքների կամ ազատությունների խախտման փաստի բացակայության դեպքում կարելի է արձանագրել, որ տեղի է ունեցել ոտնձգություն արժանապատվության նկատմամբ:

Հիշյալ մոտեցումն ունի նաև զուտ գործնական նշանակություն. այն հնարավորություն է տալիս ոչ միայն արժանապատվությունը դիտարկել որպես ինքնուրույն հասկացություն, այլև գործնականում երաշխավորել դրա համարժեք պատշպանությունը՝ ան-

կախ որևէ իրավունքի կամ ազատության խախտման փաստի:

Արժանապատվության ինքնուրույն նեղ իրավական բովանդակության առկայության մասին են վկայում նաև ՀՀ սահմանադրական դատարանի 2013թ. նոյեմբերի 5-ին ընդունված թիվ ՍՂՈ-1121 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը սահմանել է, որ արժանապատվության առանցքային բաղադրատարրերից մեկը, ի թիվս այլնի, հանդիսանում է անհատական հատկանիշներով պայմանավորված բարոյական տառապանքներից զերծ մնալը: ՀՀ սահմանադրական դատարանն իր այս դիրքորոշմամբ իրականացրել է անձի արժանապատվության նեղ իրավական պաշտպանություն, քանզի ինքնուրույնաբար քննության է առել արժանապատվության խախտման հարցը:

Սահմանադրական դատարանի վկայակոչված իրավական դիրքորոշումը ևս վկայում է, որ անձի արժանապատվության նեղ իրավական պաշտպանությունը ներառում է անձին պատկանող ոչ նյութական արժեքները, քանզի բարոյական տառապանքներից զերծ մնալու իրավունքը վերաբերում է անձի հոգեբանական հավասարակշռվածությանը:

4. Անձի արժանապատվության պաշտպանության կարևորագույն կառուցակարգ է արժանապատվությանը պատճառված վնասի համարժեք հատուցումը: Հայրենական իրավական համակարգում ընդունված այն տեսակետը, ըստ որի՝ բարոյական վնասի ինստիտուտն ինքնին իրավաչափ չէ, աստիճանաբար զիջում է իր դիրքերը: Ներկայումս նկատվում են հակառակ մոտեցումներ, ըստ որոնց՝ անձին պատճառված ցանկացած վնասի պարագայում նա կրում է հոգեբանական անհանգստություն, ինչը ևս ենթակա է համարժեք հատուցման, այդ թվում՝ նյութական կտրվածքով, իսկ ոչ նյութական արժեքներին պատճառված վնասի պարագայում վնասն ուղղված է անձի հոգեկան (բարոյական) ամբողջականությանը և հավասարակշռվածությանը: Ուստի զուտ այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը, սահմանելով վնասի հասկացությունը, չի հիշատակում բարոյական վնասը, դեռևս չի նշանակում, որ ՀՀ-ում չի ճանաչվում բարոյական վնասը՝

որպես հատուցման ենթակա վնասի ինքնուրույն տեսակ:

Ասվածի մասին վկայում են մի շարք իրավական ակտերում «բարոյական վնաս» եզրույթի հիշատակումների առկայությունը: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (58-րդ հոդված) տուժողի հասկացությունը սահմանանելիս որպես այդպիսին է ճանաչում այն անձին, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, ինչպես նաև այն անձին, ում կարող էր անմիջականորեն պատճառվել բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, եթե ավարտվեր քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարելը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով (268-րդ հոդված) և սահմանված է, որ տուժող համարվում է այն անձը, որին վարչական իրավախախտման հետևանքով բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս է պատճառվել:

Քրեական դատավարության օրենսգիրքը (6-րդ հոդվածի 45-րդ կետ) «վնաս» հասկացությունը սահմանելիս որպես դրա տարատեսակ է ամրագրել նաև դրամական չափման ենթակա բարոյական վնասը:

Վերոնշյալը վկայում է հայրենական իրավական համակարգում բարոյական վնասը՝ որպես վնասի տարատեսակ ճանաչված լինելու իրողության մասին: Ուստի այս դեպքում առավել իրատեսական է խոսել ոչ թե այդ ինստիտուտի իսպառ բացակայության, այլ դրա ոչ համարժեք ընկալման մասին: Կարծում ենք՝ հենց այս հանգամանքն են նկատի ունեցել սահմանադրական դատարանի հիշյալ որոշման մեջ:

5. ՀՀ-ում առկա են նաև բարոյական վնասի հատուցման որոշակի կառուցակարգեր, սակայն դրանք անհրաժեշտ չափով համակարգված ու ամբողջական չեն: Բոլոր այն կառուցակարգերը, որոնք ուղղված են անձի՝ խախտված ոչ նյութական արժեքների վերականգնմանը, հանդիսանում են անձին պատճառված ոչ նյութական (բարոյական) հոգեկան վնասի հատուցում: Այդպիսիք են, օրինակ, ներողության հայցումը, զրպարտող տեղեկությունների հերքումը, ապօրինի դատապարտված անձանցից ներողության հայ-

ցումը պետության կողմից, աշխատանքում վերականգնումը, ապօրինի ազատագրկման ժամկետը աշխատանքային ստաժում հաշվարկելը և այլն:

Որոշ վերապահումով կարող է քննարկման առարկա դառնալ ՀՀ-ում անձին պատճառված բարոյական վնասի նյութական հատուցման հարցը: Գտնում ենք, սակայն, որ ՀՀ օրենսդրությունում առկա է նաև բարոյական վնասի նյութական հատուցման հնարավորությունը: Այն գործում է որոշ վերապահումներով, այն էլ դեռևս միայն որոշակի ոլորտներում: Որպես օրինակ կարող է ծառայել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1. հոդվածում նախատեսված իրավակարգավորումը. նշված հոդվածով նախատեսվում է անձի արժանապատվությանը, պատվին կամ գործարար համբավին պատճառված վնասի դրամական հատուցման հնարավորություն. գրպարտության դեպքում նվազագույն աշխատավարձի մինչև 2000-ապատիկի չափով, իսկ վիրավորանքի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 1000-ապատիկի չափով: Ընդ որում, նույն հոդվածով նախատեսված է, որ այս դեպքերում փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը չպետք է հաշվի առնի վիրավորանքի կամ գրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասը: Այն հանգամանքը, որ դատարանը անձի արժանապատվության, պատվին կամ գործարար համբավին պատճառված վնասի փոխհատուցման չափը որոշելիս հաշվի չի առնում պատճառված գույքային վնասը, ուղղակիորեն հավաստում է, որ սույն կանոնակարգման նպատակը գույքային վնասը հատուցելը չէ. այն հանդես է գալիս որպես անձի պատճառված բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինքնուրույն դրսևորում:

6. Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ անձի արժանապատվությանը, պատվին կամ գործարար համբավին պատճառված վնասի դրամական հատուցման կանոնակարգումները վերաբերում են հենց բարոյական վնասի նյութական փոխհատուցման ինստիտուտին (ՌԴ, Խորվաթիա, Լատվիա, Լիտվա, Էստոնիա, Սլովենիա, Իսպանիա, և այլն)

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մա-

սին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածը ևս ուղղված է անձին պատճառված ոչ նյութական վնասի հատուցմանը:

ՀՀ կողմից որոշակի իրավունքների խախտման առնչությամբ պատճառված բարոյական վնասի նյութական հատուցման ՀՀ պարտավորությունը բխում է նաև ՀՀ կողմից ստանձնած միջազգային պարտավորություններից: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ, 5-րդ հոդվածների և Կոնվենցիային կից 7-րդ Արձանագրության 3-րդ հոդվածի խախտման դեպքերում ՀՀ ներպետական օրենսդրությունում պարտադիր կերպով հատուցման եղանակների շարքին բարոյական վնասի նյութական հատուցման ձևը սահմանելու պարտավորությունը բխում է ՀՀ դեմ ՄԻԵԴ-ի կողմից կայացված այնպիսի վճիռներից, ինչպիսիք են Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի Հանրապետության և Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության գործերով կայացված վճիռները:¹

Կարծում ենք՝ նաև վերը նշված փաստարկներն են հիմք հանդիսացել, որպեսզի ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴԴ-1121 որոշմամբ արձանագրի հիշյալ իրավունքների խախտման առնչությամբ անձին պատճառված բարոյական վնասի ոչ նյութական փոխհատուցման ՀՀ պարտավորությունները:

Այսպիսով, «արժանապատվություն» եզրույթը համարժեք մեկնաբանելու և իրավաչափ իրավակիրառ պրակտիկա ապահովելու նկատառումով անհրաժեշտ ենք համարում առաջադրել այդ եզրույթի բովանդակության առնչությամբ այնպիսի չափանիշներ, որոնք հնարավորություն կտան բացահայտելու նշված եզրույթի բոլոր բաղադրիչները:

¹ St' u Case of Poghosyan and Baghdasaryan v. Armenia (Application no. 22999/06) Judgment, Strasbourg, 12 June 2012, case of Khachatryan and others v. Armenia (application no. 23978/06) Judgment Strasbourg 27 November 2012:

Nelli Arakelyan
Post graduate researcher at the Chair of Constitutional Law, YSU

CONSTITUTIONAL STATUS OF HUMAN DIGNITY

In the thesis the author discussed the issues concerned with the perception of constitutional status of human dignity, the layers of human dignity both philosophical and legal, and the types of latter, as well as the issues concerning the modern tendencies in compensation of moral damage, as a main mechanism of protection of human dignity.

Нелли Аракелян
Соискатель кафедры конституционного права ЕГУ

КОНСТИТУЦИОННЫЙ СТАТУС ДОСТОИНСТВА ЛИЧНОСТИ

В тезисе автором обсуждаются основные проблемы связанные с конституционным статусом достоинства личности, формы проявления достоинства личности в конституционном измерении.

Правовое проявление достоинства личности рассматривается в двух смыслах; в широком и в узком. Автором исследуются также формы защиты достоинства личности, в том числе современные тенденции в связи с компенсацией морального вреда, как основного механизма защиты достоинства личности.

Բանալի բառեր՝ անձի արժանապատվություն, արժանապատվության հարթություններ, արժանապատվության պաշտպանություն, ոչ նյութական վնասի փոխհատուցում:

Keywords: human dignity, layers of human dignity, protection of human dignity, non pecuniary damage, compensation of non-pecuniary damage.

Ключевые слова: достоинство личности, измерения достоинства личности, защита достоинства личности, моральный вред, компенсация морального вреда.

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ
ՕՐԵՆՍՊՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 1990-1995 թթ.**

Անկախության գործընթացի սկիզբը հռչակած Հայաստանի Հանրապետության համար իրավական համակարգի գործառնության վորումը և դրա առաջընթացը հայտնվել էր բավականին բարդ և հակասական իրավիճակում: 1990 թ. դեռևս գոյատևում էր ԽՍՀՄ-ը, Հայաստանի Հանրապետությունը համարվում էր խորհրդային դաշնության սուբյեկտ: Դրանով իսկ անկախ պետականության կառուցման քաղաքականություն որդեգրած հանրապետությունն իր իրավական հիմքերով հայտնվել էր հակասական իրավիճակում: Այդ հիմքերը սահմանված էին ԽՍՀՄ, ինչպես նաև ՀԽՍՀ սահմանադրական և ընթացիկ օրենսդրությամբ, որին գումարվում էր Հայաստանի երրորդ հանրապետության նորընտիր Գերագույն խորհրդի օրինաստեղծ գործունեության արդյունքում ստեղծված օրենսդրությունը: Սովորական պայմաններում այդ իրավիճակը հակասական չէր կարող դառնալ, սակայն խորհրդային հասարակության պայմաններում այն ձեռք էր բերում նույնիսկ անտագոնիստական բնույթ, որովհետև խորհրդային պետաիրավական համակարգի հիմքում ընկած իրավական սկզբունքները սուր հակասության մեջ էին մտնում նոր որդեգրված պետաիրավական սկզբունքների հետ: Ըստ էության Անկախության հռչակագրի ընդունումն ազդարարում էր սահմանադրական իրավական զարգացման նոր ռազմավարություն, որի ուղղություններն էին ՀՀ իրական ինքնիշխանության ապահովումը, սահմանադրական օրենսդրության ապագադափարականացումը, քաղաքական և գաղափարական այլակարծիքությունը, իշխանությունների բաժանումը, անցումը շուկայական տնտեսության համակարգին²: Դրանք իրենց իրավական բովանդակությամբ հակասության մեջ էին մտնում առկա սահմանադրական իրավական իրողությունների հետ: Այսպիսով, իրավական քաղաքակա-

¹ ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա.Գ. Վաղարշյան:

² Տե՛ս Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր - ԵՊՀ, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003, էջ 72-73:

նության մեջ տեղի էր ունենում շրջադարձ, ամբողջատիրական, մարքսիստական խորհրդային պետական (սահմանադրական) իրավունքից անցում էր կատարվում նոր տիպի սահմանադրական իրավունքի, որի հայեցակարգային հիմքերն էին իրավական, ժողովրդավարական, սոցիալական և ինքնիշխան պետության հիմնարար սկզբունքները (տեսությունները): Այս պայմաններում կարևորվում էր սահմանադրական կարգավորման հիմնահարցը:

Սկզբնական շրջանում որդեգրած իրավական քաղաքականության կենսագործումն իրականացվում էր ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու միջոցով¹: Սակայն այդ «... ճանապարհը, մի կողմից, շատ բարդ ու դժվարին գործ էր իրավաբանական տեխնիկայի տեսակետից, իսկ մյուս կողմից այն դանդաղեցնում էր ընթացիկ օրենսդրական գործընթացը: Այս պայմաններում իշխանությունները գնացին շատ ուրույն և հետաքրքիր ճանապարհով: 1990 թ. դեկտ. 10-ին ընդունվեց «Սահմանադրական օրենք «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին», որի համաձայն Մինչև ՀՀ Սահմանադրության ընդունումը դադարեցվում էր գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին «Հայաստանի անկախության մասին հռչակագրի հիման վրա ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին» ... Նման «լողացող» իրավաբանական ձևակերպումը հակասական իմաստ ուներ, որովհետև ստացվում էր, որ ՀՀ և՛ ուներ Սահմանադրություն, և՛ չուներ»²:

Այսպիսով, մի կողմից ԽՍՀՄ որպես դաշնային պետության գոյությունը և ՀՀ-ի դրան անդամակցությունը և դրանով պայմանավորված դաշնային օրենսդրության առաջնությունը հանրապետական օրենսդրության նկատմամբ, բարդ քաղաքական իրավիճակը և դաշնային կառավարման ճգնաժամը, Ղարաբաղի հիմնախնդիրը որպես քաղաքական գործոններ կասեցրին նոր Սահմանադրության

¹ 1990-1991 թթ. ընթացքում ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության տեքստը բազմիցս և էականորեն փոփոխվել է: Տե՛ս օրինակ՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 39-40, 131 և այլն):

² Տե՛ս Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր - ԵՊՀ, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003, էջ 76:

մշակման և ընդունման գործընթացը: Մարդու իրավունքների իրավական կարգավորումը 1990 թ. օգոստոսի 23-ից մինչև 1995 թ. Սահմանադրության ընդունումը տեղի էր ունենում ընթացիկ օրենսդրական գործունեության միջոցով ընդունված առանձին օրենքներով, մարդու առանձին իրավունքների իրավական կարգավորման և երաշխավորման միջոցով:

Մարդու իրավունքների ընթացիկ օրենսդրական կարգավորման և երաշխավորման գործընթացն սկսվեց 1990 թ. օգոստոսից: 1990 թ. հոկտեմբերի 31-ին ԳԽ ընդունեց ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին»¹: Այս օրենքի ընդունման նպատակն էր մինչև հանրապետության քաղաքացիական օրենսդրության համակարգումն ապահովել շուկայական հարաբերությունների ձևավորման ու զարգացման իրավական հիմքերի ստեղծումը, տնտեսական համակարգի և սեփականության հարաբերությունների ամրապնդումը, դրա տարբեր ձևերի զարգացումը: Օրենքի նշանակությունն այն էր, որ դրանով ՀՀ-ն ճանաչում էր սեփականության իրավունքը և իր վրա վերցնում էր պարտավորություն՝ պաշտպանելու այն (տես օրենքի 2-րդ հոդվածը): Օրենքը սահմանում էր, որ սեփականատերն իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում, տնօրինում է իրեն պատկանող գույքը, նա կարող է իր գույքի նկատմամբ ձեռնարկել օրենքին չհակասող ցանկացած գործողություն, ինչպես նաև կարող է գույքն օգտագործել օրենքով չարգելված տնտեսական կամ այլ ցանկացած գործունեություն իրականացնելու համար: Հայեցակարգային առումով նորույթ էր հենց վերջին դրույթը, որն ազդարարում էր խորհրդային «անձնական սեփականության» իրավունքից անցումը մասնավոր սեփականության իրավունքին՝ թույլ տալով սեփականատիրոջը գույքն օգտագործել նաև տնտեսական գործունեություն իրականացնելու համար: Այսպիսով, օրենքը պաշտոնապես ճանաչում և երաշխավորում էր մարդու կարևոր իրավունքներ՝ սեփականության և ձեռնարկատիրական գործունեության:

Կարևոր օրենքներից էր 1990 թ. դեկտեմբերի 4-ին ընդունված ՀՀ օրենքը «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և

¹ Տես Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 25-39:

զանգատները քննարկելու կարգի մասին»¹: Դեռևս 1978 թ. ընդունված ՀԽՍՀ Սահմանադրությունը սահմանում էր պետական մարմիններին և հասարակական կազմակերպություններին իրենց գործունեության բարելավման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու, նրանց աշխատանքի թերությունները քննադատելու քաղաքացու իրավունքները (հոդված 47), իսկ այդ Սահմանադրության 56-րդ հոդվածն ամրագրում էր քաղաքացիների իրավունքը զանգատարկելու պաշտոնատար անձանց, պետական և հասարակական մարմինների գործողությունները: Գանգատները պետք է քննության առնվեին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում²: Սակայն քանի որ խորհրդային Սահմանադրությունները չունեին անմիջական գործողություն, իսկ Սահմանադրությունը վկայակոչում էր «օրենքով սահմանված կարգը և ժամկետները», ապա քաղաքացիների այդ իրավունքը ձևական էր, որովհետև այդպիսի օրենք մինչ վերակառուցման ժամանակաշրջանը ոչ դաշնային մակարդակում, ոչ էլ ՀԽՍՀ օրենսդրության համակարգում չկար: Այսպիսով, «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և զանգատները քննարկելու կարգի մասին» օրենքը ստեղծում էր իրավունքների պաշտպանության վարչական կարգ:

Տնտեսական ոլորտի իրավունքների կարգավորման հարցում կարևոր դեր խաղաց 1991 թ. հունվարի 22-ին ընդունված «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների մասին» ՀՀ օրենքը, որը սահմանեց գյուղատնտեսական նշանակության հողը որպես սեփականություն տրամադրելու կարգը³: Այս օրենքը, ի հակառակ 1978 թ. Սահմանադրության, որը հողը ճանաչում էր որպես պետական սեփականության բացառիկ օբյեկտ, սահմանեց գյուղատնտեսական ֆոնդի հողի նկատմամբ քաղաքացիների սեփականության իրավունքը և դրա առաջացման հիմքերն ու կարգը: Հողի նկատմամբ սեփականության իրավունքի կարգավորման գործում մեծ էր 1991 թ. հունվարի 29-ի ընդունված հողային օրենսգրքի

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 47-49:

² ՀԽՍՀ Սահմանադրության 56 հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ պաշտոնատար անձանց այն գործողությունները, որոնք կատարվել են օրենքի խախտմամբ, լիազորությունների սահմանազանցմամբ և սահմանափակում են քաղաքացիների իրավունքները, կարող են օրենքով սահմանված կարգով զանգատարկվել դատարանում:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 67-77:

դերը¹: Այդ օրենքը հողը ճանաչում էր որպես ազգային հարստություն, հանրապետության տարածքում բնակվող ժողովրդի սեփականություն: Միաժամանակ օրենքը սահմանում էր, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի հողի նկատմամբ սեփականության իրավունք:

Տնտեսական ոլորտում քաղաքացիների իրավունքների երաշխիքների ստեղծման և ձեռնարկատիրական գործունեության ազատության ապահովման գործում կարևոր նշանակության ակտերից էր ՀՀ Գերագույն խորհրդի 1991 թ. փետրվարի 13-ի որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում սեփականաշնորհման հիմունքները», որը որպես ծրագրային փաստաթուղթ մշակել և ներկայացրել էր ՀՀ նախարարների խորհուրդը²: Այդ հիմունքները ներառում էին ՀՀ-ում սեփականաշնորհման հիմնական սկզբունքները, խնդիրն ու ուղղությունները, որոնք հիմք էին սեփականաշնորհմանը վերաբերող հետագայում ընդունվելիք օրենքների նախագծեր ու ծրագրեր կազմելու համար: Այդ «հիմունքները» ելնում էին մարդու իրավունքների հայեցակարգից, մարդու ազատության էական կողմերից մեկի՝ տնտեսականի համար երաշխիքներ ստեղծելու կարևոր նպատակից: Այս օրենքն իր տրամաբանական շարունակությունն ստացավ հետագայում՝ 1992 թ. օգոստոսի 27-ի «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման մասին» ՀՀ օրենքում³: Օրենքը սահմանում էր ՀՀ-ում արտադրության միջոցների նկատմամբ սեփականության հարաբերությունների փոխակերպման կազմակերպական-իրավական հիմքերը՝ պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման միջոցով արդյունավետ շուկայական տնտեսություն ստեղծելու համար:

Քաղաքացու քաղաքական իրավունքների ճանաչման և երաշխավորման գործում մեծ էր «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի ընդունումը (1991 թ. փետ. 26)⁴: Օրենքը կարևոր նշանակություն ուներ քաղաքական ազատության երաշխավորման հարցում, երաշխիք էր միակուսակցա-

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 80-106:

² Տե՛ս նույն տեղը, էջ 109:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 398-433:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 115-119:

կան քաղաքական համակարգի վերացման համար՝ ճանապարհ բացելով կամավորության հիմքերով ստեղծվող քաղաքական կազմակերպությունների ստեղծման ու գործունեության համար:

Օրենսդրական կարգով երաշխավորված իրավունքներից եր մարդու խղճի և դավանանքի ազատության իրավունքը, որը կատարվեց 1991 թ. հունիսի 17-ի «խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքով¹: Օրենքով հռչակվում էր «քաղաքացիների խղճի և կրոնական դավանանքի ազատությունը», երաշխավորվում էր անհատների իրավահավասարությունն անկախ կրոնի նկատմամբ վերաբերմունքից կամ կրոնական պատկանելությունից: Բացի այդ, օրենքը սահմանում էր, որ ՀՀ-ում եկեղեցին անջատված է պետությունից և կարգավորում էր այդ սկզբունքի մի շարք երաշխիք-արգելքներ պետության և եկեղեցու համար (հոդվածներ 17-23):

Քաղաքացիների էկոլոգիական ոլորտի իրավունքների ամրագրման և երաշխավորման գործում կարևոր նշանակություն ունեցավ 1991 թ. հուլիսի 9-ին ընդունված «Բնապահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմունքները»²: Այդ օրենքի 11-րդ հոդվածը սահմանում էր քաղաքացիների իրավունքները և պարտականությունները բնության պահպանության բնագավառում: Այդ ոլորտի իրավունքներից էին՝ օգտվել բնության առողջարար հատկություններից, օրենքով սահմանված կարգով օգտվել բնության բարիքներից, ստանալ շրջակա միջավայրի աղտոտման, էկոլոգիական վթարի կամ աղետի հետևանքով առողջությանը պատճառված վնասի լրիվ հատուցում, պահանջել և ժամանակին ստանալ ամբողջական ու ճշգրիտ տեղեկություն շրջակա միջավայրի իրավիճակի մասին, բնակվել մաքուր շրջակա միջավայրում, իսկ վերջիններիս խախտումների դեպքում ստանալ էկոլոգիական աղետյալի կարգավիճակ, մասնակցություն ունենալ բնության պահպանության վերաբերյալ օրենքների ու որոշումների մշակմանն ու դրանց իրականացման նկատմամբ հսկողությանը, ներգրավվել բնապահպանական հասարակական կազմակերպություններում, օգտվել այլ իրավունքներից, որոնք չեն հակասում բնապահպանական օրենսդրու-

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 136-140:

² Հաստատվել է ՀՀ ԳԽ 1991 թ. հուլիսի 9-ի որոշմամբ (տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 147-157):

յանը: Իսկ որպես պարտականություն՝ օրենքը սահմանում էր, որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է անշեղորեն կատարել բնապահպանական օրենսդրության պահանջները, աջակցել բնության պահպանությանը:

Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների ազատության կարգավորման և երաշխավորման գործում կարևոր դեր խաղաց 1991 թ. հոկտեմբերի 8-ի «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքը¹: Օրենքը սահմանում էր, որ ՀԼՄ-ներն ազատ են, գրաքննության չեն ենթարկվում: ՀՀ քաղաքացիներն ունեն ՀԼՄ-ներով՝ իրենց տեսակետները, կարծիքներն արտահայտելու, հասարակական կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատապ և հավաստի լրատվություն ստանալու իրավունք: Արգելվում էր ՀԼՄ-ների որևէ տեսակի մենաշնորհ: Օրենքը կարգավորում էր մամուլի և ՀԼՄ-ների տեղեկատվություն ստանալու իրավունքը, սահմանում էր նաև մամուլի ազատության իրավունքի սահմանափակումները՝ ելնելով այն կանխադրույթից, որ մամուլի ազատությունից բխող խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և, հետևաբար, չարաշահել այն չի թույլատրվում:

Մարդու իրավունքների ընթացիկ օրենսդրական կարգավորման գործընթացում նոր միտումներն առաջ եկան 1991 թ. սեպտեմբերից և պահպանվեցին մինչև 1995 թ. հուլիս: Մարդու և քաղաքացու իրավունքների իրավական ինստիտուտի կայացման ճանապարհին կարևոր փուլի սկիզբն ազդարարեց 1991 թ. սեպտեմբերի 25-ի «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը²: Այս օրենքը, որն իր բնույթով սահմանադրական ակտ էր, ի տարբերություն Անկախության հռչակագրի, ընդունվել էր արդեն Հայաստանի անկախ հանրապետության օրենսդիր մարմնի կողմից: ՀՀ-ն արդեն կաշկանդված չէր դաշնային օրենքներով, որովհետև 1991 թ. սեպտեմբերի 23-ի որոշումով Գերագույն խորհուրդը հռչակել էր ՀՀ անկախությունը: Որոշմամբ անկախ պետության հռչակման իրավական հիմքեր էին համարվում՝ Հայաստանի անկախության հռչակագիրը, «Մարդու իրավունքների ու ազ-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 180-188:

² Տե՛ս ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, թիվ 18 (998), 30 սեպտեմբերի, 1991 թ., էջ 10-12:

գերի ազատ ինքնորոշման միջազգային նորմերը», 1991 թ. սեպտեմբերի 21-ի ԽՍՀՄ կազմից դուրս գալու հարցով հանրաքվեի արդյունքները»¹: Այսպիսով, ինչպես և Անկախության հռչակագիրը, այնպես էլ 1991 թ. սեպտեմբերի 23-ի Անկախության հռչակման որոշումը վկայակոչում էին մարդու իրավունքների միջազգային իրավունքի նորմերը: Դրանով ՀՀ-ն հավաստում էր ներպետական իրավական համակարգի զարգացման գործում մարդու իրավունքների համընդհանուր հայեցակարգին իր հավատարմությունը և դրա իրավական ճանաչումը:

Անկախության և ինքնիշխանության հռչակման գործընթացի տրամաբանական շարունակությունը հանդիսացավ 1991 թ. սեպտեմբերի 25-ի «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքը²: Այս օրենքը հայ իրավունքի պատմության մեջ համարվել էր որպես «նպատակային, ծրագրային, համալիր բնույթի ակտ, որ իրենից ներկայացնում էր յուրօրինակ Սահմանադրություն, քանզի ամրագրում էր հետագա սահմանադրական զարգացման համար կակրորգույն նշանակություն ունեցող մի շարք դրույթներ»³: Այդ օրենքի մանրագինն հետազոտությունը ցույց է տալիս, որ այն փաստորեն իրավաբանորեն ճանաչում էր մարդու ազատության և՛ անձնական, և՛ քաղաքական, և՛ տնտեսական կողմերը և փորձում էր սահմանել դրանց երաշխիքները: Այսպես, օրենքի 8-րդ հոդվածը սահմանում էր, որ Ելնելով Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի նորմերից՝ ՀՀ-ն ապահովում է իր քաղաքացիների ազատ և իրավահավասար զարգացումն՝ անկախ ազգությունից, ռասայական պատկանելությունից և հավատքից: Այս իրավական դրույթը կարելի է որակել որպես մարդու իրավունքների համընդհանուր հայեցակարգից բխող և քաղաքացիների ազատությունն ամրագրող ընդհանուր նորմ, որում շեշտադրված է առաջին հերթին քաղաքացիական ազատությունը: Դրանում օգտա-

¹ Տե՛ս ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, թիվ 18 (998), 30 սեպտեմբերի, 1991թ., էջ 3:

² Տե՛ս ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր, թիվ 18 (998), 30 սեպտեմբերի, 1991թ., էջ 10-12:

³ Այդ մասին տե՛ս Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր - ԵՊՀ, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003, էջ 76:

գործված է «քաղաքացի», այլ ոչ թե «մարդ» կամ «անձ» հասկացությունը, բայց դա չպետք է ընդունել որպես ոչ քաղաքացիների իրավունքների նկատմամբ անտարբերության հայեցակարգային իրավական մոտեցում: Նման ձևակերպման պատճառը խորհրդային սահմանադրական իրավական եզրութաբանության մեխանիկական ազդեցությունն էր: Խորհրդային սահմանադրություններն ամրագրում էին քաղաքացու իրավունքները և ազատությունները, իսկ պետական իրավունքի գիտությունն օպերացիաներ էր անում «քաղաքացի» եզրույթով: Դա հաստատում է հենց նույն դրույթի «ռասսայական պատկանելությունից և հավատքից անկախ իրավահավասար զարգացման ապահովում» ձևակերպումը, որովհետև Հայաստանում այլ ռասսաներ բնակչության կառուցվածքում չկային, իսկ կրոնական ցցուն խտրականության հիմնախնդիր Հայաստանը չուներ:

1991 թ. սեպտեմբերի 25-ի «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» սահմանադրական օրենքի այլ հոդվածները ճանաչում էին մարդու ազատության տնտեսական ու քաղաքական առումները և երաշխավորում էին դրանք: Այսպես, քաղաքական ազատության ճանաչումը կատարվեց այդ օրենքի 9-րդ հոդվածով, որում սահմանվեց, որ ՀՀ-ում հասարակական-քաղաքական կազմակերպությունները իրավահավասար են և հավասար իրավունքներով մասնակցում են պետության հասարակական քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին¹: Նշված օրենքի 7-րդ հոդվածը ճանաչում էր մարդու ազատության տնտեսական կողմը և սահմանում էր, որ ՀՀ-ում ճանաչվում և օրենքով պաշտպանվում են սեփականության իրավունքը և սեփականության բոլոր ձևերի իրավահավասարությունը: ՀՀ-ն խրախուսում է ազատ ձեռներեցությունը և ստեղծում է պայմաններ դրա զարգացման համար:

Սեփականության բոլոր ձևերի իրավահավասարության հաստատման գործում կարևոր էր «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» 1992 թ. մայիսի 11-ի օրենքը, որը վերացրեց հանրային սեփականության տեսակների և քաղաքացիների անձնական

¹ Մարդու ազատության քաղաքական կողմի երաշխիքների ստեղծումը Հայաստանում կատարվել էր ավելի վաղ՝ 1991 թ. առաջին կեսին, դեռևս դաշնության կազմում գտնվելու ընթացքում (այդ մասին տես Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր - ԵՊՀ, Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003, էջ 78):

սեփականության իրավունքի քրեաիրավական պաշտպանության միջև տարբերությունը՝ քրեական օրենսգրքում թողնելով միայն մեկ գլուխ՝ «Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ»¹:

Տնտեսական ազատության և սեփականության իրավունքի երաշխավորման, ինչպես նաև բնակարանի իրավունքն իրական դարձնելու համար կարևոր նշանակություն ունեցավ «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին» 1993 թ. հունիսի 29-ի ՀՀ օրենքը², որը սահմանում էր պետական բնակարանային ֆոնդի և հանրային բնակարանային ֆոնդի (բնակելի տների և այլ շինությունների բնակելի տարածությունների) սեփականաշնորհման հիմնական դրույթները, կարգավորում սեփականության հարաբերությունների ձևափոխման իրավական տնտեսական և կազմակերպական հիմունքները:

Ձեռնարկատիրական գործունեության իրավունքի իրավական կարգավորումը և երաշխավորումը կատարվեց 1992 թ. մարտի 14-ին ընդունված «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» ՀՀ օրենքով³: Այդ օրենքը կարգավորում էր ձեռնարկատիրական գործունեության հիմունքները, ձեռներեցների իրավունքները և պարտականությունները, ձեռնարկությունների կազմակերպական իրավական տեսակները, դրանց ստեղծման, գործելու և գործունեության դադարեցման հիմքերը: Ձեռնարկատիրական գործունեության հիմնական սկզբունք էր համարվում ձեռներեցության ազատությունը: Ձեռնարկատիրական գործունեության իրավունքի կարգավորմանն էին ուղղված մի շարք այլ օրենքներ, մասնավորապես՝ «Անհատ ձեռներեցի մասին» ՀՀ օրենքը (1993 թ. դեկտ. 27), «Ապառազական կոոպերացիայի մասին» ՀՀ օրենքը (1993 թ. դեկտ. 30), «Անհատական (ընտանեկան) ձեռնարկության մասին» ՀՀ օրենքը (1994 թ. հուն. 13), «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքը (1995 թ. հուն. 15)⁴:

Անձնական իրավունքներից 1991-95 թթ. ընթացիկ օրենսդրությունն անդրադարձել է միայն անուսնության իրավունքի իրավա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 370-377:

² Տե՛ս նույն տեղը, էջ 516-521:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 240-280:

⁴ Տե՛ս նույն տեղը, էջեր 666-667, 671-676, 704-710, 873-899:

կարգավորմանը՝ որպես ամուսնական տարիք սահմանելով տղամարդկանց համար 18 տարին, իսկ կանանց համար՝ 17 տարին¹:

ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության 56-րդ հոդվածի 3-րդ մասը երաշխավորում էր պետական մարմինների և պաշտոնատար անձնաց ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված **վնասի հատուցում ստանալու իրավունքը**: Դեռևս գործաչովյան շրջանում առաջ եկավ այդպիսի վնասի նոր տեսակի հիմնահարցը: Վնաս, որ պատճառվել էր խորհրդային իշխանության գոյության ընթացքում մարդկանց նկատմամբ քաղաքական շարժառիթներով դատական և ոչ դատական ճանապարհով քրեական հարկադրանք կիրառելու հետևանքով: Անկախության պայմաններում առաջանում էր այդ անձանց արդարացնելու, և մյուս կողմից՝ ապօրինի գործողություններով նրանց պատճառված վնասի հատուցման խնդիրը, որը լուծեց «Բռնադատվածների մասին» օրենքը (1994թ. հունիսի 14): Այն սահմանեց սահմանադրական նորմի իրագործման կարգը քաղաքական շարժառիթներով բռնադատված անձանց համար՝ սկսած 1920 թ. նոյեմբերի 20-ից²:

Այսպիսով, 1990-1995 թթ. ընթացքում մարդու և քաղաքացու իրավունքների իրավական ինստիտուտն ապրեց էական զարգացում՝ ընթացիկ օրենսդրական կարգավորման միջոցով: Այդ օրենքներով կատարվեց էական իրավական հայեցակարգային հեղաթեկում, քաղաքացու սոցիալիստական իրավունքների հայեցակարգից անցում կատարվեց մարդու իրավունքների ազատական հայեցակարգին և դրանից բխող օրենսդրական կարգավորումներին: Այդ գործընթացն ուներ առաջադիմական նշանակություն Հայաստանի իրավական համակարգի համար: Առաջադիմությունն ակնհատ էր հատկապես անձնական, քաղաքական, մշակութային, բնապահպանական, տնտեսական որոշ իրավունքների հարցում: Քաղաքական և անձնական իրավունքները թերագնահատելու համար սոցիալիստական պետությունները միշտ էլ մեղադրվում էին միջազգային

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքում և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 1992 թ. դեկտեմբերի 22-ի ՀՀ օրենքը // տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 448):

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 717-719:

հանրության կողմից: Սակայն խորհրդային պետաիրավական հայեցակարգը սոցիալ-տնտեսական ոլորտի իրավունքներին տալիս էր առաջնակարգ նշանակություն ոչ միայն տեսականորեն, այլև իրավական երաշխիքների սահմանադրական մակարդակով ամրագրման միջոցով: Դրան նպաստում էր արտադրության միջոցների հանրային սեփականությունը և բաշխվող միջոցների հանրային ֆոնդերում կուտակումը: Սակայն անկախություն ձեռք բերելուց հետո շուկայական տնտեսական հարաբերություններին անցնելը, տնտեսական շրջափակումը դարաբաղյան պատերազմի և աշխարհաքաղաքական նոր իրավիճակի հետևանքով առաջ բերեցին խոր տնտեսական ճգնաժամ: Իսկ դա նշանակում էր պետության տնտեսական հնարավորությունների նվազում, ինչը ինքնաբերաբար հանգեցրեց սոցիալական, տնտեսական իրավունքների ոլորտում որոշակի հետադիմության:

Պատճառն այն էր, որ երրորդ սերնդի իրավունքներն աչքի են ընկնում իրենց բնույթով: Պետություններն այս իրավունքների դեպքում «պետք է ոչ միայն ձեռնպահ մնան. նրանք պարտավոր են գործել, և այդ պարտավորությունը վերածվում է իրավաբանական պարտականության՝ ապահովել ուսուցումը, երաշխավորել աշխատանքը»¹ և այլն: Պետության խնդիրն է սոցիալ-տնտեսական ծրագրերի, կազմակերպական և տնտեսական գործունեության, իրավական կարգավորման միջոցով իրական դարձնել երրորդ սերնդի իրավունքները: «Սակայն երրորդ սերնդի իրավունքների իրացման հիմնախնդիրը քննարկելիս պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր պետությունները կարող են իրականություն դարձնել սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքները: Դա պայմանավորված է այն փաստով, որ այս իրավունքների իրացմանը կարելի է հասնել ազգային եկամտի վերաբաշխման հաշվին: Իսկ եթե երկրի տնտեսությունը չունի հնարավորություններ, ուրեմն և վերաբաշխումն է դառնում անհնարին: Ահա այստեղ է, որ առաջանում է լուրջ հիմնախնդիր՝ ինչպե՞ս իրականացնել սոցիալական ծառայությունների մատուցումը, որպեսզի պահպանվեն շուկայական հարաբերությունները, ազատ ձեռներեցությունը և միաժամանակ ապահովվի մարդկային զարգացումը»²:

¹ Տե՛ս Дюгу С. Социальное право. Индивидуальное право и преобразование государства. М., 1999, էջ 72:

² Տե՛ս Մարդկային զարգացման հիմունքներ, Եր., Նոյյան Տապան, 2004, էջ 265-266:

Այսպիսով, տնտեսական շրջափակման և անհաջող տնտեսական վերափոխումների արդյունքում չերաշխավորված մնացին մարդու մի շարք սոցիալ-տնտեսական իրավունքներ: Այս պայմաններում սոցիալական մի շարք իրավունքներ պետք է հարմարեցվեին նոր պայմաններին և քաղաքացիական հասարակության հայեցակարգին: Կայացած քաղաքացիական հասարակությունում հասարակության մեծամասնությունն ինքնուրույն նախաձեռնության միջոցով հասնում է բարեկեցության, և նվաճվում են մարդկային զարգացման նպատակները: Սակայն քաղաքացիական հասարակության մեջ սոցիալ-իրավական պետությունը պետք է երաշխավորի ոչ միայն քաղաքական և քաղաքացիական իրավունքները, այլև ապահովի սոցիալական համերաշխություն, նպաստի երկրի տնտեսական աճին, ստեղծի իրական սոցիալական, տնտեսական և այլ երաշխիքներ կենսամակարդակի, զբաղվածության, կրթության և առողջապահության ոլորտներում: Այս խնդրի լուծմանն էր ուղղված սոցիալական ոլորտի մի շարք իրավունքների ընթացիկ օրենսդրական կարգավորումը:

Տնտեսական ոլորտի իրավունքների նոր հիմքերով կարգավորման և դրանց իրավական կազմակերպական ու նյութական երաշխիքների ստեղծման գործում մեծ ներդրում կատարեց 1991 թ. դեկտեմբերի 27-ի «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքը¹: Օրենքը սահմանում էր, որ քաղաքացիներն իրավունք ունեն ընտրություն կատարել զբաղվածության և չզբաղվածության միջև՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Օրենքի հայեցակարգը հիմնված էր «զբաղված քաղաքացիներ», «չզբաղված քաղաքացիներ», «աշխատանք փնտրողներ», «գործազուրկներ» հասկացությունների վրա: Այդ օրենքով աշխատանքի իրավունքի հայեցակարգից, որի դեպքում պետությունն իր վրա էր վերցնում համընդհանուր զբաղվածություն ապահովելու պարտականությունը, անցում կատարվեց աշխատանքի ընտրության ազատության իրավունքին: «Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքը ամրագրեց նաև գործազրկությունից պաշտպանվելու իրավունքը: Մարդուն գործազրկությունից պաշտպանելու համար պետությունը ստեղծեց զբաղվածության պետական ծառայություն, որն իրականացնելու էր բնակչության զբաղվածության պետական

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 215-225:

կարգավորման և ֆինանսավորման խնդիրները: Աշխատանք փնտրող և գործազուրկ անձանց համար օրենքը երաշխավորում է մի շարք իրավունքներ, այդ թվում՝ մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության, ազատ աշխատատեղերի վերաբերյալ տեղեկությունների, հարմար աշխատանքի միջնորդության, անվճար վերամասնագիտացման և որակավորման բարձրացման, գործազրկության նպաստի և կրթաթոշակի: Պետք է նշել, որ չկարգավորված մնաց աշխատողի արդարացի և օրենքով սահմանված՝ նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունքը:

Սոցիալական իրավունքներից սրվեցին և հիմնախնդիրային դարձան բժշկական օգնության իրավունքը, սոցիալական ապահովության իրավունք, բավարար կենսամակարդակի և կենսապայմանների բարելավման իրավունքը: Սոցիալական ոլորտի իրավունքների կարգավորման գործում կարևոր իրավական նշանակություն ունեցավ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին» 1992 թ. մարտի 20-ի օրենքը¹: Օրենքը կարգավորում էր կենսաթոշակառուների նյութական ապահովության և սոցիալական պաշտպանվածության իրավունքը: Դրա երաշխիքը պետական կենսաթոշակն էր: Սոցիալական ապահովության իրավունքի երաշխիքների ստեղծման գործում էական էր «Ձինժառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքը (1993 թ. հունվարի 7), որը սահմանեց ՀՀ զինժառայողների և նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակային ապահովության և սոցիալական պաշտպանության իրավական, նյութական և կազմակերպական հիմքերը²: Սոցիալական ոլորտի հաջորդ օրենքը «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքն էր (1993 թ. մայիսի 24)³: Այն սահմանում էր, որ հաշմանդամներն ունեն սոցիալ-տնտեսական, քաղաքական և անձնական բոլոր այն իրավունքները, որոնք ամրագրված են ՍԱԿ-ի 1975 թ. դեկտ. 9-ի Հաշմանդամների իրավունքների մասին հռչակագրում, ՀՀ Սահմանադրությունում:

Չնայած սոցիալական իրավունքների այս իրավակարգավորումներին, հիմնախնդիրն այստեղ նյութական երաշխիքների բա-

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 297-316:

² Տե՛ս նույն տեղը, էջ 453-465:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 504-515:

վականին ցածր մակարդակն էր: Մյուս կողմից չկարգավորված մնացին բավարար կենսամակարդակի իրավունքից բխող պետության մի շարք պարտավորությունները՝ նվազագույն աշխատավարձի չափը, կենսապահովման նվազագույն զամբյուղը և նվազագույն բյուջեն: Այդպիսով, կենսամակարդակն ապահովելու ամբողջ ծանրությունը Հայաստանում ընկնում էր մարդու վրա, իսկ պետության հնարավորությունները դրա համար պայմաններ ստեղծելու, արգելքներն ու խոչընդոտները վերացնելու ուղղությամբ դեռևս շատ փոքր էին:

Այս շրջանում մարդու իրավունքների իրավական կարգավորման համակարգում կարևոր դեր խաղաց «Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների իրավական վիճակի մասին» ՀՀ օրենքը /1994 թ. հունիսի 17/¹: Այդ օրենքի ընդունումը դարձել էր իրատապ այն պարզ պատճառով, որ խորհրդային շրջանի «երկաթյա վարագույրի» պատճառով ոչ քաղաքացիների քանակը բնակչության կառուցվածքում այդքան էլ մեծ չէր, ընդհուպ մինչև անկախության առաջին շրջանը: Սակայն ազատ տեղաշարժվելու իրավունքի կայացմանը զուգընթաց, հարևան երկրների հետ բազմակողմանի կապերի զարգացումը բերեց նրանց քանակական աճին: ՀԽՍՀ Սահմանադրությունը, որը դեռ ձևականորեն գործում էր, իր հայեցակարգային հիմքերով և իրավաբանական բովանդակությամբ ամրագրում էր միայն ՀՀ քաղաքացիների իրավունքները, ազատությունները և պարտականությունները: Ստացվում էր, որ ոչ քաղաքացիների իրավական կարգավիճակի շատ հարցեր ՀՀ-ում մնում էին չկարգավորված: Այդ բացը լրացրեց նշված օրենքը: Չնայած իր վերտառության մեջ օգտագործված «օտարերկրյա քաղաքացիների» ձևակերպմանը, օրենքի գործողությունը տարածվում էր ՀՀ-ում գտնվող և քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ: Այս կապակցությամբ պետք է նշել, որ նաև շատ անհաջող էր ընտրված «օտարերկրացի» եզրույթը: Մյուս կողմից որպեսզի օրենքի կարգավորման առարկան դառնար հստակ ճիշտ կլիներ այն անվանել «ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց իրավական վիճակի մասին»: «Քաղաքացիություն չունեցող անձ» հասկացությունը ներառում է և այլ պետության քաղաքացիներին և ընդհանրապես որևէ պետության քաղաքացիություն չունեցող անձանց: Այդ օրենքը՝

¹ Տե՛ս նույն տեղը, էջ 722-732:

հիմնվելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի վրա, սահմանում էր ոչ քաղաքացիների ՀՀ մուտք գործելու, բնակվելու, տեղաշարժվելու, տարանցիկ ուղևորություններ կատարելու, ելքի, կացության կարգավիճակ ստանալու կարգը, ինչպես նաև նրա իրավունքները և պարտականությունները ՀՀ-ում: Օրենքը՝ կարգավորելով ՀՀ-ում բնակվող և ՀՀ քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքները և պարտականությունները, նրանց կարգավիճակը տրոհում է երկու տեսակի՝ ընդհանուր և կացության տեսակից բխող իրավունքներ և պարտականություններ:

1990-1995 թթ. ընթացքում ընթացիկ օրենսդրական կարգով կարգավորված իրավունքներից էր **ընտրելու և ընտրվելու իրավունքը**: Այդ տարիներին ընտրական օրենսդրության սկզբունքներն, ըստ էության, չէին տարբերվում ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության 85-րդ հոդվածի իրավակարգավորումներից¹: Ընտրական իրավունքների կարգավորումը մինչև 1995 թ. ամփոփեց «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների ընտրությունների մասին» ՀՀ օրենքը²: Օրենքը հռչակում էր ընտրական իրավունքի այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են՝ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրությունները և գաղտնի քվեարկությունը³: Միակ սկզբունքային նորամուծությունն Ազգային ժողովի ընտրական համակարգում երկու կարգերի՝ մեծամասնականի և համամասնականի գույակցումն էր (150 մեծամասնական գումարած 40 համամաս-

¹ Ի տարբերություն 1922 թ. Սահմանադրության 1937թ. և 1978 թ. Սահմանադրություններով ամրագրված ընտրական համակարգի հիմունքները ձևական իրավաբանական առումով բավականին ժողովրդավարական բնույթ ունեին: Սակայն, ըստ էության, տոտալիտար հասարակության և քաղաքական մոնիզմի պայմաններում դրանք ձեռք էին բերում հակաժողովրդավարական, ոչ իրավական բնույթ, որովհետև չկար «ընտրություններ» կոչված գործընթացի համար անհրաժեշտ ամենակարևոր հատկությունը՝ այլընտրանքը: Հարկադրական գաղափարաքաղաքական մոնիզմի պայմաններում, կազմակերպված ընդդիմության ու անկախ «չորրորդ իշխանության» բացակայության պայմաններում՝ ընտրությունները վերածվում էին ձևականության (տե՛ս Վաղարշյան Ա.Գ., Հայաստանի սահմանադրական զարգացման որոշ հիմնահարցեր - ԵՊՀ, Երևանի համալսարանի իրատարակչություն, 2003, էջ 116-117):

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Երևան, 1995, էջ 839-865:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 35:

նական՝ ընդամենը 190): Այս իրավական տարրօրինակությունը հաստատում է այն հանգամանքը, որ իրավական կարգավորման նպատակների, խնդիրների իրականացման ամենահուսալի երաշխիքը ոչ թե արհեստական նորմատիվ կանոններն են, այլ մարդիկ (բնակչությունը, քաղաքական գործիչները, պետական պաշտոնյաները), ինչպես նաև պայմանները, որոնցում ընթանում է նրանց ողջ կյանքն ու գործունեությունը: Ընտրությունների առջև կանգնած սոցիալական առաքելության իրացման գլխավոր նախադրյալը պատշաճ իրավական կարգավորումն է: Սակայն նրմատիվ-իրավական տարրն այդ առաքելության իրացման նախադրյալներից մեկն է միայն: Ոչ իրավական կամ արտաիրավական հասարակական գործոնների (քաղաքական, տնտեսական, բարոյական և այլն) բացասական ներգործության դեպքում իրավական-օրենսդրական կարգավորման ջանքերը կարող են չհասցնել նպատակին: Ընտրական գործընթացներում դրսևորվող այս օրինաչափությունը բնորոշ է ոչ միայն անցյալին, այլև մեր ժամանակներին:

Այսպիսով հետազոտելով մարդու և քաղաքացու իրավունքների սահմանադրական իրավական ամրագրման հիմնախնդիրները և 1990-1995 թթ. ընթացքում դրանց իրավական կարգավորման և երաշխավորման հիմնահարցերը կարող ենք եզրակացնել, որ մարդու իրավունքների իրավական կարգավորումը մինչև 1995 թ. Սահմանադրության ընդունումը տեղի էր ունենում ընթացիկ օրենսդրական գործունեության միջոցով ընդունված առանձին օրենքների ընդունման և մարդու առանձին իրավունքների իրավական երաշխավորման միջոցով: Սակայն այդ ժամանակաշրջանը մարդու իրավունքների իրավական կարգավորման հարցում անցել է մի քանի փուլերով:

Առաջին փուլը ներառում էր 1990 թ. օգոստոսի 23-ից մինչև 1990 թ. դեկտեմբերի 10-ի միջև ընկած շրջանը: Այս փուլում օրինաստեղծագործության տեխնիկական ընթանում էր մարդու և քաղաքացու առանձին իրավունքների կարգավորմանը նվիրված ընթացիկ օրենքների ընդունմամբ և դրանով պայմանավորված ՀիսՄ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելով:

Երկրորդ փուլը ներառում էր 1990 թ. դեկտեմբերի 10-ից մինչև 1991 թ. սեպտեմբերի 25-ի միջև ընկած ժամանակաշրջանը: 1990 թ. դեկտեմբերի 10-ին ընդունված «Հայաստանի անկախության մա-

սին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենքով դադարեցվեց գործող Սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում էին «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ԴԴ Գերագույն խորհրդի կողմից ընդունված օրենքներին»: Այդ պահից սկսած մարդու և քաղաքացու առանձին իրավունքների կարգավորմանը նվիրված ընթացիկ օրենքների ընդունմամբ ՀԽՍՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ չէին կատարվում: Ստացվում էր յուրահատուկ իրավիճակ՝ ընթացիկ օրենքների գերակայություն Սահմանադրության նկատմամբ: Այս փուլին բնորոշ իրավատեխնիկական գործելակերպը չփոխվեց նաև 1991 թ. սեպտեմբերի 25-ից, այսինքն՝ իրական անկախության հռչակումից հետո:

Երրորդ փուլը ներառում էր 1991 թ. սեպտեմբերի 25-ից մինչև 1995 թ. հուլիսի 5-ի միջև ընկած ժամանակաշրջանը: Այս փուլում օրինաստեղծագործության տեխնիկական ընթանում էր նախորդ փուլի պես՝ մարդու և քաղաքացու առանձին իրավունքների կարգավորմանը նվիրված օրենքների ընդունմամբ և դրանով պայմանավորված ՀԽՍՀ Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ չկատարելով, որովհետև գործում էր 1990 թ. դեկտեմբերի 10-ին ընդունված «Հայաստանի անկախության մասին» հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին» սահմանադրական օրենքը, որով ընթացիկ օրենքները ձեռք էին բերում գերակայություն Սահմանադրության նկատմամբ: Զուտ իրավատեխնիկական տեսանկյունից այն նոր փուլ չէր մարդու իրավունքների կայացման համար: Սակայն օրինաստեղծագործությունն արդեն ինքնիշխան և անկախ պետության մենաշնորհային գործունեությունն էր, ազատված դաշնային օրենսդրության կապանքներից:

Անկախության հռչակմամբ ընթացիկ օրենսդրությունը որդեգրեց ազատական ուսմունքից բխող անհատի սոցիալական ազատության և ազատ մարդը որպես քաղաքացիական հասարակության բարձրագույն արժեք սկզբունքները: Նոր ձևավորվող քաղաքացիական հասարակությունում անհատի ազատությունը հասկացվում և երաշխավորվում էր և՛ անձնական, և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ սոցիալական առումներով:

Levon Shakhparyan
*A postgraduate student of Philosophy, Sociology and Law Institute of the
National Academy of Sciences of the Republic of Armenia*

THE MAIN ISSUES OF CONSTITUTIONAL AND CURRENT LEGISLATIVE REGULATION OF HUMAN RIGHTS IN IN THE REPUBLIC OF ARMENIA IN 1990-1995

Thus, examining the main issues of constitutional legal reservation of human and citizen rights and the main problems of their legislative regulation and guarantee during 1990-1995, we can conclude that: legislative regulation of the human rights before the adoption of the constitution in 1995 was accomplished by the current legislative activity, adopted by means of adoption of different laws and legal guarantee of individual human rights. However, that period of legislative regulation of human rights had several stages. **First stage** includes the period from August 23, 1990 to December 10, 1990, when lawmaking technique was proceeding by means of adoption of current laws intended to regulate different human and civil rights and by means of amendments and additions related to the latest in the constitution of Armenian SSR. **Second stage** includes the period from December 10, 1990 to 1995. At this stage no amendments and additions related to the regulation of human and civil rights were made in the constitution of Armenian SSR by means of adoption of current laws, because current laws have supremacy over the constitution. After the proclamation of real independence until the adoption of the constitution of the Republic of Armenia, with the legal and technical point of view it was not a new stage in the regulation of human rights. However, lawmaking was a priority activity of an independent and autocratic country, which was liberated from the shackles of federal legislation. By the proclamation of independence the current legislation adopted the principles of social freedom of an individual.

Левон Шахпарян
Аспирант института философии, социологии и права НАН РА

ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННОГО И ЗАКОНОДАТЕЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ ПРАВ ЧЕЛОВЕКА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ В 1990-1995 г.

В РА правовое регулирование прав человека с 1990 по 1995г. проходило через принятие отдельных текущих законодательных актов. Этот период правового регулирования прав

человека проходило через несколько стадий. Первая включает период с 23-ого августа 1990г. до 10 декабря 1990г., когда техника законодательства проходила посредством принятия отдельных законов по вопросам прав человека и внесением изменений и дополнений в Конституцию. Вторая стадия включает период с 10 декабря 1990 г. по 1995г.: На этой стадии при принятии законодательных актов по правам человека в Конституцию изменения и дополнения не вносятся, поскольку была установлена принцип верховенства законов над Конституцией. В период после приобретения независимости до принятия Конституции 1995г., с точки зрения техники законодательства не является новой стадией в процессе становления прав человека. Однако это является законодательной деятельностью уже суверенного государства. С провозглашением независимости текущее законодательство взяло в основу принцип свободы личности.

Բանալի բառեր. անկախության հռչակագիր, իրավական քաղաքականություն, սահմանադրական օրենք, տնտեսական իրավունքներ, քաղաքական իրավունքներ, անձնական իրավունքներ, էկոլոգիական իրավունքներ, իրավունքների սոցիալիստական հայեցակարգ, իրավունքների ազատական հայեցակարգ, հետընթաց, աշխատանքի իրավունք, աշխատանքի ընտրության ազատություն:

Keywords: deklaration of independence, legal policy, constitutional law, economic rights, politikal rights, personal rights, ecological rights, socialistic concept of rights, liberal concept of rights, regress, labor law, fridom of labor chose.

Ключевые слова: Декларация независимости, правовая политика, конституционный закон, экономические права, политические права, личные права, экологические права, социалистическая концепция прав, либеральная концепция прав, регрес, право на труд, свобода выбора труда.

**ՀԱՎԱՍՐՑԱԿՑԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՊԵՍ ԱՆՎԱԿԵՐ ԳՈՐԾԱՐՔ**

Մրցակցային միջավայրի կառուցումն այն հիմնական ուղիներից մեկն է, որով պետությունը կարողանում է բարձրացնել երկրի բարեկեցությունը: Տվյալ ոլորտում պետությունը պետք է հետամնուտ լինի ինչպես ազատ մրցակցության գոյության համար անհրաժեշտ միջավայրի ստեղծմանը, այնպես էլ պատժի այն գործողություններին, որոնք վնաս են հասցնում տնտեսությանը:

Այդ իսկ պատճառով պետությունը հակաիրավական է համարում այն գործարքները, որոնք հանգեցնում են մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը: Մասնավորապես, ըստ «Տնտեսական մրցակցության մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի² (այսուհետ նաև «Օրենք») 5-րդ հոդվածի 1-ին մասի՝ հակամրցակցային համաձայնություններ են համարվում տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված այն գործարքները, նրանց համաձայնությունները, ուղղակի կամ անուղղակի համաձայնեցված գործողությունները կամ վարքագիծը, տնտեսվարող սուբյեկտների միավորումների ընդունած որոշումները, որոնք ուղղակի կամ անուղղակի հանգեցնում են կամ կարող են հանգեցնել մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Որպես հակամրցակցային համաձայնության կայացման եղանակ՝ Օրենքը առաջին հերթին առանձնացնում է «գործարք»-ը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի³ 436 հոդվածի 2-րդ կետը սահմանում է՝ «Պայմանագրերի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 18 գլխում նախատեսված երկկողմ և բազմակողմ գործարքների մասին կանոնները»: Հակամրցակցային համաձայնությունը ենթադրում է, որ դրան մասնակցում է երկու է ավելի սուբ-

¹ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Տ.Կ. Բարսեղյան:

² Տե՛ս ՀՀՊՏ 2000.12.15/30(128) «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք № ՀՕ-112

³ Տե՛ս ՀՀՊՏ 1998.08.10/17(50) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք

յեկտ: Ուստի Օրենքի 5-րդ հոդվածում օգտագործվող տնտեսվարող սուբյեկտների միջև կնքված «գործարք» հասկացությունը պետք է մեկնաբանել որպես պայմանագիր:

Հակամրցակցային համաձայնություն կայացնելու համար քաղաքացիաիրավական պատասխանատվությունը քննարկելիս առաջին հերթին անհրաժեշտ է հղում կատարել քաղաքացիական իրավունքի այնպիսի հիմնարար սկզբունքին, ինչպիսին պայմանագրի ազատությունն է:

Պետք է հաշվի առնել, որ շուկայական տնտեսության պայմաններում պայմանագրի ազատության սկզբունքը կենսական նշանակություն ունի: Այնպիսի տնտեսական համակարգերում, որտեղ հարաբերությունները կառուցվում են կողմերի միջև արժեքների համարժեք փոխանակման վրա, առանց պայմանագրի ազատության սկզբունքի անհնար է պատկերացնել շուկայական հարաբերությունների զարգացումը:¹

Պայմանագրի ազատությունը ենթադրում է պայանագրային հարաբերությունների մեջ մտնելու ազատություն, պայմանագրի տեսակը ընտրելու ազատություն, պայմանագրի պայմանները ընտրելու ազատություն:² Սակայն պայմանագրի ազատությունը չի կարող լինել բացարձակ. պայմանագրի ազատության սկզբունքի սահմանափակումները անխուսափելի են:³

Այդ իսկ պատճառով հենց Քաղաքացիական օրենսգրքով նախատեսվում է, որ պայմանագիրը չի կարող հակասել այն կնքելու պահին առկա իմպերատիվ նորմերին: Պայմանագրի ազատության այսպիսի սահմանափակումները կարող են կիրառվել ինչպես պայմանագրի թույլ կողմի կամ պարտատիրոջ իրավունքների պաշտպանության, այնպես էլ ողջ հասարակության և հասարակության

¹ St'u Ершов Ю. Л. Принцип свободы договора и его реализация в гражданском праве Российской Федерации, дисс. ... к.ю.н., Екатеринбург, 2001թ., էջեր 27-28:

² St'u Բարսեղյան Տ. Կ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, երրորդ հրատարակություն, ԵՊՀ հրատ., 2006, էջեր 429-430:

³ St'u Грибанов В. П. Осуществление и защита гражданских прав, Москва, Статут, 2000, էջ 22:

շահերը խտացված ձևով ներկայացնող պետության պաշտպանության համար:¹

Պայմանագրի ազատության սկզբունքի սահմանափակումները ի թիվս այլոց կարող են դրսևորվել պայմանագրում որոշակի պայմաններ ներառելու արգելքի ձևով:² Այնպիսի պայմանագրի կնքումը, որը կարող է համարվել հակամրցակցային համաձայնություն, պետք է դիտարկել որպես պայմանագիր, որը պարունակում է օրենքին հակասող դրույթներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը այն գործարքների համար, որոնք հանդիսանում են օրենքին հակասող, սահմանում է հետևյալ կարգավորումը՝ *Օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքն անվավեր է, եթե օրենքը չի սահմանում, որ նման գործարքն առոչինչ է կամ չի նախատեսում խախտման այլ հետևանքներ:*

ՀՀ վճռաբեկ դատարանը իր մի շարք որոշումներում³ կիրառել է այն մոտեցումը, որ եթե գործարքը չի կարող գնահատվել որպես առոչինչ, այն վիճահարույց է: Ուստի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305-րդ հոդվածով նախատեսված է գործարքների այսպես կոչված «վիճահարույցության» կանխավարկած, ըստ որի գործարքը համարվում է վիճահարույց այնքան ժամանակ, քանի դեռ օրենքով այլ հետևանք նախատեսված չէ:

Հակամրցակցային համաձայնության կայացման համար գործարքի առոչնչություն նախատեսված չէ, ուստի կարելի է պնդել, որ հակամրցակցային համաձայնություն հանդիսացող պայմանագիրը պետք է դիտարկել որպես վիճահարույց գործարք:

Պետք է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը տվյալ հարցում բավականին յուրօրինակ մոտեցում է դրսևորել: Բանն այն է, որ միջազգային պրակտիկայում առավել մեծ կիրառում է գտել «առոչնչության կանխավարկածը», ըստ որի օրենքին հակասող գոր-

¹ Ст'у Брагинский М. И., Витрянский В. В. Договорное право, книга первая, Издание второе, Статут, Москва, 2007, էջ 159:

² Ст'у Танага А. Н. Принцип свободы договора в гражданском праве России, дисс. ... к.ю.н., Краснодар, 2001թ. էջ 103:

³ Ст'у Քաղաքացիական գործ թիվ 3-1628(ՎԴ):

ծարքը համարվում է առեղծին, քանի դեռ օրենքով այլ հետևանք նախատեսված չէ: Մասնավորապես, Սերգեևյան նշում է, որ ըստ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի՝ օրենքին հակասող բոլոր գործարքները ընդհանուր կանոնի համաձայն համարվում են առեղծին, իսկ վիճահարույց միայն օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում¹, Էնեկցեռուսը նշում է, որ Գերմանիայի քաղաքացիական կանոնագրքի համաձայն՝ գործարքը առեղծին է, եթե պարունակում է օրենքին հակասող բովանդակություն², Ֆրանսիայի քաղաքացիական իրավունքին նվիրված աշխատությունում Մորանդիերը նույնպես նշում է, որ գործարքի ոչ թույլատրելի հիմքը բերում է բացարձակ անվավերության,³ այսինքն՝ առեղծության:

Առեղծության և վիճահարույցության տարբերակումը մեծ պրակտիկ նշանակություն ունի: Մենք պնդում ենք, որ օրենքին հակասող գործարքի, այդ թվում և հակամրցակցային համաձայնություն հանդիսացող գործարքի «վիճահարույցության կանխավարկածը» բավականին մեծ բարդություններ է ստեղծում ինչպես Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, այնպես էլ այն անձանց համար, ովքեր ցանկանում են հակամրցակցային համաձայնություն կայացնելու հետևանքով իրենց պատճառված վնասների հատուցման պահանջ ներկայացնել: Բարդություններ կարող են ծագել գործարքի իրավական ուժի և պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձանց շրջանակի հիմնախնդիրներից ելնելով: Քննարկենք դրանք առանձին-առանձին:

Գործարքի իրավական ուժի վերաբերյալ. Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303 հոդվածի՝ Գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առեղծին գործարք):

¹ St'u Гражданское право, под ред. Сергеева А. П., Толстого Ю. К., Том 1, Проспект, Москва, 2005թ., էջ 310

² St'u Эннекцерус Л. Курс германского гражданского права, полутом 1, Издательство иностранной литературы, Москва, 1950թ., էջ 118

³ St'u Морандьер Л. Гражданское право Франции, том 2, Издательство иностранной литературы, Москва, 1960թ., էջ 280

Տեսական գրականության մեջ բազմաթիվ են անվավեր գործարքների՝ նշված բաժանման վերաբերյալ արտահայտած կարծիքները: Մասնավորապես, Ռաբինովիչը նշում է, որ անվավեր գործարքների բաժանումը առոչինչի և վիճահարույցի արդարացված է, այն ճշգրիտ փոխանցում է տարբեր տեսակի անվավեր գործարքների բնույթը. մի դեպքում գործարքն անվավեր է ինքնին, մյուս դեպքում այն պետք է այդպիսին ճանաչվի դատարանի կողմից:¹ Այսինքն, ամեն դեպքում վիճահարույց գործարքը պետք է ճանաչել իրավաչափ, քանի դեռ այդ գործարքի վերաբերյալ դատարանը վճիռ չի կայացրել:² Ուստի, եթե որևէ գործարքի համար նախատեսված է, որ օրենքին հակասելու դեպքում այն կհամարվի վիճահարույց, պետք է ի նկատի ունենալ, որ այն կայացման պահից շարունակում է դիտարկվել որպես գոյություն ունեցող և բերում է այն հետևանքների, որոնց ուղղված է:³ Այսինքն, քանի դեռ առկա չէ դատարանի վճիռ, որը տվյալ գործարքը կճանաչի անվավեր, վիճահարույց գործարքը համարվում է պայմանական իրավաչափ:⁴

Ի տարբերություն դրան, առոչնչությունը այլ հետևանքներ է բերում: Մասնավորապես, առոչնչությունը ի հայտ է գալիս *ipso jure*. Եթե վիճահարույց գործարքի անվավեր ճանաչման համար դատական ակտը հանդիսանում է անհրաժեշտ պայման, ապա առոչինչ գործարքի դեպքում յուրաքանչյուր շահագրգիռ անձ կարող է այն չընդունել և վերաբերվել նրան որպես գոյություն չունեցող:⁵ Առոչինչ ակտը կարող է մերժվել ցանկացած անձի կողմից, ում առկա է պահանջ նշված ակտով:⁶

Այսպիսով, եթե տնտեսվարող սուբյեկտները հակամրցակցային համաձայնություն հանդիսացող գործարք կնքեն, առանց այդ

¹ St' u Рабинович Н. В. Недействительность сделок и ее последствия, Издательство Ленинградского университета, Ленинград, 1960թ., էջ 14

² St' u Рабинович Н. В. Недействительность сделок и ее последствия, Издательство Ленинградского университета, Ленинград, 1960թ., էջ 16

³ St' u Тузов Д. О. Теория недействительности сделок: опыт российского права в контексте европейской правовой традиции. М., 2007. էջ. 155

⁴ St' u Ульянов И. А. Влияние законодательства о защите конкуренции на гражданско-правовые сделки, дисс. ... к.ю.н., Москва, 2010թ., էջ 44

⁵ St' u Тузов Д. О Иски связанные с недействительность- сделок: теоретический очерк, «Пеленг», Томск, 1998թ., էջ 15

⁶ St' u Победоносцев К. П. Курс Гражданского права, ч. 3, «Статут», Москва, 2003թ., էջ 36

գործարքն անվավեր ճանաչելու մասին համապատասխան վճռի, այդ սուբյեկտները չեն կարող ենթարկվել պատասխանատվության, քանի որ կբացակայի գործունեության հակաիրավականությունը որպես պատասխանատվության կիրառման անհրաժեշտ պայման: Հետևաբար լիազոր մարմինը պատասխանատվություն կիրառելու համար պետք է հայց ներկայացնի դատարան պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջով, որից հետո միայն հնարավոր կլինի փաստել հակաիրավական վարքագծի առկայությունը և հիմնվելով դրա վրա՝ պատասխանատվության կիրառումը: Այսպիսի վիճակը, իհարկե, անհարկի ծանրաբեռնում է լիազոր մարմնին: Օրենքին հակասող գործարքի առոչնչության կանխավարկածի կիրառման դեպքում պետական մարմինը ստիպված չէր լինի դիմել դատարան, քանի որ առոչինչ գործարքը անվավեր է անկախ դատարանի կողմից այդպիսին ճանաչվելուց:

Հայց ներկայացնելու իրավունք ունեցող սուբյեկտների վերաբերյալ. Օրենքին հակասող գործարքի վիճահարույցության կանխավարկածը հանգեցնում է ևս մեկ հետևության:

Ինչպես նշվեց, քանի դեռ վիճահարույց գործարքը չի ճանաչվել անվավեր, այն համարվում է պայմանական իրավաչափ: Այս դեպքում, եթե անձն ուզում է պահանջել վնասների հատուցում հակամրցակցային համաձայնություն կայացնելու հետևանքով իրեն պատճառված վնասների համար, պետք է առաջին հերթին վիճահարույց գործարքի անվավերության պահանջ ներկայացնի:

Սակայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված են սուբյեկտների տարբեր կազմեր վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու և առոչինչ գործարքի անվավերության հետևանքների պահանջներ ներկայացնելու համար: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 303 հոդվածը սահմանում է, որ վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջը կարող են ներկայացնել օրենսգրքում նշված անձինք, իսկ առոչինչ գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահագրգիռ անձ:

Այսինքն, վիճահարույց գործարքն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու համար անձը պետք է նշված իրավունքով օժտված լինի հենց օրենսգրքով: Քաղաքացիական օրենսգիրքը

որևէ անձի իրավունք չի տալիս գործարքն օրենքին հակասելու հիմքով հայց ներկայացնել դատարան: Միայն Օրենքի 19-րդ հոդվածը Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին իրավունք է վերապահում դիմելու դատարան տնտեսվարող սուբյեկտների՝ օրենքի խախտմամբ կնքված պայմանագրերը լրիվ կամ մասնակի անվավեր ճանաչելու պահանջով:

Արդյունքում որևէ անձի վերապահված չէ հակամրցակցային համաձայնություն հանդիսացող գործարքն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու իրավունք: Այսինքն, նշված անձանց իրավունքների պաշտպանությունը դրվում է պետական լիազոր մարմնից ամբողջական կախվածության մեջ:

Ուստի հակամրցակցային համաձայնություն հանդիսացող գործարքի որպես հետևանք առաջնություն նախատեսելը հանրավորություն կտա պաշտպանել առավել լայն շրջանակի անձանց իրավունքները:¹

Բացի այդ՝ տեսական գրականության մեջ հաճախ է նշվել, որ պետությունը այս կամ այն գործարքը առաջինն կամ վիճահարույց դասելու դեպքում հաշվի է առնում այն շահերը, որոնց նա վնասում է: Եթե գործարքը վնասում է հանրային շահը, այն պետք է առաջինն լինի, եթե մասնավոր՝ վիճահարույց:² Այս տեսակետից նույնպես արդարացի է հակամրցակցային համաձայնություն հանդիսացող գործարքի համար որպես հետևանք առաջնություն նախատեսելը, քանի որ այսպիսի գործարքը վնաս է հասցնում ամբողջ մրցակցային իրավիճակին:

Arsen Tavadyan

PhD Student of Chair of Civil Law, YSU

ANTICOMPETITIVE AGREEMENT AS AN INVALID TRANSACTION

The article covers anticompetitive agreements within the scope of the principle of freedom of contract. The author states that the anticompetitive agreement, if made in the form of a contract, shall be considered as a transaction contradicting the law.

¹ Ст'у Ульянов И. А. Влияние законодательства о защите конкуренции на гражданско-правовые сделки, дисс. ... к.ю.н., Москва, 2010թ., էջ 38

² Ст'у Ульянов И. А. Влияние законодательства о защите конкуренции на гражданско-правовые сделки, дисс. ... к.ю.н., Москва, 2010թ., էջ 37

For such transactions the Armenian legislative body has determined a “presumption of controversy”. Such regulation is subject to criticism.

Bringing examples of disputable circumstances, which may appear as a result of applying “presumption of controversy”, and based on the foreign practice the author suggests determining the voidness as an outcome of adoption of anticompetitive agreement.

Арсен Тавадян

Аспирант кафедры гражданского права ЕГУ

АНТИКОНКУРЕНТНОЕ СОГЛАШЕНИЕ КАК НЕДЕЙСТВИТЕЛЬНАЯ СДЕЛКА

В статье анализируются антиконкурентные соглашения в рамках принципа свободы договора. Автор отмечает, что антиконкурентные соглашения, если последние были совершены в виде договора, должны рассматриваться как сделки, противоречащие закону.

Армянский законодатель для таких сделок установил “принцип оспоримости”, что подвергается критике.

Приводя примеры спорных ситуаций, которые могут возникнуть при наличии “принципа оспоримости”, также основываясь на зарубежном опыте, автор предлагает установить ничтожность как следствие совершения антиконкурентного соглашения.

Բանալի բաներ՝ գործարք, մրցակցություն, հալածմրցակցային համաձայնություն, մենաշնորհ, պայմանագիր

Keywords: contract, competition, anticompetitive agreement, monopoly, agreement

Ключевые слова: сделка, конкуренция, антиконкурентное соглашение, монополия, договор

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐԴԵԳՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ**

Երեխաների իրավունքների քննարկման հարցը ծագեց 19-րդ դարի դեմոկրատական շարժման արդյունքում: Այդ շրջանում պետություններն իրենց վրա վերցրին ծնողների կամայականություններից, գործատուների կողմից տնտեսական շահագործումից երեխաների պաշտպանության պատասխանատվությունը: Անհրաժեշտ էր երեխաների ստրկացման, երեխաների աշխատանքի, երեխաների առևտրի և անչափահասների մարմնավաճառության դեմ միջոցներ ձեռք առնել: Դրա հետ կապված Ազգերի Լիգան 1924 թվականին ընդունեց «Երեխաների իրավունքների մասին» ժնկյան Հռչակագիրը:

1945 թվականին Միավորված ազգերի կազմակերպության ստեղծման պահից երեխաների իրավունքները մշտապես ուշադրության կետրոնում են գտնվում: ՄԱԿ-ի **Գլխավոր Ասամբլեայի առաջին ակտերից մեկը ՄԱԿ-ի Երեխաների Ֆոնդի (UNICEF) ձևավորումն էր:** Այդ ֆոնդը մինչ օրս հանդիսանում է երեխաներին օգնության հիմնական մեխանիզմը: 1948 թվականին «Մարդու իրավունքների և ազատությունների համընդհանուր հռչակագրի» ընդունմամբ ճանաչվեց երեխաների իրավունքների հատուկ պաշտպանության անհրաժեշտությունը: Շեշտվում է, որ երեխան պետք է լինի հատուկ խնամքի և օգնության օբյեկտ:

1959 թվականին ընդունվեց Երեխաների իրավունքների Հռչակագիրը: Տվյալ փաստաթուղթը հռչակում է սկզբունք, որ *«...մարդկությունը պարտավոր է տալ երեխային լավագույն ունեցածը»:* Նրանում հռչակվում են ազգային և միջազգային մակարդակներում երեխաների պաշտպանության և բարօրության հետ կապված սոցիալական և իրավական սկզբունքներ: Հռչակագիրը ծնողներին, առանձին անձանց, ոչ պետական մարմիններին, տեղական մար-

¹ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Մ. Հայկյանց:

միններին և կառավարություններին կոչ է անում ճանաչել նրանում շարադրված իրավունքները և ազատությունները: Նաև նշում է, որ երեխաների համար անհրաժեշտ է ապահովել հատուկ պաշտպանություն և ընծեռել հնարավորություն ու պայմաններ, որոնք թույլ կտան նրանց զարգանալու առողջ ու նորմալ ճանապարհով՝ ազատության ու արժանապատվության պայմաններում:

Երեխաների իրավունքների հռչակագիրը մեծ ազդեցություն թողեց կառավարությունների և առանձին անձանց քաղաքականության ու գործերի վրա ամբողջ աշխարհում¹: Սակայն Հռչակագրի ոչ պարտադիր՝ խորհրդատվական բնույթի հետ կախված առաջ եկավ Կոնվենցիայի ընդունման անհրաժեշտության խնդիր: Աշխատանքներն ընթանում էին լեհ պրոֆեսոր Ադամ Լոպատկայի ղեկավարությամբ: Հանձնաժողովը կազմված էր աշխարհի տարբեր երկրների իրավաբաններից, բժիշկներից, մանկավարժներից, հոգեբաններից, սոցիոլոգներից, հասարակական գործիչներից և կրոնական կազմակերպություններից: Հանձնաժողովի աշխատանքի արդյունքը եղավ «Երեխաների իրավունքների մասին» Կոնվենցիան (ընդունվել է 20.11.1989թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից, Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1992 թվականին):

Կոնվենցիայի հիմնական սկզբունքը երեխային որպես լիարժեք և լիիրավ անհատի ճանաչումն է:

Կոնվենցիան երեխա է ճանաչում ցանկացած մարդկային արարածի, որի 18 տարին չի լրացել, եթե ազգային օրենսդրությամբ նախատեսված չէ չափահասության ավելի վաղ տարիք:

Կոնվենցիայի հիմնարար դրույթները կարելի է սահմանել հետևյալ կերպ. անդամ-պետությունները ապահովում են յուրաքանչյուր երեխայի իրավունքների *իրականացում առանց որևէ խտրականության (հոդված 2), առավելագույնս ապահովում են երեխայի շահերը (հոդված 3), ապահովում են կյանքի, գոյատևման և զարգացման իրավունքը (հոդված 6):*

Միջազգային որդեգրման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել Կոնվենցիայի նորմերը: Մասնավորապես, 16 հոդվածը սահմա-

¹ Стен Шнекендорф З.К. Путеводитель по Конвенции о правах ребенка. - М.: Рос.пед. агентство, 1997. - էջ 9

նում է, որ երեխան չի կարող իր անձնական, ընտանեկան կյանքի իրագործման ժամանակ կամայական կամ անօրինական միջամտության օբյեկտ լինել: Երեխայի համար երաշխավորվում է այդպիսի միջամտությունից և ոտնձգությունից պաշտպանության իրավունք:

Կոնվենցիայի 21 հոդվածը հռչակում է որդեգրման ժամանակ երեխայի շահերի առավելագույն ապահովումը որպես հիմնարար սկզբունք: Անդամ-պետությունները պետք է ապահովեն, որ որդեգրումը իրականացվի միայն պետական իրավասու մարմինների կողմից: Պահանջվում է, որ որդեգրումը իրականացվի միայն այն դեպքում, երբ երեխան ունի անհրաժեշտ կարգավիճակ, այսինքն, երբ բոլոր շահագրգիռ անձինք տվել են իրենց համաձայնությունը, և երեխան հետագայում չի կարող հետ պահանջվել որդեգրողներից: Կոնվենցիան որդեգրումը այլ պետությունում դիտարկում է որպես երեխայի հանդեպ խնամքի այլընտրանքային միջոց. այսինքն՝ միայն այն դեպքում, երբ երեխան չի կարող հանձնվել դաստիարակման կամ որևէ ընտանիք, որը կկարողանար ապահովել նրա դաստիարակությունը կամ որդեգրումը, և երբ որևէ համապատասխան խնամքի ապահովումը երեխայի ծագման պետությունում անհնար է, ընդ որում անդամ-պետությունները պետք է միջազգային որդեգրման ժամանակ երեխայի համար ապահովեն այնպիսի նորմերի կիրառման երաշխիքներ, որոնք կիրառվում են ներպետական որդեգրման ժամանակ:

Պետություններին առաջարկվում է կնքել երկկողմ և բազմակողմ պայմանագրեր, որպեսզի ապահովվի երեխայի՝ այլ պետությունում որդեգրման իրականացումն իրավասու մարմինների կողմից:

Վերոգյալի հետ կապված՝ անհրաժեշտ է նշել, որ որդեգրման վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը որդեգրել է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված նորմերը: Այն ելնում է Կոնվենցիայի 21 հոդվածում ներառված սկզբունքներից:

Միջազգային որդեգրման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել նաև Կոնվենցիայի այլ սկզբունքները: Հաշվի առնելով այն, որ որդեգրողները ձեռք են բերում կենսաբանական ծնողների բոլոր ի-

րավունքներն ու պարտականությունները, նրանք նաև համապարտ պատասխանատվություն են կրում երեխայի դաստիարակման ու զարգացման համար: Անդամ-պետությունները պետք է ձեռք առնեն բոլոր անհրաժեշտ օրենսդրական ու վարչական միջոցառումները, որպեսզի երեխային պաշտպանեն ֆիզիկական կամ հոգեբանական ցակացած ձևի բռնությունից, խնամքի բացակայությունից, կոպիտ կամ անբարեխիղճ վերաբերմունքից, ինչպես նաև ծնողների կամ երեխայի նկատմամբ խնամք իրականացնող ցանկացած անձի կողմից շահագործումից:

Խնամքից ու ընտանեկան միջավայրից երեխայի զրկվելու դեպքում երեխան, իր առավելագույն շահից ելնելով, ունի պետության կողմից խնամքի փոխարինման իրավունք: Որպես փոխարինում կարող է ծառայել, օրինակ՝ մուսուլմանական օրենսդրությամբ երեխային «կաֆալա»-ի դաստիարակմանը տալը, որդեգրումը կամ տեղափախումը համապատասխան հաստատություն: Այդ դեպքում անդամ-պետությունները պարտավոր են հարգել երեխայի իրավունքը պահովելու իր անհատականությունը, ներառյալ քաղաքացիությունը, անունը և ընտանեկան կապերը: Կոնվենցիան պարտավորեցնում է երկու ծնողների հետ էլ պահել անձնական հարաբերությունները, բացառությամբ այն դեպքերի, երբ դա հակասում է երեխայի շահերին:

Հաշվի առնելով այն, որ ՀՀ-ում և առհասարական միջազգային որդեգրմամբ որդեգրվում են նախևառաջ ֆիզիկական արատ ունեցող երեխաները, հետաքրքրական է Կոնվենցիայի 23 հոդվածը: Համաձայն այդ հոդվածի՝ ֆիզիկապես կամ մտավոր ոչ ամբողջական երեխան պետք է ունենա լիարժեք ու արժանապատիվ կյանք: Այդպիսի երեխան հատուկ խնամքի իրավունք ունի և անդամ-պետությունները խթանում ու ապահովում են նրա համար այդպիսի օգնությունը: Կոնվենցիան նախատեսում է բոլոր երեխաների համար ապահովել առողջապահական առավել կատարյալ համակարգից օգտվելու իրավունքը: Այն իմաստով, որ ժամանակակից պայմաններում ՀՀ-ում հիվանդ երեխաների խնամքը իրենից դժվարություններ է ներկայացնում, հարկ է նրանց տալու այդ հնարավորությունը: Կոնվենցիան պաշտպանում է երեխային տնտեսական

շահագործումից, նրա առողջական վիճակը վտանգի տակ դնող աշխատանք կատարելուց, ցակացած տեսակի սեռական շահագործումից և սեռական չարաշահումից:

Այսպիսով, Կոնվենցիան ներառում է քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մի ամբողջ համակարգ: Այն հռչակում է երեխաների շահերի գերակայություն պետության պահանջմունքների նկատմամբ և սահմանում, որ երեխայի զարգացման համար անհրաժեշտ է առողջապահական համապատասխան մակարդակ, անվտանգ շրջակա միջավայր և ծնողների կամ նրանց փախարհնող անձանց կողմից հոգատարություն:

ՀՀ ընտանեկան օրնագիրքը որդեգրել է Կոնվենցիայի դրույթները և նախատեսում է ընտանեկան հարաբերություններում երեխաների իրավունքների երաշխիքների էական ուժեղացում: Օրենսգրքում առանձնացված է գլուխ «Երեխաների իրավունքները» (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 10 գլուխ), իսկ 1996 թվականին ընդունվել է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որի 4-րդ գլուխը նվիրված է երեխայի իրավունքների պաշտպանության պետական քաղաքականության ծրագրային հիմունքներին: Տվյալ գլխի համաձայն՝ երեխայի իրավունքների պաշտպանության աշխատանքներն իրականացվում են երեխայի իրավունքների պաշտպանության տարեկան ծրագրերով («Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 33), և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները արտացոլվում են համապատասխան տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունում (հոդված 35):

Միջազգային որդեգրումների հերթական ալիքը եկավ 20-րդ դարի 60-ականներին: Այդ շրջանում որդեգրմամբ զբաղվող մասնագիտացված գործակալությունները սկսեցին մուտք գործել գաղութային կախվածությունից դուրս եկած երկրներ: Չնայած նրան, որ այդ երկրները էականորեն տարբերվում էին միմյանցից լեզվով, մշակույթով, ավանդույթներով, այնուամենայնիվ նրանք բոլորը ունեին երկու ընդհանուր գիծ՝ բարձր ծնելիություն և ծայրահեղ ցածր կենսամակարդակ: Որպես կանոն, որդեգրողները զարգացած երկրների քաղաքացիներ էին, իսկ որդեգրվողները՝ երրորդ աշ-

խարհի երկրների երեխաներ: Այդ երկրներում պատերազմներ էին, սով ու այլ աղետներ, որոնք բերում էին մանկության պահանջմունքների բավարարման համար անրաժեշտ ռեսուրսների անբավարարություն: 80-ականներին օտարերկրացիների կողմից որդեգրումը երկրների մեծ մասում դարձավ սովորական երևույթ¹: Մինչև այդ գործին եվրոպական երկրների միանալը, աշխարհում տարեկան իրականացվում էր մոտ 20 հազար նմանատիպ որդեգրում²:

Սրա հետ կապված՝ այն պետությունները, որոնցում ակտիվորեն իրականացվում է օտարերկրյա տարրով որդեգրում, ձգտում են կարգավորել միջազգային որդեգրման ժամանակ ծագող կոլիզիաները՝ ներպետական իրավունքում հմապատասխան կոլիզիոն նորմերի սահմանմամբ, օրինակ՝ ընդունում են միջազգային մասնավոր իրավունքի մասին օրենքներ, ինչպես նաև կնքում են միջազգային որդեգրման բնագավառում համագործակցության երկկողմ պայմանագրեր: Միջազգային հանրության համար միջազգային որդեգրման առավել սուր հարցերի կարգավորման հատուկ անհրաժեշտությունը ակնհայտ դարձավ 80-ականներին, երբ հաստատվեց 60-ականներին միազգային որդեգրման դեպքերի կտրուկ աճի փաստը, որի լուծման միակ միջոցը միջազգային համաձայնագրի մշակումն ու կնքումն էր:

Օտարերկրյա տարրով որդեգրման հարեցերին էր նվիրված 1967 թվականի Որդեգրման մասին Եվրոպական կոնվենցիան, որը գործում է ԵՄ մասնակից կողմերի միջև և բովանդակում է հիմնականում ունիֆիկացված նորմեր որդեգրման և որդեգրման իրավական հետևանքների մասին: Կարծիք է հայտնվում այն մասին, որ Կոնվենցիան հանդես է գալիս որպես «մոդելային օրենք», որի նորմերը պետությունները պետք է հարմարեցնեն իրենց ներքին օրենքներին³: Փորձենք չհամաձայնվել այս կարծիքի հետ, քանի որ

¹ Дюжева О.А. Проблемы законодательства о международном усыновлении// Государство и право. - 1995. №6. - էջ 41.

² Gitlin H.J. Adoptions. An Attorneys Guide to helping adoptive parents. - Wilmet, 1987. - էջ 64.

³ Stiu Hesseler Michael. Die gesellschaftliche Organisation von besonders problematischen Sozialisationsprozessen am Beispiel der Adoption von Ausleanderkindern. Jnaug.Diss.zur Erlaung des Doktor grades der Philos. - Meunchen, 1979. -S. 363

մողելային օրենքը կրում է խորհրդատվական բնույթ, հետևաբար չունի պարտադիր կիրառում, մինչդեռ Կոնվենցիան հանդիսանում է պարտադիր փաստաթուղթ այն ստորագրած պետությունների համար:

Այս Կոնվենցիայի դրույթները վերաբերում են 18 տարի չլրացած երեխաների որդեգրմանը, եթե նրանք ամուսնացած չեն կամ ամուսնացած չեն եղել ու չափահաս չեն օրենքի ուժով (հոդված 3):

Համաձայն 6 հոդվածի՝ որդեգրման իրավունք ունեն մեկ կամ երկու անձ, եթե նրանք միմյանց հետ օրինական ամուսնության մեջ են: Ընդ որում թույլատրվում է ամուսիններից մեկի կողմից որդեգրում:

Սահմանվում է որդեգրողի տարիքը 21-35 տարեկան:

Կոնվենցիան ելնում է որդեգրվածի ու ամուսնության մեջ գտնվող երեխաների իրավունքների հավասարակշռման սկզբունքից (հոդված 10): Որդեգրողը որդեգրվածի հանդեպ ձեռք է բերում նույնաիսի իրավունքներ և պարտականություններ, որոնք գոյություն ունեն ծնողների մոտ իրենց կենսաբանական երեխաների հանդեպ և, ընդհակառակը, որդեգրվածը որդեգրողի հանդեպ ձեռք է բերում նույն իրավունքներն ու պարտականությունները, որոնք սահմանված են երեխաների և նրանց կենսաբանական ծնողների համար: Այս Կոնվենցիան նույնպես հռչակում է որդեգրման հիմնարար սկզբունքը. որդեգրումը իրականացվում է՝ երեխայի շահերից ելնելով:

Մասնակիցների նեղ շրջանակի արդյունքում Կոնվենցիան չէր կարող դառնալ միջազգային որդեգրման հարցը կարգավորող հիմնական ակտ: Անհրաժեշտ էր հաշվի առնել, որ տարբեր երկրների իրավական համակարգերը սահմանում են որդեգրման համար անհրաժեշտ տարբեր փաստաթղթային պահանջներ, որդեգրումից հետո երեխայի իրավունքների պաշտպանության տարբեր երաշխիքներ, որդեգրման ճանաչման ու վերացման տարբեր կարգեր: Այս ամենը անհրաժեշտություն է առաջացնում միասնական կանոնների օգտագործման, որոնք կնշակվեին ու կըդրվեին միջազգային համագործակցության կողմից:

1971թ. սեպտեմբերին Միլան քաղաքում տեղի ունեցավ «օ-

տարերկրյա տարրով» ծանրաբեռնված երեխաների որդեգրման վերաբերյալ հատուկ կոնֆերանս¹: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցեցին 42 պետությունների ներկայացուցիչներ: Քննարկվում էին օտարերկրյա որդեգրման վերաբերյալ առավել վիճելի հարցեր. որդեգրվածի քաղաքացիության, նրա ազգության, դավանանքի հարցերը: Կոնֆերանսի արդյունքը եղավ միջազգային որդեգրման վերաբերյալ միջազգային համաձայնագրի կնքման մասին որոշումը՝ նպատակ ունենալով վերացնելու կոլիզիոն խնդիրները²:

Ընդունվեց հռչակագիր, որով կոնֆերանսի մասնակիցները դիմեցին ՄԱԿ-ին՝ առաջարկելով իրականացնել միջազգային որդեգրման կարգավորման համաշխարհային կոնվենցիայի ընդունման համար միջազգային կոնֆերանս:

1987թ. դեկտեմբերին Միջազգային մասնավոր իրավունքի հարցերով Հաագային Կոնֆերանսի Մշտական Բյուրոն մշակեց ուղեցույցներ միջազգային որդեգրման բնագավառում միջազգային նոր կոնվենցիա մշակելու նպատակահարմարության մասին: Տվյալ ուղեցույցները ներառում էին Հաագայի Որդեգրման մասին 1980թ. Կոնվենցիայի թերությունների վերլուծությունը և առաջարկում էին միջազգային որդեգրման ոլորտում անվտանգության էական միջոցառումների ընդունման անհրաժեշտության և ծագման ու ընդունման երկրների միջև համագործակցության համակարգի ներդրումը ուսումնասիրող նոր կոնվենցիայի նախագիծը: 1988թ. տեղի ունեցած Կոնֆերանսի 16-րդ նստաշրջանում որոշում ընդունվեց 17-րդ նստաշրջանի աշխատանքներում նոր կոնվենցիայի մշակման հարցը ներառել: Նաև որոշում ընդունվեց պարտադիր կերպով կոնվենցիայի մշակմանը ներգրավել տվյալ կոնվենցիայի մասնակից չհամարվող պետությունների: Նստաշրջանի նախապատրաստման շրջանակներում 1990, 91 և 92թթ.-ին տեղի ունեցան Հատուկ Հանձնաժողովի հանդիպումներ: 17-րդ նստաշրջանը տեղի ունեցավ 1993թ. մայիսի 10-ին, որում քննվեց Կոնվենցիայի նախա-

¹ Ст'ю Городецкая И.К. Международная защита прав и интересов детей. - М.: Международные отношения, 1973.-С. 73

² Ст'ю The New York Times. Sept. 19.1971.

գիծը, որն անվերապահորեն և միաձայն ընդունվեց 1993թ. մայիսի 29-ին: Կոնվենցիայի նախապատրաստման, քննարկման աշխատանքներում մասնակցություն ունեցան 67 պետություններ, 5 միջկառավարական կազմակերպություններ՝ ներառյալ ՄԱԿ-ը և Ինտերպոլը և 12 ոչ կառավարական միջազգային կազմակերպություններ (Հայաստանը «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի 1993 թվականի Կոնվենցիան վավերացրել է 2007 թվականի հունիսի 1-ին):

Զնայած միջազգային որդեգրման հարցում կարծիքների և հայացքների տարբերությանը՝ Կոնվենցիայի հանդեպ միևնույն հետաքրքրությունը ցուցաբերեցին ինչպես պետություններ, որոնք հիմնականում որդեգրում են երեխաներ արտասահմանից, այնպես էլ պետություններ, որտեղից իրականացվում է միջազգային որդեգրում: Կոնվենցիայի քննարկման և ընդունման մեջ մասնակցություն ունեցող պետությունները ոգևորված էին «աշխարհի անօթևան երեխաներին՝ նրանց շահերի առավելագույն պահպանմամբ ընտանիք ունենալու հնարավորություն տվող արդյունքին հասնելու միասնական կամքով»¹:

Պետությունները ընդունեցին, որ ընտանիքում դաստիարակությունը և ապրելը ունի առաջնային և ծայրաստիճան կարևոր նշանակություն երեխայի երջանկության և առողջության համար: Միևնույն ժամանակ մասնակիցները սահմանեցին, որ միջազգային որդեգրումը պետք է քննարկվի որպես երեխայի համար ընտանիք փնտրելու այլընտրանքային միջոց: Երեխայի համար կատարյալը մեծանալն ու դաստիարակվելն է այն ընտանիքում, որտեղ նա ծնվել է: Եթե դա հնարավոր չէ, ապա որդեգրող ընտանիքը պետք է փնտրել նրա ծագման երկրում: Եթե այդպիսի ընտանիք ծագման երկրում չկա, ապա նոր միայն միջազգային որդեգրումը կօգնի երեխային գտնելու մշտական սիրող ընտանիք: Եզրափակիչ մասում պետությունները սահմանեցին, որ անհրաժեշտ է միջոցառումներ ձեռք առնել երեխայի պաշտպանության ապահովման համար, որպեսզի միջազգային որդեգրումը ծառայի երեխայի առավելագույն

¹ См. X. ван Лун. Международное сотрудничество и защита в области международного усыновления. Recueil des 6 cours de l'Académie de droit international de La Haye, Том 244 (1993-VII), стр. 335, параграф 181

շահերին և արմատախիլ անի նրա հետ դաժան վերաբերմունքը:

Ջանքեր գործադրվեցին մի փաստաթղթի մշակման համար, որը առավելագույնս ընդունելի կլիներ պետություններից մեծամասնության համար և հանդես կգար երեխայի առավելագույն շահերի պաշտպանությամբ, ինչպես նաև հիմք կստեղծեր միջազգային համագործակցության համար: 1993թ. Հաագայի Կոնվենցիան իրացնում է Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիայի 21-րդ հոդվածի նպատակները. *«Որդեգրման համակարգի գոյությունը ընդունող կամ թույլատրող մասնակից պետություններն ապահովում են, որ երեխայի լավագույն շահերը հաշվի առնվեն առաջնահերթ կերպով, և նրանք հարկ եղած դեպքում երկկողմ կամ բազմակողմանի պայմանավորվածությունների և համաձայնագրերի կնքման ուղիով նպաստում են սույն հոդվածի նպատակներին հասնելուն և դրա հիման վրա ձգտում են ապահովել, որ երեխային այլ երկրում տեղավորելը իրականացվի իրավասու իշխանությունների կամ մարմինների կողմից»:*

Իրականում 1993թ. Կոնվենցիան հստակեցնում և լրացնում է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի լայն սկզբունքներն ու նորմերը՝ ավելացնելով որդեգրման անվտանգության և ընթացակարգի էական դրույթներ: 1993թ. Կոնվենցիան սահմանում է նվազագույն ստնադարտները և կոչված չէ լինելու որդեգրմանը վերաբերող միակ օրենքը: Երեխայի իրավունքները դիտարկելով որպես առաջնային՝ Կոնվենցիան նաև հարգում է ինչպես կենսաբանական, այնպես էլ որդեգրող ընտանիքների իրավունքները:

Աշխատանքի արդյունքը դարձավ հատուկ Կոնվենցիան՝ նորարարական փաստաթուղթը, որն առավելագույնս ընդգրկում է որդեգրման բազմաթիվ հարցեր: Մասնավորապես, Կոնվենցիան ներառում է իրավունքի տարբեր ոլորտներ այնպես, ինչպես Մարդու իրավունքները, իրավական և վարչական համագործակցությունը, միջազգային մասնավոր իրավունքը և այլն:

Տվյալ արդյունքը համառոտ նկարագրված է Կոնվենցիայի նախաբանում, որտեղ ասվում է. *«Սույն Կոնվենցիան ստորագրած պետությունները՝*

ճանաչելով, որ երեխային՝ նրա անձի ամբողջական և ներդաշնակ զարգացման համար անհրաժեշտ է մեծանալ ընտանեկան երջանկության, սիրո և ըմբռնման միջավայրում,

կոչ անելով, որ յուրաքանչյուր պետություն որպես առաջնային խնդիր համապատասխան միջոցառումներ ձեռք առնի նրա համար, որպեսզի երեխան մեծանա իր ընտանիքում,

Ճանաչելով, որ միջազգային որդեգրումը կարող է երեխային, ում համար համապատասխան ընտանիք չի կարող գտնվել ծագման երկրում, հնարավորություն ընձեռել ունենալու մշտական ընտանիք,

վստահ լինելով, որ ձեռք կառնվեն այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված են նրան, որպեսզի միջազգային որդեգրումը իրականացվի երեխայի առավելագույն շահերի պահպանմամբ և նրա հիմնական իրավունքների հարգմամբ, ինչպես նաև երեխաների առևանգման, առևտրի կամ անօրինական տեղաշարժի կանխմամբ,

ունենալով միջազգային փոստաթղթերում նկարագրված սկզբունքների հաշվի առնմամբ այդ նպատակին հասնելու ընդհանուր դրույթների ստեղծման հստակ մտադրություններ, մասնավորապես 1989թ. նոյեմբերի 20-ի Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան, Երեխաների պաշտպանությանը և բարեկեցությանը վերաբերող սոցիալական և իրավական սկզբունքների մասին ՄԱԿ-ի Հռչակագիրը և հատկապես ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1986թ. դեկտեմբերի 3-ի 41/85 Բանաձևը՝ երեխային խնամակալության հանձնելու և ազգային ու միջազգային մակարդակներում նրա որդեգրման մասին.

Համաձայնվեցին հետևյալի մասին...

Կոնվենցիայի ընդունումը դարձավ կարևոր միջազգային իրադարձություն, և բոլոր մասնակիցները հասկանում էին. Որպեսզի «ստիպեն» Կոնվենցիային աշխատել, անհրաժեշտ է լինելու անընդհատ և երկարատև ջանքեր առանձին անձանց, կազմակերպությունների և Կառավարությունների կողմից: Մասնակիցները նաև հասկանում էին, որ ծայրահեղ անհրաժեշտ է իրականացնել Կոնվենցիայի գործողության աշխատանքների անընդհատ գնահատական, և որ հատկապես ծագման երկրները իրենց պարտականությունների իրականացման հարցում աջակցության կարիք կունենան:

Կոնվենցիայի աշխատանքների նկարագրման նպատակով անց է կացվել Հատուկ Հանձնաժողովի 3 հանդիպում, որից առաջինը տեղի է ունեցել 1994թ.-ին այնպիսի հարցերի ուսումնասիր-

ման համար, ինչպիսիք են Կոնվենցիայի կիրառման հարցը և փախստական երեխաների հանդեպ դրա կիրառումը¹: 2000թ.-ին անցկացված երկրորդ հանդիպման ժամանակ քննարկվեցին Կոնվենցիայի փաստացի աշխատանքի հետ կապված հարցեր: 2005թ.-ին կայացած երրորդ հանդիպման ժամանակ Հատուկ Հանձնաժողովը հաստատեց Առաջադեմ փորձի օգտագործման Ուղեցույցը²: Այստեղ քննարկվեց որդեգրումից հետո երեխայի ծագման պետությանը հաշվետվությունների ներկայացման հարցը: Բազմաթիվ կողմ և դեմ կարծիքների արդյունքում Հատուկ Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ առաջարկեց ընդունող պետություններին երեխայի ծագման պետության օրենսդրության պահանջներին համապատասխան՝ ներկայացնել հաշվետվություններ և պատասխանել ծագման պետության խելամիտ բոլոր հարցերին՝ կապված երեխայի՝ որդեգրումից հետո ճակատագրի մասին: Կիրառելով Կոնվենցիայի դրույթները և հատկապես 2005 թվականի Հատուկ Հանձնաժողովի եզրահանգումները՝ ՀՀ Կառավարության կողմից 2010թ. մարտի 18-ին ընդունվել է 269-Ն որոշումը՝ «որդեգրման կարգը եվ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչություններում կամ հյուպատոսական հիմնարկներում օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց և Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների կողմից որդեգրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխայի հաշվառման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1919-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»: Այս որոշման Հավելված 2-ի համաձայն՝ որդեգրողների կողմից որդեգրված ՀՀ քաղաքացի երեխաների հաշվառումն իրականացնում է որդեգրողների մշտական բնակության դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյու-

¹ St' u J.H.A. van Loon. The Hague Conference on Private International Law// Yearbook of Private International Law. Volume-III, 2001. - էջ 242-243.

² Сообщения и заключения специальных комиссий по практическому действию Гаагской Конвенции от 29.05.93 г. О защите детей и сотрудничестве в отношении международного усыновления составленные Постоянным Бюро. // www.hcch.net.doc

պատոսական հիմնարկը, իսկ դրանց բացակայության դեպքում ՀՀ ատրաքին գործերի նախարարությունը: Նույն որոշման 64 կետի համաձայն՝ «Կենտրոնական մարմինն օտարերկրյա պետություն որդեգրված երեխայի կյանքի պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով յուրաքանչյուր տարին մեկ անգամ՝ մինչև որդեգրման 5 տարին լրանալը, դիմում է համապատասխան պետության իրավասու մարմնին»:

Կոնվենցիայի մշակման գլխավոր նպատակն է բազմակողմ փաստաթղթի ստեղծումը, որը կսահմանի երեխաների պաշտպանության ապահովման կոնկրետ ու հիմնարար սկզբունքները, կսահմանի ծագման ու ընդունման երկրներում մարմինների համագործակցության իրավական հիմք և որը որոշակի աստիճանով կունիֆիկացնի միջազգային որդեգրմանը վերաբերող միջազգային մասնավոր իրավունքի կանոնները¹:

Այս Կոնվենցիան նույնպես որդեգրել է միջազգային որդեգրման իրականացման ժամանակ երեխայի առավելագույն շահերի ապահովման սկզբունքը:

Կոնվենցիայի նպատակներից մեկն է. «պաշտպանության միջոցառումների սահմանում, որոնք երաշխավորում են, միջազգային իրավունքով ճանաչված երեխայի առավելագույն շահերի ապավովմամբ ու նրանց հիմնարար իրավունքները հարգելով, միջազգային որդեգրման ընթացակարգը»:

Կոնվենցիայի նախաբանը դիմում է Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիային, որտեղ երեխայի հիմնարար իրավունքներն են.

- երեխայի նկատմամբ ցանկացած գործողությունում առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի շահերի առավել ապահովմանը

- ցանկացած խտրականության բացակայություն՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական և այլ համոզմունքներից, ազգային, էթնիկական կամ սոցիալական

¹ Дзугаева А.З. Роль Гаагской Конвенции о защите детей и сотрудничестве в отношении международного усыновления в создании универсальных стандартов по вопросам международного усыновления детей/ В кн.: Международное усыновление: проблемы правового, психолого-педагогического сопровождения детей- граждан РФ в семьях иностранных граждан. - М., 2001. - էջ 66.

ծագումից, գույքային դրությունից, առողջական վիճակից և երեխայի ծնունդից, նրա ծնողներից կամ օրինական խնամակալներից կամ որևէ այլ հանգամանքից:

- Իր սեփական հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի իրավունքը դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Ընդ որում, երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

Միջազգային որդեգրման ժամանակ երեխայի շահերի առավել պահպանման համար Հաագայի 1993թ. Կոնվենցիան ճանաչում է.

- երեխաները պետք է մեծանան և դաստիարակվեն ընտանեկան միջավայրում

- ժամանակավոր կամ մշտական միջոցառումների դեպքում առավելությունը տրվում է մշտականին

- միջազգային որդեգրումը կարող է առավելություն տրամադրել երեխային՝ կապված մշտական ընտանիք ունենալու հետ, եթե այդպիսին չի կարող գտնվել նրա ծագման երկրում:

Պայմանավորվող պետությունները և կենտրոնական մարմինները պրակտիկայում պետք է միջոցներ ձեռք առնեն երեխայի շահերի առավել ապահովման իրավունքի քմահաճ մեկնաբանման կամ սխալ կիրառման դեմ:

Կոնվենցիայով որդեգրված կարևոր սկզբունքներից է նաև սուբսիդիարության սկզբունքը:

Այն նշանակում է, որ անհրաժեշտ է ջանք գործադրել ընտանիքների պահպանման կամ վերականգնման կամ էլ երեխային երկրի ներսում որդեգրելու կամ խնամելու միջոցներ գտնելու համար: Տվյալ սկզբունքի տակ նաև ենթադրվում է, որ միջազգային որդեգրման ընթացակարգերը պետք է գոյություն ունենան երեխայի պաշտպանության համալիր համակարգի շրջանակներում: Սակայն պետությունները պետք է նաև երաշխավորեն, որ տվյալ նպատակին հասնելու ջանքերը միջազգային որդեգրման միջոցով երեխային ընտանիք տեղավորելու ծայրահեղ հետաձգման պատճառով երեխային ոչ մի վնաս չեն հասցնում: Պետությունները իրենց բոլոր ջանքերը պետք է ուղղեն այն բանին, որպեսզի կարճ ժամկետում գտնեն արդյունավետ հնարավորություններ ծնողական խնամքից զրկված երեխաներին որդեգրող ընտանքում տեղավորելու հա-

մար: Յուրաքանչյուր պետության ազգային քաղաքականությունը պետք է ուղղված լինի առաջին հերթին ընտանիքը պահպանելուն և հարցը տեղական մակարդակում լուծելուն և ոչ թե միջազգային որդեգրմանը նպաստելուն:

Սաբսիդիարության սկզբունքը, սակայն, պետք է կիրառվի երեխայի շահերի առավել պահմանման սկզբունքի ներքո, օրինակ.

- *հարկ է ընդունել, որ երեխայի համար կարևոր է մեծանալ ու դաստիարակվել իր ընտանիքում, այնտեղ, որտեղ նա ծնվել է, բայց առավել կարող է, որպեսզի նա պաշտպանված լինի դաժան վերաբերմունքից*

- *բարեկամների կողմից մշտական խնամքը ցանկալի է, եթե միայն տվյալ անձինք չունեն չարամիտ դրդապատճառներ, կա՛մ համապատասխանում են, կա՛մ էլ ի վիճակի են բավարարելու երեխայի պահանջմունքները (այդ թվում բժշկական սպասարկումը)*

- *որդեգրումը կամ մշտական ընտանեկան խնամքի այլ ձևը երկրի ներսում առավել նախապատվելի է երեխայի համար: Սակայն երեխայի նկատմամբ խնամք ապահովվելուն ընդունակ համապատասխան ընտանիքի կամ անձի բացակայության դեպքում գոյություն ունի ընդհանուր կանոն. Ցանկալի չէ երեխային թողնել մասնագիտացված հաստատություններում սպասելու, եթե առկա է արտերկրում երեխայի համապատասխան ընտանիքում մշտական բնակության տեղավորելու հնարավորություն*

- *ծագման երկրում երեխայի համար տուր գտնելը դրական քայլ է, բայց ծագման երկրում ժամանակավոր տունը մեծամասամբ ցանկալի չէ:*

- *ինստիտուցիոնալացումը, որպես մշտական խնամքի տարբերակ հատուկ դեպքերում ընդունելի լինելով հանդերձ, չի հանդիսանում երեխայի շահերի առավել ապահովման ընդհանուր կանոն:*

Կարծիք կա այն մասին, որ սաբսիդիարության ճիշտ կիրառումը այն ժամանակ է, երբ միջազգային որդեգրումը պետք է քննարկվի որպես «վերջին հնարավորություն/միջոց»: Կոնվենցիան այդպիսի նպատակ իր առաջ չի դնում: Այնպիսի լուծումները, ինչպիսիք են երեխաների մշտական բնակությունը մասնագիտական հաստատություններում կամ բազմաթիվ ժամանակավոր խնամատար ընտանիքներում մեծամասամբ չեն կարող դիրատկվել որպես հակադրություն միջազգային որդեգրմանը: Այդ իմաստով հենց ինս-

տիտուլցիոնալացումն է համարվում «վերջին միջոց»:

Կոնվենցիայով նախատեսված հաջորդ սկզբունքը խտրականության բացակայության սկզբունքն է:

Խտրականության բացակայության սկզբունքը ներառված է 1993թ. Հաագայի կոնվենցիայում, ելնում է երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 21(с) հոդվածից: Հոդվածը սահմանում է պահանջներ այն մասին, որ պայմանավորվող պետությունները *«այլ երկրում երեխայի որդեգրման դեպքում ապահովում են այնպիսի երաշխիքների և նորմերի կիրառում, որոնք առկա են երկրի ներսում որդեգրման ժամանակ...»*: Նույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածը ներկայացնում է խտրականության բացակայության դրույթը և պայմանավորվող պետություններից պահանջում է պաշտպանել իրենց իրավասության տակ գտնվող երեխաների իրավունքները առանց որևէ խտրականության: Այդ պատճառով էլ միջազգային որդեգրման օբյեկտ հանդիսացող երեխաները պետք է ունենան նույն իրավունքները և ստանան նույն պաշտպանությունը, ինչպես յուրաքանչյուր այլ երեխա:

1993թ. Հաագայի կոնվենցիայի 26(2) հոդվածում ներառված է խտրականության բացակայության վերաբերյալ կետ, որում ասվում է, որ Կոնվենցիայի շրջանակներում «երեխա-ծնող» հարաբերությունների դադարեցմամբ ամբողջական որդեգրման դեպքում որդեգրումից հետո ծագող երեխայի իրավունքները պետք է հավասար լինեն ընդունող պետության օրենքի շրջանակներում իրականացվող նմանատիպ որդեգրումից ծագող իրավունքներին:

Միջազգային որդեգրման ժամանակ խտրականության բացակայության սկզբունքը կոչված է երախշավորելու հավասար իրավունքներ և ապահովելու հավասար պաշտպանություն բոլոր որդեգրվող երեխաների համար: Տվյալ սկզբունքը նաև ուղղված է առավել խոցելի երեխաների և բնակչության չունևոր շերտերի երեխաների պաշտպանության ապահովմանը և նրանց ընտանեկան միջավայրում մեծանալու հավասար հնարավորության ընդձեռնմանը: Պայմանավորվող պետությունները պետք է սահմանեն հատուկ պահանջներ ունեցող երեխաներին որդեգրել ցանկացող ընտանիքներին հատուկ օգնություն ցույց տալու միջոցները:

Միջազգային որդեգրման բնագավառում 1993 թվականի Հաագայի կոնվենցիան այն միջազգային իրավական ակտն է, որն

առավել ամբողջապես է կարգավորում այդ հարցը և սահմանում է լրացուցիչ երաշխիքներ միջազգային որդեգրման երեխայի շահերը առավել ապահովմամբ իրականացնելու համար:

Այսպիսով, չնայած երեխայի իրավունքները և նրանց շահերի պաշտպանությունը գտնվում են միջազգային հանրության մշտական հսկողության ներքո, այնուամենայնիվ քիչ չեն դեպքերը, երբ երեխաները ենթարկում են դաժան և անմարդկային վերաբերմունքի: Ղա է պատճառը, որ բոլոր միջազգային իրավական ակտերի նրոմերն իրենց հիմքում են դրել երեխայի շահերի առավել պաշտպանության սկզբունքը, որը կարելի է համարել միջազգային որդեգրման հիմնական և կարևորագույն սկզբունք, որի ապահովմամբ միայն կարելի է խոսել միջազգային որդեգրման՝ որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաների ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրականացման միջոցի մասին:

Татевик Асатрян

Аспирант кафедры гражданского права ЕГУ

МЕЖДУНАРОДНЫЕ ДОГОВОРЫ В ОБЛАСТИ МЕЖДУНАРОДНОГО УСЫНОВЛЕНИЯ: УСТАНОВЛЕННЫЕ В НИХ ПРИНЦИПЫ

Вопрос о рассмотрении прав детей возник в результате демократического движения XIX века. В этот период государства взяли на себя ответственность за защиту прав ребенка. Необходимо было принять меры относительно рабства, детского труда, торговли детьми и проституции несовершеннолетних. Основным международным документом в области международного усыновления является Гагская Конвенции о защите детей и сотрудничестве в области международного усыновления от 23.05.93г., в основу которой легли основные принципы, установленные в Конвенции ООН О правах ребенка от 20.11.89 г.. Одна из целей Конвенции – «определение мер безопасности, гарантирующих совершение процедуры международного усыновления с учетом наилучших интересов ребенка и с уважением его основных прав, признанных международным правом». *Принцип защиты наилучших интересов ребенка является основополагающим принципом, при обеспечении которого можно говорить о международном усыновлении, как о реализации права ребенка жить и воспитываться в семье.*

THE INTERNATIONAL TREATIES IN THE FIELD OF INTERNATIONAL ADOPTION. THE PRINCIPLES DEFINED THEREOF

The issue of observation of the right of children has arisen from democratic activity in the 19th century. Within this period the states have undertaken an obligation for the protection of the children rights. it was required to undertake means on slavery, childish work, trade of children and prostitution of minor. The main international document in the field of international adoption is Hague Convention as of 29 May 1993 on Protection of Children and Co-operation in Respect of Intercountry Adoption, the basis of which are the main principles defined in the The United Nations Convention as of 20 November 1989 on the Rights of the Child. One of the aims of the convention is to establish safeguards to ensure that intercountry adoptions take place in the best interests of the child and with respect for his or her fundamental rights as recognized in international law. The principle of the protection of the child's best interest is considered fundamental principle, and in case of the provision of the latter we deal with international adoption as the realization of the child's right to live and to be raised in the family.

Բանալի բառեր. միջազգային որդեգրում, որդեգրման սկզբունքներ, միջազգային որդեգրման սկզբունքներ, սկզբունք, երեխայի առավելագույն շահ, երեխայի առավելագույն շահերի պաշտպանություն, երեխայի իրավունքների պաշտպանություն:

Ключевые слова: международное усыновление, принципы усыновления, принципы международного усыновления, принцип, наилучшие интересы ребенка, защита наилучших интересов ребенка, защита прав ребенка, принцип защиты наилучших интересов ребенка.

Keywords: adoption, international adoption, intercountry adoption, principles of adoption, principles of international adoption, principles of intercountry adoption, child's best interest, the best interests of the child, Child Rights Protection

**ԱՌՆՏՐԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ՝ ՈՐՊԵՍ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՆԵՐԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

Մրցակցությունը ժամանակակից շուկայական տնտեսության հիմքն է: Ապրանքները վաճառելու անհրաժեշտությունը ստիպում է արտադրողին հաշվի առնել մրցակցության կանոնները: Մրցակցող կազմակերպությունները ձգտում են ստեղծել ապրանքների արտադրման և իրացման ավելի շահավետ պայմաններ: Ինչպես գրում է Գ.Ֆ.Շերշենևիչը «Յուրաքանչյուր առևտրային կազմակերպություն ձգտում է գրավել հնարավորինս շատ սպառողների: Առևտրային ընկերությունների միջև դաժան պայքար է սկսվում, որի արդյունքում նրանցից յուրաքանչյուրը սեփական գոյությունն ապահովելու նպատակով ձգտում է լավ բավարարել հասարակության պահանջները²:» Արտադրողներն իրենց ապրանքների իրացումը խթանելու նպատակով կատարելագործում են իրենց ապրանքները, և շատ տեղեկություններ նրանց համար ձեռք են բերում առևտրային արժեք ու գաղտնի են պահվում երրորդ անձանցից:

Հայտնի է, օրինակ, որ միջնադարյան ժամանակաշրջանում մրցակցում էին նաև պետությունները, քանի որ տարիներ շարունակ միայն առանձին պետություններ էին տիրապետում վառողի, մետաքսի, ձենապակու, երկաթի արտադրության գաղտնիքներին: Վինստոն Չերչիլի «Ով տիրում է տեղեկությանը, նա տիրում է աշխարհին» արտահայտությունը շատ ճշգրիտ կերպով արտահայտում է առևտրային գաղտնիքի պաշտպանության և օգտագործման հայեցակարգերը: Եթե կազմակերպությունը ժամանակին ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները պաշտպանելու տեղեկությունները, որոնց օգտագործման արդյունքում իր արտադրանքը դառնում է մրցունակ, ապա նա կարող է ստանալ կայուն շա-

¹ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Գ.Հ. Բեքմեյյան:

² Տե՛ս Шершеневич Г.Ф. Курс торгового права. СПб., էջ 109:

հույժ և դիմակայել մրցակցային պայքարի պայմաններում: Իսկ կազմակերպությունը, որը անտեսում և թերագնահատում է առևտրային գաղտնիքի օգտագործման առավելությունները, շատ մեծ ռիսկի է դիմում: Որպես օրինակ կարող ենք նշել այնպիսի հզոր կազմակերպությունների, որոնք են «Ջեներալ Մոթորսը», «Ֆորդը», «Կոկա-Կոլան», որոնք ժամանակին հասկացել են արտադրական գաղտնիքների պահպանության կարևորությունը և մինչև այսօր իրենց ոլորտի առաջատարներից են:

Տարբեր ժամանակաշրջաններում պետություններում ստեղծվել են հատուկ օրենքներ, որոնք գաղտնիքների հնարավոր արտահոսքից պաշտպանում էին արտադրողների, սեփականատերերի և պետությունների շահերը: Օրինակ, դեռևս Հին Հռոմում օրենք էր ընդունվել, որով պատժառժված վնասի կրկնապատիկի չափով տուգանք էր սահմանվում այն անձի համար, ով ուրիշի ստրուկներին ստիպում էր պատմել իր տիրոջ գաղտնիքները¹: Հին աշխարհում կային առևտրային գրքեր, որոնց բովանդակությունը առևտրային գաղտնիք էր համարվում²: Արտադրողները, առևտրականները և բանկիրները պետք է վարեին իրենց գործունեության և ֆինանսական վիճակի մասին գրքեր: Միայն այդ դեպքում էր իրավական պաշտպանություն տրվում դրանցում գրված առևտրային գաղտնիքին: Առևտրային գրքի տվյալները կարող էին հաղորդվել միայն արդարադատության նպատակով, գույքի ժառանգման գործերով, կազմակերպության լուծարման կամ սնանկության դեպքերում:

ԽՍՀՄ անդամ երկրներում առևտրային գաղտնիքի նկատմամբ վերաբերմունքը երկար ժամանակ բացասական էր, և այն համարվում էր կապիտալիստական կազմակերպությունների համար հարկային մարմիններից մաքուր շահույթը թաքցնելու և այլ խախտումների միջոց³:

Առևտրային գաղտնիքն իրավական բնույթով այնպիսին է, որ

¹ Տե՛ս Розенберг В. Промысловая тайна. СПб., 1910, էջ 68:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Алексеев С.В. Маркетинговое право России. Учебник для вузов.- М.: Норма, 2004, էջ 513:

կարող է գոյություն ունենալ շուկայական տնտեսության պայմաններում¹, իսկ կոմունիստական գաղափարախոսության և պետական սեփականության գերակայության պայմաններում օրենքով կարգավորվում էր միայն պետական գաղտնիքի հետ կապված հարաբերությունները, ինչն էլ, իհարկե, իր բացասական հետևանքները երկար սպասեցնել չտվեց:

1985թ. սկսած, երբ ԽՍՀՄ-ն փորձում էր բարելավել կապերը արևմուտքի երկրների հետ, օտարերկրյա ներդրմամբ առաջին համատեղ կազմակերպությունները ստեղծել, արդեն երևան եկան օրենսդրական բացերը այս ոլորտում: ԽՍՀՄ-ում սկսվեցին առևտրային գաղտնիքի ինստիտուտի իրավական կարգավորման ուղղությամբ հետևողական աշխատանքներ: Առաջին անգամ առևտրային գաղտնիքի և այն պաշտպանելու իրավունքի մասին սահմանվում է «ԽՍՀՄ-ում կազմակերպությունների մասին» ԽՍՀՄ օրենքի 33-րդ հոդվածում: Անհրաժեշտ են համարում շեշտել, որ նշված հոդվածով սահմանվում էր ինչպես առևտրային գաղտնիքի հասկացությունը, այնպես էլ այն տեղեկությունների ցանկը, որոնք չեն կարող առևտրային գաղտնիք լինել՝ հատկապես առանձնացնելով շրջակա միջավայրը աղտոտելու, ինչպես նաև հասարակության շահերի դեմ ուղղված այլ բացասական գործողությունները: 1991թ. մայիսին ԽՍՀՄ անդամ երկրներում ընդունվեցին Քաղաքացիական օրենսգրքի հիմքերը, որի 151-րդ հոդվածը սահմանում է «նոու-հաուի», այսինքն՝ արտադրության գաղտնիքների իրավական պաշտպանության կարգը:

ՀՀ-ում առևտրային գաղտնիքը պատկանում է իրավագիտության կողմից ամենաքիչ ուսումնասիրված կատեգորիաների շարքին: Բավականին քիչ է նաև մարքեթինգային գործունեության մեջ առևտրային գաղտնիքի պաշտպանության կանոնների կիրառման պրակտիկ փորձը: Ներկայումս ՀՀ օրենսդրությամբ ամրագրված է առևտրային գաղտնիքի պաշտպանության ինստիտուտը: Սակայն այսօր ավելի քան արդիական է հասարակական հարաբերություն-

¹ Ст'ю Северин В.А. Услуги информационного характера, обеспечивающие коммерческую деятельность // Законодательство. 2000. N 1, էջ 37-38:

ների տվյալ ոլորտը կարգավորող գործող օրենսդրությունը կատարելագործելու և լրացնելու հարցը:

Մինչ առևտրային գաղտնիքի հասկացությանը անդրադառնալը, անհրաժեշտ է հասկանալ՝ ինչ է տեղեկությունը: Տեղեկությունը՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալ է՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ծայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ)¹:

Առևտրային գաղտնիքը գաղտնի տեղեկություն է, որը թույլ է տալիս տիրապետողին մեծացնել շահույթը, խուսափել չարդարացված ծախսերից, առաջատար դիրք գրավել շուկայում կամ ստանալ առևտրային օգուտ: Առևտրային գաղտնիք կարող են լինել արտադրական, տեխնիկական, տնտեսական, կազմակերպչական տեղեկությունները, այդ թվում նաև մտավոր գործունեության արդյունքների մասին տեղեկությունները: Օրինակ, արտադրության և իրացման ոլորտում կիրառվող գործընթացները, նոու-հաուն, որը անգլերենից թարգմանաբար նշանակում է «իմանալ՝ ինչպես» («իմանալ՝ ինչպես անել» բառակապակցության կրճատ ձևն է), կառավարչական, ֆինանսական, մարքեթինգային գործունեության մասին տեղեկությունները (ապրանքների արտադրության և իրացման պլանները, մարքեթինգային հետազոտությունների արդյունքները, գովազդային գործունեությունը, PR-միջոցառումները, ապրանքաշրջանառության նոր մեթոդները, իրացման մարքեթինգային համակարգի կազմակերպումը) միջնորդների, հաճախորդների տվյալների բազաները, նորարարությունները:

Այսպիսով, արտադրության ոլորտում առևտրային գաղտնիքը դրսևորվում է տեխնիկական և տեխնոլոգիական գաղտնիքներով (արտադրական գաղտնիքներ), իսկ պլանավորման և պատրաստի արտադրանքի իրացման ոլորտում՝ գործնական գաղտնիքներով (առևտրային գաղտնիքներ):

¹ Տե՛ս «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ Օրենքը ՀՕ-11-Ն՝ ընդունված 23.09.2003թ.:

Առևտրային գաղտնիքի իրավական կարգավորման հայրենական օրենսդրական համակարգը ներառում է բազմաթիվ իրավական ակտեր, մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրությունը (հոդված 83.5), ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը (հոդվածներ 141, 320, 727, 969, 1000, 1100, 1101, 1164, 1165, 1166), «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Աշխատանքային օրենսգիրքը (հոդվածներ 43, 122), ՀՀ Մաքսային օրենսգիրքը (հոդված 73), «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը (հոդված 4) և այլն: Այնուամենայնիվ, չկա առևտրային գաղտնիքի միասնական և ամբողջական կարգավորում, ուստի առաջարկում ենք ընդունել առևտրային գաղտնիքի ինստիտուտը կարգավորող առանձին օրենք, այն է՝ «Առևտրային գաղտնիքի մասին» ՀՀ օրենք: Առանձին օրենքի ընդունումը պետության կողմից ֆինանսական միջոցների ծախս չի պահանջում, քանի որ առևտրային արժեք ունեցող տեղեկությունների պաշտպանության աշխատանքների ֆինանսավորումը դրվում է անմիջապես տիրապետողի վրա:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 141-րդ հոդվածը առևտրային գաղտնիքը սահմանում է որպես տեղեկատվություն, որը երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքով այն ազատորեն ստանալու հնարավորություն, և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար: Նման կերպ է առևտրային գաղտնիքը սահմանվում շատ երկրների օրենսդրություններով: Փաստորեն այդպիսի տեղեկատվության ընդհանուր հատկանիշը դրա առևտրային արժեքն է:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված առևտրային գաղտնիքի հասկացությունն ամբողջովին համապատասխանում է առևտրային գաղտնիքի մասին միջազգային իրավունքի նորմերին, մասնավորապես Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին Համաձայնագիրը (TRIPS), որն ընդունվել է 1995թ. Միջազգային առևտրային կազմակերպության կողմից, և որին 2003թ. միացել է նաև ՀՀ-ը: Համաձայնագիրը սահմանում է այն չափորոշիչները, որոնք պետք է հիմք ընդունվեն տեղեկությունը առևտրա-

յին գաղտնիքի շարքը դասելու համար: Այս մասով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի և TRIPS-ի նորմերը համընկնում են:

Իրենց առևտրային գործունեության հետ կապված՝ ցանկացած տեղեկատվություն առևտրային գաղտնիքի շարքը դասելու կազմակերպությունների հնարավորությունը ընդհանուր առմամբ սահմանափակված է: Սակայն իրավական ակտերի վերլուծությունից կարող ենք եզրակացնել, որ ներքոնշյալ տեղեկությունները չեն կարող առևտրային գաղտնիք լինել՝

1. հիմանդիր փաստաթղթերը

2. գործարարական գործունեությամբ զբաղվելու իրավունք տվող փաստաթղթերը (գրանցման վկայականները, լիցենզիաները, պատենտները՝ արտոնագրերը)

3. աշխատողի թվաքանակի, աշխատանքի պայմանների, թափուր աշխատատեղերի մասին

4. հարկերը և պարտադիր այլ վճարները կատարելու մասին փաստաթղթերը

5. շրջակա միջավայրը աղտոտելու մասին տվյալները և այլն:

Կարծում եմ, որ նման տեղեկությունների շարքը դեռևս կարող ենք շարունակել: Սակայն անհրաժեշտ է, որ նման տեղեկությունների սպառիչ ցանկը սահմանվի «Առևտրային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով, որի մշակումը և ընդունումը խիստ անհրաժեշտ է:

Սովորաբար կազմակերպությունները առևտրային գաղտնիքի ռեժիմը սահմանում են ներքին իրավական ակտերով, որում նշում են առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների ցանկը, այդպիսի տեղեկությունների հետ ծանոթացման կարգը, անձնաց շրջանակը, որոնք այդպիսի տեղեկատվությանը մուտք ունեն, հրապարակման համար պատասխանատվությունը: Այսպիսով, յուրաքանչյուր կազմակերպության առևտրային գաղտնիքը կազմող տեղեկությունների ցանկը տարբեր է լինում: Միևնույն ժամանակ, որոշ դեպքերում օրենքով կամ ենթաօրենսդրական ակտերով է տեղեկությունը ճանաչվում առևտրային գաղտնիք: Որպես օրինակ կարող ենք նշել «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ Օրենքի 18-րդ հոդվածը¹: Կազմակերպությունների ներքին իրավական ակ-

¹ Տե՛ս «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ Օրենք ՀՕ-515-Ն, ընդունված 26.12.2002թ.:

տերի հետ միասին նաև օրենսդրությամբ են սահմանվում առևտրային գաղտնիքի իրավական պաշտպանությունը: Օրինակ, մասնավորապես «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ Օրենքի հոդված 16¹: Օրենսդրությամբ սահմանվում է նաև առևտրային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակման համար պատասխանատվությունը: Այսպես՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ Օրենքի հոդված 33-ի 1-ին մասով սահմանվում է հանձնաժողովի պարտավորությունները առևտրային, բանկային և ծառայողական գաղտնիքի պահպանման գործում, ինչպես նաև ամրագրում է, որ սույն կետի խախտման դեպքում տնտեսվարող սուբյեկտին հասցված վնասը փոխհատուցվում է հանրապետական բյուջեի միջոցների հաշվին՝ օրենսդրությամբ սահմանված կարգով: Արդարության համար պետք է նշել, որ առևտրային գաղտնիքի իրավական կարգավորման հետ կապված խնդիրներ կան ոչ միայն Հայաստանում, այլ նաև այլ երկրներում՝ Ռուսաստանում, Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Ավստրալիայում և այլն²:

Արևմտյան երկրների օրենսդրությամբ առևտրային գաղտնիքի հասկացությունը ավելի լայն է սահմանված: Օրինակ, անգլիական օրենքներում առևտրային գաղտնիք է համարվում տեղեկատվությունը, որի հրապարակումը կարող է վնասել ընկերության շահերին: «Ընկերության շահերին» արտահայտությունն ավելի ընդլայնում է առևտրային գաղտնիքի ռեժիմի խախտման համար պատասխանատվության շրջանակը, քանի որ կազմակերպության առևտրային տեղեկությունների արժեքը չի գնահատվում միայն դրամական չափորոշիչով: Գերմանիայի օրենսդրությամբ առևտրային գաղտնիք է համարվում կազմակերպության գործունեության հետ կապված ցանկացած տեղեկություն, որ, նրա սեփականատիրոջ կարծիքով, պետք է գաղտնի պահվի: Ավելի որոշակի է այդ հարցը լուծվում Ֆինլանդիայում: Այնտեղ գաղտնիք են համարվում տեղեկությունները, որոնք մրցակից ընկերության կողմից ստանալու դեպքում

¹ Տե՛ս «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ Օրենք ՀՕ-112, ընդունված 06.11.2000թ.:

² Տե՛ս Законодательство и практика СМИ в Европе, Америке и Австралии. АРтиклъ XIX. М., 1996, էջ 15.

կնպաստեն վերջինիս հաջողությանը կամ կարող են վնասել կազմակերպությանը:

Առևտրային գաղտնիքի հասկացությունը շատ լավ է սահմանված «Առևտրային գաղտնիքի մասին» 1979թ. ամերիկյան օրենքում, որի համաձայն՝ առևտրային գաղտնիք է համարվում տեղեկությունները (ներառյալ՝ բաղադրություն, կոմբինացիա, ծրագիր, մեթոդ, տեխնիկա կամ պրոցես), որը ունի տնտեսական արժեք, քանի որ հասանելի չէ անձանց, որոնք կարող են այն օգտագործել առևտրային նպատակներով, և պաշտպանության խելամիտ փորձերի օբյեկտ է¹:

Եթե համեմատենք այս թեմայի հետ կապված հայաստանյան օրենսդրությունն արևմտյան օրենքների համակարգի հետ, ապա ակնհայտ է, որ ՀՀ-ում առևտրային գաղտնիքի մասին նորմատիվ ակտերը շատ ցրված են: Այդ պատճառով անհրաժեշտ է միավորել և լրացնել բոլոր արդեն գործող նորմերը միասնական օրենքում: Այդ դեպքում ոչ միայն փորձառու իրավաբանները, այլ նաև շարքային գործարարները, լրագրողները, պետական հիմնարկների, կազմակերպությունների աշխատողները, այդ թվում մարքեթինգային, որոնց գործունեությունը կապված է այդպիսի գաղտնի տեղեկությունների հետ, կկարողանան գործել՝ պահպանելով ՀՀ օրենսդրությունը:

Գործող օրենսդրությամբ միայն դրվագներով հիշատակվում է առևտրային գաղտնիքը, չեն կարգավորվում դրա հետ կապված բոլոր հարցերը:

«Առևտրային գաղտնիքի մասին» ՌԴ օրենքը, որը ընդունվել և ուժի մեջ է մտել 2004թ.-ին, շատ մանրամասն սահմանում է առևտրային գաղտնիքի հասկացությունը. «Առևտրային գաղտնիքը գաղտնի տեղեկություն է, որը երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, որին օրինական ճանապարհով ազատ մուտք չկա, և որի նկատմամբ այդպիսի տեղեկության իրավատերն առևտրային գաղտնիքի ռեժիմ է սահմանել (այսինքն՝ դրանց գաղտնիության պաշտպանության մի-

¹ St' u Шиверский А.А. Защита информации: проблемы теории и практики. М.: Юрист, 1996, էջ 21:

ջոցներ են ձեռնարկվել): Իսկ «Նոու-հաուս» սահմանված է որպես առևտրային գաղտնիքի ռեժիմով պաշտպանվող մտավոր գործունեության արդյունքներ, այդ թվում՝

- չիրապարակված գիտատեխնիկական արդյունքները, տեխնոլոգիական լուծումները, մեթոդները, տեխնոլոգիական սարքավորումների օգտագործման եղանակները , որոնք ապահովված չեն արտոնագրային պաշտպանությամբ այդպիսի տեղեկությունը օրինական հիմքով տիրապետողի հայեցողությամբ

- արտադրանքի և ծառայության իրացման ոլորտում փորձը և գիտելիքները, շուկայի կառուցվածքի մասին տվյալները, մարքեթինգային հետազոտությունների արդյունքները

- առևտրային, մեթոդական կամ կազմակերպչակառավարչական լուծումները:»:

«Առևտրային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը մշակելիս պետք է հաշվի առնվեն շուկայական տնտեսություն ունեցող զարգացած երկրներում, ինչպիսիք են Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, ԱՄՆ-ն, Ֆրանսիան, Կորեան, նմանատիպ օրենսդրության զարգացման տենդենցները և դրանց կիրառման պրակտիկան: Նման օրենքի մշակումը իրավական հիմք կստեղծի նաև անբարեխիղճ մրցակցությունից պաշտպանվելու և բարեխիղճ մրցակցությունը, նորարարությունները խթանելու համար:

Օրենքը պետք է միտված լինի հետևյալ հարցերի կարգավորմանը՝

1. ՀՀ տարածքում առևտրային գաղտնիքի իրավական պաշտպանությամբ ապահովվեն հնարավորին մեծ շրջանակի անձինք (ՀՀ քաղաքացիները և օտարազգի քաղաքացիները, ՀՀ ռեզիդենտ, ինչպես նաև ոչ ռեզիդենտ կազմակերպությունները)

2. սահմանվեն առևտրային գաղտնիք համարվող տեղեկությունների գաղտնիության ապահովման համար անհրաժեշտ միջոցները

3. արտադրության գաղտնիքներին (նոու-հաուս) իրավական պաշտպանություն տրվի ինչպես մտավոր սեփականության արդյունքի, սակայն առևտրային գաղտնիքի շրջանակներում

4. պետական անվտանգության, ինչպես նաև քաղաքացիների

իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով պետք է սահմանվի տեղեկությունների ցանկը, որոնք չեն կարող առևտրային գաղտնիք լինել

5. անհրաժեշտ է սահմանել, որ գործատուի առևտրային գաղտնիքը չհրապարակելու աշխատողի պարտականությունը պահպանվում է նաև աշխատանքային հարաբերությունները դադարելուց հետո

6. պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստացված առևտրային գաղտնիքը պետք է պահպանվի որպես ծառայողական գաղտնիք

7. պետք է պատասխանատվություն սահմանվի առանց իրավատիրոջ համաձայնության, անօրինական ձևով առևտրային գաղտնիքի ստացման և օգտագործման համար, ինչպես նաև պատասխանատվություն նախատեսվի երրորդ անձանց համար այն դեպքում, երբ նշված անձինք կարող էին ենթադրել, որ իրենց կողմից օգտագործվող այլ անձին պատկանող առևտրային գաղտնիքը ձեռք է բերվել անօրինական ճանապարհով

8. առևտրային գաղտնիքի սեփականատիրոջ շահերի պաշտպանություն սահմանվի այն դեպքում, եթե առևտրային գաղտնիք համարվող տեղեկությունը երրորդ անձին հայտնի է դարձել պատահականության կամ սխալի հետևանքով:

Կարծում ենք, որ օրենքում անհրաժեշտ է նաև ավելի նորոպի սահմանել առևտրային գաղտնիքի հասկացությունը և ինչպես նաև սահմանել, այսպես կոչված, «նոու-հաուն»:

Այսպիսով, առևտրային գաղտնիքի պաշտպանության կարգ սահմանող գործող իրավական ակտերը ներկայումս չեն կարող արդյունավետ կարգավորել առևտրային գաղտնիքի հետ կապված հարաբերությունները: Առաջին հերթին այդ ակտերը չեն բացահայտում «առևտրային գաղտնիքի» հասկացությունը ամբողջությամբ: Բացի այդ, դրանցում կան հակասություններ, որոնք շփոթեցնում են նույնիսկ փորձառու իրավաբաններին, բացակայում է դատական պրակտիկան, որը մեզ թույլ է տալիս ենթադրելու, որ ՀՀ-ում առևտրային գաղտնիքի պաշտպանությունը գտնվում է ցածրագույն աստիճանում, և գործարարները ուղղակիորեն զրկված են իրենց գաղտնի տեղեկությունները պաշտպանելու հնարավորությունից և

նման անկատար օրենսդրության պայմաններում նույնիսկ ցանկություն չունեն պաշտպանել իրենց իրավունքները:

Եթե կազմակերպությունների զաղտնի տեղեկությունները, որոնք վերջինիս առավելություններ են տալիս մրցակիցների նկատմամբ, չսահմանվեն և չպաշտպանվեն օրենքով, խոսք չի կարող լինել «բարեխիղճ մրցակցության» մասին:

Наира Манучарян

Соискатель кафедры гражданского права ЕГУ

ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ КОММЕРЧЕСКОЙ ТАЙНЫ, КАК РАЗНОВИДНОСТИ МАРКЕТИНГОВОЙ ИНФОРМАЦИИ

Коммерческая тайна относится к наименее изученным категориям правоведения в Республике Армения. Также мало практического опыта применения правил защиты коммерческой тайны в маркетинговой деятельности. В настоящее время в законодательстве Республики Армении фиксирован институт защиты коммерческой тайны. Тем не менее, сегодня более чем актуален вопрос улучшения и дополнения действующего законодательства регулирующего данную сферу общественных отношений.

Если мы сравним наше законодательство с законодательством западных стран, то будет ясно, что в РА нормативные акты о коммерческой тайне очень разбросаны. Необходимо объединить и дополнить все существующие нормы в общем законе. В этом случае не только опытные юристы, но и обычные бизнесмены, журналисты, государственные учреждения, сотрудники организаций, в том числе маркетологи, работа которых тесно связана с такой конфиденциальной информацией, будут работать согласно законодательству РА.

Naira Manucharyan

Post graduate researcher at the Chair of Civil Law, YSU

PROBLEMS OF LEGAL REGULATION OF TRADE SECRETS AS A KIND OF MARKETING INFORMATION

Trade secret is one of the least explored categories of jurisprudence in the Republic of Armenia. Also, we have little practical experience in the application of rules of protection trade secret in marketing activities. Currently, the RA legislation has

defined the institution for the protection of trade secrets. However, today it is more than actual the question of making improvements and additions to the current legislation governing this area of public relations.

If we compare our legislation with the legislation of western countries, it is clear that in RA regulations on commercial secrets are very scattered. We need to combine and complement all the existing norms in one law. In this case not only experienced lawyers, but also ordinary businessmen, journalists, government agencies, members of organizations, including marketers, whose work is closely linked to such confidential information, will work according to the RA legislation.

Բանալի բառեր՝ առևտրային գաղտնիք, մարքեթինգ, գաղտնիք, տեղեկատվություն, հիմնահարց, մարքեթինգային տեղեկատվություն, մրցակցություն

Keywords: trade secret, marketing, secret, information, problem, marketing information, competition

Ключевые слова: коммерческая тайна, маркетинг, тайна, информация, проблема, маркетинговая информация, конкуренция

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ**

Արագ զարգացման և ինֆորմացիայի փոխանակման արդի ժամանակաշրջանում տեղեկատվությունը կարևոր տեղ է զբաղեցնում ոչ միայն և ոչ այնքան առօրյայում, որքան գործարար ոլորտում: Ֆրենսիս Բեկոնի «Գիտելիքը ուժ է» հայտնի արտահայտությունը ժամանակակից գործարար ոլորտում արդիական է «Ինֆորմացիան ուժ է» ձևակերպմամբ: Այդ է պատճառը, որ միջոցներ են ձեռնարկվում և հսկայական ռեսուրսներ են ծախսվում ինֆորմացիայի՝ տեղեկատվության, պահպանության և այլ անձանց չբացահայտման համար: Այսօր ցանկացած տեղեկատվություն, որը գործարարը չի ցանկանում բացահայտել երրորդ անձանց համար, անվանվում է առևտրային գաղտնիք: Հարց է առաջանում՝ արդյո՞ք ցանկացած տեղեկատվություն կարող է դիտարկվել որպես առևտրային գաղտնիք, արդյո՞ք մեկ տնտեսվարող սուբյեկտի համար կարևորություն ներկայացնող տեղեկատվությունը, որը այդ տնտեսվարող սուբյեկտի համար հանդիսանում է առևտրային գաղտնիք, նույնպիսի առևտրային գաղտնիք կարող է հանդիսանալ նաև այլ տնտեսվարողների համար, ովքե՞ր են կազմում երրորդ անձանց շրջանակը: Այս և բազմաթիվ այլ հարցեր կարևոր են դարձնում տեղեկատվության, մասնավորապես՝ առևտրային գաղտնիքի հասկացության այն հատկանիշների բացահայտումը, որոնք թույլ են տալիս տեղեկատվությունը համարել առևտրային գաղտնիք և իրականացնել դրա պաշտպանությունը:

Տեղեկատվության լեզալ բնորոշումը տրված է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի² 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ տեղեկությունը անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ

¹ ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Հայկյանց:

² Տես՝ ՀՀՊՏ 2003.11.05/55(290)

յամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներն են՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ծայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ):

Այս բնորոշումից հետևում է, որ տեղեկատվություն են հանդիսանում միայն օրինական՝ օրենքով չարգելված ճանապարհով ստացված կամ ձևավորված տվյալները անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ: Ընդ որում, կարևոր հանգամանք է հանդիսանում, որ իրավական տեսանկյունից տեղեկատվություն է ճանաչվում միայն այն տվյալը, որը ամրագրված է որոշակի նյութական կրիչի վրա: Այլ կերպ ասած՝ տեղեկատվությունը չի կարող լինել իրավահարաբերությունների օբյեկտ կրիչից և բովանդակությունից անկախ¹:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը /այսուհետ՝ Քաղ. օր./, 132-րդ հոդվածով տեղեկատվությունը դիտարկելով որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, 141-րդ հոդվածով սահմանում է, որ «1. *Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է, եթե այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն, և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար*»:

Այսպիսով, տեղեկատվությունը՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, հանդես է գալիս ծառայողական, բանկային կամ առևտրային գաղտնիքի տեսքով: Առևտրային, ծառայողական, բանկային գաղտնիքների առանձնահատկությունը տեղեկատվության այլ տեսակներից կայանում է գործարարական հարաբերությունների հետ կապի, առևտրային արժեքի մեջ²: Քաղ. օր.-ը, սակայն, առևտրային, բանկային և ծառայողական գաղտնիքների առավել

¹ Տես՝ **Копылов В.А.** О модели гражданского оборота информации. /Журнал российского права, 1999 N 9:

² Տես՝ **Բարսեղյան Տ.Կ., Հովհաննիսյան Ա.Ա.** Մտավոր սեփականության իրավունք /ուսումնական ձեռնարկ/ Երևան 2012 էջ 243:

մանրամասն կարգավորում չի նախատեսում:

Եթե բանկային գաղտնիքի հասկացությունը, դրա ռեժիմը, բանկային գաղտնիքի վերաբերյալ առաջացող հարցերը կարգավորվում են «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով¹, ապա նույնը չենք կարող ասել առևտրային գաղտնիքի մասին: Այսպես, ՀՀ օրենսդրությունում առկա չէ առևտրային գաղտնիքի իրավական հասկացությունը, կարգավորված չեն առևտրային գաղտնիքի վերաբերյալ հարաբերությունները: Տարբեր իրավական ակտերի վերլուծությունից հետևում է, որ առևտրային գաղտնիք կազմող տեղեկատվությունը ենթակա չէ հրապարակման, տրամադրման երրորդ անձանց: Սակայն առկա չեն պատասխաններ այն հարցերին, թե որ տեղեկատվությունն է հանդիսանում կամ պետք է համարվի առևտրային գաղտնիք, ինչպես պետք է տարանջատել առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը այդպիսին չհանդիսացողից: Այս հարցերի պատասխանները կարելի է ստանալ առևտրային գաղտնիքի հասկացությունը և հատկանիշները բացահայտելու և պարզաբանելու միջոցով:

Քաղ. օր. 141-րդ հոդվածի տառացի մեկնաբանությունից հետևում է, որ առևտրային գաղտնիք է հանդիսանում երրորդ անձանց անհայտ լինելու ուժով իրական կամ հնարավոր առևտրային արժեք ունեցող տեղեկատվությունը, ընդ որում առկա չէ օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն, և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

Առևտրային գաղտնիքի նմանատիպ հասկացություն է ամրագրված ԱՄՆ Առևտրային գաղտնիքի մասին միասնական օրենքի 2-րդ հոդվածում, որի համաձայն. «առևտրային գաղտնիք է ցանկացած տեղեկատվություն, այդ թվում՝ բանաձևերը, նկարները, մեթոդների նկարագրությունը, տեխնիկայի միջոցները, գործընթացները, որոնք ներկայացնում են իրական կամ հնարավոր տնտեսական արժեք հանրահայտ չլինելու և դրանց բացահայտումից ու օգտագործումից տնտեսական շահ ստանալու ունակ այլ անձանց ան-

¹ Տես՝ ՀՀԱԺՏ 1996.10.15/19/1119/:

խոչնդոտ չբացահայտվելու ուժով, և հանդիսանում են դրանք գաղտնի պահելու համար ձեռնարկվող խելամիտ միջոցառումների օբյեկտ»։ Այս հասկացությունը որպես օրինակ է ծառայել մի շարք միջազգային իրավական ակտերի համար, մասնավորապես, Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագրի /այսուհետ՝ TRIPS/ համար, որի 39-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է իրավաբանական և ֆիզիկական անձանց հսկողության տակ գտնվող այն տեղեկատվության առանձնահատկությունները, որը այդ անձինք իրավասու են պահպանելու երրորդ անձանց հայտնի դառնալուց կամ երրորդ անձանց կողմից օգտագործվելուց առանց իրենց համաձայնության¹։

Վերոնշյալից հետևում է, որ առևտրային գաղտնիք կարող է հանդիսանալ ցանկացած տեղեկատվություն։ Յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտ, ելնելով իր գործունեության ոլորտից, ինքն է որոշում՝ որ տեղեկատվությունը դիտարկել որպես առևտրային գաղտնիք և իրականացնել դրա պաշտպանությունը։ Քաղ. օր. 1164-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Չբացահայտված տեղեկատվություն /այդ թվում նաև՝ առևտրային գաղտնիքը/ ապօրինի օգտագործումից պահպանելու իրավունքը ծագում է՝ անկախ այդ տեղեկատվության նկատմամբ որևէ ձևականություն կատարելուց/գրանցելուց, վկայական ստանալուց և այլն/»։ Կարևոր նշանակություն ունի միայն այն հանգամանքը, որ առևտրային գաղտնիքին տիրապետողը ձեռնարկի այնպիսի միջոցառումներ, որոնք կապահովեն այդ տեղեկատվության հրապարակման բացառումը կամ այլ կերպ երրորդ անձանց հայտնի դառնալուց զերծ մնալը։

Որպես առևտրային գաղտնիք պահպանվող տեղեկատվությունը պետք է համապատասխանի հետևյալ հատկանիշներին՝

1. երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունենա իրական կամ հնարավոր առևտրային արժեք

2. բացակայեն տվյալ անձից օրինական ճանապարհով այն ազատորեն ստանալու հնարավորությունները

¹ Տե՛ս Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիր 39-րդ հոդված։

3. տեղեկատվությունը տիրապետողի կողմից ձեռնարկված լի-
ցեն դրա գաղտնիության պահպանման համար անհրաժեշտ ողջա-
միտ միջոցներ:

Այս երեք հատկանիշների միաժամանակյա առկայությունը
պարտադիր պայման է հանդիսանում, որպեսզի տեղեկատվությու-
նը հանդիսանա առևտրային գաղտնիք:

*Երրորդ անձանց անհայտ լինելու ուժով իրական կամ հնարա-
վոր առևտրային արժեքի առկայության* հատկանիշը հանդիսանում
է անկյունաքարային առևտրային գաղտնիքի իմստիտուտի համար:

«Երրորդ անձինք» ասելով՝ հարկավոր է հասկանալ միայն
նրանց, ում համար առևտրային գաղտնիքը որոշակի առևտրային
հետաքրքրություն է ներկայացնում, ինչի հետևանքով այդ տեղե-
կատվությունը ձեռք բերելու համար այդ անձինք կկատարեն որո-
շակի ծախսեր¹: Դրանց թվին կարող են դասվել առևտրային գաղտ-
նիքի սեփականատիրոջ հետ նույն շուկայում գործունեություն իրա-
կանացնող մրցակից կազմակերպությունները, կոնտրագենտները,
նրա արտադրանքի սպառողները: TRIPS 39-րդ հոդվածի 2-րդ մա-
սով այդ անձանց շրջանակը նեղացվել է մինչև համապատասխան
ոլորտի մասնագետները, «որոնք սովորաբար առնչվում են նմանա-
տիպ տեղեկատվության հետ»: Եթե տեղեկատվությունը հանրա-
հայտ է նշված անձանց շրջանում, այն չի կարող դիտվել որպես
առևտրային գաղտնիք: Տեղեկատվությունը կարող է անհայտ լինել
մարդկանց լայն շրջանակին հատուկ ոլորտում գիտելիքների և կա-
րողությունների բացակայության պատճառով, սակայն այն չի կա-
րող համարվել առևտրային գաղտնիք, եթե համապատասխան հա-
տուկ ոլորտի մասնագետների համար այդ փաստը հայտնի է:

Հատկանշական է, որ իրավական գրականության մեջ արտա-
հայտվել է այն կարծիքը, որ նույնիսկ եթե առևտրային գաղտնիքի
սեփականատիրոջից բացի և նրանից անկախ տվյալ ոլորտում գոր-
ծող այլ սուբյեկտ բացահայտել է առաջին սեփականատիրոջը
հայտնի առևտրային գաղտնիքը, սակայն չի հրապարակում այն և
նույնպես գաղտնի է պահում, այդ տեղեկատվությունը շարունա-

¹ Տես՝ **Քարսեղյան Տ.Կ., Հովհաննիսյան Ա.Ա.** Մտավոր սեփականության ի-
րավունք /ուսումնական ձեռնարկ/ Երևան 2012 էջ 244:

կում է մնալ առևտրային գաղտնիք, իսկ երկրորդ սեփականատերը՝ այդ գաղտնիքի օրինական տիրապետող¹:

Տեղեկատվության առևտրային արժեք ասելով՝ պետք է հասկանալ առևտրային գործունեության ոլորտում այս կամ այն որոշման կայացման համար դրա պիտանիությունը²: Այլ կերպ ասած՝ եթե տեղեկատվության օգտագործման շնորհիվ առևտրային շրջանառության սուբյեկտը ստանում է եկամուտներ, այդ տեղեկատվությունը տվյալ սուբյեկտի համար հանդիսանում է առևտրային արժեք ունեցող: Միևնույն տեղեկատվությունը տարբեր ոլորտներում կարող է ունենալ կամ չունենալ առևտրային արժեք: Տեղեկատվության առևտրային արժեքը ուղղակիորեն կապված չէ դրա կրիչի արժեքավորության հետ: Ընդ որում, տեղեկատվության առևտրային արժեքը կարող է լինել ինչպես իրական, այնպես էլ հնարավոր: Հնարավոր է համարվում այն առևտրային արժեքը, որը կարող է օգտագործվել հետագայում շահույթ ստանալու կամ բիզնեսի զարգացման համար³:

Այսպիսով, եթե գործարարության տվյալ ոլորտում մասնագետների լայն շրջանակին անհայտ որոշակի տվյալները, որոնց օգտագործմամբ կամ որոնք իմանալու շնորհիվ գործարարը կարողանում է առավելության հասնել իր մրցակիցների նկատմամբ, ստանալ եկամուտներ կամ ավելացնել այդ եկամուտները, ապա այդ տվյալները գործարարի համար հանդիսանում են առևտրային արժեք ունեցող և կարող են պահպանվել որպես առևտրային գաղտնիք:

Տեղեկատվությանը տիրապետող անձից օրինական ծանապարհով տեղեկատվությունը ազատորեն ստանալու հնարավորությունների բացակայությունը վերաբերում է տեղեկատվության հանրամատչելիությանը:

Առևտրային ոլորտում շրջանառվող ամբողջ տեղեկատվությունը, ըստ Սեվերինի, կարելի է բաժանել հանրամատչելի /բաց/ և

¹ Տես՝ **Howard B. Rockman** "Intellectual Property Law for Engineers and Scientists" John Wiley and Sons, 2004 pg.105.

² Տես՝ **Пронин К.В.** "Защита коммерческой тайны /инструкция по выживанию" Издательство ГроссМедиа, 2006, էջ 3:

³ Տես՝ **Мельникова Е.** "Некоторые вопросы правовой защиты коммерческой тайны".

սահմանափակ շրջանառվող /փակ/ տեղեկատվության¹: Հանրամատչելի է այն տեղեկատվությունը, որը օրինական ճանապարհով կարող է ստանալ ցանկացած շահագրգիռ անձ:

Քաղ. օր. 141-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Տեղեկությունները, որոնք չեն կարող ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք լինել, սահմանվում են օրենքով»:

Նույն օրենսգրքի 1164-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ. «Զբաղառնված տեղեկատվության պահպանության կանոնները չեն կիրառվում այն տեղեկությունների նկատմամբ, որոնք օրենքին համապատասխան չեն կարող լինել ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք /իրավաբանական անձանց, գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին, պետական վիճակագրական հաշվետվության տեղեկությունները և այլն/»:

Ինչպես երևում է Քաղ. օր. 1164-րդ հոդվածի 3-րդ մասի ձևակերպումից, չբաղառնվող տեղեկատվության ցանկը սահմանափակված չէ, և այլ օրենքներով կարող են նախատեսվել տեղեկատվության այլ տեսակներ, որոնք չեն կարող հանդիսանալ առևտրային գաղտնիք:

Ցանկացած այլ տեղեկատվություն, որի վերաբերյալ օրենքով առկա չէ առևտրային գաղտնիք համարվելու սահմանափակում, կարող է տնտեսվարող սուբյեկտի կողմից դիտարկվել որպես այդպիսին:

Տեղեկատվությանը տիրապետող անձից օրինական ճանապարհով այն ստանալու անհնարինությունը դրսևորվում է պաշտոնական կայքում կամ որևէ այլ հանրամատչելի վայրում այդ տեղեկատվության բացակայությամբ, հարցման միջոցով տեղեկատվությունը ստանալու անհնարինությամբ:

Տեղեկատվությանը տիրապետողի կողմից դրա գաղտնիության պահպանման համար անհրաժեշտ ողջամիտ միջոցներ ձեռնարկված լինելու հատկանիշը նշանակում է, որ առևտրային գաղտնիքին տիրապետողը պետք է ողջամիտ այնպիսի միջոցներ ձեռ-

¹ Տես՝ **Северин В.А.** "Коммерческая тайна России" М. Зерцало, 2007 էջ 40:

նարկի, որոնք արգելեն առանց իր թույլտվության այդ տեղեկատվությունը ստանալը¹: Այդ միջոցառումներից են, օրինակ, համապատասխան կրիչների վրա «առևտրային գաղտնիք» տարբերանշանի զետեղումը և դրանց պահպանության համար հատուկ վայր սահմանելը, առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության հետ աշխատողների աշխատանքային պայմանագրերում այնպիսի կետերի ամրագրումը, որոնք պարտավորություն են սահմանում աշխատողների համար չհրապարակել իրենց հայտնի դարձած տեղեկատվությունը, ինչպես նաև աշխատանքային պայմանագրի լուծման դեպքում որոշակի ժամանակ աշխատանքի չանցնել մրցակից կազմակերպությունում: Որպես կանոն, նման պարտավորության խախտման համար սահմանվում է պատասխանատվություն՝ գումարի բռնագանձման տեսքով:

Տեղեկատվությունը տիրապետողի կողմից դրա գաղտնիության պահպանման համար անհրաժեշտ ողջամիտ միջոցներ ձեռնարկված լինելու հատկանիշը հատկապես կարևորվում է առևտրային գաղտնիքի հրապարակման հետևանքով տնտեսվարող սուբյեկտին պատճառված վնասի հատուցման պահանջով գործերի քննության ժամանակ: Այսպես, նման գործեր քննելիս դատարանը պետք է ի թիվս այլ հանգամանքների պարզի՝

1. Ինչպիսի՞ քայլեր են ձեռնարկվել առևտրային գաղտնիքի սեփականատիրոջ կողմից տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու և այլոց, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվության օգտագործման մեջ չներառված անձանց հասանելիությունից զերծ պահելու համար

2. Որքա՞ն ռեսուրս և ջանք է գործադրել ենթադրյալ առևտրային գաղտնիքի սեփականատերը տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու համար

3. Որքա՞նով է հեշտ ուրիշների՝ մրցակիցների համար ձեռք բերել, կրկնօրինակել, բացահայտել կամ վերարտադրել այդ տեղե-

¹ Տես՝ **Քարտեղյան Տ.Կ., Հովհաննիսյան Ա.Ա.** Մտավոր սեփականության իրավունք /ուսումնական ձեռնարկ/ Երևան 2012 էջ 244:

կատվությունը¹:

Այն դեպքում, երբ բացահայտվում է, որ ենթադրյալ առևտրային գաղտնիքին տիրապետողը ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել այն երրորդ անձանց իմացությունից պահպանելու համար, դատարանը մերժում է վնասի հատուցման պահանջը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ առևտրային գաղտնիքի հասկացությունը հետևյալն է՝ ցանկացած տեղեկատվություն, որը անհայտ է որոշակի ոլորտում մասնագետներին, և որի հետ տնտեսվարող սուբյեկտը կապում է ներկայումս կամ երբևէ շահույթ ստանալու հնարավորություն, այդ իսկ պատճառով ողջամիտ և օրենքով չարգելված միջոցներ է ձեռնարկում այդ տեղեկատվությունը գաղտնի՝ երրորդ անձանց ոչ հասանելի պահելու համար, հանդիսանում է առևտրային գաղտնիք: Տեղեկատվությունը սուբյեկտի համար մնում է առևտրային գաղտնիք այնքան ժամանակ, քանի դեռ առկա է դրա միջոցով շահույթ ստանալու կամ որևէ այլ կերպ գործարար ոլորտում դիրքը պահպանելու հնարավորություն. առևտրային գաղտնիքի նկատմամբ իրավունքը ժամկետով սահմանափակված չէ:

Анна Аветисян

аспирант кафедры гражданского права ЕГУ

ПОНЯТИЕ И ПРИЗНАКИ КОММЕРЧЕСКОЙ ТАЙНЫ

В данной статье сделана попытка дать правовое определение понятия коммерческой тайны путем сравнительного анализа норм Гражданского кодекса РА, Соглашения по торговым аспектам прав интеллектуальной собственности и Единого закона о коммерческой тайне США. Для выявления понятия коммерческой тайны рассмотрены и разобраны также признаки, по которым та или иная информация может считаться коммерческой тайной.

¹ See **Howard B. Rockman** "Intellectual Property Law for Engineers and Scientists" /John Wiley and Sons, 2004 pg 108.

THE CONCEPT AND QUALITIES OF TRADE SECRET

The article touches upon the proposal of the legal concept of trade secret basing on appropriate articles of RA Civil Code, the Agreement on Trade Related Aspects of Intellectual Property Rights, the American Uniform Trade Secrets Act and current theoretical analyses on trade secret.

To provide a wording for the concept 'trade secret', a reference has been made to information features making up trade secret and its peculiarities as well.

Բանալի բառեր. առևտրային գաղտնիք, տեղեկատվություն, առևտրային արժեք, տիրապետող, ստանալ:

Keywords: trade secrets, information, commercial value, the owner, to get.

Ключевые слова: коммерческая тайна, информация, коммерческая ценность, владелец, получить.

ՊԱՐՏԱԴԻՐ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՀՀ-ՈՒՄ. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐ

Էկոլոգիական իրավունքի գիտության զարգացումը, արձագանքելով պրակտիկայի պահանջներին, անցյալ դարի կեսերին հնարավորություն տվեց մշակել և մի շարք զարգացած երկրներում ներդնել էկոլոգիական ռիսկերի կառավարման նոր գործիք, որը էկոլոգիական ապահովագրությունն էր: Այն *էկոլոգիական ռիսկեր ունեցող տնտեսվարող սուբյեկտների քաղաքացիաիրավական (գույքային) պատասխանատվության ապահովագրությունն է, որը կարող է առաջանալ շրջակա միջավայրի վթարային կամ տվյալ գործունեությամբ պայմանավորված աստիճանական աղտոտման հետևանքով*:

Էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի գործառնման շուրջ կեսդարյա պատմության ընթացքում ոլորտի իրավական կարգավորման շրջանակներում մշակվել են երկու հիմնական ձևեր՝ *պարտադիր և կամավոր*: Նշված ձևերը բնորոշ են նաև ապահովագրության մի շարք այլ տեսակների, որոնց շրջանակներում առանձին դեպքերի համար ապահովագրությունն իմպերատիվ է և բխում է օրենքից:

Պարտադիր էկոլոգիական ապահովագրության հարաբերությունները ծագում են օրենքի ուժով՝ հիմք ընդունելով գործունեության կոնկրետ տեսակի հնարավոր բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի, դրա բաղադրիչների, մարդկանց կյանքի և առողջության, ինչպես նաև գույքի վրա:

Կամավոր էկոլոգիական ապահովագրությունն իրականացվում է գործունեության այնպիսի տեսակների դեպքում, որոնց ազդեցությունները չեն գերազանցում օրենքով սահմանված շեմը և,

¹ ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Էկոլոգիական իրավունքի գիտակրթական կենտրոնի գիտաշխատող, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Ա.Բ. Իսկոյան:

միննույն ժամանակ, առկա է կողմերի փոխադարձ համաձայնությունը՝ կնքելու համապատասխան պայմանագիր: Այս դեպքերում, ինչպես ընդունված է միջազգային պրակտիկայում, էկոլոգիական ապահովագրության պոլիս ձեռք բերած սուբյեկտները, այլ հավասար պայմանների դեպքում, համարվում են առավել վստահելի բանկերի և այլ ֆինանսական կառույցների համար, հնարավորություն են ստանում օգտվելու հարկային և այլ արտոնություններից, բարձրացնում են իրենց կորպորատիվ-սոցիալական պատասխանատվության մակարդակը և այլն: Նշված առավելություններով հանդերձ՝ կամավոր էկոլոգիական ապահովագրության պայմանագրի կնքումը, բնականաբար, կախված է բացառապես տնտեսվարող սուբյեկտի կամահայտնությունից: Մինչդեռ պարտադիր էկոլոգիական ապահովագրության դեպքում տնտեսվարող սուբյեկտի կամահայտնությունը իրավական նշանակություն չունի, և որոշիչը օրենքով սահմանված պահանջն է, որն էլ իր հերթին հիմնված է նախատեսվող գործունեության տեսակի պարամետրերի վրա:

Վերոգրյալից ակնհայտ է, որ հենց գործունեության տեսակի վտանգավորության աստիճանն էլ դրված է էկոլոգիական ապահովագրության նշված ձևերի տարանջատման հիմքում: Այս մոտեցումը սկզբունքային նշանակություն ունի նաև ՀՀ-ում էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի ներդրման պարագայում համապատասխան չափանիշներ սահմանելու առումով:

Նշված խնդրի իրավական կարգավորումն ուրվագծելու նպատակով անհրաժեշտ է պատասխանել այն հարցին, թե *որո՞նք են գործունեության տեսակներն ըստ վտանգավորության (ռիսկայնության) աստիճանի դասակարգելու չափանիշները*: Այդ *չափանիշներն, ըստ էության, հիմք կլինեն պարտադիր էկոլոգիական ապահովագրության կիրառման համար*: Որպես այդպիսի չափանիշների համակարգ՝ ընդունված է կիրառել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա գործունեության տեսակների ցանկը և դրանց սահմանային հզորությունները: Սույն հոդվածի շրջանակներում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ինստիտուտը մեր կողմից դիտարկվում է այն մասով, որ մասով դրա կարգավորվածության վիճակը և առկա

խնդիրները կարող են անդրադառնալ էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի արդյունավետության վրա: Չէ՞ որ նույնիսկ առանձին իրավական ակտով էկոլոգիական ապահովագրության հարաբերությունները համակողմանիորեն կարգավորելու պարագայում այդ ինստիտուտի գործառույթը պայմանավորված է լինելու էկոլոգիական, ինչպես նաև հարակից օրենսդրությամբ ամրագրված ինստիտուտներով և գործիքներով հետ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա գործունեության տեսակների ռիսկայնությունը որպես պարտադիր էկոլոգիական ապահովագրության պայման.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ որպես էկոլոգիական իրավունքի ինստիտուտի և իրավական գործիքի նպատակն է ապահովել նախատեսվող տնտեսական գործունեության առանձին տեսակների էկոլոգիական ռիսկերի համակողմանի գնահատումը, դրանց նվազեցումը և կառավարման լուրջ միջոցառումների մշակումը: Որպես որոշում ընդունելու համալիր գործընթաց¹ փորձաքննության շրջանակներում հաշվի է առնվում բնագիտական, տնտեսագիտական, սոցիալ-տնտեսական և նորմատիվ-իրավական պահանջների ու նկատառումների ամբողջությունը:

ՀՀ-ում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության հարաբերությունները կարգավորվում են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքով² և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերի մասին» ՀՀ Կառավարության որոշմամբ³: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է գործունեության այն տեսակները, որոնք կարող են իրականացվել միայն դրական փորձաքննական եզարակացության

¹ Տե՛ս **Neil Craik**. International Law of Environmental Impact Assessments. Process, Substance and Integration. Cambridge University Press. 2008, էջ 3:

² Ընդունվել է 20.11.1995թ., ուժի մեջ է մտել 14.12.1995թ., ՀՀԱԺՏ 1995/9:

³ Ընդունվել է 30.03.1999թ., ուժի մեջ է մտել 25.04.1999թ., ՀՀՊՏ 1999.04.15/9(75):

առկայության դեպքում: Այդ եզրակացությունը համապատասխան թույլտվություն ստանալու պարտադիր պայմաններից է:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա գործունեության տեսակների ցանկը բավականին ընդարձակ է և ներառում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության պոտենցիալ ունեցող տարբեր ոլորտներ՝ էներգետիկա, լեռնահանքային արդյունաբերություն, քիմիական արդյունաբերություն, շինանյութերի արդյունաբերություն, մետալուրգիա, էլեկտրատեխնիկական, ռադիոէլեկտրոնային արտադրություն և մշակում, փայտի և թղթի արդյունաբերություն, թեթև արդյունաբերություն, սննդի արդյունաբերություն, ձկնային տնտեսություն, քաղաքաշինություն, քաղաքային տնտեսություն, թափոնների օգտագործում, բնության պահպանություն, գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ջրային տնտեսություն, ենթակառուցվածքներ, սպասարկման ոլորտ: Նշված ոլորտներից յուրաքանչյուրը ներառում է գործունեության համապատասխան ենթատեսակներ, որոնց համար «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերի մասին» ՀՀ Կառավարության որոշմամբ նախատեսված է ստորին շեն, որը գերազանցելու դեպքում փորձաքննությունը պարտադիր է: Գործունեության առանձին տեսակներ, անկախ հզորությունից կամ մասշտաբներից, պարտադիր ենթակա են փորձաքննության՝ հաշվի առնելով դրանց էկոլոգիական ռիսկերը:

Այժմ փորձենք քննարկել այն հարցը, թե նշված օրենքով սահմանված գործունեության տեսակների ցանկը որքանով կարող է ուղղորդող լինել պարտադիր էկոլոգիական ապահովագրության համակարգի կիրառման դեպքում: Այսինքն՝ արդյո՞ք պարտադիր էկոլոգիական ապահովագրության պոլիս ձեռք բերելու պայմանը ցանկում ընդգրկված գործունեության որևէ տեսակ իրականացնելն է, թե՞ անհրաժեշտ են նաև գործունեության նշված տեսակների լրացուցիչ բնութագրիչներ նման որոշում կայացնելու համար:

Ակնհայտ է, որ հիշյալ ցանկում տեղ գտած գործունեության տեսակները տարբեր աստիճանի ազդեցություն են թողնում շրջակա միջավայրի վրա, ինչը կարևոր է հաշվի առնել պարտադիր էկո-

լոգիական ապահովագրության հարցը կարգավորելիս: Բնականաբար, ազդեցությունների տարբերությունը ենթադրում է գործունեության տեսակների համապատասխան դասակարգում՝ ըստ ազդեցության ուժգնության, մասշտաբների, տևողության, հետագայում բացասական ազդեցությունների վերացման հնարավորության և այլ չափանիշների: Այսպիսի դասակարգման անհրաժեշտությունը հիմնավորվում է առաջին հերթին հենց շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննության գործընթացն արդյունավետ կազմակերպելու տեսանկյունից, քանի որ առավել նվազ ազդեցություն ունեցող գործունեության տեսակների համար կարելի է սահմանել դյուրին ընթացակարգ, և հակառակը: Միաժամանակ, այն հնարավորություն կտա, ըստ հնարավոր ազդեցության, անհատականացնել գործունեության այն տեսակները, որոնք իրականացնող սուբյեկտների վրա կտարածվի պարտադիր էկոլոգիական ապահովագրության պոլիս ձեռք բերելու պահանջը: Ըստ տրամաբանության՝ դրանք պետք է լինեն գործունեության այն տեսակները, որոնք շրջակա միջավայրի վրա *զգալի ազդեցություն*, հետևաբար և՛ առավել բարձր ռիսկեր ունեն: Այսինքն՝ պարտադիր էկոլոգիական ապահովագրության պայմանը պետք է գործի փորձաքննության ենթակա և առավել բարձր ռիսկեր ունեցող գործունեության տեսակ իրականացնող տնտեսվարողների համար:

Գործող իրավակարգավորման պայմաններում նման դասակարգում գոյություն չունի, ուստի պարտադիր էկոլոգիական ապահովագրության չափանիշների սահմանումը ենթադրում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում ամրագրված գործունեության տեսակների դասակարգում՝ ըստ ռիսկայնության՝ հաշվի առնելով նաև սահմանային հզորությունները: Նման դասակարգումն, իհարկե, պետք է տեղ գտնի պարտադիր էկոլոգիական ապահովագրության հարաբերությունները կարգավորող ապագայում ընդունվելիք օրենքում: Մեր մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ ներկայումս քննարկվող օրենքը գործունեության տեսակների ռիսկայնության հետ իրավական հետևանքներ չի կապում, հետևաբար օրենքում գործունեության տեսակների դասակարգում սահմանել, ելնելով զուտ

պարտադիր էկոլոգիական ապահովագրության նկատառումներից, նպատակահարմար չենք գտնում:

Այս առնչությամբ դրական պետք է համարել այն, որ գործունեության տեսակների դասակարգման խնդիրը որոշակիորեն լուծվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագծում¹: Այստեղ նախատեսվող գործունեության տեսակները ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի, դասակարգված են «Ա», «Բ» և «Գ» կատեգորիաների: Այսինքն՝ «Ա» կատեգորիայի գործունեության տեսակներն ունեն շրջակա միջավայրի վրա *զգալի ազդեցություն*, «Բ» կատեգորիայի տեսակները՝ *միջին*, իսկ «Գ» կատեգորիայի տեսակները՝ *ցածր ազդեցություն*: Հարկ է նշել, որ Նախագծում գործունեության տեսակների ցանկը և դրանց սահմանային հզորությունները համապատասխանում են «Շրջակա միջավայրի վրա տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի ԵՏՀ կոնվենցիայի² Հավելված 1-ին: Չանդրադառնալով հիշյալ նախագծի համակողմանի իրավական գնահատականին, որը դուրս է մեր առջև դրված խնդիրներից, արձանագրենք, որ կիրառված մոտեցումն առաջադիմական է: Նախագիծն ընդունվելու դեպքում «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկը կարող է ուղղորդող լինել պարտադիր էկոլոգիական ապահովագրության հարցը որոշելիս: Միաժամանակ գտնում ենք, որ անհրաժեշտ կլինի նաև հաշվի առնել գործունեության առանձին տեսակների ազդեցության այլ բնութագրիչներ, որոնց ամբողջությունը թույլ կտա բացահայտել *զգալի ազդեցություն* հասկացության բովանդակությունը:

Իսկ ի՞նչ ենք հասկանում զգալի ազդեցություն ասելով. արդյո՞ք սա պարզ համեմատության վրա հիմնված գնահատողական կատեգորիա է, թե՞ իր հիմքում ունի որոշակի չափանիշներ:

¹ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայք՝ <http://www.mnp.am/?p=216>, 21.08.2013թ. դրությամբ:

² Ընդունվել է 25.06.1998թ., վավերացվել է 16.05.2001թ., ուժի մեջ է մտել 30.10.2001թ., ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12):

Արևմուտքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ինստիտուտի կիրառման շուրջ քառասունամյա փորձի արդյունքում մշակվել են երեք հիմնական չափանիշներ (պայմաններ), որոնցից մեկի կամ ավելիի առկայությունը բավարար է ազդեցությունը զգալի համարելու համար: Այդ չափանիշները հետևյալներն են.

1. *Նախատեսվող գործունեության չափը, մասշտաբը կամ հզորությունը*, այսինքն՝ երբ տվյալ բնութագրիչները գործունեության տվյալ տեսակի համար գերազանցում են միջին ցուցանիշը:

2. *Տեղանքը*, այսինքն՝ երբ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է հատուկ կարևորություն ունեցող կամ էկոլոգիապես առանձնակի զգայուն տարածքում (օրինակ՝ գերխոնավ տարածքներ, պետական արգելոցներ, ազգային պարկեր, հատուկ գիտական, հնագիտական, մշակութային կամ պատմական արժեքներ կայացնող վայրեր) կամ դրանց հարող տարածքներում, ինչպես նաև այն տարածքներում, որտեղ նախատեսվող գործունեությունը կարող է զգալի ազդեցություն ունենալ բնակչության վրա:

3. *Ազդեցությունը*, այսինքն, երբ նախատեսվող գործունեությունն ունի համալիր բացասական ազդեցություն՝ ներառյալ այնպիսիք, որոնք կարող են լուրջ հետևանքներ թողնել մարդկանց առողջության կամ արժեքավոր տեսակների և օրգանիզմների վրա, ինչպես նաև այն ազդեցությունները, որոնք վտանգում են ազդակիր տարածքի՝ նպատակային նշանակությամբ օգտագործման հնարավորությանը, և այն ազդեցությունները, որոնք առաջացնում են շրջակա միջավայրի հնարավորությունները գերազանցող լրացուցիչ բեռնվածություն¹:

Համեմատությունից պարզ է դառնում, որ Նախագծում սահմանված ցանկը հիմնվում է միայն առաջին պայմանի վրա, մյուս երկուսը հանդիպում են առանձին բնապահպանական և բնառեսուրսային օրենքներում, սակայն ոչ թե որպես զգալի ազդեցության գնահատման չափանիշներ, այլ որպես որոշակի գործունեության իրականացման սահմանափակումներ: Օրինակ, «Սևանա լճի մա-

¹ Տե՛ս **Stephen Stec, Susan Casey-Lefkowitz**. The Aarhus Convention: An Implementation Guide. New York, Geneva, 2000, էջ 94:

սին» ՀՀ օրենքի¹ 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Կենտրոնական, անմիջական և ոչ անմիջական ազդեցության գոտիներում արգելվում է Սևանա լճի էկոհամակարգերի վրա վնասակար ազդեցություն ունեցող ցանկացած տեսակի գործունեություն»: Այս դեպքում տնտեսական գործունեության բացառման չափանիշը նախատեսվող գործունեության *տեղանքն է*:

Հարկ է նշել, որ տնտեսական գործունեության սահմանափակման մասով առանձին բնապահպանական և բնառեսուրսային օրենքները մի շարք դեպքերում ունեն *բացառող* (ինչպես վերոգրյալ օրինակում), իսկ որոշ դեպքերում էլ՝ *սահմանափակող* նշանակություն: Օրինակ՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի² 20-րդ հոդվածի համաձայն՝ «Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտում արգելվում է տնտեսական գործունեություն, որը կարող է սպառնալ այդ տարածքների էկոհամակարգերի կայունությանը, բուսական և կենդանական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների պահպանությանը»:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և էկոլոգիական ապահովագրության հարաբերակցությունը քննարկելիս հարկ է ուշադրություն դարձնել նաև փորձաքննության շրջանակներում ուսումնասիրվող փաստաթղթերի բովանդակության և հատկապես շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության արժանահավատությանը, որն, ըստ էության, կանխորոշում է փորձաքննության արդյունքը: Այս տեսանկյունից ուսանելի կարող է լինել մի շարք երկրներում (Ավստրիա, Լեհաստան և Սլովակիա) փորձաքննության ներկայացված փաստաթղթերի որակի (բովանդակություն, տվյալների արժանահավատություն, լրակազմություն) նկատմամբ արտաքին (այլ մարմնի կողմից) վերահսկողության կառուցակարգի կիրառումը³:

¹ Ընդունվել է 15.05.2001թ., ուժի մեջ է մտել 04.07.2001թ., ՀՀՊՏ 2001.07.04/19(151):

² Ընդունվել է 27.11.2006թ., ուժի մեջ է մտել 04.01.2007թ., ՀՀՊՏ 2006.12.25/66(521):

³ St' u **Pavel Cerny, Jerzy Jendroska**. Transposition and implementation of EIA Directive in some EU Member States (with special emphasis on transport infrastructure cases) // elni Review. 2012 Special Edition, էջ 3:

Ո՞ր փուլում է կնքվում պարտադիր էկոլոգիական ապահովագրության պայմանագիր.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննությունն ավարտվում է նախատեսվող գործունեության վերաբերյալ դրական կամ բացասական փորձանական եզրակացության տրամադրմամբ: Քանի դեռ փորձաքննության գործընթացը չի ավարտվել, և ըստ էության, հայտնի չէ գործունեության տվյալ տեսակի իրականացման հնարավորությունը, պարտադիր էկոլոգիական ապահովագրության պայմանագիր կնքելու մասին խոսք լինել չի կարող: Սակայն փորձաքննության դրական արդյունքի դեպքում առանձնակի կարևորություն է ծեռք բերում այն հարցը, թե ո՞ր փուլում պետք է կնքվի պարտադիր էկոլոգիական ապահովագրության պայմանագիր. բնապահպանական և բնառեսուրսային թույլտվություններ (այսուհետ՝ էկոլոգիական թույլտվություններ) ստանալուց առաջ, թույլտվությունները ստանալուց հետո, թե՞ մինչև գործունեությունը փաստացի սկսելը:

ՀՀ գործող օրենսդրության իմաստով էկոլոգիական թույլտվությունների ներքո պետք է հասկանալ շրջակա միջավայրի և դրա առանձին տարրերի վրա սահմանված որոշակի չափաքանակով բացասական ներգործություն ունենալու, ինչպես նաև առանձին բնական ռեսուրսների օգտագործման համար պետական լիազորված մարմնի կողմից տրված թույլտվությունները: Որպես օրինակ կարելի է նշել թափոնների հեռացման, մթնոլորտային օդ կատարվող արտանետումների, ջրօգտագործման, անտառօգտագործման, ընդերքօգտագործման համար տրվող թույլտվությունները և այլն: Տնտեսական գործունեության մի շարք, հատկապես՝ շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն ունեցող տեսակների համար պահանջվում է ստանալ մեկից ավելի թույլտվություններ, որոնցից յուրաքանչյուրի տրամադրման համար համապատասխան ենթօրենսդրական ակտերով սահմանված են հատուկ կարգեր և պայմաններ:

Էկոլոգիական թույլտվությունների ինստիտուտը էկոլոգիական ապահովագրության ինստիտուտի գործառնման տեսանկյունից դիտարկելիս առանցքային է այն հարցը, թե արդյո՞ք թույլտվություն-

ների տրամադրումը, ի թիվս այլ պայմանների, պետք է պայմանավորված լինի նաև տնտեսվարողի՝ էկոլոգիական ապահովագրության պոլիս ձեռք բերելու հանգամանքով, թե՞ ոչ: Իհարկե, խոսքը գործունեության այն տեսակների համար անհրաժեշտ թույլտվությունների մասին է, որոնք իրականացնող սույբեկտների համար պարտադիր է լինելու էկոլոգիական ապահովագրությունը:

Ինչպես արդեն նշվել է վերևում, էկոլոգիական ապահովագրության առարկա հանդիսացող գործունեության տեսակներն ունեն զգալի ազդեցություն և ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության: Սա նշանակում է, որ դրական փորձաքննական եզրակացություն ստանալուց հետո տնտեսվարողը պարտավոր է ձեռք բերել էկոլոգիական ապահովագրության պոլիս, որը պարտադիր պայման է լինելու համապատասխան գործունեությունը սկսելու համար: Այսինքն՝ էկոլոգիական թույլտվություններ ստանալու գործընթացն ամեն դեպքում հաջորդելու է համապատասխան ապահովագրական պոլիս ձեռք բերելուն: Եվ գործնականում թույլտվությունների տրամադրման փուլում պետական լիազորված մարմնին տնտեսվարողը կներկայացնի պոլիսի առկայությունը հավաստող փաստաթղթերը: Քանի որ գործող օրենսդրության համաձայն՝ յուրաքանչյուր թույլտվության համար տնտեսվարողը պարտավոր է ներկայացնել առանձին հայտ, հարց է առաջանում, թե ե՞րբ է նպատակահարմար ներկայացնել ապահովագրական պոլիսը, և արդյո՞ք յուրաքանչյուր դեպքում այն պահանջելը չի համարվի անհամաչափ վարչարարություն: Գործող իրավակարգավորման պայմաններում իրատեսական լուծում կարող է լինել էկոլոգիական ապահովագրական պոլիս ձեռք բերած սուբյեկտների միասնական էլեկտրոնային բազայի ստեղծումը, որի տվյալները հասանելի կլինեն էկոլոգիական թույլտվություններ տրամադրող մարմիններին: Իհարկե, այս մեխանիզմի կիրառումը ենթադրում է համապատասխան իրավական կարգավորում:

Էկոլոգիական թույլտվությունների համակարգի մասին խոսելիս հարկ է անդրադառնալ նաև դրա զարգացման տեսանկյունից հեռանկարին, որը շրջակա միջավայրի աղտոտման համալիր կանխարգելման և հսկման կարգավորման (այսուհետ՝ IPPC) համա-

կարգն է: Համապատասխան օրենքի ընդունումը ՀՀ-ում, որը կկարգավորի նաև էկոլոգիական թույլտվությունների կապակցությամբ առաջացող հասարակական հարաբերությունները, նախատեսվում է 2015 թվականին: Նշված համակարգը փոխարինելու է էկոլոգիական թույլտվությունների գործող համակարգին՝ թույլտվություններ ստանալու համար ներդնելով տնտեսվարողների համար առավել դյուրին «մեկ պատուհանի» սկզբունքը: IPPC համակարգի հիմնական առավելություններից են անհարկի վարչարարության կրճատումը, բոլոր բնապահպանական և բնառեսուրսային թույլտվությունների տրամադրումը միասնական ընթացակարգով առավելագույնը 240 օր ժամկետում¹: IPPC-ի շրջանակներում անհրաժեշտ թույլտվությունները տրամադրվում են դրական փորձաքննական եզրակացություն ստանալուց հետո՝ մինչև գործունեությունը փաստացի սկսելը: Այս պարագայում, գտնում ենք, որ էկոլոգիական ապահովագրության պոլիսի առակայությունը պետք է պարտադիր պայման լինի համապատասխան էկոլոգիական թույլտվություններ ստանալու համար:

ԵՄ-ում IPPC համակարգը (ներդրվել է «Աղտոտման համալիր կանխարգելման և հսկման կարգավորման մասին» Եվրոպայի խորհրդի 96/61/EC դիրեկտիվի² հիման վրա) գործում է 1996 թվականից և, ըստ էության, կազմում է տնտեսական գործունեության էկոլոգիական կարգավորման կենտրոնական տարրը: Այն իրենից ներկայացնում է թույլտվությունների տրամադրման համալիր ընթացակարգ տնտեսության առավել քան երեսուն ճյուղերի համար, ինչպես, օրինակ՝ մետալուրգիան, հանքարդյունաբերությունը, քիմիական արդյունաբերությունը, թափոնների վերամշակումը և այլն: Այն հիմնվում է էկոլոգիական ստանդարտների միասնական համաեվրոպական համակարգի, ինչպես նաև լավագույն հասանելի տեխնոլոգիաների (BAT – Best available technologies) ներդրման խրախուսման վրա³:

¹ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի էկոլոգիական իրավունքի գիտահետազոտական կենտրոնի կայք՝ http://www.elrc.ysu.am/?page=news&id=154&type=5&language_id=1 22.08.2013թ. դրությամբ:

² OJ L 257, 10.10.1996, p. 26-40:

³ Տե՛ս **Stefan Scheuer**. EU Environmental Policy Handbook: A Critical Analysis of EU Environmental Legislation. Brussels, 2005, էջեր 177, 181:

Պարտադիր էկոլոգիական ապահովագրության կիրառման տեսանկյունից IPPC համակարգի ներդրումը ենթադրում է ապահովագրական պոլիսի առկայությունը դիտարկել որպես համապատասխան թույլտվություն տրամադրելու պայման: Հետևաբար, առաջարկում ենք ընդունվելիք «Շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության մասին» ՀՀ օրենքում էկոլոգիական ապահովագրության պոլիսի առկայությունը սահմանել որպես թույլտվության հարցը լուծելու պարտադիր պայմաններից մեկը գործունեության այն տեսակների համար, որոնք պետք է լինեն պարտադիր էկոլոգիական ապահովագրության առարկա: Նման մոտեցման օրենսդրական ամրագրումը հնարավորություն կտա գործունեության առանձին վտանգավոր տեսակների համար ընդգծել կանխարգելման սկզբունքի առաջանայնությունը և, իհարկե, բուն գործունեության իրականացման փուլում նվազեցնել վարչարարությունը:

Heghine Hakhverdyan
PhD student at the Chair of Civil Procedure, YSU
Junior researcher at Environmental
Law Research Center of Faculty of Law, YSU

MANDATORY ENVIRONMENTAL INSURANCE SYSTEM IN RA; SEVERAL ISSUES OF LEGAL REGULATION

This article is devoted to legal analysis of criteria for application of mandatory environmental insurance within perspective of development of this system in RA. The level of environmental risk for each type of activity subject to EIA is substantiated to serve as key criteria. At the same time, the problem of the stage permits for signing environmental insurance within obtaining environmental is scrutinized.

Егине Ахвердян
*Аспирантка кафедры Гражданского процесса ЕГУ,
младший исследователь Научно-исследовательского
центра экологического права факультета правоведения ЕГУ*

СИСТЕМА ОБЯЗАТЕЛЬНОГО ЭКОЛОГИЧЕСКОГО СТРАХОВАНИЯ В РА; НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ

Настоящая статья посвящена правовому анализу критерий применения обязательного экологического страхования в перспективе развития этой системы в РА. В качестве основного критерия применения экологического страхования рассматривается уровень экологического риска для отдельных видов деятельности, являющимся объектом экологической экспертизы. Одновременно, рассматривается вопрос о том, на какой стадии получения разрешений должен быть заключен договор экологического страхования.

Բանալի բառեր՝ էկոլոգիական ապահովագրություն, էկոլոգիական ռիսկ, էկոլոգիական ապահովագրության պայմանագիր:

Key word: environmental insurance, environmental risk, environmental insurance contract.

Ключевые слова: экологическое страхование, экологический риск, договор экологического страхования.

**ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅՑԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ
ՏՆՕՐԻՆՀԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ԴԱՏԱՎԱՆ
ՀԱՍՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի² 32-րդ հոդվածի 1-ին մասը քաղաքացիական գործով հայցվորին իրավունք է վերապահում առաջին ատյանի դատարանում մինչև դատաքննության ավարտը հրաժարվել հայցից: Ընդ որում, հայցվորի կողմից հայցից հրաժարվելն օրենքը դիտարկում է որպես գործի վարույթը կարճելու հիմք (ՔԴՕ 109 հոդվ., կետ 9)՝ միաժամանակ սահմանելով, որ գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան՝ բացառությամբ այն դեպքի, երբ հայցվորը հայցից հրաժարվել է դատաքննության նախապատրաստական փուլում (ՔԴՕ 110 հոդվ., մաս 3):

Նկատի ունենալով այն դատավարական հետևանքները, որոնք առաջացնում է հայցվորի կողմից հայցից հրաժարվելը, քննարկվող տնօրինչական գործողության նկատմամբ դատական հսկողության հիմնախնդիրը չափազանց արդիական է համարվում:

Զնայած տնօրինչականության սկզբունքի ուժով հայցվորը կարող է հրաժարվել իր պահանջներից առանց որևէ պատճառաբանության, իսկ օրենքը դատարանին ուղղակիորեն չի պարտավորեցնում ստուգել հայցից հրաժարվելու պատճառները, շատ դատավարագետներ հայցից հրաժարվելու դատավարական գործողության հատկանիշ են համարում դրա իրականացումը **դատարանի հսկողության ներքո**.³

¹ ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ, գիտ. ղեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան:

² Այսուհետ կրճատ՝ «ՔԴՕ»:

³ Տե՛ս, օրինակ՝ **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 2-րդ հրատ., Եր., 2012, ԵՊՀ հրատ., էջ 259, **Орлова Л.М.** Права сторон в гражданском процессе. Минск, 1973, էջ 85-86, 88, **Русинова Е.Р.** Распорядительные права сторон в гражданском процессе. Дисс... к.ю.н. Екатеринбург, 2003, էջ 68-74:

Գործող ՔՂՕ-ն, ի տարբերություն 1964 թ. ՔՂՕ-ի, ՌԴ-ի, Գերմանիայի, Ֆրանսիայի և մի շարք այլ երկրների դատավարական օրենսգրքերի, դրույթ չի սահմանում այն մասին, որ դատարանը չի ընդունում հայցվորի հրաժարումը հայցից, եթե այն **հակասում է օրենքին կամ խախտում է որևէ մեկի իրավունքներն ու օրինական շահերը**:

Կողմերի տնօրինչական գործողությունների նկատմամբ դատարանի հսկողությունը ՀՀ-ում վերացվեց դատաիրավական բարեփոխումների առաջին փուլի ընթացքում 1998 թ.-ին գործող ՔՂՕ-ի ընդունմամբ: Այս հարցում ՀՀ օրենսդիրը կարծես թե ընդօրինակել է ՌԴ-ի դատավարական օրենսդրության 1995 թ. իրականացված բարեփոխումները, որոնց արդյունքում, քաղաքացիական դատավարությունում տնօրինչականության սկզբունքի գործողության սահմանների, իրավունքների իրականացման և տնօրինման հարցում ազատ կամահայտնություն դրսևորելու հնարավորության ընդլայնման նկատառումներից ելնելով, հայցից հրաժարվելու հայցվորի իրավունքը խիստ ազատականացվեց: Սակայն գործող օրենսգրքի կիրառման ավելի քան տասներեքամյա փորձը ցույց է տալիս, որ նման մոտեցումն իրեն չի արդարացնում: Գործնականում ծագում են իրավիճակներ, երբ նման ազատությունը հակասում է քաղաքացիական դատավարության հանրային-իրավական հիմունքներին, գործող տնօրինչականությունը հակադարձվում է օրինականության սկզբունքին, քանի որ հայցից հրաժարվելը շատ հաճախ հակասում է օրենքին կամ խախտում է որևէ մեկի, այդ թվում՝ գործին մասնակցող այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը: Օրենսգրքի ընդունումից հետո որոշ դատավարագետներ, օրինակ՝ Ռ.Գ. Պետրոսյանը, քննադատաբար էին մոտենում նշված մոդալությանը:¹ Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, նրանք չէին սխալվում: Իրոք, այդ դեպքերում, երբ, օրինակ, աշխատանքում վերականգնելու խնդրով դիմողը հրաժարվում է հայցից, որովհետև գործատուն, ցանկանալով խուսափել հարկադիր պարապուրդի գումարները վճարելու պատասխանատվությունից, խոստանում է նրան վերականգնել նախկին աշխատանքում,

¹ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, 2-րդ հրատ., Եր., 2012, ԵՊՀ հրատ., էջ 308:

հայցից հրաժարումը չի կարող ընդունվել: Այն չի կարող ընդունվել ընտանեկան իրավահարաբերություններից բխող որոշ, մասնավորապես՝ երեխաների շահերի պաշտպանությունից հրաժարվելու դեպքերում և այլն: Ակնհայտ է, որ հայցից հրաժարվելը չպետք է ընդունվի, եթե հիմքեր կան կասկածելու, որ հայցվորը տվյալ դատավարական գործողությունը կատարում է խաբեության, բռնության, սպառնալիքի, էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության ներքո (այս մասին խոսել ենք վերը): Հայցից հրաժարվելն ընդունելու հետևանքով օրինականության սկզբունքի հնարավոր խախտումների ցանկը կարելի է շարունակել:

Ամենահին էլ պատահական չէ, որ ՌԴ օրենսդիրը 2002 թ. նոր ՔԴՕ-ի ընդունմամբ, ըստ էության, վերականգնեց նախկին օրենսդրական դրույթն այն մասին, որ դատարանը չի ընդունում կողմերի տնօրինչական գործողությունները, եթե դրանք հակասում են օրենքին կամ խախտում են այլ անձի իրավունքները կամ օրինական շահերը:¹

Ինչպես նշում է Տ.Ա. Սավելևան, սեփական, ինչպես նաև այլ անձանց իրավունքների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանությամբ ներկայացված հայցից հրաժարվելու նկատմամբ դատարանի հսկողական գործառնությունների վերականգնումը լուծում է իրավակիրառ պրակտիկայում գոյություն ունեցող մի շարք վիճելի խնդիրներ:² Դատական հսկողության միջոցով է հնարավոր բացառել այնպիսի իրավիճակներ, երբ դատարանը, խախտելով գործին մասնակցող անձանց կամ այլ սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը, ընդունում է հայցից հրաժարումը և կարճում գործի վարույթը՝ շահագրգռված անձի իրավունքի պաշտպանության հարցում հաճախ ստեղծելով փակուղային իրավիճակ: Միայն հայցից հրաժարվելու օրինականությունը ստուգելու միջոցով է հնարավոր բացառել կամքի արատով՝ խաբեության, բռնության, սպառնալիքի,

¹ Ст'ю Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации (постатейный). Под ред. **Г.А. Жилина**. 7-ое изд. М.: «Проспект», 2014, т. 104:

² Ст'ю **Савельева Т.А.** Судебная власть в гражданском процессе: соотношение публично- и частноправовых начал. В кн.: Теоретические и прикладные проблемы реформы гражданской юрисдикции. Екатеринбург, 1998, т. 2: 186:

էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության ներքո հայցից հրաժարվելու և, որպես հետևանք, վարույթը կարճելու ու անդառնալի հետևանքներ առաջացնելու հնարավորությունը:

Ի դեպ, քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում է հայտնել նաև Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ *թեև հայցից հրաժարումը հայցվորի միակողմանի տնօրինչական գործողություն է, որը կարող է տեղի ունենալ տարբեր նկատառումներով, իսկ դատարանն էլ չպետք է անդրադառնա հայցից հրաժարվելու պատճառների գնահատմանը, այդուհանդերձ վերջինս «պարտավոր է հայցվորին պարզաբանել կատարվող գործողության իմաստն ու նշանակությունը և համոզվել, որ հայցից հրաժարումը վերջինիս ազատ կամքի արտահայտությունն է և զերծ է այլ անձանց հարկադրանքից» (ընդգծումը մերն է):¹* Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը լիովին կիսելով հանդերձ՝ գտնում ենք, որ այն համոզիչ իրավական հիմքեր ձեռք կրերի դատարանի տվյալ պարտականությունն օրենսդրորեն ամրագրելու պարագայում:

Քննարկվող հիմնահարցի տեսանկյունից տեսական և իրավակիրառական հետաքրքրություն է ներկայացնում դատախազի, այլ անձանց իրավունքների պաշտպանությամբ հայց հարուցած սուբյեկտների, ինչպես նաև անչափափաս, սահմանափակ գործունակ և անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչների կողմից հայցից հրաժարվելու հնարավորության հիմնախնդիրը:

Նշված սուբյեկտների կողմից քաղաքացիական դատավարության կարգով հայց հարուցելու հիմքերը և նրանց դատավարական, ինչու ոչ, նաև նյութաիրավական կարգավիճակը էականորեն տարբերվում են: Այդուհանդերձ, դատախազը, այլ անձանց իրավունքների պաշտպանությամբ հայց հարուցած սուբյեկտները և քաղաքացիների օրինական ներկայացուցիչներն ունեն մեկ էական ընդհանրություն՝ նրանք, չհանդիսանալով վիճելի նյութական իրավահարաբերության մասնակիցներ, հայց են հարուցում ոչ թե իրենց, այլև այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ:

¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0462/02/08 քաղաքացիական գործով 19.10.2012 թ. որոշումը:

Հայցից հրաժարվելու դատավարական ինստիտուտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ո՛չ ՔԴՕ-ն և ո՛չ էլ թվարկված սուբյեկտների կարգավիճակը սահմանող հատուկ օրենսդրությունը դատախազի և այլ անձանց իրավունքների պաշտպանությամբ հայց հարուցած սուբյեկտների հարցում քննարկվող տնօրինչական գործողությունը կատարելու վերաբերյալ բացառություններ չի նախատեսել: Մինչդեռ ակնհայտ է, որ տվյալ սուբյեկտների կողմից տնօրինչական գործողությունների, այդ թվում՝ հայցից հրաժարվելու արդյունքում, ներկա իրավակարգավորման պայմաններում, կարող են էական ու անդառնալի վնաս հասցվել այն սուբյեկտներին, որոնց շահերի պաշտպանությամբ հայց է ներկայացվել դատարան:¹

Դատավարագիտության մեջ վաղուց ավանդական է դարձել այն դիքորոշումը, որ այն բոլոր դեպքերում, երբ դատական կարգով պաշտպանվում է առավելապես հանրային շահը կամ այն անձանց շահը, որոնք զրկված են իրենց շահերն ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից, մասնավոր-իրավական կարգավորման սկզբունքները կիրառելի չեն:² Դատախազի և այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ հանդես եկող սուբյեկտների դատավարական գործունեության հիմքում կա՛մ պետության գույքային շահն է, կա՛մ այն անձանց շահերը, որոնք ի վիճակի չեն դատարանում ինքնուրույն իրականացնելու իրենց դատավարական իրավունքները և պաշտպանելու իրենց շահերը:

Ուսու դատավարագետները պաշտպանում են այն տեսակետը, որ վերը թվարկված սուբյեկտները, ունենալով վարույթ հարուցելու նախաձեռնություն ցուցաբերելու իրավունք, կարող են հրաժարվել գործը քննելու պահանջից, եթե գալիս են եզրակացության, որ այն

¹ Թերևս նման նկատառումներից ելնելով է Ռ.Գ. Պետրոսյանն առաջարկում զրկել դատախազին հայցից հրաժարվելու իրավունքից, իսկ այլ անձանց իրավունքների պաշտպանությամբ հայց հարուցող սուբյեկտների կողմից հայցից հրաժարվելը դիտարկել որպես վարույթը կարճելու հիմք միայն այն պարագայում, երբ այդ անձինք չեն պնդում գործի քննությունը շարունակելու ցանկությունը: Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., 2012, «Ոսկան Երևանի» հրատ., էջեր 168, 174:

² Տե՛ս **Русинова Е.Р.** Распорядительные права сторон в гражданском процессе. Дисс... к.ю.н. Екатеринбург, 2003, էջ 70:

անհիմն է կամ անօրինական, սակայն նման հրաժարումը կարող է գործի վարույթը կարճելու հիմք հանդիսանալ միայն այն անձի կամահայտնությամբ, ում շահերի պաշտպանությամբ հարուցվել է քաղաքացիական գործը:¹ Այդ դիրքորոշումն իր արտացոլումն է գտել ՌԴ ՔԴՕ 45-րդ և 46-րդ հոդվածներում, ըստ որոնց, նշված սուբյեկտների կողմից այլ անձի օրինական շահերի պաշտպանությամբ ներկայացված պահանջից հրաժարվելու դեպքում գործի քննությունը շարունակվում է, եթե այդ անձը կամ նրա օրինական ներակայացուցիչը չի հայտարարում հայցից հրաժարվելու մասին. եթե անձը, ում օրինական շահերի պաշտպանությամբ հայց է հարուցվել, ևս հրաժարվում է հայցից, գործի վարույթը կարճվում է, եթե դա չի հակասում օրենքին կամ չի խախտում այլ անձանց իրավունքները և պարտականությունները:

Դատախազի և այլ անձանց իրավունքների պաշտպանությամբ հայց հարուցող սուբյեկտների հարցում ՌԴ օրենսդիրը որդեգրել է այն մոտեցումը, ըստ որի նշված անձինք, թեև հայց են հարուցում և օգտվում են հայցվորի բոլոր իրավունքներից և կրում են նրա պարտականությունները, գործով հայցվոր չեն հանդիսանում. որպես հայցվոր վարույթին ներգրավվում է այն անձը, ում իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ ՌԴ ՔԴՕ 45 և 46-րդ հոդվածներով նախատեսված սուբյեկտները հարուցում են հայցը: Վերջիններս և՛ դատավարական օրենսդրությամբ, և՛ գրականության մեջ դիտարկվում են որպես «դատավարական հայցվորներ», որոնք տնօրինչական գործողություններ կատարելու իրավունք չունեն: Նրանք ոչ թե հրաժարվում են հայցից, այլ հետ են վերցնում իրենց դիմումը (ՌԴ ՔԴՕ 45 հոդվ., մաս 2) կամ հրաժարվում են պաշտպանել ներկայացված պահանջը (ՌԴ ՔԴՕ 46 հոդվ., մաս 2): Ըստ ՌԴ օրենսդրի, մեր կարծիքով, հիմնավորված դիրքորոշման, որը լիովին արտացոլվել է ՌԴ ՔԴՕ-ում, տնօրինչական ակտ կարող է կատարել բացառապես վիճելի իրավահարաբերության մասնակից-սուբյեկտը՝ այն անձը, ով ենթադրաբար կրում է պաշտպանության ենթակա սուբյեկտիվ իրավունքը:

¹ Ст'я, օրինակ՝ Комментарий к гражданскому процессуальному кодексу Российской Федерации (постатейный). Под ред. **Г.А. Жулина**. 7-ое изд. М.: «Проспект», 2014, էջ 115-116:

ՀՀ օրենսդրությունը քննարկվող հարցում զարգացել է փոքրինչ այլ ճանապարհով: Գործող օրենսդրության ուժով պետության գույքային շահերի պաշտպանությամբ հայց հարուցած դատախազը, իրականացնելով ՀՀ սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով իր վրա դրված գործառնությունները, գործով հանդես է գալիս հայցվորի կարգավիճակով: Օրենքը դատարանին չի պարտավորեցնում համապատասխան լիազորված պետական մարմնին ևս ներգրավել գործի քննությանը որպես համահայցվոր կամ «իրական» հայցվոր: Ավելին, համապատասխան լիազորված պետական մարմինները, որոնց փոխարեն կամ միջնորդությամբ դատախազը ներկայացրել է հայց, վարույթ մտնելու հնարավորություն չունեն: Որպես հետևանք, դատախազի կողմից հայցից հրաժարվելու վերաբերյալ նրանց դիրքորոշումը որևէ դատավարական նշանակություն ունենալ չի կարող: Նման պայմաններում հնարավոր կոռուպցիոն ռիսկերի առկայությունը և դատախազի կողմից հայցից հրաժարվելու դեպքում պետությանը վնաս պատճառելու հավանականությունը բացառել չի կարելի: Այս առումով համամիտ ենք պրոֆ. Ռ.Գ. Պետրոսյանի հետ այն հարցում, որ դատախազի կողմից հայցից հրաժարվելու հնարավորությունն օրենսդրորեն պետք է սահմանափակվի:¹

Ինչ վերաբերում է ԲԴՕ 2-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ հայց հարուցած սուբյեկտներին, վերջիններս ևս ՀՀ դատավարական օրենսդրության տրամաբանությամբ հանդիսանում են ոչ թե «դատավարական հայցվորներ», այլ օգտվում են հայցվորի բոլոր իրավունքներից և կրում են նրա պարտականությունները՝ լիովին փոխարինելով վարույթում այն անձանց, ում շահերի պաշտպանությամբ հայցը հարուցում են:

Հարկ է նշել, որ, թեև այլ անձանց մասնավոր իրավունքների և շահերի պաշտպանությամբ դատարանին դիմող սուբյեկտների ցանկը գնալով ընդարձակվում է, այդ սուբյեկտների իրավական դրությունը քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ

¹ Տե՛ս **Պետրոսյան Ռ.Գ.**, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն, 4-րդ հրատ., Եր., 2012, «Ոսկան Երևանցի» հրատ., էջ 168:

հստակ որոշված չէ: Թերևս բացառություն են հանդիսանում պետական տուրքի վճարումից և դատական այլ ծախսերից նրանց ազատելու մասին նորմերը (Պետական տուրքի մասին օրենքի 22 հոդվ. «է» կետ): Այդ իրողությունը գործնականում լուրջ դժվարություններ է առաջացնում իրավակիրառական մի շարք խնդիրների լուծման ժամանակ:

Այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ հայց հարուցելու իրավասություն ունեցող մարմինների մասնակցությունը քաղաքացիական դատավարությանն ունի տարբեր առանձնահատկություններ՝ կախված նրանից, թե ինչ կատեգորիայի սուբյեկտների իրավունքների պաշտպանության մասին է խոսքը: Համապատասխանաբար էլ խնդիր է առաջանում համապատասխան անձին վարույթ ներգրավելու հնարավորության, նպատակահարմարության, նրա դատավարական կարգավիճակի կապակցությամբ հայցից հրաժարվելու մասին նրա կամահայտնությունը հաշվի առնելու, նրա անունից հայց հարուցող սուբյեկտի կողմից հայցից հրաժարվելու հետևանքները պարզելու տեսանկյունից: Այսպես, խնամակալության և հոգաբարձության մարմինը երեխայի որդեգրումը վերացնելու հայցով կարող է դիմել դատարան (Ընտ. օր. 131 հոդվ.): Հասկանալի է, որ երեխան, որի շահերի պաշտպանությամբ ներկայցվել է հայցը, վարույթի ընթացքում տնօրինչական գործողություններ կատարել չի կարող, իսկ նրա կամահայտնությունը տվյալ հարցում դատավարական արժեք չունի (նրա մոտ դատավարական գործունակության բացակայության պատճառով): Մինչդեռ այլ է իրավիճակը, երբ հասարակական կազմակերպություններն են հայց ներկայացնում դատարան իրենց անդամների իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանելու համար (նման հնարավորություն նախատեսված է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով): Ակնհայտ է, որ ՀՀ-ի անդամը, ում իրավունքների պաշտպանությամբ վարույթ է հարուցվել, ցանկության դեպքում կարող է և՛ մասնակցել վարույթին, և՛ կատարել տնօրինչական գործողություններ, այդ թվում՝ հրաժարվել հոգուտ իրեն ներկայացված հայցից: Նման պայմաններում վերջինիս՝ հայցից հրաժարվելու իրավունք չվերապահելը, կարծում ենք, ոչնչով արդարացված չէ, առավել ևս այն պայմաններում, երբ նրա շահերի պաշտպանությամբ հայց հարուցած ՀՀ-ը, որպես հայցվոր, նման իրավունքից օգտվում է:

Որոշակի առանձնահատկություններ ունեն անորոշ թվով անձանց իրավունքների պաշտպանությամբ հարուցված հայցերը, որոնք ևս հարուցվում են այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ հանդես եկող սուբյեկտների կողմից: Դրանց հիմնական առանձնահատկությունն էլ այն է, որ դատարանն օբյեկտիվորեն զրկված է հնարավոր շահագրգռված անձանց շրջանակը հստակ որոշելու հնարավորությունից:¹

Թողնելով առանց հատուկ կարգավորման այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ հայց հարուցած սուբյեկտների դատավարական կարգավիճակը՝ օրենսդիրը, մեր կարծիքով, լուրջ վտանգի տակ է դնում այն անձանց իրավունքներն ու օրինական շահերը, որոնց պաշտպանությամբ նշված սուբյեկտները հայցով դիմում են դատարան: Չի կարելի հերքել այն փաստը, որ հայցից հրաժարվելու արդյունքում նշված շահագրգռված անձանց կարող է պատճառվել անդառնալի վնաս: Ուստի նման գործերով հայցից հրաժարվելու հնարավորությունը, մեր կարծիքով, պետք է բացառվի այն իրավիճակներում, երբ շահագրգռված անձը (անձինք), ունի իրավունքների պաշտպանությամբ հայցը հարուցվել է, ինչ-ինչ պատճառներով (գործունակության բացակայություն, սուբյեկտների անորոշ շրջանակ և այլն) զրկված է (են) վարույթի կարճման հարցում կամահայտնություն արտահայտելու հնարավորությունից: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ անձը, ունի իրավունքների պաշտպանությամբ հայցը հարուցվել է, ցանկություն և իրավական հնարավորություն ունի արտահայտելու վարույթը շարունակելու կամք (օրինակ՝ ՀԿ-ի անդամը), ապա, կարծում ենք, որ վարույթի կարճման հիմքում պետք է դնել ոչ թե միայն հայց հարուցողի հրաժարումը հայցից, այլև տվյալ շահագրգռված անձի հստակ կամահայտնությունը՝ դատական պաշտպանությունից անվերապահորեն հրաժարվելու մասին:

¹ Խոսքը, օրինակ, այնպիսի հայցերի մասին է, որոնց շրջանակում ներկայացվում են սպառողների իրավունքները խախտող կամ նրանց օրինական շահերին վնասող, շրջակա միջավայրին վնաս պատճառող գործողությունները դադարեցնելուն: Նման հայցերի հարուցման հնարավորության, կարգի ու պայմանների հարցին սույն աշխատանքի շրջանակներում չենք անդրադառնում՝ նկատի ունենալով, որ նման հայցերով գործերի հարուցման, քննության և լուծման իրավական կարգավորման հիմնախնդիրները ինքնուրույն գիտագործնական նշանակություն ունեն, և առավել նպատակահարմար է դրանք քննարկել առանձին աշխատության շրջանակներում:

Նման կամահայտնության բացակայության պայմաններում գործի քննությունը պետք է շարունակվի: Առաջարկվող իրավակարգավորմանն էլ պետք է հավելել այն, որ դատարանին հարկ է վերապահել հնարավորություն շահագրգռված անձի հրաժարումը չընդունելու, եթե այն հակասում է օրենքին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և/կամ օրինական շահերը:

Որոշակի մտավախություններ է առաջացնում դատավարությանը գործին մասնակցող անձի օրինական ներկայացուցչի կարգավիճակով մասնակցող անձանց կողմից հայցից հրաժարվելու ըստ էության անվերահսկելի հնարավորությունը:

ՔԴՕ 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքները և օրինական շահերը դատարանում պաշտպանում են նրանց ծնողները, խնամակալները կամ հոգաբարձուները: Ի տարբերություն պայմանագրային հիմունքներով ներկայացուցչություն իրականացնող ներկայացուցիչների, որոնք տնօրինչական գործողություններ կարող են կատարել բացառապես ներկայացվողի կողմից հատուկ լիազորված լինելու դեպքում (ՔԴՕ 42 հոդվ.), օրինական ներկայացուցիչներն իրենց հայեցողությամբ են իրականացնում գործին մասնակցող անձի բոլոր իրավունքները և պարտականությունները: Գործող դատավարական օրենսդրությունը որևէ սահմանափակում այդ հայեցողության իրականացման տեսանկյունից չի նախատեսում, ինչը գործնականում լուրջ խնդիրներ է առաջացնում հայցից հրաժարվելու իրավունքի չարաշահման տեսանկյունից: Իհարկե, օրինական ներկայացուցիչը, ինչպես և ցանկացած այլ անձ, պատասխանատու է իր գործողություններով այլ անձի պատճառած վնասի համար, այդուհանդերձ, կարծում ենք, որ գործող օրենսդրությունը ռեալ երաշխիքներ պետք է պարունակի այն անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար, որոնք հասկանալի պատճառներով ի վիճակի չեն անձամբ իրականացնել դատական պաշտպանության իրենց սահմանադրական իրավունքը:

Եթե անչափահասի շահերը ներկայացնող ծնողին տրված ազատությունը դեռ որոշակիորեն ընկալելի է, նույնը չի կարելի ասել խնամակալների և հոգաբարձուների մասին, որոնք, ըստ Քաղ. օր. 33-րդ հոդվածի 2-րդ մասի, առանց հատուկ լիազորության հանդես

են գալիս իրենց խնամարկյալների իրավունքների ու շահերի պաշտպանությամբ ցանկացած անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում: Մեզ համար առնվազն անհասկանալի է, թե ինչու խնամակալը, որը, ըստ օրենսդրության, իր խնամարկյալի եկամուտները և գույքը տնօրինելու իրավունք չունի, առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի նախնական թույլտվության (Քաղ. օր. 39 հոդվ.), պետք է ունենա հնարավորություն իր հայեցողությամբ, ազատորեն հրաժարվելու իր խնամարկյալի իրավունքների և շահերի պաշտպանությամբ ներկայացված հայցից կամ ընդունել նրա դեմ ներկայացված հայցը: Երկու դեպքերում էլ ակնհայտ է, որ դա կարող է հանգեցնել խնամարկյալին պատկանող իրավունքներից հրաժարվելուն, նրա գույքը բաժանելուն կամ դրանից բաժիններ առանձնացնելուն, ինչպես նաև հանգեցնել այլ եղանակներով խնամարկյալի գույքի նվազեցմանը:

Կարծում ենք, որ խնդրի լավագույն լուծում կարող է համարվել խնամակալների և հոգաբարձուների տնօրինչական գործողությունների նկատմամբ ևս խնամակալության և հոգաբարձության մարմինների հսկողության սահմանումը: Մեր խորին համոզմամբ, Քաղ. օր.-ի՝ «խնամակալի գույքի տնօրինումը» վերտառությամբ 39-րդ հոդվածում նպատակահարմար կլինի խնամակալների և հոգաբարձուների համար սահմանել նաև առանց խնամակալության և հոգաբարձության մարմնի թույլտվության դատարանում տնօրինչական գործողություններ կատարելու, մասնավորապես՝ հայցից հրաժարվելու, հայցն ընդունելու և հաշտության համաձայնություն կնքելու արգելքը: Ինչ վերաբերում է ՔԴՕ-ին, ապա այստեղ ճիշտ կլիներ դատարանին վերապահել ծնողների, խնամակալների և հոգաբարձուների կողմից հայցից հրաժարվելը (հայցն ընդունելը) չընդունելու պարտականություն այն դեպքերում, երբ նման հրաժարումը (ընդունումը) հակասում է օրենքին կամ խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ հայցից հրաժարվելու և մյուս տնօրինչական գործողությունների նկատմամբ դատական հսկողություն սահմանելն օբյեկտիվ անհրաժեշտություն է: Այն լուրջ երաշխիք է առ այն, որ դատական պաշտպանության իրավունքի իրականացումից հրաժարվելու արդյունքում չեն խախտվի ոչ միայն այլ անձանց իրավունքները, այլ նաև

հենց իրենց՝ գործին մասնակցող անձանց օրինական շահը:

Նպատակահարմար է ՔԴՕ-ով ուղղակիորեն նախատեսել, որ դատարանը չի ընդունում հայցվորի հրաժարումը հայցից, եթե այն հակասում է օրենքին կամ խախտում է այլ անձի իրավունքներն ու օրինական շահերը, կամ հիմքեր կան կասկածելու, որ հայցվորը տվյալ դատավարական գործողությունը կատարում է խաբեության, բռնության, սպառնալիքի, էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության ներքո:

Դատավարական օրենսդրությամբ հարկ է նախատեսել դատախազի, այլ անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությամբ հայց հարուցելու իրավունք ունեցող անձանց և օրինական ներկայացուցիչների կողմից հայցից հրաժարվելու իրավունքի իրականացման որոշակի սահմանափակումներ, որոնք ուղղված կլինեն համապատասխանաբար հանրային շահի կամ այն անձանց շահերի պաշտպանությանը, որոնք զրկված են իրենց շահերն ինքնուրույն պաշտպանելու հնարավորությունից:

Vardush Esayan

Post graduate researcher at the Chair of Civil Procedure, YSU

THE PROBLEM OF JUDICIAL CONTROL UPON DILIGENCE ACTION - WAIVER OF A CLAIM IN THE CIVIL PROCEDURE

In the article problems of judicial control upon waiver of a claim in the civil procedure of the Republic of Armenia are scrutinized.

Based on the analysis of practical application of the provisions of current CPC RA, case law as well as achievements of civil procedural science, the author concludes that revocation of judicial control functions upon waiver of a claim, which took place within judicial-legal reform in RA aimed at enlargement discretionary origins in civil procedure, was not justified. A conclusion is drawn up underlining the necessity of establishing a provision stating, that the court does not accept a waiver of a claim if it contravenes the law, violates the rights and legal interests of third parties, or there are grounds to presume that the given procedural action is carried out against will.

Reasonability for specific regulation of waiver of a claim by prosecutor, entities representing rights and interests of the third parties as well as legal representatives is substantiated.

Вардуш Есаян

Соискатель кафедры гражданского процесса ЕГУ

ПРОБЛЕМА СУДЕБНОГО КОНТРОЛЯ ЗА РАСПОРЯДИТЕЛЬНЫМ ДЕЙСТВИЕМ ПО ОТКАЗУ ОТ ИСКА В ГРАЖДАНСКОМ СУДОПРОИЗВОДСТВЕ

В статье рассматриваются проблемы судебного контроля за отказом от иска в гражданском судопроизводстве Республики Армения.

На основе анализа практики применения норм действующего ГПК РА, судебной практики, а также достижений гражданско-процессуальной науки автор приходит к заключению, что отмена контрольных функций суда за отказом от иска, осуществлённая в ходе судебно-правовых реформ в РА и нацеленная на расширение диспозитивных начал гражданского судопроизводства, себя не оправдала. Делается заключение о необходимости законодательного закрепления нормы о том, что суд не принимает отказ от иска, если он противоречит закону, нарушает права и законные интересы других лиц, либо есть основания предполагать, что данное процессуальное действие совершается с пороком воли.

Обосновывается целесообразность специального регулирования осуществления права на отказ от иска прокурором, лицами, предъявившими иск в защиту чужих прав и интересов, а также законными представителями.

Բանալի բառեր՝ տնօրինչականություն, տնօրինչական գործողություն, հայցից հրաժարվել, դատական ​​​​հսկողություն, հսկողական գործառնություն, կողմերի իրավունքներ

Keywords: Diligence, dispositive action, waiver of a claim, judicial control, control functions, rights of parties

Ключевые слова: диспозитивность, распорядительное действие, отказ от иска, судебный контроль, контрольные функции, права сторон

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲՈՆԱԳԱՆՋՄԱՆ ՀԻՄՆԱՆԴԻՐՆԵՐԸ**

Պետությունը՝ որպես պարտապան, ելնելով հանրային-իրավական հատուկ կարգավիճակից, չի կարող ենթարկվել դատական ակտերով նախատեսված դրամական պարտավորությունների կատարման այն ռեժիմին, որին ենթարկվում են մասնավոր անձինք: Ուստի պետության դրամական պարտավորությունների կատարման հատուկ կարգ սահմանելը հիմնավորված և իրավաչափ է: Սակայն, մյուս կողմից, նման հատուկ կարգը չպետք է խախտի պետության պարտատերերի իրավունքները, և վերջիններս պետք է հնարավորություն ունենան իրենց դրամական պահանջների բավարարում ստանալ այն նույն ծավալով և պայմաններով, որոնցով կստանային, եթե նրանց պարտապանները ֆիզիկական կամ իրավաբանական անձինք լինեին:

Անկախ պետության հանրային-իրավական կարգավիճակից բխող առանձնահատուկ քաղաքացիաիրավական իրավասուրբեկությունից²՝ քաղաքացիաիրավական հարաբերություններին պետությունը մասնակցում է ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով³, ինչն իր ամրագրումն է գտել ՀՀ

¹ ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Հովհաննիսյան:

² Պետության քաղաքացիաիրավական իրավասուրբեկության տարբեր մեկնաբանությունների մասին մանրամասն տե՛ս Гражданское право России: Курс лекций / Под ред. О. Н. Садикова. Москва, 1996. Ч. 1. С. 112., Տե՛ս Բարսեղյան Տ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, երրորդ հրատարակություն, Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2006 – էջ 169, Гражданское право: Учебник для вузов / Под ред. Т.И.Илларионовой, Б. М. Гонгало, В.А.Плетнева. М., 1998. С. 140. Гражданское право: В 3 т. Том 1: Учебник, переработанное и дополненное. Под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого. М. Проспект, 2005 – стр. 221. Субъекты гражданского права / Под ред. С. Н.Братуся. М. Госюриздат, 1950 - С. 270; Гражданское право: В 4 т. Том 1: Общая часть: Учебник, 3-е издание, переработанное и дополненное. Под ред. Е. А. Суханова. М. Волтерс Клувер, 2008 – стр. 209.

³ Մյլ մասին մանրամասն տե՛ս Гражданское право: В 4 т. Том 1: Общая часть: Учебник, 3-е издание, переработанное и дополненное. Под ред. Е. А. Суханова. М. Волтерс Клувер, 2008 – стр. 208. Гражданское право: В 3 т. Том 1: Учебник, переработанное и дополненное. Под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого. М. Проспект, 2005 – стр. 218.

քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածում:

Միաժամանակ պետք է նշել, որ պետության՝ դատական ակտերով նախատեսված դրամական պարտավորությունների կատարման, այդ թվում՝ հարկադիր կատարման մասով պետության պատասխանատվությունը չի տարածվում նրան պատկանող ողջ գույքի վրա (գույքի մի մասը, ըստ էության, անձեռնմխելի է պարտատերերի բռնագանձումներից)¹: Սակայն պետության գույքի նման անձեռնմխելիությունը չի կարող հիմք տալ պնդելու, որ քաղաքացիաիրավական հարաբերություններում մասնավոր անձանց հետ պետության հավասար հիմունքներով մասնակցության սկզբունքը խախտվում է, եթե միայն պետության դրամական պարտավորությունները կատարման ենթակա լինեն նույն պայմաններով, որոնցով ենթակա են կատարման մասնավոր անձանց պարտավորությունները: Ի վերջո, պարտատիրոջ համար նշանակություն չունի, թե պետությունն իր ո՞ր միջոցների հաշվին կմարի իր պարտքը:

Պետության դրամական պարտավորությունների կատարման կարգը պետք է բավարարի նաև պետության պարտատերերի սեփականության իրավունքի ապահովման պահանջներին, քանի որ պարտատերերի պահանջի իրավունքը պետք է դիտարկվի որպես նրանց սեփականություն, ուստի ենթակա լինի համապատասխան իրավական պաշտպանության:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն (այսուհետ՝ Եվրոպական դատարան) իր մի շարք վճիռներում² այս հարցի կապակցությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ պահանջի իրավունքը, եթե այն բավականաչափ հիմնավորված է կատարելի լինելու համար, առավել ևս՝ եթե բխում է դատական

¹St'u Гражданское право: В 3 т. Том 1: Учебник, переработанное и дополненное. Под ред. А. П. Сергеева, Ю. К. Толстого. М. Проспект, 2005, էջ 220:

²St'u, մասնավորապես, STRAN GREEK REFINERIES AND STRATIS ANDREADIS v. GREECE գործով (N 13427/87) 09.12.1994թ. վճռի 59 կետը, VASILOPOULOU v. GREECE գործով (N 47541/99) 21.03.2002թ. վճռի 22 կետը, BURDOV v. RUSSIA գործով (N 59498/00) 07.05.2002թ. վճռի 40 կետը, TIMOFEYEV v. RUSSIA գործով (N 58263/00) 23.10.2003թ. վճռի 45 կետը, BURDOV v. RUSSIA (No. 2) գործով (N 33509/04) 15.01.2009թ. վճռի 87 կետը:

ակտից, համարվում է սեփականություն և դրանով իսկ ենթակա է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) Առաջին արձանագրության 1-ին հոդվածի (սեփականության իրավունք) պաշտպանությանը: Մասնավորապես, պետության դեմ կայացված դատական ակտերով նախատեսված գույքային պահանջների պարագայում Եվրոպական դատարանի դիրքորոշումը միանշանակ է այն հարցում, որ պետության կողմից դատական ակտի չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը, ի լրումն արդար դատաքննության իրավունքի (Կոնվենցիայի 6-րդ հոդված), խախտում է նաև պահանջատիրոջ՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքը:

Նման դիրքորոշումը լիովին արդարացված է, քանի որ եթե մասնավոր անձ պարտապանի պարագայում պետությունից պահանջվում է միայն պատշաճ կերպով ապահովել Կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածներով երաշխավորված՝ արդար դատաքննության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքները՝ մասնավորապես օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայության պարագայում ապահովելով դատական ակտի հարկադիր կատարման մատչելի, արդյունավետ և օպերատիվ ընթացակարգեր, ապա այն դեպքում, երբ պարտապանը պետությունն է, մասնավոր իրավահարաբերության պարտավոր անձը՝ մի կողմից, և պարտատիրոջ հիմնական իրավունքների երաշխավորման հանրային-իրավական պարտականություն կրող սուբյեկտը՝ մյուս կողմից, նույնանում են: Այդ իսկ պատճառով պետության դեմ կայացված ցանկացած դատական ակտի չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումն անխուսափելիորեն առաջացնում է պահանջատիրոջ հիմնական իրավունքների և, մասնավորապես, սեփականության իրավունքի խախտում:

Դատական ակտով սահմանված՝ պետության նկատմամբ պահանջի իրավունքը դիտարկելով պարտատիրոջ սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից՝ հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում սեփականության իրավունքի երաշխավորումն ամրագրող դրույթները որոշակի փոփոխություններ են կրել 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Մասնավորապես, Սահմանադրությ-

յան սկզբնական տեքստի 8-րդ հոդվածից հանվել է «Պետությունը երաշխավորում է սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը» դրույթը: Սակայն արդյո՞ք այդ հանգամանքը կարող է հիմք տալ եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետությունն այլևս չի երաշխավորում սեփականության բոլոր ձևերի հավասար իրավական պաշտպանությունը և իր օրենքներով կամ այլ իրավական ակտերով կարող է սահմանել սեփականության իրավունքի պաշտպանության տարբեր իրավական ռեժիմներ՝ կախված սեփականության ձևից: Մասնավորապես, արդյո՞ք իրավաչափ կլինի այն իրավիճակը, երբ պետության նկատմամբ ֆիզիկական կամ իրավաբանական անձի պահանջի իրավունքը պետության կողմից պաշտպանվի պարտատիրոջ համար նվազ շահեկան պայմաններով, քան, օրինակ, իրավաբանական անձի պահանջի իրավունքը ֆիզիկական անձի նկատմամբ:

Միանշանակ կարող ենք պնդել, որ բարձրացված հարցերի պատասխանը բացասական է, և ՀՀ Սահմանադրությունն իր համակարգային տրամաբանության մեջ շարունակում է ապահովել սեփականության բոլոր ձևերի հավասար իրավական պաշտպանությունը: Հակառակ պարագայում ըստ սեփականության ձևի սեփականության իրավունքի տարբերակված պաշտպանությունը կհակասի խտրականության արգելքին՝ երաշխավորված ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածով, որից Սահմանադրության 42.1 հոդվածի ուժով օգտվում են ոչ միայն ֆիզիկական, այլ նաև իրավաբանական անձինք:

Քննարկվող տեսանկյունից հատկանշական է պրոֆեսոր Գ. Հարությունյանի հետևյալ մեկնաբանությունը ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդվածի վերաբերյալ. «...պետությունը ճանաչում է սեփականության իրավունքը՝ առանց որևէ խտրականություն դնելու դրա ձևերի միջև, ...պետությունը սահմանադրական երաշխիքներ է ապահովում սահմանադրական բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության ... համար»¹:

¹Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի – Եր.: «Իրավունք», 2010 – էջ 119:

Այսպիսով, նաև սեփականության իրավունքի պաշտպանության տեսանկյունից կարող ենք փաստել, որ պետությունը չի կարող դատական ակտերով նախատեսված իր իսկ դրամական պարտականությունների կատարման՝ պարտատերերի համար առավել վատթար պայմաններ սահմանել, քան սահմանել է մասնավոր անձանց նմանատիպ պարտականությունների կատարման պարագայում. պարտատերերը պետք է իրենց պահանջների բավարարման հնարավորություն ունենան միևնույն ծավալով և պայմաններով՝ անկախ նրանից, թե պարտապանը ֆիզիկական, իրավաբանական անձ է, թե հանրային իշխանության կողմ: Հակառակ իրավիճակը կխախտի սեփականության բոլոր ձևերի հավասար իրավական պաշտպանության սահմանադրական պահանջը և խտրական պայմաններ կստեղծի իրավունքի տարբեր սուբյեկտների համար:

Այժմ դիտարկենք Հայաստանի Հանրապետության՝ դատական ակտերով նախատեսված դրամական պարտավորությունների կատարման կարգը՝ որոշելու համար, թե որքանով է այն ապահովում պետության պարտատերերի իրավունքները, մասնավորապես, արդյո՞ք պետության պարտատերերի համար ապահովում է իրենց պահանջի բավարարման նույնպիսի ծավալ և պայմաններ, որպիսին ՀՀ օրենսդրությամբ ապահովվում է քաղաքացիական իրավահարաբերությունների այլ սուբյեկտների պարտատերերի համար:

Հայաստանի Հանրապետությունից՝ որպես պարտապանից, դրամական միջոցների բռնագանձումը կարգավորվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի¹ (մասնավորապես, օրենքի 15-րդ հոդվածի 13-րդ մասի) և ՀՀ կառավարության 2000թ. օգոստոսի 7-ի «Ղատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 436 որոշման² դրույթներով:

Նշված երկու իրավական ակտերով սահմանված կարգավորումը (այսուհետ՝ նաև Կարգ) նախատեսում է դատական ակտե-

¹ Ընդունվել է 24.06.1997թ., ՀՕ-137, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1997.08.11/18:

² Սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 2000.08.29/20(118):

րով նախատեսված Հայաստանի Հանրապետության դրամական պարտավորությունների կատարման հետևյալ ընդհանուր կառուցակարգը.

- Դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց տրամադրվում է մինչև մեկ տարի ժամկետով փոխանցվող մուրհակ:

- Մուրհակները Հայաստանի Հանրապետության անունից թողարկում և տրամադրում է ՀՀ ֆինանսների նախարարությունը:

- ՀՀ ֆինանսների նախարարությունը յուրաքանչյուր բյուջետային տարվա ընթացքում տրամադրված մուրհակների անվանական արժեքների և հաշվարկված տոկոսագումարի հանրագումարն առանձին տողով նախատեսում է հաջորդ տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ծախսային մասում: Տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված այն մուրհակների վճարման գումարը, որոնց մուրհակատերերը տվյալ բյուջետային տարում դրանք չեն ներկայացրել մարման, առանձին տողով նախատեսվում է հաջորդ տարվա պետական բյուջեի մասին օրենքի նախագծի ծախսային մասում:

- Մուրհակի տրամադրման հիմքը դատական ակտերի հարկադիր կատարման մասին օրենսդրությամբ սահմանված կարգով տրված կատարողական թերթը և կատարողական վարույթ հարուցելու մասին հարկադիր կատարողի որոշումն է:

- Մուրհակը տրամադրվում է կատարողական թերթը ստանալու օրվանից սկսած՝ քսան օրվա ընթացքում:

- Որպես մուրհակի տոկոսադրույք սահմանվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքի մեծությունը: Ընդ որում, տոկոսները հաշվարկվում են մուրհակի տրամադրման օրվանից մինչև դրա մարման օրն ընկած ժամանակաշրջանի համար:

- Մուրհակ վճարող է հանդիսանում ՀՀ կենտրոնական բանկը՝ մուրհակի մարման ժամկետը լրանալուց հետո մուրհակը տիրապետողի (մուրհակատիրոջ) առաջին իսկ պահանջով նախարարության միասնական գանձապետական հաշվից համապատաս-

խան գումարը գանձելու և մուրհակը ստանալու հետո երեք բանկային օրվա ընթացքում մուրհակատիրոջը վճարելու իրավասությամբ:

Ներկայացված Կարգը դիտարկելով իր առանձին կողմերով՝ ակնհայտ է դառնում Կարգի անհամապատասխանությունը քաղաքացիաիրավական հարաբերություններին պետության մասնակցության հիմունքներին և պետության պարտատերերի իրավունքների պաշտպանության պահանջներին:

Այսպես, Կարգը Հայաստանի Հանրապետության՝ դատական ակտով հաստատված սեփական պարտավորությունների կատարումը կախվածության մեջ է դնում պարտատիրոջ գործողություններից այն առումով, որ փոխանցելի մուրհակը տրամադրման ենթակա է միայն պարտատիրոջ կողմից կատարողական թերթը կատարման ներկայացվելու և կատարողական վարույթ հարուցվելու պարագայում:

Եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է այս հարցին՝ մասնավորապես նշելով, որ այն դեպքերում, երբ օրինական ուժի մեջ մտած վճիռը կայացված է պետության դեմ, պահանջատիրոջից չի կարող պահանջվել դիմել հարկադիր կատարման առանձին ընթացակարգերի¹: Նման դեպքերում պարտական պետության իշխանությունները պետք է պատշաճ կերպով ծանուցվեն դատական ակտի մասին և այդպիսով հնարավորություն ունենան ձեռնարկելու դրա կատարմանն ուղղված բոլոր անհրաժեշտ միջոցները կամ այն փոխանցելու դատական ակտի կատարման համար իրավասու այլ պետական մարմնի²:

Եվրոպական դատարանի նման դիրքորոշումը լիովին արդարացված է այն առումով, որ որևէ դատական ակտի հարկադիր կատարման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ պարտականը կամավոր չի կատարում օրինական ուժի մեջ մտած դատական ակտով իր վրա դրված պարտականությունը: Տվյալ պարա-

¹St'u Metaxas v. Greece գործով (N 8415/02) 27.05.2004թ. վճռի 19 կետը, Sukhorukov v. Russia գործով (N 23596/04) 31.07.2008թ. վճռի 15-րդ կետը, Burdov v. Russia (No. 2) գործով (N 33509/04) 15.01.2009թ. վճռի 68 կետը:

²St'u Burdov v. Russia (No. 2) գործով (N 33509/04) 15.01.2009թ. վճռի 68 կետը:

գայում պարտապանի դերում հանդես եկող պետության կողմից դատական ակտով սահմանված իր պարտականությունը կամավոր չկատարելը կնշանակի, մի կողմից, պետական իշխանության մի ճյուղի՝ դատական իշխանության լիազորությունների անտեսում դատական ակտի կատարումն ապահովող ճյուղի՝ գործադիր իշխանության կողմից, իսկ մյուս կողմից՝ կխախտի դատական ակտով որպես պարտատեր հանդես եկող անձի արդար դատաքննության իրավունքը (որի բաղադրիչ է, համաձայն Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի, նաև օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման իրավունքը), իսկ գույքային պահանջների դեպքում՝ նաև սեփականության իրավունքը: Ի վերջո, դատական ակտերի հարկադիր կատարումը՝ որպես պետական հարկադրանքի տեսակ, հանրային գործառույթ է (անկախ նրանից, թե այդ գործառույթն իրականացնողը հանրային, թե մասնավոր սուբյեկտ է), և պետությունը չի կարող թույլ տալ պետական հարկադրանք իր իսկ նկատմամբ:

Այնուամենայնիվ, Եվրոպական դատարանը նաև նշում է, որ ողջամիտ պետք է համարել դատական ակտի կատարումը թույլատրելու կամ արագացնելու նպատակով պետական մարմինների կողմից պահանջատիրոջից որոշակի փաստաթղթեր, մասնավորապես՝ բանկային տվյալներ պահանջելը¹: Սակայն պահանջատիրոջ նկատմամբ նման համագործակցության պահանջը չպետք է գերազանցի անհրաժեշտության սահմանները և ցանկացած դեպքում իշխանություններին չի ազատում պետության դեմ կայացված դատական ակտի կատարման նպատակով իրենց մոտ առկա տեղեկությունների հիման վրա ողջամիտ ժամկետում *ex officio* (ընդգծումը մերն է – Վ.Դ.) միջոցներ ձեռնարկելու՝ Կոնվենցիայից բխող պարտականությունից²:

Քննարկվող հարցերի վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքն ամփոփելուն և դրա հիման վրա համապատասխան լուծումներ առաջարկելուն է ուղղված Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Ազգային դատական ակտերի

¹St'u Kosmidis and Kosmidou v. Greece գործով (N 32141/04) 08.11.2007թ. վճռի 24 կետը:

²St'u Akashev v. Russia գործով (N 30616/05) 12.09.2008թ. վճռի 22 կետը:

չկատարումը Ռուսաստանում. Եվրոպական դատարանի վճիռների կատարմանն ուղղված ընդհանուր միջոցներ» թեմայով Հուշագիրը¹, որի 22-րդ կետում ասվում է. «Թեև հարկադիր կատարման արդյունավետ կառուցակարգի հիմնումը կարևոր է, այնուամենայնիվ հատուկ ուշադրություն պետք է դարձնել արագ ex-officio կատարմանը՝ նախքան այդ կառուցակարգերին դիմելը»²:

Շարադրվածի լույսի ներքո կարող ենք պնդել, որ պահանջատիրոջ կողմից կատարողական թերթ վերցնելը, այն հարկադիր կատարման ներկայացնելը, ապա նաև հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթ հարուցելն ամենևին անհրաժեշտ չեն կարող դիտվել պետության դեմ կայացված դատական ակտի կատարման նպատակին հասնելու համար: Պետությունը կարող է և պարտավոր է առանց պահանջատիրոջը նշված ընթացակարգային պարտականություններով ծանրաբեռնելու կատարել իր դեմ կայացված դատական ակտը, ընդ որում՝ սեփական, այլ ոչ թե պահանջատիրոջ նախաձեռնությամբ:

Այն հարցի հետ, թե ո՞վ է (պետք է լինի) պետության դեմ կայացված դատական ակտի կատարումը նախաձեռնող սուբյեկտը, սերտորեն կապված է նաև այդպիսի դատական ակտի կատարման ժամկետը: Այս առումով նախ պետք է հստակեցնել, որ պետությունից դրամական միջոցների բռնագանձման մասին դատական ակտի կատարում դեռևս չի կարող համարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջատիրոջը փոխանցելի մուրհակ տրամադրելը. այդպիսի դատական ակտը կատարված կլինի այն պահին, երբ հենց դատական ակտով սահմանված դրամական միջոցը տրամադրվի պահանջատիրոջը, կամ վերջինս ունենա այդ միջոցները ստանալու փաստացի հնարավորություն: Այդպիսով,

¹Տե՛ս CM/Inf/DH(2006)19 rev3 04.06.2007

([https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CM/Inf/DH\(2006\)19&Language=lanEnglish&Ver=rev3#P12_134](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CM/Inf/DH(2006)19&Language=lanEnglish&Ver=rev3#P12_134) – 26.10.2013):

²Հուշագրում տվյալ դրույթի ներառմամբ հղում է կատարվում, մասնավորապես, Եվրոպական դատարանի՝ Metaxas v. Greece գործով (N 8415/02) 27.05.2004թ. վճռի 19 կետին, Koltsov v. Russia գործով (N 41304/02) 24.02.2005թ. վճռի 16-րդ կետին, Petrushko v. Russia գործով (N 36494/02) 24.02.2005թ. վճռի 18-րդ կետին:

դատական ակտի կատարման օր կարող է համարվել մուրհակի մարման օրը:

Կատարելիությունը դատարանի վճիռների օրինական ուժի պարտադիր հատկանիշներից է¹, ինչը նշանակում է, որ պարտապանը պարտավոր է այն կատարել վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից: Երբ դատական ակտը կայացված է պետության դեմ, վերջինս պարտավոր է այն կատարել ոչ միայն որպես պարտապան, այլ նաև որպես պարտատիրոջ՝ արդար դատաքննության և սեփականության իրավունքներն ապահովելու սահմանադրական պարտականություն կրող հանրային-իրավական սուբյեկտ: Ընդ որում, ինչպես քաղաքացիաիրավական նորմերը, այնպես էլ Սահմանադրությամբ ամրագրված՝ վերը նշված հիմնական իրավունքների բովանդակությունը պարտավորեցնում են պետությանը իր պարտականությունը կատարել ողջամիտ ժամկետում:

Այս կապակցությամբ վերը հիշատակված՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի (N 2) գործով Եվրոպական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետության դեմ կայացված դատական վճռի կատարման բեռն առաջին հերթին ընկնում է պետական մարմինների վրա՝ *սկսած դատարանի վճռի՝ կատարման համար պարտադիր դառնալու օրվանից* (ընդգծումը մերն է – Վ.Դ.): Նույն գործով Եվրոպական դատարանը նշել է, որ դիմողի կողմից կատարողական թերթը միայն մեկ ամիս անց կատարման ներկայացնելու հանգամանքը չի ազդում դատարանի վճիռը կատարելու՝ իշխանությունների պարտականության ժամկետի հաշվարկման սկզբի վրա²:

Այնինչ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգավորումների շրջանակներում, երբ պետության դեմ կայացված դատական ակտի կատարման նախաձեռնողը պահանջատերն է, դատական ակտի կատարման ընթացակարգը կարող է սկսվել այն օրինական ուժի մեջ մտնելուց մինչև մեկ տարի անց՝ նկատի ունենալով, որ

¹Տե՛ս, օրինակ, Гражданский процесс:Учебник. 3-е изд., под ред. М. К. Треушникова. М. Изд. “Городец”, 2010 – էջ 406, Պետրոսյան Ռ. Գ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարություն – 3-րդ հրատ., Եր., Երևանի համալսարանի հրատ., էջ 477:

²Տե՛ս Եվրոպական դատարանի նշված վճռի 69 և 72 կետերը:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի¹ 23-րդ հոդվածի համաձայն՝ կատարողական թերթը կատարման ներկայացնելու ժամկետը մեկ տարի է՝ սկսած դատական ակտն ուժի մեջ մտնելու պահից: Հաշվի առնելով նաև, որ Հայաստանի Հանրապետությունից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակները տրվում են մինչև մեկ տարի ժամկետով, ստացվում է, որ ՀՀ օրենսդրությունը թույլ է տալիս, որ պետության դեմ կայացված դատական ակտի կատարումը ձգձգվի մինչև երկու տարի ժամկետով, ինչը որևէ կերպ հնարավոր չէ համարել ողջամիտ ժամկետ:

Հայաստանի Հանրապետության դրամական պարտավորությունների կատարման նման երկար ժամկետը չի համապատասխանում քաղաքացիական իրավահարաբերություններին պետության՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով մասնակցության սկզբունքին, քանի որ այն դեպքերում, երբ պարտապանը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է, պահանջատերը կարող է հարկադիր կատարման իրական գործընթաց նախաձեռնել տեսականորեն հենց դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրը և իր պահանջի բավարարում ստանալ շատ ավելի կարճ ժամկետում, քան դա նախատեսված է այն դեպքում, երբ պարտապանը Հայաստանի Հանրապետությունն է:

Ավելին, եթե պահանջատերն անտեղյակության կամ այլ պատճառով իր պահանջի կատարման ուղղությամբ համապատասխան հետևողականություն չցուցաբերի և կատարողական թերթն օրենքով սահմանված մեկամյա ժամկետում չներկայացնի հարկադիր կատարման կամ ներկայացնի այդ ժամկետի խախտմամբ, ապա, համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի, կատարողական վարույթ չի հարուցվի, ինչն էլ կբացառի պահանջատիրոջը փոխանցելի մուրհակի տրամադրումը և դրանով իսկ՝ դատական ակտով սահմանված պետության պարտականության կատարումը: Զբացառելով նման իրավիճակը՝ ՀՀ օրենսդրությունը, փաստորեն, թույլ է տալիս պետության կողմից իր դեմ կայացված դատական ակտի չկատարման հնարավորություն և նման հնարավորությունը ոչ իրավաչափ

¹ Ընդունվել է 05.05.1998թ., ՀՕ-221, սկզբնաղբյուրը՝ ՀՀՊՏ 1998.06.15/12(45):

չի համարում:

Հայաստանի Հանրապետության դեմ կայացված դատական ակտի կատարման նախաձեռնությունը պահանջատիրոջ վրա դնելու հաջորդ տրամաբանական բացասական հետևանքն այն կարգավորումն է, որով տրամադրվող փոխանցելի մուրհակների տուկոսադրույքը հաշվարկվում է մուրհակի տրամադրման օրվանից: Նման կարգավորմամբ ուղղակիորեն անտեսվում է այն իրողությունը, որ պետությունը՝ որպես պարտապան, դատական ակտի կատարման պարտականություն է կրում ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից սկսած ողջամիտ ժամկետում, հետևաբար և այդ պարտականությունը չկատարելու դեպքում կետանցի ժամկետի հաշվարկման հիմք պետք է համարվի այդ ողջամիտ ժամկետի ավարտի օրը¹:

Ավելին, որպես մուրհակի տուկոսադրույք ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված վերաֆինանսավորման տուկոսադրույքի մեծությունը սահմանելը Հայաստանի Հանրապետության պար-

¹ՀՀ դատական պրակտիկայում ընդունված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով նախատեսված տուկոսների հաշվարկի սկիզբ համարել դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը: Առաջին հայացքից նման մոտեցումը կարող է արդարացված թվալ, քանի որ դատական ակտը, օրինական ուժ ստանալով, ձեռք է բերում նաև կատարելիության հատկանիշ և դառնում է պարտապանի համար կատարման ենթակա ակտ: Սակայն այդպիսով ստացվում է, որ պարտապանը պարտավոր է կատարել դատական ակտի պահանջը հենց դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու օրը, այլապես հենց նույն օրվանից կհամարվի կետանցող: Նման մոտեցումը չի կարելի արդարացված համարել հատկապես այն դեպքերում, երբ դատական ակտն օրինական ուժ է ստանում հրապարակման պահից. պարտապանը պետք է որոշակի ողջամիտ ժամկետ ունենա դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու հետևանքով ծագած պարտավորության կատարման համար, ինչը բխում է նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352 հոդվածի 2-րդ մասից՝ համաձայն որի՝ *այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսվում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում*: Հարցը, թերևս, օրենսդրական կարգավորման կարիք ունի՝ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո պարտապանի կողմից այն կատարելու համար որոշակի ողջամիտ ժամկետ սահմանելու միջոցով, որից հետո միայն պարտավորության չկատարման դեպքում պարտապանը կհամարվի կետանցող:

տատերերին ուղղակիորեն տարբերակված դրության մեջ է դնում ֆիզիկական և իրավաբանական անձանց պարտատերերի նկատմամբ, քանի որ ֆիզիկական և իրավաբանական անձ պարտապանների կետանցի դեպքում հաշվարկվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները, այն է՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվող բանկային տոկոսի հաշվարկային դրույքը: Ընդ որում, այդ տարբերությունն ի վնաս Հայաստանի Հանրապետության պարտատերերի է, քանի որ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանվող վերաֆինանսավորման տոկոսադրույքը, որպես կանոն, էապես ավելի ցածր է բանկային տոկոսի հաշվարկային դրույքաչափից¹:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն պետության դեմ կայացված դատական ակտերի կատարման համատեքստում անդրադարձել է նաև կետանցի համար տոկոսների հաշվարկման խնդիրներին: Մասնավորապես, Նախարարների կոմիտեի կողմից 2007թ. հունիսի 21-22-ին կազմակերպված՝ «Ազգային դատարանների վճիռների չկատարումն անդամ-պետություններում. Եվրոպական դատարանի վճիռների կատարմանն ուղղված ընդհանուր միջոցներ» թեմայով կլոր սեղան-քննարկման եզրակացություններում քննարկման մասնակիցներն առաջարկում են դատական ակտի կատարման կետանցի համար սահմանել տոկոսների ավտոմատ հաշվարկ՝ ողջամիտ չափով²:

ՀՀ օրենսդրությամբ դրամական պարտավորության կատարման կետանցի համար նման ունիվերսալ տոկոսի հաշվարկը նախատեսված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածով, որը, քաղաքացիաիրավական հարաբերություններին պետության՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով մասնակցելու սկզբունքին համապատասխան, պետք է կիրառելի լինի նաև Հայաստանի Հանրապետության դրամական

¹Տվյալները վերցված են ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական՝ cba.am կայքից:

²Տե՛ս CM/Inf/DH(2007)33, 28.06.2007

[https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CM/Inf/DH\(2007\)33&Language=lanEnglish&Ver=original&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864](https://wcd.coe.int/ViewDoc.jsp?Ref=CM/Inf/DH(2007)33&Language=lanEnglish&Ver=original&Site=COE&BackColorInternet=DBDCF2&BackColorIntranet=FDC864&BackColorLogged=FDC864) – 29.10.2013

պարտավորությունների նկատմամբ: Այնինչ, ինչպես վերը նշվեց, ՀՀ օրենսդրությունը տվյալ հարցում ևս Հայաստանի Հանրապետության՝ որպես պարտապանի համար նախատեսում է ըստ էության արտոնյալ պայմաններ:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետության դրամական պարտավորությունների կատարման կարգը չի համապատասխանում սույն հոդվածում ձևակերպված սկզբունքային դրույթներին հետևյալ մի քանի առումներով.

1) պետության պարտավորության կատարման նախաձեռնությունը պարտապան Հայաստանի Հանրապետության փոխարեն դրվում է պահանջատիրոջ վրա

2) պահանջատիրոջից առանց անհրաժեշտության պահանջվում է սկսել հարկադիր կատարման ընթացակարգ

3) վերը նշված երկու իրողությունների հետևանքով մինչև փոխանցելի մուրհակ տրամադրելու օրը Հայաստանի Հանրապետության դրամական պարտավորության կատարման կետանցի համար պարտավորության գումարի նկատմամբ որևէ տոկոս չի հաշվարկվում

4) փոխանցելի մուրհակ տրամադրելու օրվանից մինչև դրամարման օրը պարտավորության գումարի նկատմամբ հաշվարկվում են պարտապանի համար արտոնյալ տոկոսներ

5) չի ապահովվում պարտավորության կատարման ողջամիտ ժամկետ:

Ավելին, նշվածի հիման վրա կարող ենք պնդում անել Հայաստանի Հանրապետության դրամական պարտավորությունների կատարման կարգի («Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների և ՀՀ կառավարության 2000թ. օգոստոսի 7-ի «Դատական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետակա բյուջեից բռնագանձման ենթակա գումարների դիմաց փոխանցելի մուրհակների տրամադրման կարգը հաստատելու մասին» N 436 որոշման) հակասահմանադրականության մասին՝ սեփականության իրավունքի խախտման, սեփականության տարբեր ձևերի անհավասար իրավական պաշտպանության, տարբեր սուբյեկտների սեփականության իրավունքի պաշտպանության նկատմամբ խտրական մոտեցման, արդար դատաքննության իրավունքի բաղադրիչ կազմող՝

օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կատարման իրավունքի խախտման առումներով:

Խոսելով առկա խնդիրների հնարավոր լուծման ուղղությունների մասին՝ պետք է նշել, որ դրանք արդեն իսկ ուրվագծվում են Հայաստանի Հանրապետության դրամական պարտավորությունների կատարման կարգի՝ վեր հանված թերություններից: Այսպես, վերը բերված առաջին չորս խնդիրների լուծման ուղղությամբ կարող ենք ձևակերպել հետևյալ առաջարկները.

1) սահմանել պետական իրավասու մարմնի պարտականությունը՝ սեփական նախաձեռնությամբ ex-officio կատարելու օրինական ուժի մեջ մտած դատական ակտը

2) բացառել կատարողական վարույթի հարուցումը որպես դատական ակտով Հայաստանի Հանրապետության վրա դրված դրամական պարտավորության կատարման պարտադիր նախապայման, ինչը, միաժամանակ, չպետք է բացառի հարկադիր կատարման հնարավորությունն այն դեպքում, երբ պետական իրավասու մարմինը չի կատարում դատական ակտը

3) Հայաստանի Հանրապետության դրամական պարտավորության կատարման կետանցի համար սահմանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411 հոդվածի կիրառելիությունը:

Ինչ վերաբերում է պարտավորության կատարման ողջամիտ ժամկետն ապահովելուն, ապա այս խնդիրն առավել համակողմանի լուծում է պահանջում՝ հաշվի առնելով բյուջետային պլանավորման առանձնահատկությունները: Ընդհանրապես, պետությունից բռնագանձման ենթակա գումարի դիմաց փոխանցելի մուրհակ տրամադրելու գաղափարը, ինչի հետ կապված է պարտավորության կատարման ժամկետը, հիմնված է այն տրամաբանության վրա, որ տվյալ պահին հնարավոր չէ պարտավորությունը կատարել՝ գումարը պահանջատիրոջը վճարելով, քանի որ պետական բյուջեի ծախսային մասում նման հատկացում տրամաբանորեն չէր կարող նախատեսվել մինչև համապատասխան դատական ակտի կայացումն ու օրինական ուժի մեջ մտնելը: Այդ իսկ պատճառով տրամադրվում են փոխանցելի մուրհակներ, որոնց մարումը նախատեսվում է հաջորդ բյուջետային տարում՝ տվյալ բյուջետային տարվա ընթացքում տրամադրված մուրհակների անվանական արժեքների և հաշվարկված տոկոսագումարի հանրագումարն ա-

ռանձին տողով նախատեսելով հաջորդ տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ծախսային մասում:

Սակայն դատական ակտով նախատեսված դրամական պարտավորության կատարումը պետության կողմից հենց նույն բյուջետային տարում ապահովելու խնդիրը հեշտությամբ լուծելի է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաշվին առանձնացված ֆոնդ ստեղծելու միջոցով, որը նախատեսված կլինի բացառապես դատական ակտերով նախատեսված դրամական պարտավորությունների կատարման նպատակի համար:

Այս գաղափարը, մասնավորապես, առաջ է քաշվել Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից 2006թ. հոկտեմբերի 30-31-ը կազմակերպված «Պետության և պետական կազմակերպությունների դեմ կայացված դատական ակտերի չկատարումը Ռուսաստանի Դաշնությունում. առկա խնդիրները և անհրաժեշտ լուծումները» թեմայով կլոր սեղան-քննարկման եզրակացություններում¹, Եւ Նախարարների կոմիտեի կողմից 2007թ. հունիսի 21-22-ին կազմակերպված «Ազգային դատարանների վճիռների չկատարումն անդամ-պետություններում. Եվրոպական դատարանի վճիռների կատարմանն ուղղված ընդհանուր միջոցներ» թեմայով կլոր սեղան-քննարկման եզրակացություններում և Եւ Նախարարների կոմիտեի «Ազգային դատական ակտերի չկատարումը Ռուսաստանում. Եվրոպական դատարանի վճիռների կատարմանն ուղղված ընդհանուր միջոցներ» թեմայով Հուլագրում²: Այսպես, Հուլագրի 37-38-րդ կետերում առաջարկվում է հանրային իշխանությունների՝ դատական ակտերով նախատեսված վճարային պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով ստեղծել հատուկ ֆոնդ, ինչը թույլ կտա սեղմ ժամկետում կատարել դատական ակտով սահմանված վճարումը՝ կետանցի համար նախատեսված տոկոսների հետ միասին: Պետական մարմիններն այդպիսով հնարավորություն կունենան կատարելու իրենց պարտավորությունն առանց ձգձգումների: Ըստ Հուլագրում ներկայացված առաջարկի՝ նման կառուցակարգի հիմնական առավելություն-

¹Տե՛ս CM/Inf/DH(2006)45, 01.12.2006, <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=1069031> – 03.11.2013:

²Վերջին երկու փաստաթղթերի հղումները տե՛ս վերը:

նը կլինի կատարման ընթացակարգի բեռը պահանջատիրոջից պետական մարմնի վրա տեղափոխելը և պահանջատիրոջը լրացուցիչ դատական ընթացակարգերից ազատելը:

Դատական ակտերով նախատեսված՝ պետության վճարային պարտավորությունների կատարումը նման առանձնացված ֆոնդի միջոցով կատարման կառուցակարգի ներդրման դեպքում կարող է ծագել հետևյալ հարցը. ինչպե՞ս պետք է կարգավորվի այն իրավիճակը, երբ այդ ֆոնդի միջոցները կսպառվեն, և անհրաժեշտ կլինի նոր վճարում կատարել հերթական դատական ակտի հիման վրա: Այս կապակցությամբ նախ պետք է նշել, որ խնդիրն առավելապես բյուջետային ճշգրիտ պլանավորման տիրույթում է՝ հիմնված նախորդ տարիների վիճակագրական տվյալների, և որոշ առումով նաև՝ ընթացող դատական գործերով ներկայացված պահանջների չափերի մասին տեղեկությունների վրա: Սակայն նույնիսկ նման իրավիճակ առաջանալու դեպքում պետությունը կարող է դատական ակտը կատարել կառավարության պահուստային ֆոնդի հաշվին, որը, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն, տվյալ տարվա պետական բյուջեում նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման, պետական բյուջեում չկանխատեսված ելքերի, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ելքերի ֆինանսավորման աղբյուրն է, և որից հատկացումները կատարվում են կառավարության որոշումների հիման վրա:

Առաջարկվող կառուցակարգի ներդրման դեպքում հնարավոր կլինի սահմանել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352 հոդվածի 2-րդ մասից բխող որոշակի ողջամիտ՝ սկսած դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից, որի ընթացքում պետական իրավասու մարմինը պարտավոր կլինի կատարելու վճարային պարտավորությունը: Որպես այդպիսի ժամկետ ողջամիտ է թվում մեկամսյա ժամկետը, որը բավարար է պետական իրավասու մարմնի կողմից դատական ակտի մասին տեղեկանալու, անհրաժեշտ կազմակերպչական գործողություններ կատարելու, ինչպես նաև հարկ եղած դեպքում կառավարության պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին կառավարության որոշում ընդունելու և այն կատարելու համար: Եվ միայն այդ մեկամսյա ժամկետի ավարտից հետո, պարտավորությունը չկատարելու դեպքում, հաշվարկի ենթակա կլինեն կետանցի համար սահմանված տոկոսները:

Որպես առաջարկվող կառուցակարգի լուրջ առավելություն կարող ենք նշել նաև Հայաստանի Հանրապետությունից գումարի բռնագանձման մասին դատական ակտի հարկադիր կատարման իրական հնարավորությունը: Ներկայումս նման դատական ակտի հարկադիր կատարում փաստացի չի նախատեսվում, քանի որ հարկադիր կատարողի գործառույթները սահմանափակվում են կատարողական վարույթ հարուցելու մասին որոշում կայացնելով, այդ որոշումը և կատարողական թերթը ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելով և վերջինիցս ստացված փոխանցելի մուրհակը պահանջատիրոջը տրամադրելով: Այսինքն, Հայաստանի Հանրապետությունից գումարի բռնագանձման մասին դատական ակտերի հարկադիր կատարման միջոցներ ՀՀ օրենսդրությամբ պարզապես նախատեսված չեն: Այնինչ այդ նպատակով հատուկ առանձնացված ֆոնդ ստեղծելու դեպքում հարկադիր կատարողին պետք է վերապահել սահմանված ողջամիտ ժամկետում դատական ակտը չկատարվելու դեպքում պահանջատիրոջ դիմումի հիման վրա կատարողական վարույթ հարուցելու և այդ ֆոնդի միջոցների վրա բռնագանձում տարածելու լիազորություն:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ առաջարկվող կառուցակարգը լիարժեք հնարավորություն կտա ապահովելու դրամական միջոցների բռնագանձման մասին դատական ակտերով Հայաստանի Հանրապետության պարտատերերի իրավունքները՝ դատական ակտի կատարման ողջամիտ ժամկետի ապահովման և պարտատերերի սեփականության իրավունքի պաշտպանության առումներով:

Vahagn Dallakyan

PhD student of the Chair of Civil procedure, YSU

THE ISSUES OF THE EXECUTION OF MONETARY JUDGMENTS AGAINST THE REPUBLIC OF ARMENIA

The public-legal status of state should not affect the volume and conditions of satisfaction of its creditors' claims based on judicial acts, otherwise the rights of creditors to protection of property and to a fair trial would be violated. The Armenian legal regulation of these issues does not meet these criteria, including up to unconstitutional provisions.

Ваагн Далакян
Аспирант кафедры Гражданского процесса ЕГУ

ПРОБЛЕМЫ ВЗЫСКАНИЯ ДЕНЕЖНЫХ СРЕДСТВ С РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Анализируются особенности исполнения судебных актов о взыскании денежных средств с государства. Публично-правовой статус государства не должен влиять на объем и условия удовлетворения денежных требований кредиторов, иначе будут нарушены права собственности и справедливого судопроизводства кредиторов. Правовое регулирование данных вопросов в Республике Армения не соответствует этим критериям, включая вплоть до неконституционные положения.

Բանալի բառեր՝ կատարողական վարույթ, բռնագանձում, պետության
դրամական պարտավորություններ

Keywords: enforcement of judgments, debt collection, monetary obligations
of state

Ключевые слова: исполнительное производство, взыскание, денежные
обязательства государства

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՈՐ ԲԵԿԱՆՆԵԼՈՒ ԵՎ
ՓՈՓՈԽՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՅԱՑՎՈՂ ՈՐՈՇՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ
ԴՐԱ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի² 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը մասնակիորեն բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Վերը նշված նորմից հետևում է, որ վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանը, որոշակի պայմանների առկայության դեպքում, իրավունք ունի բեկանել և առանց գործը նոր քննության ուղարկելու փոփոխել առաջին ատյանի դատարանի վճիռը:

Անդրադառնալով վերը նշված լիազորության կիրառման արդյունքում կայացվող որոշման իրավական բնույթին՝ քննարկենք այն հարցը, թե արդյո՞ք այդ որոշումը հանդիսանում է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքն առանձնացնում է վերաքննիչ դատարանի՝ գործն ըստ էության լուծող և միջանկյալ դատական ակտերը: Նման տարանջատման հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ առաջին ատյանի դատարա-

¹ ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ս.Գ. Մեղրյան:

² Ընդունվել է 17.06.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ 1998/20(53), 09.09.1998թ.: Այսուհետ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք:

նի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացված վերաքննիչ դատարանի որոշումները գործն ըստ էության լուծող դատական ակտեր են, իսկ միջանկյալ դատական ակտերի վերաքննության արդյունքում կայացված որոշումները՝ միջանկյալ դատական ակտեր¹:

Սակայն օրենսդրի այս մոտեցումը քննադատության է ենթարկվել մի շարք հեղինակների կողմից, ովքեր վերհանել են գործն ըստ էության լուծող դատական ակտի էությունը, հատկանիշները և այլ դատական ակտերից դրանց տարանջատման և տարբերակման հիմքերը:

Այս հարցի կապակցությամբ Ս. Գ. Մեղրյանը նշում է, որ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող դատական ակտը, որով ըստ էության լուծվում է գործը, դատարանի վճիռն է²: Գործն ըստ էության լուծող դատական ակտերից պետք է տարբերել վերադաս դատական ատյանների այն դատական ակտերը, որոնք դադարեցնում են գործի հետագա ընթացքը, եզրափակում են տվյալ գործով դատական գործունեությունը: Այդպիսի ակտերի թվին են պատկանում նաև վերաքննիչ դատարանի այն որոշումները, որոնցով ընդհանուր իրավասության դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտը մասամբ բեկանվում և փոփոխվում է՝ առանց գործը նոր քննության ուղարկելու:

Մասնագիտական գրականության մեջ դատավարագետ-հեղինակների կողմից առանձնացվել են վճռի հետևյալ հատկանիշները՝

- վճիռը գործով հաստատված հանգամանքների և հավաքված ապացույցների հիման վրա կոնկրետացնում ու որոշակիացնում է կողմերի իրավունքները և պարտականությունները և ապահովում է խախտված կամ վիճարկվող իրավունքների պաշտպա-

¹Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջեր 430-431:

² Տե՛ս Մեղրյան Ս.Գ., Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 10:

նությունը¹

- վճիռը գործն ըստ էության լուծելու միջոցով ապահովում է կողմերի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի, ինչպես նաև պետության շահերի պաշտպանությունը²

- վճիռը ներգործում է նյութական իրավահարաբերությունների, նյութական իրավունքի սուբյեկտների փոխհարաբերությունների վրա³ և այլն:

Ս. Գ. Մեղրյանն առանձնացնում է գործն ըստ էության լուծող դատական ակտի հետևյալ հատկանիշները՝

- դրանով հաստատվում են վիճելի իրավունքի, վիճելի պարտականության, վիճելի իրավահարաբերության ամկայությունը կամ բացակայությունը, ինչի հետևանքով այդ իրավահարաբերությունը վիճելիից դառնում է անվիճելի, իսկ դատական ակտով հաստատված սուբյեկտիվ պարտականությունները՝ ենթակա հարկադիր կատարման⁴

- դրանով դադարում է իրավունքի մասին կողմերի միջև ամկա վեճը, վերացվում է կողմերից մեկի թույլ տված խախտումը, ամրապնդվում է իրավակարգը և օրինականությունը քաղաքացիական իրավահարաբերություններում, քաղաքացիական շրջանառության մեջ⁵

- այն կայացվում է գործի ըստ էության քննության (ապացուցման առարկայի որոշում, ապացույցների հետազոտում և այլն) արդյունքում⁶:

Ս. Կ. Ջալալովան նշում է, որ դատարանի վճիռը՝ որպես վեճն ըստ էության լուծելու նպատակով սկսված դատական գործընթացն ավարտող դատական ակտ, կարող է կայացվել միայն ա-

¹ Տե՛ս Գурвич М.А. Лекции по советскому гражданскому процессу. - М., 1950, էջեր 153-154:

² Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն - 2-րդ հրատ., - Եր., ԵՊՀ հրատ., 2003, էջ 426:

³ Տե՛ս Գурвич М.А. Судебное решение (теоретические проблемы). - М., 1976, էջ 14:

⁴ Տե՛ս Մեղրյան Ս.Գ., Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 10:

⁵ Տե՛ս Մեղրյան Ս.Գ., նշված աշխատ., էջ 14:

⁶ Տե՛ս Մեղրյան Ս.Գ., նշված աշխատ., էջ 26:

առաջին աստյանի դատարանի կողմից¹:

Լ. Ա. Տերեխովան նշում է, որ դատական պաշտպանության մեխանիզմը պետք է իր մեջ ներառի հետևյալ տարրերը՝

- դատարան դիմելու հնարավորություն և առաջին աստյանի դատարանի կողմից գործի քննություն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացմամբ

- դատական սխալի վերացում վերադաս դատարանի կողմից

- դատական ակտի կատարում²:

Հեղինակը մատնանշում է հետևյալ դատական ակտերը, որոնցով քաղաքացիական գործը լուծվում է ըստ էության՝

- առաջին աստյանի դատարանի վճիռը

- դատական կարգադրությունը

- կողմերի հաշտության համաձայնությունը հաստատելու և գործի վարույթը կարճելու մասին որոշումը

- հայցից հրաժարվելու հետևանքով գործի վարույթը կարճելու մասին որոշումը³:

Ըստ Գ. Ա. Ժիլինի՝ դատարանի վճիռը հանդիսանում է կարևորագույն իրավակիրառ ակտ, որը կայացվում է պետության անունից և հանդիսանում է նյութական և դատավարական իրավունքի

¹ St' u Зайганова С.К. Судебные акты в гражданском и арбитражном процессе: теоретические и прикладные проблемы. Автореф. дисс... д.ю.н., - Екатеринбург, 2008, <http://lawtheses.com/sudebnye-akty-v-grazhdanskom-i-arbitrazhnom-protssesse-teoreticheskie-i-prikladnye-problemy>:

² St' u Терехова Л.А. Система пересмотра судебных актов в механизме судебной защиты. - М.: Волтерс Клувер, 2007, էջ 3:

³ St' u Терехова Л.А. Постановление суда первой инстанции, разрешающее дело по существу // Вестник Омского университета. - Омск: Изд-во ОмГУ, 2005, № 2 (3), [http://www.omlaw.ru:81/metod/vestnic/2005%202\(3\)/%d0%9b.%d0%90.%20%d0%a2%d0%b5%d1%80%d0%b5%d1%85%d0%be%d0%b2%d0%b0.%20%d0%9f%d0%be%d1%81%d1%82%d0%b0%d0%bd%d0%be%d0%b2%d0%bb%d0%b5%d0%bd%d0%b8%d0%b5%20%d1%81%d1%83%d0%b4%d0%b0%20%d0%bf%d0%b5%d1%80%d0%b2%d0%be%d0%b9%20%d0%b8%d0%bd%d1%81%d1%82%d0%b0%d0%bd%d1%86%d0%b8%d0%b8,%20%d1%80%d0%b0%d0%b7%d1%80%d0%b5%d1%88%d0%b0%d1%8e%d1%89%d0%b8%d0%b5%20%d0%b4%d0%b5%d0%bb%d0%be%20%d0%bf%d0%be%20%d1%81%d1%83%d1%89%d0%b5%d1%81%d1%82%d0%b2%d1%83.doc](http://www.omlaw.ru:81/metod/vestnic/2005%202(3)/%d0%9b.%d0%90.%20%d0%a2%d0%b5%d1%80%d0%b5%d1%85%d0%be%d0%b2%d0%b0.%20%d0%9f%d0%be%d1%81%d1%82%d0%b0%d0%bd%d0%be%d0%b2%d0%bb%d0%b5%d0%bd%d0%b8%d0%b5%20%d1%81%d1%83%d0%b4%d0%b0%20%d0%bf%d0%b5%d1%80%d0%b2%d0%be%d0%b9%20%d0%b8%d0%bd%d1%81%d1%82%d0%b0%d0%bd%d1%86%d0%b8%d0%b8,%20%d1%80%d0%b0%d0%b7%d1%80%d0%b5%d1%88%d0%b0%d1%8e%d1%89%d0%b8%d0%b5%20%d0%b4%d0%b5%d0%bb%d0%be%20%d0%bf%d0%be%20%d1%81%d1%83%d1%89%d0%b5%d1%81%d1%82%d0%b2%d1%83.doc):

նորմերի կիրառման վերջնական ակտ, որով ըստ էության լուծվում է գործը¹:

Ե. Վ. Վասկովսկին, հիմնավորելով եռաստիձան դատական համակարգի անհրաժեշտությունը, նշում էր, որ դատարանները չեն կարող ապահովագրված լինել սխալներից և բացթողումներից: Նման սխալների և բացթողումների դեմ պայքարի եղանակներից մեկը գործի կրկնակի վերանայման հնարավորությունն է, իսկ դատական պրակտիկայի միասնականությունն ապահովելու ֆունկցիան դրված է գերագույն դատարանի վրա²:

Այսպիսով, հեղինակն առաջարկում էր օպտիմալ դատական համակարգ՝ բաղկացած առաջին ատյանի դատարանից, շրջանային վերաքննիչ դատարանից (որը գործն ըստ էության կրկնակի քննում է լրիվ վերաքննության կանոններով) և հատուկ գերագույն դատարանից, որի ֆունկցիան օրենքի միատեսակ կիրառումն ապահովելն է: Գերագույն դատարանը չի կարող ստանձնել գործն ըստ էության լուծող դատարանի դերը³:

Վերլուծելով հեղինակի գաղափարները՝ կարող ենք դուրս բերել հեղինակի այն տրամաբանությունը, որ միայն գործն ըստ էության քննող դատարանը (ՌԴ-ում դա ոչ միայն առաջին ատյանի, այլև վերաքննիչ դատարանն է) կարող է կայացնել գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Իր ատենախոսության մեջ Գ. Մ. Մինասյանը նշում է, որ դատարանի վճիռն այն արդարադատության ակտն է, որը նյութաիրավական վեճը լուծում է ըստ էության: Այն առավել վառ է արտահայտում պետության իշխանական կամքը և յուրահատուկ, գլխավոր տեղ է զբաղեցնում այլ դատական ակտերի շարքում: Այլ դատական ակտերի միջոցով դատարանի վճռի փոփոխումը (տրանսֆորմացիան) նվազեցնում է դատարանի վճռի դերը և վճիռը դարձնում

¹ Ст'ю Жилин Г.А. Суд первой инстанции в гражданском процессе. - М., 2001, էջեր 104 - 105:

² Ст'ю Васильковский Е.В. Учебник гражданского процесса. Под ред. В.А. Томсинова. - М., 2003, էջեր 34 - 35:

³ Ст'ю Васильковский Е.В. Учебник гражданского процесса. Под ред. В.А. Томсинова. - М., 2003, էջեր 35 - 36:

է բոլորովին այլ դեր, նշանակություն և բովանդակություն ունեցող դատական ակտի (այստեղ հավանաբար հեղինակը նկատի է ունեցել վերադաս դատարանի այն դատական ակտը, որը փոփոխում է դատարանի վճիռը) բաղկացուցիչ մաս, հավելում¹:

Միննույն ժամանակ, Վ. Վ. Հովհաննիսյանը իր աշխատություններից մեկում նշում է, որ վիճելի նյութական իրավահարաբերությունը կարգավորող վերաքննիչ դատարանի որոշումները պետք է դիտարկել որպես գործն ըստ էության լուծող դատական ակտեր²: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված լիազորությունը կիրառելու դեպքում վերաքննիչ դատարանը առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքների հիման վրա կիրառում է նյութական և դատավարական իրավունքի նորմերը, լուծում է գործը և կարգավորում քննության առարկա նյութական իրավահարաբերությունը³:

Վերը շարադրված կարծիքները ամփոփելով՝ կարծում ենք, որ դատական ակտի՝ գործն ըստ էության լուծող կամ չլուծող լինելու հարցը պարզելու համար անհրաժեշտ է պատասխանել հետևյալ երկու հարցադրումներին.

1. ինչպիսի՞ գործընթացի արդյունքում է տվյալ դատական ակտը կայացվում

¹ Ст'у Минасян Г.М. Решения и определения судов первой инстанции общей юрисдикции. Автореф. дисс... к.ю.н., - Москва, 2010, <http://www.dissercat.com/content/resheniya-i-opredeleniya-sudov-pervoi-instantsii-obshc-hei-yurisdiktii-0>:

² Ст'у Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 451:

³ Ст'у Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 452:

2. ինչպիսի՞ հարցեր է տվյալ դատական ակտը լուծում¹:

Վերը նշված հարցերին պատասխանելով՝ կարող ենք առանձնացնել գործն ըստ էության լուծող դատական ակտերի երկու կարևորագույն հատկանիշները.

1. այն կայացվում է գործի ըստ էության քննության (ապացույցների հետազոտում և գնահատում, դրա հիման վրա փաստական հանգամանքների հաստատում, հաստատված փաստերի նկատմամբ կիրառելի իրավանորմերի ընտրություն և այլն) արդյունքում

2. դրանով կոնկրետացվում են կողմերի իրավունքները և պարտականությունները, լուծվում է (դադարում է) իրավունքի մասին կողմերի միջև առկա վեճը:

Դատարանի վճիռը բեկանող և փոփոխող վերաքննիչ դատարանի որոշումը չի համապատասխանում վերը նշված հատկանիշներից առաջինին (վերաքննիչ դատարանում գործի ըստ էության քննություն տեղի չի ունենում), սակայն այն համապատասխանում է երկրորդ հատկանիշին, քանի որ՝

- այդ որոշմամբ կոնկրետացվում և որոշակիացվում են կողմերի իրավունքները և պարտականությունները

- այդ որոշումն ուղղակիորեն ներգործում է նյութական հարաբերությունների վրա և սահմանում է նյութական իրավունքի սուբյեկտների փոխհարաբերությունները

- այդ որոշումը, բացի դատարանի վճռի օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելուց, լուծում է կողմերի միջև առկա

¹ Այստեղ հարկ ենք համարում նշել, որ ՌԴ սահմանադրական դատարանն իր 2001թ. հունվարի 25-ին կայացրած N 1-Պ որոշմամբ տարանջատել է, մի կողմից՝ գործի քննության, ապացույցների հետազոտման հետ կապված դատավորի գործունեությունը, և մյուս կողմից՝ այդ գործունեության անմիջական արդյունքը: ՌԴ սահմանադրական դատարանը պարզաբանել է, որ արդարադատության իրականացումն առաջին հերթին ենթադրում է իրավական վեճերի լուծում: Իսկ իրավական վեճերի լուծումն արտահայտվում է այնպիսի ակտերում, որոնցով որոշվում են կողմերի միջև առկա իրավահարաբերությունները, վերանում է իրավական վեճը, ապահովվում է իրավունքների և օրինական շահերի անարգել իրականացման հնարավորությունը, խախտված կամ վիճարկվող իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Գործն ըստ էության լուծող դատական ակտերով դատարանը սահմանում է կողմերի իրական նյութաիրավական կարգավիճակը:

իրավական վեճը, ինչի հետևանքով այդ վեճը դադարում է

- այդ որոշմամբ պատասխան է տրվում հետևյալ հարցերին՝

1. արդյո՞ք պատասխանողը խախտել է հայցվորի իրավունքները, և

2. եթե այո, ապա արդյո՞ք հայցվորի խախտված իրավունքները կարող են վերականգնվել իր կողմից մատնանշված եղանակով (արդյո՞ք կարող է բավարարվել հայցվորի պահանջը)¹:

Վերաքննիչ դատարանի կողմից վճռի բեկանման և փոփոխման դեպքում հաստատվում է գործին մասնակցող անձանց իրավունքների և պարտականությունների մեկ ամբողջություն, սակայն ոչ այն ծավալով և շրջանակներում, որը հաստատվել էր առաջին ատյանի դատարանի վճռով: Կարելի է ասել, որ այս դեպքում գործ ունենք արդեն վերաքննիչ դատարանի որոշմամբ սահմանված նյութական իրավահարաբերությունների, գործին մասնակցող անձանց նյութական իրավունքների և պարտականությունների հետ²:

Միևնույն ժամանակ պետք է հաշվի առնել, որ վերադաս դատական ատյանները գործի ըստ էության քննություն չեն իրականացնում³: Բողոքների քննության ընթացքում ո՛չ վերաքննիչ և ո՛չ էլ վճռաբեկ դատարանը ապացուցման առարկա չեն որոշում, ապացույցներ չեն հետազոտում, և հետևաբար նրանց կայացրած

¹ Այս հարցերի պատասխանները որպես կանոն տրվում են դատարանի վճռով: Սակայն դատարանի վճռի բեկանման և փոփոխման դեպքում վերը նշված հարցերի պատասխանները տրվում են ոչ թե (ոչ միայն) առաջին ատյանի դատարանի վճռով, այլ (այլև)՝ վերաքննիչ դատարանի համապատասխան որոշմամբ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ կատարողական թերթը տալիս է դատական ակտն ընդունած առաջին ատյանի դատարանը: Սակայն վճռի բեկանման և փոփոխման դեպքում կատարողական թերթը գործնականում տրվում է ոչ միայն դատարանի վճռի, այլև վերաքննիչ դատարանի որոշման եզրափակիչ մասի հիման վրա: Վճռի ամբողջական բեկանման և փոփոխման դեպքում կատարողական թերթը կարող է որևէ ընդհանրություն չունենալ վճռի եզրափակիչ մասի հետ:

² Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ դատարանի լիազորությունների իրավաբանական բնույթի հիմնախնդիրները, «Օրենք և իրականություն», Եր., հունվար 2012, # 1, էջ 8:

³ Տե՛ս Մեղոյան Ս.Գ., Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջեր 24-25:

ակտերը գործն ըստ էության լուծող դատական ակտեր համարելը ճիշտ չի թվում¹:

Այսպիսով, վերաքննիչ դատարանի այդ որոշումները գործն ըստ էության լուծող դատական ակտեր չեն, դրանք այդպիսի ակտի վերանայման արդյունքում կայացվող որոշումներ են, որոնցով լուծվում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կայացրած վճռի հետագա ճակատագիրը²: Վերաքննիչ և վճռաբեկ դատարանների որոշումների գործն ըստ էության լուծող բնույթի բացակայության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ անկախ վերադաս դատական ատյանների որոշումների բովանդակությունից, դատական ակտի հարկադիր կատարման համար կատարողական թերթը տալիս է վճիռը՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը կայացրած դատարանը³:

Այսպիսով, ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանող և փոփոխող վերաքննիչ դատարանի որոշումը գործն ըստ էության լուծող դատական ակտ չէ, սակայն օժտված է նման ակտերին բնորոշ որոշակի հատկանիշներով: Թե՛ վճիռը, թե՛ վճիռը բեկանող և փոփոխող վերաքննիչ դատարանի որոշումը լուծում են կողմերի միջև առկա իրավունքի մասին վեճը: Իզուր չէ, որ դատավարագետ հետազոտողներից մեկն առաջարկել է առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանող և գործին նոր լուծում տվող վերադաս դատական ատյանների բոլոր դատական ակտերը շարադրել այնպես, որ դրանք բավարարեն առաջին ատյանի դատարանի վճռին ներկայացվող պահանջներին⁴: Նման ակտերը գրականության մեջ անվանվել են նաև գործին մասնակցող անձանց իրավունքներին անմիջականորեն ազդող կամ ներգործող դատական

¹ Տե՛ս Մեղրյան Ս.Գ., նշված աշխատ., էջ 26:

² Տե՛ս Մեղրյան Ս.Գ., նշված աշխատ., էջեր 23-24:

³ Տե՛ս Մեղրյան Ս.Գ., նշված աշխատ., էջ 25:

⁴ Տե՛ս Минасян Г.М. Решения и определения судов первой инстанции общей юрисдикции. Автореф. дисс... к.ю.н., - Москва, 2010, <http://www.disscat.com/content/resheniya-i-opredeleniya-sudov-pervoi-instantsii-obshch-hei-yurisdiktii-0>:

ակտեր¹:

Այսպիսով, առաջին ատյանի դատարանը գործի քննության ընթացքում պարզում է կիրառման ենթակա օրենսդրությունը, քննարկում է ապացուցում պահանջող փաստերի շրջանակը, կողմերի միջև բաշխում է ապացուցման պարտականությունը, դատաքննության ընթացքում լսում է գործին մասնակցող անձանց դիրքորոշումները, անմիջականորեն հետազոտում է ապացույցները, վճիռ կայացնելիս որոշում է տվյալ գործով կիրառման ենթակա օրենքները և այլ իրավական ակտերը, գնահատում է ապացույցները, վճռով սահմանում է, թե գործի համար նշանակություն ունեցող ո՞ր հանգամանքներն են պարզվել և որո՞նք չեն պարզվել, և արդյունքում որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը: Այսինքն, առաջին ատյանի դատարանն իրականացնում է գործի ըստ էության քննություն և կայացնում է գործն ըստ էության լուծող դատական ակտ:

Դատարանի վճռի դեմ վերաքննիչ բողոք բերելու դեպքում վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է միայն վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Վերաքննիչ դատարանը ոչ թե ստուգում է դատարանի վճռի օրինականությունն ու հիմնավորվածությունն ընդհանրապես, այլ անդրադառնում է միայն այն խախտումներին, որոնք վկայակոչված են բողոքում: Վերաքննիչ դատարանը որպես կանոն իրավունք չունի նոր ապացույց ընդունելու կամ փոփոխելու վճռով հաստատած փաստերի շրջանակը: Դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ դատարանը, առանց գործի ըստ էության քննություն իրականացնելու, կայացնում է դատական ակտ, որն իր մեջ պարունակում է գործն ըստ էության լուծող դատական ակտի հատկանիշներ: Այդ դեպքում կայացված դատական ակտը ոչ միայն եզրահանգում է պարունակում վերանայվող դատական ակտի օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ, այլև

¹ Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ իրատ., 2012, էջեր 445-446:

միաժամանակ հաստատում է նյութական իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը¹:

Այժմ անդրադառնանք դատարանի վճիռը բեկանող և փոփոխող վերաքննիչ դատարանի որոշման բողոքարկման հետ կապված հիմնախնդրին: Ի տարբերություն առաջին ատյանի դատարանի վճռի, վերաքննիչ դատարանի՝ նմանատիպ որոշման բողոքարկման արդյունավետ կառուցակարգ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում առկա չէ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հիմքերը: Այս հիմքերի բացակայության դեպքում վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքն ըստ էության քննության չի ընդունում և վերադարձնում է այն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հիմքերի տեսանկյունից տարբերակված մոտեցում չի սահմանում վերաքննիչ դատարանի այն որոշումների համար, որոնցով բեկանվել և փոփոխվել է դատարանի վճիռը (և գործն առաջին ատյանի դատարանի վճռից ամբողջությամբ տարբերվող նոր լուծում է ստացել):

Բոլոր այն դեպքերում, երբ վերաքննիչ դատարանը կայացրել է առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանող և փոփոխող և գործին նոր լուծում տվող որոշում, այդ որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը վերադարձվում է, եթե բացակայում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերը²:

Այսինքն, վերաքննիչ դատարանի կողմից կայացված և գործին

¹ Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 457:

² Հարկ է նշել, որ վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալը (որքան էլ որ այն կոպիտ լինի), առանձին վերցրած, բավարար հիմք չէ վերաքննիչ դատարանի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար:

նոր, առաջին ատյանի դատարանից տարբերվող լուծում տվող դատական ակտերի բողոքարկումը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով երաշխավորված է: Գրականության մեջ այս խնդիրն արծարծվել է, և հայտնվել է տեսակետ, որ տվյալ ակտերի բողոքարկման սահմանների նեղացումը մինչև օրենքով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու համար նախատեսված շրջանակները անընդունելի է¹:

Այժմ քննարկենք նման իրավակարգավորման իրավաչափությունը՝ պետության կողմից յուրաքանչյուր անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքներն ապահովելու պարտականության համատեքստում:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Արդար դատաքննության իրավունքը սահմանված է նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի² 6-րդ հոդվածում, որում սահմանված է, որ յուրաքանչյուր ոք, ում ներկայացվել է քրեական գործով մեղադրանք, կամ ում քաղաքացիական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ վեճ է ընթանում, ունի օրենքի հիման վրա ստեղծված, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի արդարացի և հրապարակային քննության իրավունք: Կոնվենցիայի 6-րդ

¹ Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 446:

² Ընդունվել է 04.11.1950թ., ուժի մեջ է մտել 03.09.1953թ.: Հայաստանի Հանրապետության համար «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան ուժի մեջ է մտել 26.04.2002թ.: Այսուհետ՝ նաև Կոնվենցիա:

հողվածը հավասարապես վերաբերում է թե՛ քաղաքացիական, թե՛ քրեական իրավունքի ոլորտին:

ՀՀ Սահմանադրության 19-րդ և Կոնվենցիայի 6-րդ հոդվածների բովանդակային մեկնաբանման տեսանկյունից բավականին հետաքրքրական է այն հարցը, թե արդյո՞ք արդար դատաքննության իրավունքն իր մեջ ներառում է քաղաքացիական գործով կայացված դատական ակտը (որով որոշվում են կողմերի իրավունքները և պարտականությունները) վերադաս դատական ատյան բողոքարկելու իրավունքը: Եվ ընդհանրապես, արդյո՞ք յուրաքանչյուր ոք ունի քաղաքացիական գործով իր դեմ կայացված դատական ակտը (որով որոշվում են իր քաղաքացիական իրավունքները և պարտականությունները) առնվազն մեկ աստիճան բողոքարկելու իրավունք:

Այս կապակցությամբ նախ և առաջ անդրադառնանք Կոնվենցիային և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմանը:

Ո՛չ քաղաքացիաիրավական, ո՛չ էլ քրեաիրավական ոլորտում Կոնվենցիան պետություններին չի պարտադրում ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ: Այս հարցը թողնված է պետությունների բացառիկ իրավասությանը: Սակայն միևնույն ժամանակ Կոնվենցիան պարտավորեցնում է, որ նման դատական ատյաններ ունեցող պետությունները հետևեն, որ դատավարության մասնակիցները այդ դատական ատյաններում նույնպես օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված բոլոր հիմնարար երաշխիքներից: Վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններում այս դրույթի իրականացման կոնկրետ մեխանիզմը կախվածության մեջ է տվյալ դատարանում իրականացվող դատավարության առանձնահատկություններից¹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի վերաբերյալ իր մեկնաբանություններում դատական ակտի

¹Այս դիրքորոշումն արտահայտել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ Սիալկովսկան ընդդեմ Լեհաստանի (Sialkowska v. Poland) գործով 2007թ. մարտի 22-ին կայացված վճռով: Հետագայում այն իր արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրական դատարանի 08.10.2008թ. թիվ ՍԴՈ-765 որոշման մեջ:

բողոքարկման իրավունքը չի դիտել որպես արդար դատաքննության իրավունքի տարր: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պետությունների համար պարտադիր չի համարում անգամ վերաքննիչ դատարանների ստեղծումը և վերաքննության ընթացակարգերի սահմանումը¹:

Կոնվենցիան պետություններին չի պարտադրում ունենալ անգամ երկաստիճան դատական համակարգ, ստեղծել վերաքննիչ և/կամ վճռաբեկ դատարաններ: Սակայն քրեաիրավական ոլորտում երկրորդ դատական ատյանի կողմից լավելու իրավունքը երաշխավորված է Կոնվենցիայի 7-րդ արձանագրության 2-րդ հոդվածի 1-ին կետով²:

Քրեական գործերով կայացված դատական ակտի բողոքարկման իրավունքը սահմանված է նաև մի շարք այլ միջազգային-իրավական փաստաթղթերով («Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 5-րդ կետ, Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2 «հ» կետ):

Միևնույն ժամանակ, որոշ տիպի գործերով բարձրացվող հարցերի կարևորությունը (խոսքը հատկապես վերաբերում է ընտանեկան հարաբերություններին առնչվող գործերին) կարող է լինել այնպիսին, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գա այն եզրակացության, որ այդ տիպի գործերով պարտադիր են ոչ միայն դատական լուծումները, այլ նաև վերաքննությունը: Սակայն գործնականում անհնար է, որ դատարանը նման պնդում կատարի քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին վերաբերող գործերի մեծամասնության վերաբերյալ³:

¹ St'u Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 17.01.1970թ. Delcourt v. Belgium գործով կայացված վճիռը և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 23.10.1996թ. Levages Prestations Services v. France գործով կայացված վճիռը:

² St'u Комментарий к Конвенции о защите прав человека и основных свобод и практике ее применения. Под общ. ред. В. А. Туманова, Л. М. Энтина. - М., 2002, էջ 88:

³ St'u Европейские стандарты права на справедливое судебное разбирательство и российская практика. Под общ. ред. А. В. Деменевой. - Екатеринбург: изд-во Урал. ун-та, 2004, էջ 26:

Այսպիսով, վերոգրյալից հետևում է, որ Կոնվենցիան չի ամրագրում քաղաքացիական գործերով կայացված դատական ակտը վերադաս ատյան բողոքարկելու իրավունքը, իսկ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն էլ քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի բողոքարկումը չի դիտում որպես արդար դատաքննության իրավունքի տարր:

Անդրադառնալով քննարկվող հարցի կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշմանը՝ նշենք, որ ՀՀ Սահմանադրական դատարանը դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը բնութագրում է որպես մարդու և քաղաքացու անօտարելի իրավունք, նրա մյուս իրավունքներն ու ազատություններն ապահովող երաշխիք և որպես օրենքով սահմանված ժամկետներում և կարգով վճռաբեկ դատարան մուտք գործելու և լիարժեք պաշտպանություն ստանալու հնարավորություն (27.05.2008թ. ՍՂՈ-754 և 08.10.2008թ. ՍՂՈ-765 որոշումներ)¹:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր թիվ ՍՂՈ-1037 որոշման մեջ ամրագրել է, որ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի պահպանումը²:

Քննարկվող հարցի վերաբերյալ դոկտրինալ աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատավարագետ հեղինակները հակված են քաղաքացիական գործով կայացված դատական ակտի բողոքարկման իրավունքը դիտել որպես արդար դատաքննության իրավունքի տարր:

Վ. Վ. Հովհաննիսյանն այս կապակցությամբ նշում է, որ դատական վերանայումը հնարավորություն է ընձեռում երաշխավորել

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի խմբ., Եր., «Իրավունք» հրատ., 2010, էջեր 208-209:

² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից թիվ ՍՂՈ-1037 գործով 2012թ. հուլիսի 18-ին կայացված որոշումը:

օրինական և հիմնավորված դատական ակտերի կայացումը, օրենքի միատեսակ կիրառությունը, քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունը¹: Այն գիտակցությունը, որ կայացված ակտը բողոքարկման դեպքում վերանայվելու և բեկանվելու է վերադաս դատարանի կողմից, ստիպում է դատարաններին կայացնել առավել օրինական և հիմնավորված դատական ակտեր: Ուստի դատական ակտի բողոքարկման իրավունքը հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի ապահովման կարևորագույն երաշխիք: Վերադաս դատարան դիմելը կամ դատական ակտը բողոքարկելը դատական պաշտպանության իրավունքի իրականացման ձևեր են՝ արդար դատաքննության իրավունքի ապահովման միջոցներ, որոնք ուղղված են քաղաքացիական շրջանառության մասնակիցների օրինական և հիմնավորված պահանջների բավարարմանը, իրավունքների հարկադիր պաշտպանությանը²:

Դատական պաշտպանության իրավունքը ներառում է ոչ միայն խախտված իրավունքների պաշտպանության պահանջով դատարան դիմելու, այլև դատական ակտերը բողոքարկելու հնարավորությունը: Դատական ակտերը բողոքարկելու իրավունքն ուղղակիորեն բխում է անձի դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունից, որն ապահովելու պարտականությունն ընկնում է պետության վրա³: Եթե խախտված քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացնում է առաջին ատյանի դատարանը, ապա խախտված արդար դատաքննության իրավունքի պաշտպանությունն իրականացվում է վերաքննիչ և վճռաբեկ դատարանների կողմից:

¹ Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ բողոքարկման իրավունքը որպես քաղաքացիական դատավարությունում արդար դատաքննության իրավունքի ապահովման միջոց, «ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր», Եր., 2011, թիվ 3(60), էջ 16:

² Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., նշված աշխատ., էջ 24:

³ Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ բողոքարկման իրավունքը որպես քաղաքացիական դատավարությունում արդար դատաքննության իրավունքի ապահովման միջոց, «ՀՀ Սահմանադրական դատարանի տեղեկագիր», Եր., 2011, թիվ 3(60), էջ 15:

Դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների բովանդակությունը կազմող յուրաքանչյուր տարրի խախտում կամ խախտման հնարավորություն պարունակող ցանկացած դատական ակտ պետք է ենթակա լինի բողոքարկման վերադաս ատյանին, եթե դատաքննության արդյունքում կայացվող վերջնական դատական ակտը անմիջական ազդեցություն կարող է ունենալ կողմերի իրավունքների և պարտականությունների վրա: Ուստի բողոքարկման հնարավորություն պետք է նախատեսվի բոլոր այն դեպքերում, երբ քննվող գործով կայացվող վերջնական դատական ակտը անմիջականորեն կարող է ազդել կողմերի իրավունքների և պարտականությունների վրա¹:

Համանման կարծիքի է նաև Հ. Մ. Տեր-Վարդանյանը, ով նշում է, որ դատական ակտերի բողոքարկումը, վերադաս դատարանի կողմից ստորադաս դատարանների կայացված դատական ակտերի նկատմամբ արդյունավետ հսկողությունը պետք է դիտարկել որպես արդար դատաքննության իրավունքի տարր: Դատական ակտի բողոքարկումը պետք է ապահովվի դատական քննության ցանկացած փուլում: Բողոքարկման ենթակա պետք է լինի ցանկացած դատական ակտ, որով միաժամանակ խախտվել է անձի՝ արդար դատաքննության իրավունքի որևէ տարր և դատական պաշտպանության իրավունքը՝ գործի սխալ լուծման կամ դատական պաշտպանության իրավունքից զրկելու հետևանքով²:

Վ. Ն. Այվազյանը շեշտում է, որ արդար և հրապարակային դատաքննության իրավունքը և դրա բովանդակությունից բխող դատական ակտերը բողոքարկելու իրավունքը ընդգրկված են մարդու իրավունքների առաջին սերնդի անձնական և քաղաքական իրավունքների և ազատությունների խմբի մեջ, անօտարելի են և

¹ Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջեր 441-442 :

² Տե՛ս Տեր-Վարդանյան Հ.Մ., Արդար դատաքննության իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը Հայաստանի Հանրապետությունում, ի.գ.թ. աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2009, էջ 12:

անբաժան¹:

Հիշատակման է արժանի նաև Լ. Ա. Տերեխովայի տեսակետն առ այն, որ խախտված իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը ենթադրում է դրա բաղադրությունը կազմող տարրերի համալիրություն, այն է՝ դատարան դիմելու, վերջնական դատական ակտի կայացմամբ գործի քննության, դատական սխալի վերացման և դատական ակտի կատարման իրավունք²:

Ս. Գ. Մեղրյանն այս կապակցությամբ նշում է, որ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման կարևորագույն երաշխիքներից մեկն առնվազն երկու դատական ատյաններում իրավունքի պաշտպանություն հայցելու հնարավորության օրենսդրական ամրագրումն է³:

Վ. Վ. Հովհաննիսյանի կարծիքով՝ մարդու իրավունքներին անմիջականորեն ազդող յուրաքանչյուր դատական ակտի կայացման դեպքում պետք է հնարավոր լինի բողոքարկել արդար դատաքննության իրավունքի խախտումները, եթե դրանք կարող են խախտել անձի դատական պաշտպանության իրավունքը⁴:

Լիովին համաձայն լինելով վերը նշված հեղինակների հետ՝ գտնում ենք, որ յուրաքանչյուր ոք պետք է ունենա իր համար սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ամրագրող դատական ակտն առնվազն մեկ անգամ բողոքարկելու իրավունք:

Ինչպես արդեն նշել ենք, դատարանի վճիռը բեկանող և փո-

¹ Տե՛ս Այվազյան Վ.Ն., Մարդու իրավունքներ և ազատություններ, Եր., «Տիգրան Մեծ», 2007, էջեր 21-35:

² Տե՛ս Терехова Л.А. Право на исправление судебной ошибки как компонент судебной защиты. Автореф. дисс... д.ю.н., - Екатеринбург, 2008, էջ 1:

³ Տե՛ս Մեղրյան Ս.Գ., Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերը, Եր., ԵՊՀ հրատ., 2010, էջ 149:

⁴ Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ դատարանի որոշումների դասակարգման հիմնախնդիրները քաղաքացիական դատավարությունում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 446:

փոխող վերաքննիչ դատարանի որոշումը գործին մասնակցող անձանց համար ամրագրում է սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ, օժտված է գործն ըստ էության լուծող դատական ակտերին հատուկ որոշակի հատկանիշներով: Հետևաբար գտնում ենք, որ այդ ակտերի բողոքարկման իրական հնարավորությունը ևս պետք է ապահովվի օրենսդրի կողմից:

Դատական ակտն առնվազն մեկ անգամ բողոքարկելու իրավունքին անուղակիորեն անդրադարձել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանը: Քննարկելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի¹ 118-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը՝ ՀՀ Սահմանադրական դատարանը ամրագրել է հետևյալը. «Եթե վճռաբեկ բողոք բերելու քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերն ու բողոքի ընդունելիության պայմանները ... եռաստիճան համակարգում իրավաչափ են ու ողջամիտ ..., ապա երկաստիճան համակարգի պարագայում նշված գործոնները բողոքարկման միակ վճռաբեկ ատյանի մատչելիությունը և արդյունավետությունը սահմանափակում են այնքան, որ խաթարվում է դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը ...»²:

Ասվածի հիման վրա գտնում ենք, որ վճռաբեկ դատարանը պետք է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունի նաև բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանի դատական ակտի եզրափակիչ մասը բեկանվել և փոփոխվել է վերաքննիչ դատարանի կողմից: Սա հնարավորություն կտա գործնականում ապահովել վերաքննիչ դատարանի կայացրած և գործին մասնակցող անձանց համար սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտերի բողոքարկման հնարավորությունը:

¹ Ընդունվել է 28.11.2007թ., ուժի մեջ է մտել 01.01.2008թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007/64(588) Հոդ. 1300, 19.12.2007թ.: Այսուհետ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք:

² Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից թիվ ՍԴՈ-780 գործով 2008թ. նոյեմբերի 25-ին կայացված որոշումը:

Այժմ քննարկենք արտահայտված գաղափարը վճռաբեկ դատարանի՝ ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով ամրագրված առաքելության և դերի համատեքստում:

ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով ամրագրված է, որ վճռաբեկ դատարանի առաքելությունը օրենքի միատեսակ կիրառումը ապահովելն է: Սահմանադրական այս նորմից բխում է, որ վճռաբեկ դատարանը պետք է վարույթ ընդունի ոչ թե ցանկացած բողոք, այլ միայն այն բողոքները, որոնց քննությունը և լուծումը կնպաստի օրենքի միատեսակ կիրառումն ապահովելուն:

Բացի այդ, Եվրոպական երկրներում դատական համակարգի զարգացման հիմնական միտումն այն է, որ գնալով ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների եռաստիճան համակարգում բարձրագույն ատյանի հիմնական գործառույթը դառնում է օրենքի միատեսակ կիրառության ապահովումը: Դրան համապատասխան՝ փոխվում է նաեւ դատական այդ ատյանի դերը բողոքների ընդունման եւ քննության հարցերում: Երրորդ ատյանի դատարան բողոքներ պետք է բերվեն առաջին հերթին այնպիսի գործերով, որոնք կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ կարող են նպաստել օրենքի միանման մեկնաբանմանը: Այդ շրջանակը կարող է նաև նեղացվել այն գործերի վերաբերյալ բողոքներով, որոնք առնչվում են իրավունքի այնպիսի հարցերի, որպիսիք ողջ հասարակության համար կարևորություն են ներկայացնում¹:

Որոշ չափով համաձայնվելով վերը շարադրված տեսակետի հետ՝ այնուամենայնիվ նշենք հետևյալ հակափաստարկները՝

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը արդեն իսկ սահմանում է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մի հիմք, որն իրավունքի զարգացման կամ օրենքի միատեսակ կիրառության ապահովման հետ որևէ կապ չունի (խոսքը գնում է ստորադաս դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի մասին, որը կարող է առաջացնել կամ առաջացրել է ծանր հետևանքներ)

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից թիվ ՍԴՈ-690 գործով 2007թ. ապրիլի 9-ին կայացված որոշումը:

2. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 07.02.1995թ. թիվ R(95)5 հանձնարարականը (որի վրա հիմնված է ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-690 որոշումը) սահմանում է, որ երրորդ աստյանի դատարանում բողոքները պետք է վերաբերեն այնպիսի գործերի, որոնք բխում են այդ դատական աստյանի դերից (օրինակ՝ այնպիսի գործեր, որոնք կարող են նպաստել իրավունքի զարգացմանը կամ օրենքի միատեսակ մեկնաբանմանը): Նույն այդ հանձնարարականի 7-րդ հոդվածի «b» կետի համաձայն՝ երրորդ աստյանի դատարանների կարգավիճակը սահմանելիս պետությունները պետք է հաշվի առնեն, որ գործն արդեն իսկ լսվել է երկու դատարաններում:

Վերաքննիչ դատարանի առաջնային գործառույթը առաջին աստյանի դատարանի դատական ակտերի օրինականությունն ու հիմնավորվածությունը ստուգելն է¹: Մինչդեռ դատարանի վճիռը բեկանելու և փոփոխելու դեպքում վերաքննիչ դատարանը ոչ թե պարզապես կատարում է դատարանի վճիռի օրինականության և հիմնավորվածության ստուգում (ինչը վերաքննիչ դատարանի հիմնական գործառույթն է), այլ հանդես է գալիս որպես գործը կրկնակի անգամ լուծող դատարան (կատարում է առաջին աստյանի դատարանի գործառույթներ):

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ երրորդ աստյանի դատարանը կարող է հանդես գալ որպես «իրավունքի դատարան» միայն այն դեպքերում, երբ՝

- գործն ըստ էության քննվել և լուծվել է առաջին աստյանի դատարանում, և

- երկրորդ աստյանի դատարանը, քննելով վճիռի դեմ ներկայացված բողոքը, ստուգել է վճիռի օրինականությունը և հիմնավորվածությունը, սակայն չի կայացրել կողմերի համար քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող, առաջին աստյանի դատարանի վճիռից տարբերվող դատական ակտ:

3. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995թ.

¹ Տե՛ս Հովհաննիսյան Վ.Վ., Վերաքննիչ դատարանի լիազորությունների իրավաբանական բնույթի հիմնախնդիրները, «Օրենք և իրականություն», Եր., հունվար 2012, # 1, էջ 5:

փետրվարի 7-ի թիվ R(95) 5 հանձնարարականի 2-րդ հոդվածի «ա» կետի համաձայն. «Ընդհանուր առմամբ դատական վեճի հարցերն սկզբունքորեն պետք է լուծվեն առաջին ատյանի դատարանում: Այստեղ պետք է ներկայացվեն բոլոր պահանջները, փաստերը և ապացույցները»: Մինչդեռ վերաքննիչ դատարանի կողմից դատարանի վճիռը բեկանվելու և փոփոխվելու դեպքում դատական վեճը սկզբունքորեն լուծվում է երկրորդ ատյանի (վերաքննիչ) դատարանում:

4. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1995թ. փետրվարի 7-ի «Քաղաքացիական և տնտեսական գործերով բողոքարկման համակարգերի և ընթացակարգերի գործադրման և գործունեության կատարելագործման մասին» թիվ R(95)5 հանձնարարականի 1-ին հոդվածի «ա» կետով սահմանվել է, որ սկզբունքորեն պետք է գոյություն ունենա ստորադաս դատարանի (առաջին ատյանի դատարան) կայացրած ցանկացած որոշման նկատմամբ վերադաս դատարանի (երկրորդ ատյանի դատարան) կողմից վերահսկողություն իրականացնելու հնարավորություն:

Զարգացնելով վերը նշված միտքը՝ գտնում ենք, որ դատական վերահսկողություն իրականացնելու հնարավորությունը պետք է գոյություն ունենա կողմերի համար քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող բոլոր դատական ակտերի նկատմամբ:

Այսպիսով, տրամաբանական չէ վերաքննիչ դատարանի կայացրած և կողմերի համար քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ սահմանող դատական ակտերի բողոքարկման համար էականորեն ավելի խստացված պայմաններ սահմանելը այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանի վճիռը բողոքարկման համար սահմանված պայմանները բոլորովին այլ են:

Վերաքննիչ դատարանի կայացրած բոլոր այն դատական ակտերը, որոնցով որոշվում են կողմերի քաղաքացիական իրավունքները և պարտականությունները, պետք է առանց բացառության ենթակա լինեն վերանայման ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից:

Նման իրավակարգավորումը ոչ միայն չի հակասում, այլև հա-

մահունչ է ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակին: ՀՀ Սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում սահմանել է, որ՝

- ՀՀ վճռաբեկ դատարանն իր գործունեությունը պետք է առաջին հերթին իրականացնի օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանմամբ, որոնք ստորադաս դատարանների կողմից կիրառվել են (կամ չեն կիրառվել) դրանց տարաբնույթ իրավաընկալման արդյունքում

- ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելիս և դատական սխալներն ուղղելիս վճռաբեկ դատարանը բացառապես պետք է լուծի իրավունքի իրացման հարցեր

- վճռաբեկ դատարանի սահմանադրական գործառնությանից է բխում ոչ միայն դատական սխալներն ուղղելը, այլև դատարանների կողմից կիրառված նորմատիվ ակտերի (դրանց դրույթների) միասնական ընկալման վերաբերյալ իրավական դիրքորոշում արտահայտելը¹:

Մեր կողմից առաջարկվող իրավակարգավորումը համահունչ է ՀՀ վճռաբեկ դատարանի կարգավիճակի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից արված մեկնաբանություններին: Բանն այն է, որ ներկայիս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը վերաքննիչ դատարանին հնարավորություն է տալիս բեկանել և փոփոխել դատարանի վճիռը միայն այն դեպքում, եթե առաջին ատյանի դատարանը թույլ է տված իրավունքի կիրառման հետ կապված դատական սխալ:

Այսինքն, եթե դատարանի վճիռը բեկանվում և փոփոխվում է վերաքննիչ դատարանի կողմից, դա նշանակում է, որ նույն իրավական հարցի շուրջ առնվազն երկու դատարան (առաջին ատյանի դատարանը և վերաքննիչ դատարանը) արտահայտել են միմյանցից տարբեր, իրարամերժ դիրքորոշումներ: Նման իրավիճակում անհրաժեշտ է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքն ընդունի քննության և հայտնի իր վերջնական դիրքորոշումը տվյալ

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից թիվ ՍԴՈ-690 գործով 2007թ. ապրիլի 9-ին կայացված որոշումը:

հարցի կապակցությամբ: Այդպիսի դիրքորոշում հայտնելը ենթադրում է թե՛ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի մեկնաբանում, թե՛ իրավունքի իրացման հարցերի լուծում, թե՛ նորմատիվ ակտերի (դրանց դրույթների) միասնական ընկալման վերաբերյալ իրավական դիրքորոշման արտահայտում:

Այսպիսով, վերաքննիչ դատարանի կողմից կայացված և գործին մասնակցող անձանց համար քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտերի բողոքարկման իրավունքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է <<քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությունն ունեցող 5-րդ կետով. «բողոքարկվող դատական ակտը կայացվել է <<քաղաքացիական դատավարության օրենսգրքի 221-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված լիազորության կիրառման արդյունքում»:

Vahagn Grigoryan

PhD student of the Chair of Civil procedure, YSU

**THE NATURE OF THE JUDICIAL ACT TAKEN AS A RESULT OF
USING THE AUTHORITY OF THE COURT OF APPEAL OF
RA TO CANCEL AND CHANGE THE DECISION OF THE COURT
OF GENERAL JURISDICTION AND A NUMBER OF RELATED
PROBLEMS ASSOCIATED
WITH THE APPEAL OF SUCH ACTS**

In this article the author discusses the nature of the authority of the Court of Appeal of RA to cancel and change the decision of the court of general jurisdiction, as well as the nature and character of the judicial act taken as a result of using this authority and a number of related problems associated with the appeal of such acts. The author came to the conclusion that everyone should have the right to appeal judicial acts, which establish their civil rights and obligations at least once. The author suggests an amendment to the Article 234 of the Civil Procedure Code of the Republic of Armenia.

Ваагн Григорян
Аспирант кафедры Гражданского процесса ЕГУ

**ХАРАКТЕР СУДЕБНОГО АКТА ПРИНЯТОГО В
РЕЗУЛЬТАТЕ ОТМЕНЫ И ИЗМЕНЕНИЯ РЕШЕНИЯ СУДА ОБЩЕЙ
ЮРИСДИКЦИИ АПЕЛЛЯЦИОННЫМ СУДОМ РА, И РЯД
ПРОБЛЕМ СВЯЗАННЫХ
С ОБЖАЛОВАНИЕМ ТАКИХ АКТОВ**

В данной статье автор рассматривает характер полномочия отмены и изменения решения суда общей юрисдикции Апелляционным судом РА, а также природу и характер судебного акта принятого в результате применения данного полномочия и ряд проблем связанных с обжалованием таких актов. Автор пришел к выводу, что каждый должен иметь право на обжалование судебных акта, который закрепляет свои субъективные гражданские права и обязанности хотя бы один раз. Автор предложил поправку к статье 234 Гражданско-процессуального кодекс РА.

Բանալի բառեր՝ վերաքննիչ դատարանի լիազորություններ, վճռի բեկանում և փոփոխում, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու պայմաններ
Ключевые слова: полномочия Апелляционного суда, отмена и изменение решения суда, условия принятия кассационной жалобы на рассмотрение

Keywords: powers of the Court of Appeal of RA, cancellation and changing of the decision of the court, conditions of acceptance of the cassational appeal into proceeding

**ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅՑԻ ԱՎԱՐՏԸ ԳՈՐԾԸ
ՊԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐՎԱՏԵԼՈՒ ՓՈԽՈՒՄ**

2005 թվականի նոյեմբերի 27-ին Հայաստանի Հանրապետության² Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունները սկիզբ հանդիսացան ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի իրականացման համար: Դատաիրավական բարեփոխումների նպատակը ՀՀ-ում ժամանակակից իրավական պետության չափանիշներին համապատասխանող իրավական և դատական համակարգի ապահովումն է, որը ենթադրում է նաև քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացում:

Իրավաբանական գրականությունում քաղաքացիական դատավարության արդյունավետությունը կանխորոշվում է հետևյալ չափանիշներով՝

- դատական պաշտպանության իրավունքի լիարժեք ապահովում
- քաղաքացիական գործերի ճիշտ և ժամանակին քննություն ու լուծում
- դատավարական խնայողություն³:

Գործը դատաքննության նախապատրաստելու փուլի առաջնային նպատակը գործի ժամանակին և ճիշտ քննության ու լուծման ապահովումն է, իսկ ֆակուլտատիվ նպատակը՝ դատավարական խնայողությունը⁴, հետևաբար քաղաքացիական դատավարության այս փուլը լիովին կարող էր հանդես գալ որպես քաղաքացիական դատավարության արդյունավետության բարձրացմանն ուղղված կառուցակարգ:

¹ ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Հովհաննիսյան:

² Այսուհետ նաև՝ ՀՀ:

³ Стен Цихоцкий А.В. Теоретические проблемы эффективности правосудия по гражданским делам. Автореферат диссертации докт. юрид. наук. //www.dissercat.ru

⁴ Стен Беков Я.Х. Подготовка дела к судебному разбирательству в гражданском судопроизводстве. М., 2010, էջ 11:

Վերոգրյալով պայմանավորված՝ դատաիրավական բարեփոխումների երկրորդ փուլի շրջանակներում խնդիր դրվեց կանոնակարգելու գործը պատշաճ ձևով դատաքննության նախապատրաստելու հարցը:

2007թ. ՀՀ դատական օրենսգրքի¹ ընդունման և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարված լրացումների և փոփոխությունների² արդյունքում ՀՀ քաղաքացիական դատավարությունում վերականգնվեց գործը դատաքննության նախապատրաստելու փուլը, որի իրավակարգավորումն իրականացվեց դատաիրավական բարեփոխումների նպատակի շրջանակներում՝ ժամանակակից իրավական փոփոխություններին համահունչ:

Գործը դատաքննության նախապատրաստելու փուլի ներկայիս իրավակարգավորման առանձնահատկություններից է դատավարության այս փուլում գործի վարույթն ավարտելու հնարավորության ամրագրումը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի և 110-րդ հոդվածի 3-րդ մասի վերլուծությունից հետևում է, որ դատարանը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում կարող է կարճել գործի վարույթը՝ հայցվորի կողմից հայցից հրաժարվելու կամ կողմերի կնքած հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքերով³:

Օրենսդիրը, սակայն, չի կարգավորել գործը դատաքննության նախապատրաստելու փուլում վերոնշյալ հիմքերով գործի վարույթը կարճելու ընթացակարգը, մասնավորապես, համապատասխան հիմքի ի հայտ գալու դեպքում դատարանը պե՞տք է արդյոք այն նախնական դատական նիստում քննարկի գործին մասնակցող անձանց հետ, թե՞ ոչ:

Համեմատության համար նշենք, որ ՌԴ քաղաքացիական դատավարության օրենսգրքը (հոդվ. 152) գործը դատաքննության նախապատրաստելու փուլում գործի վարույթն ավարտելու հարցի քննարկումը նախատեսել է բացառապես նախնական դատական նիստում:

¹ ՀՕ-135-Ն, ՀՀՊՏ 2007.04.18/20(544), 21.02.2007

² ՀՕ-277-Ն, ՀՀՊՏ 2007.12.26/66(590), 28.11.2007

³ 04.06.1964 թվականին ընդունված Հայկական ՍՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը գործի վարույթն ավարտել թույլատրում էր միայն դատական քննության փուլում:

Նշված հարցի կապակցությամբ ՀՀ ընդհանուր իրավասության դատարանների ձևավորած պրակտիկայի ուսումնասիրությունը քույլ է տալիս արձանագրել խնդրի լուծման նմանատիպ տարբերակներ: Այսպես, գործը դատաքննության նախապատրաստելու փուլում գործի վարույթը կարճելու վկայակոչված հիմքերի ի հայտ գալու դեպքում դատարանները հիմնականում հարցը քննարկելու համար հրավիրում են նախնական դատական նիստ կամ գործի վարույթը կարճում են արդեն իսկ նշանակված նախնական դատական նիստի ավարտից հետո: Այսպես, օրինակ, թիվ ԵԿԴ/1543/02/12 քաղաքացիական գործն ըստ հայցի Երևան համայնքի ընդդեմ Պավել Ղարազադյանի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, դատաքննության նախապատրաստելու փուլում, նախնական դատական նիստ նշանակված չլինելու պարագայում, հայցվորի ներկայացուցիչը 27.09.2012 թվականին հայցից հրաժարվելու մասին դիմում է ներկայացրել դատարան: Դատարանը նշված գործով 03.10.2012 թվականի ծանուցագրով 16.10.2012 թվականին նշանակել է նախնական դատական նիստ, որի ընթացքում քննարկել է հայցից հրաժարվելու մասին դիմումը և նույն օրը հրապարակել է գործի վարույթը կարճելու մասին վճիռ: Մեկ այլ, թիվ ԵԵԴ/0866/02/12 քաղաքացիական գործով ըստ հայցի Երևան համայնքի ընդդեմ «Նահասյան» ՍՊԸ-ի՝ գումարի բռնագանձման պահանջի մասին, դատարանը 03.07.2012 թվականին կայացրել է հայցադիմումը վարույթ ընդունելու և 10.09.2012 թվականին նախնական դատական նիստ նշանակելու մասին որոշում: Գործը դատաքննության նախապատրաստելու փուլում՝ 09.08.2012 թվականին, հայցվորի ներկայացուցիչը հայցից հրաժարվելու մասին դիմում է ներկայացրել դատարան: Դատարանը նշված դիմումը քննարկվել է արդեն իսկ նշանակված նախնական դատական նիստի ընթացքում և նույն օրը հրապարակել է գործի վարույթը կարճելու մասին վճիռ: Նմանատիպ նախադեպեր արձանագրվել են նաև թիվ ԵԱՆԴ/0903/02/12, թիվ ԵՄԴ/1182/02/12, թիվ ԵԱՔԴ/0982/02/12, թիվ ԵԱԴԴ/0693/02/12, թիվ ԵԿԴ/0315/02/12 քաղաքացիական գործերով:

Հարկ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0462/02/08 քաղաքացիական գործով 19.10.2012 թվականին կայացված որոշման շրջանակներում արձանագրել է, որ հայցից հրաժարումը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պա-

հանջից և իրավունքի պաշտպանության դատավարական միջոցից անվերապահորեն, առանց որևէ պայմանի հրաժարումն է: Հայցից հրաժարումը հայցվորի միակողմանի տնօրինչական գործողություն է, որը կարող է տեղի ունենալ տարբեր նկատառումներով: Դատարանը չպետք է անդրադառնա հայցից հրաժարվելու պատճառների գնահատմանը, սակայն պարտավոր է հայցվորին պարզաբանել կատարվող գործողության իմաստն ու նշանակությունը և համոզվել, որ հայցից հրաժարումը վերջինիս ազատ կամքի արտահայտությունն է և զերծ է այլ անձանց հարկադրանքից:

Վերը շարադրվածից հետևում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը ևս այն տեսակետին է, որ հայցից հրաժարվելու հարցը ենթակա է քննարկման դատական միատուվ (այդ թվում՝ նաև նախնական):

Կարծում ենք, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հայցվորի կողմից հայցից հրաժարվելու հիմքի առկայության դեպքում նշված հարցի քննարկումը բացառապես նախնական դատական միստ փոխադրելը չի բխում դատավարական խնայողության սկզբունքից: Այն կարող է ոչ միայն անհարկի ծոծոցել գործի քննության ավարտը, այլև որոշ դեպքերում նաև հանգեցնել կողմերի իրավունքների խախտման: Այսպես, օրինակ, հայցից հրաժարվելու հիմքով դատարանը, կարճելով գործի վարույթը, վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից վերացնում է նաև ձեռնարկված հայցի ապահովումը: Ակնհայտ է, որ սպասել մինչև արդեն իսկ նշանակված նախնական դատական միստը կամ հարցի քննարկման համար նշանակել նախնական դատական միստ, կարող է ծոծոցել նաև ձեռնարկված հայցի ապահովման վերացումը:

Կամ՝ վերը նշված պրակտիկան կարող է հանգեցնել աննպատակ և չարդարացված դատական ծախսերի կատարման: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը դատարանին չի պարտավորեցնում հայցից հրաժարվելու մասին դիմում ստացվելու դեպքում այդ մասին ծանուցել պատասխանողին և գործին մասնակցող այլ անձանց: Հետևաբար նման դեպքերում՝ գործով նախնական դատական միստ նշանակելու պարագայում, վերջիններս, տեղյակ չլինելով գործի վարույթը կարճելու հիմքի առկայության մասին, կարող են կրել ծախսեր՝ ապացույցներ հավաքելու և ներկայացնելու, ներկայացուցչի վարձատրության և այլնի համար:

Ուստի առաջարկում ենք գործը դատաքննության նախապատ-

րաստելու փուլում հայցից հրաժարվելու մասին դիմում ներկայացվելու դեպքում առանց նախնական դատական միստ հրավիրելու կարճել գործի վարույթը: Միևնույն ժամանակ չենք բացառում նշված հիմքի քննարկումը նախնական դատական միստում, եթե դատարանի կարծիքով այդպիսի անհրաժեշտություն առկա է (օրինակ, դատավորը հիմնավոր կասկածներ ունի և ցանկանում է պարզել՝ հայցից հրաժարվելու դիմումն իսկապե՞ս ստորագրվել է հայցվորի կողմից կամ նշված գործողությունն հանդիսանո՞ւմ է արդյոք վերջինիս ազատ կամահայտնության արդյունք):

Նշված հարցի կապակցությամբ միաժամանակ հարկ ենք համարում անդրադառնալ դատական պրակտիկայում տեղ գտած մեկ այլ արատավոր միտումին, երբ դատարանները, գործը դատաքննության նախապատրաստելու փուլում ստանալով հայցից հրաժարվելու մասին դիմում, այնուամենայնիվ, գործը նշանակում են դատաքննության՝ դատավարության այդ փուլում արձանագրելով գործի վարույթը կարճելու հիմք ի հայտ գալու փաստը: Նման պրակտիկան թերևս կարելի է դիտել որպես խորհրդային ժառանգության դրսևորում՝ նկատի ունենալով, որ 04.06.1964 թվականին ընդունված Հայկական ՍՍՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը գործի վարույթն ավարտել թույլատրում էր միայն դատական քննության փուլում: Վերը նշված պրակտիկան ոչ միայն հակասության մեջ է մտնում դատավարական խնայողության սկզբունքի հետ, այլև կարող է անհարկի սահմանափակել անձի դատական պաշտպանության իրավունքը: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան՝ բացառությամբ այն դեպքի, երբ հայցվորը հայցից հրաժարվել է դատաքննության նախապատրաստական փուլում:

Այլ է ընթացակարգը կողմերի կնքած հաշտության համաձայնությունը հաստատելիս: Այսպես, ՔԴՕ-ի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմերը դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը, նախքան հաշտության համաձայնությունը հաստատելը, կողմերին պարզաբանում է դրա դա-

տավարական հետևանքները: Նշված իրավակարգավորումից հետևում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հաշտության համաձայնություն կնքվելու դեպքում դատարանը չի կարող առանց նախնական դատական նիստ իրավիքելու կարճել գործի վարույթը, քանի որ օրենսդիրը իմպերատիվ կերպով պարտավորեցնում է դատարանին մինչև հաշտության համաձայնությունը հաստատելը կողմերին պարզաբանել դրա դատավարական հետևանքները, ինչը գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հնարավոր է բացառապես նախնական դատական նիստում:

Հարկ ենք համարում քննարկել այն հարցը, թե հնարավոր է արդյոք գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հայցը կամ դիմումն թողնել առանց քննության կամ գործի վարույթը կարճել ՔԴՕ-ի 109-րդ հոդվածով սահմանված այլ հիմքերով:

Այս կապակցությամբ հայ հեղինակներից Ռ.Գ. Պետրոսյանը գրում է. «Գործող ՔԴՕ-ն «Հայցը կամ դիմումն առանց քննության թողնելը» և «Գործի վարույթը կարճումը» գլուխները (15 և 17-րդ) իրավացիորեն զետեղել է «Դատաքննությունը» գլխից առաջ, որով հետև ախտեղ սահմանված են այնպիսի հիմքեր, որոնց առկայությամբ հնարավոր է հայցը կամ դիմումն առանց քննության թողնել կամ գործի վարույթը կարճել նաև նախապատրաստման փուլում՝ մինչև գործի դատական քննությունը սկսվելը»¹: Հեղինակի կարծիքով այդպիսի հիմքերի առկայության դեպքում հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու գործողությունները դատաքննության փուլ փոխադրելն անիմաստ է, քանի որ նախապատրաստման փուլում այդ գործողությունների կատարումը կրճատում է վարույթը, կողմերին և դատարանին ազատում է ժամանակի ավելորդ ծախսումներից:

Համամիտ լինելով հեղինակի հետ՝ կարծում ենք, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը այլ հիմքերով կարճելու հնարավորության նախատեսումը դատավարական խնայողության ապահովման միջոց է և դատարանների ներկայիս

¹ Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ., Հայաստանի քաղաքացիական դատավարություն, - երրորդ հրատ., Երևանի համալս. հրատ., Եր., 2007, էջ 412:

ծանրաբեռնվածության պայմաններում կարող է նպաստել խնդրի լուծմանը: Սակայն համամիտ չենք հեղինակի այն տեսակետին, որ ՔԴՕ-ի կառուցվածքից հետևում է, որ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում հայցը կամ դիմումն առանց քննության թողնելու կամ գործի վարույթն այլ հիմքերով կարճելու հնարավորություն նախատեսված է: Գործնականում դատարանները համապատասխան հիմքերի առկայության դեպքում շատ անգամ հենց գործը դատաքննության նախապատրաստելու փուլում էլ ավարտում են գործի վարույթը, ինչը որքան էլ արդարացված է, սակայն չի բխում օրենքի կարգավորումից: Ուստի առաջարկում ենք ՔԴՕ-ում նախատեսել դրույթ, ըստ որի՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում համապատասխան հիմքերի առկայության դեպքում դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության կամ կարճում է գործի վարույթը: Ընդ որում, մեր կարծիքով, նշված գործողությունները կարող են իրացվել ինչպես նախնական դատական նիստում, այնպես էլ նախնական դատական նիստից դուրս՝ կախված նրանից, թե ինչ հիմքով է հայցը կամ դիմումը թողնվում առանց քննության կամ կարճվում գործի վարույթը:

Այսպես, օրինակ, ՔԴՕ-ի 103-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման կամ ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթով հավաստված իրավունքները վերականգնելու մասին դիմումը քննելիս վեճ է ծագել իրավունքի մասին:

ՀՀ վճռաբեկ դատարանը գործերից մեկով կայացված որոշման շրջանակներում նշել է, որ յուրաքանչյուր դեպքում իրավունքի վերաբերյալ վեճի առկայությունն ստուգելիս դատարանը պարտավոր է պարզել, թե արդյո՞ք գործի փաստերից ելնելով՝ առերևույթ առկա է փոխադարձ կապ քննարկվող փաստի և այլ անձի իրավունքների միջև, և արդյո՞ք նման փաստի հաստատումը կարող է որևէ կերպ ազդել այլ անձի իրավունքների ծավալի վրա: Նման կապի, ինչպես նաև այդ փաստի և այլ անձի իրավունքների ծավալի փոփոխության միջև պատճառահետևանքային կապի բացակայության դեպքում իրավունքի մասին վեճի վերաբերյալ հայտարարությունն ինքնին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի իմաստով հայցն առանց քննության

թողնելու հիմք չէ: Դատարանը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վեճի առկայության կամ բացակայության հարցը պետք է պարզի՝ ելնելով տվյալ գործի փաստերից, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներից¹:

Կարծում ենք, որ դատարանը վերոնշյալ հարցերը կարող է պարզել՝ դրանք քննարկելով բացառապես նախնական դատական նիստի ընթացքում, ընդ որում՝ այն անձը, ով վկայակոչել է համապատասխան հիմքը, պետք է ծանուցվի նախնական դատական նիստի վայրի և ժամանակի մասին:

Կամ, օրինակ, ՔԴՕ-ի 109-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը կարծում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ՝ բացառությամբ սույն օրենսգրքի 110 հոդվածի 3-րդ կետով նախատեսված դեպքի: ՔԴՕ-ի 110-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան՝ բացառությամբ այն դեպքի, երբ հայցվորը հայցից հրաժարվել է դատաքննության նախապատրաստական փուլում: Այսպես, եթե գործը դատաքննության նախապատրաստելու փուլում գործին մասնակցող անձը դատարան է ներկայացրել նույն անձանց միջև, նույն առարկայի մասին միևնույն հիմքերով վեճով գործի վարույթը հայցից հրաժարվելու հիմքով կարճելու մասին օրինական ուժի մեջ մտած վճիռ, սակայն վճռի բովանդակությունից պարզ չէ՝ հայցվորը դատավարության ո՞ր փուլում է հրաժարվել հայցից, դատարանը այդ հանգամանքը պարզելու համար պետք է հրավիրի նախնական դատական նիստ:

Գործի վարույթը կարճվում է նաև այն դեպքում, երբ գործին մասնակցող քաղաքացու մահից հետո վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը: Օրինակ, ամուսնալուծության կամ ալիմենտի բռնագանձման պահանջներով, որոնցով վիճելի իրավահարաբերությունը բացառում է իրավահաջորդությունը, եթե գործը դատաքննության նախապատրաստելու փուլում դատարան է ներկայացվում գործին մասնակցող անձի մահը հաստա-

¹ Տես ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ 3-445(Ա) քաղաքացիական գործով 02.03.2007 թվականի որոշումը:

տող ապացույց, դատարանն առանց նախնական դատական նիստ հրավիրելու պետք է կարճի գործի վարույթը:

Նախնական դատական նիստ հրավիրելու անհրաժեշտությունը բացակայում է նաև այն դեպքերում, երբ դատարան է ներկայացվել գործին մասնակցող իրավաբանական անձի՝ լուծարված լինելու փաստը հաստատող ապացույց:

Անփոփելով կարող ենք նշել, որ՝

- գործը դատաքննության նախապատրաստելու փուլում գործի վարույթն ավարտելու հնարավորության օրենսդրական ամրագրումն ուղղված է դատավարական խնայողության սկզբունքի ապահովմանը

- ՔԴՕ-ում անհրաժեշտ է նախատեսել դրույթ, ըստ որի՝ գործը դատաքննության նախապատրաստելու փուլում օրենքով սահմանված հիմքերի առկայության պարագայում դատարանը հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության կամ կարծում է գործի վարույթը

- գործը դատաքննության նախապատրաստելու փուլում գործի վարույթի կարծումը՝ հայցից հրաժարվելու հիմքով, բացառապես նախնական դատական նիստում իրականացվող գործողությունն է:

Ashkhen Gharslyan

Post graduate researcher at the Chair of Civil Procedure, YSU

THE TERMINATION OF THE PROCEEDINGS OF A CIVIL CASE AT THE PREPARATION STAGE OF A CASE

One of the features of the legal regulation of the stage of preparation of a case for a hearing is the provision of possibility to terminate the proceeding of a case in this stage of judicial process. This regulation aimed to ensure the principle of procedural economy.

The legislator, however, has not regulated the procedure of dismissing a case in the stage of preparation of a case for a hearing. Particularly, in case of reveal of an appropriate ground for dismissing a case it is not clear whether the court has to discuss it at the preliminary session with the participants of the case.

The author has introduced the solutions of the issue by the judicial practice and suggested to provide for a clear procedure through several legislative amendments and to enlarge the circle of the grounds of termination of a case in the stage of preparation of a case for a hearing.

Ашхен Карслян

соискатель кафедры гражданского процесса ЕГУ

ЗАВЕРШЕНИЕ ПРОИЗВОДСТВА ГРАЖДАНСКОГО ДЕЛА НА ЭТАПЕ ПОДГОТОВКИ ДЕЛА К СУДЕБНОМУ РАЗБИРАТЕЛЬСТВУ

Одной из современных особенностей правового регулирования на этапе подготовки дела к судебному разбирательству является установление возможности завершить производство дела на данном этапе судопроизводства, что направлено на обеспечение принципа процессуальной экономности.

Однако законодатель не урегулировал процедуру прекращения производства по делу на стадии подготовки дела к судебному разбирательству, а именно, должен ли суд, при наличии соответствующего основания, обсудить данный вопрос с участвующими в деле лицами на предварительном судебном заседании или нет?

В статье автор детально показывает имеющиеся в судебной практике решения данного вопроса, одновременно, в результате соответствующих законодательных реформ предлагает не только установить четкую процедуру, но и расширить круг оснований для прекращения производства по делу на стадии подготовки дела к судебному разбирательству.

Բանալի բառեր՝ նախապատրաստել, փուլ, վարույթ, կարծել, նախնական դատական նիստ, վճիռ, հիմք, քննարկել, ապացույց, առանց քննության:

Keyword: Prepare, stage, proceeding, dismissing, preliminary judicial session, judgment, ground, discuss, evidence, unexamined.

Ключевые слова: подготовить, этап, производство, прекратить, предварительное судебное заседание, решение, основание, обсудить, доказательство, без рассмотрения.

ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ ՍԿԻՋՔ. ՔՐԵՍԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը ամրագրված է ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածում: Անձի կյանքի իրավունքի պաշտպանությունը իրականացվում է տարբեր մեթոդներով, դրա երաշխիքները ամրագրված են իրավունքի մի շարք ճյուղերում, այդ թվում՝ քրեական իրավունքում: Այս իրավունքի բովանդակության բացահայտման ժամանակ թերևս ամենավիճելի մարդու կյանքի սկզբի որոշման հարցն է:

Կյանքի սկզբի հարցը անգամ մեր օրերում բուռն քննարկումների առիթ է հանդիսանում: Էմբրիոնի բեղմնավորման և երեխայի ծնվելու միջև բավականին երկար ժամանակային «խզումն» էլ հանգեցնում է այդ վեճերին հատկապես, թե որ պահից սկսած կարելի է խոսել կյանքի սկզբի, հետևաբար նաև կյանքի իրավունքի նոր սուբյեկտի մասին: Գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ էմբրիոն (հունարեն՝ embryo) բառի կիրառման հետ կապված հստակ որոշակիություն չկա: Էմբրիոնի տակ ընդունված է հասկանալ կենդանի օրգանիզմը զարգացման վաղ փուլում²: Էմբրիոն և սաղմ բառերը հոմանիշներ են³: Իսկ ներարգանդային զարգացման 8-րդ շաբաթից հետո մարդկային սաղմը կոչվում է նաև պտուղ⁴:

Մարդը զարգացման ընթացքում անցնում է մի շարք փուլերով՝ բեղմնավորված բջջից մինչև անհատ: Հետևաբար հարց է առաջանում, թե այդ փուլերից ո՞ր պահին է սկսվում կյանքը: Կարելի՞ է արդյոք հավասարության նշան դնել մարդ և էմբրիոն հասկացությունների միջև:

¹ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Ռ. Մարգարյան:

² Sten Oxford Dictionary, <http://oald8.oxfordlearnersdictionaries.com/dictionary/embryo>

³ Sten B.H. Тришин, Словарь синонимов ASIS, 2013:

⁴ Sten Oxford Dictionary, <http://oald8.oxfordlearnersdictionaries.com/dictionary/embryo>

Հին արևելյան ընկալման համաձայն՝ մարդու տարիքը հաշվվում էր բեղմնավորման պահից, իսկ հին արևմտյան քաղաքակրթությունում լայնորեն տարածված էր այն կարծիքը, որ կյանքը սկսվում է ծնվելու պահից: Ուշ միջնադարում Աբվինացու ջանքերով գործում էր արիստոտելյան «հոգի ստանալու» մոտեցումը՝ բեղմնավորումից 40 օր հետո տղամարդկանց և 80 օր հետո կանանց մոտ¹: Այսօր ոմանք կարծում են, որ մարդը հոգի է ստանում բեղմնավորման պահից, իսկ մյուսներն էլ կարծում են, որ Աստված նախ ստեղծում է մարդուն, ապա նոր հոգի է դնում նրա մեջ. հայ առաքելական եկեղեցին կիսում է նշված կարծիքներից առաջինը:

Մարդկային կյանքի պաշտպանության սկզբի որոշման վերաբերյալ տեսության մեջ առկա է երեք մոտեցում՝ բացարձակ, չափավոր և լիբերալ²:

Այսպես կոչված բացարձակ տեսության կողմնակիցները բեղմնավորված ձվաբջիջը կամ էմբրիոնը համարում են մարդկային արարած, որը ունի բացարձակ արժեք և միաժամանակ կյանքի իրավունք: Հենց այդ պատճառով էլ արգելվում է ցանկացած գործողություն, որը խոչընդոտում կամ ընդհատում է վերջինիս զարգացումը: Եթե էմբրիոնի զարգացմանը խոչընդոտում են ինչ-որ բնական գործընթացներ, ապա դրանց պետք է դիմադրել, ինչպես մարդու կյանքին սպառնացող ցանկացած հիվանդության: Այսպիսով, այս տեսության համաձայն պետության պարտականությունն է կյանքի իրավունքի ապահովումը էմբրիոնի զարգացման ցանկացած փուլում³:

Վ. Ա. Գոլիչենկոն և Դ. Վ. Պոպովը պնդում են, որ «ժամանակակից կենսաբանության և գենետիկայի տեսանկյունից մարդու՝ որպես կենսաբանական անհատի կյանքը սկսվում է կնոջ և տղամարդու սեռական բջիջների միաձուլման և մեկ միասնական կորի-

¹ St'iu И. В. Силианова, Биоэтика в России: ценности и законы, // Медицинское право и этика, Москва, 2001, էջ 39:

² St'iu Е. В. Перевозчикова, Е. А. Панкратова, Конституционное право на жизнь и правовой статус эмбриона человека, // Медицинское право , N 2, 2006, էջ 1:

³ St'iu Report by Working Party on the Protection of the Human Embryo and Fetus. Steering committee on bioethics of Council of Europe. Strasbourg, 2003 էջ 5:

զի ձևավորման պահից, որը պարունակում է բացառիկ գենետիկ նյութ»¹:

Բերնարդ Նատանսոնը՝ վերարտադրողական բժշկության կլինիկայի նախկին տնօրենը, որը իր պրակտիկ գործունեության ընթացքում կատարել էր 75.000 աբորտ, կատարեց մի շարք փորձեր՝ որոշելու համար իր գործողությունների անվնաս լինելը: Դրանց արդյունքում նա հայտարարեց, որ կասկածի տակ չի դրվում այն հանգամանքը, որ էմբրիոնը իր յուրօրինակ անձնային բնութագրիչներով առանձին մարդկային էակ է: Իր հետևությունները հիմնավորելու համար նա ձեռնամուխ եղավ երեք ամսական էմբրիոնի աբորտի ուլտրաձայնային տեսանկարահանմանը: Այս ծայնագրությունը՝ «Անձայն ճիչ» անվամբ, ապացուցում է, որ պտուղը զգում է գործիքի կողմից իրեն սպառնացող վտանգը. նա սկսում է ավելի արագ և անհանգիստ շարժվել, սրտի զարկերը արագանում են, նա մեծ բացում է բերանը՝ կարծես թե գոռալով անձայն ճիչով²:

Այսպիսով, բացարձակ տեսությունը հանգում է նրան, որ էմբրիոնը ունի կյանքի իրավունք բեղմնավորման պահից և պետության կողմից պետք է պաշտպանվի զարգացման ցանկացած փուլում:

Լիբերալ տեսակետի համաձայն՝ էմբրիոնը չի կարող դիտվել որպես անհատ՝ անկախ զարգացման փուլից: Դա նշանակում է, որ այն ունի աննշան արժեք կամ ընդհանրապես արժեզուրկ է, հետևաբար ենթակա չէ որևէ պաշտպանության և օժտված չէ կյանքի իրավունքով: Այս ուղղության կողմնակիցներից Մ. Տուլին նշում է. «Օրգանիզմը օժտված է կյանքի իրավունքով միայն այն դեպքում, երբ գիտակցում է իրեն որպես զարգացող սուբյեկտ, ունի կենսափորձ և այլ մտավոր կարողություններ»³:

Չափավոր տեսության բոլոր կողմնակիցները կարծում են, որ էմբրիոնն ունի կյանքի իրավունք՝ զարգացման որոշակի փուլից սկսած, սակայն կարծիքները այդ փուլի որոշման կապակցությամբ

¹ Տե՛ս А. И Ковлер, Антропология права, М., 2002, էջ 456:

² Տե՛ս <http://www.ncregister.com/daily-news/bernard-nathanson-dead-at-84/>

³ Տե՛ս Е. В. Перевозчикова, Е. А. Панкратова, նշված աշխատությունը, էջ 2, մեջբերումն ըստ՝ Tooley M. Abortion and infanticide. In: Gorovitz Set al (cols) Moral problem in medicine. Prentice. Hall, Englewood Cliffs, էջ 302:

շատ տարբեր են, և չկա միասնական մոտեցում:

Այսպես, որոշ հեղինակներ կարծում են, որ էմբրիոնը ունի կյանքի իրավունք՝ ձևավորման 14-րդ օրվանից սկսած, քանի որ մինչև այդ ժամկետը վերջինս կազմված է բջջային շերտերից, որոնք իրենցից սաղմնային թաղանթներ են ներկայացնում և չեն մասնակցում էմբրիոնի հետագա ձևավորմանը¹:

Մի շարք այլ հեղինակներ առաջարկում են էմբրիոնի՝ որպես անհատ դիտելու զարգացման աստիճանի որոշման այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են՝ նյարդային համակարգի ձևավորումը հղիության 4-6-րդ շաբաթից, գրգռիչներին կամ ցավին արձագանքելու էմբրիոնի կարողությունը, որը դրսևորվում է 6-8 շաբաթական պտղի մոտ, գլխուղեղի նյարդային ազդակների ամբողջական ձևավորումը 28-32 շաբաթականում կամ հղիության 30 շաբաթը, երբ ի հայտ են գալիս ապացույցներ, որ պտուղն ունակ է վերամշակելու ստացած զգացողությունները²:

Այսօր միանշանակ լուծում չունի նաև կենսունակության որոշման հարցը: Հաճախ պտղի կենսունակությունը կապում են մորից անկախ գոյություն ունենալու հնարավորության հետ, որը ընդունված է համարել 22 շաբաթականը, սակայն սա էլ խիստ վիճելի է:

Նշված տեսություններից յուրաքանչյուրը ունի իր առանձնահատկությունները. այսպես, բացարձակ տեսությունում էմբրիոնը ունի բացարձակ արժեք զարգացման ցանկացած փուլում, լիբերալների կարծիքով էմբրիոնի արժեքը շատ ցածր է, կամ այն ընդհանրապես արժեզուրկ է, իսկ չափավոր տեսության կողմնակիցների կարծիքով՝ էմբրիոնի կյանքի իրավունքի ծագման պահը կապվում է զարգացման որոշակի փուլի կամ կենսունակության հասնելու հետ:

Մարդկային կյանքի սկզբի և, հետևաբար, նաև վերջինիս իրավական պաշտպանության սկզբի հարցը այսօր բուռն քննարկումներ է առաջացնում: Գիտնականների մի խումբը մարդու կյանքի

¹ St'u Report by Working Party on the Protection of the Human Embryo and Fetus, նշված աշխատությունը, էջ 4:

² St'u E. B. Перевозчикова, E. A. Панкратова, նշված աշխատությունը, էջ 3:

սկիզբ է համարում բեղմնավորման պահը, որոնց կարծիքով «կենսաբանական կյանքը սկիզբ է առնում սաղմնային վիճակից, իսկ սոցիալականը՝ ծնվելու պահից»¹:

Մարդու կյանքի սկզբի հարցին անդրադարձ է կատարվել նաև մի շարք իրավական փաստաթղթերում: Այսպես, Մակ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված Երեխայի իրավունքների հռչակագրի նախաբանը (1959թ. նոյեմբերի 20) սահմանում է. «... երեխան իր մտավոր և ֆիզիկական թերհասունության պատճառով ունի հատուկ պաշտպանության և խնամքի, ներառյալ պատշաճ իրավական պաշտպանության կարիք, ինչպես ծնվելուց առաջ, այնպես էլ հետո»: Նմանատիպ ձևակերպում է օգտագործում նաև Երեխայի իրավունքների մասին 1989թ.-ի կոնվենցիան:

Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1 մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի, որ հարգվի իր կյանքը: Այս իրավունքը պաշտպանվում է օրենքով և, որպես կանոն, բեղմնավորման պահից: Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից»:

Օվյեդոյի Կոնվենցիան Մարդու իրավունքների և մարդկային էակի արժանապատվության պաշտպանության մասին, կապված կենսաբանության և բժշկության ձեռքբերումների կիրառման հետ, (1997թ.-ի ապրիլի 4) անդրադառնում է էմբրիոնների վրա «in vitro» (երբ փորձը կատարվում է «փորձանոթում»՝ կենդանի օրգանիզմից դուրս) հետազոտություններին՝ համաձայն որի. «1. Այն դեպքերում, երբ օրենքը թույլ է տալիս էմբրիոնների «in vitro» հետազոտություն, այն պետք է նաև ապահովի էմբրիոնների պատշաճ պաշտպանությունը: 2. Արգելվում է մարդկային էմբրիոնների ստեղծումը հետազոտական նպատակներով»:

Կյանքի իրավունքի սկզբի հետ կապված հարցերին, ի թիվս այլ հեղինակների, անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախկին դատավոր պրոֆեսոր Կովլերը՝ համաձայն որի՝ «ժամանակակից իրավունքը վճռականորեն ամ-

¹ Ст'ю О. Г. Селихова, Конституционно-правовые проблемы осуществления права индивидов на свободу и личную неприкосновенность, диссертация, Екатеринбург, 2002, էջ 73:

րագրում է այլ սահմանագիծ. մարդու կյանքը սկսվում է բեղմնավորված ձվաբջջից»¹: Այս կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմանը մարդու կյանքի սկզբի առնչությամբ:

Այսպես, Եվրոպական դատարանի սահմանած ընդհանուր դիրքորոշման համաձայն՝ ո՛չ ցանկալի է և ո՛չ էլ հնարավոր վերացական պատասխան տալ այն հարցին, թե արդյոք չծնված երեխան Կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով հանդիսանո՞ւմ է անձ: Հ.-ն ընդդեմ Նորվեգիայի գործով Եվրոպական դատարանը գտել է, որ հարկ չկա որոշելու՝ «արդյո՞ք սաղմը կարող է օգտվել Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին նախադասությամբ երաշխավորվող պաշտպանությունից», սակայն չի բացառում այն հնարավորությունը, որ «որոշակի հանգամանքներում դա այդպես էլ կլինի, չնայած բարձր պայմանավորվող կողմերի շրջանում զգալի տարածայնություն կա այն հարցի շուրջ, թե արդյոք կամ ի՞նչ պատճառով է 2-րդ հոդվածը պաշտպանում չծնված կյանքը»: Ղատարանի համոզմամբ նման զգայուն հարցում բարձր պայմանավորվող կողմերը պետք է պահպանեն գործողության որոշակի ազատություն²: Թայերն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով Ղատարանը նշել է, որ կյանքի սկզբնավորման պահը որոշելու խնդիրն առանձին երկրների հայեցողության սահմաններում է: Ընդհանուր առմամբ տվյալ ոլորտում պետությունները պետք է ունենան նման իրավասություն՝ անկախ Կոնվենցիայի էվոլյուցիոնիստական մեկնությունից՝ հիմնված այն համոզմունքի վրա, որ այն «գործող փաստաթուղթ է, որը պետք է մեկնաբանվի այսօրվա պահանջներին համապատասխան»³:

Վերլուծելով արտասահմանյան երկրների օրենսդրությունը՝ մենք հանգում ենք այն եզրակացությանը, որ վերջիններիս մեծ մա-

¹ Ст'я Г. Б. Романовский, Начало жизни человека в уголовном праве, // Уголовно-правовые меры борьбы с преступностью, N 3(21), 2012, էջ 47, մեջբերումն ըստ՝ А. И. Ковлер, Антропология права, Москва, 2002, էջ 480:

² Ст'я Էլիսբեր Մոուրեյ, Գործեր և նյութեր. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, Երևան, 2010, էջ 107:

³ Ст'я Էլիսբեր Մոուրեյ, նշված աշխատությունը, էջ 108:

սը էմբրիոնի կյանքի իրավունքի հետ կապված բացարձակ կամ չափավոր տեսության հետևորդներ են: Այսպես, Իռլանդիայի Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «Պետությունը ճանաչում է չծնված երեխայի կյանքի իրավունքը և ... իր օրենքներում երաշխավորում է հարգանք այդ իրավունքի նկատմամբ և, հնարավորության սահմաններում, իր օրենքներով պաշտպանում և սատարում է այդ իրավունքին»: Նման ձևակերպում առկա է նաև Չեխիայի Հանրապետության Սահմանադրության 6-րդ հոդվածում:

Գերմանիայում ընդունված սկզբունքի համաձայն՝ մարդու կյանքը սկսվում է բեղմնավորման պահից: Ֆրանսիայում 2000թ. հունվարին առողջապահական օրենսդրության փոփոխման առնչությամբ օրենսդիրը հայտարարել է, որ մարդկային էակի կյանքը պետք է պաշտպանվի դրա դրսևորման առաջին նշանների պահից¹:

Տարիներ առաջ ԱՄՆ միայն երկու նահանգում էր, որ հղի կնոջ սպանությունը դիտվում էր երկու անձանց սպանություն կամ պտղի սպանություն, եթե պտուղը կենսունակ էր: Այնուհետև 17 նահանգներ ընդունեցին, որ պտղի սպանությունը պետք է համարել մարդկային կյանքից ապօրինի զրկում: Ընդ որում մի շարք նահանգներ, ինչպես, օրինակ, Մինեսոտան առանձին օրենք նախատեսեց պտղի սպանության մասին: 1984 թվականին փոփոխություն է կատարվել Մասաչուսեթս նահանգի քրեական օրենսգրքում, ըստ որի պտղի սպանությունը համարվում է կենդանի մարդու սպանություն:

ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի օրենսդրությունը քրեական պատասխանատվություն է նախատեսում էմբրիոնի սպանության համար: 1998թ.-ին Թեննեսի նահանգում Ղևիսի գործով հաստատված է համարվել այն, որ՝

- մարդկային կյանքը սկսվում է բեղմնավորման պահին

- էմբրիոնի հյուսվածքները օժտված են այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են անհատականությունը, բացառիկությունը և զարգացման հնարավորությունը

¹ Տե՛ս E. B. Перевозчикова, E. A. Панкратова, նշված աշխատությունը, էջ 4:

■ մարդկային էմբրիոնը չի հանդիսանում սեփականության իրավունքի օբյեկտ¹:

Սակայն պետք է նշել, որ որոշ նահանգներում պտղի դեմ ոտնձգությունը, անկախ նրանից պտուղը կենսունակ է, թե՛ ոչ, սպանություն չի համարվում:

Բացի այդ՝ Միացյալ Նահանգներում 2002 թ.-ի Երեխաների առողջության ապահովագրություն պետական ծրագրի (SCHIP) համաձայն՝ երեխան սահմանվում է որպես «19 տարին չլրացած անհատ, ներառյալ բեղմնավորումից մինչև ծնունդը ընկած ժամանակահատվածը»: Հետևաբար, դեռ չծնված երեխաները համարվում են քաղաքացիներ, որոնք ունեն բժշկական ապահովագրություն և բժշկական սպասարկման իրավունք: Այս ոլորտում ԱՄՆ-ում բավականին հետաքրքիր դատական պրակտիկա է առկա: Այսպես, Ջեֆերսոնը ընդդեմ Գրիֆինի նախադեպային գործով Ջորջիա նահանգի Գերագույն դատարանը հաստատել է ստորադաս դատարանի վճիռը, որով հղի կինը պետք է ենթարկվի հարկադիր կեսարյան հատման երեխայի կյանքը փրկելու համար: Իր որոշման մեջ դատարանը գտել է, որ կենսունակ պտղի պետական պաշտպանության անհրաժեշտությունը գերակշռում է հղի կանանց բժշկական օգնությունից հրաժարվելու իրավունքը և, փաստորեն, չեղյալ է հայտարարում ծնողական ինքնավարության սկզբունքը՝ պարտադրելով մայրերին պաշտպանելու երեխայի կյանքը: Հարկ է նաև նշել, որ դատարանի որոշումը վերաբերում էր միայն կենսունակ պտղին, այսինքն՝ այն երեխային, որը սկզբունքորեն կարող է ինքնուրույն գոյություն ունենալ մոր մարմնից դուրս, նույնիսկ եթե նրա կյանքը պահպանվում է արհեստականորեն: Սա է այսօր ամերիկյան դատական պրակտիկայում առավել տարածված մոտեցումը²:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի Դաշնությանը, ապա 2011թ.-ի նոյեմբերի 21-ի «ՌԴ քաղաքացիների առողջության պահպանու-

¹ Տե՛ս E. B. Перевозчикова, E. A. Панкратова, նշված աշխատությունը, էջ 4:

² Տե՛ս K. H. Свитнев, Статус эмбриона: правовые и морально-этические аспекты, // Правовые вопросы в здравоохранении, N 7, Москва, 2011, էջ 51-52:

յան հիմունքների մասին» դաշնային օրենքի 53-րդ հոդվածի համաձայն. «Երեխայի ծնվելու պահի հանդիսանում է ծննդաբերության միջոցով պտղի՝ մոր օրգանիզմից անջատվելու պահը»: ՌԴ Առողջապահության նախարարության 2011թ.-ի դեկտեմբերի 27-ի հրամանով հաստատվել են ծնվելու բժշկական չափանիշները, որոնց թվին դասվում են.

1) հղիության 22 շաբաթական կամ ավելի ժամկետը

2) ծնվելու պահին երեխայի մարմնի կշիռը՝ 500 գ. կամ ավելի (կամ 500գ.-ից պակաս մեկից ավելի պտուղների առկայության պարագայում)

3) ծնվելու պահին երեխայի մարմնի երկարությունը՝ 25 սմ կամ ավելի (այն պարագայում, երբ ծնվելու պահին երեխայի մարմնի քաշը հայտնի չէ):

Սակայն այս ձևակերպումը անթերի չէ և տարբեր քննադատությունների է հանգեցնում: Մասնավորապես, եթե ելնում ենք վերը նշված նորմերի ընդհանուր տրամաբանությունից, ապա մոր մահը ինքնաբերաբար հանգեցնում է նաև նրա օրգանիզմում գտնվող երեխայի մահվան, քանի որ ՌԴ օրենսդրությունը պտուղը համարում է կնոջ օրգանիզմի մաս, քանի դեռ այն չի անջատվել ծննդաբերության միջոցով, կամ 500գ.-ից թեթև քաշով ծնված երեխան չի համարվի կենդանի ծնված և բժիշկների համար անգամ պարտականություն չի առաջացնի պայքարել այդ երեխայի կյանքի համար: Այսպես, օրինակ, 2009թ.-ին 41-ամյա Ջեյն Սոլիմանը՝ գեղասահքի Բրիտանիայի նախկին չեմպիոնը, ծննդաբերեց իր աղջկան բժիշկների կողմից նրա ուղեղի մահվան փաստը արձանագրելուց երկու օր անց: Այդ երկու օրվա ընթացքում բժիշկները արհեստականորեն պահպանում էին կնոջ կյանքը, իսկ երեխային հատուկ դեղամիջոցներ էին ներարկում՝ վերջինիս թոքերը ինքնուրույն կենսագործունեությանը պատրաստելու համար: Երկու օր անց երեխան բարեհաջող լույս աշխարհ եկավ կեսարյան հատումի միջոցով: Մեկ այլ դեպքում Գերմանիայի Գետինգենի բժշկական համալսարանի մասնագետներին հաջողվել էր փրկել 275 գ. քաշով անհաս նորածնին¹: ՌԴ օրենսդրության տեսանկյունից այդպիսի պտուղը չի համապատասխանում կենդանի ծնվելու չափանիշներին:

¹ Տե՛ս Դ.Б. Романовский, նշված աշխատությունը, էջ 44:

Կյանքի իրավունքի ծագումը ավելի ու ավելի հաճախ կապվում է ավելի վաղ պահի, քան ֆիզիոլոգիական ծննդյան հետ: Խնդրի էությունն այն է, որ մոր արգանդում ֆիզիոլոգիապես ծնավորված և կենսունակ երեխաների կյանքը բռնի եղանակներով և տարբեր պատճառներով դադարեցվում է հղիության ավելի ուշ ժամկետներում, և նմանատիպ արարքները չեն համարվում կյանքի դեմ ուղղված ոտնձգություններ: Չնայած հեղինակների մի ստվար զանգվածի կարծիքով մարդկային կյանքը սկսվում է բեղմնավորման պահից, և հետևաբար մարդու կյանքի քրեաիրավական պաշտպանությունը պետք է սկսվի երեխայի ծնվելուց շատ ավելի վաղ, սակայն անգամ այս կարծիքի հետ համաձայն չլինելու պարագայում կյանքի քրեաիրավական պաշտպանությունը գոնե պետք է իրականացվի այն պահից սկսած, երբ երեխան պատրաստ է ինքնուրույն կյանքի մոր օրգանիզմից դուրս:

Այժմ ինքներս մեզ հարց տանք, թե ինչպիսին է դեռ չծնված սաղմի իրավական պաշտպանությունը մեր երկրում:

ՀՀ քրեական իրավունքում կյանքի սկզբնական պահ ընդունված է համարել ֆիզիոլոգիական ծննդաբերության գործընթացի սկիզբը: Բայց և այնպես, նշված դիրքորոշումը ճշգրտման կարիք ունի: Բանն այն է, որ ծննդաբերությունը՝ որպես որոշակի ֆիզիոլոգիական գործընթաց, բաղկացած է իրար համապատասխանաբար հաջորդող երեք հիմնական փուլերից: Դրանցից առաջինն ուղեկցվում է երկունքի ցավերով, որոնք առաջանում են արգանդի մկանների կրճատումների հետևանքով: Երկրորդ փուլը սկսվում է արգանդից պտղի դուրս մղումով և վերջանում բուն ծնունդով, երբ երեխան սկսում է ինքնուրույն շնչել և արձակում է առաջին ճիչը: Ուստի իրավաբանական գրականության մեջ գերակշռող մոտեցման համաձայն՝ քրեաիրավական առումով մարդու կյանքի սկզբնական պահ ասելով՝ պետք է հասկանալ երկունքի ցավերի սկիզբը: Վերջինս էլ չի կարող հավասարազոր լինել երեխայի արտարգանդային ինքնուրույն գոյության սկզբնական պահին¹:

Այսինքն, մեր օրենսդրությունը պտղի դեմ կատարվող ոտնձգությունը չի դիտում որպես մարդու դեմ կատարվող ոտնձգություն, անգամ եթե պտուղը լրիվ կենսունակ է, օրինակ՝

¹ Տե՛ս ՀՀ քրեական իրավունքի բուհական դասագիրք, հատուկ մաս, Երևան, 2007, էջ 38-39:

ծնվելուն մնացել է մի քանի օր: Այս դեպքում, եթե ինչ-որ մեկը դիտավորյալ հարվածում է հղի կնոջը, որպեսզի վերջինս կորցնի երեխային, ապա արարքը որակվում է որպես կնոջ առողջությանը ծանր վնաս պատճառել: Բայց մի՞թե պետք է պաշտպանության տակ առնել նաև կենսունակ մարդկային պտուղը, երբ հանցագործի արարքը ուղղված է հենց կենսունակ պտղի դեմ, որը գրեթե ձևավորված մարդկային օրգանիզմ է:

Փաստորեն պտղին կյանքից զրկելը ինքնուրույն քրեական պատասխանատվություն չի առաջացնում, քանի որ վերջինս իրավունքի սուբյեկտ չէ: Ստացվում է, որ մարդը համարվում է իրավունքի սուբյեկտ, և նրա իրավունքները պաշտպանվում են ծնվելու պահից, այսինքն՝ մինչև ծնվելը մարդն իրավական տեսանկյունից հետաքրքրություն չի ներկայացնում:

Էմբրիոնի մոտ մարդկային կարգավիճակի հերքումը հանգեցնում է վերջինիս նկատմամբ անսահմանափակ մանիպուլյացիաների, հատկապես, որ բազմաթիվ վերարտադրողական տեխնոլոգիաներ այսօր դա թույլ են տալիս: Ամեն դեպքում էմբրիոնի նկատմամբ վերաբերմունքը չպետք է հիմնվի «գյուղատնտեսական» մոտեցման վրա. բավական չէ ամրագրել միայն մարդու կյանքի իրավունքը վերջինիս զարգացման բոլոր փուլերում, անհրաժեշտ է դրա երաշխիքները սահմանել քրեական իրավունքում՝ առանձին հանցակազմերի տեսքով:

Թե՛ էմբրիոնների, թե՛ պտղի և թե՛ առավել ևս կենսունակ մարդկային պտղի պաշտպանության առումով մեր երկրում քայլեր դեռևս չեն ձեռնարկվում: Մենք առաջարկում ենք ՀՀ քր. օր.-ի 104 հոդվածի իմաստով կյանքի սկզբի պահ համարել կենսունակության չափանիշը, միաժամանակ ՀՀ Սահմանադրության կյանքի իրավունքի մասին հոդվածը լրացնել հետևյալ ձևակերպմամբ՝ «Պետությունը ապահովում է մարդու կյանքի պաշտպանությունը բեղմնավորման պահից»:

Ամփոփելով վերը նշվածը՝ նշենք, որ փորձանոթում կամ մոր արգանդի մեջ գտնվող մարդկային կյանքը չհարգելը հանգեցնում է նաև ծնվելուց հետո մարդկային կյանքի նկատմամբ անտարբերության:

GoharSimonyan
PhD student of the Chair of Criminal Law, YSU

BEGINNING OF HUMAN LIFE: CRIMINAL REGULATION

Various controversial opinions on the clear determination of the beginning of human life are discussed in the article presented. In light of the issue risen, in depth analysis of a number of international legal documents is conducted. The author thinks that the beginning of human life starts earlier, than the birth of a child. As a result a number of legislative proposals are suggested by the author.

Гоар Симонян
Аспирант кафедры уголовного права ЕГУ

НАЧАЛО ЧЕЛОВЕЧЕСКОЙ ЖИЗНИ: УГОЛОВНО ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ

В статье были представлены различные спорные мнения о четком обозначении начала человеческой жизни, были изучены ряд международно-правовых документов. В ходе изучения началом человеческой жизни было предложено считать не рождение ребенка, а более ранний этап развития человеческого эмбриона и были сделаны некоторые законодательные предложения, нацеленные на уголовно правовую защиту еще не родившегося плода.

Բանալի բառեր` մարդ, կյանք, սկիզբ, էմբրիոն, պտուղ, սաղմ, երեխա, պաշտպանություն, կենսունակություն, հղիություն:

Keywords: human being, life, beginning, embryo, fetus, unborn child, child, protection, viable, pregnancy.

Ключевые слова: человек, жизнь, начало, эмбрион, плод, ребенок, защита, жизнеспособность, беременность.

**ՊԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՎԻԿՏԻՄԱՅՆԱՑՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՈՒՂՂԻՉ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ**

Հանցավորության և վիկտիմալոգիական² գործոնների վերլուծության վերջնական նպատակը հանցավորության կանխարգելիչ միջոցառումների կատարելագործումն է հանցագործության հնարավոր և առկա զոհերի վրա անմիջական ներգործության միջոցով:

Հնարավոր է, որ հանցավորության կանխարգելման ոլորտում մեր անհաջողությունները պայմանավորված են նրանով, որ հարյուրամյակների ընթացքում ամբողջ ուշադրությունը սևեռվել է արարքի կամ հանցագործի և ոչ երբեք զոհի վրա³:

Պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելումը տարբեր սուբյեկտների օրենսդրորեն կարգավորված, նպատակաուղղված գործնելությունը՝ ուղղված ազատագրկման վայրերում դատապարտյալների վիկտիմիզացման դետերմինանտների հայտնաբերմանը, ուսումնասիրմանը, չեզոքացմանը և վերացմանը: Դատապարտյալների վիկտիմիզացիայի կանխարգելումը, մի կողմից, հանդես է գալիս որպես կանխարգելիչ գործնության ինքնուրույն տեսակ, իսկ մյուս կողմից՝ ընդհանուր պենիտենցիար հանցավորության կանխարգելման ենթատեսակ: Լինելով ազատագրկման վայրերում հանցավորության կանխարգելման ինքնուրույն տեսակ՝ այն ուղղված է պենիտենցիար հանցավորության դեմ պայքարի մոր եղանակների և միջոցների որոնմանը:

Պենիտենցիար վիկտիմիզացիայի նպատակն է ազատագրկման վայրերում հանցավոր ոտնձգության պոտենցիալ զոհերի պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխումը, ինչպես նաև ընթացքի մեջ գտնվող վիկտիմիզացիոն գործընթացների ընդհատու-

¹ ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ.Ս. Խաչիկյան:

² Վիկտիմալոգիան ուսմունք է հանցագործության զոհի մասին:

³ St' u, A. Фаттах, Викимнология, что это такое и какого ее будущее // Международное криминологическое обозрение: Т.21. N 2-3: Париж, 1967, էջ 51:

մը:

Կարծում ենք՝ նշված նպատակին կարելի է հասնել դատապարտյալների պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելման խնդիրներով պայմանավորված մի շարք փոխհամաձայնեցված միջոցների կիրառման արդյունքում միայն: Եթե նպատակը ցանկալի արդյունքը պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելումն է, ապա լուծումը որոշակի գործողությունների և միջոցառումների ամբողջությունն է, որոնց իրագործումը պետք է նախատեսվի խիստ որոշակի ժամանակահատվածում:

Դատապարտյալների պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելման գլխավոր խնդիրներից ենք համարում հետևյալները՝

ա) Հանցավոր ոտնձգություններից անձի պաշտպանության ապահովում, որպեսզի հանցավորության քրեածին ազդեցությունը՝ իր բոլոր դրսևորումներով, լուրջ խոչընդոտներ չստեղծի անձի հիմնական, կենսական կարևոր նշանակություն ունեցող իրավունքների իրականացման համար¹:

բ) Առավել խոցելի օբյեկտների պաշտպանության ապահովում /դատապարտյալների կյանքը և առողջությունը/:

գ) Պենիտենցիար հիմնարկներում դատապարտյալների վիկտիմիզացիայի կանխարգելմանն ուղղված գործունեության արդյունավետ կազմակերպում և իրականացում:

դ) Պենիտենցիար հիմնարկներում առկա հանցավոր դրսևորումների կանխարգելմանն ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների ակտիվացում:

ե) Խախտված իրավունքների վերականգնում, հասցված վնասի հատուցում, կրկնակի պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխում:

Պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելումը գործնականում կարևոր խնդիր է, որը պետք է դրվի քրեակատարողական համակարգում բարեփոխումների իրականացման հիմքում: Այս

¹ Տե՛ս, *Алексеев А.И., Герасимов С.И., Сухарев А.Я.* Криминологическая профилактика: теория, опыт, проблемы: Монография. М.: НОРМА, 2001. էջեր 165-171; *Зубков А.И., Филимонов О.В.* Актуальные проблемы российской уголовной политики // Проблемы укрепления законности и борьбы с пре- зации ступностью на региональном уровне. Смоленск: Смолен, ф-л юрид. ин-та МВД РФ, 1999. էջեր 116-119 :

նպատակի իրագործումը պահանջում է կազմակերպական և իրավական մի շարք խնդիրների լուծում՝ կապված կանխարգելիչ գործունեություն իրականացնող սուբյեկտների համար ռազմավարության և կոնկրետ ծրագրերի մշակման հետ, ինչպես նաև պատժի կրման այնպիսի պայմանների ստեղծում, որոնք թույլ կտան առավելագույնս բացառել դատապարտյալների շրջանում վիկտիմայնություն և հակահասարակական ուղղվածություն ձևավորող միջավայրի բացասական ազդեցությունը:

Անդրադառնալով պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելման կազմակերպչական ապահովման խնդրի ուսումնասիրմանը: Կարծում ենք՝ ազատագրված վայրերում զոհերի վերաբերյալ տվյալների բացակայությունը նվազեցնում է պենիտենցիար հանցավորության դեմ պայքարի արդյունավետությունը:

Ազատագրված վայրերում զոհին բնութագրող տվյալների հավաքման անհրաժեշտությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, մասնավորապես՝

ա/ Վիկտիմիզացիայի գործընթացը և հանցագործության իրական պատկերը կարելի է վերականգնել զոհի անձի և վարքագծի ուսումնասիրության շնորհիվ. հանցագործը հաճախ խեղաթյուրված կերպով է ներկայացնում կատարվածը, առավել ևս այն դեպքում, երբ զոհն այլևս կենդանի չէ:

բ/ Անձի պենիտենցիար վիկտիմիզացմանը հաճախ նախորդում են իրավիճակներ, որոնք պայմանավորված են զոհի անձի և վարքագծի առանձնահատկություններով: Դրանց անտեսումը կարող է դառնալ հանցագործության իրական պատկերի խեղաթյուրման, հետաքննության ոչ լիարժեք իրականացման և արարքի սխալ որակման պատճառ:

գ/ Ձոհի կողմից ստացված տեղեկատվության օբյեկտիվության գնահատումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ հայտնի են նրա անձնային առանձնահատկությունները, երևույթն ընկալելու հնարավորությունները, սուբյեկտիվ վերաբերմունքն իրականությանը, հետաքննությանն աջակցելու ցանկությունը կամ դրա բացակայությունը և այլն:

դ/ Ձոհերի անձնային և վարքագծային առանձնահատկությունների իմացությունը անհրաժեշտ է նրանց անձնական անվտանգության ապահովման ուղղությամբ հիմնավոր որոշումների ընդուն-

ման, ինչպես նաև կրկնակի վիկտիմիզացիայի կանխարգելման համար:

Ե/ Վիկտիմալոգիական բնույթի տվյալները ոչ պակաս կարևոր են, քան հանցագործների վերաբերյալ ունեցած տեղեկատվությունը: Ձոռը էական դերակատարում ունի հանցածին իրավիճակի ստեղծման և զարգացման մեխանիզմում, հետևապես անհրաժեշտ է կատարել կրիմինալոգիական առումով զոհերի դերի վերլուծություն և հաշվի առնել վիկտիմալոգիական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները՝ ինչպես կոնկրետ քրեական գործեր, այնպես էլ ընդհանրապես պենիտենցիար հանցավորությունն ուսումնասիրելիս¹:

Առաջիններից մեկը Ս.Ս. Օստրոումովն է խոսել իրավական վիճակագրության համակարգում առանձին բաժնի ձևավորման անհրաժեշտության մասին, որի նպատակը հանցագործության զոհի անձի և վարքագծի քանակական բնութագրի վերաբերյալ տվյալներ ստանալն է²:

Վ.Ս.Ուստինովը և Ա.Ա. Գլուխովան համաձայնվել են նշված առաջարկությանը, և շրջանառության մեջ է դրվել «վիկտիմալոգիական վիճակագրություն» հասկացությունը՝ տիրող հանցածին վիճակի մասին հավաստի և լրիվ տեղեկատվություն ստանալու համար: Վիկտիմալոգիական վիճակագրությունը պետք է դիտարկել որպես իրավական վիճակագրության մաս, որն ուսումնասիրում է զոհի անձի և վարքագծի քանակական բնութագիրը՝ հանցագործությունների կանխարգելման, կանխման և բացահայտման նպատակով³:

Այս կապակցությամբ առաջարկում ենք ՀՀ Արդարադատության նախարարության Քրեակատարողական ծառայության՝ Կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնարկների Ներքին

¹ Տե՛ս, *Ривман Д.В.* Использование виктимологических данных в предупреждении преступлений // Вопросы профилактики преступлений. JL., 1980, էջ 48:

² Տե՛ս, *Остроумов С.С.* Советская судебная статистика. (Часть общая и специальная). М.: МГУ, 1976, էջ 12:

³ Տե՛ս, *Устинов В.С., Глухова А.А.* Понятие и значение виктимологической статистики // Вестник Нижегородского гос. ун-та им. Н.И. Лобачевского. Н.Новгород. 1999, էջ 34:

կանոնակարգը¹ հաստատելու մասին ՀՀ Կառավարության 2006թ. N 1543-Ն Որոշումը համալրել «ՔԿՀ-ներում հանցագործության զոհերի մասին տվյալներ» բաժնով, որը կներառի տվյալներ զոհերի ժողովրդագրական հատկանիշների, վիկտիմիզացման պատճառ հանդիսացած հանցագործության տեսակի, հասցված վնասի բնույթի և չափի, վնասը հասցնելու պահին զոհի վիճակի վերաբերյալ:

Ազատագրված վայրերում զոհերի վերաբերյալ նշված նորանվանության ներդրման արդյունքում ստացված ընդհանրացնող տվյալները կօգնեն զոհի միջոցով գտնել հանցագործությունը կատարած դատապարտյալին: Եթե հանցագործները մի շարք դեպքերում ընտրում են իրենց զոհերին ըստ վերջիններիս անձնային և վարքագծային որոշակի հատկանիշների / նրանց ընտրությունը կրում է տիպական բնույթ/, ապա կան բոլոր հիմքերը ենթադրելու, որ հանցագործները ևս ունեն իրենց բնորոշ, տիպական առանձնահատկությունները. հանցագործի որոնումները սկսվում են սահմանափակ թվով կասկածյալների վերաբերյալ տվյալների ուսումնասիրությունից:

Այդպիսով, իրավական վիճակագրության մեջ վիկտիմալոգիական վիճակագրության ներառումը պետք է դառնա պետական քաղաքականության մի մասը՝ ուղղված պենիտենցիար հանցավորության կառուցվածքի, շարժընթացի, մակարդակի, վիճակի նկատմամբ հսկողության իրականացմանը:

ՀՀ Քրեակատարողական օրենսգրքի հոդված 2-ում օրենսդիրը քրեակատարողական օրենսդրության խնդիրներից է համարում դատապարտյալի ուղղման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, ինչը ենթադրում է դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հնարավորության բացառում:

Նշված խնդրի արդյունավետ լուծումը կախված է պենիտենցիար հանցավորության կանխարգելմանն ուղղված միջոցառումների համակարգից, որը պետք է ունենա համապատասխան իրավական կարգավորում:

Պենիտենցիար հանցավորության կանխարգելում իրականացնող սուբյեկտների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանցից ոչ մեկում չկա

¹ Այսուհետ՝ Ներքին կանոնակարգ:

ցուցում վիկտիմալոգիական ուղղվածության միջոցառումների անցկացման վերաբերյալ: Բացի այդ, այնպիսի վիկտիմալոգիական հասկացություններ, ինչպիսիք են «վիկտիմիզացիայի կանխարգելում», «դատապարտյալների վիկտիմային վարքագիծ», «վիկտիմայնությամբ աչքի ընկնող դատապարտյալներ» և այլն՝ թեկուզև այլ ձևակերպմամբ, նշված ակտերում չեն հանդիպում:

Հիմնական գերատեսչական նորմատիվ իրավական ակտը, որով որոշվում է քրեակատարողական համակարգի կանխարգելիչ գործնետության կազմակերպման կարգը ՀՀ Արդարադատության նախարարի 30 մայիսի 2008թ. N 44-Ն հրամանն է «Կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործնետության կարգը հաստատելու մասին»¹: Այս ակտում ուղղակիորեն նշված է, որ դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործնետությունն ուղղված է դատապարտյալների սոցիալական և հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրմանը, ախտորոշմանը և կարիքների ձևավորմանը: Այդ բոլոր տվյալների հիման վրա կազմվում է դատապարտյալի ուղղման գործընթացի ծրագիր: Այդպիսով հանցագործության կանխարգելումը ըստ էության ուղղված է պոտենցիալ հանցագործ դատապարտյալների ստիգմատիզացմանը, իսկ դրա իրականացման միջոցները հիմնականում կրում են միակողմանի բնույթ՝ անտեսելով գոհի դերը հանցավոր վարքագծի դրսևորման մեխանիզմում: Հետևաբար դատապարտյալների պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելման նպատակով համալիր և ընդգրկուն միջոցների կիրառման բացակայությունը հանգեցնում է պոտենցիալ գոհերի շահերի և իրավունքների անտեսման:

Շարադրվածը վկայում է դատապարտյալների պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելմանն ուղղված գործնետությունը կարգավորող իրավական հիմքի մշակման անհրաժեշտության մասին:

Ներկայումս մեր հանրապետությունում տեղի է ունենում ՔԿՀ-ների՝ միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխանեցման գործընթաց, որն ուղղված է նաև ազատագրված վայ-

¹ Այսուհետ՝ Գործունեության Կարգ

րերում պատիժ կրող անձանց անվտանգության ապահովմանը: Նշված բարեփոխումների շրջանակներում, կարծում ենք, բավական արդիական և նպատակահարմար կլինի «Գործնության Կարգը» լրացնել վիկտիմալոգիական կանխարգելման միջոցների համակարգով: Նման փոփոխությունները թույլ կտան մշակել ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելման ռազմավարության ծրագիր, կապահովեն մշված գործնությունն իրականացնող սուբյեկտների գործառույթների իրականացման փոխհամաձայնվածությունը, անընդհատությունը:

Առաջարկում ենք «Գործնության Կարգերում կատարել հետևյալ փոփոխությունները.

«Ընդհանուր դրույթներ» բաժինը անհրաժեշտ է լրացնել քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց վիկտիմիզացման կանխարգելմանն ուղղված հիմնական սկզբունքներով և նպատակներով:

Վիկտիմիզացման կանխարգելումը պետք է ուղղված լինի անձանց օրինական շահերի պաշտպանությանը և նրանց խախտված իրավունքների վերականգմանը, դատապարտյալների վիկտիմիզացման դետերմինանտների բացահայտմանը, վերացմանը և չեզոքացմանը, ինչպես նաև այն անձանց հայտնաբերմանը, ովքեր իրենց վարքագծային և անձնային առանձնահատկությունների «շնորհիվ» մեծ հավանականությամբ կարող են հայտնվել պենիտենցիար հանցագործության զոհի դերում:

Վիկտիմիզացման կանխարգելումը պետք է ապահովվի ՔԿՀ-ներում պատիժ կրող դատապարտյալների նկատմամբ հուսալի պաշտպանության, մեկուսացման և հսկողության իրականացման միջոցով, նրանց՝ օրենքով սահմանված կարգով տեղաբաշխման, վիկտիմիզացիային նպաստող գործոնների բացահայտման, դրանց չեզոքացմանն ուղղված միջոցների մշակման և իրականացման, այն անձանց բացահայտման միջոցով, որոնց վարքագիծը վերջիններիս համար կարող է վիկտիմիզացման վտանգ ստեղծել, ինչպես նաև դաստիարակչական, կրթական և անձնային անվտանգության ապահովման միջոցների ձեռնարկման միջոցով՝ ուղղված նրանց վիկտիմային վարքագծի կանխմանը:

Դատապարտյալների վիկտիմիզացիայի կանխարգելման նպատակը պետք է լինի ինչպես հնարավոր զոհի վիկտիմիզացիա-

յի, այնպես էլ արդեն սկսված վիկտիմիզացիոն գործընթացի կանխումը:

Պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելումը պետք է հիմնված լինի օրինականության, մարդասիրության, համակարգվածության, տարբերակման և անհատականացման, ինչպես նաև վիկտիմիզացիայի կանխարգելման միջոցների ժամանակին և բավարար կիրառման սկզբունքների վրա:

Օրինականության սկզբունքը նշանակում է, որ վիկտիմիզացիայի կանխարգելումը պետք է իրականացվի ՀՀ օրենսդրության խիստ պահպանմամբ, իսկ կանխարգելիչ միջոցառումների կիրառումը պետք է բխի այն անձանց օրինական շահերից, ում նկատմամբ դրանք կիրառվում են: Վիկտիմիզացիայի կանխարգելման **մարդասիրության** սկզբունքը արգելում է ՔԿՀ-ներում գտնվող անձանց ենթարկել ֆիզիկական տանջանքների կամ նվաստացնել մարդկային արժանապատվությունը:

Վիկտիմիզացիայի կանխարգելման **համակարգային** սկզբունքը ենթադրում է սոցիալական, իրավական, հոգեբանական, կրթադաստիարակչական, կազմակերպչական, տեխնիկական և այլ բնույթի միջոցների փոխկապակցված իրականացում՝ ուղղված վիկտիմիզացման վտանգ ստեղծող գործոնների վերացմանը, ՔԿՀ-ներում պատիժ կրող անձանց վիկտիմային վարքագծին նպաստող պատճառների վերացմանը, վիկտիմիզացիայի կանխարգելում իրականացնող սուբյեկտների համագործակցությամբ:

Վիկտիմիզացիայի կանխարգելման միջոցների **տարբերակված և անհատական կիրառման սկզբունքը** նշանակում է դրանց կիրառումը՝ հաշվի առնելով անձանց անձնային առանձնահատկությունները, նրանց վիկտիմային վարքագծի բնույթը:

Կանխարգելիչ միջոցների **ժամանակին և բավարար կիրառման սկզբունքը** ենթադրում է նշված միջոցների կիրառումը վիկտիմիզացման բավականին վաղ շրջանում և այնպիսի ինտենսիվությամբ, որը թույլ կտա կանխել նշված գործընթացը:

Առաջարկում ենք Գործնության Կարգի «Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների իրականացումը դատապարտյալների հետ» գլխի 42-րդ կետի 7-րդ ենթակետը ներկայացնել հետևյալ խմբագրությամբ՝ «... անհրաժեշտության դեպքում՝

դատապարտյալների շրջանում հնարավոր կոնֆլիկտային կամ վիկտիմային իրավիճակների կանխարգելման և լուծման ուղղությամբ անհատական և խմբային խորհրդատվություն տրամադրելը: Կոնֆլիկտների և վիկտիմային իրավիճակների կանխարգելման աշխատանքներն իրականացվում են պարբերաբար: Կոնֆլիկտների և վիկտիմային իրավիճակների կանխարգելումը ներառում է դատապարտյալների շրջանում միջանձնային լարված հարաբերությունների բացահայտում, որն իրականացվում է հետևողական դիտարկումների և անհատական զրույցների միջոցով...»:

Առաջարկում ենք նշված գլխում նախատեսել վիկտիմիզացիայի ենթարկվելու ռիսկայնության բարձր աստիճան ունեցող դատապարտյալների առանձին խմբերի ստեղծում և նրանց ընդգրկում «վիկտիմիզացիայի ենթարկվելու ռիսկայնության բարձր աստիճան ունեցող դատապարտյալների հաշվառման» մատյանում՝ նրանց նկատմամբ նպատակաուղղված ծրագրեր իրականացնելու նպատակով:

Առաջարկում ենք նաև «Դատապարտյալների ախտորոշումը, գնահատումը և բնութագրումը հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնելիս» գլխում նախատեսել նաև միջոցառումներ՝ ուղղված այն դատապարտյալների բացահայտմանը, որոնց՝ պենիտենցիար հանցավորության զոհ դառնալու հավանականությունը մեծ է՝ ելնելով իրենց վարքագծային և անձնային առանձնահատկություններից: Անհրաժեշտ է նաև նշված անձանց նկատմամբ իրականացնել դաստիարակչական, ուսուցողական, անձնական անվտանգության ապահովմանն ուղղված աշխատանքներ՝ վերջիններիս դեվիանտ վարքագիծը կանխելու նպատակով:

Անհատական մակարդակում վիկտիմիզացիայի կանխարգելման հիմնական միջոցների թվին պետք է դասել անհատական զրույցների անցկացումը, նրա վրա բացասական ազդեցություն թողնող կապերից և պայմաններից մեկուսացումը, նշված անձանց սոցիալական և հոգեբանական օգնության տրամադրումը:

Բացի այդ «Գործունեության Կարգը» անհրաժեշտ է լրացնել «Պաշտոնատար անձանց պատասխանատվությունը կանխարգելիչ գործունեության իրականացման ընթացքում թույլ տված իրավախախտումների համար» բաժնով, որտեղ հստակ կերպով պետք է սահմանել պաշտոնատար անձինք, ովքեր միջոցներ ձեռք չեն առել

հանցագործությունների և վիկտիմիզացիայի կանխարգելման ուղղությամբ, ինչպես նաև այն դեպքում, եթե նրանք չարաշահել են իրենց լիազորությունները նշված գործնությունն իրականացնելիս, ենթակա են պատասխանատվության ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Գործունեության Կարգում» առաջարկվող փոփոխությունների կատարումը և դրանց իրականացումը չեն պահանջի հավելյալ նյութական, ֆինասական և կադրային ռեսուրսներ: Նշված փոփոխությունները կօգնեն պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելմանը, կլրացնեն ներկայումս ազատագրկման վայրերում հանցագործությունների կանխարգելմանն ուղղված գործունեության բացերը:

Այդպիսով, «Գործունեության Կարգում» վիկտիմալոգիական բովանդակությամբ փոփոխությունների կատարումը ոչ միայն կամբողջացնի պենիտենցիար հանցավորության կանխարգելմանն ուղղված միջոցառումների համակարգը, կլրացնի իրավական կարգավորման բացերը, այլև կնպաստի պատիժ կրող անձանց կողմից ազատագրկման վայրերում հանցանքների կատարման նվազեցմանը:

Պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելման գործում էական նշանակություն ունի ազատագրկում պատժատեսակի կրման այնպիսի պայմանների օրենսդրական ամրագրումը, որոնց դեպքում պենիտենցիար վիկտիմիզացիայի վտանգը կհասցվի նվազագույնի: Դատապարտյալներին պահելու միայն մարդասիրական պայմանների ստեղծման դեպքում է հնարավոր վերջիններիս ուղղումը, քանի որ կիսաստված և կենցաղային ծանր պայմաններից չարացած դատապարտյալների հետ տարվող դաստիարակչական և կանխարգելիչ բնույթի աշխատանքները պարզապես արդյունավետ չեն լինի: Պետք է հաշվի առնել նաև այն, որ մեծահասակները ավելի քիչ են ենթարկվում դաստիարակչական ազդեցությանը:

Նշված օրինաչափության անտեսման դեպքում դատապարտյալների հետ տարվող դաստիարակչական և կանխարգելիչ բնույթի աշխատանքները վերածվում են անդադար բարոյախրատական զրույցների և պատժիչ միջոցների կիրառման, ինչը երբեք դրական արդյունք չի տա դատապարտյալի ուղղման հարցում:

Ուստի անհրաժեշտ ենք համարում՝

ա/ դատապարտյալների նյութակենցաղային և բժշկական պաշտպանության մակարդակը համապատասխանեցնել միջազգային իրավական ակտերի պահանջներին, առաջին հերթին՝ պատժի կրման հանրակացարանային ձևից անցում կատարել խցայինի, բարելավել պատիժը կրող անձանց բնակարանային պայմանները:

Նշենք, որ ներկայումս պատժի կրման գործող կացարանային կարգը դատապարտյալների վիկտիմիզացմանը նպաստող հիմնական պատճառներից է:

Մեր կողմից կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ պատժի կրման կացարանային ձևից խցայինի անցումը կարող է դրական ազդեցություն ունենալ պենիտենցիար վիկտիմիզացիայի վիճակի վրա: Պատասխանները ներկայացնում ենք աղյուսակի տեսքով՝

Կարծու՞մ եք արդյոք, որ դատապարտյալների վիկտիմիզացման դեպքերը կնվազեն, եթե անցում կատարվի պատժի կրման կացարանային ձևից խցայինի	«Կոշ» ՔԿՀ ներկայացուցիչներ	«Սևան» ՔԿՀ ներկայացուցիչներ
այո	97%	96.5%
ոչ	0%	0%
դժվարանում եմ պատասխանել	3%	3.5%

Այսպիսով, հարցված աշխատակիցների բացարձակ մեծամասնությունը գտնում է, որ պատժի կրման պայմանների բարելավումը կնպաստի պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելման արդյունավետ իրականացմանը:

Նմանատիպ արդյունքներ տվեց նաև ազատազրկման դատապարտված անձանց շրջանում անցկացված հարցումը՝

Պատասխանները ներկայացնում ենք աղյուսակի տեսքով՝

Դուք Ձեզ առավել ապահով կզգաք պատժի կրման խցային, թե՞ հանրակացարանային ձևում	1-ին անգամ ազատազրկման դատապարտվածներ	2 և ավելի անգամ ազատազրկման դատապարտվածներ
այո	80.1%	70%
ոչ	17.9%	24.7%
դժվարանում եմ պատասխանել	2%	4.3%

Հետաքրքիր է այն, որ բացասական պատասխան տված անձանց մեծամասնությունը /67%/ պատասխանը պատճառաբանել է այն փաստով, որ պենիտենցիար հիմնարկի առավել «փակվածությունը» կարող է մեծացնել հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչների կողմից ապօրինի գործողությունների կատարման հնարավորությունը:¹

Այս կապակցությամբ գտնում ենք, որ խցային ձևի անցնելուց հետո պետք է ստեղծվեն հասարակական հսկողություն իրականացնող մարմիններ՝ աշխատանքի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

բ/ Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք անազատության պայմաններում դատապարտյալներին առավելագույնս հնարավորություն կտան ապրել սովորական կյանքով՝ իհարկե առանց պատժի կրման կարգն ու պայմանները խախտելու: Նախ՝ անհրաժեշտ է վերացնել դատապարտյալների կենսագործունեության բոլոր ոլորտները խիստ կարգավորող սահմանափակումները, քանի որ դրանց մեծ մասը հիմնավորվում են կա՛մ օպերատիվության ապահովմամբ, կա՛մ պարզապես վարչակազմի աշխատանքը հեշտացնելու ցանկությամբ:

գ/ Վերանայել հարազատների հետ շփման, ինչպես նաև իրենց կրթական և ինտելեկտուալ մակարդակը բարձրացնելու նպատակով կապի տարբեր միջոցներից օգտվելու սահմանափակումները, մասնավորապես՝ վերանայել հեռախոսազանգերի ժամանակացույցը, ավելացնել դրանց հաճախականությունը, ապահովել հեռախոսազրույցների գաղտնիությունը:

Արդիական ենք համարում նաև դատապարտյալներին «Համացանցից» օգտվելու թույլտվություն տալը: Դա հնարավորություն կտա նրանց օգտվելու իրավական և այլ տվյալների կենտրոնական բազայից, հաղորդագրությունների ուղարկման առավել արագ տեսակներից՝ էլեկտրոնային մամակներ, իրենց իրավունքների և օրի-

¹Տե՛ս, *Волкова Т.Н.* Женская пенитенциарная преступность // Актуальные проблемы уголовного права, криминологии, законодательства и правоохранительной деятельности / Под науч. ред.: Романов А.К. - М.: Дело, 2009, էջ 53:

նական շահերի պաշտպանության դիմում-բողոքներով դիմել իրավասու պետական մարիմներին: Այդ նպատակով առաջարկում ենք ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության՝ ,Կալանավորվածներին պահելու վայրերի և ուղղիչ հիմնաչկների ներքին կանոնակարգը»¹ հաստատելու որոշման IXI գլխում կատարել հետևյալ լրացումները՝

«Տեխնիկական պայմանների առկայության դեպքում դատապարտյալը իր անձնական միջոցների հաշվին համակարգչային սարքերի օգնությամբ կարող է օգտվել համացանցից՝ բացառությամբ այն կայքերի, որոնցում պարունակվող տեղեկատվությանը դատապարտյալներին արգելվում է ծանոթանալ /պոռնկագրական, ազգային և կրոնական թշնամանք հրահրող նյութեր և այլն/ե:

Ե/ Լեռնային Ղարաբաղի տարածքում նախատեսել գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվելու համար նախատեսված բաց ուղղիչ հիմնարկ-բնակավայրերի կառուցում: Կարծում ենք՝ նշված ծրագրի իրականացումը կնպաստի դատապարտյալների զբաղվածության խնդրի լուծմանը, դատապարտյալներին կստիպի կտրվել բանտային ճղճիմ առօրյայից, հեռանալ բանտային ենթամշակույթի նորմերից և ավանդույթներից, ինչը անկասկած կնպաստի հանցավոր ենթամշակույթի ազդեցության թուլացմանը, և հետզհետե վերացմանը: Ասվածը վերաբերում է հատկապես բացասական բնութագրվող ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարած կրկնահանցագործներին: Նշված ծրագրի իրականացման համար, կարծում ենք, անհրաժեշտ է հարկային արտոնություններ տրամադրելու միջոցով խրախուսել գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների գործնության կազմակերպումը նշված շրջաններում: Գտնում ենք, որ դատապարտյալների ուղղման գործընթացը առավել արդյունավետ կլինի, եթե թույլատրվի կին և տղամարդ դատապարտյալների ամուսնությունը և բնակեցումը առանձին **տնեքում**, ինչպես նաև դատապարտյալների ընտանիքների տեափոխումը նշված բնակավայր: Այս ծրագրի իրականացումը կօգնի նաև լու-

¹ Այսուհետ՝ Կանոնակարգ

ծելու ԼԴ-ի ազատագրված տարածքների վերաբնակեցման խնդիրը:

զ/ Կատարել փոփոխություններ իրավական ակտերի այն դրույթներում, որոնք կարող են վիկտիմային նշանակություն ունենալ դատապարտյալների համար: Առաջարկում ենք վերացնել Կանոնակարգի որոշ նորմերի վիկտիմային բնույթը, մասնավորապես՝

Կանոնակարգի կետ 23-ի 15-րդ ենթակետը արգելում է դատապարտյալներին նյութական կամ այլ շահ ստանալու նպատակով զբաղվել թույլատրելի խաղերով, սակայն կանոնակարգը չի սահմանափակում թույլատրելի խաղերով զբաղվելը՝ դատապարտյալների վրա որոշակի պարտականություններ կամ արգելքներ դնելու նպատակով, քանի որ հակառակ դեպքում ևս պարտվողը կարող է ենթարկվել տարաբնույթ ճնշումների, սեռական բռնության և այլն: Առաջարկում ենք կանոնակարգի 23-րդ կետի 15-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Նյութական կամ այլ շահ ստանալու կամ այլ դատապարտյալների վրա որոշակի պարտականություններ կամ որոշակի արգելքներ դնելու նպատակով զբաղվել թույլատրելի խաղերով»:

ե/ Դատապարտյալների պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելման ոլորտում էական դեր ունի նաև հանցագործության զոհերին փոխհատուցում տրամադրելու օրենսդրական կարգավորումը: Թվենք նշված գործնության, մեր կարծիքով, հիմնական ուղիները՝

ա/ «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագրի»¹ դրույթների հիման վրա մշակել «Պենիտենցիար հանցագործության և իշխանության չարաշահման զոհերին օգնություն տրամադրելու» հայեցակարգ՝ ուղղված ազատագրված վայրերում հանցագործության զոհ դարձած դատապարտյալներին սոցիալական, իրավական և նյութական օգնություն ցուցաբերելուն:

բ/ Դատապարտյալներին վիկտիմալոգիական օգնություն ցու-

¹ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 40/34 բանաձևով ընդունված «Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագիր»:

ցաբերելու նպատակով պետական-հասարակական համակարգի ստեղծում և ազատագրկման վայրերում հանցագործության զոհ դարձած դատապարտյալներին փոխհատուցում տրամադրելու կարգ սահմանող դրույթների օրենսդրական ամրագրում: Փոխհատուցում իրականացնելու համար կարելի է ստեղծել հատուկ ֆոնդեր: Ֆոնդերի ֆինանսական միջոցները կարող են ձևավորվել քրեակատարողական հիմնարկներում հանցանք կատարած դատապարտյալների անձնական միջոցներից գանձումներ կատարելու հաշվին:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ հանգում ենք հետևյալին՝

ա/ Պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելումը տարբեր սուբյեկտների օրենսդրորեն կարգավորված, նպատակաուղղված իրավական նշանակություն ունեցող գործունեությունն է՝ ուղղված ազատագրկման վայրերում դատապարտյալների վիկտիմիզացման դետերմինանտների հայտնաբերմանը, ուսումնասիրմանը, չեզոքացմանը և վերացմանը:

բ/ Պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելումը պենիտենցիար հանցավորության կանխարգելման նոր և ինքնուրույն ուղղություն է, որը ըստ մեզ, թույլ կտա առավելագույնս լրիվ և բազմակողմանիորեն օգտագործելու ազատագրկման վայրերում հանցավոր ոտնձգություններից զոհերի պաշտպանության համար նախատեսված բոլոր հնարավորությունները: Պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելման նպատակն է ազատագրկման վայրերում հանցավոր ոտնձգությունների զոհերի ինչպես պոտենցիալ, այնպես էլ առկա վիկտիմիզացիայի կանխումը:

գ/ Նշված նպատակին հասնելու համար առաջնային է կազմակերպական և իրավական բնույթի տարբեր խնդիրների լուծումը, մասնավորապես՝ կանխարգելիչ գործունեություն իրականացնող բոլոր սուբյեկտների գործունեության ռազմավարության և ծրագրերի մշակում, ինչպես նաև պատժի կրման այնպիսի պայմանների ստեղծում, որը առավելագույնս կբացառի դատապարտյալների շրջանում վիկտիմային և հակահասարակական ուղղվածություն ձևավորող միջավայրի բացասական ազդեցությունը:

դ/ Կազմակերպական բնույթի միջոցառումների կատարելագործումը ենթադրում է 1/ իրավական վիճակագրության մեջ վիկտիմալոգիական բնույթի տեղեկատվության ներառում, 2/ հանցավորության կանխարգելում իրականացնող սուբյեկտների գործառնությունների շրջանակի համալրում դատապարտյալների պենիտենցիար վիկտիմիզացման կանխարգելում նախատեսող գործառնությով, նշված ոլորտում հասարակական կազմակերպությունների իրավասությունների և հնարավորությունների ընդլայնում, 3/ դատապարտյալներին հոգեբանորեն նախապատրաստել դիմակայելու իրենց կյանքին, առողջությանը, սեփականությանը սպառնացող հանցավոր ոտնձգություններին, 4/ վիկտիմայնության բարձր աստիճանով օժտված դատապարտյալների ժամանակին բացահայտում և նրանց հետ համապատասխան հոգեբանական, դաստիարակչական բնույթի աշխատանքների իրականացում:

ե/ Պենիտենցիար վիկտիմիզացիայի կանխարգելման իրավական միջոցառումների կատարելագործման հիմնական ուղղություններն են՝ 1/ մի շարք օրենսդրական և գերատեսչական նորմատիվ իրավական ակտերում վիկտիմալոգիական բովանդակությամբ լրացումներ կատարելը, 2/ վարչակազմի ներկայացուցիչների և իրավապահ մարմինների նկատմամբ վստահություն ներշնչելը, 3/ քրեակատարողական քաղաքականության հետագա հումանիզացման ապահովումը /ԲԿՀ գործնեությունը պահանջում է պատժի կրման աինպիսի պայմանների ստեղծում, որոնք կնպաստեն դատապարտյալների միջանձնային հարաբերություններում լարվածության թուլացմանը, 4/ օրենսդրական մակարդակով դատապարտյալներին վարձատրվող աշխատանքով ապահովելը, 5/ իրավական նորմերում փոփոխություններ կատարելը՝ դրանց վիկտիմային բնույթը չեզոքացնելու նպատակով, 6/ պենիտենցիար հանցավոր ոտնձգություններից վնաս կրած դատապարտյալներին փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ իրավական հիմք և մեխանիզմներ մշակելը:

Anna Asatryan

PhD student of the Chair of Criminal Law, YSU

PREVENTION OF OFFENDERS' PENITENTIARY VICTIMIZATION AT THE PLACES OF INCARCERATION

Prevention of penitentiary victimization is an important direction of the preventative work carried out in the places of incarceration. It is in line with the search of new, effective measures to fight penitentiary crime. The author thinks that it comes to be the only factor, which allows wholly to safeguard the victim's safety and security in the places of incarceration. The author's point is that the aim of penitentiary victimization prevention is the avoidance of potential and suppression of the ongoing criminal infringement in the places of incarceration.

Анна Асатрян

Соискатель кафедры уголовного права, ЕГУ

ПРОБЛЕМЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ ПЕНИТЕНЦИАРНОЙ ВИКТИМИЗАЦИИ ОСУЖДЕННЫХ В ИСПРАВИТЕЛЬНЫХ УЧРЕЖДЕНИЯХ

Предупреждение пенитенциарной виктимизации является самостоятельным направлением предупреждения преступлений в местах лишения свободы и находится в русле поисков новых возможностей борьбы с пенитенциарной преступностью. Именно оно, по мнению автора, позволит максимально полно и всесторонне использовать все возможности защиты и охраны жертв преступных посягательств в местах лишения свободы. По мнению автора целью предупреждения пенитенциарной виктимизации является предотвращение потенциальной, и пресечение актуально осуществляющейся пенитенциарной виктимизации жертв преступных посягательств в местах лишения свободы.

Բանալի բառեր՝ պենիտենցիար վիկտիմիզացիա, հանցագործությունների կանխում, պայքար պենիտենցիար հանցավորության դեմ, զոհերի պաշտպանություն, հանցավոր ոտնձգություն, զոհերի խոցելիություն, քրեակատարողական քաղաքականություն:

Keywords: penitentiary victimization, prevention of crimes, fight against penitentiary crime, protection of victims, criminal intrusion, vulnerability of victims, penitentiary policy.

Ключевые слова: пенитенциарная виктимизация, предупреждение преступлений, борьба с пенитенциарной преступностью, охрана жертв, преступное посягательство, уязвимость жертв, уголовно-исполнительная политика.

Գոհար Հակոբյան¹

**ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱՐՏՆԻՔԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՆ
ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ**

Անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված հիմնարար իրավունքներից է, առանց որի դժվար է պատկերացնել սոցիալական էակի՝ մարդու բնականոն կենսագործունեությունը հասարակության մեջ: Անձնական կյանքի գաղտնիությունն առավել մեծ արժեքավորում է ձեռք բերել ժամանակակից աշխարհում, որտեղ տեղեկատվական տեխնոլոգիաների շեշտակի և հաճախ անվերահսկելի առաջընթացն ու լայն տարածումը զգալիորեն բարդացնում է յուրաքանչյուրի անձնական կյանքի գաղտնիության ապահովումը: Հետևաբար, պետությունը, համապատասխան իրավական արձագանք տալով ծագած մարտահրավերներին, պետք է ավելի գործուն մեխանիզմներ նախատեսի անձնական կյանքի անձեռնմխելիության արդյունավետ իրավական պաշտպանության համար: Այդ նպատակով ձեռնարկված ամենակարևոր քայլերից մեկն անձնական կյանքի անձեռնմխելիության քրեաիրավական պաշտպանությունն է: Այսպես, անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության խախտման համար մեր երկրում նախատեսված է քրեական պատասխանատվություն: Սակայն գոյություն ունի անձնական կյանքի մի ոլորտ, որն առնչվում է մարդու ինքնության առավել զգայուն, ինտիմ, խոցելի կողմերին՝ ֆիզիկական և հոգեկան առողջությանը: Մեր օրենսդիրը հատկապես արժեզրկում է անձնական կյանքի վերոնշյալ ոլորտի անձեռնմխելիությունը՝ դրա պաշտպանության համար քրեական օրենսգրքում նախատեսելով հատուկ հանցակազմ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն բժշկական գաղտնիքի հրապարակման համար: Նշված հանցագործության վտանգավորությունը դրսևորվում է ոչ միայն անձի անձնական և

¹ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա.Ռ. Մարգարյան:

ընտանեկան կյանքին առնչվող ամենանուրբ, ամենախնտիմ տեղեկությունների հրապարակմամբ անծին պատճառված բարոյական զգալի վնասով, այլև առողջապահության ողջ համակարգի նկատմամբ վստահության կորստով և այդ ոլորտում աշխատող անձանց մասնագիտական հեղինակության խաթարմամբ: Ուստի միանգամայն օրինաչափ է, որ օրենսդիրը վերոնշյալ հանցակազմի համար նախատեսել է հատուկ սուբյեկտ: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածի համաձայն՝ քրեորեն պատժելի է առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության անծի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելը *բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից*: Ակնհայտ է, որ դիսպոզիցիան բլանկետային է, ուստի սուբյեկտների շրջանակը պարզելու համար պետք է դիմենք «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքին, որը սահմանում է, թե ինչ ասել է *բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձինք*: Այսպես, նշված օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձինք ասելով պետք է հասկանալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բնակչությանը բժշկական օգնության և սպասարկման որոշակի տեսակներ ցուցաբերող ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռներեց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություն՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից և սեփականության ձևից: Ինչպես երևում է տվյալ ձևակերպումից, այն բավականին լայն է, վերացական և հանգամանալից մեկնաբանության կարիք ունի:

Անդրադառնալով տեսական գրականության մեջ բժշկական գաղտնիքի հրապարակման հանցակազմի սուբյեկտների վերաբերյալ քննարկումներին՝ հանդիպում ենք իրարամերժ դիրքորոշումների, որոնք սերտորեն կապված են տարբեր հեղինակների կողմից «բժշկական գաղտնիք» եզրույթի տարբեր ընկալման հետ: Մասնավորապես՝

1. Առաջին խումբ հեղինակները բժշկական գաղտնիքը դիտարկում են որպես զուտ մասնագիտական գաղտնիք, որից բխում

է, որ բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտներ կարող են լինել միայն տարբեր մակարդակի բժշկական կրթություն ունեցող անձինք, այսինքն՝ բժիշկները, դեղագործները, բուժքույրերը: Այս հեղինակները հիմնականում հիմնվում են այն հայեցակարգի վրա, որ բժշկական գաղտնիքը ներառում է միայն անձի առողջական վիճակի և նրան մատուցված բժշկական ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները¹:

2. Հեղինակների երկրորդ խումբը բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտների շրջանակն ընդլայնում է՝ դրանում ընդգրկելով ընդհանրապես բոլոր անձանց, ովքեր իրականացնում են բժշկական սպասարկում կամ կատարում են անմիջականորեն հիվանդի խնամքի հետ կապված պարտականություններ, օրինակ՝ սանիտարները, դայակները, բժշկական բուհերի ուսանողները, օրհինատորները²:

3. Հեղինակների երրորդ խումբը բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտների շարքին է դասում նաև այն անձանց, ովքեր, թեև անմիջականորեն չեն մատուցում բժշկական բնույթի ծառայություններ, սակայն աշխատում են առողջապահության ոլորտում և օրինական կարգով կարող են տիրապետել բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունների: Դրանց շարքին կարելի է դասել, օրինակ՝ բժշկական տրանսպորտի վարորդներին, բժշկական արխիվի աշխատակիցներին, առողջապահության համակարգի պաշտոնատար անձանց և այլն: Վերջին դիրքորոշման կողմնակիցները որպես ելակետ են ընդունում այն հայեցակարգը, որ բժշկական գաղտնիքը ներառում է ոչ միայն բուն բժշկական բնույ-

¹ St'u Папеева К. О. Институт медицинской тайны как объект уголовно-правовой охраны, Нижний Новгород, 2006, էջեր 29, 36, մեջբերումներն ըստ՝ Згадзай О.Э., Казанцев С.Я. Вопросы доступа к информации в законодательстве РФ/ /Экономическая безопасность России: политические ориентиры, законодательные приоритеты, практика обеспечения: Вестник Нижегородской академии МВД России, 2005 .-№5, էջեր 114-115, Раков А.А. Дифференциация ответственности за преступления, совершаемые медицинскими работниками: уголовно-правовой и криминологический аспекты: Автореф. дис. канд. юрид. наук. - Челябинск, 2004.-15 23:

² St'u Папеева К. О., նշված աշխատությունը, էջ 42:

թի տեղեկություններ՝ բժշկական հիմնարկ դիմելու փաստը, բժշկական ծառայություններ մատուցելը, հիվանդության պատմությունը, ախտորոշումը և այլն, այլև՝ անձի մասնավոր կյանքի վերաբերյալ ցանկացած տեղեկություն, որը հայտնի է դարձել բժշկական սպասարկում կատարելիս, օրինակ՝ ֆիզիկական կամ հոգեկան թերությունների, արատների, ինտիմ կապերի, սեռական կողմնորոշման վերաբերյալ տվյալները և այլն¹:

Անվիճելի է, որ սուբյեկտների շրջանակի մասին իրավական դրույթները մեկնաբանելիս պետք է խուսափել ծայրահեղություններից, քանզի մի կողմից այդ ցանկի սահմանափակ մեկնաբանությունը հնարավորություն չի տա արժանի պատասխանատվության ենթարկել այն բոլոր անձանց, ովքեր իրենց աշխատանքի բերումով հնարավորություն ունեն ծանոթանալ բժշկական գաղտնիք կազմող տեղեկություններին, և ումից բժշկական օգնության դիմած անձը ողջամտորեն իրավասու է ակնկալել իր վերաբերյալ տեղեկությունների գաղտնիության պահպանում, մյուս կողմից՝ սուբյեկտների շրջանակի արհեստական ընդլայնումը կիմաստագրկի քննարկվող հատուկ նորմը՝ կորցնելով բժշկական գաղտնիքն օրենքով պաշտպանվող գաղտնիքի այլ տեսակներից տարանջատելու չափանիշը:

Խնդրո առարկա հարցին պատասխանելու համար նպատակահարմար է թվում սկսել բժշկական գաղտնիքի բնորոշումից և օրենքով պաշտպանվող գաղտնիքների համակարգում դրա տեղի բացահայտումից: Այսպես, օրենսդիրը որևէ իրավական փաստաթղթում չի տալիս «բժշկական գաղտնիք» եզրույթի հստակ բնորոշումը: Ինչ վերաբերում է քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածին, ապա այն քրեորեն պատժելի է համարում խիստ սահմանափակ շրջանակի տեղեկությունների հրապարակումը, մասնավորապես՝ միայն անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տվյալները: Եթե կիսենք օրենսդրի կարծիքն այս հարցի առնչությամբ, կստացվի որ «բժշկական գաղտնիքի» մեջ

¹ Ст'я Меркулова С. Н. Уголовно-правовая охрана профессиональной тайны, Нижний Новгород, 2007, էջ 169, Палеева К. О., նշված աշխատությունը, էջ 36, մեջբերումն ըստ՝ Акопов В.И., Маслов Е.Н. Право в медицине. - М.: Книга-сервис, 2002, էջ 71:

ընդգրկվում են նույնիսկ ոչ բոլոր բժշկական բնույթի տեղեկությունները: Մինչդեռ նման դիրքորոշումը բացարձակապես աննպատակահարմար է թվում քննարկման առարկա հատուկ հոդվածով պաշտպանվող հասարակական հարաբերությունների առանձնահատկությունների հաշվառմամբ: Ինչևէ, չխորանալով բժշկական գաղտնիքի բնորոշման կապակցությամբ ծագող խնդիրների մեջ, ինչն ամենևին էլ սույն հոդվածի նպատակը չէ, նշենք, որ կիսում ենք այն հեղինակների կարծիքը, ովքեր բժշկական գաղտնիքը բնորոշում են որպես հիվանդի մասին տվյալների ամբողջություն, որն առողջապահության ոլորտի աշխատակիցներին հայտնի է դարձել նրան բժշկական ծառայություններ մատուցելիս, այսինքն՝ բժշկական գաղտնիքի բովանդակությունը կազմող տվյալները կարող են լինել ինչպես բժշկական, այնպես էլ անձնական բնույթի: Ասվածից բխում է, որ բժշկական գաղտնիքը դժվար թե կարելի է դասել մաքուր մասնագիտական գաղտնիքների շարքին, քանի որ դրանում ներառված տեղեկությունները կարող են հասանելի և հասկանալի լինել, հետևաբար՝ նաև հրապարակվել ոչ միայն բժշկական անձանակազմի, այսինքն՝ կոնկրետ մասնագիտական բժշկական պարտականություններ կատարող անձանց, այլև այնպիսի անձանց կողմից, ովքեր թեև կարող են ծանոթանալ համապատասխան տեղեկություններին իրենց աշխատանքային պարտականություններն իրականացնելիս, սակայն չեն մատուցում անմիջականորեն բժշկական ծառայություններ: Նման մոտեցումն առավել արդարացված է թվում, քանի որ չկա սկզբունքային տարբերություն, թե առողջապահության ոլորտի ո՞ր աշխատակցի կողմից է գաղտնիքը հրապարակվում, եթե խոսքը գնում է միևնույն տեղեկությունների մասին: Ավելին, ենթադրվում է, որ հիվանդն ի սկզբանե իր համաձայնությունը տվել է տվյալ բժշկական հիմնարկի աշխատակիցների կողմից իր մասին տեղեկություններին ծանոթանալու համար: Կոնկրետ անձի համար կարևոր չէ, թե իր առողջական վիճակի կամ անձնական կյանքի մասին տեղեկությունները հատնի են դարձել բժշկական կրթություն ունեցող, թե չունեցող անձին: Նա բացարձակապես անպաշտպան է նման տեղեկության տիրապետող ցանկացած անձի առջև և բժշկական հիմնարկ դիմելիս ողջամտորեն ակնկալում է գաղտնիության պահպանում բոլոր ան-

ծանց կողմից, ում համապատասխան տեղեկությունները կարող են հասանելի լինել, քանզի հրապարակվելու դեպքում անձին պատճառված վնասը նույնաբնույթ է՝ անկախ հրապարակող սուբյեկտի մասնագիտական կրթությունից:

Ամփոփելով բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտների շրջանակի վերաբերյալ իրավական դրույթները և տեսական մոտեցումները՝ առավել նպատակահարմար է թվում քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածում սուբյեկտների հետևյալ ցանկի նախատեսումը՝

1. անձինք, ում համար բժշկական գաղտնիքը մասնագիտական գաղտնիք է, իսկ այն պահպանելը՝ մասնագիտական պարտականություն, մասնավորապես՝ բարձրագույն բժշկական կրթություն (բժիշկ, հոգեբույժ, դեղագործ), միջնակարգ բժշկական կրթություն (բուժքույր, բուժեղբայր) ունեցող անձինք

2. բժշկական կրթություն չունեցող, սակայն անմիջականորեն հիվանդի խնամքի հետ կապված ծառայություններ մատուցող անձինք (դայակ, սանիտար)

3. բժշկական ծառայությունների մատուցման գործընթացում անմիջականորեն չընդգրկված, սակայն օրենքի հիման վրա բժշկական գաղտնիք կազմող տեղեկություններին տիրապետելու հնարավորություն ունեցող անձինք: Վերջիններս իրենց հերթին բաժանվում են երկու խմբի՝

ա) անձինք, ում համապատասխան տեղեկությունները հասանելի են դարձել ուսման կամ մասնագիտական հմտությունների ձեռքբերման, կատարելագործման ընթացքում: Այս խմբում ընդգրկված են բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, օրդինատորները, ասպիրանտները

բ) անձինք, որոնց աշխատանքային գործունեությունն ընկած է բժշկական ծառայությունների մատուցման ոլորտում, սակայն ուղղակիորեն չի առնչվում դրանց, այլ ունի օժանդակող բնույթ: Այս խմբին կարելի է դասել բժշկական հաստատությունների վարչակազմի, բժշկական արխիվների աշխատակիցներին, բժշկական գրանցամատյանները վարողներին, բժշկական տրանսպորտ վարորդներին և այլն:

Ինչ վերաբերում է վերոնշյալ ենթակետերում նշված սուբյեկտ-

ներին, ապա բժշկական բուհերի ուսանողների համար բժշկական գաղտնիք կազմող տեղեկություններն անհրաժեշտ են բժշկական գործունեության ոլորտում որոշակի գործառնություններ իրականացնելու համար, ինչն անհնար է առանց այդ տեղեկություններին տիրապետելու: Իսկ երկրորդ ենթակետում նշված անձանց բժշկական գաղտնիքին տեղեկանալը թեպետ ոչ միշտ է անհրաժեշտ իրենց աշխատանքային պարտականությունները կատարելու համար, սակայն այն նրանց կարող է հասանելի լինել ցանկացած պահի: Այսինքն՝ նշված անձանց համար բժշկական գաղտնիքը համարվում է այսպես կոչված «ծեռնմխելի գաղտնիք»¹:

Անհրաժեշտ է ընդգծել, որ առողջապահության ոլորտի աշխատակիցները պատասխանատվություն են կրում բժշկական գաղտնիքի հրապարակման համար միայն այն պարագայում, եթե ծանոթացել են համապատասխան տեղեկություններին իրենց մասնագիտական պարտականությունների կատարման կապակցությամբ: Եթե քննարկվող հանցակազմի սուբյեկտները համապատասխան տեղեկությունները ձեռք են բերել օրենքով արգելված կարգով կամ անկախ իրենց աշխատանքային գործունեությունից, ապա նրանք չեն կրում բժշկական գաղտնիքը պահպանելու պարտականություն, ուստի ենթակա չեն պատասխանատվության խնդրո առարկա հողվածով: Նրանց համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածով՝ անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու կամ տարածելու համար: Մեր կարծիքով, սակայն, նշված կարգից պետք է բացառություն նախատեսել բժշկի համար: Այն դեպքերում, երբ, օրինակ՝ բժիշկը թեկուզ ոչ պաշտոնապես խորհրդակցում է իր կոլեգայի հետ, և վերջինս համապատասխան տեղեկություններին ծանոթանում է ոչ անմիջականորեն իր պարտականությունները կատարելու կապակցությամբ, միևնույն է, նա ևս ընկնում է քննարկվող հոդվածի գործողության տակ, քանզի նրա համար բժշկական գաղտնիքը մասնագիտական գաղտնիք է, և որպես մասնագիտության ներկայացուցիչ և մասնագիտական էթիկայի կրող՝ բժիշկը պարտավոր է

¹ Ст'у Панеева К. О., նշված աշխատությունը, էջեր 30, 42:

պահպանել նաև իր կոլեգաների հիվանդների վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունը, ինչը բխում է մասնագիտության առանձնահատկություններից և ակնկալվում ինչպես մյուս բժիշկների, այնպես էլ հիվանդների կողմից:

Միաժամանակ, պետք է ձեռնպահ մնալ բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտների ցանկն անհարկի ընդլայնելուց: Մասնավորապես, չի կարելի բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտ համարել անձանց, ում համապատասխան տեղեկությունները հայտնի են դարձել իրենց մասնագիտական կամ ծառայողական պարտականությունները կատարելիս, բայց որոնք առողջապահական ոլորտի աշխատակիցներ չեն: Այսպես, փաստաբանի, քննիչի, դատախազի, դատավորի, հարկային մարմինների աշխատակիցների համար համապատասխան տեղեկությունը կհամարվի ոչ թե բժշկական գաղտնիք, այլ մասնագիտական կամ ծառայողական գաղտնիք, դիցուք՝ փաստաբանական կամ նախաքննության գաղտնիք: Գրականության մեջ առաջարկվում է բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտների շարքին դասել նաև այն անձանց, ում մասնագիտական գործունեությունն առնչվում է բժշկական ծառայությունների մատուցման ոլորտին պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում իրենց ծառայության բերումով: Դրանք են առողջապահության ոլորտի պետական գործադիր մարմնի և դրա տարբեր կառուցվածքային մարմինների և ստորաբաժանումների աշխատակիցները: Սակայն, կարծում ենք՝ վերջիններիս համար բժշկական գաղտնիքը ոչ թե մասնագիտական կամ ձեռնմխելի, այլ ծառայողական գաղտնիք է, քանի որ օժտված է հենց ծառայողական գաղտնիքին բնորոշ հատկանիշներով. այն կապված է ոչ թե մասնագիտական պարտականությունների իրականացման, այլ կոնկրետ անձի զբաղեցրած պաշտոնի հետ, այսինքն՝ սուբյեկտը հանդես է գալիս ոչ թե որպես որևէ մասնագիտության, այլ որպես համապատասխան մարմնի ներկայացուցիչ, ում խնդրո առարկա տեղեկություններն անհրաժեշտ են իր ծառայողական պարտականությունները կատարելու համար: Առողջապահության նախարարության պաշտոնատար անձանց, դատավորների, դատախազների և վերոնշյալ մյուս պաշտոնատար անձանց պարագայում համապատասխան հատկանիշ-

ների առկայության դեպքում առաջանում են պաշտոնական լիազորությունների չարաշահման կամ պաշտոնական լիազորությունների անցման հանցակազմերը:

Բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտ չի կարելի համարել նաև բժշկական ապահովագրությամբ զբաղվող գործակալներին. թեև նրանք կարող են տիրապետել մարդու առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունների, սակայն նրանք առողջապահության ոլորտի աշխատակիցներ չեն, այդ տեղեկությունները նրանց անհրաժեշտ են իրենց ծառայողական պարտականությունները կատարելու համար, և նրանց համար համապատասխան տեղեկությունները կազմում են ոչ թե բժշկական, այլ ապահովագրական գաղտնիք, որը հրապարակելու համար պատասխանատվությունը նախատեսված է քրեական օրենսգրքի 199-րդ հոդվածի 2-րդ մասով, թեև վկայակոչված հանցակազմը նյութական է, և պատասխանատվությունը վրա է հասնում միայն խոշոր վնաս պատճառելու դեպքում, ինչը, կարծում ենք, արդարացված չէ:

Ուշադրության է արժանի այն հարցի քննարկումը, թե արդյո՞ք բժշկական գաղտնիքի հրապարակման համար քրեական պատասխանատվության ենթակա են հոգեբանները (հոգեթերապեվտները): Բանն այն է, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի՝ վերը ներկայացված 1-ին հոդվածի 2-րդ մասը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց շարքին է դասում միայն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող, օրենքով սահմանված կարգով լիցենզավորված անձանց: Այնինչ հոգեբանները հոգեբանական օգնություն ցուցաբերելու համար որևէ պետական լիցենզիա չեն ստանում, ավելին, ՀՀ-ում նրանց կրթությունը չի համարվում բժշկական, քանի որ նրանք կրթություն են ստանում ոչ թե բժշկական բուհերում, այլ ընդհանուր պրոֆիլի համալսարաններում, համապատասխանաբար՝ չեն ստանում բժշկի որակավորում: Նման պայմաններում իհարկե հոգեբանական օգնությունը չի համարվում բժշկական օգնություն, իսկ հոգեբանը՝ բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտ: Նման կարգավորումը թվում է առնվազն ոչ ամբողջական: Հոգեբանական թերապիայի առանձին տեսակներ, հատկապես երբ հոգեթերապեվտները նշանակում են դեղամիջոց-

ներ այս կամ այն հոգեբանական խնդիրների լուծման համար, թերևս կարող են համարվել բժշկական օգնության տարատեսակ, քանզի կապված են անձի հոգեբանական առողջության հետ: Սակայն, ինչպես արդեն նշվել է, հոգեթերապեվտները չեն համարվում բժիշկներ և իրենց գործունեության համար չեն ստանում պետական լիցենզիա, ինչի պատճառով չեն ընկնում քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածի գործողության տակ: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում վերոնշյալ նորմը նրանց նկատմամբ ևս կիրառելի է: Այսպես, բժիշկների շրջանում տարածված է հիվանդին բուժելու ընթացքում նշանակել նաև հոգեբանական թերապիա, քննարկել հոգեբանի հետ կոնկրետ հիվանդի առողջական վիճակի և անձնական կյանքին վերաբերելի հարցերը: Ստացվում է, որ թեև հոգեբանն առողջապահության ոլորտի աշխատակից չէ և չի ցուցաբերում բժշկական օգնություն, այնուամենայնիվ կարող է տիրապետել մարդու հոգեկան, հոգեբանական առողջության և անձնական կյանքի վերաբերյալ այնպիսի տեղեկությունների, որոնք նրան հայտնի են դարձել հիվանդի՝ բժշկական օգնություն ստանալու կապակցությամբ, այլ կերպ՝ վկայակոչված օրինակում հոգեբանը հիվանդին մատուցվող բժշկական ծառայությունների մասն է կազմում: Ուստի նման դեպքերում հոգեբանը պետք է նախազգուշացվի հիվանդի վերաբերյալ տեղեկությունների հրապարակման անթույլատրելիության մասին և համարվի քննարկվող հանցակազմի սուբյեկտ: Սակայն նույնիսկ այդ դեպքում բաց է մնում մնացած դեպքերում հոգեբանների, հոգեթերապեվտների քրեական պատասխանատվության հարցը: Նրանք չեն համարվում բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտ՝ չնայած այն հանգամանքին, որ հոգեբանը տիրապետում է մարդու հոգեկան առողջության և անձնական կյանքի վերաբերյալ այնպիսի տեղեկությունների, որոնք զուտ բժշկական սպասարկում իրականացնելիս կարող են երբեք էլ ի հայտ չգալ, այսինքն՝ հոգեբանի կողմից անձի վերաբերյալ տեղեկությունները հրապարակելը կարող է երբեմն նույնիսկ ավելի մեծ վնաս պատճառել, քան կպատճառվեր բժշկական հիմնարկի անձնակազմի կողմից բժշկական գաղտնիքը խախտելու դեպքում: Նպատակահարմար չէ հոգեբանների նկատմամբ կիրառել քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածը, որը պատասխանատ-

վություն է նախատեսում անձնական և ընտանեկան գաղտնիքը հրապարակելու համար և չի պահանջում հատուկ սուբյեկտի առկայություն: Ակնհայտ է, որ պետք է տարբերակվի պատասխանատվությունն այն անձանց համար, ովքեր համապատասխան տեղեկությունները ձեռք են բերել իրենց մասնագիտական գործունեության իրականացման կապակցությամբ, ովքեր չարաշահել են մասնագիտական օգնության համար իրենց դիմած անձանց վստահությունը՝ ի սկզբանե նրանց դնելով խոցելի դրության մեջ, և խախտել են մասնագիտական էթիկայի կանոնները: Այդ պատճառով նպատակահարմար է թվում քրեական օրենսգրքում առանձին հանցակազմով մասնագիտական կամ ծառայողական գաղտնիքը հրապարակելու համար պատասխանատվության նախատեսումը, որը կտարածվի նաև հոգեթերապեվտների նկատմամբ: Նմանատիպ կարգավորում է նախատեսված ԱՄՆ Կալիֆորնիա նահանգի քրեական օրենսգրքում, որի 8-րդ բաժնի 4-րդ գլուխը վերաբերում է կոնֆիդենցիալ բնույթի տեղեկությունների հրապարակմանը տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչների կողմից, բացի բժիշկներից և փաստաբաններից այդ ցանկում ընդգրկված են հոգեթերապեվտները, հոգևորականները, ընտանեկան բժնության հարցերով խորհրդականները և այլն:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև ժողովրդական բժշկությամբ զբաղվողների կողմից համապատասխան տեղեկությունները հրապարակելու դեպքում նրանց քրեական պատասխանատվության հարցը: Ըստ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 1-ին հոդվածի՝ բժշկական օգնություն և սպասարկում է համարվում բնակչությանը կանխարգելիչ բուժական, դեղորայքային օգնության ցուցաբերումը, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացումը, հարբժշկական և ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցումը: Այսինքն՝ ենթադրվում է, որ ժողովրդական բժշկությունը ևս բժշկական օգնության տարատեսակ է: Այնուամենայնիվ, պետությունը չի սահմանել ժողովրդական բժշկությամբ զբաղվող անձանց լիցենզավորման կարգ՝ հաշվի չառնելով, որ բուժօգնության նշված տեսակը բավականին տարածված է հասարակության որոշ շերտերում, հատկա-

պես հեռավոր մարզերում և գյուղերում: Արդյունքում վերջիններս անարդարացիորեն ազատվել են բժշկական գաղտնիքը պահպանելու պարտականությունից: Այնինչ ակնհայտ է, որ ժողովրդական բժշկությունը ևս բուժօգնության տեսակ է և որպես այդպիսին պետք է գտնվի պետական վերահսկողության ներքո: Այդպիսի մոտեցում է դրսևորել ՌԴ օրենսդիրը՝ նախատեսելով ժողովրդական բժշկությամբ զբաղվողների լիցենզավորում: Ամեն դեպքում, միանշանակ է, որ եթե անձը բժշկական ծառայություններ է մատուցում առանց օրենքով սահմանված կարգը պահպանելու, այդ թվում՝ առանց լիցենզիայի, եթե լիցենզավորման պահանջը նախատեսված է օրենքով, ապա նա չի կարող լինել բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտ:

Հիվանդի իրավունքների արդյունավետ պաշտպանության շահը հաշվի առնելով՝ առաջարկում ենք օրենքով ամրագրել պարտականություն՝ պահպանելու բժշկական գաղտնիքը նաև բժշկական օգնության հետ կապված գործունեությունը դադարեցնելուց հետո այն սուբյեկտների պարագայում, ում համար բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունները համարվում են մասնագիտական գաղտնիք:

Քննարկման առարկա դարձած խնդիրն առավել խորությամբ ուսումնասիրելու նպատակով անդրադառնանք արտասահմանյան երկրներում բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտների վերաբերյալ օրենսդրական կարգավորումներին: Այսպես, ԱՊՀ երկրների մեծ մասում, ի տարբերություն Արևմտյան Եվրոպայի երկրների մեծամասնության, քրեական օրենսգրքերը նախատեսում են հատուկ հոդված հատկապես բժշկական գաղտնիքի հրապարակման համար: Մասնավորապես, «Քաղաքացու առողջության պահպանման մասին ՌԴ օրենսդրության հիմունքներում» նշվում է, որ չի թույլատրվում բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումն այն անձանց կողմից, ում դրանք հայտնի են դարձել ուսման, մասնագիտական, ծառայողական և այլ պարտականությունների կատարման կապակցությամբ¹: Այսինքն՝ ռուս օրենսդիրը պատասխանատվություն է նախատեսել առողջապահության բնագավառի բոլոր աշխատակիցների համար: Թեև օգ-

¹ Ст'я Меркулова С. Н., նշված աշխատությունը, էջ 169:

տագործված ձևակերպումը բավականաչափ հստակ չէ և կարող է չափազանց տարածական մեկնաբանության տեղիք տալ:

Բելառուսի, Ղազախստանի և Ղրղզստանի քրեական օրենսգրքերի համապատասխան հոդվածները կրկնում են ԱՊՀ մոդելային քրեական օրենսգրքի մոտեցումը՝ ամրագրելով պատասխանատվություն բժշկական, դեղագործական կամ այլ աշխատակցի կողմից առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության հիվանդի հիվանդության կամ բժշկական հետազոտության արդյունքների մասին տեղեկությունները դիտավորությամբ հրապարակելու համար¹:

Մինչդեռ Ուկրաինայում սահմանափակված են քրեական պատասխանատվության պայմանները: Այսպես, Ուկրաինայի քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածի համաձայն՝ քրեորեն պատժելի է բժշկական գաղտնիքի դիտավորյալ հրապարակումն այն անձի կողմից, ում դա հայտնի է դարձել իր մասնագիտական կամ ծառայողական պարտականությունների կապակցությամբ, եթե դա առաջացրել է ծանր հետևանքներ: Այսինքն՝ հանցակազմը ոչ թե ձևական է, ինչպես քննարկված մյուս երկրներում, այլ նյութական, ընդ որում՝ օրենսդիրն օգտագործում է ոչ թե “медическая тайна” այլ “врачебная тайна” եզրույթը, ինչը միանգամայն ոչ երկիմաստորեն մատնանշում է օրենսդրի մտադրությունը՝ բժշկական գաղտնիքը սահմանափակել մասնագիտական գաղտնիքի շրջանակներով:

Միաժամանակ, Ուկրաինայի քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածը նախատեսում է հատուկ նորմ ՁԻԱՀ-ի կամ այլ անբուժելի հիվանդության հայտնաբերմանն ուղղված բժշկական հետազոտության արդյունքները հրապարակելու համար: Նշված հանցակազմի սուբյեկտների շրջանակը զգալիորեն ընդլայնված է, ավելին, ընդգրկված է նաև օժանդակ անձնակազմը, որը տեղեկությունները ձեռք է բերել սեփական նախաձեռնությամբ²:

Ինչ վերաբերում է եվրոպական երկրներին, ապա քրեական

¹ Տե՛ս <http://mvd.gov.by>, Уголовный кодекс республики Беларусь, <http://www.zakon.kz>, Уголовный кодекс республики Казахстан, <http://www.prokuror.kg> Уголовный кодекс Киргизской республики (19.11.2013թ.-ի դրությամբ):

² Տե՛ս <http://meget.kiev.ua>, 19.11.2013թ.-ի դրությամբ, Уголовный кодекс республики Украина.

օրենսգրքերի մեծ մասը չի նախատեսում բժշկական գաղտնիքի հրապարակման հատուկ հանցակազմ, այլ սահմանում է մասնագիտական կամ ծառայողական գաղտնիքի հրապարակման հոդված՝ բժշկական գաղտնիքին նվիրված մասով կամ կետով: Այսպես, Ավստրիայի քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածի համաձայն՝ բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտներն են այն անձինք, ում համապատասխան տեղեկությունները վստահվել են բացառապես իրենց մասնագիտական գործունեության ուժով՝ նրանց կողմից բուժման, հիվանդների խնամքի, ծննդաբերության, դեղագործության, բժշկատեխնիկական հետազոտությունների հետ կապված իրենց մասնագիտական գործառույթների իրականացման կամ բժշկական հիմնարկների կառավարման կամ բժշկական ապահովագրության հետ: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նշված անձանց հավասարեցվում են օժանդակող անձնակազմը, այդ թվում՝ այն դեպքերը, երբ նրանք գործում են ոչ մասնագիտորեն, ինչպես նաև անձինք, ովքեր մասնակցում են այդ գործունեությանը կրթական նպատակով¹: Այսինքն՝ ավստրիական օրենսդիրը ևս քննարկվող հանցակազմի սուբյեկտ է դիտում բոլոր անձանց, ում հիվանդի վերաբերյալ տեղեկությունները կարող են հայտնի դառնալ օրենքի հիման վրա:

Գերմանիայի քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի համաձայն՝ բժշկական գաղտնիքի հրապարակման համար քրեական պատասխանատվության են ենթակա անձինք, ում գաղտնիքը վստահվել կամ հայտնի է դարձել բժշկի, ատամնաբույժի, անասնաբույժի, դեղագործի կամ այլ բժշկական աշխատակցի մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում, որի համար անհրաժեշտ է համապատասխան կրթություն, եթե այդ պահանջը կարգավորված է պետության կողմից: Ի դեպ, նույն հոդվածի 2-րդ մասը պատասխանատվություն է նախատեսում մասնագիտությամբ հոգեբանի համար, ով ունի պետության կողմից ճանաչվող

¹ St'u Меркулова С. Н., նշված աշխատությունը, էջ 51, մեջբերումն ըստ՝ Уголовный кодекс Австрии / Науч. ред. и вступ. статья докт. юрид. наук, проф. С.В. Милюкова; предисловие Генерального прокурора Австрии, доктора Эрнста Ойгена Фаб рици; перевод с немецкого Л.С. Вихровой. - СПб., 2004, էջ 164:

վկայական: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ Չերմանիայում քննարկվող հանցակազմի սուբյեկտների շրջանակը սահմանափակ է և ավելի շատ նման է խորհրդային օրենսդրի մոտեցմանը¹:

Ֆրանսիայում հարցը կարգավորվում է քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի 13,14-րդ մասերով, որոնք անմիջականորեն չեն վերաբերում բժշկական գաղտնիքին, այլ ընդհանրապես օրենքով պաշտպանվող գաղտնիքին, որը պահպանելու պարտականություն ունեն այն անձինք, ովքեր տիրապետում են տեղեկատվության իրենց դիրքի, մասնագիտության, զբաղեցրած պաշտոնի կամ ժամանակավորապես ստանձնած պարտականությունների կամ առաքելության բերումով²: Այսինքն՝ խոսքն ավելի շուտ ծառայողական գաղտնիքի մասին է, քան բժշկական:

Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 321-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա են՝ 1) բժիշկները, ատամնաբույժները, դեղագործները, ինչպես նաև նրանց բուժքույրերը, եթե նրանք իրենց մասնագիտական գործունեության ընթացքում պարտավոր են պահպանել այդ գաղտնիքը, 2) համապատասխան մասնագիտությունը սովորող անձինք, եթե նրանք պարտավոր են պահպանել այդ գաղտնիքը ուսուցման ժամանակ, 3) վերոնշյալ անձինք, եթե նրանք հրապարակել են գաղտնիքը մասնագիտական գործունեության դադարեցման կամ կրթությունն ավարտելուց հետո:

Հետաքրքիր կարգավորում է նախատեսում Շվեյցարիայի քրեական օրենսգրքի 321bis հոդվածը, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում *բժշկական հետազոտության* (ընդգծումն իմն է-Գ.Հ.), հետ կապված ծառայողական գաղտնիքի հրապարակման համար³:

Հոլանդիայի քրեական օրենսգրքի 272-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում այն անձանց համար, ովքեր պարտավոր են պահպանել համապատասխան տեղեկությունների գաղտնիությունն իրենց պաշտոնի, մասնագիտության կամ օրենքի պահանջի կամ իրենց *նախկին պաշտոնի կամ մասնագիտության*

¹ St'u <http://www.gesetze-im-internet.de>, German Criminal Code.

² St'u <http://legislationline.org>, Criminal Code of the French Republic.

³ St'u նույն տեղում, Criminal Code of the Swiss Confederation.

բերումով (ընդգծումն իմն է-Գ.Հ.), ինչպես նաև այն անձանց համար, ովքեր գիտեն կամ պետք է ողջամտորեն ենթադրեն այդ պարտականության մասին¹:

Ամփոփելով վերոշարադրյալ փաստարկները, հիմնավորումները և հաշվի առնելով քննարկվող խնդրի կապակցությամբ կատարված համեմատական վերլուծությունը՝ առաջարկում ենք՝

1. սահմանել բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտների հստակ շրջանակ՝ դրանում բացի բժշկական անձնակազմից և հիվանդի նկատմամբ անմիջական խնամք իրականացնող անձանցից ընդգրկելով նաև առողջապահության ոլորտում աշխատող այն անձանց, ովքեր թեև անմիջականորեն բժշկական սպասարկման հետ կապված գործունեություն չեն իրականացնում, սակայն իրենց աշխատանքային պարտականությունների կատարման կապակցությամբ ցանկացած պահի կարող են օրենքի հիման վրա ծանոթանալ բժշկական գաղտնիք կազմող տեղեկություններին

2. նախատեսել պետական լիցենզավորման պահանջ ժողովրդական բժշկությամբ զբաղվող անձանց համար՝ դրանով իսկ նրանց դարձնելով բժշկական գաղտնիքի հրապարակման սուբյեկտ,

3. անմիջականորեն բժշկական օգնության և սպասարկման հետ կապված գործունեություն իրականացնող անձանց համար սահմանել պարտականություն՝ պահպանել բժշկական գաղտնիքը նաև այդպիսի գործունեությունը դադարեցնելուց հետո

4. հաշվի առնելով հոգեթերապեվտների գործունեության առանձնահատկությունները՝ կարգավորել տարբեր իրավիճակներում համապատասխան տեղեկությունների հրապարակման դեպքում նրանց քրեական պատասխանատվության հարցը

5. քրեական օրենսգրքում նախատեսել հատուկ հանցակազմ մասնագիտական կամ ծառայողական գաղտնիքի հրապարակման համար, որը կտարածվի այն մասնագետների կողմից իրենց գործունեության կապակցությամբ հայտնի դարձած՝ անձի անձնական

¹ St'u HW Wefers Bettink and TP Hoelcstra Houthoff Buruma, Legal Privilege and Confidentiality in the Netherlands, Amsterdam, էջ 210:

և ընտանեկան կյանքին առնչվող տեղեկությունների հրապարակման դեպքերի նկատմամբ, որոնց վերաբերյալ հատուկ հանցակազմը քրեական օրենսգրքում բացակայում է:

Gohar Hakobyan

PhD student of the Chair of Criminal Law, YSU

SUBJECTS OF MEDICAL SECRECY DISCLOSURE

The given article discusses some issues on criminal liability of representatives of healthcare system for criminal disclosure of confidential medical data. Based on the reseach carried, the author suggests various legislative proposals on differentiation and specialization of criminal liability of psychotherapists, law enforcement authorities and other state officials for the medical secrecy disclosure. Furthermore, a comparative analysis on relevant legal provisions of European and CIS countries is conducted.

Гоар Акопян

Аспирант кафедры уголовного права ЕГУ

СУБЪЕКТЫ РАЗГЛАШЕНИЯ МЕДИЦИНСКОЙ ТАЙНЫ

В представленной статье затрагиваются вопросы уголовной ответственности различных работников сферы здравоохранения за преступное разглашение медицинской тайны, предлагаются определенные законодательные изменения относительно особенностей уголовной ответственности психотерапевтов, работников правоохранительных органов и других госслужащих за то же самое деяние, а так же проводится сравнительный правовой анализ соответствующих правовых норм стран СНГ и Европы.

Բանալի բառեր: բժշկական գաղտնիք, հրապարակում, հատուկ սուբյեկտ, մասնագիտական, հոգեբերապետ, առողջապահական, անձնական կյանք:

Keywords: medical secret, disclosure, special subject of the crime, professional, psychotherapist, medical, private life.

Ключевые слова: медицинская тайна, оглашение, специальный субъект, профессиональная, психотерапевт, медицинская, личная жизнь.

ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՅՑԻԴԻՎԻ ԴԵՊՔՈՒՄ

Հանցանք կատարած անձանց նկատմամբ պատիժ նշանակելը դատարանի գործունեության ամենաբարդ և պատասխանատու փուլերից մեկն է: Դատարանը յուրաքանչյուր քրեական գործով պատիժ նշանակելիս պարտավոր է ղեկավարվել պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներով, այսինքն՝ այնպիսի հիմնադրույթներով, որոնք թույլ են տալիս հանցանք կատարած անձանց նկատմամբ նշանակել արդարացի պատիժ: ՀՀ վճռաբեկ դատարանն իր որոշումներում ընդգծել է, որ «պատիժն համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, անձին բնութագրող բոլոր տվյալները և քրեական օրենքով նախատեսված պահանջներից ելնելով՝ հանցագործության մեջ մեղավոր անձի նկատմամբ նշանակում է այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ և բավարար է այդ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար»²:

ՀՀ քր. օր.-ի 61 հոդվածի վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնելու պատժի նշանակման հետևյալ ընդհանուր սկզբունքային պահանջները. ա) պատժի նշանակումը հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթների հաշվառմամբ, բ) կատարված հանցագործության հանրային վտանգավորության բնույթի և աստիճանի գնահատում, գ) հանցավորի անձը բնութագրող տվյալների հաշվառում, դ) պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքների գնահատում:

ՀՀ քրեական օրենսգիրքը, սահմանելով պատիժ նշանակելու

¹ ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Հ. Գաբուլյան:

² Տե՛ս Կ. Հարությունյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2007 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՎԲ-201/07 որոշումը:

ընդհանուր սկզբունքները, որոշ դեպքերում առանձնացնում է պատժի նշանակման հատուկ կանոններ: Այսպես, ՀՀ քր. օր.-ի 10-րդ գլխում պատժի նշանակման հատուկ կանոններ են նախատեսված չավարտված հանցագործությունների, հանցանքների ու դատավճիռների համակցության և հանցագործությունների ռեցիդիվի դեպքում: Նման դեպքերում դատարանը պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներից բացի պարտավոր է հաշվի առնել նաև համապատասխան նորմերով նախատեսված հատուկ կանոնները:

Ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնները և պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները հարաբերակցվում են ինչպես մաս և ամբողջություն, և դատարանը պարտավոր է առաջնորդվել ինչպես ՀՀ քր. օր.-ի 67.1 հոդվածի կանոններով, այնպես էլ պատժի նշանակման ընդհանուր սկզբունքներով: Մասնավորապես, համաձայն ՀՀ քր. օր.-ի 67.1 հոդվածի առաջին մասի՝ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս դատարանը հաշվի է առնում.

1. նախկինում կատարված հանցագործությունների քանակը, բնույթն ու ծանրությունը

2. հանգամանքներ, որոնց ուժով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար

3. նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները:

Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնների սահմանումը նորույթ է ՀՀ քրեական օրենսգրքի համար: Այն նախատեսվել է «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի մայիսի 23-ին ընդունված ՀՀ օրենքով: Մինչև համապատասխան փոփոխությունները, հանցագործությունների ռեցիդիվը գնահատվում էր որպես պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք և հանգեցնում էր դատարանի կողմից ավելի խիստ պատժի նշանակման, իսկ պատժաչափի ընտրությունն իրականացվում էր դատարանի հայեցողությամբ:

Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնների սահմանումը պայմանավորված է ռեցի-

դիվային հանցավորության բարձր հանրային վտանգավորությամբ: Ռեցիդիվը վկայում է ոչ միայն անձի, այլև կատարված յուրաքանչ-յուր հաջորդ հանցագործության վտանգավորության աստիճանի էական բարձրացման մասին: Հաշվի առնելով այդ հանգամանքները, կարծում ենք, արդարացված է ռեցիդիվի դեպքում պատժի նշանակման հատուկ կանոնների սահմանումը: Ենթադրվում է, որ վերոհիշյալ կանոններով օրենսդիրը նպատակ է հետապնդում բացառել չարդարացված մեղմ պատիժների, ինչպես նաև նույնանման արարք կատարած և համանման բնութագիր ունեցող անձանց նկատմամբ տարբեր պատժատեսակների ու պատժաչափերի նշանակման հնարավորությունը:

Ռեցիդիվի դեպքում պատժի նշանակման տարբերակված կարգի սահմանումն էականորեն նվազեցնում է պատիժ նշանակելիս դատարանի հայեցողության սահմանները: Ընդ որում, որքան լայն է տարբերակման ոլորտը, այնքան օրենսդրի կողմից ավելի մանրամասն են կարգավորվում պատժի նշանակման հարցերը և, բնականաբար, ավելի սահմանափակվում դատարանի հայեցողության շրջանակները, ու հակառակը¹: Թերևս արդարացված է գրականության մեջ արտահայտված այն դիրքորոշումը, որ «չափազանց լայն դատական հայեցողություն թույլատրող օրենքը նախադրյալներ է ստեղծում կամայականությունների համար և դառնում է այն խախտողների «դաշնակիցը»»²:

Իհարկե խոսքը դատարանի հայեցողության լրիվ բացառման մասին չէ: Պետք է նկատի ունենալ, որ դատական հայեցողությունը դատավորի գործունեության անբաժան մասն է, և դրա լրիվ բացառումն անհնար կդարձնի պատժի ու պատասխանատվության անհատականացման և արդարության սկզբունքների իրագործումը: Առանց դատական հայեցողության անհնար է կայացնել օրինական, հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ³: Պարզապես դատարանի ընտրության ազատությունն օրենքով կանխորոշ-

¹ Տե՛ս Т. А. Лесниевски-Костарева Дифференциация уголовной ответственности. Теория и законодательная практика. М., 2000թ. էջ 23:

² Տե՛ս С. А. Поляков Санкции в уголовном законодательстве: Автореф. дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук. СПб., 1996թ. էջ 10-12:

³ Տե՛ս А. Н. Берг Судебное усмотрение и его пределы, автореферат, дисс. на соиск. учен. степени канд. юрид. наук. Екатеринбург, 2008 թ.:

ված որոշակի շրջանակներով սահմանափակելու շնորհիվ դատական հայեցողությունը չի վերածվում կամայականության:

Այսպես, 67.1 հոդվածով դատարանի լիազորությունները սահմանափակվում են միայն ռեցիդիվի դեպքում նշանակվող նվազագույն պատժաչափի որոշման մասով: Վերջիններս ռեցիդիվի յուրաքանչյուր տեսակի դեպքում հստակ սահմանվում են օրենքով (հասարակ ռեցիդիվի դեպքում նվազագույն պատիժը չի կարող պակաս լինել պատժի առավելագույն ժամկետի կեսից, վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ երկու երրորդից, իսկ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում՝ երեք քառորդից):

Կոնկրետ դեպքերում պատիժը որոշելիս դատարանի կողմից հաշվի առնվող հանգամանքները նախատեսված են նույն հոդվածի առաջին մասում, որի համաձայն՝ հանցագործությունների ռեցիդիվի, վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված հանցագործությունների քանակը, բնույթը և ծանրությունը, այն հանգամանքները, որոնց հետևանքով նախկին պատիժը բավարար չի եղել մեղավորի ուղղման համար, ինչպես նաև նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները:

Կարծում ենք՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել 67.1 հոդվածի առաջին մասով տրված ձևակերպման մեջ առկա թերություններին: Նախ՝ սխալ է «հանցագործությունների բնույթը և ծանրությունը» հասկացությունը, պետք է լինի «հանցագործությունների բնույթն ու վտանգավորության աստիճանը»: Երկրորդ՝ սխալ է «նոր հանցագործության բնույթը, ծանրությունը և հետևանքները» հասկացությունները: Բանն այն է, որ հանցագործության հետևանքները հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի հիմնական ցուցանիշն են, դրա բաղկացուցիչ մասը, ուստի սխալ է դրանք իրարից առանձնացնելը: Բացի այդ, ինչպես արդեն նշել ենք, «հանցագործության ծանրություն» հասկացության փոխարեն պետք է օգտագործել «հանցագործության հանրային վտանգավորության աստիճան» հասկացությունը¹:

Օրենսդիրը 67.1 հոդվածի առաջին մասում դատարանի կողմից պատիժ նշանակելիս հաշվի առնվող հանգամանքների թվար-

¹ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, Երևան, 2012 թ., էջ 453:

կումն իրականացրել է՝ ելնելով ռեցիդիվի հասկացության առանձնահատկություններից, այն է՝ դիտավորյալ հանցանք կատարելն այն անձի կողմից, ով դատվածություն ունի նախկինում դիտավորությամբ կատարված հանցանքի համար:

Այսպիսով, դատարանը նախ պետք է հաշվի առնի կատարված հանցագործությունների քանակը: Բնականաբար, եթե հանցագործություն է կատարում մեկից ավելի դատվածություն ունեցող անձը, պատիժը կարող է ավելի խիստ լինել (բարդ ռեցիդիվ):

Դատարանն այնուհետև պարտավոր է գնահատել նախկին և նոր կատարված հանցագործությունների բնույթն ու հանրային վտանգավորության աստիճանը: Եթե նախկինում կատարված հանցանքներն աչքի են ընկնում բարձր հանրային վտանգավորությամբ, իսկ նոր կատարվածն էլ իր վտանգավորությամբ չի զիջում վերջիններիս, բնականաբար կնշանակվի ավելի խիստ պատիժ: Սակայն որքան էլ որ բարձր լինի նախորդ հանցանքների վտանգավորությունը, դատարանը չի կարող էապես խստացնել պատիժը, եթե նոր կատարված հանցագործությունը ցածր հանրային վտանգավորություն ունի, չնչին վնաս է պատճառել կամ հանցավորը երկրորդական դեր է ունեցել հանցագործության կատարման մեջ:

Նախկինում և նոր կատարված հանցագործությունների բնույթն ու հանրային վտանգավորությունը հաշվի առնելու պահանջն անհրաժեշտ է նաև հանցավորի կայուն հակահասարակական դիրքորոշման, միաբնույթ հանցանքներ կատարելու նրա հակվածության (շահադիտական, բռնի, բռնի-շահադիտական և այլն) բացահայտման համար¹: Մասնավորապես, եթե անձը նախկինում կատարել է նույն հանցագործությունը կամ միաբնույթ հանցագործություններ, այսինքն՝ առկա է հատուկ ռեցիդիվ, ապա նշանակվող պատիժը ավելի խիստ պետք է լինի:

Կարծում ենք՝ 67.1 հոդվածի առաջին մասում ճիշտ կլիներ նաև նախատեսել պատիժ նշանակելիս հանցավորի անձը բնութագրող տվյալները հաշվի առնելու դատարանի պարտականութ-

¹ Стен А. И. Чучаева комментарий к уголовному кодексу РФ, Москва, 2010, էջ 212-215:

յունը: Վերոնշյալ պահանջը ոչ թե կկրկնօրինակեր պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները, այլ դատարանի ուշադրությունը կկենտրոնացներ հանցավորի անձի վրա: Ռեցիդիվն անհատի արմատավորված հակասոցիալական, սոցիալ-հոգեբանական կայուն հատկանիշների, նրա վարքագծի հանցավոր բնույթի դրսևորումն է: Հանցանք կատարած յուրաքանչյուր անձի վերաբերյալ պետք է հավաքվեն ամբողջական տեղեկություններ, հաշվի առնվեն նրանցից յուրաքանչյուրի անձնական առանձնահատկությունները, վերաբերմունքը պատժի նկատմամբ, ուղղիչ հիմնարկներում նրանց նկատմամբ իրականացված դաստիարակչական աշխատանքների բույթն ու մեթոդները, նոր հանցագործության կատարման պատճառներն ու պայմանները և այլն: Միայն վերը նշված հանգամանքները պարզելով՝ դատարանը կարող է իրականացնել պատասխանատվության ու պատժի անհատականացում և նշանակել արդարացի պատիժ, որը կբխի կատարված արարքի հանրային վտանգավորության աստիճանից և հանցավորի անձը բնութագրող տվյալներից:

Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելիս դատարանը պարտավոր է նաև բացահայտել այն հանգամանքները, որոնց ուժով նախկին պատիժը բավարար չի եղել հանցավորի ուղղման համար: Այն կարևոր նշանակություն ունի անձի կայուն հակահասարակական ձգտումների բացահայտման, ապագայում նրա հնարավոր հանցավոր վարքագծի կանխատեսման համար: Սակայն եթե այդ հանգամանքները պայմանավորված են հանցավորի հետ տարվող աշխատանքներում առկա թերություններով, պատիժ նշանակելիս չեն կարող հաշվի առնվել¹:

Կարծում ենք, որ պատժի նշանակման 67.1 հոդվածի երկրորդ մասով նախատեսված կարգն ունի լուրջ թերություններ, սակայն մինչև դրանց անդրադառնալը վերլուծենք հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու՝ տեսական գրականության մեջ, ինչպես նաև արտասահմանյան տարբեր պետությունների օրենսդրություններով նախատեսված մի շարք տարբերակներ:

¹ Տե՛ս ՀՀ քրեական իրավունք, ընդհանուր մաս, Երևան, 2012 թ., էջ 454:

Դրանք են.

1. Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում նշանակվող պատժի նվազագույն չափի սահմանումը բացարձակ մեծություններվ: Կարգավորման այս առաջարկությունն արվել է դեռևս 20-րդ դարի 80-ական թթ.-ին: Ընդ որում, նման պատիժ կարող էր նշանակվել միայն վտանգավոր և առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստ ճանաչված անձանց նկատմամբ: Մասնավորապես, վտանգավոր ռեցիդիվիստների նկատմամբ կարող էր նշանակվել երեք տարուց ոչ պակաս, իսկ առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստների նկատմամբ՝ հինգ տարուց ոչ պակաս ժամկետով ազատազրկում:

2. Հանցագործությունների ռեցիդիվը որպես պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք դիտելը: Նման կարգավորում առկա էր մեր քրեական օրենսգրքում մինչև վերջերս կատարված փոփոխությունները և հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոններ սահմանելը՝ 67.1 հոդվածը քրեական օրենսգրքը ներմուծելու միջոցով: Դրա թերությունն այն է, որ ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հարցերը գտնվում են դատարանի լայն հայեցողության շրջանակներում, մինչդեռ, հաշվի առնելով այդպիսի հանցագործությունների վտանգավորության բարձր աստիճանը, ակնհայտ է դրանց դեմ ավելի խիստ մեթոդներով պայքարելու անհրաժեշտությունը:

3. Հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի առավելագույն սահմանը գերազանցող գործակցի սահմանումը: Սա նախատեսված է մի շարք արտասահմանյան պետությունների քրեական օրենսգրքերով: Դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա են պատժի նշանակման վերաբերյալ երկու հիմնական մոտեցումներ. կան պետություններ, որոնց քրեական օրենսգրքերով արգելվում է դուրս գալ համապատասխան հոդվածի սանկցիայի վերին սահմաններից (Չինաստան, Շվեյցարիա և այլն) և կան այնպիսիք, որոնց քրեական օրենսգրքը թույլատրում է անցնել վերին սահմանը, օրինակ՝ Լեհաստանում թույլատրվում է գերազանցել այն մեկ ու կես, ԱՄՆ-ում երկու անգամ և այլն¹:

¹ Стів А. А. Малиновский Сравнительное правоведение в сфере уголовного права. М., 2002թ., էջ 233:

4. Հանցագործությունների ռեցիդիվի դեպքում նշանակվող պատժի նվազագույն չափի սահմանումը՝ սանկցիայի վերին սահմանից որոշակի համամասնությամբ: Պատժի նշանակման այս կարգի դեպքում նվազագույն պատիժը խստացվում է, և դատարանն իրավունք չունի նշանակելու դրանից ցածր պատիժ: Հենց այս մեթոդն է ընտրել ՀՀ օրենսդիրը հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատժի նշանակման հարցերը կարգավորելիս:

Այսպես, ՀՀ քր. օր.-ի հոդված 67.1-ի երկրորդ մասի համաձայն՝

« (...)

2. Հանցագործությունների ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի կեսից:

Հանցագործությունների վտանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երկու երրորդից:

Հանցագործությունների առանձնապես վտանգավոր ռեցիդիվի համար նշանակված պատիժը չի կարող պակաս լինել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սանկցիայով նախատեսված առավելագույն պատժի երեք քառորդից»:

Անհրաժեշտ է նշել, որ պատժաչափի որոշման նման կարգն այնքան էլ արդարացված չէ: Մասնավորապես, հասարակ ռեցիդիվի դեպքում բազմաթիվ հոդվածներում պատժի նվազագույն չափը ոչ միայն չի խստացվում, այլ նույնիսկ հոդվածի սանկցիայով սահմանված նվազագույն չափից մեղմ է ստացվում: Ընդ որում, այս խնդիրն առաջանում է ոչ միայն հասարակ ռեցիդիվի պարագայում: Վտանգավոր ռեցիդիվի առկայությունը նույնպես մի շարք հոդվածներում չի հանգեցնում պատժի նվազագույն չափի խստացմանը (հոդվածներ 215-ի 4-րդ մաս, 217-ի 2-րդ և 3-րդ մասեր, 222-ի 1-ին մաս և այլն), մի շարք հոդվածներում էլ սանկցիայի նվազագույն չափից պատիժը նվազ է ստացվում (հոդվածներ 131-ի 3-րդ մաս, 132-ի 3-րդ մաս, 132.2-ի 3-րդ մաս): Նման կարգավորումը խախ-

տում է քրեական իրավունքի բոլոր սկզբունքները, խարխլում օրինականության հիմքերը, պատժի նշանակման ընդհանուր սկզբունքները, որոնց համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները: Բացի այդ, այն չի բխում նաև ռեցիդիվի նշանակությունից, ռեցիդիվային հանցավորության դեմ առավել խիստ միջոցներով պայքարելու անհրաժեշտությունից: Հանցագործությունների ռեցիդիվը բազմակիության առավել վտանգավոր տեսակն է: Դատվածություն ունեցող անձինք տարբերվում են առաջին անգամ դատապարտվածներից իրենց բարձր հանրային վտանգավորությամբ, քանի որ նրանք արդեն իսկ ունեն հանցավոր փորձ և փաստորեն նրանց նկատմամբ պատժի նպատակները չեն իրագործվել:

Կարծում ենք, իհարկե, որ իրականում դատարանը չի նշանակի սանկցիայի նվազագույնից ցածր պատիժ, սակայն այս խնդրին պետք է տրվի օրենսդրական լուծում՝ նախատեսելով հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատժի նշանակման այնպիսի կարգ, որը կբխի ոչ միայն քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթներից, այլև հաշվի կառնի հատուկ մասի հոդվածների սանկցիաների կառուցման առանձնահատկությունները:

Հաշվի առնելով վերոնշյալ խնդրի լուծման վերաբերյալ առկա տարբեր առաջարկությունները՝ կարծում ենք՝ գերադասելի է հանցագործությունների ռեցիդիվի դեպքում նվազագույն պատժաչափի բարձրացման հետևյալ կանոնի սահմանումը.

ա. հասարակ ռեցիդիվի դեպքում նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի՝ սանկցիայով նախատեսված ամենախիստ պատժի նվազագույն չափին տվյալ պատժի նվազագույն և առավելագույն սահմանների տարբերության մեկ քառորդով ավելացված չափից:

բ. Վտանգավոր ռեցիդիվի դեպքում նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել քրեական օրենսգրքի հատուկ մասի համա-

պատասխան հոդվածի՝ սանկցիայով նախատեսված ամենախիստ պատժի նվազագույն չափին տվյալ պատժի նվազագույն և առավելագույն սահմանների տարբերության մեկ երրորդով ավելացված չափից:

գ. Առանձնապես վտանգավոր ռեցիդիվի դեպքում նշանակվող պատիժը չի կարող պակաս լինել քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի՝ սանկցիայով նախատեսված ամենախիստ պատժի նվազագույն չափին տվյալ պատժի նվազագույն և առավելագույն սահմանների տարբերության մեկ երկրորդով ավելացված չափից:

Առաջարկվող կանոնի առավելությունն այն է, որ ավելի համակողմանիորեն է կարգավորում հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու հարցերը՝ առանց ներկայումս գործող պատժի նշանակման կարգին բնորոշ թերությունների:

Հնարավոր են իրավիճակներ, երբ հանցագործությունների ռեցիդիվը զուգակցվի չավարտված հանցագործության հետ: Օրենսդիրը կարգավորել է այս հարցը՝ արգելելով չավարտված հանցագործության և ռեցիդիվի միաժամանակյա առկայության դեպքում պատիժ նշանակել չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու կանոններով (ՀՀ քր. օր.-ի 65 հոդվածի 4.1 մաս): Այս հարցին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ սահմանելով, որ «(...) հանցագործությունների ռեցիդիվի առկայությունը բացառում է չավարտված հանցագործության համար պատիժ նշանակելու ընդհանուր կանոնների կիրառմամբ պատիժ նշանակելը: Հանցագործությունների ռեցիդիվի առկայության դեպքում պատիժը նշանակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 67¹-րդ հոդվածի կանոններով՝ անկախ նրանից, թե հանցագործությունը, որի կատարման մեջ անձը մեղավոր է ճանաչվել, ավարտված է, թե ոչ: Այլ խոսքով՝ չավարտված հանցագործությունների համար պատիժ նշանակելու կանոնները չեն կիրառվում, եթե առկա է հանցագործությունների ռեցիդիվի որևէ տեսակ»¹:

Կարծում ենք, որ օրենսդրի վերոնշյալ դիրքորոշումն արդա-

¹ Տե՛ս Ս. Թադևոսյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԿԴ3-0006/01/12 որոշումը:

րացի չէ: Հանցագործությունների նախապատրաստության և հանցափորձի դեպքում պատիժ նշանակելու հատուկ կանոնների սահմանումը բխում է արդարության ու պատասխանատվության անհատականացման, մարդասիրության սկզբունքների պահանջներից: Չավարտված հանցագործություններն ավարտվածների համեմատ բնութագրվում են հանրային վտանգավորության ավելի ցածր աստիճանով, հետևաբար չեն կարող հավասար իրավական գնահատականի արժանանալ նաև հանցագործությունների ռեցիդիվի դեպքում: Ուստի ճիշտ կլիներ չավարտված հանցագործությունների դեպքում ռեցիդիվի կանոններով պատիժ նշանակելիս հաշվի առնել ՀՀ քր. օր.-ի 65 հոդվածով սահմանված սահմանափակումները:

Քր. օր.-ի 67.1 հոդվածի երկրորդ մասի կիրառման համար որևէ բացառություն նախատեսված չէ: Հարց է առաջանում, թե կարո՞ղ է արդյոք դատարանը ռեցիդիվի դեպքում կիրառել քր. օր.-ի 64 հոդվածը: Ելնելով քրեական օրենքի տառացի մեկնաբանման սկզբունքից, ինչպես նաև այն հանգամանքից, որ 67.1 հոդվածով սահմանված նորմը հատուկ նորմ է 64 հոդվածի նկատմամբ՝ ստացվում է, որ այն չի կարող կիրառվել ռեցիդիվի դեպքում: Սակայն կարծում ենք, որ նման մոտեցումը արդարացված չէ: Այն չի բխում արդարության և պատասխանատվության անհատականացման, ինչպես նաև մարդասիրության սկզբունքների պահանջներից: Ճիշտ կլիներ ՌԴ քր. օր.-ի օրինակով նախատեսել 64 հոդվածի կիրառումը նաև ռեցիդիվի դեպքում, և բացառիկ հանգամանքների առկայության դեպքում դատարանին հնարավորություն տալ չկիրառելու 67.1 հոդվածի երկրորդ մասով սահմանված կանոնները, նշանակել հոդվածի՝ սանկցիայով նախատեսված նվազագույնից մեղմ պատիժ:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք արձանագրել, որ հանցագործությունների ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու կարգն ամրագրող ՀՀ քր. օր.-ի 67.1 հոդվածում առկա են էական թերություններ, որոնք կարող են լուրջ խոչընդոտներ առաջացնել տվյալ նորմի գործնական կիրառման ոլորտում, ուստի անհրաժեշտ է ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու նոր կարգ սահմա-

նել: Կարծում ենք, որ մեր կողմից առաջարկված լուծումները կարող են նպաստել ռեցիդիվի դեպքում պատիժ նշանակելու արդյունավետությանը:

Zhenya Stepanyan

PhD student of the Chair of Criminal Law, YSU

THE FEATURES OF SENTENCING IN SCOPES OF RECIDIVISM

In the article it is discussed the lack of regulating connected with the sentencing in scopes of recidivism and also the problems which it causes in the practice. As a result several legislative proposals have been made to define a new order of sentencing which derives from the necessity to struggle against the recidivism with more effective methods.

Женя Степаян

Аспирант кафедры уголовного права ЕГУ

ОСОБЕННОСТИ НАЗНАЧЕНИЯ НАКАЗАНИЯ ПРИ РЕЦИДИВЕ ПРЕСТУПЛЕНИЙ

В статье обсуждается действующий порядок назначения наказания при рецидиве преступлений, который имеет серьезные недостатки и вызывает проблемы в практике. Были изучены ряд соответствующих норм уголовного законодательства зарубежных стран. В ходе изучения было предложено установить новый порядок назначения наказания при рецидиве преступлений и бороться против рецидивной преступности более строгими средствами, способствовать повышению эффективности применения данной нормы.

Բանալի բառեր` ռեցիդիվ, պատիժ, հանցագործություն, դատարան, հոդված, օրենսգիրք, սկզբունք, անձ:

Keywords: recidivism, penalty, crime, court, article, code, principe, person.

Ключевые слова: рецидив, наказание, преступление, суд, статья, кодекс, принцип, личность.

ՎՃՌԱՔԵԿՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՇԱՀԵՐԻ ՀԱՎԱՍԱՐԱՎՇՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Դատական վերանայման համակարգի՝ որպես ածի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության ապահովման մեխանիզմի արդյունավետ կենսագործումը մեծապես կախված է այդ համակարգը կազմող վերանայման տարրերից յուրաքանչյուրի դատավարական ձևի (կառուցակարգի) և ընթացակարգի համաչափ օրենսդրական կանոնակարգումից: Դա նաև կարևոր նախապայման է ընդհանրապես դատական վերանայման համակարգի ընդհանրապես և մասնավորապես դրա առանձին տարրերի առջև դրված խնդիրների հետևողական իրացման համար մասնավորապես:

Վերոհիշյալ նկատառումները հատկապես արդիական են դատական վերանայման համակարգի վճռաքելության տարրի համար:

Վճռաքել վերանայման հետ կապված ցանկացած հարցի լուծում նախ և առաջ պահանջում է անդրադառնալ գործունեության այդ տեսակն իրականացնող դատական մարմնի՝ ՀՀ վճռաքել դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակին (ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդված) և դրանից բխող՝ այդ մարմնի առջև դրված խնդիրներին:

Այսպես, ՀՀ վճռաքել դատարանը՝ որպես արդարադատություն իրականացնող բարձրագույն դատական ատյան, նախ և առաջ կոչված է իր գործունեությունը ծառայեցնելու դատական սխալների ուղղման խնդրի հետևողական իրացմանը՝ ստեղծելով երաշխիքներ անձի իրավունքների և օրինական շահերի գործուն պաշտպանության համար: Բացի այդ, 2005 թվականի սահմանադրաիրավական բարեփոխումների արդյունքում Վճռաքել դատա-

¹ ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ.Ս. Ղազինյան:

րանը ձեռք բերեց նաև նոր սահմանադրաիրավական առաքելություն՝ ապահովել օրենքի միատեսակ կիրառությունը, այլ կերպ՝ ձևավորել միասնական դատական պրակտիկա՝ նպաստելով իրավունքի զարգացման խնդրի իրականացմանը:

Վճռաբեկ դատարանի այս սահմանադրաիրավական կարգավիճակը պետք է որոշակիորեն կանխորոշ լինի վճռաբեկության՝ որպես այդ դատական մարմնի կողմից իրականացվող հիմնական գործունեության դատավարական ձևի և ընթացակարգի կանոնակարգման համար:

Չափազանց հետաքրքրական է վճռաբեկ վերանայման դատավարական ձևի տարրերից մեկի՝ վերանայման սահմանների կամ այլ կերպ՝ վճռաբեկ դատարանի կողմից գործի վերանայման ծավալի խնդիրը:

Ընդհանուր առմամբ, քննարկվող խնդրի օրենսդրական կանոնակարգման պատմական փորձի ուսումնասիրությունը վկայում է երկու հիմնական մոդելների գոյության մասին, երբ վճռաբեկ դատարանում գործը վերանայվում է ամբողջ (ռեզիդիոն կարգ) կամ բոլորքում նշված պահանջների ծավալով: Այդ նույն պատմական փորձի ուսումնասիրությունն ակնհայտ է դարձնում այս ինստիտուտի սերտ կապը հանրային և մասնավոր շահերի հավասարակշռության ապահովման խնդրի հետ: Եվ վճռաբեկության խնդիրների հետ մեկտեղ այս խնդրի հետևողական իրացումը հատկապես կարող է նպաստել վճռաբեկության սահմանների արդյունավետ կանոնակարգմանը:

Այսպես, խորհրդային քրեական դատավարությունում դատական ակտերի վճռաբեկ վերանայման ռեզիդիոն տարրերը որևէ կերպ սահմանափակված չէին բոլորքարկման իրավունք ունեցող այս կամ այն սուբյեկտի մասնավոր շահով, և միակ բացառությունը վերաբերում էր դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիությանը: Թույլ տալով վերադաս դատական ատյանին իրականացնել գործի լրիվ ծավալով նոր քննություն, անկախ բոլորքի հիմքերից և բոլորք բերողի կարգավիճակից, դատական ակտերի վճռաբեկ վերանայման ռեզիդիոն կարգն օբյեկտիվորեն արտացո-

լում էր հանրայնության խորհրդային գաղափարախոսությունը¹, ըստ այդմ կանխորոշելով դատական վերանայման այս տարրի դատավարական ձևը և ընթացակարգը, այդ թվում՝ վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման առարկան և սահմանները, դատարանի հնարավոր որոշումների տեսակները և լիազորությունները: Նման կարգավորման պայմաններում շահագրգիռ անձանց բողոքները (պահանջները) միայն առիթ էին գործի վերանայման վարույթ հարուցելու համար և որևէ կերպ չէին սահմանափակում դատարանի իրավունքը՝ իրականացնելու գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ, օբյեկտիվ քննություն և իրացնելու վարույթի ցանկացած հարցի առնչությամբ պետության կամքը²: Վերանայման ռեկզիոն կարգի կիրառման արդյունքում դատական ակտի վերանայումը (սահմանափակված կողմերի կամքով կամ շահերով) անխուսափելիորեն վերածվում է գործի որևէ կերպ չսահմանափակված վերանայման (հանրային իրավական շահ)³:

Խորհրդային գրականության մեջ գերագույն դատարանում ռեկզիոն կարգի կիրառությունն արդարացվում էր հետևյալ երկու հիմնական համգամանքներով. նախ՝ վճռաբեկ բողոքում միշտ չէ, որ նշվում կամ լրիվ կամ ճիշտ ձևով են նշվում դատական ակտի արդարացիությունը կասկածի տակ դնող՝ ստորադաս դատարանի թույլ տված խախտումները: Հետևաբար, սահմանափակվելով

¹ Եթե խորհրդային քրեական դատավարությունում հանրայնության սկզբունքի մեջ արտացոլվում էր պետության շահը, որը հակադրվում էր մասնավոր հիմքին, ապա ժամանակակից քրեական դատավարությունում հանրայնությունը չի բացառում մրցակցության սկզբունքի գոյությունը, որն էլ իր հերթին ոչ միայն ենթադրում է հանրային շահի առկայություն, այլև այն, որ մասնավոր շահի հետ մրցակցությամբ այն դառնում է քրեական դատավարության շարժիչ ուժերից մեկը: Ավելի մանրամասն տե՛ս **Գ. Ղազինյան, Ս. Դիբանդյան** Հանրայնության սկզբունքի տեղը և դերը քրեական դատավարության սկզբունքների համակարգում / «Պետություն և իրավունք», 2013, N 1(59), էջեր 4-17:

² Տե՛ս **Ковтун Н.Н.** Судебный контроль в уголовном судопроизводстве России: понятие, сущность, формы, дис. ... д-ра юрид. наук, М., РГБ, 2003, էջ 329:

³ Տե՛ս Տե՛ս **Ковтун Н.Н.** նշված աշխատությունը, մեջբերումն ըստ՝ **Перлов И.Д.** Надзорное производство в уголовном процессе.- М.: Юрид. лит., 1974, էջ 7:

միայն բողոքի հիմքերով՝ դատարանը չէր կարողանալու ուղղել թույլ տրված օրենքի խախտումները և ըստ էության ստուգել դատական ակտի օրինականությունը և հիմնավորվածությունը: Եվ երկրորդ՝ հնարավոր է, որ դատական ակտը բողոքարկված լինի մեկ կամ մի քանի մեղադրյալների կողմից, սակայն գործում առկա լինեն խախտումներ, որոնք վերաբերում են դատական ակտը չբողոքարկած մյուս մեղադրյալներին¹:

Արդյունքում գործի վերանայման հանրային ռեզիզիոն կարգի դատավարական նշանակությունը հանգեցվում էր նրան, որ այն հնարավորություն էր տալիս դատարանին վեր հանել գործով թույլ տրված բոլոր խախտումները և այդ կերպ ապահովել անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը²:

Իբրև գործի վերանայման հանրային ռեզիզիոն կարգի գոյության նախապայման խորհրդային գրականության մեջ մատնանշվում էր նաև դատավորի անկախությունը, ներքին համոզմունքի հիման վրա որոշումներ ընդունելու, ինչպես նաև գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու անհրաժեշտությունը³:

Չնսեմացնելով վճռաբեկ վերանայման սահմանների՝ խորհրդային օրենսդրությամբ նախատեսված կարգավորման արժեքը՝ այդուհանդերձ կարող ենք եզրակացնել, որ վճռաբեկ ատյանին վերապահելով գործի լրիվ ծավալով, ըստ էության քննություն իրականացնելու լիազորություն՝ խորհրդային քրեադատավարական օրենքը գերակայությունը տալիս էր օբյեկտիվ ճշմարտությունը բա-

¹ Տե՛ս **Сухова О.А.** Кассационное обжалование судебных решений в Российском уголовном процессе. дис. ... канд. юрид. наук. Саранск, 2004, էջեր 49-50, մեջբերումն ըստ՝ **Николаев В.С.** Задачи кассационного производства и ревизионный порядок пересмотра дел в советском уголовном процессе.-М., 1961, էջ 36; **Строгович М.С.** Курс советского уголовного процесса. Т.1.-М., 1968, էջեր 368-370; **Потеружа И.И.** Роль суда второй инстанции в укреплении законности.-Минск, 1980, էջեր 74-75; **Копьева А.Н.** Доказывание по уголовным делам в вышестоящем суде.-Иркутск, 1990, էջ 25; **Адаменко В.Д.** Приговор и его изменение в кассации.-Кемерово, 2000. էջեր 77-79:

² Տե՛ս **Сухова О.А.** նշված աշխատությունը, էջ 50, մեջբերումն ըստ՝ Уголовный процесс/Под ред. К.Ф. Гуценко.-М.,1997, էջ 296:

³ Տե՛ս **Сухова О.А.** նույն տեղում, մեջբերումն ըստ՝ **Копьева А.Н.** նշված աշխատությունը, էջ 296:

ցահայտելու հանրային շահին՝ կարևորելով այդ հարցում դատարանի խիստ ակտիվ մասնակցությունը: Նույն խորհրդային հանրայնության սկզբունքի տեսանկյունից չէր պահանջվում կողմերի ակտիվությունը վերադաս դատարանում պաշտպանելու իրենց պահանջները: Արդյունքում սահմանափակվում էր կողմերի բողոքարկման ազատությունը, անտեսվում վերջիններիս իրավաչափ շահը՝ ներկայացնելու և հիմնավորելու իրենց իրավական դիրքորոշումը:

Ինչպես արդարացիորեն նշում է Ն. Կովտունը, դատական ակտերի վճռաբեկ վերանայման ռեկզիոն կարգը ծառայում էր սոսկ որպես միջոց իրացնելու օրինականության, հանրայնության և օբյեկտիվ ճշմարտության գաղափարները՝ դատավարության հանրային կարգին համապատասխան¹:

Բնականաբար, սկզբունքորեն այլ կանոնակարգում պետք է ստանար վճռաբեկության կառուցակարգը (մասնավորապես վճռաբեկության սահմանները) մրցակցային քրեական դատավարությունում, որի հիմքերը դրվեցին 1998 թվականին ընդունված ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով:

Մրցակցային քրեական դատավարությունում էապես սահմանափակվում է դատարանի հանրային ակտիվությունը, մասնավոր շահերի ոլորտ ներթափանցելու հնարավորությունը, և փոխարենը կարևորվում է կողմերի ակտիվ վարքագիծը՝ հիմնված տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի վրա: Մրցակցային քրեական դատավարության պայմաններում անձի՝ իր իրավական դիրքորոշումը հիմնավորելու պատշաճ ջանասիրությունից է մեծապես կախված գործի՝ իր համար բարենպաստ ելքը:

Քննադատաբար մոտենալով վճռաբեկության սահմանների կանոնակարգման հարցում ռեկզիոն տարրերի առկայությանը՝ պրոֆեսոր Պետրուխինը նշում է, որ հանրայնության սկզբունքի գերազնափառման վրա հիմնված ռեկզիոն տարրերից հրաժարումը կնպաստի բողոքարկման իրավունքի իրացմանը և կբարձրացնի պաշտպանների պատասխանատվությունը՝ ներկայացնելու որակ-

¹ St'ya **Ковтун Н.Н.** Нужен ли возврат к ревизионному началу в кассационном и надзорном производстве?// Журнал российского права.- 2002.-N 12. էջ 15:

յալ բողոքներ¹:

Ն. Կովտունի կարծիքով, արդարադատության իրականացման գործում դատարանի տեղի և դերի մասին ժամականակից պատկերացումների տեսանկյունից ռեզիզիոն կարգն անխուսափելիորեն հակասության մեջ է մտնում դիսպոզիտիվության սկզբունքի հետ՝ համաձայն որի՝ դատավարության շարժիչ ուժը պետք է լինի գործով շահագրգռված անձանց կամքը, այլ ոչ թե օրենքի հանրային-իրավական կամքը և դատարանի հանրային-իրավական ակտիվությունը²:

Այսպես, ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի համաձայն՝

«1. Վճռաբեկ դատարանը վերանայում է վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը՝ վճռաբեկ բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

2. Եթե գործով դատապարտված են մի քանի անձ, իսկ բողոքը բերված է դատապարտյալներից միայն մեկի կամ մի քանիսի նկատմամբ, դատարանը վճռաբեկ բողոքում նշված հիմքերի սահմաններում պարտավոր է գործն ստուգել միայն տվյալ դատապարտյալների վերաբերյալ:»:

Այս մոդելը խիստ համահունչ է մրցակցային դատավարությունում վերադաս դատարանի գործունեության հիմքում ընկած «որքան բողոք, այնքան վերանայում» (*quantum devolutum quantum appellatum*) և «դատարանը չի կարող դուրս գալ կողմերի պահանջների շրջանակից» (*judex ne eat ultra petita partium*) սկզբունքներին³:

Այսպիսով, գործող օրենսդրական կանոնակարգման պայմաններում վճռաբեկ դատարանում գործի քննությունը սահմանափակ-

¹ Տե՛ս **Лантух Н.В.** Формы проверки не вступивших в законную силу приговоров. дис. ... канд. юрид. наук. Санкт-Петербург, 2001, էջեր 123-124, մեջբերումն ըստ՝ **Петрухин И.Л.** Публичность и диспозитивность в уголовном процессе// Российская юстиция. 1999, էջեր 24-25:

² Տե՛ս **Сухова О.А.** նշված աշխատությունը, էջ 55, մեջբերումն ըստ՝ **Ковтун Н.Н.** Производство в суде второй (апелляционной и(или) кассационной) инстанции // В кн.: Уголовный процесс России / Науч. ред. В.Т. Томин.- М., 2003, էջեր 567 և 572:

³ Տե՛ս **Ковтун Н.Н.** Апелляция, кассация, надзор: анализ содержания // Апелляция, кассация, надзор: новеллы ГКП РФ и УПК РФ. Первый опыт критического осмысления: -Юрист: Москва, 2011, էջ 87:

ված է վճռաբեկ բողոքի հիմքերով և հիմնավորումներով, ինչպես նաև բողոք բերող սուբյեկտով: Այսինքն, վճռաբեկ բողոքը ոչ թե սոսկ վճռաբեկ վարույթ հարուցելու առիթ է, այլ վճռաբեկ բողոք բերելու ճանապարհով կողմերն իրենք են կանխորոշում վճռաբեկ վերանայման սահմանները: Այս տեսանկյունից տեղին է հիշատակել Ս. Վորոժցովի պնդումն այն մասին, որ քրեական դատավարության հիմնարար սկզբունքը՝ կողմերի մրցակցությունը, հնարավորություն է տալիս որոշել, թե դատական ակտի ո՞ր մասի հետ են կողմերն անհամաձայն և ըստ այդմ որոշել նաև վճռաբեկ վերանայման սահմանները ¹:

Սակայն հարկ է նշել, որ քրեական դատավարությունում նույն մրցակցության սկզբունքի չարդարացված գերազնահատումը, երբ լիովին բացառվում է դատարանի հնարավորությունը սեփական նախաձեռնությամբ արձագանքելու կոպիտ դատական սխալներին, ևս կարող է հանգեցնել քրեական դատավարության մասնակիցների իրավունքների և օրինական շահերի խախտմանը: Ինչպես արդարացիորեն նշվում է տեսական գրականության մեջ, մրցակցության տարրերը պետք է առկա լինեն քրեական դատավարության ամբողջ ընթացքում: Սակայն այդ գաղափարը կարելի է հասցնել անհեթեթության, եթե քրեական դատավարությունը նմանեցվի ֆուտբոլային խաղի, որտեղ դատավորի դերը հանգում է երկու խմբերի խաղացողներին չխանգարելուն ²:

Վճռաբեկ վերանայման սահմանների օրենսդրական կանոնակարգման խորհրդային և գործող մոդելների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ մոդելներից յուրաքանչյուրն իրենց որոշակի առավելություններով հանդերձ, խիստ խնդրահարույց են իրավաչափ շահերի ողջամիտ հավասարակշռություն ապահովելու գաղափարի տեսանկյունից: Մինչդեռ չափազանց կարևոր է գտնել, այսպես կոչված, «ոսկե միջինը» վերանայման հանրային տարրերի և

¹ Ст'я Сухова О.А. նշված աշխատությունը, էջ 51, մեջբերումն ըստ՝ **Ворожцов С.** Принципы кассации по новому УПК РФ// Российская юстиция.-2002.-12. էջ 16:

² Ст'я Лантух Н.В. նշված աշխատությունը, 2001, էջ 123, մեջբերումն ըստ՝ **Божьев В.** Совершенствование правосудия в России // Государство и право.1998, №12, էջեր 15-20:

դատական ակտի բողոքարկման իրավունք ունեցող այս կամ այն սուբյեկտի մասնավոր շահերի միջև: Ավելին, կարծում ենք՝ վճռաբեկ վերանայման սահմանների կանոկարգման արդյունավետության գնահատման չափանիշ կարող է լինել այդ հիմնարար գաղափարի իրացման աստիճանը:

Խնդրի լուծումը պետք է փնտրել դատարանի չափավոր ակտիվության մեջ, մասնավոր որ նույն մրցակցության սկզբունքը չի բացառում, այլ նույնիսկ որոշակիորեն ենթադրում է դատարանի ակտիվ դերը քրեական դատավարության նպատակների նվաճման համար: Այլ կերպ, չանտեսելով դատական ակտի՝ իր համար անցանկալի մասի բողոքարկան անձի մասնավոր շահը, այդուհանդերձ անհրաժեշտ է հնարավորություն վերապահել վճռաբեկ դատարանին դուրս գալու բողոքի սահմաններից: Իհարկե խոսքն այս դեպքում ոչ թե բացարձակ, այլ սահմանափակ հնարավորության մասին է՝ բացառելով հանրային և մասնավոր իրավաչափ շահերից որևէ մեկի չարդարացված գերակայությունը մյուսի նկատմամբ: Եվ այստեղ չափազանց կարևոր է այդ հնարավորության սահմանափակման ողջամիտ չափանիշների ընտրությունը:

Այս առումով տեղին է հիշատակել վճռաբեկության սահմանների առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը Գ. Հարությունյանի և այլոց վերաբերյալ գործով առ այն, որ.

« (...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրելով «բոլոր դեպքերում» ձևակերպումը՝ օրենսդիրը արտահայտել է այդ կանոնն իմպերատիվ դարձնելու կամք՝ անկախ վերադաս դատարաններում վարույթի սահմանները որոշող իրավանորմներից (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մաս և 415-րդ հոդվածի 1-ին մաս): Այլ կերպ, եթե վերադաս դատարանը հայտնաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված հանգամանքներից որևէ մեկը, ապա իրավասու է ուղղել այդ դատական սխալը՝ կաշկանդված չլինելով դատական վերանայման սահմանների վերաբերյալ կանոններով:

Նույնը վերաբերում է նաև ՀՀ քրեական դատավարության օ-

րենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում ամրագրված հիմքերին, որոնցով «հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման»։ Նշված ձևակերպումը ևս վկայում է նշված հիմքերն իմպերատիվ դարձնելու օրենսդրի կամքի մասին։

(...)

(...) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ հոդվածի 2-րդ մասում ե 415-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված իրավանորմերն ըստ էության ամրագրում են Վճռաբեկ դատարանում դատական վերանայման սահմանափակ բնույթը և հետապնդում են իրավաչափ նպատակ։ ապահովել կողմերի հետևողականությունն իրենց նյութաիրավական ու դատավարական շահերի պաշտպանության գործում։

Այնուհանդերձ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 404-րդ և 415-րդ հոդվածներով նախատեսված սահմանափակումները չեն կրում և չեն կարող կրել բացարձակ բնույթ, քանի որ կողմերի իրավական հետևողականության ապահովման իրավական շահին հակակշիռ իրավական շահը՝ դատական սխալների ուղղումը, որոշակի պայմաններում կարող է էապես մեծարժեք լինել, որպես գերակա հանրային շահ։ Ուստի, հիմնարար բնույթ կրող դատական սխալների հայտնաբերման պարագայում Վճռաբեկ դատարանն իրավասու է դուրս գալ բողոքարկման սահմաններից և վերացնել այդ դատական սխալները։

(...)» (Տե՛ս Գ. Հարությունյանի և այլոց վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, 13-14-րդ կետերը)։

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն իրավաչափ է համարում դատական ակտերի անվերապահ բեկանման կամ քրեական գործով վարույթի կարճման հիմքերի առկայության պարագայում վերանայման սահմաններից դուրս գալու հնարավորությունը՝ իբրև ուղենիշ ունենալով դատական սխալների ուղղման և ըստ այդմ անձի հիմնարար իրավունքների պաշտպանության գաղափարը։ Վճռաբեկ դատարանը, մյուս կողմից՝ բացառում է վերանայման չափազանց լայն սահմանների նախատեսումը՝ խոսելով դատական սխալների ուղղման հակակշիռ իրավաչափ շահի գոյության

մասին, այն է՝ ապահովելու կողմերի հետևողականությունն իրենց նյութաիրավական ու դատավարական շահերի պաշտպանության գործում: Իսկ այդ շահերի հավասարակշռումը պահանջում է ոչ թե ցանկացած, այլ միայն առավել էական դատական սխալի առկայության դեպքում վերադաս դատարանին բողոքի սահմաններից դուրս գալու հնարավորության ընձեռում:

Վճռաբեկության և ընդհանրապես դատական վերանայման սահմանների օրենսդրական կանոնակարգման հարցում իրավաչափ շահերի ողջամիտ հավասարակշռություն ապահովելու այս հիմնարար գաղափարն իր արտացոլումն է ստացել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետ՝ Նախագիծ): Այսպես, Նախագծի 390-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկությունն իրականացնում է վճռաբեկ բողոքում նշված հիմքի և այն հաստատող փաստերի սահմաններում: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Վճռաբեկ դատարանն իրավասու է ի շահ մեղադրյալի դուրս գալ վճռաբեկ բողոքի սահմաններից, եթե՝

1) հայտնաբերվում է քրեական հետապնդումը բացառող հանգամանք

2) հայտնաբերվում է, որ մեղադրյալի արարքին տրվել է սխալ իրավական գնահատական

3) հայտնաբերվում են քրեադատավարական օրենքի էական խախտման՝ Նախագծով սահմանված հանգամանքներ

4) հայտնաբերվում է, որ մեղադրյալի նկատմամբ նշանակվել է նրան վերագրվող հանցագործության համար օրենքով չնախատեսված պատժատեսակ, պատժաչափ կամ նրա նկատմամբ նշանակված պատիժը սխալ է հաշվարկվել

5) բողոքարկված դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքն ակնհայտորեն վերաբերում է նաև դատական ակտը չբողոքարկած մեղադրյալին:

Նախագծում տրված կարգավորման համաչափությունը իրավաչափ շահերի հավասարակշռման տեսանկյունից դրսևորվում է նրանում, որ նախատեսելով բողոքի սահմաններից դուրս գալու օրենսդրական հնարավորություն՝ Նախագիծը միաժամանակ հստակ կանխորոշում է այդ հնարավորության իրականացման

շրջանակները: Այլ կերպ՝ խոսքը ոչ թե դատարանի կողմից ցանկացած պարագայում սեփական հայեցողությամբ, այլ օրենքով հստակ սահմանված պայմանների առկայության պարագայում բողոքի սահմանները շրջանցելու օրենսդրական հնարավորության մասին է: Իսկ այդ պայմանները հանգում են հետևյալին. Վճռաբեկ դատարանն իրավասու է դուրս գալ բողոքի սահմաններից միայն՝

1. ի շահ մեղադրյալի¹

2. և նախագծով հստակ սահմանված հանգամանքների առկայության պարագայում:

Այսպես, վերոնշյալ օրենսդրական հնարավորության իրականացման առաջին պայմանը վերաբերում է դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության կանոնին (ne reformatio in pejus կամ ne pejus), որը մեղադրյալի բողոքարկման ազատության ապահովման, վերջինիս կողմից իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևորագույն երաշխիք է: Այն նաև որոշակի առումով հանրային շահերի ապահովման գործուն մեխանիզմ է, քանի որ բողոքարկման լայն ազատությունն իր հերթին մեծացնում է դատական սխալների հայտնաբերման և ուղղման հավանականությունը:

Վճռաբեկ բողոքի սահմաններից դուրս գալու այս պայմանն, այդուհանդերձ, որոշակի հարցեր է առաջացնում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից: Այսպես, թե՛ քրեական դատավարության գործող օրենսգրքով և թե՛ Նախագծով դատական ակտի վճռաբեկ վերանայման արդյունքում մեղադրյալի վիճակը չի կարող վատթարացվել այլ կերպ, քան մեղադրանքի կողմի՝ համապատասխան հիմքերով բողոքի առկայության պարագայում: Այսինքն, թե գործող օրենսգրքով և թե Նախագծով բացառվում է ի վնաս մեղադրյալի բողոքի սահմաններից դուրս գալու հնարավորությունը: Սակայն մյուս կողմից՝ գործող օրենսգիրքը, ի տարբերություն Նախագծի, չի նախատեսում նաև հոգում մեղադրյալի բողոքի սահմաններից դուրս գալու հնարավո-

¹ Նախագիծը գործող քրեադատավարական օրենսդրության իմաստով դատապարտյալ (արդարացված) եզրույթի փոխարեն օգտագործում է մեղադրյալ եզրույթը:

րություն: Մինչդեռ վերջին իրավիճակում կարող են շոշափվել տուժողի իրավունքներն ու օրինական շահերը: Իհարկե մեղադրյալի հիմնարար իրավունքներին և ազատություններին առնչվող՝ բողոքում չնշված հանգամանքների առկայության պարագայում բողոքի սահմաններից դուրս գալը, որքան էլ դա անդրադառնա տուժողի իրավունքներին ու օրինական շահերին, բնականաբար արդարացված է դատական սխալների ուղղման, որոշ դեպքերում օրենքի միատեսակ կիրառության (օրինակ, երբ խոսքը վերաբերում է դատական ակտի բեկանման կամ փոփոխման՝ դատական ակտը չբողոքարկած մեղադրյալին ակնհայտորեն վերաբերով հիմքը վերջինիս նկատմամբ կիրառելուն) խնդիրների լուծման տեսանկյունից: Դա հենց հանրային ու մասնավոր շահերի պահանջվող ողջամիտ հավասարակշռությունն է:

Սակայն հարց է ծագում թե արդյոք այդ նույն շահերի հավասարակշռության ապահովման տեսանկյունից արդարացված կարելի է համարել տուժողի իրավունքներին և օրինական շահերին առնչվող, սակայն բողոքում չնշված՝ դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքի առկայության մասին վկայող հանգամանքներին չարձագանքելը (օրինակ նույն՝ մեղադրյալի արարքին տրված սխալ գնահատականը, սակայն մեղմ լինելու առումով): Կարծում ենք՝ տրված կարգավորումն առավել ընդունելի կարող է լինել իրավաչափ շահերի ողջամիտ հավասարակշռություն ապահովելու տեսանկյունից, քան եթե նախատեսվեր նաև ի շահ տուժողի բողոքի սահմաններից դուրս գալու հնարավորություն: Դա, ըստ էության, կհանգեցներ դատական ակտերի վճռաբեկ վերանայման խորհրդային ռեֆզիոն կարգի վերականգնմանը, երբ կողմերը մեկի բողոքը սոսկ առիթ էր վճռաբեկ վերանայման վարույթ հարուցելու համար: Ավելին, այդ պարագայում լիովին կանտեսվեր սկզբունքային նշանակություն ունեցող դեպի վատթարացում շրջադարձի անթույլատրելիության պահանջը, որը որոշակիորեն երաշխավորված էր անգամ խորհրդային ռեֆզիայի պայմաններում:

Վճռաբեկ բողոքի սահմաններից դուրս գալու երկրորդ պայմանը վերաբերում է Նախագծով հստակ սահմանված հազամանքների առկայությանը: Իսկ այդ հանգամանքների ուսումնասիրությունը

ցույց է տալիս, որ դրանք բխում են քրեական դատավարության նպատակների նվաճման, անձի հիմնարար իրավունքների և օրինական շահերի ապահովման անհրաժեշտությունից: Դրանք անգամ որոշակիորեն նույնանում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման հիմնարար խախտման հիմքերին (Նախագծի 409-րդ հոդվածի 2-րդ մաս), որոնց առկայության դեպքում իրավաչափ է շեղումն անգամ այնպիսի կարևորագույն իրավական արժեքներից, ինչպիսիք են՝ կրկին դատվելու անթույլատրելիությունը և դատական ակտերի կայունությունը:

Բողոքի սահմաններից դուրս գալու հանգամանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Նախագիծը հրաժարվել է նաև վճռաբեկ վերանայման ծավալի սահմանափակման այնպիսի չափանիշից, ինչպիսին բողոքի հեղինակն է, ինչը կարծում ենք, ի թիվս այլոց, բխում է նաև օրենքի միատեսակ կիրառության ապահովելու վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական խնդրից:

Հարկ է նշել, որ վճռաբեկության սահմանների ընդլայնման այս հանգամանքը, որն առկա էր նաև մինչև 2013 թվականի հունվարի մեկը գործող խմբագրությամբ ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասում, տեսական գրականության մեջ տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տվել:

Այսպես, որոշ դատավարագետներ այդ դրույթը մեկնաբանում են որպես ռեկզիոն տարրերի լրիվ¹, մյուսները՝ մասնակի վերականգնում՝ գտնելով, որ հակառակ պարագայում վերադաս դատական ատյանն ի գորու չէր լինելու լուծել իր առջև դրված՝ ստորադաս դատարանի դատական ակտի օրինականության, հիմնավորվածության և արդարացիության ստուգման խնդիրը²: Վճռաբեկ դատարանի գործունեության մեջ ռեկզիոն տարրերի բացակայությունը որոշ դատավարագետների կարծիքով նվազեցնում է օրենքի խախտումները վերացնելու դատարանի հնարավորություն:

¹ Տե՛ս **Сухова О.А.** նշված աշխատությունը, էջ 52, մեջբերումն ըստ՝ **Муратова Н.Г.** Система судебного контроля... էջ 216:

² Տե՛ս **Сухова О.А.** նույն տեղում, մեջբերումն ըստ՝ **Божьев П.** Переделы прав суда кассационной инстанции // Законность.-2003, N 11. էջեր 2-4:

նը¹, թույլ չի տալիս կանխել նյութական կամ դատավարական իրավունքի բողոքում չնշված խախտումներով կայացված դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելը, իսկ դա իր հերթին կարող է էականորեն ազդել դատավարության մասնակիցների իրավունքների պաշտպանվածության վրա²:

Նշված հանգամանքը համարելով ռեիզիոն տարրերի վերականգնում՝ դրանց առկայությունը Ն. Կովտունը որոշակիորեն իրավաչափ է համարում միայն վերաքննիչ դատարանում, որն, ի տարբերություն վճռաբեկության, ենթադրում է գործի և՛ իրավական, և՛ փաստական կողմը վերանայելու հնարավորության առկայությունը: Եվ միայն վերաքննիչ դատարանին վերապահված դատական սխալների և շահագրգիռ անձանց իրավունքների և օրինական շահերի խախտման բացահայտման միջոցներն են հնարավորություն տալիս ինչպես պարզել գործի իրական հանգամանքները, այնպես էլ հաստատել նոր փաստեր³:

Այս վերջին նկատառման տեսանկյունից Նախագիծը, կարծում ենք, որևէ խնդիր չի առաջացնում, քանի որ դատական ակտը չբողոքարկած մեղադրյալի նկատմամբ վերջինիս *ակնհայտորեն վերաբերող* դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքի կիրառությունը չի պահանջում պարզել գործի հանգամանքները կամ հաստատել նոր փաստեր, ինչը դուրս է վճռաբեկության (մաքուր վճռաբեկության) մեխանիզմի շրջանակներից և ենթադրում է վերաքննիչ դատարանի տիրապետության տակ գտնվող վերանայման համապատասխան գործիքերի առկայություն:

Կա նաև այն մոտեցումը, որ դա ուղղակի հատուկ կանոն է, սոսկ բացառություն վճռաբեկ վերանայման սահմանների ընդհանուր պահանջներից, որը, սակայն, չի վերականգնում ռեիզիոն

¹ Ст'у **Ефимичев С, Шаруева М.** Решения суда кассационной инстанции и их роль в совершенствовании предварительного расследования // Уголовноеправо. 2003. N 4. էջ 71:

² Ст'ու **Сухова О.А.** նշված աշխատությունը, էջ 52, մեջբերումն ըստ՝ Волколуп О.В. Система уголовного судопроизводства и проблемы ее совершенствования. -СПб., 2003. էջեր 191 և 194:

³ Ст'ու **Ковтун Н.Н.** Апелляция, кассация, надзор: анализ содержания // Апелляция, кассация, надзор: новеллы ГКП РФ и УПК РФ. Первый опыт критического осмысления: -Юрист: Москва, 2011, էջեր 85-86:

տարրերը վճռաբեկ դատարանի գործունեության մեջ: Վճռաբեկ վերանայման սահմաններն ընդլայնող այդ դրույթն ուղղակի սահմանում է վճռաբեկ վերանայման հատուկ կարգ՝ ապահովելու համար այն դատապարտյալների կամ արդարացվածների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ովքեր վճռաբեկ բողոք չեն բերել: Եվ եթե նույնիսկ այս կարգավորումը հանրային շահ է հետապնդում, ապա միայն դատավարության մասնակիցների հանրային իրավունքների պաշտպանության ձևով, որոնք բխում են, օրինակ, պաշտպանի պարտադիր մասնակցության, ընդդատության կանոնների, դատավարության լեզվի վերաբերյալ օրենսդրական պահանջներից¹:

Վճռաբեկ վերանայման բողոքի սահմաններից դուրս գալու քննարկվող հանգամանքի հետ կապված՝ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե արդյո՞ք դատարանն իրավասու է ի շահ դատական ակտը չբողոքարկած մեղադրյալների դուրս գալ բողոքի սահմաններից միայն դրանում նշված՝ դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքերի առկայության, թե նաև բողոքի սահմաններից դուրս գալու՝ Նախագծով սահմանված, սակայն բողոքում չնշված հանգամանքներ հայտնաբերելու պարագայում, նույնիսկ եթե դրանք վերաբերում են միայն դատական ակտը չբողոքարկած մեղադրյալին: Կարծում ենք՝ քննարկվող հարցին անհրաժեշտ է դրական պատասխան տալ, նախ՝ ելնելով Նախագծում տրված կարգավորման՝ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռման ընդհանուր տրամաբանությունից, ապա՝ քննարկվող հանգամանքի բուն օրենսդրական ձևակերպումից: Մասնավորապես, դրանում խոսվում է ընդհանրապես դատական ակտի բեկանման կամ փոփոխման (իսկ բողոքի սահմանների դուրս գալու մյուս հանգամանքները ոչ այլ ինչ են, քան դատական ակտի բեկանման կամ փոփոխման հիմքեր), այլ ոչ թե բողոքում նշված հիմքը դատական ակտը չբողոքարկած մեղադրյալին ակնհայտորեն վերաբերելու մասին: Հակառակ մեկնաբանությունն ընդունելի չի լինի նաև օրենքի միատեսակ կիրառության ապահովման տեսանկյունից հատկապես այն պարագայում, երբ դուրս գա-

¹ Տե՛ս **Сухова О.А.** նշված աշխատությունը, էջ 53:

լով բողոքի սահմաններից՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտը բեկաներ կամ փոփոխեր միայն դատական ակտը բողոքարկած մեղադրյալի նկատմամբ, երբ նույն հիմքն ակնհայտորեն վերաբերում է նաև դատական ակտը չբողոքարկած մեղադրյալներին:

Ինչպես արդեն նշել ենք, գործող օրենսդրական կարգավորման համաձայն՝ Վճռաբեկ դատարանը դատական ակտը վերանայում է բողոքում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Բողոքի «հիմք» ասելով՝ հասկանում ենք վճռաբեկ բողոք բերելու օրենքով սահմանված հիմքերը, այն է՝ նյութական կամ դատավարական իրավունքի խախտումը, նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:

Ինչ վերաբերում է բողոքի հիմնավորումներին, ապա դրանք ըստ էության դատական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին որոշակի դատողություններ են, որոնք, որպես կանոն, շարադրվում են գործի հանգամանքների և փաստերի վկայակոչման, դրանք հաստատող ապացույցների, լուծման ենթական այս կամ այն հարցով դատարանի եզրահանգումների քննադատական վերլուծության, դատավարական կարգի քննադատական գնահատականի միջոցով և այլն:

Բողոքի հիմքի առկայությունը հիմնավորելիս բողոք բերած անձը ներկայացնում է փաստեր և փաստարկներ (տրամաբանական, իրավական և այլն), որոնք վկայում են դատական ակտի օրինական, հիմնավորված և արդարացի չլինելու մասին: Եթե փաստերը բխում են բուն գործի նյութերից, ապա փաստարկները բողոքաբերի որոշակի վերլուծական գործունեության արդյունքն են:

Նախագիծը բողոքի «հիմնավորումներ» հասկացության փոխարեն նշում է բողոքի հիմքը հաստատող փաստերի և դրանք հիմնավորող փաստարկների մասին: Ընդ որում, փաստերի և փաստարկների տաանջատումն ինքնանպատակ չէ: Այսպես, և՛ գործող քրեադատավարական օրենսդրությունը, և՛ Նախագիծը նախատեսում են, որ բողոքի հիմքերը և հիմնավորումները (Նախագծով՝ բողոքի հիմքերը և դրանք հաստատող փաստերը) ներկայացվում են բացառապես բողոքում և չեն կարող փոփոխվել

կամ լրացվել դատական վարույթի ընթացքում: Դրա հետ մեկտեղ Նախագծով դատական վարույթի ընթացքում բողոքը լրացնելու օրենսդրական արգելքը վերաբերում է բողոքի հիմքերին և դրանք հաստատող փաստերին, սակայն բողոքաբերն արդարացիորեն զրկված չէ նոր փաստարկներ ներկայացնելու հնարավորությունից: Նոր փաստարկներ ներկայացնելու պարագայում բողոքի հիմքը և դրանք հաստատող փաստերը չեն փոփոխվում, այլ բողոքաբերն իր դիրքորոշումը հաստատելու, այն ուժեղացնելու ևս մեկ հնարավորություն է ստանում: Անծին իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նման լրացուցիչ գործիքի ընձեռումը պայմանավորված է Նախագծով վճռաբեկ բողոքի քննության դատավարական կարգի մեջ մրցակցության տարրերի էական ընդլայնմամբ:

Վճռաբեկության սահմանների առումով Նախագծում տրված կարգավորման հետ սերտորեն առնչվում է լրացուցիչ բողոք բերելու նոր դատավարական ինստիտուտի նախատեսումը: Նախագիծը սահմանել է բողոքարկման հստակ ժամկետի առկայություն ենթադրող դատական վերանայման դեպքում նախքան բողոքարկման ժամկետի ավարտը, դատական վերանայման լրացուցիչ բողոք բերելու և ըստ այդմ բողոքի հիմքը, բողոքի հիմքը հաստատող փաստերը, ինչպես նաև դրանք հիմնավորող փաստարկները լրացնելու հնարավորություն: Սեփական նախաձեռնությամբ լրացուցիչ վերաքննիչ բողոք բերելու անձի իրավունքը վերջինիս հնարավորություն է տալիս ընդլայնել սկզբնական բողոքում մատնանշված հիմնավորումներով նախագծված վճռաբեկության սահմանները:

Ամփոփելով, կարող ենք եզրակացնել, որ վճռաբեկ վերանայման դատավարական կառուցակարգի մասնավորապես վերանայման սահմանների հավասարակշռված օրենսդրական կանոնակարգումից է, ի թիվս այլոց, մեծապես կախված Վճռաբեկ դատարանի և նրա կողմից իրականացվող հիմնական գործունեության՝ վճռաբեկության խնդիրների արդյունավետ իրագործումը: Վճռաբեկության չափազանց լայն (խորհրդային վճռաբեկություն) կամ նեղ (ժամանակակից վճռաբեկություն) սահմանների նախատեսումը ոչ միայն չեն նպաստում վերը նշված խնդիրների լուծմանը, այլև ծայ-

րահեղական և անընդունելի մոտեցումներ են հանրային և մասնավոր իրավաչափ շահերի ողջամիտ հավասարակշռություն ապահովելու համատեքստում: Վճռաբեկության չափազանց լայն սահմանների նախատեսումը, իբրև գերխնդիր ունենալով դատական սխալների ուղղման շահը, անտեսում է մրցակցային քրեական դատավարությունում դատական ակտի բողոքարկման ազատություն ունեցող անձի մասնավոր շահը՝ հիմնված տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքի վրա: Նման կարգավորումն ի չիք է դարձնում կողմերի՝ իրենց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը հետևողական լինելու շահը: Այս կարգավորումը շահեկան չէ նաև դատավարական խնայողության տեսանկյունից: Մեծացնելով բարձրագույն դատական ատյանի ծանրաբեռնվածությունը՝ այն զգալիորեն խոչընդոտում է վերջինիս կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման սահմանադրական գործառույթի արդյունավետ իրականացմանը: Միևնույն ժամանակ նույն օրենքի միատեսակ կիրառության ապահովման տեսանկյունից չի կարող արդարացվել նաև վճռաբեկության չափազանց նեղ սահմանների նախատեսումը, քանի որ այս գործառույթն ինքը երբեմն կարող է պահանջել դուրս գալ բողոքի սահմաններից: Եվ, թերևս, ամենաէականը, որ վճռաբեկ դատարանին անձի հիմնարար իրավունքներին և օրինական շահերին առնչվող դատական սխալներին արձագանքելու հնարավորություն չընձեռելն ակնհայտ հակասության մեջ է մտնում վճռաբեկ դատարանի՝ որպես արդարադատություն իրականացնող բարձրագույն դատական ատյանի սահմանադրաիրավական կարգավիճակի հետ:

Ուստի խնդրի հնարավոր լուծումը վճռաբեկ դատարանին բողոքի սահմաններից դուրս գալու՝ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռությանը համահունչ սահմանափակ հնարավորության ընձեռումն է, որի ուղղությամբ, ինչպես արդեն նշվել է, էական քայլ է կատարված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի Նախագծում:

SCOPE OF THE CASSATION REVIEW IN THE CONTEXT OF REASONABLE BALANCE OF PUBLIC AND PRIVATE INTERESTS

The article is devoted to the issue of the scope of review in the cassation court. It includes the analyze of historically contrary domestic regulation and reveals certain problems within the context of fair balance of public and private interests in this regard. The article also refers to the balanced solution suggested in the Draft of the RA new CCP.

Татеви́к Суджа́н

Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

ПРЕДЕЛЫ КАССАЦИОННОГО ПЕРЕСМОТРА В КОНТЕКСТЕ РАЗУМНОГО БАЛАНСИРОВАНИЯ ПУБЛИЧНЫХ И ЧАСТНЫХ ИНТЕРЕСОВ

Статья посвящена проблеме пределов кассационного пересмотра судебных актов. Она включает в себе анализ исторически различных способов правового регулирования данного вопроса (когда вышестоящий суд рассматривает дело по существу или наоборот строго ограничен пределами кассационной жалобы) и раскрывает конкретные проблемы в контексте балансирования частных и публичных интересов. В статье так же рассматривается сбалансированное регулирование предложенное в проекте нового УПК РА.

Բանալի բառեր՝ սահմաններ, հանրային, մասնավոր, շահ, հավասարակշռություն, բողոք, հիմք, հիմնավորում, մրցակցային, վճռաբեկ դատարան

Keyword: scope, public, private, interest, balance, appeal, ground, reasoning, adversarial, cassation court

Ключевые слова: пределы, публичный, частный, интерес, баланс, жалоба, основа, основание, состязательный, кассационный суд

**ՂԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ
ԵՎ Ի ՊԱՇՏՈՆԵ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի մշակմանն ուղղված աշխատանքների իրականացման ժամանակ առավել քննարկվող հիմնախնդիրներից էր դատական քննության դատավարական ձևի, այն է՝ դատական քննության մրցակցային և ի պաշտոնե քննության («ex officio») մոդելների միջև ընտրություն կատարելու հարցը: Այսինքն՝ ՀՀ նոր քրեադատավարական օրենքի դատական քննության հիմքում պետք է դրվի դատավարության մրցակցային, թե՞ ի պաշտոնե քննության ձևը:

Նշված բանավեճը ավելի էին թեժացնում ի պաշտոնե քննության ձևի վերաբերյալ առկա այն թյուր պատկերացումները, որոնք այն նմանեցնում են միջնադարյան ինկվիզիցիոն դատավարությանը և ընկալում այն որպես ՀՀ Սահմանադրության 19-րդ և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հակասող դատավարական ձև: Քրեական դատավարության այդ երկու ձևերը դատական քննության սահմանների և դատարանում դատարանի լիազորությունների առումով սահմանում են ըստ էության միմյանցից սկզբունքային առումով տարբերվող կարգավորումներ, ինչը հանդիսանում է այդ դատավարական մոդելների առանցքային տարբերությունը²:

Ելնելով վերոնշվածից՝ սույն աշխատությունում անհրաժեշտ է նախ վերլուծել դատավարական այդ երկու ձևերից յուրաքանչյուրի առանձնահատկությունները և պարզել, թե դատավարական ո՞ր ձևն է վերջո դրվեց ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծի հիմքում:

¹ ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գ.Ս. Ղազինյան:

² Հաննովերի երկրամասային գերագույն դատարանի դատավոր, պրոֆեսոր Հեննիգ Ռադկե, Ջեկոյց ի պաշտոնե քննության և մրցակցության վարույթների վերաբերյալ, ի պաշտոնե քննության վարույթի առավելությունը, Երևան 2011, էջ 15:

Միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ քրեական դատավարական իրավունքը ամբողջ աշխարհում սահմանում է քրեական դատավարության երկու հիմնական մոդել. մի կողմից՝ որպես մեղադրանքի և պաշտպանության կողմերի վարույթ կառուցված դատավարության մրցակցային (ադվերսատորային) կադապարը, որը սկզբնական շրջանում նախևառաջ նախատեսված էր բացառապես անգլոամերիկյան իրավական համակարգում, իսկ մյուս կողմից՝ քրեական վարույթի ի պաշտոնե քննության («ex officio») կադապարը, որը որպես դատավարության ձև սահմանվում էր մայրցամաքային Եվրոպայի գրեթե բոլոր քրեական դատավարական կարգերում²:

Վերջին տասնամյակում քրեական դատավարության տեսությունը դատավարության այս երկու մոդելներին զուգահեռ որպես առանձին դատավարական մոդել առաջարկում է նախատեսել դատավարության կոնսենսուսային ձևը, որը դրսևորվում է որպես մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև կնքված համաձայնության հիման վրա ավարտվող քրեական վարույթ: Սակայն քանի որ դատական քննության կոնսենսուսային ձևը նախատեսված է ինչպես դատական քննության մրցակցային մոդել ունեցող քրեական դատավարական կարգերում³, այնպես էլ քրեական վարույթի ի պաշտոնե քննության մոդել ունեցող դատավարություններում⁴, կարելի է եզրակացնել, որ այն համատեղելի է քրեական դատավարություն երկու մոդելների հետ էլ, և ինքնին չի հանդիսանում դատավարության երրորդ ձև: Բացի այդ՝ կոնսենսուսային տիպի վարույթներում դատական քննության սահմանները որպես դատական քննության ընդհանուր պայման նախատեսված չեն, քանի որ այդ վարույթում որպես կանոն քրեական գործի դատական քննություն չի կատարվում, և դատարանը ստուգում է միայն կոնսենսուսային վարույթի կիրառման հիմքերը և պայմանները:

² Հաննովերի երկրամասային գերագույն դատարանի դատավոր, պրոֆեսոր Հենինգ Ռադկե, նույն էջն 1:

³ Уголовный процесс западных государств/ Колл. Авт. М., 2002. С.(автор главы – К. Ф. Гуценко)

⁴ Zu der Entwicklung des „Rechtsinstituts“ der Verfahrensabsprache in Deutschland ausführlich Radtke, Festschrift 300 Jahre Oberlandesgericht Celle, 2011, S. 515 ff.

Ադվերսատորային կամ մրցակցային դատավարությունը կառուցված է իբրև կողմերի դատավարություն⁵: Այն դատավարության այնպիսի ձև է, որում մեղադրանքի և պաշտպանության ֆունկցիան իրականացնում են իրավահարաբերության տարբեր կողմերը, իսկ գործի լուծումը դատարանի ֆունկցիան է⁶:

Դատավարության այս ձևը բնորոշվում է նրանով, որ մեղադրանքի և պաշտպանության կողմներն են պարտավոր պարզել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, բացահայտել դրանք հաստատող ապացույցները և ներկայացնել դրանք դատարանին: Դատարանն օբյեկտիվ ճշմարտության բացահայտման խնդիր չպետք է ունենա, այլ դատական ճշմարտությունը պարզելու նպատակով կողմերի համար ապահովում է հավասար պայմաններ⁷:

Մրցակցային դատավարությունում դատական քննության նպատակը հանրային մեղադրանքի վարույթներով պետության և մեղադրյալի, իսկ մասնավոր մեղադրանքի դեպքում՝ տուժողի և մեղադրյալի միջև առկա իրավական վեճի լուծումն է: Այսինքն՝ մրցակցային դատական քննության նպատակը մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև վեճի, այսինքն՝ առաջադրված մեղադրանքում մեղադրյալի մեղավորության հարցի լուծումն է: Հետևաբար մեղադրողի դիրքորոշումը մեղադրանքից հրաժարվելու մասին պարտադիր կերպով հանգեցնում է քրեական հետապնդման դադարեցման և արդարացման դատավճռի կայացման:

Դատարանի խնդիրն է ստուգել միմիայն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը և ապացուցվածությունը: Եթե դատարանում ապացույցների հետազոտման արդյունքում դրանք

⁵ Հաննովերի երկրամասային գերագույն դատարանի դատավոր, պրոֆեսոր Հենինգ Ռադկե, Ջեկույց ի պաշտոնե քննության և մրցակցության վարույթների վերաբերյալ, ի պաշտոնե քննության վարույթի առավելությունները, Երևան 2011. էջ 1:

⁶ Строгович М. С. Курс советского уголовного процесса. Т. 1. М., 1968 էջ 149:

⁷ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգին հավանատություն տալու մասին» ՀՀ կառավարության 10.04.2011թ արձանագրային որոշման 8.5.կետ, 38 էջ:

չեն հաստատվում, ապա դատարանը պարտավոր է կայացնել արդարացման դատավճիռ՝ որևէ պատասխանատվություն չկրելով նման որոշման հետևանքների համար⁸: Ղատարանը մեղադրյալի մեղավորության կամ անմեղության հարցը լուծում է մեղադրյալին առաջադրված մեղադրանքում ձևակերպված փաստական հանգամանքները համադրելով մեղադրանքում նշված համապատասխան քրեական օրենքի դիսպոզիցիայի հետ և դրանց համապատասխանության դեպքում կայացնելով մեղադրական դատավճիռ, իսկ անհամապատասխանության դեպքում՝ արդարացման դատավճիռ:

Մրցակցային դատավարությունում մեղադրանքի, պաշտպանության և գործի լուծման գործառնությունների տարանջատման պայմաններում դատարանը՝ որպես գործի լուծման գործառնությամբ կրող սուբյեկտ, գործը քննում է ըստ ներկայացված մեղադրանքի և իրավասու չէ դուրս գալ մեղադրանքի շրջանակներից⁹:

Այսինքն՝ դատավարության մրցակցային մոդելի կողմից դատական քննության սահմանների կարգավորումը համահունչ է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորմանը:

Նույնանման կարգավորում է սահմանված նաև մրցակցային դատական քննության մոդել որդեգրած այլ պետություններում՝ Էստոնիայում, Լեհաստանում, Լատվիայում, Սերբիայում, Ուկրաինայում, Մոլդովայում, Բուլղարիայում, Բոսնիայում: Ղատավարության մրցակցային մոդել է սահմանված նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգով:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգը ամրապնդեց դատարանի կողմից մեղադրանքը սեփական նախաձեռնությամբ փոփոխելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի կարգավորումները՝ սահմանելով, որ դատարանը մեղադրանքը չի կարող փոփոխել խստացման առումով, քանի որ այդ դեպքում նա արդարադատություն իրականացնող

⁸ Հայեցակարգի 8.5.կետ, 43 էջ:

⁹ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375.1-րդ հոդվածի 1-ին մասի ՀՀ Սահմանդրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ Սահմանադրական դատարանի 28.12.2010թ. N 931 որոշման 8-րդ էջ:

մարմնից կվերածվի քրեական հետապնդում իրականացնողի, ինչպես նաև կխախտվի մեղադրյալի պաշտպանության իրավունքը, քանի որ նա կգրկվի նոր մեղադրանքից պաշտպանվելու բոլոր հնարավորություններից¹⁰:

Սահմանվեց, որ դատական քննության փուլում դատարանի խնդիրն է միմիայն ստուգել ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը և ապացուցվածությունը: Եթե դատարանում ապացույցների հետազոտման արդյունքում դրանք չեն հաստատվում, ապա (անկախ իրական մեղադրանքի ավելի խիստ կամ ավելի մեղմ լինելու փաստից) դատարանը պարտավոր է կայացնել արդարացման դատավճիռ՝ որևէ պատասխանատվություն չկրելով նման որոշման հետևանքների համար: Նշված կանոնից պետք է սահմանվի հետևյալ բացառությունը. դատարանը, չփոխելով մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքները, կարող է մեղադրանքի ծավալից հանել մեղադրյալի պատասխանատվությունը խստացնող (արարքը որակյալ դարձնող) և/կամ պատիժը ծանրացնող հանցակազմի հատկանիշները, ինչպես նաև մեղադրյալի համար բացասական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

Մրցակցային դատական քննության հակապատկերն է գործերի ի պաշտոնե քննության մոդելը: Այն ամրագրված է Գերմանիայի և Ավստրիայի քրեական դատավարություններում: Դատավարության այդ կադապարում ապացուցման ենթակա փաստական հանգամանքների և նյութական իրավունքին համապատասխան արդարացի որոշման կայացման պարտականությունն ամբողջությամբ դրված է դատարանի վրա¹¹: Դատարանը պարտավոր է գործի լուծման համար նշանակություն ունեցող նյութը ձեռք բերել ի պաշտոնե, այսինքն՝ սեփական նախաձեռնությամբ՝ անկախ դատավարության կողմերի ներկայացրած ապացույցների շրջանակից: Ի տարբերություն մրցակցային մոդելի՝ գործերի ի պաշտոնե քննության մոդելում դատարանը որևէ կերպ կաշկանդված չէ

¹⁰ Հայեցակարգի 8.17 կետ:

¹¹ Հաննովերի երկրամասային գերագույն դատարանի դատավոր, պրոֆեսոր Հենինգ Ռադկե, Ձեկույց ի պաշտոնե քննության և մրցակցության վարույթների վերաբերյալ, ի պաշտոնե քննության վարույթի առավելությունը, Երևան 2011, էջ 1:

կողմերի ներկայարած փաստական հանգամանքների շրջանակով:

Վարույթի այս տեսակը կրում է այն գաղափարի դրոշմը, որ քրեական վարույթի առարկան վեր հանելու գործը ոչ մի պարագայում չպետք է դրվի դատավարության կողմերի վրա, քանի որ դատարանն է պատասխանատու արդար, այսինքն՝ ամբաստանյալի կողմից կատարվող արարքի վերաբերյալ նյութական քրեական իրավունքին համապատասխանող որոշում կայացնելու համար¹²:

Ի տարբերություն մրցակցային մոդելի՝ գործի ի պաշտոնե քննության մոդելում դատարանն օբյեկտիվ ճշմարտության բացահայտման և դրան համապատասխան դատավճիռ կայացնելու խնդիր ունի: Ուստի նա կաշկանդված չէ մեղադրյալին ներկայացված մեղադրանքով և կարող փոխել ինչպես մեղադրյալին վերագրվող արարքի իրավաբանական որակումը, այնպես էլ մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքները: Այսինքն՝ դատավճիռ կայացնելու ժամանակ դատարանը կարող է փոփոխել և՛ մեղադրյալին առաջադրված մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների կազմը, և՛ մեղադրյալին ներկայացված արարքի իրավաբանական որակումը: Նման կարգավորում սահմանված է ԳՖՀ քրեական դատավարության օրենսգրքի 264-րդ հոդվածով, որի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ դատաքննություն նշանակելու մասին որոշմամբ արարքին տված իրավական գնահատակով:

Ավելին, դատական վարույթի փուլում դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելը չի հանգեցնում գործի վարույթի կարճման, և դատարանն այդ պարագայում իրավասու է շարունակել գործի քննությունը՝ կայացնելով մեղադրական դատավճիռ:

Նման կարգավորումը, երբ դատական քննությունը փաստացի կաշկանդված չէ դատախազի կողմից պաշտպանվող մեղադրանքով, պայմանավորված է գործի ի պաշտոնե քննության մոդելի հիմքում դրված «մեղքի» սկզբունքով¹³: Մեղքի սկզբունքն ի պաշտոնե քննության մոդել ունեցող քրեական դատավարու-

¹² Treffend *Weigend* ZStW 104 (1992), S. 487 (498).

¹³ Zu dessen Bedeutung, Grundlagen und Inhalt jüngst nochmals BVerfG NJW 2011, 1931, 1937 f.; siehe dazu auch *Landau* NSTZ 2011, Heft 11; *Radtko* GA 2011, Heft 11; *Radtko*, in: Münchener Kommentar zum StGB, Band 2, 2. Aufl., 2011, Vor § 38 Rn. 14 f. und Rn. 70.

թյուններում կենտրոնական տեղ է զբաղեցնում:

Գերմանիայի Ֆեդերալ Հանրապետության սահմանադրական դատարանն իր որոշումներում մանրակրկիտ կերպով մեկնաբանել է մեղքի սկզբունքը¹⁴:

Այսպես, «մեղքի» սահմանադրաիրավական սկզբունքը, որը, ըստ ԳՖՀ-ի սահմանադրական դատարանի, բխում է Գերմանիայի Հիմնական օրենքի (սահմանադրության) 1-ին հոդվածի 1-ին մասում սահմանված մարդու արժանապատվության բացարձակ արժեքից¹⁵, իսկ ինստիտուցիոնալ առումով սահմանված է Գերմանիայի Հիմնական օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված իրավական պետության սկզբունքից¹⁶, ենթադրում է, որ մեղավորները պետք է դատապարտվեն իրենց մեղքը նախատեսող քրեական օրենքի հոդվածով և ստանան իրենց մեղքին համապատասխան պատիժ, իսկ անմեղ անձինք պետք է ազատվեն հանցագործություն կատարած լինելու վերաբերյալ առաջացած կասկածից:

Համաձայն ԳՖՀ Հիմնական օրենքի 79-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «մեղքի» սահմանադրական սկզբունքն անձի՝ սահմանադրությամբ ամրագրված այն իրավունքն է, որը չի կարող տնօրինել կամ սահմանափակել անգամ սահմանադիրը¹⁷: Այն բացառում է անձի նկատմամբ այնպիսի պատժի կամ պատժաչափի նշանակումը, որը գերազանցում է կոնկրետ հանցագործություն կատարելու հանցագործի անհատական մեղքի ծավալը կամ պակաս է դրանից¹⁸: Հանցագործի նկատմամբ նշանակված պատիժը պետք է արդար հարաբերության մեջ գտնվի ինչպես կատարված հանցանքի ծան-

¹⁴ BVerfG NJW 1987, 2662 f.

¹⁵ BVerfGE 57, 250, 275; BVerfGE 90, 145, 173; BVerfGE 109, 133, 171; BVerfGE 123, 267, 413.

¹⁶ BVerfGE 20, 323, 331.

¹⁷ BVerfGE 123, 267, 413.

¹⁸ BVerfGE 45, 187, 228; BVerfGE 50, 205, 214 f., BVerfGE 54, 100, 108; BVerfGE 73, 206, 253; BVerfGE 90, 145, 173; BVerfGE 96, 245, 249; BVerfGE 109, 133, 171; vgl. auch *Detlefsen*, Grenzen der Freiheit, 2006, S. 89-92; *Streng*, Strafrechtliche Sanktionen, 2. Aufl., 2002, Rn 30-33; *Heun* JZ 2005, 853 f.; *H. A. Wolff* AR 124 (1999), S. 55 ff.; knapp zusammenfassend *Radtke*, in: Münchener Kommentar zum StGB, Vor § 38 Rn. 14-16.

րության, այնպես էլ հանցագործի մեղավորության չափի հետ¹⁹:

Քրեական դատավարությունը ուղղված է մեղքի սկզբունքի ապահովմանը: Ըստ այդմ էլ Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանն մեղքի սահմանադրաիրավական սկզբունքը պայմանավորում է «արդարության գաղափարի» հետ: Մեղքի սկզբունքն ուղղված է արդարության ապահովմանը: Մեղքի սկզբունքի ապահովման համար անհրաժեշտ է, որ քրեական վարույթի արդյունքում մեղադրյալի մեղավորության վերաբերյալ կացվի արդարացի դատավճիռ:

Արդար է այն դատավճիռը, որի կայացման ժամանակ դատավորը նյութական քրեական իրավունքը ճիշտ է կիրառել կոնկրետ գործի նկատմամբ: Այսինքն՝ արդարությունը քրեական դատավարությունում նյութական արդարություն է: Արդարադատության սկզբունքն ապահովված է, եթե մեղավորը դատապարտվել է իր մեղքին համապատասխան, իսկ անմեղը արդարացվել է²⁰: Այսինքն՝ ի տարբերություն մրցակցային դատավարության, որը քրեական վարույթը դիտում է որպես մեղադրանքի և պաշտպանության կողմերի միջև իրավական վեճ, գործի ի պաշտոնե քննության մոդելում քրեական դատավարությունն ուղղված է արդարության հաստատմանը, որի բացահայտման պարտականությունը դրված է դատարանի վրա:

Մեղքի սահմանադրաիրավական սկզբունքից է բխում գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու դատարանի պարտականությունը, քանի որ առանց գործի ճշմարիտ փաստական հանգամանքները պարզելու՝ հնարավոր չէ կենսագործել «մեղքի նյութական սկզբունքը»:

Այսինքն՝ գործի ի պաշտոնե քննության ընթացքում դատարա-

¹⁹ BVerfGE 45, 187, 228; BVerfGE 50, 205, 214 f., BVerfGE 54, 100, 108; BVerfGE 73, 206, 253; BVerfGE 90, 145, 173; BVerfGE 96, 245, 249; BVerfGE 109, 133, 171; vgl. auch *Detlefsen*, Grenzen der Freiheit, 2006, S. 89-92; *Streng*, Strafrechtliche Sanktionen, 2. Aufl., 2002, Rn 30-33; *Heun* JZ 2005, 853 f.; *H. A. Wolff* AR 124 (1999), S. 55 ff.; knapp zusammenfassend *Radtke*, in: Münchener Kommentar zum StGB, Vor § 38 Rn. 14-16.

²⁰ *Neumann* ZStW 101 (1989), S. 52, 53; *Radtke*, in *Radtke/Hohmann*, StPO, 2011, Einleitung Rn. 7 m.w.N.

նը, ելնելով մեղքի սկզբունքից, օբյեկտիվ պարտականություն է կրում՝ բացահայտելու գործով օբյեկտիվ ճշմարտությունը և մեղադրյալի նկատմամբ կայացնելու արդարացի դատավճիռ՝ նրան դատապարտելով նրա արարքը նախատեսող քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով: Այդ նպատակի իրականացման ճանապարհին դատարանը կաշկանդված չէ ո՛չ դատախազի կողմից դատական քննության ընթացքում մեղադրանքից հրաժարվելով, ո՛չ դատախազի պաշտպանած մեղադրանքում մեղադրյալի արարքին տրված իրավաբանական որակմամբ, ո՛չ էլ կողմերի ներկայացրած փաստական հանգամանքների շրջանակով:

Անհրաժեշտ է նշել, որ գործերի ի պաշտոնե քննության մոդելը Հայաստանի Հանրապետության օրենսդրությանն անժանոթ դատավարական ձև չէ: Այն սկզբում ամրագրվել է 2006 թվականի հունիսի 1-ին ընդունված «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածում, ապա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում: Այսինքն՝ այն՝ որպես դատավարության ձև, ամրագրված է չորս դատավարություններից երկուսում՝ սահմանադրական դատավարությունում և վարչական դատավարությունում:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարելի է եզրակացնել, որ դատավարության մրցակցային մոդելի և գործի ի պաշտոնե քննության մոդելի միջև առկա է երկու սզկբունքային տարբերություն՝

1. դատական քննությունը սահմանափակված է մեղադրանքով, այսինքն՝ դատարանը կաշկանդված է մեղադրյալին ներկայացրած մեղադրանքով, թե դատարանը կարող է ազատորեն փոխել դրա իրավաբանական որակումը և դրա հիմքում դրված փաստական հանգամանքները, ինչպես նաև դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելը հանգեցնո՞ւմ է վարույթը ավտոմատ ավարտելուն և արդարացման դատավճիռ կայացնելուն, թե՛ ոչ:

2. դատարանը կաշկանդված է դատավարության կողմերին ներկայացված փաստական հանգամանքների և դրանք հաստատող ապացույցների շրջանակով, թե՞ ելնելով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու անհրաժեշտությունից՝ դատարանը պարտավոր է ի պաշտոնե բացահայտել գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերը:

ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում գործերի

ի պաշտոնն քննության մոդելն, ի տարբերություն մրցակցության սկզբունքի (<< քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդված), անմիջականորեն սահմանված չէ, սակայն << գործող քրեական դատավարության օրենսգրքում դրա ընդունման պահից ամրագրվել է 19-րդ հոդվածը 4-րդ մասը, որի համաձայն՝ դատարանը կաշկանդված չէ կողմերի կարծիքներով և իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել քրեական գործով ճշմարտությունը բացահայտելու համար, իսկ այդ սկզբունքային դրույթն իր հետագա զարգացումն է ստացել << քրեական դատավարության օրենսգրքի 331-րդ 2-րդ մասում, որը յուրօրինակ օրենսդրական հիմք է հանդիսանում ապացույցման պրոցեսում դատարանի ակտիվ մասնակցության համար²¹: Դրա համաձայն՝ դատարանն իրավունք ունի սեփական նախաձեռնությամբ որոշում կայացնել վկաներ կանչելու, փորձաքննություն նշանակելու, այլ ապացույցներ պահանջելու մասին:

Մյուս կողմից՝ << քրեական դատավարության օրենսգրքի 306-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մեղադրանքից դատախազի հրաժարվելու դեպքում դատարանը կարծում է քրեական գործով վարույթը և դադարեցնում քրեական հետապնդումը, իսկ եթե դատախազը հրաժարվում է առանձին մեղադրյալի մասով, դադարեցնում է քրեական հետապնդումն այդ մեղադրյալի նկատմամբ: Ավելին, գործող քրեադատավարական օրենքով սահմանված են դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման խիստ սահմաններ: Մասնավորապես՝ դատարանը դատավճռի կայացման ժամանակ մեղադրանքի փոփոխման հարցը լուծելիս ղեկավարվում է հետևյալ կանոններով՝

1. Դրա արդյունքում չպետք է վատթարանա ամբաստանյալի վիճակը

2. Չպետք է խախտվի ամբաստանյալի պաշտպանության իրավունքը:

Այսինքն՝ << գործող քրեական դատավարության օրենսգրքի դատական քննության ձևը գործի ի պաշտոնն քննության մոդելի և

²¹ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս: Երևան, Եր. համ. հրատ. 2006թ. 190-րդ էջ:

մրցակցության մոդելի յուրահատուկ հիբրիդ է, քանի որ ապացուցման պրոցեսին մասնակցության առումով դատարանի կարգավիճակը համապատասխանում է գործերի ի պաշտոնե քննության ձևի կողմից որդեգրած կարգավորմանը, իսկ դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման սահմանների մասով և դատախազի կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքում գործի ավտոմատ կարճման մասով մրցակցության մոդելի կարգավորմանը:

Նույն կարգավորումն էր ընտրվել նաև ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգով, որի համաձայն՝ եթե դատարանը խորհրդակցական սենյակում մեղադրանքի հիմքում դրված և մեղադրյալի կողմից կատարված արարքը հավաստող ապացույցների հետազոտման արդյունքում գալիս է հետևության, որ մեղադրյալին վերագրվող արարքը հաստատված է, սակայն դրա իրավական գնահատականն այլ է, օրինակ՝ գողություն չէ, այլ կողոպուտ, ապա պարտավոր է կայացնել արդարացման դատավճիռ:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծին, ապա դրա 21-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատարանը կաշկանդված է մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքներով, սակայն կարող է կաշկանդված չլինել մեղադրյալին վերագրվող արարքին տրված իրավական գնահատականով:

Նախագծի 283-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ նախադասության համաձայն՝ դատարանը սահմանափակված է մեղսագրվող փաստական հանգամանքներին (արարքին) տրված իրավական գնահատականով միայն այն դեպքում, երբ տարբերվող իրավական գնահատականի հարցը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում կողմերի համար չի դարձրել քննարկման առարկա:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վերդիկտ կայացնելիս դատարանը, դուրս չգալով մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների շրջանակից, կարող է սույն օրենսգրքով սահմանված պայմանների պահպանմամբ դրանց տալ իրավական այլ գնահատական, ինչպես նաև մեղադրանքի ծավալից հանել մե-

դադրյալին վերագրվող առանձին արարքներ:

Այսինքն՝ նախագծով բացակայում է գործող օրենսգրքի այն կանոնը, որի համաձայն դատարանն իրավական գնահատականի մասով կարող է փոփոխել մեղադրանքը, միայն եթե դրա արդյունքում չի վատթարանում ամբաստանյալի վիճակը: Նախագծի համաձայն՝ դատարանը կարող է փոփոխել մեղադրանքն իրավական գնահատականի մասով, այդ թվում նաև խստացման առումով:

Այսինքն՝ Նախագծով սահմանված կարգավորման դեպքում, եթե դատարանը խորհրդակցական սենյակում մեղադրյալի կողմից կատարված արարքը հավաստող ապացույցների հետազոտման արդյունքում գալիս է հետևության, որ մեղադրյալին վերագրվող արարքն իրավական գնահատականի մասով ոչ թե կողոպուտ է, ինչպես նրան առաջադրված մեղադրանքում, այլ՝ ավազակություն, ապա պարտավոր է փոփոխել մեղադրանքը՝ կայացնելով մեղադրական դատավճիռ ավազակության կատարման համար:

Դատարանի կողմից նյութական նորմը սեփական հայեցողությամբ կիրառելու լիազորությունը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ տարբերվող իրավական գնահատականի հարցը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում կողմերի համար դարձել է քննարկման առարկա: Դատարանը չի կարող կիրառել մեղադրանքում տրված իրավական գնահատականից տարբերվող իրավական գնահատական, եթե նախապես տարբերվող իրավական գնահատականը չի քննարկել դատավարության կողմերի հետ:

Այնուամենայնիվ, փաստ է, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով դատարանը օժտվել է մեղադրանքի իրավաբանական գնահատականը խստացման առումով փոփոխելու ազատ լիազորությամբ: Ավելին, Նախագծի համաձայն՝ դատական քննության ընթացքում դատախազն օժտված չէ մեղադրանքից հրաժարվելու լիազորությամբ, ինչը նշանակում է, որ նրա՝ իր կողմից պաշտպանվող մեղադրանքը չպնդելը և չպաշտպանելը այլևս չի հանգեցնելու ավտոմատ կերպով գործով արդարացման դատավճռի կայացման, և դատարանը շարունակելու է գործի քննությունը: Այս երկու հատկանիշները բնորոշ են գործի ի պաշ-

տոնն քննության մոդելին: Նախագծի 366-րդ հոդվածի 4-րդ մասի ուսումնասիրությունից բխում է նաև, որ դատարանն իրավունք ունի իր նախաձեռնությամբ լրացնել դատաքննությունը, այսինքն՝ ձեռք բերել նոր ապացույցներ:

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը, ի տարբերություն գործող օրենսգրքով սահմանված դատական քննության հիբրիդային մոդելի, որում առկա են և՛ մրցակցությանը, և՛ ի պաշտոնե քննությանը բնորոշ տարրեր՝ առաջինի ակնհայտ գերակայությամբ, անցում է կատարել դատական քննության մեկ այլ հիբրիդային մոդելի, որում թեկուզ պահպանվել են և՛ մրցակցությանը, և՛ ի պաշտոնե քննությանը բնորոշ տարրեր, սակայն արդեն երկրորդի՝ ի պաշտոնե քննության մոդելի ակնհայտ գերակայությամբ:

Կարծում ենք, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով դատական քննության մոդելի վերաբերյալ որդեգրած կարգավորումները ՀՀ քրեական դատավարությունում տվյալ ինստիտուտի աստիճանական զարգացման արդյունք են և թե՛ իրենց տեսական հիմնավորվածությամբ, թե՛ պրակտիկ կիրառելիությամբ գերադասելի են նախկինում տվյալ ինստիտուտի վերաբերյալ սահմանված բոլոր տարբերակներից:

Hayk Sargsyan

PhD student of the Chair of Criminal procedure and Criminalistics, YSU

THE ISSUES OF DIFFERENCES CONCERNING JUDICIAL PROCEEDINGS DURING ADVERSARIAL AND EX OFFICIO HEARINGS

The research work outlines the characteristics and attributes of adversarial and ex officio judicial proceedings: The work examines the differences and similarities of these two types of proceedings. Attempts are made to find out what type of judicial proceeding is stipulated by the current edition of the Criminal Procedure Code of the Republic of Armenia and by the new draft of the Criminal Procedure Code of the Republic of Armenia.

ВОПРОСЫ РАЗЛИЧИЕ СУДЕБНОГО РАЗБИРАТЕЛЬСТВА В ХОДЕ СОСТЯЗАТЕЛЬНОГО И EX OFFICIO СЛУШАНИЙ

Научно-исследовательская работа описывает характеристики и атрибуты состязательного и ex officio разбирательств: Работа исследует сходства и различия этих двух типов судебного разбирательства. Предпринимаются попытки выяснить, какой тип судебного порядка предусмотрен действующей редакцией Уголовно-процессуального кодекса Республики Армении и нового проекта Уголовно-процессуального кодекса Республики Армении.

Բանալի բառեր՝ Մրցակցության, ի պաշտոնե քննությունը, մեղադրանքի իրավաբանական գնահատական, ամբաստանյալի վիճակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նոր նախագիծ, պաշտպանության իրավունք, մեղադրանքի փոփոխում:

Keywords: adversarial proceedings, ex officio judicial proceedings, legal part of the criminal indictment, accused person, judicial proceedings by the new draft of the Criminal Procedure Code of the Republic of Armenia, right of defence, modification of the criminal indictment.

Ключевые слова: Сходства и различия состязательного и ex officio разбирательств, система судебного разбирательства, сторона обвинения, обвиняемый, проект Уголовно-процессуального кодекса Республики Армении, право на защиту, изменение обвинения.

**ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Տարիներ ի վեր պաշտպանությունը դիտարկվել է ոչ թե որպես սովորական արհեստ կամ մասնագիտություն, այլ ախտորոշում, ճակատագիր: Անձի պաշտպանությունն ստանձնելով՝ պաշտպանը պետք է համակվի սրբազան սարսուռով՝ այն մտքով, որ վճռվում է ոչ թե օտար անձի, այլ սեփական ճակատագիրը, սեփական գոյը:

Պաշտպանությունը՝ որպես գործունեության բարդ գործընթաց, զերծ չէ սենտիմենտներից: Պաշտպանը գործ ունի մեղադրյալի հետ ոչ միայն որպես քրեական դատավարության սուբյեկտի, այլև որպես մարդկային միավորի՝ իր կրքերով, զգացմունքներով, հաճախ՝ ոչ պարզ ներաշխարհով: Պաշտպանյալի յուրահատուկ դրությունից ելնելով՝ զգացմունքները շատ հաճախ ուղղորդում են համագործակցության գործընթացը. պաշտպանն ուղղակի իրավունք չունի հաշվի չնստել դրանց հետ:

Հետևաբար, այս հարցում միայն իրավական դոգմատիկայով առաջնորդվել չի կարելի, և առհասարակ իրավական դոգմատիկան ի վիճակի չէ կարգավորելու հասարակական հարաբերությունների բոլոր կողմերը: Պաշտպանն իր գործունեության ընթացքում պետք է ոչ միայն առաջնորդվի օրենքների իմացությամբ և դրանց կիրառմամբ, այլև պահապան լինի հասարակության մեջ ամրագրված կենսականորեն կարևոր բարոյախոսությանը, բարոյական մշակութին, լինի արդարացի, մարդասիրական և բարի: Ամերիկյան հեղինակների խորին համոզմամբ փաստաբանի գործունեությունն առավել շատ պետք է հենվի բարոյական հենքի, քան զուտ օրենսդրական բազայի չոր իմացության վրա²:

Նման պայմաններում քրեական պաշտպանությունում առանձ-

¹ ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ.Հ. Ղուկասյան:

² Sten Patterson Th. Some problems of legal ethics, Pocheater N.Y., 1917 էջ 3: Կարծում ենք՝ դա է նաև պատճառը, որ ԱՄՆ-ում գոյություն չունի որևէ նորմատիվ-իրավական ակտ, որտեղ ամրագրված լինեն փաստաբանի իրավունքները դատավարությունում. դրանք հիմնականում բխում են մասնագիտական էթիկայի նորմերից, ինչպես նաև՝ ավանդույթից և նախադեպային իրավունքից (տես, Wharton F., James M. Criminal Procedure. San-Francisco, 1989, էջ 288):

նակի կարևորություն է ստանում փաստաբանական էթիկան ու դրանից բխող բոլոր կանոնները: Էթիկայի կանոնները՝ որպես վարքագծի ընդհանուր սոցիալական նմուշներ, ձևավորվել են մարդկության երկարատև պատմական զարգացման ընթացքում՝ «չարի դեմ պայքարի, ինչպես նաև բարու, մարդասիրության, արդարության, մարդկանց երջանկության հաստատման համար պայքարի ընթացքում»¹: Ի տարբերություն իրավունքի՝ էթիկայի նորմերը բավական երկար ժամանակ չեն ունեցել մասնագիտացված պաշտոնական արտահայտման ձևեր, այլ միայն գոյություն են ունեցել մարդկանց գիտակցության մեջ, ինչպես համոզված էր Ի. Կանտը²:

Ժամանակակից պայմաններում մասնագիտական գործունեության բարոյաէթիկական հարաբերությունների կարգավորման առանձնահատկությունն այն է, որ շատ երկրներում մասնագիտական ոլորտների հետ կապված էթիկական նորմերը ձեռք են բերում ձևականացված որոշակի բնույթ՝ էթիկայի վարքագծի կանոնագրքերում ամրագրվելու միջոցով³:

Այդ կանոնագրքերն էլ ամրագրում են պահանջներ (դրանք կանոնադրվում են օրենքի պահանջների հետ, կան ինքնուրույն դրսևորում են ստանում՝ չկրկնելով օրենքի պահանջը), որոնց յուրաքանչյուր փաստաբան պետք է հետևի իր մասնագիտական գործունեությունն իրականացնելիս: Սակայն չենք կարող բացառել այնպիսի հարաբերությունների առաջացումը, որոնք առահասարակ իրենց անդրադարձը չեն գտել կանոնագրքերում: Նման պայ-

¹ St' u Murray P. Basic Trial Advocacy. Harvard, 1995, էջ 37:

² St' u История политических и правовых учений, под. ред. В. С. Нерсисянца. Москва, 2006, էջ 511:

³ ՀՀ-ում ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 2006թ փետրվարի 18-ին ընդունվել է Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք): Բացի այս՝ կարելի է հիշատակել Ամերիկյան փաստաբանների մասնագիտական էթիկայի տիպային կանոնները, Եվրոպական ընկերակցության երկրների փաստաբանների կանոնների ընդհանուր կանոնագիրքը, Եվրոպական ընկերակցության իրավաբանների վարքագծի կանոնագիրքը, Փաստաբանների դերի մասին հիմնական դրույթները՝ ընդունված ՄԱԿ-ի 8-րդ կոնգրեսում 1990թ օգոստոսին, Իրավաբանների միջազգային ասոցիացիայի իրավաբանական չափորոշիչները, Մենդոզայում ընդունված փաստաբանական էթիկայի կանոնները (այս կանոնագրքի գործողության ոլորտը լատինական Ամերիկայի երկրներն են, Իսպանիան և Պորտուգալիան) և այլն:

մաններում օգնության են հասնում էթիկայի սկզբունքները՝ որպես պաշտպանի պրոֆեսիոնալ գործունեության ուղենիշներ: Փաստաբանական էթիկայի սկզբունքները մշակված են ոչ թե յուրաքանչյուր առանձին դեպքի համար, այլ դրանք հիմնական ուղենիշներ են, որոնց հիման վրա և դրանց պահպանմամբ պաշտպանը պետք է կառուցի իր պաշտպանությունը: Փաստաբանական էթիկայի սկզբունքները ապահովում են նաև պաշտպանության, որը հանրության և արդարադատության համար անփոխարինելի գործունեության տեսակ է, համակարգվածությունը, կազմակերպվածությունը և աստիճանակարգությունը:

Փաստաբանական էթիկայի սկզբունքների սաղմնային տարբերակը ամրագրված է ՀՀ Փաստաբանի Վարքագծի Կանոնագրքում /այսուհետ՝ Կանոնագիրք/, որի 5 և 6-րդ հոդվածները վերնագրված են համապատասխանաբար՝ օրինականության և անկախության սկզբունքներ վերտառությամբ: Սակայն հարկ է նկատել, որ հենց նույն կանոնագրքի բովանդակությունը թույլ է տալիս եզրահանգել, որ փաստաբանական գործունեության սկզբունքները ավելին են, քան սահմանված երկուսը:

Կանոնագրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ փաստաբանի մասնագիտական անկախությունը նրա պարտականությունների պատշաճ կատարման անհրաժեշտ նախապայմանն ու հիմքն է: Փաստաբանի անկախությունը, ինչպես նշում է Ա.Ն. Մարկովը, պահանջում է, որ պաշտպանության միջոցներն ու եղանակներն ընտրելիս փաստաբանն առաջնորդվի օրենքով, գիտությամբ, պրակտիկայով ու իր ներքին համոզմունքով և թույլ չտա ոչ մի ներգործություն, այդ թվում և իր պաշտպանյալի կողմից¹:

Կարծում ենք, որ այս սկզբունքին պետք է առավել լայն մեկնաբանություն տրվի, և այն պետք է դրսևորվի ֆինանսական, նյութական, ինչո՞ւ չէ, նաև որոշակի բարոյական պահանջներից դուրս: Մեր իրականության պայմաններում շատ է տարածված այն արատավոր պրակտիկան, համաձայն որի՝ պաշտպանը միջնորդություն

¹St'u Марков А.Н. Свод фундаментальных принципов и основных норм поведения адвоката, Москва, 1913: Մեջբերումն ըստ Купнис Н.М., Богданов Е.А., Гутников А.Б. Профессиональная этика юриста-консультанта, Санкт- Петербург, 2004, էջ 147:

չի ներկայացնում կամ որևէ այլ դատավարական գործողություն չի կատարում իրեն կալանավայր մեքենայով տանող քննիչին չնեղացնելու կամ նրա հետ իր հարաբերությունները չվատացնելու համար¹:

Ձեռնպահ մնալով որևէ մեկանաբանություններից՝ պարզապես մեջբերենք Իսպանիայի փաստաբանների հիմնական կանոնագրքի 8-րդ հոդվածի պահանջները. «Փաստաբանի մասնագիտությունը ազատ և անկախ մասնագիտություն է... Փաստաբանը պետք է անկախ լինի և՛ ֆիզիկապես, և՛ հոգեպես, և՛ բարոյապես: Իրավաբանական պրակտիկան պետք է ապահովի փաստաբանների անկախության համար անհրաժեշտ բոլոր տեսակի, այդ թվում՝ ֆինանսական միջոցները: Եթե այդ միջոցները չապահովվեն, բնականաբար, փաստաբանի անկախության սկզբունքը վտանգված կլինի»²:

Կանոնագրքի 7-րդ հոդվածը, կարծում ենք, ևս պետք է դիտարկել որպես սկզբունք, չնայած անհասկանալի պատճառներով վերնագրում այդ եզրույթը տեղ չի գտել: Այդուհանդերձ, ձեռնհասության սկզբունքը պաշտպանից պահանջում է ունենալ մասնագիտական բարձր պատրաստվածություն, լավ տիրապետել օրենսդրական բազային, հռետորական արվեստին, ունենալ գործնական հմտություններ, նաև չստանձնել որևէ գործ մասնագիտական գիտելիքները բավարար չլինելու պայմաններում:

Ինչ վերաբերում է տեսական գրականությանը, ապա դեռևս 1927 թ. Ն.Ն. Պոլյանսկին անդրադարձել է փաստաբանի վարքագծի սկզբունքներին: Այսպես, «Միայն մեղադրյալի պաշտպանությունը և ոչ մի դեպքում նրա մերկացումը, արդարացիությունը, մասնագիտական գաղտնիքն ու պաշտպանյալից անկախությունը. սրանք են մեր հանդգամբ փաստաբանի վարքագծի չորս սկզբունքները

¹ Ցավոք, նման ցավալի դեպքի ակնատես ենք եղել արտադրական պրակտիկայի ընթացքում, երբ պաշտպանը (անձնանունը հասկանալի պատճառներով չի նշվում) հրաժարվեց դատաբժշկական փորձաքննություն նշանակելու միջնորդություն ներկայացնել, այն դեպքում, երբ իր պաշտպանյալը պնդում էր, որ քննիչն անձամբ բռնությամբ է կորզել իրենից ցուցմունքները՝ ցույց տալով իր վրա առկա կապտուկները, միայն այն պատճառով, որ չնեղացնի կամ չվիրավորի գործը քննող քննիչին, ով իր սեփական մեքենայով իրեն տանում էր իր բնակավայրից բավական հեռու գտնվող կալանավայր:

² St u La carta principal de los abogados en España, 1872, artículo 8:

պաշտպանյալի հետ հարաբերություններում»¹:

Իսկ Մ.Յու. Բարշևսկին փաստաբանի համար որպես անկյունաքարային սկզբունքներ է առաջադրում ազնվությունը, ծեռնհասությունը, բարեխղճությունը²: Ա.Գ. Կուչերենան էլ սրանց ավելացնում է նաև խելամտությունը, արդարացիությունը, մարդասիրությունը, պատասխանատվությունը և մարդու պատվի և արժանապատվության հարգումը³:

Զխորանալով վերը թվարկված բոլոր սկզբունքների բովանդակության բացահայտման մեջ՝ անդրադառնանք միայն այն սկզբունքների քննարկմանը, որոնք ըստ մեզ պարադոքսալ են:

Այսպես, ազնվության սկզբունքը քննարկվում է իր պաշտպանյալի հետ հարաբերությունների կոնտեքստում, իսկ բարեխղճության սկզբունքն առավել բնութագրում է փաստաբանական գործունեության «արտաքին կողմին»: Պաշտպանը պետք է ոչ միայն լինի բարեխիղճ, այլև իր վարքագծով մյուսներին ևս դրդի բարեխղճության:

Ինչ վերաբերում է ազնվության սկզբունքին, ապա այն մեր պատկերացմամբ մի փոքր պարադոքսալ է և կոլիզիոն:

Նախ, հարց է առաջանում. դիտարկել այս սկզբունքը միակողմ, թե՞ երկկողմ կոնտեքստում: Մասնագիտական գրականության մեջ մի շարք հեղինակներ գտնում են, որ ազնվությունը պետք է լինի միակողմ, այսինքն՝ ապահովվի միայն պաշտպանի կոմից, իսկ պաշտպանյալը ոչ միայն պարտավոր չէ, այլև պաշտպանության արդյունավետության տեսանկյունից նաև ցանկալի է, որ պաշտպանին չհայտնի գործի բոլոր մանրամասները: Իսկ սրա միակ բացատրությունն այն է, որ պաշտպանին գործի հանգամանքներով ավելորդ ծանրաբեռնելը կարող է բացասական արդյունք ունենալ և պաշտպանի մոտ ձևավորել տհաճ և անբարյացակամ վերաբերմունք պաշտպանյալի նկատմամբ¹: Սակայն պաշտպանի գործունեության որակն ամբողջապես ուղղակի կախված է նրանից, թե որ-

¹ Стен Полянский Н.Н. Правда и ложь в уголовной защите, Москва, 1927, էջեր 35-36:

² Стен Барщевский М. Адвокатская этика. Москва, 2000, էջ 30-31:

³ Стен Кучерена А.Г. Адвокатура. Москва, 2004, էջ 239:

¹ Стен Баев М.О., Баев О.Я. Тактика уголовного преследования и профессиональная защита от него. Москва, 2005, էջ 225:

քանով լրիվ և ամբողջական նա պաշտպանյալից կպարզի բոլոր հանգամանքները, ինչը, մի կողմից, հնարավորություն կտա առկա ինֆորմացիայից առանձնացնել պաշտպանյալի շահերին ծառայող հանգամանքները, մյուս կողմից՝ խուսափել այնպիսի գործողություններից, որոնք այդ ինֆորմացիային չտիրապետելու դեպքում պաշտպանության համար հակառակ արդյունքը կունենան:

Այս սկզբունքի լույսի ներքո արդիական է նաև հետևյալ հարցի քննարկումը. որքանով է տեղավորվում նախնական քննության կոնֆիդենցիալության պահանջն ազնվության սկզբունքի շրջանակներում:

ՀՀ քր. դատ. օր.-ի 201-րդ հոդվածի համաձայն՝ նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Անհրաժեշտության դեպքում քննիչը, հետաքննության մարմինը (...) պաշտպանին (...) գրավոր նախազգուշացնում են՝ նախնական քննության տվյալներն առանց թույլտվության չհրապարակելու պարտականության մասին:

Օրենսդրության տառացի մեկնաբանությունից այս պահանջը անշեղորեն տարածվում է նաև պաշտպան-պաշտպանյալ հարաբերությունների վրա:

Գրականության մեջ արտահայտվում է նաև այլ տեսակետ. պաշտպան-վստահորդ հարաբերությունների նկատմամբ այս պահանջը տարածելի չէ՝ հաշվի առնելով նրանց հարաբերությունների բնույթն ու այն հանգամանքը, որ միևնույն է, մեղադրյալն ի վերջո ծանոթանալու է այդ տվյալներին¹:

Այս հարցի հետ կապված՝ հետաքրքիր է ներկայացնել մարդու իրավունքների եվրոպական Դատարանի (այսուհետ՝ ԵԴ) դիրքորոշումը. այսպես՝ Ջասպերսն ընդդեմ Բելգիայի գործով Կոմիտեն նշել է, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված

¹ Տե՛ս Ղուկասյան Հ. Պաշտպանի որոշ իրավունքների վերլուծությունը ըստ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի// Պետություն և իրավունք, N 1-2, 2000, էջ 71. Бойков А.Д. Этика профессиональной защиты по уголовным делам. Москва, 1978, էջ 65:

հնարավորությունները, որոնք պետք է ունենա յուրաքանչյուր մեղադրյալ, ներառում են նաև ողջ քննության ընթացքի արդյունքներին ծանոթանալու իրավունքը՝ պաշտպանությանը նախապատրաստվելու կոնտեքստում: Ավելին, Կոմիտեն արդեն բազմիցս նշել է, որ թեև Կոնվենցիան քննչական մարմինների նյութերի նկատմամբ մատչելիության երաշխիքներ ուղղակիորեն չի նախատեսում, այդպիսի իրավունք կարող է ենթադրվել 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի լուսի ներքո:

Կոմիտեն հաստատում է, որ 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը նախատեսում է մեղադրյալի իրավունքն իր տրամադրության տակ ունենալ իրավասու մարմինների կողմից հավաքված բոլոր անհրաժեշտ նյութերը՝ նպատակ ունենալով վիճարկել մեղադրանքը կամ հասնել ավելի մեղմ պատիժ նշանակելուն¹:

Ապա՝ Դատարանը գտավ, որ պետությունը կարող է սահմանափակել քննության նյութերի մատչելիությունը պաշտպանության կողմի համար արդարադատության պատշաճ իրականացման նպատակով անգամ այն պարագայում, երբ ապացույցները մեղադրյալի համար կարևոր էին²:

Ընդհանրապես, Դատարանի դիրքորոշումն առ պաշտպանության իրավունքը հետևյալն է. Դատարանը ելնում է պաշտպանության միասնական իրավունքից, այսինքն՝ պաշտպանն ու մեղադրյալը դիտարկվում են որպես միասնականություն, և եթե 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ապահովվում են նրանցից միայն մեկի նկատմամբ, Դատարանը պաշտպանության իրավունքի խախտում չի արձանագրում³:

Այսինքն՝ Դատարանի դիրքորոշմամբ միայն պաշտպանի կողմից նախնական քննության նյութերին ծանոթանալը բավարար է պաշտպանության իրավունքի և Կոնվենցիայով նախատեսված երաշխիքների պահպանման տեսանկյունից:

Այս հարցի կապակցությամբ բոլորովին այլ է ԱՄՆ Գերագույն Դատարանի դիրքորոշումը (նկատենք, որ ԱՄՆ-ում, որպես կանոն,

¹ St'u case of Jespers v Belgium, 15/10/80.

² St'u Кремцов против Австрии, 21/09/92.

³ St'u Могол Н., Харби К., Алексеева Л.Б. Европейская Конвенция о защите прав и основных свобод. Статья 6, Право на справедливое судебное разбирательство. Москва, 2001, էջ 104:

պաշտպանը գործի նյութերին չի ծանոթանում նաև նախաքննության ավարտից հետո¹): Թրամմելն ընդդեմ ԱՄՆ-ի գործով Գերագույն Դատարանը սահմանել է, որ անիմաստ է պաշտպանյալին զրկել որոշ տեղեկություններ ստանալու հնարավորությունից. դա ուղղակիորեն բխում է պաշտպանության լրիվության սկզբունքից. եթե անհրաժեշտություն չկա, որ այդ ինֆորմացիան իմանա պաշտպանյալը, ապա պետք չէ այն հայտնել նաև պաշտպանին, քանի որ նրանք մի ամբողջություն են²:

Հետաքրքիր է նաև այս հարցի կապակցությամբ արտասահմանյան երկրների օրենսդիրների մոտեցումը. բավական խիստ մոտեցում է դրսևորվել Վենեսուելայում, որի թե՛ Կանոնագրքում, թե՛ քր. դատ. օր.-գրքում նշվում է, որ կոնֆիդենցիալությունն ունի երկկողմանի բնույթ, և պաշտպանը հատուկ հավաստագիր է ստորագրում առ այն, որ պաշտպանյալին չի հայտնի մինչդատական վարույթի՝ իրեն հայտնի դարձած տեղեկությունները³: Կան նաև երկրներ, որտեղ առանց հավաստագիր ստորագրելու պարզապես բանավոր զգուշացնում են պաշտպանին⁴:

Այժմ շարադրենք հարցի կապակցությամբ մեր դիրքորոշումը. քանի որ պաշտպան- պաշտպանյալ տեսակցությունները բացառապես կոնֆիդենցիալության պայմաններում են, ապա ինչքան էլ պաշտպանից ստորագրություն վերցնեն կամ բանավոր նախազգուշացնեն, միևնույնն է, հնարավոր չէ կանխել այդ տեղեկությունների փոխանցումը, բացի այդ, եթե անգամ ենթադրենք, որ պաշտպանը չի հաղորդել իր պաշտպանյալին ուղղակիորեն, այնուամենայնիվ անուղղակի ձևով նա կպարզի և կբացահայտի այդ տեղեկությունների իսկությունն ու կօգտագործի պաշտպանական տակտիկա

¹ Տե՛ս Fellman D. The Defendant's Rights. New York, 1958, էջ123:

² Տե՛ս Trammel v US (Supreme Court of US, 1980), Park R.C. Waltz J.R. Cases and materials on evidence. Westbury, New York, 1995, էջ 521.

³ Տե՛ս Código de ética del abogados. La junta directiría del XIII conseja superior de la federación de Colegios de abogados de Venezuela, artículo 25, Código orgánica procesal penal de la república de Venezuela (1998), artículo 79:

⁴ Տե՛ս Ley de servicio public de defense penal de Guatemala, C.A. (5 de diciembre de 1997), artículo 79, La carta de los abogados en España, 1872, artículo 11, Código procesal penal de Mendoza 16 de Noviembre de 1999 (ademas lei 26/02/2009), artículo 67:

մշակելիս: Հետևաբար, կարծում ենք, որ եթե արդարադատության կամ լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ նախաքննության շահի տեսանկյունից անհրաժեշտ է որոշակի ինֆորմացիա մինչև նախաքննության ավարտը գաղտնի պահել պաշտպանության կողմից, ուրեմն ոչ մի սուբյեկտի պետք չէ հաղորդել այն, իսկ եթե պետք է հաղորդել պաշտպանին, ապա նրան պետք է հայեցողական ազատություն տրվի դրանք օգտագործելու, պաշտպանյալին հայտնելու կամ չհայտնելու տեսանկյունից: Ուստի, քր. դատ. օր.-գրքի 205-րդ հոդվածը մեկնաբանելիս գաղտնիությունը չպետք է տարածել պաշտպան-պաշտպանյալ հարաբերություններին:

Եթե ազնվության սկզբունքը դիտարկենք փաստաբանական գաղտնիքի տեսանկյունից, ապա փաստաբանի վարքը, մի կողմից՝ հակասության մեջ է մտնում օբյեկտիվության և անկեղծության բարոյական պահանջների, իսկ մյուս կողմից՝ մասնագիտական պարտականության սկզբունքի հետ: Հենց այս բոլորը հաշվի առնելով է, որ կան հեղինակներ, որոնք առաջարկում են, որ ազնվության սկզբունքը պետք է բացառել որպես պաշտպանի գործունեության սկզբունք¹ և քննադատաբար մոտենում այն տեսակետին, որ պաշտպանի առաջնային ամենակարևոր հատկանիշները պետք է լինեն անկողմանակալությունն ու ճշմարտախոսությունը²: Սակայն, կարծում ենք՝ այս հեղինակները պարզապես «ազնվություն» եզրույթը դիտարկում են միայն փիլիսոփայական տեսանկյունից: Իհարկե, պաշտպանի գործունեության առանձնահատկությունն այնպիսին է, որ այս սկզբունքը մի փոքր այլ կաղապարներ է ստանում և կախվածության մեջ ընկնում մասնագիտական պարտքի և պաշտպանյալին չվնասելու սկզբունքներից, բայց ազնվությունն ամբողջությամբ բացառել պաշտպանի գործունեությունից միմշանակ անընդունելի է:

Փաստաբանական էթիկայի սկզբունքներից ուղղակի բխում են

¹St'u Salgado D.C., Nandayapa C.F. Temas de derecho procesal de México y España. Mexico, Madrid, 2005, էջ 25:

²St'u Harris. J. Ch. A monograph on legal ethics. London, 1907, չջ 35, Williams H. W. Legal ethics and suggestions for young counsel. Pennsylvanis, 1996, էջ 71:

ստրատեգիական սկզբունքները, որոնց իրացումը քրեական պաշտպանության ընթացքում հնարավոր չէ պատկերացնել առանց էթիկայի պահանջների պահպանման:

Ստրատեգիական սկզբունքների մի բավական հաջողված տարբերակ առաջարկում են Օ.Յա. և Մ.Օ. Բաևը: Դրանք են.

1. պաշտպանյալի վիճակի վատթարացման անթույլատրելիության սկզբունք¹. ըստ հեղինակների՝ այս սկզբունքը ենթադրում է, որ պաշտպանի գործունեությունն առնվազն պետք է չեզոք լինի առաջադրված մեղադրանքի և նրա հիմնավորվածության նկատմամբ²: Համծայնելով առաջադրված սկզբունքի հետ՝ ստիպված ենք վիճարկել դրա հիմնավորումը. միանշանակ, պաշտպանի մասնակցությունը գործով վարույթին որևէ կերպ չպետք է վատթարացնի պաշտպանյալի վիճակը, սակայն չեզոքությունն առաջադրված մեղադրանքի նկատմամբ դրա գրավականը լինել երբևէ չի կարող: Պաշտպանյալի դեմ արտահայտված ցանկացած երևույթի նկատմամբ պաշտպանի անտարբեր վերաբերմունքն ինքնին արդեն վնասում է պաշտպանյալին: Ուստի, կարծում ենք, ներկայացված սկզբունքն ու դրա մեկնաբանությունն անհամատեղելի են:

2. Մինիմալիստիկ սկզբունք. այսինքն՝ այն մինիմումը, որի պայմաններում պաշտպանի գործունեությունը կարող է համարվել բավարար: Որպես այդպիսի սահման հեղինակը համարում է անմեղ պաշտպանյալին քրեական պատասխանատվության չենթարկելու, բոլոր արդարացնող և մեղմացնող հանգամանքները վեր հանելու և մեղավոր ճանաչված պաշտպանյալին արդար պատիժ նշանակելու երաշխիքները:

¹ Այս առումով, կարծում ենք, արժանահիշատակ է մեջբերել արտադրական պրակտիկայի ընթացքում պատահած այն դեպքը, երբ պաշտպանն ինքն իր պաշտպանյալին դրդեց փախչել դատական միատերի դահլիճից՝ մատնանշելով պատուհանը՝ որպես փախչելու ուղի, այն պահին, երբ դատավորը հեռացավ խորհրդակցական սենյակ՝ դատավճիռ կայացնելու (դեպքը տեղի է ունեցել Գեղարքունիքի մարզի Վարդենիսի վարչական շրջանի դատարանում):

² Տե՛ս Баев О.Я. Тактика уголовного преследования и профессиональной защиты от него. Москва, 2008, էջ 464, Баев М.О. Стратегические принципы тактики профессиональной защиты по уголовным делам // Воронежский адвокат N 7, 2004, էջեր 8-9:

3. Մեղադրող ապացույցները նորովի, պաշտպանության դիրքորոշման լույսի ներքո մեկնաբանելու սկզբունք¹: Այս սկզբունքը հատկապես կարևորվում է պաշտպանի՝ ապացույց հավաքելուց զրկված լինելու պայմաններում: Եթե պաշտպանը չի կարող ներկայացնել իր ապացույցները, արդարացի է նրան հնարավորություն տալ գոնե փորձել սեփական դիրքերից ուսումնասիրել ձեռք բերված ապացույցները:

Այդուհանդերձ, ինչպես նշում է Ֆ. Նիցշեն. «հանցագործի փաստաբանները հազվադեպ են լինում այնքան դերասան, որպեսզի արարքի սարսափի հմայքը մեղավորի օգտին ծառայեցնեն»:

4. Փաստաբանական գաղտնիք² հրապարակման անթույլատրելիության սկզբունք. այս սկզբունքից հեղինակը նշում է, որ որոշակի շեղումներ թույլատրվում է միայն տակտիկական նկատառումներով՝ չբացահայտելով դրանց մանրամասնությունները³: Հեղինակի չբացահայտած շեղումները փորձենք մեկնաբանել մեր դիրքորոշմամբ: Թերևս այն պահին, երբ խախտվում է փաստաբանական գաղտնիքը, ոչնչանում է փաստաբանի մասնագիտությունը⁴, քանի որ հնարավոր չէ պատկերացնել փաստաբանի ինստիտուտը առանց վստահության, որի հիմքը հենց փաստաբանական գաղտնիքն է¹: Այնուամենայնիվ, մեր խորին համոզմամբ փաստաբանական ինստիտուտը ավելի արագ կփլուզվի այն դեպքում, երբ պաշտպանը փաստաբանական գաղտնիքի պահպանման ուժով

¹ Տե՛ս Баев О.Я. Тактика уголовного преследования и профессиональной защиты от него. Москва, 2008, էջ 464-469, Баев М.О. Стратегические принципы тактики профессиональной защиты по уголовным делам // Воронежский адвокат N 8, 2004, էջ 6:

² Փաստաբանական գաղտնիքի հետ կապված՝ 2011 թ. կայացավ մեծ գիտաժողով ԱՊՀ և եվրոպական երկրների ներկայացուցիչների մասնակցությամբ, որտեղ եվրոպական դատավարագետները եզրակացրին, որ փաստաբանական գաղտնիքի հետ կապված ԱՊՀ օրենսդրությունը շատ կատարյալ է, իսկ արևելական խիստ անկատար (Տե՛ս Ведник адвокатской палаты Санкт-Петербурга N 3, 2001, էջեր 71-74):

³ Տե՛ս Баев М.О. Стратегические принципы тактики профессиональной защиты по уголовным делам // Воронежский адвокат, N 8, 2004, էջ 8:

⁴ Տե՛ս Короткова П.Е. К вопросу об адвокатской тайне Древнего Рима // Адвокатская Палата, N 7, 2009, էջ 43:

¹ Տե՛ս Крохмалюк А. Адвокатская тайна как херв профессии // Новая адвокатская газета, N 6, 2008, էջ 13:

չկատարի որոշակի գործողություններ, որոնք ակնհայտորեն կբարելավեին իր պաշտպանյալի վիճակը:

Նախ անդրադառնանք արտասահմանյան երկրների օրենսդրությանը՝ կապված փաստաբանական գաղտնիքի հետ: Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ ինքնըստինքյան համգում ենք եզրակացության, համաձայն որի՝ փաստաբանական գաղտնիքին տրվում է առավել նեղ մեկնաբանություն, և այն դիտարկվում է միայն որպես պաշտպան-պաշտպանյալ հարաբերությունների առավելություն:

Այս առումով արժանահիշատակ է Բելգիայի Սահմանադրական դատարանի (այսուհետ՝ ՍԴ) 2008 թ. հունվարի 3-ին կայացված որոշումը, որտեղ ՍԴ-ն նշել է, որ փաստաբանական գաղտնիքին քրեական պաշտպանության ոլորտում պետք է առավել նեղ մեկնաբանություն տրվի, և այն միանշանակ ենթակա է հրապարակման, եթե չհրապարակելու արդյունքում էականորեն վատթարանում է մեղադրյալի կամ կասկածյալի վիճակը¹: Իսկ ԱՄՆ Գերագույն դատարանը Վուդրոֆն ընդդեմ ԱՄՆ-ի գործով որոշման մեջ արձանագրել է, որ կարելի է բացահայտել փաստաբանական գաղտնիքը, եթե դրա արդյունքում բարելավվում է վստահորդի վիճակը² (նույնաբովանդակ որոշում է կայացրել նաև Նյու Ջերսի նահանգի Գերագույն դատարանը)³, իսկ Մենդեզն ընդդեմ Կալիֆորնիայի գործով նահանգի Գերագույն դատարանը դիրքորոշում է արտահայտել, որ փաստաբանական գաղտնիքի հրապարակումը (բնականաբար ի շահ վստահորդի) պաշտպանի կողմից որևէ խախտում չի առաջացնի, եթե այդ մասին տեղյակ է վստահորդը⁴:

Պատկերացնենք մի իրավիճակ. ամբաստանյալի աթոռին նստած է մի անձ, որն ընդամենը օժանդակել է իր՝ սպանություն կատարած ընկերներին թաքցնել սպանվածի դիակը: Որքանով պաշտպանի գործողությունները կլինեն համապատասխան իր մասնագիտական պարտքին, եթե նա, այդպես էլ չբացահայտելով

¹ Տե՛ս Լալարդի Ա. Адвокаты евросоюза борются за цвои права // Новая адвокатская газета, N 10, 2009, էջ 19:

² Տե՛ս Woodruff v US (1974). Park R.C., Waltz J.R. Cases and materials on evidence. Westbury, New York, 1995, էջ 521:

³ Տե՛ս State v Szemple (1994). Park R.C., Waltz J.R. Cases and materials on evidence. Westbury, New York, 1995, էջ 541:

⁴ Տե՛ս Mendez v California (1992). Park R.C., Waltz J.R. Cases and materials on evidence. Westbury, New York, 1995, էջ 527

փաստաբանական գաղտնիքը, թույլ տա, որ իր պաշտպանյալը պատժվի օրենքի ողջ խստությամբ: Չէ՞ որ փաստաբանն ամեն անգամ բարոյական հանցանք է կատարում, երբ, ստանձնելով գործը, մեղադրյալի համար չի անում այն ամենը, ինչ-որ իր ուժերի ու հնարավորությունների սահմանում է¹:

Հետևաբար, եթե կառուցելու լինենք պաշտպանի գործունեության սկզբունքների հիերարխիա, ապա բուրգի զագաթին կտեղադրենք պաշտպանյալի օգտին բոլոր բարելավող գործողությունները կատարելու սկզբունքը, որից էլ բխեն մնացած սկզբունքները:

Վերոշարադրյալ սկզբունքներին ավելացնենք նաև մեր կարծիքով պաշտպանության կառուցման համար կարևոր սկզբունքներ.

1. պաշտպանության ճկունություն, որը ենթադրում է, որ պաշտպանության սկզբում ընտրված տակտիկան կամ նախանշված վերջնական նպատակը կոնստանտ չեն և գործի հանգամանքների կոնտեքստում կարող են հետագայում որոշակի շտկումների և փոփոխությունների ենթարկվել:

2. Իրականություն. այսինքն՝ պաշտպանի կողմից ընտրված տակտիկան չպետք է կտրված լինի իրականության փաստերից, պահանջներից և հնարավորություններից: Սա ենթադրում է, որ պաշտպանության ինչպես նպատակն, այնպես էլ ընտրված տակտիկան պետք է իրագործելի լինեն:

3. Անհատականություն, ինչը ենթադրում է, որ պաշտպանության իրականացման համար որևէ կադապար, դոգմա լինել չի կարող: Յուրաքանչյուր առանձին պաշտպանություն հիմնվում է երկու անհատականության՝ պաշտպանի և պաշտպանյալի վրա, ինչը ենթադրվում է, որ ցանկացած պաշտպանություն անկրկնելի է:

4. Հանկարծակիության սկզբունք. մեր պատկերացմամբ այս սկզբունքի էությունն այն է, որ պաշտպանը կարողանա, կիրառելով տարբեր մեթոդներ և միջոցներ, մոլորության մեջ գցի հակառակ կողմին՝ միևնույն ժամանակ չբացահայտելով իր մշակած տակտիկան և ապահովելով անսպասելիության էֆեկտը: Կարծում ենք, որ այս սկզբունքը պաշտպանության համար դրական նշանակություն կունենա միայն այն դեպքում, եթե ճիշտ և ռացիոնալ ընտրվի դրա իրականացման տեղն ու ժամանակը:

¹Տե՛ս, Пороховщиков Н. Уголовная защита. Спб., 1913, с. 2: Մեջբերումն ըստ Киселев Я.С. Этика адвоката (Нравственные основы деятельности адвоката в уголовном судопроизводстве), Ленинград, 1974, էջ 36:

5. Պաշտպանյալի վիճակը բարելավող ցանկացած գործողություն ժամանակին կատարելու սկզբունքը: Դա վերաբերում է թե՛ միջնորդություններ հարուցելուն, թե՛ բացարկներ հայտնելուն:

Հարկ է նկատել, որ այս սկզբունքն օբյեկտիվ հիմք ունենալ չի կարող: Այսինքն՝ այն հարցի պատասխանը, թե արդյո՞ք այս կամ այն գործողությունը կատարելու ժամանակն է և արդյո՞ք այդ պահին նման գործողության կատարումը բարենպաստ կլինի պաշտպանյալի համար, կոնկրետ դեպքում որոշելու է պաշտպանը: Օբյեկտիվ հանձնարարականներ չեն կարող լինել: Խնդիրն այն է, որ պաշտպանը չհետաձգի որևէ գործողության կատարում՝ ավելի հարմար պահի սպասելով, եթե արդեն իսկ այդ պահին իր մասնագիտական համոզմամբ այդ գործողությունն արդիական և արդյունավետ է:

6. Համաչափության սկզբունք. այս սկզբունքի բովանդակությունը պետք է մեկնաբանել հետևյալ կերպ. յուրաքանչյուր գործողություն, որն ուղղակի հակասության մեջ է մտնում թե՛ պաշտպանյալի, թե՛ այլ անձանց շահերի հետ, նախաձեռնելուց առաջ նախ հավասարակշռել, թե այդ գործողության իրականացման արդյունքում ինչ չափ կտուժեն այլ անձանց շահերը և ինչ չափ կբարելավվի պաշտպանությունը:

7. Մասնագիտական պարտքի սկզբունք, որը մեր պատկերացմամբ իր հերթին ներառում է երկու բաղադրատարրեր. չվնասել պաշտպանյալի շահերին ոչ մի դեպքում: Այս առումով տեղին է արտահայտվել Ն.Ն. Պոլյանսկին. «Պաշտպանը իրավասու չէ վնասել իր պաշտպանյալին անգամ հանուն արդարադատության»¹: Իսկ մյուս բաղադրատարրը՝ իրականացնել պաշտպանյալի վիճակը բարելավող յուրաքանչյուր գործողություն: Օրինակ՝ Մենդոզայում ընդունված փաստաբանների էթիկայի ընդհանուր վարքագծի կանոնագրքի 15-րդ հոդվածը վերնագրված է «Ամեն ինչ պաշտպանյալի շահերի համար» վերատառությամբ, որի բովանդակությունը խոսում է այն մասին, որ պաշտպանյալի շահից բխող յուրաքանչյուր գործողություն պետք է կատարվի, եթե այդ գործողությունները հակասության մեջ չեն մտնում ավելի բարձր շահերի հետ¹:

¹ Ст'ю Полянский Н.Н. Правда и ложь в уголовной защите. Москва, 1927, էջ 57:

¹ Ст'ю Código de ética (colegio de abogados y procuradores de Mendoza), artículo 15:

ISSUES OF PRINCIPLES OF ADVOCACY ETHICS IN CRIMINAL DEFENCE

Defender's activity is continuously guided by the contradiction of professional depts and inner believes which brings about an unequivocal attitude in the institute of advocacy. In order to treat this problem as well as the ones caused by it in all this situations the principles of advocacy ethics must be the main guidelines for the defender's activity.

Анаит Арутюнян
Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

ПРИМЕНЕНИЕ ПРИНЦИПОВ АДВОКАТСКОЙ ЭТИКИ ПРИ УГОЛОВНОЙ ЗАЩИТЕ

Принципы адвокатской этики являются основными ориентирами, в соответствии с которыми адвокат должен вырабатывать правила поведения в своей повседневной деятельности. К наиболее важным принципам адвокатской этики относятся как общие требования общественной морали, приобретающие повышенную нагрузку в сфере профессиональных отношений адвоката, так и некоторые специфические правила. Этим и обосновывается появление этой статьи.

Բանալի բառեր՝ էթիկա, սկզբունքներ, քրեական պաշտպանություն, ներքին համոզմունք, մասնագիտական պարտք, ազնվություն, փաստաբանական գաղտնիք, իրականություն, բարելավել, համաչափություն:

Keywords: ethics, principles, Criminal defence, inner conviction, professional dept, honesty, advocacy secret, reality, improve, symmetry.

Ключевые слова: этика, принципы, уголовная защита, внутреннее убеждение, профессиональный долг, честность, адвокатская тайна, реальность, улучшать, симметрия.

**ԱՆՉԱՓԱՅԱՍԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՀԱՆՑԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ
ԱՊԱՅՈՒՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ապացուցման գործընթացը բարդ պրոցես է, որը ենթադրում է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների պարզաբանում՝ ուղղված քրեական դատավարության խնդիրների իրականացմանը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածով նախատեսված են այն հանգամանքները, որոնք պետք է ապացուցվեն յուրաքանչյուր քրեական գործով և կազմում են քրեական վարույթի ապացուցման առարկան: Քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ, ապացուցման առարկա ասելով, ընդունված է հասկանալ քրեական գործի ճիշտ լուծման և յուրաքանչյուր դեպքում դատավարության սկզբունքների իրականացման համար էական նշանակություն ունեցող հանգամանքների համակարգ²:

Ապացուցումը որպես ճանաչողական պրոցես ենթադրում է այնպիսի հանգամանքների պարզաբանում, որոնք հանգեցնում են հանցագործության բացահայտման, անձի մեղավորության կամ անմեղության հաստատման: Այսինքն, օրենքով նախատեսված հանգամանքների պարզաբանումը հանգեցնում է ճշմարտության բացահայտման:

Այսօր դատավարական գրականության մեջ որևէ մեկի կողմից չի վիճարկվում ապացուցման ենթակա հանգամանքների օրենսդրական ամրագրման անհրաժեշտությունը, այլ քննարկման առարկա են դրանց հստակեցման և ընդարձակման հարցերը: Առաջին անգամ քրեական գործով ապացուցման առարկան կազմող հանգամանքներն իրենց օրենսդրական ամրագրումը ստացան ԽՍՀՄ քրեական դատավարության հիմունքների 15-րդ հոդվածում

¹ ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Ս.Ա. Դիլբանդյան:

² Տե՛ս ՀՀ քրեական դատավարություն: Ընդհանուր մաս, Երևան, 2006թ., էջ 104:

/1958թ./, այնուհետև՝ ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքի 54-րդ հոդվածում /1961թ./, որի համաձայն՝ հետաքննություն և նախաքննություն կատարելիս և քրեական գործը դատարանում քննելիս ապացուցման ենթակա են՝

1) հանցագործության դեպքը /հանցագործության կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլ հանգամանքներ/

2) մեղադրյալի մեղավորությունը հանցագործությունը կատարելու մեջ

3) մեղադրյալի պատասխանատվության աստիճանի ու բնույթի վրա ազդող հանգամանքները

4) հանցագործությամբ պատճառած վնասի բնույթը և չափը:
Բացահայտման ենթակա են նաև հանցագործության կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում ապացուցման ենթակա հանգամանքները ստացան որոշակի զարգացում: Ճիշտ է, ընդհանուր գծերով այն մնան է նախկին քրեական դատավարության վերը նշված օրենսդրական կարգավորմանը, բայց նրանում տեղ են գտել նաև առանձնահատկություններ: ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի 107-րդ հոդվածի համաձայն. «Միայն ապացույցների հիման վրա են հաստատվում՝

1) դեպքը և հանգամանքները (կատարման ժամանակը, տեղը, եղանակը և այլն)

2) կասկածյալի և մեղադրյալի առնչությունը դեպքին

3) հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները

4) անձի մեղավորությունը քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելու մեջ

5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ խստացնող հանգամանքները

6) այն հանգամանքները, որոնցով դատավարության մասնակիցը կամ քրեական դատավարությանը մասնակցող այլ անձը հիմնավորում է իր պահանջները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով»:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքը, հաշվի առնելով ապացուցման իրավունքի տեսության զարգացումները, ընդարձակել և ավելի հստակեցրել է այն հանգա-

մանքների շրջանակը, որոնք պետք է ապացուցվեն յուրաքանչյուր քրեական գործով: Մասնավորապես, ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակի մեջ նախատեսվեց հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշների պարզաբանումը: Նման կարգավորումն արդարացված է, քանի որ առանց հանցակազմի բոլոր տարրերի ապացուցման խոսք չի կարող լինել ենթադրյալ հանցագործության բացահայտման և ենթադրյալ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին: Ի տարբերություն խորհրդային քրեական դատավարության իրավունքի՝ գործող օրենսգրքում բացակայում է հանցագործության կատարմանը նպաստող պատճառների և պայմանների բացահայտումը: Իրականում այդպիսի կարգավորումը ճիշտ է, քանի որ դատարանը՝ որպես արդարադատություն իրականացնող մարմին, նման խնդիր չունի, իսկ ապացուցման ենթակա հանգամանքներն ընդհանուր են վարույթն իրականացնող բոլոր մարմինների համար: Իհարկե, հանցագործության կատարմանը նպաստող պատճառների և պայմանների բացահայտումը դուրս չի մնացել քրեական դատավարության խնդիրներից, քանի որ այն նախատեսված է նախնական քննության ընդհանուր պայմանների շարքում /ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 200/:

Քրեադատավարական օրենսդրության հետագա զարգացումը ենթադրում է քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակի ընդարձակում և հստակեցում: Այս տեսանկյունից ուշագրավ է ՀՀ քրեական դատավարության մոր օրենսգրքի նախագծում տեղ գտած կարգավորումը, որն էապես ընդարձակել է ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը: Օրենսդրական նման կարգավորումից հետևում է, որ վարույթն իրականացնող մարմնի խնդիրը ոչ միայն հանցագործության դեպքի բացահայտումը և այն կատարած անձի մեղավորության ապացուցումն է, այլև այն հանգամանքների, որոնց պարզաբանումը կարևոր է քրեական գործով վեճի լուծման կամ արդարադատության իրականացման համար: Այս տեսանկյունից ապացուցման ենթակա հանգամանքներն առավել ընդարձակվել և հստակեցվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 102 հոդվածում՝ համաձայն որի՝

Քրեական վարույթի ընթացքում ապացուցման ենթակա են՝

1) դեպքը և դրա հանգամանքները /ժամանակը, տեղը, եղանակը և այլն/

2) մեղադրյալի առնչությունը դեպքին

3) ենթադրյալ հանցագործության՝ քրեական օրենքով նախատեսված հատկանիշները

4) մեղադրյալի մեղավորությունը ենթադրյալ հանցանքը կատարելու մեջ

5) քրեական օրենքով նախատեսված պատասխանատվությունը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները

6) մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները

7) ենթադրյալ հանցագործությամբ պատճառված վնասը

8) այն հանգամանքները, որոնք թույլ են տալիս անձին ազատել քրեական պատասխանատվությունից կամ պատժից

9) այն հանգամանքները, որոնցով անձը հիմնավորում է վարույթի ընթացքում իր գույքային պահանջները

10) այն հանգամանքները, որոնցով վարույթի մասնակիցը կամ այլ անձը հիմնավորում է իր պահանջները:

Կարծում ենք, որ ապացուցման ենթակա նշված հանգամանքները էական նշանակություն ունեն քրեական գործի լուծման համար և չեն կարող հանգեցնել գործի քննության անհիմն ձգձգման: Նախագծում ապացուցման ենթակա հանգամանքների մեջ առաջին անգամ առանձնացվում են մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները: Այս կապակցությամբ պրոֆեսոր Մ.Ս. Ստրոգովիչը գրում է, որ գործի ճիշտ լուծման համար պետք է հաստատվեն և ապացուցվեն մեղադրյալի անձը բնութագրող հանգամանքները, որպեսզի դատարանին պարզ դառնա, թե ինչ է իրենից ներկայացնում մեղադրյալը¹: Հետևաբար, մեղադրյալի անձը նախնական քննության ընթացքում հետազոտման ենթակա անհրաժեշտ ու բարդ օբյեկտներից է, իսկ առավել բարդ՝ անչափահասի հետ կապված:

Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ Նախագիծը սահմանում է մեկ այլ կարևոր դրույթ ևս, որ օրենսգրքով նախատեսված վարույթի առանձին տեսակների համար կարող է սահմանվել ապացուցման ենթակա հանգամանքների այլ շրջանակ:

¹Ст'я Строгович М.С. Курс советского уголовного процесса, Т. 1. М., т. 2 365:

Քրեական վարույթի առանձին տեսակների առանձնահատկություններից ելնելով՝ քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված են առանձին գործերով ապացուցման առանձնահատկություններ: Այդպիսի առանձնահատկություններ սահմանված են նաև անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ գործերով: Նշված վարույթում ապացուցման առանձնահատկության նախատեսումը կարևոր երաշխիք է հանցագործության հանգամանքների բազմակողմանի և լրիվ հետազոտման, ինչպես նաև վարույթի դաստիարակչական ներգործության ապահովման համար: Գ.Մ. Մինկովսկին, անդրադառնալով անչափահասների վերաբերյալ գործերով ապացուցման առարկային, նշում է, որ այն ներառում է բավականին մեծ քանակությամբ փաստեր, որոնց հաստատումն անրաժեշտ է անձի, մեղադրյալի կյանքի և դաստիարակության պայմանների բնութագրման համար, քան մեծահասակների: Բացի դրանից՝ ցանկացած գործով ապացուցման ենթակա հանգամանքներն այստեղ պարզաբանվում են առավել մանրամասն¹:

Վ.Գ. Պրոսվիրնինը, անչափահասների գործերով ապացուցման առարկա ասելով, հասկանում է այն հանգամանքները, որոնք ենթակա են հաստատման՝ նշված կատեգորիայի մեղադրյալների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները հաշվի առնելով, և անհարաժեշտ են քրեական գործի ճիշտ լուծման և քրեական դատավարության խնդիրների իրականացման համար²: Վարույթի այս տեսակի առանձնահատկությունները պայմանավորված են անչափահաս անձի ֆիզիկական և սոցիալ-հոգեբանական հատկանիշներով, ինչպես նաև անձի տարիքային զարգացվածությամբ պայմանավորված հանգամանքներով:

Անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ ապացուցման առարկան այն հանգամանքներն են, որոնք ենթակա են պարզման և անհրաժեշտ են յուրվեճալ արդարադատության խնդիրների իրականացման համար: Անչափահասների գործերով ապացուցման ենթակա հանգամանքները կարելի է բաժանել երկու

¹ Стен Миньковский Г.М. Особенности расследования и судебного разбирательства дел о несовершеннолетних, М., 1959. էջ 73:

² Стен Просвирнин В. Г. Особенности предмета доказывания по уголовным делам несовершеннолетних.: Автореф, дисс. ... канд. юрид. наук. Волгоград, 2001, էջ 10:

խմբի. ա/ հանգամանքներ, որոնք պետք է բացահայտվեն յուրաքանչյուր քրեական գործով /ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 107/, բ/ հանգամանքներ, որոնք ապացուցվում են միայն անչափահասների գործերով /ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 440/:

Ապացուցման ենթակա հանգամանքները կազմում են անչափահասների գործերով վարույթի հիմնական առանձնահատկություններից մեկը: Քրեական գործի քննության ընթացքում վարույթն իրականացնող մարմինը, բոլոր գործերով հաստատման ենթակա հանգամանքներից բացի, անչափահասների գործերով պարզում է նաև անչափահասի՝

1) տարիքը (ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը)

2) կյանքի և դաստիարակության պայմանները

3) առողջության և ընդհանուր զարգացման վիճակը (ՀՀ քր. դատ. օր-ի 440 հոդված):

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը, բոլոր գործերով հաստատման ենթակա հանգամանքներից բացի, անչափահասների գործերով առանձնացնում է այնպիսի հանգամանքներ, որոնք բնութագրում են անչափահաս անձի սոցիալ-հոգեբանական վիճակը: Նշված հանգամանքների առանձնացումը նպատակ է հետապնդում ապահովել յուզվենալ արդարադատության խնդիրների իրականացումը: Յուզվենալ արդարադատության խնդիրներից ելնելով, կարծում ենք, որ քրեադատավարական գործող օրենսդրությունը առանձնացնում է անչափահասների գործերով ապացուցման ենթակա հանգամանքների սահմանափակ շրջանակ: Այս առումով գործող քրեադատավարական օրենսդրությունը չի բովանդակում այն կարգավորումը, որը տեղ է գտել Պեկինյան կանոններում, իսկ մինչդեռ նշված կանոնների 1.4 հոդվածի համաձայն՝ անչափահասների նկատմամբ արդարադատությունը պետք է յուրաքանչյուր երկրի ազգային զարգացման ընթացքի հիմնական բաղադրիչ մասը հանդիսանա բոլոր անչափահասների համար սոցիալական արդարությունը բազմակողմանիորեն ապահովելու շրջանակներում՝ այդպիսով միաժամանակ օժանդակելով երիտասարդության պաշտպանությանը և հասարակության մեջ ապահովելով խաղաղ կարգ ու կանոն:

Ն.Գ. Վետրովան առանձնացնում է անչափահասների հանցագործություններով ապացուցման առարկայի երեք խումբ՝ 1/ անչափահաս անձի բնութագրական գծերը, 2/ նրա կյանքի և դաստիա-

րակության պայմանները, 3/ չափահաս դրդիչների կամ այլ հանցակիցների առկայությունը կամ բացակայությունը¹: Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում ապացուցման ենթակա հանգամանքների շրջանակը ընդարձակվել է: Նախագծում տեղ են գտել այնպիսի հանգամանքներ, որոնք բնութագրում են անչափահաս մեղադրյալի անձի բնութագրական գծերը: Այդ հանգամանքների նախատեսումը քրեական դատավարության նոր օրենսգրքում բխում է Պեկինյան կանոններից: Դրանց պարզումը կարևոր է պատասխանատվության անհատականացման, պատժի նշանակման և դաստիարակության միջոցների ընտրության համար: Ինչպես նշված է դատավարական գրականության մեջ, այդ հանգամանքները պայմանավորում են անչափահասների գործերով ապացուցման առարկայի առանձնահատկությունները²:

Քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունման նախադրյալներից մեկը նաև յուլենալ արդարադատության խնդիրների լուծումն է, քանի որ գործող օրենսգրքում իրենց արտացոլումը չեն գտել յուլենալ արդարադատության նվազագույն չափորոշիչները: Այդ չափորոշիչների օրենսդրական կարգավորման բացակայությունը պատճառ է անչափահասների գործերով արդարադատության ոչ արդյունավետ իրականացման: Մինչդեռ անչափահասների դաստիարակության հարցերը յուրաքանչյուր պետության առաջնահերթ խնդիրներից է: Քրեական դատավարության նոր օրենսգրքի հեղինակները, ելնելով քրեական դատավարության սկզբունքներից, անչափահաս մեղադրյալների համար նախատեսել են վարույթային լրացուցիչ երաշխիքներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 417 հոդվածի համաձայն՝ անչափահասին վերագրվող հանցանքի վերաբերյալ վարույթով պարզվում են՝

- 1) անչափահասի տարիքը /ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը/
- 2) անչափահասի սոցիալական, ընտանեկան վիճակի, կրթության և դաստիարակության պայմանները
- 3) հոգեկան զարգացման մակարդակը և նրա անձի այլ ա-

¹ Стѹ Уголовно-процессуальное законодательство Союза ССР и РСФСР, էջ 298:

² Стѹ Уголовно-процессуальное право Российской Федерации. //Под. ред. П.А. Лупинской. М., Юность, 2003. էջ 668:

առանձնահատկությունները

4) անչափահասի վրա տարիքով ավագ անձանց ազդեցությունը

5) ենթադրյալ հանցանքի կատարման պատճառները և դրան նպաստող պայմանները:

Ինչպես տեսնում ենք, Նախագծում փոփոխված է մոտեցումը հանցագործության կատարմանը նպաստող պատճառների և պայմանների պարզաբանման հարցում: Նախագծի 102 հոդվածում, որում սահմանված են բոլոր գործերով ապացուցման ենթակա հանգամանքները, նախատեսված չեն հանցագործությանը նպաստող պատճառները և պայմանները, մինչդեռ հեղինակները, հաշվի առնելով վարույթի այս տեսակի առանձնահատկությունները, ապացուցման ենթակա հանգամանքների մեջ առանձնացրել են նաև այդ հանգամանքները:

Կարծում ենք, որ Նախագծում մի փոքր ավելի լայն ձևակերպում է ստացել անչափահասների վրա տարիքով անձանց ազդեցության հանգամանքը: Այլ աղբյուրներում սովորաբար խոսքը վերաբերում է դրդիչներին և այլ հանցակիցներին, իսկ Նախագծում օգտագործվում է «ավագ անձանց ազդեցություն» հասկացությունը, որի տակ պետք է հասկանալ բոլոր այն անձանց, ովքեր կարող էին ազդել անչափահասի վարքագծի վրա:

Անչափահասների վերաբերյալ քրեական գործերով ապացուցման առարկայի օրենսդրական կարգավորումը ենթադրում է ոչ թե փոփոխություն, այլ ապացուցման ընդհանուր առարկայի կոնկրետացում և մասնավորացում:

Հաշվի առնելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում անչափահասների վերաբերյալ քրեական գործերով ապացուցման առարկայի կարգավորման զարգացումները՝ մեր կողմից կներկայացվեն ինչպես գործող, այնպես էլ Նախագծի կարգավորումները¹:

1. Անչափահասների վերաբերյալ քրեական գործերով ապացուցման ենթակա հանգամանքներից են՝ անչափահասի տարիքը /ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը/:

Քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի սահ-

¹ Стѣи Боровик О. В. Особенности досудебного производства по уголовным делам в отношении несовершеннолетних, //Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук, М., 2006, էջ 97:

մանման անհրաժեշտությունը կապված է անձի կողմից իր վարքագծի բնության ու սոցիալական նշանակությունը հասկանալու, իր ցանկությունները և մղումները հասարակական պահանջներին, վարքագծի կանոններին համադրելու և քրեական պատասխանատվության իմաստը համակողմանի ընկալելու ընդունակության հետ¹:

Քրեական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտ պայմաններից մեկը օրենքով սահմանված որոշակի տարիքի հասած լինելն է: Քրեական պատասխանատվության ընդհանուր տարիք սահմանելով տասնվեցը, իսկ առանձին հանցագործությունների համար՝ տասնչորսը՝ քրեական օրենքը հաշվի է առնում, որ անչափահասն այդ տարիքում լիովին ընդունակ է գնահատելու իր հանցավոր վարքագիծը:

Անչափահասի տարիքի որոշումն անհրաժեշտ է նրան քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար: Եթե հանցագործություն կատարած անձը չի հասել քրեորեն պատժելի տարիքի, ապա դա հիմք է քրեական գործի հարուցումը մերժելու կամ քրեական գործը կարճելու համար:

Անչափահասի տարիքի պարզումը կարևոր է նաև կոնկրետ հանցագործությունը անչափահասի կողմից կատարելու հնարավորության հարցը լուծելու, ինչպես նաև քրեական դատավարությունում վարույթի առանձնահատկությունները կիրառելու համար: Քրեական գործով վարույթի ընթացքում օրենքով նախատեսված անչափահասների գործերով վարույթի առանձնահատուկ կարգ կիրառվում է այն դեպքում, երբ հաստատվում է, որ անձը հանցագործությունը կատարելու պահին եղել է անչափահաս, այսինքն՝ տասնչորս կամ տասնվեց տարեկան:

Անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու տարիքի սահմանումը միշտ էլ եղել է քրեագետների քննարկման առարկա: Այս հարցը լուծելիս հիմք է ընդունվում ազգային առանձնահատկությունները, բայց կարևոր է նաև համաշխարհային փորձի ուսումնասիրությունը: Պատահական չէ, որ այս խնդիրն իր համապատասխան լուծումն է ստացել միջազգային պայմանագրերում: Այսպես, Պեկինյան կանոնների 4.1. հոդվածում սահմանված

¹ Տես Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Ընդհանուր մաս, Երևան, Երևանի համալս. հարտ. 2007, էջ 172:

է. այն իրավական համակարգերում, որոնցում ընդունվում է «անչափահասների քրեական պատասխանատվության տարիք» հասկացությունը, այդպիսի տարիքի նվազագույն սահմանը չպետք է հաստատվի շատ ցածր տարիքային մակարդակով՝ հաշվի առնելով զգացմունքային, հոգեկան և մտավոր հասունության գործոնները:

Պեկինյան կանոնների մեկնաբանություններում անչափահասի տարիքի սահմանման հարցը ներկայացվում է հետևյալ կերպ. քրեական պատասխանատվության նվազագույն տարիքի սահմանները, կախված պատմական և մշակութային առանձնահատկություններից, միանգամայն տարբեր են: Ժամանակակից մոտեցման կիրառումը կայանում է երեխայի՝ քրեական պատասխանատվության հետ կապված բարոյահոգեբանական ասպեկտները կրելու ընդունակությունների որոշման մեջ, այսինքն՝ բացահայտ հակասական վարքագծի համար երաեխային պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը որոշվում է անհատական ընդունակությունների, աղջկա կամ տղայի ըմբռնման, ընկալման կարողությամբ: Եթե քրեական պատասխանատվության տարիքային սահմանը հաստատված է չափից ցածր մակարդակի կամ ընդհանրապես չի հաստատված, պատասխանատվության գաղափարը դառնում է անմիտ: Ընհանրապես փոխադարձ սերտ կապ կա իրավախախտման կամ հանցվոր վարքագծի համար պատասխանատվության և այլ սոցիալական իրավունքների ու պարտականությունների միջև /ինչպես ընտանեկան դրությունը, քաղաքացիական չափահասությունը և այլն/:

Դրա համար պետք է ջանքեր գործադրել նվազագույն տարիքային սահմանը խելամտորեն որոշելու համար, որը կարող է նաև կիրառվել միջազգային մասշտաբով:

Պետք է նշել, որ տարիքային սահմանները կախված կլինեն և ուղիղ կախման մեջ կդրվեն յուրաքանչյուր իրավական համակարգի դրությունից՝ հաշվի առնելով անդամ պետությունների տնտեսական, սոցիալական, մշակութային և իրավական համակարգերը: Դրա համար «անչափահաս» հասկացությունը տարիքային լայն շրջանակ է ընդգրկում՝ 7-ից մինչև 18 տարեկան կամ ավելի մեծ: Այդպիսի տարբերությունը անխուսափելի է՝ նկատի ունենալով ազգային նվազագույն չափորոշիչ կանոնների նշանակությունը:

Օրենքում ամրագրված նվազագույն տարիքային սահմանը

պահանջում է ճշգրիտ որոշել հանցանք կատարած անձի տարիքը: Այս հարցը լուծվում է համապատասխան փաստափոթերի հիման վրա /ծննդյան վկայական, անձնագիր և այլն/: Տարիքը որոշվում է անձի ծննդյան օրվա ավարտման պահով, այսինքն՝ օրենքով սահմանված տարիքը համարվում է լրացած նրա ծննդյան օրվա հաջորդ օրը: Անձի ծննդյան օրը հավաստող փաստաթղթերի բացակայության դեպքում տարիքը սահմանվում է դատաբժշկական փորձաքննությամբ: Այս դեպքում սուբյեկտի ծննդյան օր է համարվում փորձագետի կողմից նշված տարվա վերջին օրը, իսկ երբ նշվում է տարիքի նվազագույն և առավելագույն սահմանները, ապա դատաբանը պետք է հիմք ընդունի նվազագույնը:

Եթե չկան համապատասխան պաշտոնական փաստաթղթեր, ուրոնք կարող են հաստատել անչափահաս անձի տարիքը, ապա պետք է նշանակվի դատաբժշկական փորձաքննություն: Քրեական գործով վարույթում գործի համար նշանակություն ունենալու դեպքում տուժողի, կասկածյալի, մեղադրյալի որոշակի տարիքի հասնելը՝ տարիքի մասին փաստաթուղթը, իսկ դրա բացակայության դեպքում՝ կարող են հաստատվել միայն դատաբժշկական եւ դատահոգեբանական բնագավառների փորձագետների եզրակացություններով /ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 108, կետ 4/:

Եթե անձը հասել է քրեական օրենքով սահմանված տարիքի, սակայն մտավոր զարգացման մեջ հետ մնալու հետևանքով ընդունակ չի եղել ամբողջ չափով գիտակցել իր արարքի բնույթն ու նշանակությունը կամ ղեկավարել դա, ապա նա ենթակա չէ քրեական պատասխանատվության /ՀՀ քր. օր-ի հոդված 24, մաս 3/: Նշված հոդվածից հետևում է, որ այդպիսի վիճակը նույնպես համարվում է անմեղսունակություն: Տվյալ դեպքում պատճառը ոչ թե հոգեկան հիվանդությունը կամ այլ հիվանդագին վիճակն է, այլ անչափահասի սոցիալ-հոգեբանական զարգացածության ցածր մակարդակը: Որոշ քրեագետներ այդպիսի վիճակը անվանում են տարիքային անմեղսունակություն¹: Ի տարբերություն անմեղսունակության, որը հետևանք է քրոնիկ հոգեկան հիվանդության, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հո-

¹ Ст'ю Наймов А.В. Российское уголовное право. Общая часть, М., 1997, էջ 187; Назаренко Г.В. Уголовное законодательство России: Учебное пособие, М., 1998, էջ 16:

գեկան այլ հիվանդագին վիճակի, նշված դեպքում խոսքը վերաբերում է անչափահասի թերզարգացածությանը, որն ամբողջությամբ չի գիտակցում իր գործողությունների /անգործության/ փաստական բնույթը և հասարակական վտանգավորությունը կամ թերզարգացածության պատճառով ունակ չէ ամբողջությամբ կառավարել այն, բայց հոգեկան հիվանդ չէ:

Ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի՝ այս պահանջն իր օրենսդրական ամրագրումն է ստացել Նախագծի 417 հոդվածի 2-րդ մասում, համաձայն որի՝ հոգեկան խանգարումների հետ չկապված հոգեկան թերզարգացման մասին վկայող տվյալների առկայության դեպքում պետք է պարզվի նաև, թե արդյոք անչափահասը կարող էր ամբողջությամբ գիտակցել իր գործողությունների /անգործության/ փաստական բնույթը և հանրային վտանգավորությունը կամ ղեկավարել դրանք:

2. Անչափահասի կյանքի ու դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման մակարդակը և նրա անհատականության այլ առանձնահատկությունները:

ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի համեմատությամբ Նախագիծը անչափահասի կյանքի ու դաստիարակության պայմանները պարզելու հետ մեկտեղ նախատեսում է պարզել անչափահասի հոգեկանի զարգացման մակարդակը և նրա անձի այլ առանձնահատկությունները:

Անչափահասի կյանքի ու դաստիարակության պայմանները, հոգեկանի զարգացման մակարդակը և նրա անձի այլ առանձնահատկությունները պարզելը կարևոր դեր են խաղում հանցագործության դրդապատճառները, կատարվածի նկատմամբ անչափահասի առնչության հանգամանքները, հանցագործություն կատարելուն նպաստած հանգամանքները բացահայտելու գործում, օգնում են միջոցներ ձեռնարկելու այլ հանցագործությունները կանխելու նպատակով, լուծելու ծնողներին կամ դաստիարակներին հնարավոր պատասխանատվության ենթարկելու և խափանման միջոցի մասին հարցը: Դատական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նախաքննության մարմինները և դատարանը պատշաճ ուշադրություն չեն դարձնում այդ հանգամանքների պարզաբանմանը: Ըստ այդմ, կարծում ենք, որ անհրաժեշտ է քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել անչափահասի կյանքի

ու պայմանների այն ցանկը, որոնք պահանջվում է պարզել, ինչը կնպաստի նաև օրենքի միատեսակ կիրառմանը:

Այդ կապակցությամբ, մեր կարծիքով, օրենքում պետք է ամրագրել անչափահասի կյանքի ու դաստիարակության պայմանների օրինակելի ցանկը, որը դասվում է անչափահասի կողմից կատարված հանցագործության վերաբերյալ քրեական գործով ապացուցման առարկային: Դրանց շարքին կարելի է դասել նաև տեսության և դատաքննչական պրակտիկայի կողմից մշակված տեղեկությունները:

1) *Անչափահասի ընտանիքի վերաբերյալ.* Ժողովների ազգանունը, անունը, հայրանունը, նրանց կրթությունը, աշխատանքի վայրը, զբաղվածության բնույթն ու կենսակերպը, երեխաների թիվը ընտանիքում, ընտանիքի նյութական վիճակը, տեղեկատվություն այն մասին, թե փաստացի ո՞վ է զբաղվում անչափահասի դաստիարակությամբ, ընտանիքում ձևավորված փոխհարաբերությունները, ժողովների վերաբերմունքը անչափահասի և նրա վերաբերմունքը ժողովների նկատմամբ, տեղեկություններ անչափահասի՝ խնամակալության տակ կամ մանկական հիմնարկում գտնվելու մասին, անչափահասի՝ հսկողությունից դուրս մնալու պատճառները, եթե այդ հանգամանքը հաստատված է:

2) *Անչափահասի ուսման կամ աշխատանքի պայմանների մասին:*

Քրեական գործով վարույթի ընթացքում անչափահասի ուսման և աշխատանքի պայմանները ուսումնասիրելիս անհրաժեշտ է պարզել, թե ինչպիսի դպրոցում է սովորել կասկածյալը կամ մեղադրյալը, որ դասարանում է սովորում անչափահասը, ինչպիսին են նրա առաջադիմությունը, վարքը, ում հետ է ընկերություն անում, ինչ հարաբերություններ ունի ուսուցիչների և աշակերտների հետ, նրա նկատմամբ դաստիարակչական բնույթի միջոցներ կիրառվե՞լ են, թե ոչ, իսկ եթե կիրառվել են, ապա ինչ արարքների համար: Եթե անչափահասն աշխատում է, ապա պետք է պարզել, թե որտեղ և որպես ինչ է աշխատում, դու՞ր է գալիս նրան իր աշխատանքը, թե՞ ոչ, որքա՞ն է աշխատավարձը, բարձրացնո՞ւմ է արդյոք որակավորումը, համատեղո՞ւմ է աշխատանքը ուսման հետ, արդյոք համապատասխանո՞ւմ են նրա աշխատանքային պայմանները աշխատանքային օրենսդրության պահանջներին: Եթե անչափահասը թո-

ղել է ուսումը, հարկավոր է պարզել դրա պատճառը, երբ է դա տեղի ունեցել, ինչպես են արձագանքել ուսումը թողնելու փաստին ուսումնական հաստատության վարչակազմը և ծնողները, ինչ միջոցներ են ձեռնարկվել նրան ուսումնական հաստատություն վերադարձնելու համար:

3) *Անչափահասի շրջապատի, կապերի, հետաքրքրությունների շրջանակի մասին.* ինչպե՞ս է անչափահասն անցկացնում ազատ ժամանակը, մասնակցո՞ւմ է մարզական և այլ խմբակների, թե՞ ոչ, ովքե՞ր են նրա ընկերները և այլն:

Բացի այդ, անչափահասի անձի մասին լիարժեք պատկերացում կազմելու համար կարևոր է իմանալ՝ օգտագործո՞ւմ է նա արդյոք ոգելից խմիչքներ, թմրանյութեր և հոգեմետ նյութեր, ո՞ր տարիքից սկսած և ինչ քանակությամբ, ո՞վ է նրան սովորեցրել, որտեղի՞ց է դրան հայթայթել, նման վիճակում իրավախախտումներ կատարե՞լ է, թե ոչ:

4) *Անչափահասի վարքը նախկինում:*

Մանրամասն պետք է ուսումնասիրվի նաև անչափահասի վարքագիծը մինչև հանցագործություն կատարելը: Այս դեպքում էական նշանակություն ունեն հետևյալ հանգամանքները. արդյո՞ք անչափահասը նախկինում կատարել է հանցանք կամ այլ իրավախախտումներ, եթե այո, ապա ե՞րբ և ինչպիսի՞, ի՞նչ հանցագործությունների համար և ի՞նչ տարիքում, քանի՞ անգամ և ի՞նչ պատժի է դատապարտվել, որտե՞ղ է կրել պատիժը, ինչպիսի՞ վարք է դրսևորել պատիժը կրելու ընթացքում, երբևէ հետաձգվե՞լ է նրա նկատմամբ դատավճռի ի կատար ածումը, գտնվե՞լ է արդյոք հատուկ դաստիարակչական հիմնարկներում, ե՞րբ և ինչի՞ համար, որքա՞ն ժամանակ, ուստիկանություն բերման ենթարկվե՞լ է, այնտեղ հաշվառվա՞ծ է, ենթարկվե՞լ է վարչական պատասխանատվության:

5) *Անչափահասի վարքը հանցագործություն կատարելուց հետո* (զղջո՞ւմ է, թե՞ ոչ, շարունակո՞ւմ է նախկին կենսակերպը, թե՞ ձգտում է քավել մեղքը աշխատանքի, ուսման նկատմամբ օրինակելի վերաբերմունքով և լավ վարքով):

Բոլոր այս հանգամանքները հարկավոր է հետազոտել բազմակողմանիորեն, միմյանց հետ կապերի և ընդհանրության մեջ, այլապես հնարավոր է սխալ հետևություններ անել:

Անչափահասի կյանքի ու դաստիարակության պայմանները

պարզվում են հենց անչափահասին, վկաներին (ծնողներին, ուսուցիչներին, հարևաններին, ընկերներին և այլ անձանց) հարցաքննելու միջոցով, ինչպես նաև քննչական այլ գործողություններ իրականացնելով՝ գործին կցելով անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Հոգեկան զարգացման մեջ հետ մնալը, որը կապված է հոգեկան խանգարման հետ, նշանակում է զգալիորեն հետ մնալ տվյալ տարիքի համար նորմալ մտածողական, ճանաչողական գործունեության զարգացման մակարդակից, ունենալ գիտելիքների և պատկերացումների թերի պաշար, հուզականային հատկանիշների թերզարգացում և այլն: Սա կապված է հոգեկան հիվանդության հետ կամ ուղեղի արտացոլման գործունեության խանգարման հետ, այլ միայն հետևանք է անչափահասի մտավոր զարգացման թերհասության (մտածողական, ճանաչողական գործունեության, հուզականային հատկանիշների և այլն): Այսօրինակ թերհասությունը կարող է լինել, օրինակ, երկարատև հիվանդության հետևանք, որը հանգեցրել է իր հասակակիցների համեմատ անչափահասի հոգեկանի զարգացման դանդաղեցման: Այսպիսով, հոգեկանի թերզարգացմամբ անչափահասներին հատուկ են բնավորության գծեր, որոնք բնորոշ են ավելի փոքր տարիքային խմբի անչափահասներին, իսկ նրանց զարգացման դանդաղումը առավելապես ժամանակավոր բնույթ է կրում¹:

Անչափահասի՝ հոգեկան խանգարման հետ չկապված հոգեկան զարգացման հետամնացության առկայության կամ բացակայության հարցը որոշելու համար պետք է նշանակվի դատական համալիր հոգեբանական-հոգեբուժական փորձաքննություն: Քանի որ տվյալ դեպքում անհրաժեշտ են հատուկ գիտելիքներ հոգեբանության և հոգեբուժության ոլորտներում, ապա անհրաժեշտ է նշանակել համալիր հոգեբանական-հոգեբուժական փորձաքննություն:

Անչափահասի նկատմամբ քրեական գործը քննելիս կարող է հարց առաջանալ. արդյո՞ք հոգեկան թերզարգացության յուրաքանչյուր դեպք ներառվում է ապացուցման առարկայի մեջ:

¹ Նախագծում որպես առանձին հանգամանք նշվում է հետևյալը՝ հոգեկան խանգարումների հետ չկապված հոգեկան թերզարգացման մասին վկայող բավարար տվյալների դեպքում պետք է պարզվի նաև, թե արդյո՞ք անչափահասը կարող էր ամբողջությամբ գիտակցել իր գործողությունների (անգործության) փաստական բնույթը և հանրային վտանգավորությունը կամ ղեկավարել դրանք:

Առաջին անգամ Նախագիծը անչափահասի կատարած հանցագործության վերաբերյալ քրեական գործով որպես ապացուցման ենթակա հանգամանք նախատեսում է **«անչափահասի անձի այլ առանձնահատկությունները»**: Սակայն Նախագծում, այդուհանդերձ, չի որոշակիացվում, թե ինչն է դրան վերաբերում: Այնուամենայնիվ, անչափահասի անձը բնութագրող հանգամանքների օգնությամբ բացահայտվում է նրա մեղավորությունը կամ անմեղությունը, ի հայտ են գալիս հանցագործությունը կատարելուն նպաստած պատճառներն ու պայմանները, հանցավոր արարքի դրդապատճառը, հստակեցվում է հարցաքննությունը վարելու ճիշտ մարտավարությունը և անչափահաս կասկածյալի (մեղադրյալի) հնարավոր զնահատականը և այլն: Դրանք օգնում են ճիշտ որոշելու պատասխանատվության բնույթն ու աստիճանը, անհրաժեշտ խափանման միջոցը և ընտրելու քրեական պատժի համապատասխան տեսակը: Կարծում ենք, որ անչափահասի անձի ուսումնասիրման խորությունը որոշելիս անհրաժեշտ է պարզել նրա առավել կայուն անձնային հատկանիշները: Ընդ որում, անչափահասի անձի զանազան բնութագրերի մեջ քննիչին և դատարանին պետք է հետաքրքրեն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են անչափահասի վերաբերյալ գործը ճիշտ լուծելու համար՝ ինչպես ճշմարտությունը բացահայտելու, այնպես էլ դատավարության առավելագույնս դաստիարակչական և կանխարգելիչ արդյունքի տեսանկյունից:

Մեր կարծիքով, անչափահասի անձնային այլ առանձնահատկությունների մեջ պետք է առանձնացնել նրա բնավորության և խառնվածքի յուրահատկությունները, պահանջմունքները, հետաքրքրությունները, ընդունակությունները, մտավոր, կամային և հուզական զարգացման աստիճանը, նյարդային համակարգի զարգացածությունը, տրամաբանությունը, վճռականությունը, նպատակասլացությունը, սկզբունքայնությունը, ինքնուրույնությունը, համառությունը և այլն:

Անչափահասների վերաբերյալ յուրաքանչյուր գործով պետք է բացահայտվեն և համապատասխան փաստաթղթում արտացոլվեն անչափահասի ֆիզիկական առողջության վիճակը, զգայական և ֆիզիկական կամ հոգեկան արատների առկայությունը, ինչը թույլ կտա ընտրելու առավել նպատակահարմար խափանման միջոց, ինչպես նաև որոշ դեպքերում պատասխանելու այն հարցին, թե կա-

րո՞ղ էր արդյոք անչափահասը կատարել այս կամ այն հանցագործությունը:

Անչափահասի անձի ուսումնասիրությունը պետք է իրականացնել՝ անդրադառնալով ինչպես հանցագործությանը նախորդող, այնպես էլ դրանից հետո ընկած ժամանակաշրջանին, քանի որ անչափահասի անձնային հատկությունները կարող են փոփոխվել արտաքին և ներքին գործոնների ազդեցությամբ:

Կարծում ենք, որ անչափահասի անձի ուսումնասիրությունը պետք է իրականացնել այն ծավալով, որը կբավարարի անչափահասին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ արդարացնելու հարցերը լուծելու, նրա նկատմամբ քրեական պատիժ սահմանելու կամ դրանից ազատելու կամ էլ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու համար:

3. Անչափահասի վրա տարիքով ավելի մեծ անձանց ազդեցությունը: Անհրաժեշտ է նշել, որ այս հանգամանքը նախատեսված չէ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում: Անչափահասների վերաբերյալ գործերով որպես ապացուցման ենթակա պարտադիր հանգամանք այն նախատեսված է Նախագծով, իսկ ՀՀ քրեական օրենսգրքում սահմանված է, որ այդ հանգամանքը հաշվի է առնվում դատարանի կողմից պատիժ նշանակելիս: Կարծում ենք, որ ապացուցման առարկայի մեջ այնպիսի հանգամանքի ներառումը, ինչպիսին է «անչափահասի վրա տարիքով ավելի մեծ անձանց ազդեցությունը», ավելի արդարացված է, քանի որ այս դեպքում պարզվում է անչափահասի վրա ինչպես չափահաս անձանց, այնպես էլ այլ անչափահասների (որոնք տարիքով ավելի մեծ են) ազդեցությունը: Ընդ որում՝ այդպիսի ազդեցությունը կարող է դուրս մնալ հանցակցության քրեաիրավական հասկացության շրջանակներից, սակայն մեծ դեր խաղալ անչափահասների շրջանում հակասարակական հայացքների առաջացման և սովորությունների ձևավորման ժամանակ (օրինակ՝ ծնողների ոչ ճիշտ դաստիարակությունը, դպրոցական ընկերների, գործընկերների բացասական ազդեցությունը կամ անբարոյական պահվածքը և այլն): Վերոնշյալ հանգամանքները կարող են նաև անչափահասին ուղղակիորեն կամ անուղղակիորեն դրդել հանցագործության, և քննչական գործողություններ իրականացնելիս, ինչպես նաև քրեաիրավական բնույթի (հատկապես ազատագրկման հետ առնչություն չունեցող) միջոցներ կիրառելիս դրանք պետք է հաշվի առնել:

FEATURES OF CIRCUMSTANCES TO BE PROVED IN TRIAL OF THE CRIME COMMITTED BY THE MINORS

Proceeding from the features of separate types of criminal trial, the Criminal Procedure Code determines features of proofs for separate cases. Such features are also determined for trial of cases on the crimes committed by the minors. Provision of proof feature in such proceeding is the main guarantee for multilateral and full research of the crime circumstances and for educational influence of the proceeding as well. The circumstances that are subject to proof in cases of the minors provided by the Criminal Procedure Code are discussed upon in this article.

Нелли Агабян
Аспирант Кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ

ОСОБЕННОСТИ ПОДЛЕЖАЩИХ К ДОКАЗАТЕЛЬСТВУ ОБСТОЯТЕЛЬСТВ В РАЗБИРАТЕЛЬСТВЕ ПРЕСТУПЛЕНИЯ, СОВЕРШЕННОГО НЕСОВЕРШЕННОЛЕТНИМ

Исходя из особенностей отдельных видов уголовного разбирательства, уголовно-процессуальным кодексом определены особенности доказательств по отдельным делам. Такие особенности также установлены для разбирательства дел по преступлениям, совершенных несовершеннолетними. Предоставление особенности доказательства в таком производстве является главной гарантией для многостороннего и полного исследования обстоятельств преступления, а также для воспитательного значения производства. В рамках настоящей статьи рассмотрены предусмотренные уголовно-процессуальным кодексом обстоятельства, являющиеся предметом доказательства по делам несовершеннолетних.

Բանալի բառեր՝ անչափահաս, վարույթ, ապացույցներ, առարկա, հանգամանքներ:

Keywords: minor, proceeding, proofs, subject, circumstances.

Ключевые слова: несовершеннолетний, производство, доказательства, предмет, обстоятельства.

ՓԱՆՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Տեղական ինտեգրումը կարելի է դիտարկել որպես փախստականների հիմնախնդրի լուծման առավել արդյունավետ միջոցը հատկապես այն դեպքերում, երբ փախստականի կարգավիճակ ունեցող անձը երկար ժամանակահատվածով չարունակում է գտնվել ընդունող երկրի սահմաններում:

Տեղական ինտեգրումը՝ որպես փախստականների հիմնախնդրի լուծման երկարաժամկետ լուծումներից մեկը, ներառում է երեք տարր: Նախաառաջ, այն իրավական պրոցես է, ըստ որի փախստականները մի շարք իրավունքներ են ձեռք բերում ապաստանի երկրում: Այնուհետև, այն հյուրընկալող երկրի կենսամակարդակին և բարեկեցությանը համապատասխան միջոցների ապահովմանն ուղղված տնտեսական պրոցես է: Եվ, ի վերջո, այն սոցիալական և մշակութային պրոցես է, որը հնարավորություն է տալիս փախստականներին իրենց աջակցությունը ցուցաբերել ընդունող երկրի սոցիալական կյանքին և ապրել առանց վախի ու խտրականության²: Ավելի նեղ իմաստով տեղական ինտեգրումը դիտարկելու դեպքում այն ընկալվում է որպես մի գործընթաց, որը երկարաժամկետ լուծում կարող է դառնալ միայն այն դեպքում, երբ փախստականը ձեռք է բերում ընդունող երկրի քաղաքացիությունը³:

Տեղական ինտեգրումը երկուստեք բավականին մեծ հնարավորություններ է ստեղծում և՛ փախստականների, և՛ ընդունող պետության բնակչության համար: Փախստականները նոր աշխատուժ

¹ ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի հայցորդ, դասախոս, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Քոչարյան:

² Stéu Crisp, J. 'The local integration and local settlement of refugees: a conceptual and historical analysis', *New Issues in Refugee Research*, Working Paper No.102, 2004, (UNHCR: Geneva), p. 4

³ Նույն տեղում, p. 5

են հանդիսանում իրենց համապատասխան հմտություններով, որոնք կարող են կիրառվել ընդունող պետության կողմից իր սակավ բնակեցված տարածքները զարգացնելու համար: Փախստականների առկայությունը կարող է ընդունող երկրի համար երկարաժամկետ օտարերկրյա ներդրումներ ունենալու պատճառ հանդիսանալ: Այն կարող է ընդունող կառավարություններին միջազգային հեղինակություն բերել՝ ամրապնդելով նրանց՝ միջազգային հանրության պատասխանատու անդամ լինելու կարգավիճակը: Այսինքն՝ քաղաքական նկատառումները, կապված փախստականների ընդունման հետ, ևս չպետք է անտեսվեն:

Այնուամենայնիվ, փախստականների առկայությունը մեծացնում է մրցակցությունը տարածքի և աշխատանքի համար, ինչպես նաև ավելացնում է ճնշումը ճանապարհների, դպրոցների, հիվանդանոցների և այլ ենթակառուցվածքների վրա, այդ պատճառով էլ երբեմն փախստականների ինտեգրումը հանդիպում է կառավարությունների կողմից ոչ այնքան բարեդրացիական վերաբերմունքին: Բացի այդ շատ դժվար է փախստականների հիմնախնդրի լուծման համար կիրառել տեղական ինտեգրումը, եթե փախստականը անդադար իր մտքում պահում է տուն վերադառնալու փափագը:

Չնայած տեղական ինտեգրումը ոչ միանշանակ է ընդունվում և ողջունվում կառավարությունների կողմից, այնուամենայնիվ, փաստացիորեն, իշխանությունները, հաճախ համապատասխան ծրագրեր ընդունելով, *de facto* ճանաչում են փախստականների ինտեգրումը: Օրինակ, Շվեդիան, որը համարվում է ներգաղթյալների ինտեգրման և նրանց նկատմամբ կիրառվող քաղաքականության առավել դրական և արդյունավետ փորձ ունեցող պետությունը¹: Վերջինիս ինտեգրացիոն քաղաքականության հիմնական շեշտադրումն արված է պետության բարեկեցության վրա, որի պայմաններում ինտեգրման հիմնական նպատակը ներգաղթյալների և

¹ St'սMigrant Integration Policy Index MIPEX 2007 կողմից այս թեմայով կայացրած վերջին հետազոտությունների արդյունքում Շվեդիան է գլխավորում վարկանիշային աղյուսակը՝ ետևում թողնելով բազմամշակութային համարվող Կանադան, տես նաև՝ <http://www.mipex.eu>

տեղի բնակչության կենսամակարդակների հավասարեցումն է: Դանիայի ներկայիս ինտեգրացիոն քաղաքականության հիմքն է հանդիսանում 1999թ. ընդունված «Ինտեգրացիայի մասին» օրենքը, որը երկիր ժամանած բոլոր անձանց նկատմամբ ինտեգրացիոն միջոցառումների իրականացման երաշխիքն է: Բոլոր ներգաղթյալների նկատմամբ երկիր ժամանելու պահից տարածվում է 3-ամյա ինտեգրացիոն ծրագիրն անցնելու պարտականությունը: Ինտեգրացիոն միջոցառումների (կացարանի ապահովումը, նոր միջավայրին հարմարվելու ծրագրի մշակումն ու իրագործումը, սոցիալական նպաստների և փոխհատուցումների վճարումը) իրականացման պարտականությունը դրված է Դանիայի տեղական ինքնակառավարման մարմինների վրա: Ընդ որում, օրենքի լրացված տարբերակը, որն ընդունվել է 2003թ., ինտեգրացիոն ծրագրի դրույթները տարածում է նաև ապաստան հայցողների վրա՝ ի տարբերություն 1999թ. օրենքի տարբերակի¹:

Ընդունող երկրի բնակչության և փախստականների լեզվական, էթնիկ և մշակութային նմանությունների աստիճանը հատկապես կարևոր գործոն է տեղական ինտեգրման պրոցեսը նախաձեռնելու համար: Չնայած նրան, որ մշակութային նմանությունները, անկասկած, ավելի արդյունավետ են դարձնում ինտեգրման պրոցեսը, այնուամենայնիվ փախստականի ազգային պատկանելիությունը չպետք է կանխատեսի նրա նկատմամբ կիրառվող երկարաժամկետ լուծումը: Այնուամենայնիվ, հասարակության մեջ փախստականների ինտեգրման արդյունավետ գործընթացը նախ և առաջ և անմիջականորեն կապված է երկրում առկա իրավական միջավայրի հետ:

Իր անկախությունից ի վեր Հայաստանի Հանրապետությունը միջազգային և եվրոպական կառույցներին միանալու և միջազգային հանրության լիիրավ անդամ դառնալու համար վավերացրեց մի շարք միջազգային պայմանագրեր և ստանձնեց պարտավորություն՝ կյանքի կոչելու դրանցով սահմանված դրույթները՝ ապահովելու

¹ St'u Policies on integration and diversity in some OSCE participating States. An exploratory study prepared by the Migration Policy Group, MPG & OSCE, Brussels, 2006, 90 p.

լով ազգային օրենսդրությամբ նախատեսված պատշաճ մեխանիզմները:

Այսպես, Հայաստանի Հանրապետությունը 1993թ.-ի հոկտեմբերի 4-ին միացավ 1951թ.-ի Փախստականների կարգավիճակի մասին Կոնվենցիային, իսկ հուլիսի 6-ին միացավ 1967թ.-ի Արձանագրությանը և այդ ակտերի դրույթներն այնուհետև արտացոլեց իր ազգային օրենսդրության մեջ: Հետագայում, ի լրումն իր կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների, 1999թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Փախստականների մասին» օրենքը (լրացումներով և փոփոխություններով 2001, 2002, 2004թթ.): Չնայած այն հանգամանքին, որ սույն օրենքի ընդունումը բավականին առաջադիմական քայլ էր, այնուամենայնիվ առկա էին մի շարք բացեր, որոնք հետագա մշակման ու կատարելագործման կարիք ունեին: Այդ բացերը էական խոչընդոտներ էին ստեղծում ապաստան հայցողների և փախստականների իրավունքների պաշտպանության համար:

ՀՀ օրենսդրության մեջ առկա բացերը վերլուծության ենթարկելու, ներպետական օրենսդրությունը լրացնելու և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար 2006թ. ՄԱԿ-ի Փախստականների գծով Գերագույն Հանձնակատարի գրասենյակի և այդ ժամանակ ՀՀ Տարածքային կառավարման նախարարության կազմում գործող դեռևս ՀՀ Միգրացիոն գործակալության (2009թ. նոյեմբերի 18-ի ՀՀ Նախագահի ՆՀ-286-Ն հրամանագրով ՀՀ Տարածքային կառավարման նախարարության համակարգում ստեղծվեց ՀՀ Միգրացիոն պետական ծառայությունը, այսուհետև ՀՀ ՏԿՆ ՄՊԾ) աշխատակիցների հետ համատեղ աշխատանքային խումբ ստեղծվեց, որը լիազորված էր մշակելու «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ նոր օրենքի նախագիծ: Վերջինս պետք է արտացոլեր Կոնվենցիայից բխող փախստականների պաշտպանության հիմնական սկզբունքները:

Ըստ այդմ էլ 2008թ. նոյեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Փախստականների և ապաստանի մասին» նոր օրենք, որն ուժի մեջ մտավ 2009թ. հունվարի 24-ին:

2010թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ կառավարությունը հավանութ-

յան արժանացրեց ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը, որը սահմանեց միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության 14 ուղղությունները, դրանցից յուրաքանչյուրի նպատակը, ինչպես նաև այդ նպատակներին հասնելու հիմնական մեխանիզմները և ուղիները: Հայեցակարգը կյանքի կոչելուն ուղղված 2011թ. նոյեմբերի 10-ին ՀՀ կառավարության կողմից թիվ 1593-Ն որոշմամբ հաստատվեց «ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիրը»: Ծրագրով նախատեսվեցին 147 կոնկրետ գործողություններ/միջոցառումներ, որոնք միտված են ապահովելու միգրացիոն 14 ուղղություններով հայեցակարգում սահմանված նպատակների իրագործումը:

Գործողությունների ծրագրով նախատեսված հիմնախնդիրներից մեկն էլ Հայաստանի Հանրապետությունում ապաստան տրամադրելու համակարգի կատարելագործումը և օտարերկրյա քաղաքացիներին փախստական ճանաչելու դեպքում նրանց՝ ՀՀ հասարակությանն արդյունավետ ինտեգրման ապահովումն է¹:

Հայաստանի Հանրապետությունում այսօր կարելի է տարբերակել փախստականների երկու խումբ՝ էթնիկ հայեր, որոնք հիմնականում եկել են Ադրբեյջանից 1988-1992թթ. և Սիրիայից 2012թ., այսպես կոչված *prima facie* փախստականներ և փախստականներ այլ երկրներից, մասնավորապես Իրաքից, Իրանից, Մալիից, Գվինեայից, Կոտ Դ'Իվուարից և այլ երկրներից²:

ՄԱԿ ՓԳՀ-ի հայաստանյան գրասենյակի տեղեկատվության համաձայն՝ 2013թ. հունվար ամսվա դրությամբ ՀՀ-ում գտնվում է

¹ Տե՛ս ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի թիվ 1593-Ն որոշման հավելված 1՝ «ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիր», հիմնախնդիր 9:

² Տե՛ս ՀՀ-ում ապաստան ստանալու խնդրանքով 2012թ.-ին ծառայությանն են դիմել 565 օտարերկրյա քաղաքացիներ, որոնցից՝ 494-ը Սիրիայի, իսկ մյուսները հիմնականում Իրաքի, Իրանի, Կոտ դ'Իվուարի, Գվինեայի, Թուրքիայի քաղաքացիներ են: Ավելի մանրամասն տես՝ <http://smsmta.am> (դիտվել է 10.08.2013թ.)

շուրջ 19 հզ. փախստական, որից 16 հազարից ավելին էթնիկ հայեր են, ինչպես նաև 3հզ.-ից ավելին՝ ապաստան հայցողներ, որոնցից շուրջ 2800-ը ևս էթնիկ հայեր են¹:

Հայաստանի Հանրապետությունում փախստականների իրավունքների պաշտպանությունն ու ապաստանի տրամադրման գործընթացի իրավական կարգավորումն իրականացվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով և գերատեսչական ակտերով: ՀՀ օրենքների շարքում հատկապես անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ ակտերը՝ «Փախստականների և ապաստանի մասին» 2008թ. ՀՀ օրենքը, «Քաղաքացիության մասին» 1995թ. ՀՀ օրենքը, «Օտարերկրացիների մասին» 2007թ. ՀՀ օրենքը, «Քաղաքական ապաստանի մասին» 2001թ. ՀՀ օրենքը, «Պետական սահմանի մասին» 2001թ. ՀՀ օրենքը, «Սահմանապահ զորքերի մասին» 2001թ. ՀՀ օրենքը և այլն: Ինչ վերաբերում է գերատեսչական ակտերին, ապա այս ոլորտի կարգավորմանն ուղղված ընդունվել են շուրջ մեկ տասնյակից ավելի կառավարության որոշումներ և ՀՀ Նախագահի հրամանագրեր:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ նոր օրենքի ընդունումը պայմանավորված էր փախստականների և ապաստան տրամադրելու հետ կապված խնդիրների լուծման նկատմամբ համակողմանի մոտեցման դրսևորման և նախկին օրենքի կարգավորման շրջանակներից դուրս մնացած հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությամբ: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ գործող օրենքը բաղկացած է 65 հոդվածից՝ ի տարբերություն նախկին օրենքի, որն ուներ ընդամենը 25 հոդված:

Փախստականների և ապաստան հայցողների ինտեգրման խնդիրների շարքում առանձնահատուկ շեշտադրում են ստանում սոցիալ-տնտեսական հիմնահարցերը: Կատարված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ ՀՀ-ում փախստականները և ապաստան հայցողները հիմնականում հանդիպում են այնպիսի խնդիրներին, որոնց բախվում է յուրաքանչյուր ՀՀ քաղաքացի,

¹Տե՛ս <http://www.unhcr.org/cgi-bin/texis/vtx/page?page=49e48d126&submit=GO> (դիտվել է 10.08.2013թ.)

մասնավորապես աշխատանքի, սոցիալական ապահովության և այլ բնագավառներում: Առկա սոցիալ-տնտեսական խնդիրները կրում են ընդհանուր բնույթ և չեն վերաբերում բացառապես փախստականների և ապաստան հայցողների իրավունքներին, այդ իսկ պատճառով պահանջում են ընդհանրական և համակարգված լուծում: Այդ առումով պետք է փաստել հնարավորությունների և հասանելիության հավասարության գաղափարի կարևորությունը այս ոլորտում, որը պետք է որպես հիմք ծառայի ինտեգրացիոն գործընթացների բարեհաջող իրականացման և առկա թերությունների ու բացերի վեր հանման ու չեզոքացման ճանապարհին:

Զբաղվածության շուկա մուտք գործելը առավել կարևոր ոլորտներից մեկն է ներգաղթյալների ինտեգրումն ապահովելու համար: Իրապես, զբաղվածության շուկա մտնելը օգնում է ներգաղթյալներին ծեռք բերել անկախություն և լինել ինքնաբավ: ՀՀ աշխատանքային օրենսդրությունը ապահովում է աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, ծագումից, քաղաքացիությունից, սոցիալական դրությունից, դավանանքից, ամուսնական վիճակից և ընտանեկան դրությունից, տարիքից, համոզմունքներից կամ տեսակետներից, կուսակցություններին, արհեստակցական միություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելուց, աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից: Այս դրույթը սահմանված է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածում (կետ 1, (3)): ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 15-ի համաձայն՝ «Աշխատանքային իրավունքներ ունենալու եւ պարտականություններ կրելու ունակությունը (աշխատանքային իրավունակություն) հավասարապես ճանաչվում է Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների համար: Օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստանի Հանրապետությունում ունեն այնպիսի աշխատանքային իրավունակություն, ինչպիսին Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ»¹: Որպես գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելու արգելքի երաշ-

¹ Տե՛ս ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 3 (կետ 1, (3))

խիք հանդիսանում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 114-ում սահմանված դրույթը, որի համաձայն սեռը, ռասան, ազգությունը, լեզուն, ծագումը, քաղաքացիությունը, սոցիալական դրությունը, դավանանքը, ամուսնական վիճակը եւ ընտանեկան դրությունը, համոզմունքները կամ տեսակետները, կուսակցություններին կամ հասարակական կազմակերպություններին անդամակցելը չի կարող հանդիսանալ պատճառ պայմանագիրը լուծելու համար:

Փախստականների աշխատանքային իրավունքներն իրենց ամրագրումն են գտել «Փախստականների կարգավիճակի մասին» 1951թ. Կոնվենցիայի հոդվածներ 17-19, որոնք սահմանում են մասնավորապես վարձով աշխատանք ունենալու, ձեռնարկատիրական գործունեությամբ և ազատ մասնագիտություններով զբաղվելու իրավունքները: Սույն կոնվենցիայի հոդված 17, կետ 3-ը սահմանում է, որ «...պետությունները բարեհաճ են վերաբերում աշխատավարձով վարձատրվող աշխատանքի կապակցությամբ բոլոր փախստականների իրավունքները քաղաքացիների իրավունքներին հավասարեցնելուն...»¹: Ըստ այդմ էլ «Փախստականների և ապաստանի մասին» 2008թ. ՀՀ օրենքը սահմանում է ապաստան հայցողների և ապաստան ստացած փախստականների վարձատրվող աշխատանքի իրավունքը, համաձայն որի՝ վերջիններս կարող են աշխատանք փնտրել և աշխատել նույն պայմաններով, ինչ ՀՀ քաղաքացիները: Բացի այդ՝ սույն իրավունքն ամրագրվում է երկրի հիմնական օրենքով՝ մասնավորապես հոդված 32-ով ամրագրելով յուրաքանչյուր աշխատողի արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի և անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմաններ ունենալու իրավունք²: ՀՀ Սահմանադրությունը 33.1 հոդվածով սահմանում է նաև յուրաքանչյուրի՝ օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք³:

¹ Տե՛ս Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. Կոնվենցիա, հոդվածներ 17-19

² Տե՛ս ՀՀ Սահմանադրություն հոդված 32

³ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն հոդված 33.1

Ինչպես նշվեց, «Փախստականների և ապաստանի մասին» 2008թ. ՀՀ օրենքը աշխատանքային իրավունքների առումով սահմանում է ապաստան հայցողների և ապաստան ստացած փախստականների վարձատրվող աշխատանքի իրավունքը, ՀՀ-ում ապաստան ստացած փախստականների՝ ձեռնարկատիրությամբ զբաղվելու իրավունքը¹: Օրենքի շարադրանքից, փաստորեն, բացակայում է Կոնվենցիայով սահմանված ազատ մասնագիտություններով ազատորեն զբաղվելու իրավունքը, որը, այնուամենայնիվ, կարող է իրացվել ձեռնարկատիրությամբ զբաղվելու իրավունքի իրականացման շրջանակներում և այս առումով օրենքի՝ Կոնվենցիոն չափանիշներին չհամապատասխանելու խնդիր չենք տեսնում:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 22-րդը սահմանում է, որ գործատուն իրավունք ունի պայմանագիր կնքել օտարերկրացիների հետ օտարերկրյա աշխատողների աշխատելու համար լիազոր մարմնի կողմից ստացված հատուկ թույլտվության հիման վրա: Սակայն հոդված 23-րդը, խոսելով աշխատանքի թույլտվություն ստանալու բացառությունների մասին, ժա) կետով նախատեսում է փախստականի կարգավիճակ ունեցողների, Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց համար կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով²:

Այդ առումով որոշակի խնդրի առջև ենք կանգնում՝ կապված ապաստան հայցող անձանց կողմից իրենց աշխատանքի իրավունքի իրացման հետ: Մասնավորապես, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը վարձատրվող աշխատանքի իրավունքով օժտում է և՛ ապաստան հայցող բոլոր bona fide անձանց, և՛ արդեն իսկ փախստականի կարգավիճակ ստացած անձանց, սակայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 23-րդի ժա) կետով խոսվում է միայն փախստականի կարգավիճակ ունե-

¹ Տե՛ս «Փախստականների և ապաստանի մասին» 2008թ. ՀՀ օրենք, հոդվածներ 21-22

² Տե՛ս «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենք, հոդվածներ 22, 23 (ժա))

ցող անձանց և քաղաքական ապաստան ստացած անձանց մասին, ինչը, գտնում ենք, սահմանափակում է ապաստան հայցող անձանց աշխատանքի իրավունքը, որն, ընդ որում, բխում է նաև ՀՀ սահմանադրության վերոնշյալ դրույթներից: Ըստ այդմ էլ գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություն կատարել սույն խնդրի լուծումն ապահովելու նպատակով: Իհարկե, պրակտիկայում այսօր բոլոր օտարերկրացիները ՀՀ-ում աշխատում են առանց լիազոր մարմնի թույլտվության, քանի որ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի հոդված 22-րդի 3-րդ մասի համաձայն՝ կառավարության որոշման հիման վրա է սահմանվելու այն մարմինը, որը կտրամադրի աշխատանքի թույլտվությունը, ինչպես նաև կառավարության որոշմամբ են սահմանվելու աշխատանքի ընդունվելու համար անհրաժեշտ փաստաթղթերը: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ օտարերկրացին իրավունք ունի ՀՀ-ում իրականացնելու աշխատանքային գործունեություն՝ գործատուի կողմից իրեն տրված աշխատանքի թույլտվությունը փոխանցելու դեպքում: Սակայն մինչ այսօր ՀՀ կառավարության կողմից չի ընդունվել որոշում աշխատանքի թույլտվություն տվող լիազոր մարմնի և թույլտվություն տալու պայմանների վերաբերյալ: Նման պայմաններում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ եթե իրավական ակտում նախատեսված նորմի պահանջի կատարում կարող է միայն իրականացվել այդ իրավական ակտով նախատեսված իրավական այլ ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է իրավական այլ ակտի ընդունմամբ, ապա իրավական ակտն այդ նորմի մասով գործում է համապատասխան իրավական այլ ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Փաստորեն ստացվում է այնպես, որ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքն այդ մասով կսկսի գործել միայն ՀՀ կառավարության համապատասխան որոշման առկայության պայմաններում, և մինչ այդ օտարերկրացիները, այդ թվում և նշված օրենքի տեքստից բացակայող ապաստան հայցողները կաշխատեն առանց որևէ թույլտվության:

Փախստականների և ապաստան հայցողների սոցիալ-տնտե-

սական իրավունքների շարքում հատկապես մեծ տեղ է զբաղեցնում բնակարան (կացարան) ունենալու իրավունքը: Բնակարան (կացարան) ունենալու իրավունքը ամրագրված է ՀՀ կողմից վավերացված մի շարք միջազգային փաստաթղթերում, մասնավորապես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (25-րդ հոդ. 1-ին կետ), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (11-րդ հոդ. 1-ին կետ), Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա (21-րդ հոդ.) և այլն:

Չնայած այն հանգամանքին, որ կացարանի իրավունքն իր ամրագրումը չի գտել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայում (այսուհետ՝ ՄԻԵԿ), սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանն անդրադարձել է նաև բնակարանի իրավունքին առնչվող հարցերին, օրինակ՝ ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածով (անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք) և Կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով (սեփականության իրավունք)¹: Դատարանը մի շարք գործերով անդրադարձել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի և Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի խախտումներին²:

ՀՀ սահմանադրության 34-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար:

«Փախստականների և ապաստանի մասին » ՀՀ օրենքի հոդված 24-րդն ամրագրում է *կացարանի իրավունքը*: Սույն հոդվածի համաձայն՝ օրենքի հիման վրա ապաստանի դիմում ներկայաց-

¹ Տե՛ս Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 1952թ. 1-ին Արձանագրություն (հոդված 1)

² Տե՛ս *Altun v. Turkey*, no. 24561/94, 1 June 2004, *Smirnov v. Russia*, no. 71362/01, 7 June 2007, ECHR 2007-VI, *Gladysheva v. Russia*, no. 7097/10, 6 December 2011

րած ապաստան հայցողներին և նրանց ընտանիքի անդամներին լիազոր մարմինը տեղավորում է ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որտեղ նրանց տրամադրվում են սնունդ (օրական երեք անգամ), սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հագուստ և կոշիկ¹:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 14-ի համաձայն՝ ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնը հատուկ հաստատություն է, որտեղ լիազոր մարմինը տեղավորում է ապաստան հայցողներին մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:

«Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» 19 նոյեմբերի 2009 թվականի N 1440-Ն Կառավարության որոշմամբ սահմանվում է ժամանակավոր տեղավորման կենտրոններում ապաստան հայցողներին տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը: Համաձայն այդ կարգի՝ լիազորված մարմինները ապաստան հայցող անձանց տեղավորում են ժամանակավոր տեղավորման կենտրոններում մինչև նրանց կարգավիճակի վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը:

Բացի այդ՝ ՀՀ ՏԿՆ ՄՊԾ-ն կարող է թույլ տալ ապաստանի մերժում ստացած փախստականներին շարունակել բնակվել ժամանակավոր տեղավորման կենտրոնում, մինչև նրանք օրենքով սահմանված կարգով 6 ամսվա ընթացքում կամավոր կամ ոչ կամավոր կմեկնեն Հայաստանից, կամ եթե մեկնումը հնարավոր չէ, չվերադարձելիության սկզբունքի հիման վրա, առանց լրացուցիչ ընթացակարգի, ապաստան և կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ կստանան ²:

Բնակարանային ապահովվածության հիմնախնդիրն այսօր շարունակում է հրատապ լինել հատկապես 1988-1992թթ. Ադրբե-

¹ Տե՛ս «Փախստականների և ապաստանի մասին» 2008թ. ՀՀ օրենք, հոդված 24, կետ 1

² Տե՛ս «Փախստականների և ապաստանի մասին» 2008թ. ՀՀ օրենք, հոդված 58, կետ 2:

ջանից բռնագաղթած փախստականների համար¹ : ՀՀ կառավարության 2010թ. դեկտեմբերի 30-ի N51 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի 14 ուղղություններից մեկն էլ 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթված փախստականների՝ հասարակության մեջ վերջիններիս ինտեգրմանն ուղղված միջոցառումների իրականացումն է, մասնավորապես ՀՀ-ում իրականացվող զբաղվածության, առողջապահական, կրթական և սոցիալ-տնտեսական այլ ծրագրերում 1988-1992 թթ. Ադրբեջանից բռնագաղթված անձանց մի շարք ծրագրերում որպես առաջնահերթ շահառու ճանաչելու հարցի քննարկումը (պետական պատվերի շրջանակներում օգնության և բժշկական սպասարկման, ԽՍՀՄ խնայբանկում ունեցած ավանդների փոխհատուցման, բնակարանային շինարարության կոոպերատիվներում ներդրած գումարների փոխհատուցման, և փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և այլն)²:

ՀՀ ՄԴԾ 2012թ. տարեկան հաշվետվությունից պարզ է դառնում, որ դեռևս 1172 1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած 1172 առավել կարիքավոր ընտանիքներ, որոնցից 857 ընտանիք Երևան քաղաքում և 315 ընտանիք Հայաստանի տարբեր մարզերում, համարվում են ՀՀ կառավարության կողմից 2004թ. մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշմամբ հաստատված բնակապահովության ա-

¹ Ադրբեջանից բռնագաղթած փախստականների բնակարանային ապահովվածության վերաբերյալ ընդունվել են «1988-1992թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների մասին» 2000թ. և «1988-1992թթ. Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված փախստականների համար կառուցված բնակարանները սեփականության իրավունքով փախստականներին հատկացնելու մասին» 2002թ. ՀՀ օրենքները:

² Տե՛ս ՀՀ կառավարության 2011թ. նոյեմբերի 10-ի թիվ 1593-Ն որոշման հավելված 1՝ «ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագիր», հիմնախնդիր 10:

ռաջնահերթ ծրագրի առաջնահերթ շահառուներ¹: ՀՀ ՄՊԾ-ն այդ հանգամանքը հիմնավորում է ՀՀ պետական բյուջեով անցած չորս տարիների ընթացքում այդ ծրագրի ֆինանսավորման բացակայությամբ²: Չնայած, 2008 թվականից սկսած, յուրաքանչյուր տարի ՀՀ ՄՊԾ-ի կողմից ՀՀ կառավարություն է ներկայացվել 4 միլիարդ դրամի բյուջետային հայտ, սակայն հայտը չի բավարարվել, և ՀՀ-ում գտնվող փախստականներին բնակարանով ապահովելու խնդրին կրկին լուծում չի տրվել, ինչպես նախորդ 4 տարիների ընթացքում³:

Փաստորեն բացակայում է փախստականների բնակարանային հիմնախնդիրների ապահովմանն ուղղված պետական ֆինանսավորումը (բացառությամբ ապաստան հայցողների և նրանց ընտանիքի անդամների համար տրամադրվող ժամանակավոր տեղավորման կենտրոնների): Ինտեգրացիայի և ներդրումների պետական քաղաքականության բացակայությունը կարող է ստիպել փախստականներին լքել երկիրը, որը բնական է՝ բացասաբար կանդիդատառա պետության միջազգային վարկանիշի վրա: Բնակարանային ծրագրեր իրականացնելիս պետք է հաշվի առնել և՛ պետության սոցիալ-տնտեսական վիճակը, և՛ փախստականների անձնական, խիստ արդարացված նախասիրությունները՝ մասնավորապես կապված նրանց տեղակայմանը հատկապես այն վայրերում, որոնք ավելի դյուրին կդարձնեն փախստականի կողմից իր կրթության, աշխատանքի, բժշկական օգնության իրավունքի իրականացումը կամ թույլ կտան փախստականին հնարավորինս մոտ լինել իր ընտանիքի անդամներին:

Փախստականներին բնակարաններով ապահովելու դժվարին խնդրի հիմնական բեռն իրենց վրա են վերցնում միջազգային կազմակերպությունները, մասնավորապես՝ ՄԱԿ ՓԳՀ-ն: Վերջինս կացարան է տրամադրում փախստականների առավել կարիքավոր և

¹ Տե՛ս «1988-1992թթ. Ադրբեջանից բռնագաղթած անձանց բնակարանային ապահովության առաջնահերթ ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2004թ. մայիսի 20-ի թիվ 747-Ն որոշում

² Տե՛ս ՀՀ Միգրացիոն պետական ծառայության 2012թ. տարեկան հաշվետվություն

³ Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի 2012թ. տարեկան զեկույց

խոցելի խմբին, այնուամենայնիվ, կապված բավարար չափի ֆինանսների բացակայության հետ, միայն աննշան քանակությամբ փախստականներ են կարողանում օգտվել կացարանի ապահովման ծրագրերից¹: Հայաստանում փախստականների մեծ մասը դեռևս կացարանային խնդիրներ ունեն: Աղբբեջանից եկած մի շարք փախստականներ դեռևս շարունակում են ապրել կենսաապահովման բավականին ցածր մակարդակում²:

Փախստականների ինտեգրման կարևորագույն երաշխիքներից մեկն է հանդիսանում նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը: ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով»:

Բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և իրականացման օրենսդրական հիմքերն ամրագրված են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում, որի 4-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը յուրաքանչյուրին երաշխավորվում է՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից: Նույն օրենքի 15-րդ հոդվածն ամրագրում է օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալու իրավունքները: Ըստ որի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք իրավունք ունեն ստանալ բժշկական օգնություն եւ սպասարկում Հայաստանի Հանրապետության օրենսդրության,

¹ Տե՛ս ՀՀ Միգրացիոն պետական ծառայության 2012թ. տարեկան հաշվետվություն

² Տե՛ս Հայաստանում փախստականների պաշտպանության կարողությունների հզորացում: Ազգային շահակիցների խորհրդափախսանակություններ: Խորհրդաժողովի զեկույց, նոյեմբեր 7-8, 2008, <http://www.aravot.am/2012/06/22/300329/>

ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն: Ավելին, յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի հոդված 23-րդն ամրագրում է ՀՀ տարածքում ապաստան հայցողների, ապաստան ստացած փախստականների և ապաստան չստացած փախստականների՝ պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու՝ ՀՀ քաղաքացիներին հավասար իրավունքը, եթե նրանք բավարարում են տվյալ ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Ըստ այդմ էլ, փաստորեն, ապաստան հայցողները և փախստականները անվճար բուժսպասարկման իրավունք ունեն նույն պայմաններով, ինչ ՀՀ քաղաքացիները: Այնուամենայնիվ, հաշվի առնելով սույն կատեգորիայի անձանց առավել խոցելի և նյութապես ոչ ապահովված լինելու հանգամանքը, գտնում ենք, որ ավելի նպատակահարմար կլիներ իրավաբանորեն ամրագրել փախստականների և ապաստան հայցողների ու նրանց ընտանիքի անդամներին անվճար բժշկական օգնություն տրամադրելու հնարավորությունը: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2004թ. «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին» N318-Ն որոշումը չի սահմանում ապաստան հայցողներին և փախստականներին պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով խմբերի ցանկում: Օրենսդրորեն ամրագրված չէ նաև ապաստան հայցողների և փախստականների՝ արտահիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն ստանալու հնարավորությունը:

ՀՀ-ում առկա են նաև խնդիրներ փախստականին տրվող կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի ձանաչման և կիրառման բնագավառում:

Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայի 27-րդ և 28-րդ հոդվածների համաձայն՝ կոնվենցիային մասնակից պետությունը պարտավոր է ինքնության վկայական տալ իր տարած-

քում գտնվող ցանկացած փախստականի, որը չունի վավեր ճամփորդական փաստաթուղթ: Այն տրվում է նաև ընդունող պետության տարածքից դուրս ճամփորդելու համար¹:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ ճամփորդական փաստաթուղթը ՀՀ-ում փախստականի անձը, օրինական հիմքերով ՀՀ տարածքում գտնվելը հաստատող փաստաթուղթ է, որը նախատեսված է նաև ՀՀ սահմաններից դուրս գալու համար: Համաձայն սույն օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ կետի և ՀՀ կառավարության 2009թ. «Փախստականին տրվող կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի նկարագիրը և փաստաթուղթը տալու կարգը հաստատելու մասին» դեկտեմբերի 3-ի թիվ 1417-Ն որոշման՝ ՀՀ-ում ապաստան ստացած փախստականներին կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ տալու իրավասությունը վերապահված է ՀՀ կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը: Կառավարության սույն որոշման համաձայն՝ ճամփորդական փաստաթուղթը համարվում է փախստականի անձը հաստատող փաստաթուղթ, որի բովանդակությունը կազմող բոլոր կետերը տպագրվում են հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով: Սակայն ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տեղեկատվության համաձայն՝ նշված փաստաթղթում անձի տվյալները (ազգանուն, անուն, երկիր, ծննդավայր, սեռ) գրված են միայն անգլերեն լեզվով, ինչը խնդիրներ է առաջացնում փախստականների համար ՀՀ պետական մարմիններին փաստաթուղթը ներկայացնելիս, ինչպես նաև ոչ բոլոր դեսպանատների կողմից է ճանաչվում, որի հետևանքով կոնվենցիոն ճամփորդական փաստաթղթի միջոցով երկրից մեկնող անձինք հաճախ ունենում են նաև խնդիրներ սահմանը հատելիս²:

Փաստորեն, ՀՀ-ում փախստականներին տրվող ճամփորդական փաստաթուղթը չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Իհարկե, իրավական տեսանկյունից այլ ձևի կոնվենցիոն փաստաթղթի տրամադրումը օտարերկրացուն հնարավոր է, սա-

¹ Տե՛ս Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիա, հոդվածներ 27 և 28:

² Տե՛ս 2012թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույց, Երևան 2013, էջ 128

կայն ոչ ճիշտ, քանի որ այն կարող է չհիմնավորված բարդությունների առաջ կանգնեցնել փախստականներին իրենց իրավունքների իրականացման ճանապարհին: Բացի այդ, Հայաստանի Հանրապետության համար դա կարող է առաջացնել ոչ ցանկալի բարդություններ և փոխադարձ արտոնություններից օգտվելու հնարավորությունների սահմանափակումներ, քանի որ ՀՀ-ն պարտավոր է ընդունել Կոնվենցիայով սահմանված ճամփորդական փաստաթղթի ձևը (ինչպես մասնակից պետություններից յուրաքանչյուրը), իսկ մեկ այլ մասնակից պետություն պարտավոր չէ ընդունել ազգային չափանիշներով տրված փաստաթուղթը:

Երբեմն փախստականների մոտ տեղեկատվության պակասի պատճառով ոչ ճիշտ պատկերացումներ են լինում ճամփորդական փաստաթղթի իրական նշանակության վերաբերյալ: Բանն այն է, որ վերջինս միայն իրավունք է տալիս երկրից դուրս գալու, այլ ոչ մեկ այլ երկիր առանց վիզա ուղևորվելու, այսինքն՝ սույն փաստաթուղթը չի փոխարինում վիզային: 2001թ. ՀՀ-ն ստորագրել է Փախստականների համար վիզաների վերացման 1959թ. եվրոպական համաձայնագիրը, որը, սակայն, չի վավերացրել, և այն Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ չի մտել¹: Ըստ այդ համաձայնագրի՝ այն ստորագրած երկրներում մշտապես բնակվող փախստականները, ովքեր ունեն կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ, կարող են առանց վիզայի ճամփորդել այդ երկրներ մինչև 3 ամիս ժամկետով՝ առանց այդ երկրներում աշխատելու իրավունք ունենալու: Կարելի է կարծել, որ Հայաստանի Հանրապետության կողմից այդ համաձայնագրի վավերացումը կարող է հանգեցնել նյութապես ոչ բարեկեցիկ վիճակում գտնվող փախստականների հսկայածավալ մեկնումներին և միգրացիոն համաձայնագրով սահմանված գտնվելու առավելագույն ժամկետների խախտումներին, որն էլ իր հերթին կարող է ավելի մանրակրկիտ ու ժամանակատար ստուգումների անցկացման ձևով լրացուցիչ բարդություններ առաջացնել նաև ՀՀ քաղաքացիների համար:

Ի վերջո, կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս մեզ հանգել այն եզրակացության, որ ՀՀ օրենսդրությունն այսօր փախստականներին տրամադրում է հիմնական սոցիալական և տնտե-

¹ St'u <http://conventions.coe.int/Treaty/Commun/ChercheSig.asp?NT=031&CM=&DF=&CL=ENG> (ղիտվել է 27 նոյեմբերի, 2013թ.)

սական իրավունքները, սակայն դրա հետ միասին ոչ միշտ է ապահովվում հասարակության մեջ նրանց ինտեգրումը: Ակնհայտ է, որ ապաստանի տրամադրման օրենսդրական հիմքը, օրենքի առջև հավասարությունը և խտրականության արգելքի վերաբերյալ դրույթները ոչ միշտ են վերացնում պրակտիկայում փախստականի ճանապարհին առկա խոչընդոտները, ինչպես նաև չեն երաշխավորում, որ ամրագրված իրավունքները արդյունավետ կիրականացվեն: Փախստականների հիմնախնդրի լուծմանն ուղղված մինչ այժմ կիրառված ոչ բոլոր միջոցներն են տվել իրենց ցանկալի արդյունքը, և ոչ բոլոր դեպքերում է դրանց ծավալը բավարար: Կիրառվող ժամանակակից փորձերը՝ ինտեգրացնել փախստականներին հասարակության մեջ, երբեմն համաձայնեցված չեն, ամբողջ երկրի մասշտաբով չեն իրականացվում և կաշկանդված են իմպլեմենտացնող նորմերի կամ ենթաօրենսդրական ակտերի բացակայությամբ: Պաշտոնատար անձանց գիտելիքը ևս երբեմն բավարար չէ, հատկապես նրանց, ովքեր իրենց գործունեության ընթացքում չեն առնչվում փախստականների խնդիրների հետ: Փախստականները երբեմն ընկալվում են որպես «սովորական» օտարերկրացիներ:

Այս առումով Հայաստանի Հանրապետությունում նպատակահարմար ենք համարում «Ինտեգրացիայի մասին օրենքի» ընդունումը, որը գոյություն ունի մի շարք երկրներում¹: Անհրաժեշտ ենք համարում նաև ստեղծել հատուկ լիազորված մարմին, որը կհամակարգի և միասնական կդարձնի ոլորտի կառավարումը, պատասխանատու կլինի փախստականների ինտեգրման գործընթացի իրականացման համար, կշարունակի զբաղվել կարգավիճակ ստանալուց հետո նրանց իրավունքների պաշտպանությամբ, քանի որ ընդհանուր առմամբ ՀՀ տարածքում փախստականների կարգավիճակի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ վերջիններս կարգավիճակ ստանալուց հետո հայտնվում են անօգնական վիճակում, միակ ճանապարհը դառնում է քաղաքացիության ձեռք բերումը, որը ևս այնքան էլ հուսադրող չէ՝ հաշվի առնելով երկրում առկա սոցիալ-տնտեսական խնդիրները:

¹ օրինակ, Ղանիայում 1999թ. ընդունվել է Ինտեգրացիոն ակտ, որը նաև համարվում է աշխարհում ընդունված առաջին ինտեգրացիոն ակտը (Այդ մասին տես՝ Factsheet Denmark-February 2006, Integration in Denmark, Ministry of Foreign Affairs of Denmark, February 2006, p.2)

LEGAL ISSUES OF THE INTEGRATION OF REFUGEES IN THE REPUBLIC OF ARMENIA

The article briefly examines legal issues of the integration of refugees mainly focuses on the integration rights and practices with regard to the Armenian refugees by revealing gaps and challenges which appears in the course of their realization. The author concludes that the legislation of the RA provides refugees with the basic social and economic rights but their full integration into society is less prominent. The author proposes the adoption of the Law on Integration and establishment special authorized body that will coordinate and unify the governance of the sphere.

Кнарик Варданян
*Преподаватель, соискатель кафедры
европейского и международного права ЕГУ*

ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ИНТЕГРАЦИИ БЕЖЕНЦЕВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

В статье кратко рассматриваются правовые вопросы интеграции беженцев. В особенности рассматриваются права беженцев, практика их интеграции в Республике Армения с учетом проблем и пробелов в законодательстве, появляющихся в процессе его применения. Автор заключает, что законодательство РА обеспечивает беженцам основные социальные и экономические права, но их полная интеграция в общество является менее заметной. Также автор предлагает принять закон об интеграции беженцев и создать специальный уполномоченный орган, который будет координировать и унифицировать государственную политику в данной сфере.

Բանալի բառեր: ինտեգրում, փախստական, ապաստան հայցող, երկարաժամկետ լուծում, ինտեգրացիոն քաղաքականություն, Հայաստանի Հանրապետություն, <<Փախստականների և ապաստանի մասին>> օրենք
Keywords: integration, refugee, asylum seeker, durable solution, integration policy, Republic of Armenia, Law on Refugees and Asylum seekers

Ключевые слова: интеграция, беженец, лицо, ищущее убежища, долгосрочное решение, интеграционная политика, Республика Армения, Закон “О беженцах и просителей убежища”

**ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՄԱԿԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԱՅՈՒՆ ԴԱՏԱԿԱՆ ԱՏՅԱՆՆԵՐՈՒՄ**

Միջազգային իրավունքում իրավունքի իրացումը ներառում է իրավական նորմերի կիրառմանը, պահպանմանը և պաշտպանությանը վերաբերող սուբյեկտների գործողությունները²: Իրավունքի իրացումն ապահովող միջոցները ընդգրկում են այդ իրավունքների դատական պաշտպանությունը և միջազգային հանրության այլ գործողությունները (ձանաչումը, ռազմական և այլ բնույթի օժանդակությունը)՝ ուղղված իրավունքի իրացման արդյունավետությանը:

Ինքնորոշման իրավունքի իրացման տեսանկյունից առաջին խնդիրը, որին պետք է անդրադառնալ, վերջինիս դատական պաշտպանության հիմնահարցն է: Վերջինիս բովանդակությունն առավել մանրամասն շարադրող պայմանագիրը թերևս Քաղաքացիական և քաղական իրավունքների միջազգային դաշնագիրն է, որն ունի առանձին իրավունքների «դատական» պաշտպանության մեխանիզմ իր վերահսկող մարմնի՝ Մարդու իրավունքների կոմիտեի միջոցով:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) առաջին կամընտրական արձանագրությունը նախատեսում է անհատների՝ իրենց խախտված իրավունքների կապակցությամբ Մարդու իրավունքների կոմիտեին դիմելու հնարավորություն: Ուստի, երբ «Իվան Կիտոկն ընդդեմ Շվեդիայի» գործում Ի. Կիտոկը վիճարկեց իր ազգության ավանդական զբաղմունք համարվող եղնիկաբուծությունը սահանափակող իրավական ակտի օրինականությունը՝ պնդելով, որ այն ՔՔԻՄԴ 1-ի հոդվածի ոտնահարում է, Կոմիտեն պարզապես նշեց, որ անհատը չի

¹ ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Քոչարյան:

² Черниченко С.В. Теория международного права, Том 1: Современные теоретические проблемы. Издательство «НИМП», М. 1999. С. 56:

կարող հավակնել ինքնորոշման իրավունքի ունահարման, քանի որ վերջինս ժողովուրդների իրավունք է¹:

Այս մոտեցումը Մարդու իրավունքների կոմիտեն վերահաստատեց նաև «Դիերգաարդտը և այլք ընդդեմ Նամիբիայի» գործում, որում Նամիբիայի Բաստեր ցեղի մի շարք ներկայացուցիչներ միջնորդություն էին ներկայացրել Մարդու իրավունքների կոմիտե՝ հայցելով իրենց տնտեսական չարաշահումը որակել որպես ՔՔԻՄԴ 1-ին հոդվածի խախտում, քանի որ իրենք՝ որպես ժողովուրդ, զրկվել էին սեփական բնական ռեսուրսները տնօրինելու հնարավորությունից:

Մարդու իրավունքների կոմիտեն վերահաստատեց իր դիրքորոշումը՝ նշելով, որ որևիցե խմբի ժողովուրդ լինելու կամ չլինելու հիմնահարցը դուրս է Առաջին արձանագրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակից²:

Մարդու իրավունքների պաշտպանությամբ լիազորված տարածաշրջանային դատական աստյաններից միայն Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովը հստակ հնարավորություն ունի քննելու ինքնորոշման իրավունքին վերաբերող հարցերը, քանի որ Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան³ պարունակում է նաև ժողովուրդների ինքնորոշման իրավունքը ամրագրող հոդված, որն իր բովանդակությամբ գրեթե նույնական է ՔՔԻՄԴ 1-ին հոդվածին: Սակայն Աֆրիկյան հանձնաժողովը ինքնորոշման հիմնահարցին անդրադարձել է խիստ սահմանափակ դիտակետից:

Այսպես, «Սոցիալական և տնտեսական իրավունքների ակցիա կենտրոնը և Տնտեսական և սոցիալական իրավունքների կենտրոնն ընդդեմ Նիգերիայի» գործով մի շարք հասարակական կազմակերպություններ դիմեցին Աֆրիկյան հանձնաժողովին՝ պնդելով, որ Նիգերիայի ռազմական կառավարությունը, ներգրավված լինելով նավթաարդյունաբերության մեջ և թունավորելով Օգո-

¹ Ivan Kitok v. Sweden, Human Rights Committee Communication No. 197/1985 (CCPR/C/33/D/197/1985), final views of 27 July 1988, § 6.3:

² Diergaardt et al. v. Namibia, Human Rights Committee Communication No. 760/1997 (CCPR/C/69/D/760/1997), final views of 25 July 2000, § 10.3:

³ African Charter on Human Rights and Peoples' Rights, OAU Doc. CAB/LEG/67/3 rev. 5, International Legal Materials, Vol. 21, P. 58. 27 June 1981. Article 20:

նի ժողովուրդի բնակության վայրերը, խախտել է վերջիններիս ինքնորոշման իրավունքը: Հանձնաժողովը գտավ, որ Նիգերիայի կառավարությունը խախտել էր իր տարածքում բնակվող ժողովուրդների բարեկեցությունն ապահովելու պոզիտիվ պարտավորությունը¹:

Աֆրիկյան հանձնաժողովն իր պրակտիկայում անդրադարձել է նաև արտաքին ինքնորոշման իրավունքին: Այսպես, 1992 թ. Ջաիրի (Կոնգոյի ժողովրդավարական Հանրապետության) քաղաքացի ուն Ջերարդ Սոկեն, որը «Կատանգյան ժողովրդական կոնգրես» կազմակերպության առաջնորդն էր, դիմեց Աֆրիկյան հանձնաժողովին՝ պահանջելով «Կատանգյան ժողովրդական կոնգրեսը» ձանաչել որպես ազատագրական շարժում, որն իրավասու է պայքարելու Կատանգայի ինքնորոշման համար, ինչպես նաև ձանաչել Կատանգայի անկախ պետականությունը:

Քննարկելով տվյալ հիմնահարցը՝ Աֆրիկյան հանձնաժողովը «Կատանգյան ժողովրդական կոնգրեսն ընդդեմ Ջաիրի» գործով իր հակիրճ վճռում նշեց. «Պայմաններում, երբ բացակայում են ապացույցները Մարդու իրավունքների այնպիսի լայնածավալ խախտումների վերաբերյալ, որոնք կասկածի տակ կոնեին Ջաիրի տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև պայմաններում, երբ բացակայում են ապացույցներն այն մասին, որ Կատանգայի ժողովրդին չի տրվում Աֆրիկյան խարտիայի 13(1) հոդվածով երաշխավորված հնարավորություն մասնակցելու կառավարման գործընթացին, Հանձնաժողովը հակված է այն տեսակետին, որ Կատանգան պարտավոր է իրացնել ինքնորոշման այն ձևը, որը համապատասխանում է Ջաիրի տարածքային ամբողջականությանը»²:

Այսպիսով, Հանձնաժողովը ոչ միայն իրեն վերապահում է այս կամ այն մարդկանց խումբը ժողովուրդ որակելու իրավասություն (թեև առանց սահմանելու այն չափորոշիչները, որով նա առաջնորդվում է), այլ նաև, ի պատասխան ներքին ինքնորոշման իրավունքի, որդեգրել է ապագադուքացման համատեքստից դուրս ան-

¹ The Social and Economic Rights Action Center and the Center for Economic and Social Rights v. Nigeria, African Commission on Human and Peoples' Rights Communication No. 155/96 (2001), §§ 57-58:

² Katangese Peoples' Congress v. Zaire, African Commission on Human and Peoples' Rights, Communication No. 75/92 (1995), § 6:

ջատման իրավունքը ճանաչելու մոտեցում¹: Թեև պրակտիկայում այն դեռևս չի ճանաչել ոչ մի կոնկրետ սուբյեկտի անջատման իրավասությունը, և դժվար է ասել, թե Հանձնաժողովը ունի² արդյոք քաղաքական բավարար ներուժ նման քայլի դիմելու համար:

Ամեն դեպքում, հաշվի առնելով, որ ինքնորոշման իրավունքը ամրագրված է ո՛չ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիայում և ո՛չ էլ Մարդու իրավունքների միջամերիկյան կոնվենցիայում՝ Աֆրիկյան խարտիան միակ միջազգային պայմանագիրն է, որն ընձեռում է ինքնորոշման իրավունքի դատական պաշտպանության հնարավորություն:

Ինքնորոշման իրավունքին վերաբերող հարցերի քննարկման մեկ այլ ամբիոն կարող է համարվել ՄԱԿ Միջազգային դատարանը, որի գործունեությունը, սակայն, էականորեն կաշկանդված է իր իրավասությունների շրջանակով: Դատարանի կանոնադրության համաձայն՝ այն կարող է քննել միայն պետությունների ներկայացրած հայցերը (36-րդ հոդված), ուստի ինքնորոշման համար պայքարող ժողովուրդները բնականաբար զրկված են իրենց շահերը դատարանում պաշտպանելու (*locus standi*)² հնարավորությունից:

Մյուս սահմանափակումը այն է, որ պետության՝ դատարանի պարտադիր իրավասությունը ճանաչած չլինելու պարագայում վերջինս հնարավորություն ունի այդ պետության վերաբերյալ գործեր քննելու միայն համապատասխան պայմանագրում այդ պայմանագրից բխող վեճերը դատարանի իրավասությանը հանձնելու վերաբերյալ դրույթի առկայության պարագայում³: Քանի որ ինքնորոշման վերաբերյալ նորմատիվ իրավական բազան գերազանցապես սովորությային բնույթ ունի, դատարանի առջև ինքնորոշման վերաբերյալ հարցերի բարձրացումն ավելի է դժվարանում:

Մյուս կողմից՝ Միջազգային դատարանը, իր Կանոնադրության համաձայն, իրավասու է ՄԱԿ-ի կանոնադրությամբ լիազորված ցանկացած մարմնի խնդրանքով տալ «խորհրդատվական եզրա-

¹ De Schutter O. *International Human Rights Law: Cases, Materials, Commentary*. Cambridge University Press, Cambridge, New York, 2010. P. 701:

² Brownlie I. *Principles of Public International Law*. Oxford University Press, Oxford, 2008, 7th ed. P. 449-454:

³ Zimmermann A., Tomuschat C., Oellers-Frahm K. *The Statute of the International Court of Justice: Oxford Commentaries on International Law*. Oxford University Press, Oxford, New York, 2006. P. 594-596:

կացություն ցանկացած իրավական հարցի վերաբերյալ» (65-րդ հոդված): Հետևաբար հենց խորհրդատվական եզրակացությունների շրջանակում է, որ Միջազգային դատարանը հիմնականում անդրադարձել է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքին և այլ հարակից հարցերի: Սակայն դա բոլորովին էլ չի նսեմացնում դատարանի ներդրումը ինքնորոշման սկզբունքի հստակեցման գործում, քանի որ խորհրդատվական եզրակացությունները դատարանի վճիռների նման նույնպես ունեն իրավաստեղծ նշանակություն և կարող են ծառայել որպես սովորութային նորմերի հստակեցմանը նպաստող միջազգային իրավունքի երկրորդական աղբյուր¹:

Այսպես՝ Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունները էական դերակատարություն ունեցան ինքնորոշման իրավունքի սահմանների և բովանդակության պարզաբանման գործում: «Պետությունների համար հակառակ Անվտանգության խորհրդի բանաձև 276-ի (1970), Նամիբիայում (Հարավարևմտյան Աֆրիկա) Հարավային Աֆրիկայի շարունակական ներկայության իրավական հետևանքների» վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում դատարանը նշեց, որ Ազգերի լիգայի շրջանակներում ստեղծված Մանդատի համակարգի նպատակը հենց ժողովուրդների շահերի պաշտպանությունն էր², այն է՝ կիրառել միջազգային իրավունքի այն ելակետային կանոնը, որի համաձայն՝ նորմերը պետք է մեկնաբանվեն գործող իրավական համակարգի լույսի ներքո: Արդյունքում դատարանը փաստորեն հաստատեց ինքնորոշման իրավունքի «հետադարձ» ուժը՝ տարածելով այն նաև նախքան 1945 թ. ստեղծված իրավահարաբերությունների վրա³:

Այդ գործում Միջազգային դատարանը նաև որոշակիացրեց Գլխավոր ասամբլեայի հռչակագրերի իրավական նշանակություն-

¹ Shahabuddeen M. Precedent in the World Court. Cambridge University Press, Cambridge / New York / Melbourne, 1996. P. 171: Տե՛ս նաև Тункин Г.И. Основы современного международного права. Юридическая литература, Москва, 1956. С. 13:

² *Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276 (1970), Advisory Opinion, ICJ Reports 16 (1971), P. 29, § 46:*

³ Cassese A. The International Court of Justice and the Right of Peoples to Self-Determination // Fifty Years of the International Court of Justice: Essays in Honour of Sir Robert Jennings. Ed. by Lowe V. & Fitzmaurice M. Cambridge University Press. 1996. P. 354:

նը՝ նշելով, որ վերջիններիս շնորհիվ ինքնորոշման իրավունքի շարունակական զարգացման արդյունքում վերջինս այժմ տարածվում է բոլոր ոչ ինքնակառավարվող տարածքների վրա¹:

Ինքնորոշման իրավունքի բովանդակության հստակեցման հարցում կարևոր դեր խաղաց նաև «Արևմտյան Սահարայի» վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը, որում դատարանն ընդգծեց ինքնորոշման իրավունքի իրացման համար կարևորագույն նշանակություն ունեցող տարրերից մեկը՝ «ժողովրդի ազատորեն արտահայտած կամքը հաշվի առնելու անհրաժեշտությունը»²: Նախքան դա այս հանգամանքը չէր հստակեցվում ո՛չ Գլխավոր ասամբլեայի բանաձևերում, ո՛չ իրավաբանական գրականությունում և ո՛չ էլ պետությունների պրակտիկայում: Իհարկե, ապագադության գործընթացում անցկացվում էին հանրաքվեներ, սակայն հստակեցված չէր, թե դրանք ապագադության գործընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակ էին հետապնդում, թե միջազգային իրավական պարտավորություններ էին: Ղատարանը հստակորեն պարզաբանեց, որ հանրաքվեի կազմակերպումը միջազգային պարտավորություն է՝ նշելով, որ առկա են միայն երկու բացառություններ. հանրաքվե անհրաժեշտ չէ, երբ պետականության կայացման փուլում գտնվող տարածքի բնակչությունը լիովին չի համապատասխանում «ժողովուրդ» բառի իմաստին, կամ՝ եթե հանրաքվեն բացարձակապես անհրաժեշտ չէ՝ առկա հանգամանքների պատճառով³:

Ղատարանը, սակայն, չպարզաբանեց, թե ո՞ր հանգամանքների առկայության հետևանքով է, որ հանրաքվեի անցկացումը կարող է դառնալ բացարձակապես անհրաժեշտ: Կարելի է ենթադրել, որ խոսքը այն դեպքերի մասին է, երբ տարածքի ողջ բնակչության կամքն առավել քան ակնհայտ է (օրինակ՝ երբ նա պայքար է մղում մայր պետության դեմ՝ հանուն իր անկախության): Եթե մեր այս մեկնաբանությունը ճիշտ է, ապա Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ևս մեկ հանրաքվե անցկացնելու միջազգային հանրության կոչերը զուրկ են որևէ իրավական հենքից:

¹ Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (South West Africa) notwithstanding Security Council Resolution 276 (1970). P. 31, § 52:

² Western Sahara, Advisory Opinion, ICJ Reports 12 (1975), P. 33, § 59:

³ Ibid.:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պետք է նշենք, որ Միջազգային դատարանը հսկայական դերակատարություն է ունեցել ապագա-դուլթացման նորմատիվ իրավական կարգավորումը հստակեցնելու գործում: Սակայն, դրա հետ մեկտեղ, վերջինիս վերլուծությունները դուրս չեն եկել ապագադուլթացման շրջանակներից. Միջազգային դատարանը անդրադարձել է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքին միայն այդ համատեքստում¹: Դա պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով: Առաջին հերթին Միջազգային դատարանի առաջ ինքնորոշմանն առնչվող հարցեր բարձրացվել են միայն ապագադուլթացման համատեքստում և նաև այն դեպքերում, երբ դատարանը կարող էր օգտվել իր հնարավորությունից՝ անդրադառնալու ինքնորոշման իրավունքին նաև այլ կողմերից, սակայն դրանից միտումնավոր չի օգտվել: Այսպիսի հնարավորություն դատարանը մասնավորապես ուներ «Միջազգային իրավունքի նորմերին Կոսովոյի անկախության միակողմ հռչակագրի համապատասխանության» վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում, որում դատարանը սակայն նշեց, որ «չկա անհրաժեշտություն անդրադառնալու այդ (արտաքին ինքնորոշման և անջատման իրավունքի վերաբերյալ) հարցերին ներկա գործում: Գլխավոր ասամբլեայի հարցումը վերաբերում է միայն անկախության հռչակագրերի՝ միջազգային իրավունքի նորմերի հետ համապատասխանության հիմնահարցին: Սակայն ինքնորոշման իրավունքի ծավալի և ... անջատման իրավունքի վերաբերյալ քննարկումները վերաբերում են Պետությունից անջատվելու իրավունքին: Ինչպես Դատարանն արդեն նշել է, ... այդ հարցը դուրս է գալիս Գլխավոր ասամբլեայի կողմից դրված հարցի շրջանակներից»²:

Հատկանշական է, որ մի շարք դեպքերում դատարանը ինքն իրեն չի կաշկանդել Գլխավոր ասամբլեայի կողմից արդեն շարադրված հարցի շրջանակներով և հստակեցրել է այն¹, սակայն տվյալ դեպքում, ինչպես արդեն նշվեց, դատարանը դրսևորեց

¹ Cassese A. The International Court of Justice and the Right of Peoples to Self-Determination. P. 352:

² Accordance with International Law of Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo, ICJ General List 141 (2010). § 83:

¹ West Sahara. P. 30, § 52; Aljaghoub M.M. The Advisory Function of the International Court of Justice 1946-2005. Springer, Berlin, 2006. P. 63-67:

ակնհայտ խուսափողական մոտեցում, ինչը կարող էր պայմանավորված լինել նաև քաղաքական բացասական հետևանքներից խուսափելու ցանկությամբ:

Վերոգրյալից բխում է, որ քանի դեռ ինքնորոշման իրավունքը կարող է պետությունների շահերի և տարածքային հավակնությունների սպառնալիք հանդիսանալ, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի խորհրդատվական եզրակացությունները չեն կարող ապագադրությամբ համատեքստից դուրս ինքնորոշման իրավունքի պաշտպանության կամ անգամ այդ իրավունքի բովանդակության պարզաբանման արդյունավետ միջոց ծառայել: Մյուս կողմից, ինչպես արդեն նշվեց, ժողովուրդները զրկված են Միջազգային դատարանի առջև իրենց իրավունքների պաշտպանության իրավասությունից: Հետևաբար, առաջանում է հարց. ինքնորոշման իրավունքը ենթակա՞ է արդյոք դատական պաշտպանության առհասարակ:

Միջազգային դատարանում ինքնորոշման իրավունքի պաշտպանության մեկ այլ տեսական (դեռևս պրակտիկայում երբեք չկիրառված) հնարավորություն կարող է պայմանավորված լինել այդ իրավունքի՝ միջազգային իրավունքի համակարգում ունեցած դերով՝ հաշվի առնելով միջազգային հարաբերություններում այդ նորմի հիմնարար իրավական նշանակությունը¹: Ինչպես արդեն նշվեց, Միջազգային դատարանն «Արևելյան Թիմորի» վերաբերյալ գործում արտահայտեց այն կարծիքը, որ ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթն անվիճելի է²: Քանի որ *erga omnes* պարտավորությունների ապահովման հարցում շահագրգռվածությունը պատկանում է ողջ միջազգային հանրությանը, այլ ոչ միայն տուժած սուբյեկտին, ինքնորոշման իրավունքի ոտնահարման պարագայում նույնպես շահագրգիռ կողմերի ցանկը չի սահմանափակվում տուժող ժողովրդով և ներառում է պետությունների ողջ միջազգային հանրությունը: Ավելին, «Օկուպացված պաղեստինյան տարածքում պատի կառուցման իրավական հետևանքների» վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունում Միջազգային դատարանը նշեց, որ բոլոր պետությունները պարտավոր են չճանաչել այն *de facto* տարածքային իրավիճակը, որը առաջանում է ինքնորոշման

¹ St' u Моджорян Л.А. Основные права и обязанности государств. Юридическая литература, Москва, 1965. С. 156:

² East Timor (Portugal v. Australia), ICJ Reports 90 (1995), P. 102, § 29:

իրավունքի ոստնահարման հետևանքով¹: Սակայն, կարո՞ղ են արդյոք պետությունները, բացի անգործությունից (չձանաչելու միջոցով), պաշտպանել ինքնորոշման իրավունքը նաև ակտիվ գործողությունների դիմելու միջոցով, մասնավորապես՝ բարձրացնել հարցը Միջազգային դատարանում որպես *erga omnes* պարտավորությունների հասցեատեր երրորդ կողմ:

Հետևաբար, կենտրոնական հարցերից մեկը, որին պետք է պատասխանել, այն է, թե արդյո՞ք պարտավորության *erga omnes* բնույթն ընծեռում է այդ պարտավորության խախտման հիմնահարցը դատարանում բարձրացնելու հնարավորություն ցանկացած պետության կողմից:

Այս քննարկումը սկսելուց առաջ նախ անհրաժեշտ է ևս մեկ անգամ ընդգծել այն տարբերությունը, որը գոյություն ունի գործը դատարանի առջև բարձրացնելու պետության իրավասության (*locus standi*) և դատարանի՝ գործը քննելու իրավասության (*forum*) միջև²: Անգամ եթե ենթադրենք, թե պարտավորության *erga omnes* բնույթն ընծեռում է բոլոր պետություններին հարցը դատարանի առջև բարձրացնելու և պաշտպանելու իրավասությամբ, դա դեռևս չի նշանակում, որ Միջազգային դատարանը իրավասու է քննելու կոնկրետ գործը, քանի որ վերջինս արդեն կախված է նաև ենթադրյալ իրավախախտ կողմի Միջազգային դատարանի (կամ որևէ այլ միջազգային դատական ատյանի) իրավասությունն ընդունած լինելու հանգամանքից: Այս մոտեցումն է արտահայտել նաև Միջազգային դատարանն «Արևելյան Թիմորի» գործում՝ օգտագործելով այն որպես հիմնական իրավական հիմք գործը կարճելու համար:

Այդ գործում Պորտուգալիան հայց էր հարուցել Ավստրալիայի դեմ՝ պնդելով, որ վերջինս, իրականացնելով մայրցամաքային ելուստի ռեսուրսների օգտագործման աշխատանքներ, խախտում էր Արևելյան Թիմորի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Մինչդեռ, Ավստրալիայի դիրքորոշման համաձայն, Միջազգային դատարանը չէր կարող քննել գործը, քանի որ Արևելյան Թիմորը օկու-

¹ Legal Consequences of the Construction of a Wall in the Occupied Palestinian Territory, Advisory Opinion, ICJ Reports 136 (2004). P. 200, § 159:

² Seiderman I.D. Hierarchy in International Law: The Human Rights Dimension. Intersentia, Antwerpen, 2001. P. 136-137:

պացնող Ինդոնեզիան, որը տվյալ գործով հանդիսանում էր անօտարելի երրորդ կողմ (կողմ, որի իրավունքներին դատարանի վճիռն անխուսափելիորեն կանդրադառնար¹), ենթակա չէր դատարանի պարտադիր իրավասությանը:

Սակայն, Պորտուգալիայի կարծիքով այս փաստարկը չէր կարող էական իրավական նշանակություն ունենալ՝ հաշվի առնելով ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթը: Չնայած Պորտուգալիայի այս փաստարկին՝ Միջազգային դատարանը եզրակացրեց, որ ինքնորոշման իրավունքի *erga omnes* բնույթը և պետության ենթակայությունը դատարանի իրավասությանը տարբեր երևույթներ են, ուստի դատարանը նշեց. «Անկախ վիճարկվող պարտավորության բովանդակությունից՝ դատարանը չի կարող որոշում կայացնել պետության վարքագծի իրավաչափության վերաբերյալ, եթե վճիռը պետք է պարտադիր ենթադրի մեկ այլ՝ գործին մասնակից չհանդիսացող պետության գործողությունների գնահատում»²:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մեր հարցը կարելի է առավել հստակեցնել հետևյալ կերպ՝ կարո՞ղ է արդյոք անմիջականորեն չտուժած կողմը բարձրացնել իրավախախտման հարցը միջազգային դատական ատյանի առջև, երբ վերջինս ունի հստակ իրավասություն ենթադրյալ իրավախախտի նկատմամբ:

Ինչպես արդեն դատարանն ընդգծեց այն տարբերությունը, որը առկա է *erga omnes* և *vis-à-vis* պարտավորությունների միջև՝ փաստելով, որ բոլոր պետությունները ունեն իրավական շահ առաջինների պաշտպանության հարցում³: Այստեղ առանցքային է այն հարցը, թե արդյո՞ք «իրավական շահ» հասկացությունը ենթադրում է նաև պետությունների ինքնուրույն պատասխան քայլեր ձեռնարկելու և դատարանում հարցը քննարկելու իրավասություն:

Այս հարցը քննարկվել է բազմաթիվ հեղինակների կողմից, սակայն մի շարք մասնագետների կարծիքով՝ *erga omnes* պարտավորությունների վերաբերյալ «Բարսելոնա Թրեքն» գործում դատարանի արտահայտած դատողությունը մեկուսացված իրավական վերլուծություն է, որին իրավաբանական գրականությունում ավելի

¹ Monetary Gold Removed from Rome in 1943 (Preliminary Questions) (Italy v. France, U.K and U.S.A.), ICJ Reports 19 (1954), P. 32:

² East Timor (Portugal v. Australia), ICJ Reports 90 (1995), P. 102, § 29:

³ Barcelona Traction, Light and Power Company, Limited (Belgium v. Spain), Second Phase, ICJ Reports 3 (1970), P. 32, §§ 33-34:

մեծ ուշադրություն հատկացվել է և տրվել է ավելի շատ իմաստ, քան դատարանը մտադիր էր այդ հասկացության մեջ ներդնել¹:

Թեև քննարկվող վճռի կայացմանը հաջորդած մի քանի տարիների ընթացքում նման քննադատությունը կարող էր թվալ տրամաբանական, այսօր այն լիովին գուրկ է իրավաբանական հիմքից այն պարզ պատճառով, որ ինքը՝ Միջազգային դատարանը, արդեն բազմիցս անդրադարձել է *erga omnes* պարտավորություններին նաև այլ դատական գործերում և առանձին դատավորների եզրակացություններում:

Համեմատելով «Բարսելոնա Թրեքշն» վճռի տարբեր հատվածները՝ հասկանալի է դառնում, որ Ղատարանը, փաստորեն, պարզապես քննարկում էր պետության՝ հարցը դատարանի առջև բարձրացնելու իրավասության և դատարանի՝ գործը քննելու իրավասության տարբերությունը (որին անդրադարձանք վերևում) և հանգում այն եզրակացության, որ ինքը իրավասու չէ քննելու գործը այն պարզ պատճառով, որ մարդու իրավունքների ունիվերսալ և տարածաշրջանային պայմանագրերը 1970 թ. դրությամբ Իսպանիայի Թագավորության վրա չէին տարածվում:

Արդյունքում ակնհայտ է դառնում, որ «Բարսելոնա Թրեքշն» գործում Միջազգային դատարանի առաջ քաշած *erga omnes* պարտավորությունների հասկացությունը կարող է և պետք է հիմք հանդիսանա գործը դատարանում քննելու համար: Եթե դա այդպես չլիներ, ապա *erga omnes* պարտավորությունների տարբերակումը *vis-à-vis* պարտավորություններից զրկված կլիներ կիրառական իրավական նշանակությունից, ավելին՝ այն կվերածվեր պարտավորության, որը չի առաջացնում մյուս կողմի իրավունք² կամ առաջացնում է իրավունք, որը, սակայն, հնարավոր չէ պաշտպանել: Հասկանալի է, որ իրավական առումով նման իրավիճակը լիովին

¹ St' u Sinclair I. State Responsibility and the Concept of Crimes of States // International Crimes of States: A Critical Analysis of the ILC's Draft Article 19 of State Responsibility. Ed. by Weiler J.H.H., Cassese A., Spinedi M. Walter de Gruyter & Co., Berlin, 1989. P. 225: St' u նաև Gray C. Judicial Remedies in International Law. Clarendon Press, New York, 1987. P. 214:

² Левин Д. Б. Актуальные проблемы теории международного права. Издательство «Наука», Москва, 1974. С. 70: Tams C.J. Enforcing Obligations Erga Omnes in International Law. Cambridge University Press, Cambridge-New York, 2005. P. 158:

կիմաստագրկվեր:

Դրա հետ մեկտեղ՝ erga omnes պարտավորությունների խախտման հիման վրա դատական վարույթ հարուցելու հնարավորության տեսությունն ունի մեկ թերություն. պրակտիկայում դատարանը երբեք չի քննել գործեր, որոնք վարույթ վերցված կլինեին հենց erga omnes պարտավորության խախտման հիմքով: Դա, սակայն, կարելի է հեշտությամբ բացատրել քաղաքական նկատառումներով. պետությունները պարզապես հակված չեն վատթարացնելու իրենց հարաբերությունները այլ պետությունների հետ, եթե վերջիններիս կողմից հասցված վնասն անմիջական չէ: Հետևաբար, պրակտիկայի բացակայությունը դեռևս հիմք չէ իրավունքի պաշտպանության հնարավորությունը հերքելու համար: Նույն միջազգային Դատարանը, ինչպես արդեն նշվեց, ընդգծել է ոչ միայն erga omnes պարտավորությունների իրականացման հարցում պետությունների շահագրգռվածությունը, այլև՝ գործելու պարտավորությունը (գործողությունների կանխում, իրավիճակի չճանաչման պարտավորություն և այլն):

Zinavor Megryan

*PhD student at the Chair of European and International Law, YSU
Adviser of the Chairman of the Chamber of Advocates of RA*

PROTECTION OF THE RIGHT ON SELF-DETERMINATION IN INTERNATIONAL COURT OF JUSTICE AND OTHER INTERNATIONAL BODIES.

In the article the international legal mechanisms of the right on self-determination is discussed and relevant case law of Human Rights Committee of the ICCPR, African Commission on Human and Peoples' Rights and International Court of Justice are analyzed. Considering erga omnes character of the obligations connected to the self-determination author come to conclusion that in certain conditions state can use ICJ mechanism for the protection of the right on self-determination.

ЗАЩИТА ПРАВА НА САМООПРЕДЕЛЕНИЕ В МЕЖДУНАРОДНОМ СУДЕ ООН И ДРУГИХ МЕЖДУНАРОДНЫХ ИНСТАНЦИЯХ

В статье рассматриваются международно-правовые механизмы защиты права народов на самоопределение. Рассматривается соответствующая деятельность Комитета по правам человека, Африканской комиссии по правам человека и народов. Особое внимание уделяется практике Международного суда ООН и связанная с этим проблема доступности этого механизма. Подчеркивается, что вытекающие из принципа равноправия и самоопределения народов обязательства носят характер *erga omnes*, а это может служить основанием для государств для обращения в Международный суд с целью судебной защиты права на самоопределение.

Բանալի բառեր՝ ինքնորոշման իրավունք, միջազգային դատական պաշտպանություն, Մարդու իրավունքների կոմիտե, ՄԱԿ Միջազգային դատարան, *erga omnes* պարտավորություններ

Key words: right to self-determination, Human Rights Committee, international judicial protection, International Court of Justice, *erga omnes* obligations

Ключевые слова: право на самоопределение, международная судебная защита, Комитет по правам человека, Международный суд ООН, обязательства *erga omnes*

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՁԵԼՈՒ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առումով թերևս առավել մեծ կարևորություն ներկայացնող հարցերից մեկը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը անկախ պետականություն ձանաչելն է: Այս հիմնահարցը քննարկելիս մենք կներկայացնենք մի քանի ելակետային խնդիրներ և կփորձենք դրանց պատասխանել առանձին-առանձին. արդյո՞ք ԼՂՀ-ն բավարարում է պետականության միջազգային-իրավական չափանիշները, արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունը ԼՂՀ-ն արդեն իսկ *de facto* չի ձանաչել, արդյո՞ք ԼՂՀ *de jure* ձանաչումը միջազգային իրավունքի և քաղաքականության տեսանկյունից կարո՞ղ է Հայաստանի Հանրապետության համար դրական քայլ համարվել, թե՞ ոչ:

Խոսելով առաջին հարցի մասին՝ բնականաբար պետք է ցույց տալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մոնտեվիդեոյի կոնվենցիայով ամրագրված պետականության չափանիշներին բավարարելու հանգամանքը:

Թերևս ակնհայտ է, որ ԼՂՀ տարածքի հետ կապված հիմնահարցերը դեռևս ամբողջությամբ և վերջնականորեն լուծված չեն հանրահայտ «յոթ շրջանների» կարգավիճակի անորոշության պատճառով, որի մասին հենց նշված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությունում²: Խնդիրն առավել է բարդանում, քանի որ ԼՂՀ-ն չձանաչված պետություն է: Այսինքն՝ հարց է առաջանում՝ եթե ԼՂՀ-ն ձանաչվի որպես պետություն, ապա ո՞ր տարածքում պետք է ձանաչվի:

¹ ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Կ.Ա. Գևորգյան:

² ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 142. «Մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական տարածքի ամբողջականության վերականգնումը և սահմանների ճշգրտումը հանրային իշխանությունն իրականացվում է այն տարածքում, որը փաստացի գտնվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավագործության ներքո»: Հասանելի է <http://www.president.nkr.am/am/constitution/fullText/#chapter12> էջում:

Որոշակի տարածք ունենալու հատկանիշը, սակայն, չի ենթադրում տարածքային և սահմանային խնդիրների բացակայություն: Պետությունը որպես միջազգային իրավունքի սուբյեկտ կարող է կայացած լինել նույնիսկ, եթե վերջինիս տարածքի մեծ մասի նկատմամբ տիտղոսը շարունակի մնալ վիճելի: Նման մոտեցման դասական օրինակներ են Ալբանիան՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո կամ Իսրայելը՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո¹:

ԼՂՀ-ն հավակնություններ ունի նաև Շահումյանի շրջանի նկատմամբ, որը, սակայն, չի վերահսկվում նրա կողմից: Սակայն 90-ական թթ. սկիզբ առած պետությունների պրակտիկան ցույց է տալիս, որ սեփական տարածքի նկատմամբ արդյունավետ վերահսկողության պահանջը նույնպես բացարձակ չէ: Այսպես, Խորվաթիան և Բոսնիա-Հերցեգովինան ճանաչվեցին Եվրոպական ընկերակցության կողմից որպես անկախ պետություններ և անդամակցեցին նաև Միավորված ազգերի կազմակերպությանը² (որին, ըստ ՄԱԿ-ի կանոնադրության 4-րդ հոդվածի, անդամակցել կարող են միայն պետությունները)՝ չնայած այն բանին, որ երկուսն էլ գտնվում էին քաղաքացիական պատերազմի պայմաններում և չէին վերահսկում սեփական տարածքի զգալի հատվածները, ուր իշխանությունը փաստացի գտնվում էր ոչ կառավարական խմբավորումների ձեռքում: Համանման կերպ, երբ 2008թ. Կոսովոն հռչակեց իր անկախությունը, վերջինիս տարածքի սերբաբնակ որոշ հատվածներ չէին վերահսկվում Կոսովոյի իշխանությունների կողմից, ինչը, սակայն, չխանգարեց, որ նա ճանաչվի միջազգային հանրության կողմից: Ուստի հաշվի առնելով վերոգրյալը՝ պետությունը կայացած միջազգային սուբյեկտ է համարվում նաև անկախ այն բանից, թե այն իրականացնու՞մ է արդյոք արդյունավետ վերահսկողություն այն բոլոր տարածքների նկատմամբ, որոնց հավակնում է, թե՞ ոչ: Հետևաբար, պետության գոյության համար պարզապես բավարար է որոշակի տարածքի վրա կայուն համայնքի գոյությունը, մինչդեռ սահմանները կարող են մնալ վիճելի: Այս

¹ *Sharma S. P.* Territorial Acquisition, Disputes and International Law. Martinus Nijhoff Publishers, The Hague-Boston-London, 1997. P. 56-57.

² *St' u Weller M.* The International Response to the Dissolution of the Socialist Federal Republic of Yugoslavia // *American Journal of International Law*, vol. 86 (1992). P. 569.

առումով Լեռնային Ղարաբաղի Հանարպետությունը միանշանակ բավարարում է Մոնտեվիդեոյի կոնվենցիայի առաջին և երկրորդ չափանիշները:

Սակայն պետականության չորս տարրերի մասին խոսելիս իրավական առումով առավել առանցքային է դառնում ԼՂՀ իշխանությունների ինքնուրույնության և անկախության հիմնահարցը: Փակ սահմանների պայմաններում ԼՂՀ-ի իշխանությունները տնտեսական սերտ կապեր են հաստատել Հայաստանի Հանրապետության հետ, ինչը բազմիցս շահարկվել է Ադրբեյջանի Հանրապետության կողմից¹: Վերջինս մասնավորապես պնդում է, որ ԼՂՀ-ն ինքնուրույն կամքով և հետաքար նաև իրավասություններ ունի օժտված սուբյեկտ չէ, այլ ընդամենը Հայաստանի Հանրապետության *de facto* մարմին, «մարիոնետ պետություն» (“puppet state”): Մինչդեռ անկախ, ինքնուրույն կառավարություն ունենալը միջազգային իրավունքի տեսությունում բազմիցս որակվել է պետականության չափանիշներից առավել առանցքայինը, քանի որ բոլոր մնացած չափանիշներն ածանցյալ են կառավարության չափանիշին²: Փորձենք անդրադառնալ այս հիմնահարցին ընդունված միջազգային փաստաթղթերի և դատական պրակտիկայի տեսանկյունից:

Միջազգային իրավունքի հանձնաժողովի կողմից պետությունների պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում ընդունված «Միջազգային հակաիրավական արարքների համար պետությունների պատասխանատվության մասին հոդվածների նախագիծը»³, որը միաձայն հաստատել է նաև ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան⁴, ամրագրում է այն կանոնը, որ ոչ պետական կազմավորումների գործողությունները կարող են վերագրելի լինել պետության՝ առա-

¹ St’u opինակ Letter dated 22 December 2008 from the Permanent Representative of Azerbaijan to the United Nations addressed to the Secretary-General, U.N. Docs. A/63/662-S/2008/812, (22 December 2008).

² Crawford J. Creation of States in International Law. 2nd ed., Clarendon Press, Oxford 2006. P. 56. Aust A. Handbook of International Law. Cambridge University Press. 2005. P. 136-137.

³ Responsibility of States for Internationally Wrongful Acts // Yearbook of the International Law Commission, vol. 2 (part 2) (2001). P. 32.

⁴ Ответственность государств за международно-противоправные деяния, Резолюция ГА ООН 56/83, Annex, Agenda Item 162, U.N. Doc. A/RES/56/83, 28 января 2002 года.

ջինի նկատմամբ բավարար չափով վերահսկողություն պահպանելու պարագայում. «Անձի կամ անձանց խմբի գործողությունը միջազգային-իրավական առումով կհամարվի պետության գործողություն, եթե անձը կամ անձնանց խումբը փաստացի գործում է պետության հանձնարարականների կամ ուղղորդման և վերահսկողության ներքո»: Այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ պետությունը այս կամ այն գործողության իրականացումը փաստացի չի հանձնարարում կոնկրետ անձանց կամ կառույցների, վերջիններս պետության *de facto* մարմին որակելու համար անհրաժեշտ տարրը պետության կողմից իրականացվող վերահսկողությունն է:

Ուստի հարց է առաջանում, թե ի՞նչ ծավալի պետական վերահսկողություն է անհրաժեշտ չճանաչված պետության գործողությունները պետությանը վերագրելու համար: Ղա, թերևս, ժամանակակից միջազգային իրավունքի առավել վիճահարույց հարցերից մեկն է: Անդրադառնանք դատական պրակտիկային:

Այսպես, «Ռազմական և ռազմականացված գործողությունները Նիկարագուայի տարածքում և Նիկարագուայի դեմ» գործում (1986 թ.) Միջազգային դատարանը կանգնեց այն խնդրի առջև, թե ԱՄՆ-ի կողմից հակահեղափոխական ջոկատների ֆինանսավորումը, մարզումը և զինումը հանգեցրե՞լ են արդյոք այդ ջոկատների գործողությունների վերագրելիությանը ԱՄՆ-ին, թե՞ ոչ (քանի որ հակահեղափոխական ուժերը խախտել էին մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի նորմերը): Սույն գործով Միջազգային դատարանն առաջ քաշեց այսպես կոչված «արդյունավետ վերահսկողության կանոնը»: Միջազգային դատարանը նշեց, որ ֆինանսավորումն ու զինամթերք տրամադրելն ինքնին բավարար չեն ոչ պետական կազմավորման գործողությունները պետության գործառույթ վերագրելու համար. նման վերագրելիության համար անհրաժեշտ է ոչ պետական կազմավորման բոլոր գործողությունների որոշակի արդյունավետ վերահսկողություն, այն է՝ վերջինս պետք է գործի պետության անմիջական հանձնարարությունների ներքո և առանց պետության կողմից տրամադրված աջակցության գործելու ունակ չլինի¹:

Միջազգային դատարանն առիթ ունեցավ վերահաստատելու

¹ *Military and Paramilitary Activities in and Against Nicaragua (Nicaragua v. USA)*, ICJ Reports 14 (1986). P. 103, § 195.

«արդյունավետ վերահսկողության կանոնը» նաև «Ռազմական գործողություններ Կոնգոյի տարածքում» գործով, որտեղ քննարկվում էր Ուգանդային պատասխանատվության ենթարկելու հարցը Կոնգոյի հետ հարաբերություններում ուժ գործադրելու արգելքը խախտելու համար: Այս գործով Միջազգային դատարանը այսպես կոչված Կոնգոյի ազատագրական շարժման գործողությունները չվերագրեց Ուգանդային՝ հակառակ հաստատված այն փաստի, որ Ուգանդան նրան տրամադրում էր ֆինանսական օժանդակություն ու մարզում էր նրա զինվորներին: Այս անգամ դատարանի համար վճռորոշ էր այն փաստը, որ Կոնգոյի ազատագրական շարժումը Ուգանդան չէր ստեղծել և չէր վերահսկում ու չէր էլ կարող վերահսկել շարժմանը տրամադրվող միջոցների օգտագործումը¹:

Նույն վերագրելիության հիմնահարցը բարձրացավ մեկ այլ միջազգային դատական ատյանի՝ Նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի առջև, երբ վերջինս պետք է որոշեր, թե Սերբիայի կողմից ֆինանսավորվող ոչ պետական կազմավորումների գործողությունները Բոսնիա և Հերցեգովինայի տարածքում կարող են վերագրվել Սերբիային, թե՞ ոչ: Հարավսլավիայի տրիբունալը մերժեց Միջազգային դատարանի «արդյունավետ վերահսկողության կանոնը»՝ փոխարենն ընդունելով «ընդհանուր վերահսկողության կանոնը», որի համաձայն՝ ոչ պետական կազմավորումների նկատմամբ ընդհանուր վերահսկողությունը ինքնին բավարար է, և պարտադիր չէ որոշակի կապ պետության և ոչ պետական կազմավորումների յուրաքանչյուր գործողության միջև: Ուստի ֆինանսավորումն ու ռազմամթերք տրամադրելը, ըստ Հարավսլավիայի տրիբունալի, բավարար են ոչ պետական կազմավորումների բոլոր գործողությունները պետությանը վերագրելու համար²:

Հարավսլավիայի տրիբունալը մշակել է նաև վերագրելիության մեկ այլ չափանիշ, որը պայմանականորեն կարելի է անվանել «պետական պաշտոնյաների փոխանակում»: Որպես այս չափանիշի կիրառման վառ օրինակ կարելի է վկայակոչել *Թիհոմիր Բլաշկիչի* գործը. Հարավսլավիայի տրիբունալը պետք է որոշեր այսպես

¹ *Armed Activities on the Territory of the Congo (Democratic Republic of the Congo v. Uganda)*, ICJ Reports 168 (2005). P. 225, § 160:

² *Prosecutor v. Dusko Tadić*, Case No. IT-94-1-A, Judgment of the Appeals Chamber. 15 July 1999. § 137.

կոչված Խորվաթիայի պաշտպանության խորհրդի (ԽՊԽ) գործողությունների վերագրելիությունը Խորվաթիային և այդպես էլ արեց, որովհետև Խորվաթ զինվորական հրամանատարները ծառայում էին նաև Խորվաթիայի պաշտպանության խորհրդում¹:

Ադրբեջանը շահարկում է նաև այս գործով Հարավսլավիայի դատարանի առաջ քաշած վերագրելիության չափանիշը՝ պնդելով, որ ՀՀ երկրորդ և երրորդ նախագահների նախկինում զբաղեցրած պաշտոնական դիրքերը ԼՂՀ պետական կառավարման համակարգում նույնպես վկայում են երկու սուբյեկտների միասնականության մասին²:

Սակայն այս փաստարկն առաջ քաշելով՝ ադրբեջանական կողմն ուշադրություն չի դարձնում էական տարբերություններին: Այսպես, Խորվաթիայի և Խորվաթիայի պաշտպանության խորհրդի միջև զինվորական հրամանատարների փոխանակումը պարբերական բնույթ ուներ: Այսինքն՝ Խորվաթական բանակում ծառայությունից հետո զինվորներն անցնում էին ծառայության ԽՊԽ-ում, իսկ այնուհետև կրկին ծառայության վերադառնում Խորվաթիա, իսկ որոշ դեպքերում՝ ծառայում միաժամանակ և՛ Խորվաթիայում, և՛ ԽՊԽ-ում: Բացի այդ՝ ԽՊԽ-ում ծառայելիս նրանք շարունակում էին հրամաններ ստանալ Խորվաթիայից³: Այս բոլորը վկայում են, որ ԽՊԽ-ում ծառայությունը պարզապես Խորվաթական զինված ուժերում ծառայության բաղկացուցիչ մաս էր: Համագործակցության և փոխներգործության նման աստիճան, սակայն, ՀՀ-ԼՂՀ հարաբերություններում երբեք առկա չի եղել :

Շարունակելով «արդյունավետ» և «ընդհանուր» վերահսկողության կանոնների թեման՝ նշենք, որ մի շարք հեղինակներ փորձ են արել ապացուցելու վերագրելիության այս երկու կանոնների համարժեքությունը⁴, սակայն դրանց տարբերություններն իրականում ակնհայտ են և չեն վիճարկվում մասնագետների ճնշող մասի

¹ *Prosecutor v. Tihomir Blaskić*. Case No. IT-95-14-T. Judgment of the Trial Chamber of 3 March 2000. §§ 100-120.

² Letter dated 22 December 2008 from the Permanent Representative of Azerbaijan to the United Nations addressed to the Secretary-General. Op. cit. §§ 46-48.

³ *Prosecutor v. Tihomir Blaskić*. Op. cit.:

⁴ *Van den hole L.* Towards a Test of the International Character of an Armed Conflict: Nicaragua and Tadic // *Syracuse Journal of International Law and Commerce*, vol. 32 (2005). P. 279.

կողմից: Նման իրավիճակն անթույլատրելի է: Այսպես, օրինակ՝ վերագրելիության այս երկու կանոնների կիրառումը ՀՀ-ԼՂՀ հարաբերությունների նկատմամբ հանգեցնում է լիովին իրարամերձ արդյունքների և եզրահանգումների: Սակայն միջազգային իրավունքում նույնական հարաբերությունները չեն կարող կարգավորվել երկու տարբեր կանոնների միջոցով: Ավելին, վերագրելիության կանոնները վերաբերում են պետությունների պատասխանատվության միջազգային իրավունքին, որն էլ ընդհանուր միջազգային իրավունքի բաղկացուցիչ մաս է, մինչդեռ վերջինիս կանոններն ունիվերսալ են: Ինչպես նշել է Միջազգային դատարանը, «բացառությամբ բացահայտ արտահայտված *lex specialis*-ի առկայության դեպքերի՝ հակաիրավական արարքը պետությանը վերագրելու կանոնները չեն փոխվում պայմանավորված հակաիրավական արարքի բնույթով»¹: Հետևաբար միջազգային իրավունքում նորմատիվ հակասությունների դեմ գործում է ուժեղ կանխավարկած: Ինչպես դիպուկ ձևակերպել է Միջազգային իրավունքի հանձնաժողովը, «*Իրավունքի բովանդակության վերաբերյալ կարծիքների տարբերությունը առաջացնում է երկու տեսակի խնդիր: Առաջին դրանք նվազեցնում են իրավական անվտանգությունը: Իրավունքի սուբյեկտներն այլևս ունակ չեն կանխագուշակելու իրենց վարքագծի նկատմամբ պաշտոնական կառույցների ռեակցիաները*»²:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տարբեր դատական ատյանների կողմից միջազգային իրավունքի միատեսակ մեկնաբանումն ու կիրառումը միջազգային արդարադատության և կարգի կարևորագույն երաշխիքներից են: Այսպես, *Մայրցամաքային ելուստի* վերաբերյալ գործով Միջազգային դատարանը նշել է. «*Արդարությունը վերացական հասկացություն չէ, այն պետք է ընկալել իրավունքի գերակայության համատեքստում, իսկ դա նշանակում է, որ արդարության կիրառումը պետք է լինի հետևողական և ցուցաբերի կանխատեսելիության որոշակի աստիճան: Ուստի թեև որոշում կայաց-*

¹ *Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro)*, ICJ Reports 43 (2007), p. 208, § 401.

² Доклад Исследовательской группы Комиссии международного права (окончательно подготовлен Мартти Коскенниеми), Фрагментация международного права: трудности, обусловленные диверсификацией и расширением сферы охвата международного права, Док. ООН A/CN.4/L.682 (2006). § 52.

նելիս Ղատարանը նայում է այս կոնկրետ գործի փաստական հանգամանքները, սակայն այն դիտարկում է նաև գործի շրջանակներից դուրս՝ իրավունքի առավել ընդհանուր կիրառման սկզբունքները»¹: Հետևաբար, թեև «նախադեպը» այդ բառի բուն իմաստով միջազգային իրավունքի աղբյուր չէ, այնուամենայնիվ բոլոր դատական ատյանները հակված են հետամուտ լինելու իրենց նախկին որոշումներին և չեղվելու իրենց իսկ ձևավորած դատական պրակտիկայից²:

Ուստի հարց է առաջանում, թե ո՞ր դատական ատյանի մշակած վերադրելիության կանոնն է միակ ճշմարիտը, պետությունների միջազգային պրակտիկան առավել օբյեկտիվորեն արտացոլողը՝ Միջազգային դատարանի «արդյունավետ վերահսկողության» կանոնը, թե՞ Հարավսլավիայի տրիբունալի «ընդհանուր վերահսկողության» կանոնը:

Հատկանշական է, որ, օրինակ, իտալացի մասնագետ Ա.Կասսեգեն փորձ է արել ապացուցելու Հարավսլավիայի տրիբունալի կողմից կիրառվող վերադրելիության կանոնի տրամաբանական նպատակահարմարությունը և գերադասելիությունը «արդյունավետ վերահսկողության» կանոնի նկատմամբ՝ հիմքում դնելով պետությունների՝ պատասխանատվությունից խուսափելն անհնարին դարձնելու տրամաբանությունը³: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա Հարավսլավիայի տրիբունալի առաջին նախագահն է եղել, Կասսեգեի անկողմնակալությունն այս հարցում լուրջ կասկած է հարուցում: Բացի այդ՝ միջազգային իրավունքի նորմերը ձևավորվում են պետությունների կամաարտահայտության արդյունքում, այլ ոչ թե մասնագետների մատնանշած ցանկալի իրավիճակն ապահովելու նկատառումով: Ավելին՝ պետությունների կամքը կարող է ակնհայտորեն հակադրվել իրավունքի հեղինակների ստեղծած ուստոպիստական իդեալին:

Այսպես, մեկ այլ գործով՝ *Բոսնիա և Հերցեգովինան ընդդեմ*

¹ *Continental Shelf (Libyan Arab Jamahiriya/Malta)*. ICJ Reports 30 (1985). § 45.

² *Shahabudden M.* Precedent in the World Court / Hersch Lauterpacht Memorial Lectures. Cambridge University Press. Cambridge / New York. 1996. P. 238.

³ *Cassese A.* The Nicaragua and Tadić Tests Revisited in Light of the ICJ Judgment on Genocide in Bosnia // *European Journal of International Law*, vol. 18 (2007). P. 653.

Սերբիա և Մոնտենեգրոյի, Միջազգային դատարանը հնարավորություն ունեցավ վերահաստատելու «արդյունավետ վերահսկողության» կանոնը՝ Արցախից շատ ավելի մեծ կախվածության մեջ գտնվող Ռեփուբլիկա Սրպսկայի գործողությունները չվերագրելով Սերբիային¹։ Չնայած այն հանգամանքին, որ, ի տարբերություն *Կոնգոն ընդդեմ Ուգանդայի* գործի, այդ դեպքում Ռեփուբլիկա Սրպսկայի զինված ուժերն իսկապես ստեղծվել էին հենց Սերբիայի կողմից, չնայած այն հանգամանքին, որ երկու սուբյեկտների միջև զինվորական հրամանատարության ակտիվ փոխանակում կար, չնայած ինտենսիվ ֆինանսավորմանը, որոշ դեպքերում Սերբիայի կողմից Ռեփուբլիկա Սրպսկային ուղղակի հրամաններ արձակելուն և այլն², Միջազգային դատարանը գտավ, որ Ռեփուբլիկա Սրպսկայի կողմից իրականացված Սրբերենիցայի ցեղասպանությունն ու մարդկության դեմ ուղղված այլ հանցագործությունները վերագրելի չեն Սերբիային։

Միջազգային դատարանը նաև բացատրեց վերագրելիության երկու կանոնների առկայության պատճառը. ըստ Միջազգային դատարանի, քանի որ Հարավսլավիայի տրիբունալը գործ ունի ոչ թե պետությունների պատասխանատվության հիմնահարցի հետ, այլ միայն ֆիզիկական անձնանց քրեական պատասխանատվության, ուստի *Տադիչի* գործով վերջինիս խնդիրը պարզապես եղել է համապատասխան զինված ընդհարմանը պետության ներգրավվածությունն ապացուցելը։ Հեկաբար, «ընդհանուր վերահսկողությունը» կարող է ապացուցել պետության ներգրավվածությունը, սակայն այն ազդեցության ներքո գտնվող սուբյեկտին չի վերածում վերջինիս վրա ազդող պետության *de facto* մարմնի։ Հատկանշական է, որ, անգամ ըստ Հարավսլավիայի տրիբունալի, «վերահսկողության անհրաժեշտ ծավալը կարող է տարբերվել՝ կոնկրետ իրավիճակով պայմանավորված»³։

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը բավարարում է պետականության բոլոր

¹ *Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina v. Serbia and Montenegro)*, Judgment, ICJ Unreported (2007), General List No. 91, P. 144, § 403.

² *Milanović M. State Responsibility for Genocide // European Journal of International Law*, vol. 17 (2006). P. 598.

³ *Prosecutor v. Dusko Tadić*, Op. cit. § 137.

չափանիշներին և ոչ թե «մարիոնետ պետություն» է, այլ ինքնուրույն և անկախ պետություն կամ Հայաստանի Հանրապետության *de facto* մարմին:

Հատկանշական է, որ ներկայումս Եվրոպական դատարանի վարույթում է գտնվում «*Չիրագովն ու այլք ընդդեմ Հայաստանի Հանրապետության*»¹ գործը, որը վերաբերում է Արցախի ազատագրական շարժման ընթացքում Լաչինի տարածքում տեղի ունեցած իրադարձություններին, մասնավորապես՝ տեղի քուրդ բնակչության սեփականազրկմանը, և այս գործով Եվրոպական դատարանի կենտրոնական խնդիրներից մեկը ՀՀ արտատարածքային իրավասության հաստատումն է: Սույն գործի նախնական փուլում ՀՀ ներկայացուցիչները մերժեցին Հայաստանի անմիջական պատասխանատվությունը՝ հենվելով Եվրոպական դատարանի պրակտիկայի վրա² և ցույց տալով, որ ՀՀ զինված ուժերի փոքր թվաքանակը բավարար չէ Հայաստանի Հանրապետության կողմից ԼՂՀ տարածքի նկատմամբ ուղղակի վերահսկողություն իրականացնելու համար: Սակայն լսումների ընթացքում Ադրբեջանի՝ երրորդ կողմի ներկայացուցչի բրիտանական մասնագետ Մ. Շոուն պնդեց, թե Հայաստանի Հանրապետության անուղղակի պատասխանատվությունը հաստատելու համար «անհրաժեշտ չէ ցույց տալ մանրակրկիտ վերահսկողություն տեղական իշխանությունների քաղաքականության և գործողությունների նկատմամբ. ընդհանուր վերահսկողությունն ինքնին բավարար է անդամ պետության պատասխանատվությունը հաստատելու համար»³: Այս փաստարկի հետ հնարավոր չէ համաձայնվել: Ինչպես արդեն նշվեց, միջազգային իրավունքի միատեսակ կիրառումը ընկած է միջազգային արդարադատության հիմքում: Իսկ Եվրոպական դատարանը գործունի պետությունների պատասխանատվության, այլ ոչ թե ֆիզիկական անձանց պատասխանատվության հետ այնպես, ինչպես Միջազգային դատարանը, և հետևաբար պարտավոր է հետամուտ

¹ *Chiragov and others v. Armenia*, Application no. 13216/05. Grand Chamber Decision. 14 December 2011.

² *Loizidou v. Turkey*, Application no. 15318/89, Grand Chamber Judgment. 18 December 1996. §§ 49-56.

³ *Չիրագովը և այլ ոք ընդդեմ Հայաստանի* գործի բանավոր լսումները հասանելի են հետևյալ կայքում՝ http://www.echr.coe.int/ECHR/EN/Header/Press/Multimedia/Webcasts+of+public+hearings/webcastEN_media?id=20100915-1&lang=en&flow=high

լինել «արդյունավետ վերահսկողության» կանոնին և մերժել ԼՂՀ գործողությունների վերագրելիությունը Հայաստանի Հանրապետությանը:

Երկրորդ և երրորդ հարցերին (արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունը ԼՂՀ-ն արդեն իսկ *de facto* ճանաչել է, և արդյո՞ք ԼՂՀ *de jure* ճանաչումը միջազգային իրավունքի և քաղաքականության տեսանկյունից կարող է համարվել Հայաստանի Հանրապետության համար քայլ, թե՞ ոչ) պատասխանելու համար անհրաժեշտ է նախ հասկանալ *de jure* և *de facto* ճանաչման տարբերությունը:

De facto ճանաչումը սովորաբար իրականացվում է այն դեպքերում, երբ ճանաչողը որոշակի կասկածներ ունի ճանաչվողի կենսունակության վերաբերյալ, այսինքն՝ համոզված չէ, որ ճանաչվող կառավարությունը կամ պետությունը կարող է երկար գոյատևել: *De jure* ճանաչումը սովորաբար տեղի է ունենում, երբ ճանաչողն ընդունում է ճանաչվողի կենսունակությունն ու արդյունավետ վերահսկողությունը որոշակի տարածքի նկատմամբ: Այսինքն՝ *de facto* ճանաչումը ենթադրում է սպասողական կեցվածք, որի ընթացքում ճանաչողը գնահատում է *de jure* ճանաչում շնորհելու ողջամտությունը: Այսպես, օրինակ, Միացյալ Թագավորությունը *de facto* ճանաչեց Խորհրդային իշխանությունը 1921թ.-ին, մինչդեռ *de jure* միայն 1924թ.-ին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն ունի ներկայացուցչություն Հայաստանի Հանրապետությունում, ՀՀ Նախագահը պաշտոնական այցեր է ունենում ԼՂՀ տարածք, Հայաստանի Հանրապետությունը ԼՂՀ-ին տրամադրել է անժամկետ վարկ¹, ավելին՝ Հայաստանի զինված ուժերի ներկայությունը ԼՂՀ տարածքում հաստատվել և ճանաչվել է անգամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից²: Նման պայմաններում ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունը ճանաչել է ԼՂՀ պետականությունը, սակայն այն երբևէ որևէ պաշտոնական հայտարարություն չի արել վերջինիս *de jure* ճանաչման մասին հասկանալի պատճառներով: Պաշտոնական հայտարարությունների համա-

¹ St' u International Crisis Group. Report on Nagorno-Karabakh: Viewing the Conflict from the Ground. Europe Report No. 166. 14 September 2005. P. 12.

² St' u օրինակ, *Harutyunyan v. Armenia*, Application no. 36549/03. 28 June 2007. §§ 4-44. *Zalyan, Sargsyan and Serobyen v. Armenia*, Application nos. 36894/04 and 3521/07. Admissibility decision of 11 December 2011. §§ 1-7.

ծայն՝ Հայաստանի Հանրապետությունը ձեռնպահ է մնում *ԼՂՀ de jure* ճանաչումից բանակցային գործընթացում հավասարակշռությունը չխախտելու և այդ գործընթացի բնական զարգացումներին չխոչընդոտելու համար:

Սակայն, մյուս կողմից, այս հանգամանքը չարաշահում է Ադրբեջանը, որը շարունակում է մեղադրել ՀՀ-ին «մարիոնետ պետություն» ստեղծելու, ինչպես նաև Ադրբեջանի տարածքում ՀՀ զինված ուժեր տեղակայելու համար:

Գտնում ենք, որ զուտ քաղաքական (այլ ոչ թե իրավական) նկատառումներից ելնելով՝ նպատակահարմար է *ԼՂՀ de jure* ճանաչումը Հայաստանի Հանրապետության կողմից: Դա Ադրբեջանին կզրկի Հայաստան-ԼՂՀ հարաբերությունները պիտակավորելու և Հայաստանի գործողությունները անօրինական որակելու հնարավորությունից: Մյուս կողմից, ճանաչումը չի կարող հիմք հանդիսանալ դարաբաղյան հակամարտությունում Հայաստանի Հանրապետությունն անմիջական մասնակից կողմ կամ ագրեսոր որակելու համար: Ինչպես արդեն հստակ հաստատվել է ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կողմից, անկախության հռչակագրերը չեն խախտում միջազգային իրավունքը կամ ավելի ճիշտ՝ դուրս են միջազգային իրավունքի կարգավորման ոլորտից: Ըստ Միջազգային դատարանի՝ նման հռչակագրերը մտնում են միջազգային իրավունքի կարգավորման ոլորտ միայն այն դեպքերում, երբ դրանք զուգորդվում կամ էականորեն նպաստում են ընդունված նորմերի ոտնահարմանը միջազգային իրավունքի որևէ խախտումով: Հենց այս պարագայում էլ առաջ է գալիս ճանաչումը կոլեկտիվ մերժելու ինստիտուտը:

Ուստի, հաշվի առնելով այն, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը միջազգային հանրությանը երբեք կոչ չի արել ձեռնպահ մնալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը ճանաչելուց, հետևաբար ճանաչումը միջազգային իրավունքի տեսանկյունից լիովին արդարացված է և իրավաչափ: Դա, իհարկե, որոշ առումով կարող է խաթարել բանակցային գործընթացը, սակայն քանի որ ԵԱՀԿ Մինսկի խումբը 1992 թ. մինչ օրս որևէ շոշափելի հաջողության չի հասել, այդ բանակցային գործընթացը ավելի փոքր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության համար, քան Միավորված ազգերի կազմակերպության՝ տարբեր կառույցներում և տարբեր ամբիոններում անդադար հնչող մեղադրանքները:

Laura Badalyan
*Post graduate researcher at the Chair of
European and International Law, YSU*

LEGAL ASPECTS OF THE RECOGNITION OF THE REPUBLIC OF NAGORNO KARABAKH

One of the most important issues of Armenia's foreign policy is the recognition of the Nagorno-Karabakh Republic as an independent state.

The analysis of resolutions of international organisations, and of the UN Security Council in the first place (taking into consideration the peculiarities of interpreting the documents of international structures), aimed at the identification of legal grounds for the phenomenon of collective non-recognition, and also at the justification of non-application of the given doctrine in relation to the Nagorno-Karabakh Republic.

It was revealed that the Nagorno-Karabakh Republic satisfies the established customary criteria of statehood and it is a country endowed with separate legal personality and will of its own, so it can be qualified as a “de facto regime”, or international entity equipped with “initial personality”.

There is a reason to conclude that Republic of Armenia has already de facto recognized Nagorno-Karabakh Republic. As for the future de jure recognition of NKR, according to official statements, the Republic of Armenia refrains from de jure recognition of NKR, not to upset the balance of the negotiation process.

Лаура Бадалян
Соискатель кафедры европейского и международного права ЕГУ

ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ПРИЗНАНИЯ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ

Одним из наиболее важных вопросов внешней политики Армении является признание Нагорно-Карабахской Республики как независимого государства.

Были проанализированы резолюции международных организаций и Совета Безопасности ООН (с учетом особенности интерпретации документов международных структур), направленные на выявление правовых оснований для феномена коллективного непризнания, а также на обоснование неприме-

нения данной теории *в отношении* Нагорно-Карабахской Республики.

В статье обосновывается то обстоятельство, что Нагорно-Карабахская Республика удовлетворяет всем критериям и является, а самостоятельным и независимым государством.

Очевидно, что Республика Армения признала государственность НКР, однако по понятным причинам она никогда не делала какого-либо официального заявления о признании. Согласно официальным заявлениям, Республика Армения воздерживается от признания НКР *de jure*, чтобы не нарушить равновесие переговорного процесса и не препятствовать его естественному развитию.

Բանալի բառեր: ճանաչում, պետականության միջազգային-իրավական չափանիշները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, «ընդհանուր վերահսկողության» կանոն, արդյունավետ վերահսկողության կանոն, *de facto* ճանաչում, *de jure* ճանաչում

Keywords: recognition, Nagorno-Karabakh Republic, international legal standards of the statehood, "total control" rule, effective control rule, *de facto* recognition, *de jure* recognition

Ключевые слова: признание, международные правовые стандарты государственности, Нагорно-Карабахская Республика, "тотальный контроль" эффективный контроль, де-факто признание, де-юре признание.

**ԱՅԿ-ՈՒՄ ՎԵՇԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԶԱՐԳԱՑՈՂ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Միջազգային տնտեսական իրավունքը տարբերակված մոտեցում է դրսևորում զարգացած և զարգացող պետությունների նկատմամբ: Մասնավորապես, զարգացող պետությունների համար միջազգային տնտեսական հարաբերությունների շրջանակներում ստեղծվում է առավել բարենպաստ ռեժիմ, քան զարգացած պետությունների համար: Այս տարբերակված մոտեցման նպատակն է փոխհատուցել երկու խումբ պետությունների միջև առկա զարգացման փաստացի անհավասարությունը:²

Միջազգային տնտեսական հարաբերություններում զարգացող պետությունների նկատմամբ ձևավորված նման առանձնահատուկ վերաբերմունքը բնականաբար պետք է իր արտահայտությունը գտներ նաև միջազգային առևտրաքաղաքական հարաբերությունները կարգավորող միջազգային կազմակերպության՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության /այսուհետ նաև ԱՀԿ/ գործունեությունում:

Առևտրի համաշխարհային կազմակերպության 159 անդամների մեկ երրորդը³ կազմում են զարգացող պետությունները: Ներկայումս այդ պետությունները, պայմանավորված ԱՀԿ-ում իրենց թվաքանակով, ավելի ու ավելի ակտիվ դերակատարում են ստանձնում այդ կազմակերպությունում և առավել կարևոր դեր են ստանձնում միջազգային տնտեսության մեջ, քանի որ միջազգային առևտրին ավելի ու ավելի շատ վերաբերվում են որպես էական գործիքի ի-

¹ ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Քոչարյան:

² St' u D. Kappo, П.Жюйар. Международное экономическое право, М., 2002, էջ 16

³ Ըստ ԱՀԿ-ի պաշտոնական կայքէջի՝ 02.03.2013թ. դրությամբ ԱՀԿ-ին ունի է 159 անդամ / http://www.wto.org/english/thewto_e/whatis_e/tif_e/org6_e.htm/ դիտման ամսաթիվ 25.11.2013թ./

րենց զարգացման գործընթացում:¹

Պայմանավորված միջազգային տնտեսական հարաբերություններում զարգացող պետությունների նկատմամբ ձևավորված առանձնահատուկ մոտեցմամբ և ԱՀԿ-ում այդ պետությունների ակտիվ դերակատարմամբ՝ ԱՀԿ-ն ևս, ի համեմատ զարգացած պետությունների, զարգացող պետությունների նկատմամբ դրսևորում է տարբերակված, առանձնահատուկ գործելաոճ: Մասնավորապես ԱՀԿ-ի շրջանակներում գործող համաձայնագրերը զարգացող պետությունների համար նախատեսում են հատուկ իրավունքներ սահմանող դրույթներ: Այսպես՝.

ԱՀԿ-ի որոշ համաձայնագրերում առկա են դրույթներ, որոնք ապահովում են զարգացող պետություններին առավել երկար անցումային ժամանակաշրջանով՝ մինչև համաձայնագրի դրույթների ամբողջական իրականացումը² կամ Մաքսերի, և առևտրի գլխավոր համաձայնագրի³ չորրորդ մասը վերաբերում է առևտրային հարաբերություններում զարգացող և զարգացած պետությունների միջև «անպատասխան վիճակին», ըստ որի՝ զարգացած պետությունները, զարգացող պետություններին առևտրի ոլորտում որոշակի արտոնություններ տրամադրելով, չպետք է ակնկալեն, որ նման արտոնություններ իրենց պետք է տրամադրեն նաև զարգացող պետությունները:

Ավելին, ԱՀԿ-ն զարգացող պետությունների համար պարտավորությունների կատարման լրացուցիչ ժամկետներ է տրամադրում, ներպետական և միջազգային առևտրի կանոններ սահմանելիս պարտադրում է զարգացած պետություններին հաշվի առնելու նաև զարգացող պետությունների շահերը:

Սակայն ԱՀԿ-ի շրջանակներում զարգացող պետությունների նկատմամբ առանձնահատուկ և տարբերակված մոտեցումը չի

¹ How the WTO deals with the special needs of an increasingly important group /էլեկտրոնային աղբյուր, http://www.wto.org/english/thewto_e/whatis_e/tif_e/utw_chap6_e.pdf/ դիտման ամսաթիվ 25.11.2013թ./

² **Who are the developing countries in the WTO?** /էլեկտրոնային աղբյուր, http://www.wto.org/english/tratop_e/devel_e/d1who_e.htm/ դիտման ամսաթիվ 25.11.2013թ./

³ Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագիրը ստորագրվել է 30.10.1947թ. և ուժի մեջ է մտել 01.01.1948թ.-ին:

դրսևորվում միայն համաձայնագրերով վերջիններիս հատուկ իրավունքներ տրամադրելով. ԱՀԿ-ն, օժտված լինելով միջազգային առևտրային վեճերի լուծման իրավասությամբ, բավականին արտոնություններ է սահմանում զարգացող պետությունների համար նաև վեճերի քննության ընթացակարգում:

Այսպես ԱՀԿ-ի շրջանակներում գործող «Վեճերի կարգավորումը ղեկավարող կանոնների և ընթացակարգերի մասին» համաձայնագիրը /այսուհետ նաև Համաձայնագիր/ նախատեսում է մի շարք դրույթներ, որոնք անմիջականորեն վերաբերում են վեճերի կարգավորման գործընթացում զարգացող պետությունների մասնակցության առանձնահատկություններին:

Օրինակ, Վեճերի կարգավորումը ղեկավարող կանոնների և ընթացակարգերի մասին համաձայնագրի 4-րդ հոդվածը, սահմանելով խորհրդակցությունների անցկացման կարգը, իր 10-րդ կետում սահմանում է, որ խորհրդակցությունների ընթացքում անդամները հատուկ ուշադրություն պետք է դարձնեն զարգացող անդամ երկրների առանձնահատուկ խնդիրներին ու շահերին:

Վերոգրյալ հոդվածը, ըստ էության, Մարաբեշի Համաձայնագրի¹ նախաբանի բովանդակության արտացոլումն է, որը հաստատում է ԱՀԿ-ի կողմից այն փաստի ճանաչումը, որ զարգացող պետությունները ունեն առանձնահատուկ խնդիրներ և շահեր, որոնք պահանջում են հատուկ ուշադրություն անդամների կողմից: Վերոգրյալ դրույթը հենց գրավում է անդամների ուշադրությունը այդ խնդիրներին ու շահերին:

Եվ թեև վերոգրյալ դրույթը նպատակ ունի գործնականում աջակցություն տրամադրել զարգացող պետություններին, սակայն այն ունի մի շարք էական թերություններ: Այսպես, Համաձայնագրի անգլերեն բնօրինակում օգտագործվում է «should» բառը², ինչը նշանակում է, որ վերոգրյալ դրույթը միայն կոչ է անում, խորհուրդ է տալիս անդամներին հատուկ ուշադրություն դարձնել զարգացող

¹ Մարաբեշի համաձայնագիրը ստորագրվել է Մարոկկոյի Մարաբեշ քաղաքում 15.04.1994թ. և ուժի մեջ է մտել 01.01.1995թ., որի հիման վրա հիմնադրվել է ԱՀԿ-ն:

² Տե՛ս մեջբերում համաձայնագրի 4-րդ հոդվածի 10-րդ կետից՝ «during consultations Members *should* give special attention to the particular problems and interests of developing country Members»:

անդամ երկրների առանձնահատուկ խնդիրներին ու շահերին, սակայն չի պարտադրում: Հետևաբար գտնում ենք, որ վերոգրյալ դրույթը ավելի շատ հռչակագրային, քան թե գործնական բնույթ ունի, քանի որ պարտադրող պարտականություն չի սահմանում անդամների համար: Ավելին, քննարկվող դրույթը թեև հստակ կոչ է պարունակում անդամներին՝ զարգացող անդամ երկրների առանձնահատուկ խնդիրներին ու շահերին հատուկ ուշադրություն դարձնելու վերաբերյալ, սակայն վերոգրյալ դրույթից պարզ չի դառնում, թե ինչպես պետք է արտահայտվի այդ հատուկ ուշադրությունը:

Այդ իսկ պատճառով զարգացող պետությունները այս դրույթը չեն համարում իրենց համար օգտակար¹, քանի որ այն զուրկ է հստակությունից, պարզ չէ, թե ինչպիսի վարքագծով, գործողություններով է արտահայտվելու այդ հատուկ ուշադրությունը, ինչպես նաև պարզ չէ, թե արդյոք զարգացող պետությունները կարող են պարտադրել մյուս անդամ պետություններին կիրառելու քննարկվող դրույթը:

Սակայն, ի տարբերություն քննարկվող դրույթի, Համաձայնագրի 8-րդ հոդվածի 10-րդ կետը բավականին գործնական քայլեր է նախատեսում զարգացող պետությունների համար՝ քննախմբի անդամների հետ կապված: Այսպես՝

Համաձայն համաձայնագրի 8-րդ հոդվածի 10-րդ կետի՝ եթե վեճը տեղի է ունենում զարգացող Անդամ երկրի և զարգացած Անդամ երկրի միջև, ապա քննախմբում ընդգրկվում է առնվազն մեկ քննախմբի անդամ զարգացող Անդամ երկրից, եթե զարգացող Անդամ երկիրը այդպես է պահանջում:

Վերոգրյալ դրույթը արդեն ունի իմպերատիվ բնույթ և պարտադրում է վեճերը քննող մարմնին զարգացող անդամի պահանջի դեպքում ապահովելու քննախմբի առնվազն մեկ անդամի՝ զարգացող Անդամ երկրից լինելը: Նմանատիպ դրույթի նախատեսման իմաստը այն է, որ վեճը քննող անդամներից առնվազն գոնե մեկը ավելի խորությամբ կընկալի զարգացող պետության խնդիրները և շահերը, քանի որ ինքը ևս զարգացող պետությունից է:

¹ St'u Gosego Rockfall Lekgowe, The WTO Dispute Settlement System: Why it doesn't Work for Developing Countries? <http://ssrn.com/abstract=2045470>

Սակայն քննարկվող դրույթի վերաբերյալ տեսական գրականության մեջ որոշակի մտահոգություններ են արտահայտվել: Մասնավորապես, կարծիք է արտահայտվել, որ զարգացող անդամի պահանջի դեպքում քննախմբի առնվազն մեկ անդամի՝ զարգացող Անդամ երկրից լինելու հանգամանքը կարող է նաև ազդել քննախմբի անաչառության և անկախության վրա¹:

Սակայն վերոգրյալ դիրքորոշման հետ դժվար է համաձայնվել, քանի որ զարգացող պետությունից ընդգրկվող անդամը վեճի կողմ հանդիսացող պետություններից չէ, նա ուղղակի ևս, ինչպես վեճի կողմերի մեկը կամ երկուսը, հանդիսանում է զարգացող պետության անդամ, սակայն դա որևէ կերպ չի կարող ազդել քննախմբի անաչառության և անկախության վրա:

Համաձայն Համաձայնագրի 12-րդ հոդվածի 10-րդ կետի՝ Ջարգացող Անդամ երկրի կողմից ձեռնարկված միջոցի վերաբերյալ խորհրդակցությունների շրջանակներում կողմերը կարող են համաձայնության գալ 4-րդ Հոդվածի 7-րդ և 8-րդ կետերում սահմանված ժամկետները երկարաձգելու վերաբերյալ: Համապատասխան ժամկետն անցնելուց հետո, եթե խորհրդակցող կողմերը չեն համաձայնում, որ խորհրդակցություններն ավարտվել են, ապա Վեճերը Կարգավորող մարմնի Նախագահը կողմերի հետ խորհրդակցելուց հետո որոշում է երկարաձգել, թե ոչ համապատասխան ժամկետը, և եթե այո, ապա ինչքա՞ն ժամանակով: Ավելին, զարգացող Անդամ երկրի դեմ բողոքը քննության առնելիս քննախումբը բավականաչափ ժամանակ է տալիս զարգացող Անդամ երկրին իր փաստարկները պատրաստելու և ներկայացնելու համար: Սույն կետի համաձայն՝ ձեռնարկված որևէ գործողություն չի ազդում 20-րդ Հոդվածի 1-ին կետի և 21-րդ Հոդվածի 4-րդ կետի դրույթների վրա:

Այսպես, Հնդկաստան-Քանակական սահմանափակումներ գործում Հնդկաստանը ԱՀԿ-ի շրջանակներում պահանջեց լրացուցիչ ժամանակ՝ պատրաստելու և ներկայացնելու առաջին գրավոր դիրքորոշումը: Քննախումբը, հիմք ընդունելով Համաձայնագրի 12-րդ հոդվածի 10-րդ կետի, ինչպես նաև այն հանգամանքը, որ Հնդկաս-

¹ St'u Gosego Rockfall Lekgowe, The WTO Dispute Settlement System: Why it doesn't Work for Developing Countries? <http://ssrn.com/abstract=2045470>

տանում տեղի էր ունեցել կառավարության փոփոխություն, որոշեց տրամադրել լրացուցիչ ժամանակ՝ 10 օր՝ գրավոր դիրքորոշում ներկայացնելու համար:¹

Համաձայնագրի 12-րդ հոդվածի 10-րդ կետում նախատեսված զարգացող Անդամ երկրի դեմ բողոքը քննության առնելիս լրացուցիչ ժամանակ տրամադրելու դրույթը իմպերատիվ բնույթ ունի և պարտադիր է քննախմբի համար, սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ այն պարտադիր է միայն այն դեպքում, եթե բողոք է բերվել զարգացող անդամ պետության դեմ, իսկ զարգացող անդամ պետության կողմից բողոք ներկայացնելիս նման հնարավորություն տրված չէ:

Որոշ տեսաբանների կարծիքով՝ զարգացող պետության կողմից բողոք բերելու և վերջինիս դեմ բողոք բերելու հանգամանքներով պայմանավորված՝ նման տարբերակված մոտեցումը արդարացված չէ, քանի որ բողոք բերելու դեպքում ևս զարգացող պետության համար անհրաժեշտ է բավարար ժամանակ պատրաստվելու համար:²

Վերոգրյալ տեսակետի հետ, սակայն, դժվար է համաձայնվել, քանի որ նման տարբերակված մոտեցումը այդ պարագայում արդարացի է և ուղղված է ոչ միայն զարգացող պետության շահերը պաշտպանելուն, այլ նաև վեճի մյուս կողմի շահերի պաշտպանությանը՝ անկախ նրանից զարգացող, թե զարգացած պետություն է: Այսպես, եթե բողոքը ներկայացնում է զարգացող պետությունը, ապա նա բավականին ժամանակ ունի պատրաստվելու և նոր միայն բողոքը ներկայացնելու համար, հետևաբար լրացուցիչ ժամանակ տրամադրել պատրաստվելու համար իմաստազուրկ է, սակայն, եթե զարգացող պետության դեմ են բողոք ներկայացնում, բնականաբար, հաշվի առնելով վերջինիս կողմից համապատասխան մասնագետների ներգրավման դժվարությունները և այլ հանգամանքներ, արդարացի է, որպեսզի տրամադրվի լրացուցիչ ժամանակ պատ-

¹ St' u India — Quantitative Restrictions on Imports of Agricultural, Textile and Industrial Products, /էլեկտրոնային աղբյուր http://www.wto.org/english/tratop_e/dispu_e/cases_e/ds90_e.htm, դիտման ամսաթիվ 22.11.2013/

² St' u Gosego Rockfall Lekgowe, The WTO Dispute Settlement System: Why it doesn't Work for Developing Countries? <http://ssrn.com/abstract=2045470>

րաստվելու համար:

Համաձայնագրում, զարգացող պետությունների մասնակցությամբ պայմանավորված, դրույթներ կան նաև՝ կապված քննախմբի կողմից կազմված զեկույցագրերի վերաբերյալ:

Այսպես, ըստ Համաձայնագրի 12-րդ հոդվածի 11-րդ կետի, եթե կողմերից մեկը կամ երկուսը զարգացող Անդամ երկիր են, ապա քննախմբի զեկույցագիրը պետք է հստակորեն մատնանշի այն ձևը, որով հաշվի են առնվել զարգացող պետությունների համար տարբերակված և առավել բարենպաստ վերաբերմունքի համապատասխան դրույթները կիրառելու համար, որոնք վեճի կարգավորման ընթացակարգերի ընթացքում բարձրացվել են զարգացող Անդամ երկրի կողմից:

ԱՀԿ-ում զարգացող պետությունների մասնակցությամբ քննված գրեթե բոլոր գործերի զեկույցագրերում վերոգրյալ դրույթը անշեղորեն կիրառվել են:¹ Այս դրույթը յուրօրինակ միջոց է քննախմբին յուրաքանչյուր անգամ հիշեցնելու վեճի քննման ընթացքում զարգացող պետությունների համար տարբերակված և առավել բարենպաստ ռեժիմի կիրառման մասին:

Համաձայնագիրը, անդրադառնալով վեճի կարգավորման ընթացքում կիրառվող միջոցներին, իր 21-րդ հոդվածի 2-րդ կետում նշել է, որ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի զարգացող Անդամ երկրների շահերի վրա ազդեցություն ունեցող հարցերին՝ կապված վեճի կարգավորման առարկա հանդիսացող միջոցների հետ:

Այսպես, Ինդոնեզիա-Ավստրալիա գործի շրջանակներում արքիտրը իր զեկույցում նշել է², որ հաշվի առնելով, որ Ինդոնեզիայի տնտեսությունը մոտ է կանգնած ճգնաժամին, գտնում է, որ անհրաժեշտ է տրամադրել լրացուցիչ 6 ամիս ժամկետ՝ Վեճերը կարգավորող մարմնի ցուցումները ի կատար ածելու համար:

Վերոգրյալ գործը հենց Համաձայնագրի 21-րդ հոդվածի 2-րդ կետի հստակ կիրառման արդյունք է, երբ վեճերը կարգավորող

¹ Տե՛ս հետևյալ գործերը՝ India — Quantitative Restrictions, US — Offset Act (Byrd Amendment), Mexico — Telecoms

² Տե՛ս Indonesia — Certain Measures Affecting the Automobile Industry, http://www.wto.org/english/tratop_e/dispu_e/cases_e/ds54_e.htm

մարմինը հաշվի է առնում զարգացող պետության տնտեսության վիճակը՝ վեճի կարգավորման համար տրամադրված ցուցումները կատարելու համար:

Համաձայնագիրը, արտոնություններ սահմանելով զարգացող պետությունների նկատմամբ, միաժամանակ զարգացող պետությունների խմբից առանձնացրել է առավել թույլ զարգացած անդամ-պետությունների խումբը, որոնց նկատմամբ առավել առանձնահատուկ և տարբերակված վերաբերմունք է դրսևորում: Այսպես, ըստ համաձայնագրի 24-րդ հոդվածի՝ առավել թույլ զարգացած անդամ-պետություններից փոխհատուցում պահանջելիս կամ պարտավորությունների կիրառում պահանջելիս անդամները պետք է սահմանափակ գործեն: Ավելին, եթե վեճի կողմերի մեկը առավել թույլ զարգացած անդամ-պետություն է, և խորհրդատվություններն էլ արդյունք չեն տվել, ապա վեճերը կարգավորող մարմնի նախագահողը կամ Գլխավոր ղեկավարը /Director-General or the Chairman of the DSB/ մինչև քննության համար պահանջ ներկայացնելը առավել թույլ զարգացած անդամ-պետության պահանջով կարող են առաջարկել իրենց բարի ծառայությունները, խորհրդակցությունները, միջնորդությունները՝ վեճը կարգավորելու համար:

Վերոգրյալ հոդվածի նպատակը այն է, որ, պայմանավորված առավել թույլ զարգացած անդամ-պետությունների տնտեսական զարգացվածության ցածր մակարդակով, ԱՀԿ-ն ձգտում է այդ պետությունների դեմ ներկայացվող վեճերը լուծել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ կանխելով քննախմբի կողմից վեճի քննումը:

Հաշվի առնելով զարգացող պետություններում համապատասխան մասնագետների պակասը և մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակը՝ համաձայնագիրը որոշակի գործուն քայլեր է նախատեսում զարգացող պետությունների համար իրավաբանորեն իրենց շահերը արդյունավետ պաշտպանելու ուղղությամբ:

Այսպես, համաձայնագրի 27-րդ հոդվածը սահմանում է, որ ԱՀԿ-ի քարտուղարությունը տեխնիկական համագործակցության ծառայություններից որակյալ իրավաբան փորձագետ է հատկացնում ցանկացած զարգացող Անդամ երկրի, որն այդպիսի պահանջ

է ներկայացնում: Այդ փորձագետը զարգացող Անդամ երկրին աջակցում է այնպես, որ ապահովվի Քարտուղարության շարունակական անկողնակալությունը:

Եվ թեև ակնհայտ է, որ նմանատիպ դրույթի նախատեսումը բավականին դրական ազդեցություն է ունենալու զարգացող պետությունների կողմից իրենց շահերի պաշտպանությանը, սակայն մտահոգության առիթ է տալիս համաձայնագրի 27-րդ հոդվածի վերջին մասը: Այն է՝ փորձագետը զարգացող Անդամ երկրին աջակցում է այնպես, որ ապահովվի Քարտուղարության շարունակական անկողնակալությունը: Այստեղ հարց է առաջանում՝ ինչ պետք է ինկատի ունենալ «Քարտուղարության շարունակական անկողնակալությունը ապահովել» եզրույթի ներքո: Կարծում ենք, որ նմանատիպ եզրույթի կիրառումը կարող է սահմանափակել փորձագետի գործունեության արդյունավետությունը, քանի որ փորձագետը հաճախ խորհրդատվությունը չի տրամադրի ամբողջապես՝ վախճենալով խախտել անկողնակալության պահպանման պահանջը: Վերոգրյալ արտահայտության բացառումը ավելի արդյունավետ կդարձներ քննարկվող դրույթի կիրառումը և իրականում կծառայեր զարգացող պետություններին՝ ողջ ծավալով իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակին:

Այսպիսով, վերոգրյալի հիման վրա կարող ենք փաստել, որ զարգացող պետությունների մասնակցությունը ԱՀԿ-ի վեճերի լուծման ընթացակարգում ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք ուղղված են զարգացող պետությունների կողմից իրենց շահերի արդյունավետ պաշտպանությանը՝ անկախ տնտեսության զարգացածության մակարդակից:

Սակայն, հաշվի առնելով ԱՀԿ-ում վեճերի լուծման ընթացակարգում զարգացող պետությունների մասնակցության առանձնահատկությունները, էական է պարզել նաև, թե ո՞ր պետություններն են համարվում զարգացած, և որո՞նք զարգացող, այսինքն՝ ինչ չափանիշների հիման վրա է կատարվում այս դասակարգումը: Վերոգրյալ հարցի կարևորությունը այն է, որ առանց այս հարցի պարզաբանման, հնարավոր չի լինի Համաձայնագրում նշված դրույթները կիրառել զարգացող պետությունների համար, քանի որ պարզ չի լինի, թե որ անդամ-պետությունների նկատմամբ պետք է կիրառվի:

ԱՅԿ-ի համաձայնագրերում առկա չէ «զարգացած» և «զարգացող» պետությունների սահմանումը: Անդամները իրենք են հայտարարում իրենց զարգացած կամ զարգացող լինելը, թեև մյուս անդամները կարող են վիճարկել անդամի՝ զարգացող պետությունների նկատմամբ կիրառվող դրույթները իր նկատմամբ կիրառելու որոշման դեմ:¹

Այսպիսով, ԱՅԿ-ում պետությունները ճանաչվում են զարգացած կամ զարգացող իրենց հայտարարության հիման վրա, թեև այդ հայտարարությունը կարող է վիճարկվել մյուս անդամ պետությունների կողմից:

ԱՅԿ-ի համաձայնագրերում «զարգացած» և «զարգացող» պետությունների սահմանման կամ դասակարգման չափանիշների բացակայությունը բավականին լուրջ խնդիր է, քանի որ ցանկացած պետություն, հաշվի առնելով զարգացող պետությունների արտոնությունները ԱՅԿ-ում, կարող է իրեն հայտարարել որպես զարգացող պետություն, իսկ մյուս անդամների կողմից էլ այդ փաստի վիճարկումը բավականին դժվար կլինի, քանի որ առկա չեն դասակարգման չափանիշներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի եզրահանգել նմանատիպ հայտարարության հավաստիությանը:

ՄԱԿ-ը այս հարցի լուծման հետևյալ տարբերակն է գտել. Ջարգացող պետությունների համար դասակարգման չափանիշ է ազգային շահույթը, իսկ առավել թույլ զարգացած պետությունների համար՝ մեկ բնակչության հաշվով ՀՆԱ-ի բաժինը, ՀՆԱ-ում վերամշակվող արդյունաբերության բաժինը, բնակչության գրագիտության ցուցանիշը:²

Կարծում ենք, որ ԱՅԿ-ի գործունեության ընթացքում զարգացող պետությունների կարգավիճակի հետ կապված հետագա տարակարծություններից խուսափելու համար անհրաժեշտ է հստակ սահմանել այն չափանիշները, որոնցով հետագայում որևէ պետության կարգավիճակի վերաբերյալ վեճերի առկայության դեպքում հնարավոր կլինի ղեկավարվել, հակառակ պարագայում ստացվում

¹ **Who are the developing countries in the WTO**, http://www.wto.org/english/tratop_e/devel_e/d1who_e.htm

² Ст'ю Д. Карро, П.Жюйар. Международное экономическое право, М., 2002, էջ 18

է մի իրավիճակ, որ ցանկացած պետություն իրեն կարող է հռչակել զարգացող, ինչպես նաև ցանկացած պետություն հիմնավոր կամ անհիմն կարող է վիճարկել այդ հայտարարությունը:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք փաստել, որ ԱՅԿ-ի շրջանակներում իրականացվող վեճերի լուծման գործընթացում զարգացող պետությունների նկատմամբ կիրառվում է տարբերակված մոտեցում՝ տրամադրելով մի շարք արտոնություններ առավել արդյունավետ իրենց շահերը ներկայացնելու և պաշտպանելու համար, սակայն դեռևս զարգացող պետությունները ԱՅԿ-ի շրջանակներում իրականացվող վեճերի լուծման գործընթացում հանդիպում են մի շարք խնդիրների: Առաջին՝ թեև ներկայումս ԱՅԿ-ի վեճերի լուծման գործընթացը կատարվում է միայն իրավական նորմերի շրջանակներում՝ առանց պետությունների տնտեսական և քաղաքական կարգավիճակը հաշվի առնելու, սակայն զարգացող պետությունները հաճախ խուսափում են զարգացած պետությունների դեմ բողոքներ ներկայացնելուց՝ փորձելով չվատթարացնել վերջիններիս հետ իրենց տնտեսական հարաբերությունները: Երկրորդ՝ զարգացող պետությունները հաճախ խուսափում են ԱՅԿ-ում բողոքներ ներկայացնելուց՝ մասնագետների բացակայության, ինչպես նաև լրացուցիչ ծախսեր կատարելու հանգամանքներով պայմանավորված:

Ani Atanesyan

PhD student of the Chair of European and International Law, YSU

THE SPECIFICATION OF DEVELOPING COUNTRIES' PARTICIPATION IN WTO DISPUTE RESOLUTION PROCESS

International economic law demonstrates a differentiated approach to developed and developing countries. In particular, a much more beneficial regime is formed for developing countries than developed ones in the framework of international economic relations. This differentiated approach aims at compensating the actual inequality development between the two groups of countries. Such a unique attitude to the developing countries in the field of international economic relations was supposed to have its adequate expression in the performance of World Trade Organisation (WTO)-the international organization that regulates international trading and

political relations. In this research we have examined the peculiarities of developing countries' participation in dispute resolution process of WTO and found out their main special rights and privileges in this area with an attempt to analyze the head problems of developing countries' participation in WTO.

Ани Атанесян

Аспирант кафедры европейского и международного права ЕГУ

ОСОБЕННОСТИ УЧАСТИЯ РАЗВИВАЮЩИХСЯ СТРАН ПРОЦЕССА РАЗРЕШЕНИЕ СПОРОВ В ВТО

Международное экономическое право проявляет дифференцированный подход к развитым и развивающимся странам. В частности в рамках международных экономических отношений создается более благоприятный режим для развивающихся стран. Не является случайностью, что указанное особенное отношение к развивающимся странам в международных экономических отношениях выразилось в деятельности ВТО, которая имеет активную роль в международных торговых отношениях.

Целью исследования является выявление особенностей участия развивающихся стран в процессе решения споров в ВТО.

В данном исследовании мы изучили спецификацию участия развивающихся стран, находящихся в процессе разрешения споров в ВТО, и выяснили их основные особые права и привилегии в этой области, также проанализировали основные проблемы участия развивающихся стран в ВТО с предложением вариантов решения данного вопроса.

Բանալի բառեր: Զարգացող պետություններ, զարգացած պետություններ, Առևտրի համաշխարհային կազմակերպություն, ԱՀԿ, Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագիր, Միջազգային տնտեսական իրավունք, միջազգային տնտեսական հարաբերություններ, առավել բարենպաստ ռեժիմ, վեճերի կարգավորում:

Keywords: International economic law, developed and developing countries, World Trade Organisation (WTO)

Ключевые слова: Международное экономическое право, ВТО, развитые и развивающиеся страны.

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՂԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱԴԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր ավիացիան և օդային ծառայություններն առանցքային նշանակություն են ունեցել երկրի անվտանգության պահպանման և տնտեսության զարգացման գործում: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ձևավորել է յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար համապատասխան քաղաքականություն՝ իրավունք ընձեռելով պետական և մասնավոր ավիաընկերություններին շահագործելու հայաստանյան օդային ուղիները և որպես կանոն՝ հանգել է մեկ փոխադրող ունենալու գաղափարին, որի բացասական հետևանքները նկատելի դարձան վերջին ժամանակահատվածում:

1919թ. Փարիզի կոնվենցիան մեծ դեր ունեցավ միջազգային օդային իրավունքի ծագման և զարգացման համար: Կոնվենցիայում ամրագրված բազմաթիվ դրույթներ սահմանվեցին նաև «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» 1944թ. Չիկագոյի կոնվենցիայում, որն ընդունվեց 2-րդ համաշխարհային պատերազմի ավարտի նախօրեին²:

1919թ. Փարիզի կոնվենցիան սկիզբ դրեց օդային տարածքի նկատմամբ պետության բացառիկ և լիակատար սուվերենության ճանաչման սկզբունքին³:

Միջազգային օդային հաղորդակցությունների իրավական կարգավորման հիմնարար փաստաթուղթ է հանդիսանում 1944թ.-ի դեկտեմբերի 7-ին Չիկագոյում կնքված «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Կոնվենցիան (այսուհետ նաև Կոնվենցիա), որը սահմանեց կանոնավոր և ոչ կանոնավոր փոխադ-

¹ ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի ասպիրանտ, գիտ. դեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Վ. Քոչարյան:

² Տե՛ս **В.Д. Бордунов**, Международное Воздушное Право, Москва, 2007г., էջ 73-74:

³ Տե՛ս **Д.И. Фельдман, М.М. Аваков**, Международное Право, Москва, 1981г., էջ 5-11:

րումների իրականացման սկզբունքները⁴:

1944թ. Չիկագոյի կոնֆերանսի արդյունքում ստորագրվեց նաև «Միջազգային օդային հաղորդակցությունների տրանզիտի մասին» Համաձայնագիրը, որի համաձայն՝ Պայմանավորվող պետությունները տրամադրում են մյուս Պայմանավորվող պետությունների կանոնավոր հաղորդակցություններին արտոնություններ իրենց տարածքի վրայով թռիչքներ իրականացնելու, ինչպես նաև ոչ կոներցիոն նպատակներով վայրէջք կատարելու համար: Չիկագոյի կոնվենցիայի 12-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր պայմանավորվող պետություն պարտավորվում է միջոցներ ձեռնարկել, որպեսզի յուրաքանչյուր օդանավ, որը կրում է իր պետության նշանը և թռիչք է կարարում իր պետության տարածքից դուրս, պահպանի այն պետության օրենքները, որի օդային տարածքով այն կատարում է թռիչքը կամ որտեղ կատարում է վայրէջք:

Չիկագոյի կոնվենցիան մեծ դեր ունի ժամանակակից միջազգային օդային իրավունքում, քանի որ կոնվենցիան ամրագրեց այնպիսի համընդհանուր նորմեր, որոնք կարգավորում էին պետությունների հարաբերությունները՝ կապված կանոնավոր և ոչ կանոնավոր թռիչքների հետ, որոնք իրականացվում էին միջազգային օդային հաղորդակցության սահմաններում: Բացի այդ, կոնվենցիան հանդիսանում է ԻԿԱՕ-ի կանոնադրությունը:

Այս համաձայնագրերի միջոցով ավիափոխադրողները նախատեսեցին միջազգային օդային հաղորդակցությունների գործունեության այնպիսի կարևոր ոլորտներ, ինչպիսիք էին՝ վառելիքի մատակարարումը, թռիչքի տեխնիկական պատրաստվածությունը, օդանավի մաքրումը, օդանավում ծառայությունների մատուցումը, համընդհանուր ծածկագրերի օգտագործումը և այլն⁵:

20-րդ դարի ընթացքում միջազգային օդային հաղորդակցության ոլորտում կարևոր հարցեր էին հանդիսանում օդանավերի թռիչքների ռեժիմի սահմանումը, օդանավի և նրա անձնակազմի ստատուսի որոշումը, ավիացիոն խախտումների հետաքննությունը, աղետի մեջ գտնվող օդանավին օգնություն ցուցաբերելը:

Ակնհայտ է, որ «ավիացիան» հանդիսանում է ընդհանուր հասկացություն և իր մեջ ներառում է այնպիսի ասպեկտներ, ինչպիսիք

⁴ Տե՛ս **Н.Т. Благовол**, Международное право, Москва, 1987г., էջ 395-398:

⁵ Տե՛ս **В.С. Грязнов**, Международные авианеперевозки, М. 1982 г., էջ 121:

են ռազմական թռիչքները, պետական և սեփական օդանավերը, օդանավերի արտադրությունը, օդանավագնացության ոչ առևտրային օդային փոխադրումները և հատուկ ավիացիոն ծառայությունները¹:

Օդային օրենսդրության մեծ մասը հատկացված է առևտրային գործունեությունների կարգավորմանը, օդային փոխադրումների իրականացմանը, փոխադրողի պատասխանատվությանը²:

Չիկագոյի կոնվենցիայի համաձայն՝ միջազգային օդային թռիչքի ժամանակ պետք է պահպանել արգելված գոտի, վայրեջք մաքսային օդանավակայանում, թռիչքի մուտքի և ելքի, օդանավերի տեխնիկական զննման կանոնները և այլն³:

Այս ավիափոխադրումներին կարող են մասնակցել միայն գրանցված օդանավերը: 1944թ. Չիկագոյի կոնվենցիան պարտադրում է, որ օդանավերը ունենան միայն այն պետության քաղաքացիությունը, որտեղ օդանավը գրանցված է: Ապօրինի է համարվում օդանավի երկակի գրանցումը: Այս նորմերը սահմանում են օդանավի անմիջական իրավաբանական կապը այն պետության հետ, որտեղ այն գրանցված է⁴:

Սեր կարծիքով, վերոնշյալը զգալի նշանակություն ունի վնասի հատուցման համար, որը պատճառվել է ուղևորին և նրա բեռին միջազգային փոխադրման ժամանակ, հետախուզության իրականացման, ավիավթարի ենթարկված օդանավին օգնություն ցուցաբերելիս: Այս կերպ «միջազգային քաղաքացիական ավիացիան» անմիջականորեն ասոցացվում է օդանավի հետ, որը պետությունների կողմից լիազորված է իրականացնել միջազգային թռիչքներ ներպետական օրենքների հիման վրա⁵:

Այս կտրվածքով անհրաժեշտ է անդրադառնալ Ստեփանակեր-

¹ Տե՛ս **В.Д. Бордунов**, Международное Воздушное Право, Москва, 2007г., էջ 32-39:

² Տե՛ս **А.А. Ковалева и С.В. Черниченко**, Международное право / под ред. М., 2006г., էջ178:

³ Տե՛ս **Н.Н. Смыслова, А.Н. Верещагин, М.М. Богуславский**, Международное Воздушное Право Книга 2, Издательство «Наука», 1981г., էջ 35-51:

⁴ Տե՛ս «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» 1944թ. Չիկագոյի կոնվենցիա:

⁵ Տե՛ս **Վ. Քոչարյան**, Միջազգային իրավունք, Երևան, 2002թ., էջ 323-329:

տի օդանավակայանի իրավական կարգավիճակին:

Ստեփանակերտի օդանավակայանում միջազգային թռիչքների և վայրէջքների առկայության փաստը ԼՂՀ միջազգային ճանաչման առաջին քայլն է, քանի որ դա նշանակում է դե յուրե Արցախի օդային տարածքի տարանջատում Ադրբեջանի օդային տարածքից:

Ադրբեջանը գիտակցում է, որ առանց Ադրբեջանի համաձայնության Ստեփանակերտի օդանավակայանի գործարկումը նշանակում է դե յուրե ԼՂՀ ցամաքային տարածքի կորստին ավելացնել նաև օդային տարածքի կորուստը: ԼՂՀ-ում հակաօդային պաշտպանության արդյունավետ համակարգի առկայության շնորհիվ ԼՂՀ-ն լիարժեք վերահսկում է իր օդային տարածքը:

Չի բացառվում, որ որոշ ժամանակ անց Ստեփանակերտերևան չվերթին հաջորդեն Ստեփանակերտ-Մոսկվա կամ Ստեփանակերտ – Ամստերդամ չվերթները:

Վրաստանը դեմ էր Աբխազիայի Սուխումի քաղաքի Բաբուշերա օդանավակայանի շահագործմանը, սակայն Սուխումի-Մոսկվա առաջին չվերթից հետո Վրաստանն այլևս չի բարձրացնում այդ հարցը:

Եթե հայկական կողմը Ստեփանակերտի օդանավակայանը շահագործի Ադրբեջանի համաձայնությամբ կամ ուղղակի թույլտվությամբ, ինչին կողմ են նաև Մինսկի խմբի համանախագահները, ապա Ադրբեջանը միջազգային հանրությանը կարող է ներկայացնել, որ իր իրավասությունները տարածվում են նաև ԼՂՀ օդային տարածքի վրա, և այդ կտրվածքով իր տարածքային ամբողջականությունն ընդունել է նաև հայկական կողմը:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Ստեփանակերտի օդանավակայանի նկատմամբ Չիկագոյի կոնվենցիայի սկզբունքների և նորմերի կիրառելիությանը:

Կոնվենցիայի պրեամբուլայում ասված է, որ «քաղաքացիական ավիացիայի ապագա զարգացումը կարող է էական չափով նպաստել պետությունների և ժողովուրդների միջև բարեկամության և փոխըմբռնման հաստատմանը և պահպանմանը»: Այսինքն՝ կոնվենցիան ապրիորի ունի պոզիտիվ կանխադրույթ:

Կոնվենցիան կարգավորում է փոխադարձաբար միմյանց տարածքային ամբողջականությունը ճանաչած երկրների միջև քաղաքացիական օդագնացության հետ կապված հարաբերությունները:

Կոնվենցիայի 1-ին հոդվածը սահմանում է սուվերենության հասկացությունը՝ «Պայմանավորվող պետությունները ճանաչում են, որ յուրաքանչյուր պետություն իր տարածքից վեր օդային տարածության նկատմամբ ունի լիակատար և բացառիկ սուվերենություն»:

Կոնվենցիայի 2-րդ հոդվածը մեկնաբանում է լիակատար և բացառիկ սուվերենության իրավունքի տարածքը. «Սույն կոնվենցիայի նպատակով պետությունների տարածք ճանաչվում են ցամաքային տարածքները և դրանց հարող տարածքային ջրերը, որոնք գտնվում են տվյալ պետության սուվերենության, պրոտեկտորատի կամ մանդատի ենթակայության տակ»¹:

Այսինքն՝ կոնվենցիայի իմաստով տարածքի և դրանից վեր օդային տարածության նկատմամբ բացառիկ սուվերենության իրավունքի աղբյուր ճանաչված է նաև **ստատուս քվոն կամ դե ֆակտո դրությունը**:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքը և դրանից վեր օդային տարածությունը դե ֆակտո չի գտնվել և չի գտնվում Ադրբեյջանի սուվերենության, պրոտեկտորատի կամ մանդատի ենթակայության տակ:

«Միջազգային իրավունքի սկզբունքների մասին» ՄԱԿ-ի հռչակագրի համաձայն՝ «Պետությունները պարտավոր են հարգել միջազգային դեմարկացիոն և զինադադարի գծերը, որոնց հաստատմանը նրանք մասնակից են»:

Ըստ այդմ, ԼՂՀ տարածքի և դրանից վեր օդային տարածության նկատմամբ Ադրբեյջանի սուվերենությունը սահմանափակված է ոչ միայն կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, այլև, որ չափազանց կարևոր է, հակամարտության գոտում 1994թ. հաստատված հրադադարի ռեժիմի մասին Ադրբեյջանի լիակատար մասնակցությամբ ձեռք բերված համաձայնություններով, որոնց իրավաչափ ձևով ճանաչված կողմ է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Կոնվենցիայի իմաստով տարածքի նկատմամբ պետության սուվերենությունը, պրոտեկտորատը կամ մանդատը ներառում է

¹ См. А. П. Мовчан, Международное Воздушное Право, Книга 1, Издательство «Наука», 1980г., էջ 280-281:

նաև ցամաքային և ջրային տարածքից վեր գտնվող օդային տարածության հանդեպ պետության ինքնիշխանության սահմանում¹: Այսինքն, եթե ցամաքային տարածքը որևէ պետության ենթակայության ներքո չի գտնվում, իսկ ԼՂՀ-ի դեպքում դա այդպես է ոչ միայն փաստացի, այլև հրադադարի համաձայնությունների իրավական ուժով, ապա ապրիորի նույնը վերաբերում է նաև տարածքից վեր գտնվող օդային տարածությանը:

Օդային հաղորդակցությունների իրավական կարգավորման համար կարևոր նշանակություն ունեն պետությունների միջև կնքված երկկողմ համաձայնագրերը, որոնցում նախատեսված են ներպետական իրավական ակտերի փոխադարձ կիրառման մեխանիզմները²:

Ավիաձեռնարկությունների և ուղևորների միջև առաջացած վեճերի կարգավորման նպատակով Կոնվենցիան առաջարկում է ուղևորին ինքնուրույն ընտրել հետևյալ 4 դատարաններից մեկը՝

- փոխադրողի բնակության վայրի դատարան
- ավիափոխադրողի շտաբի գտնվելու վայրի դատարան
- այն երկրի դատարան, որտեղ ավիափոխադրողը կնքել է համաձայնագիր օդային փոխադրման համար

- այն երկրի դատարան, որը նշել է փոխադրողը:

Մոնրեալի կոնվենցիան պահպանեց դատարան հայց ներկայացնելու այս 4 տարբերակները և ավելացրեց 5-ը՝ կապված ուղևորին վնաս պատճառելու հետ, որի հետևանքով ուղևորին հասցվել է մարմնական վնաս կամ ուղևորը մահացել է: Կոնվենցիայի 33-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ բացի վերը նշված դատարաններից, հայց կարելի է ներկայացնել այն պետության դատարան, որտեղ ուղևորը այդ պահին ունի ժամանակավոր կամ մշտական բնակության վայր³:

Միջազգային օդային հաղորդակցությունների ոլորտում ընդունված է երկկողմ համաձայնագրերի ստորագրման պրակտիկան, որոնք հնարավորություն էին տալիս նշանակել մի քանի ավիաձեռ-

¹ Տե՛ս ICAODoc 9626/ Руководство по регулированию международного воздушного транспорта. Второе издание, 2004:

² Տե՛ս Գ.Ի. Կունյկ, Международное Право, Москва, 1982г., էջ 444-446:

³ Տե՛ս ICAO/Doc 9819 ATConf/5 2003 «Доклад Всемирной авиатранспортной конференции. Монреаль, 24-28 марта 2003г».

նարկությունների միևնույն կանոնավոր չվերքների շահագործման համար, նախատեսում էին սակագների, տարողությունների և թռիչքների հաճախականության սահմանում:

Օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրերի մյուս դրույթը, որին ցանկանում ենք անդրադառնալ, վերաբերում է նշանակված ավիաընկերությունների սեփականության խնդրին:

Մասնավորապես, համաձայնագրերում հաճախ սահմանվում են այնպիսի դրույթներ, որոնց համաձայն՝ Պայմանավորվող Կողմն իրավունք ունի չեղյալ հայտարարել կանխորոշված իրավունքների իրագործումը մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության կողմից, եթե բավականաչափ վստահ չէ, որ այդ ավիաընկերության հիմնական սեփականությունը և գործուն վերահսկողությունը պատկանում է ավիաընկերությանը նշանակող Պայմանավորվող Կողմին կամ նրա համաքաղաքացիներին:

Ուսումնասիրելով օդային հաղորդակցության ոլորտում տարբեր պետությունների միջև կնքված համաձայնագրերի դրույթները՝ կարծում ենք, որ ցանկացած պետության ավիաընկերություն համաձայնագիր է կնքում մեկ այլ պետության ավիաընկերության, այլ երկրի կառավարության կամ նրա քաղաքացիների հետ, եթե կասկած չի հարուցում, որ նշանակված ավիաընկերության նյութական սեփականությունը կամ նրա վերահսկողությունը պատկանում է Պայմանավորվող կողմին կամ նրա քաղաքացիներին: Պայմանավորվող Կողմին կամ նրա քաղաքացիներին պետք է պատկանի նշանակված ավիաընկերության գույքի զգալի մասը, ինչպես նաև նշանակված ավիաընկերության ղեկավարման վերահսկողությունը, իրական վերահսկողությունը օդանավերի անձնակազմի և սարքավորումների մեծ մասի նկատմամբ:

Պատահական չէ, որ Երևան-Դելի-Երևան թռիչքի նախապատրաստական աշխատանքների իրականացման փուլում Յնդկաստանի ավիացիոն իշխանությունների կողմից «Հայկական Ավիաուղիներ» ավիաընկերությունից պահանջվեցին փաստաթղթեր, որոնք կհավաստեն ընկերության պետական սեփականություն հանդիսանալը, ինչպես նաև տեղեկություններ ընկերության ղեկավար կազմի

քաղաքացիության վերաբերյալ¹:

1990-ական թթ. ԱՄՆ-ը ներկայացավ «բաց երկնքի» ռեժիմի տարածման նախաձեռնությամբ, որն ուղղված էր օդային փոխադրումների առավել ազատականացման քաղաքականությանը, համաձայնագրերի կնքմանը, հին համաձայնագրերի վերանայմանը, օդային տրանսպորտի ազատականացման քաղաքականություն վարող երկրների հետ մերձեցմանը: ԱՄՆ-ը, կնքելով համաձայնագրեր տարբեր պետությունների առանձին մարզերի հետ, փոխադրողներին հնարավորություն ընձեռեց իրականացնել փոխադրումներ որոշ շուկաներում՝ առանց սահմանափակումների, որը մուտք կբացեր դեպի ԱՄՆ-ի փոխադրումների հարուստ շուկա: «Բաց երկնքի» մասին համաձայնագրերը շահավետ դրության մեջ են դնում նշանակված փոխադրողներին տվյալ պետության նույն շրջանի փոխադրողների համեմատ, որոնք չէին կնքել համաձայնագրեր ԱՄՆ-ի հետ:

Բաց երկնքի մասին երկկողմ համաձայնագրերը ստեղծում են կարգավորման ռեժիմ, որը հիմնված է շուկայական մրցակցության վրա և նախատեսում էր պետությունների նվազագույն միջամտություն ավիաձեռնարկությունների առևտրային գործունեությանը²:

Միջազգային օդային հաղորդակցությունների գործունեության հարցերով զբաղվում են տարբեր միջազգային կազմակերպություններ, որոնցից են միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպությունը՝ ԻԿԱՕ-ն, Եվրոկոնտրոլը (EUROCONTROL): Աերոնավիգացիայի անվտանգության եվրոպական կազմակերպությունը՝ Եվրոկոնտրոլը, համաեվրոպական կառույց է, որի գործունեության հիմնական նպատակը օդային երթևեկության սպասարկման եվրոպական համակարգի հիմնումն է: Հայաստանը Եվրոկոնտրոլին անդամակցում է 2006 թ-ից³:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարևորում է ԵՄ-ի «Թվինինգ» ծրագրի շրջանակներում համագործակցության արդյունքում թռիչքային պիտանիության, թռիչքային գոր-

¹ Տե՛ս «ՀՀ կառավարության և Հնդկաստանի կառավարության միջև կնքված օդային հաղորդակցության մասին» 1996թ. համաձայնագիր:

² Տե՛ս **А.А. Ковалева и С.В. Черниченко**, Международное право М., 2006г., էջ 98:

³ Տե՛ս <http://www.aviation.am/index.php/hy/aboutus/internatorg>:

ծունեության, կադրերի վերապատրաստման ոլորտներում ձեռք բերված հաջողությունները և շարունակելու է աջակցել ավիացիոն անվտանգության ոլորտում ԵՄ-ի ստանդարտների ներդրմանն ու կիրառմանը:

Հետամուտ լինելով քաղաքացիական ավիացիայի ոլորտի ազատականացման քաղաքականության իրագործմանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կշարունակի բանակցություններն օդային հաղորդակցությունների վերաբերյալ այն երկկողմ համաձայնագրերի շուրջ, որոնք ներկայումս պարունակում են հաճախականության և ավիափոխադրումների իրականացման նպաստավոր պայմաններ՝ նպատակ ունենալով ընդգրկել թռիչքների և ուղևորափոխադրումների հնարավորինս լայն ծավալներ:

Ելնելով վերոգրյալից՝ բանակցությունները պետք է վարվեն՝ հիմնվելով տնտեսական նպատակահարմարության և իրագործելիության սկզբունքների վրա:

Այսպիսով, ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ ԼՂՀ օդանավակայանի իրավական կարգավիճակի արդի հիմնախնդիրների նկատմամբ կիրառելի է «Միջազգային իրավունքի սկզբունքների մասին» ՄԱԿ-ի հռչակագրի, Չիկագոյի կոնվենցիայի և 1994թ. կնքված Բիշկեկի հրադադարի դրույթները:

Չիկագոյի կոնվենցիայի իմաստով տարածքի նկատմամբ պետության սուվերենությունը, պրոտեկտորատը կամ մանդատը ներառում է նաև ցամաքային և ջրային տարածքից վեր գտնվող օդային տարածության հանդեպ պետության ինքնիշխանության սահմանումը: Ըստ այդմ, ԼՂՀ տարածքի և դրանից վեր օդային տարածության նկատմամբ Ադրբեյջանի սուվերենությունը սահմանափակված է ոչ միայն Չիկագոյի կոնվենցիայի 2-րդ հոդվածի իմաստով, այլև հակամարտության գոտում 1994թ. հաստատված հրադադարի ռեժիմի մասին Ադրբեյջանի լիակատար մասնակցությամբ ձեռք բերված համաձայնություններով, որոնց իրավաչափ ձևով ճանաչված կողմ է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

INTERSTATE COOPERATION PECULIARITIES IN THE CONTEXT OF INTERNATIONAL AIR COMMUNICATION.

This research article touches upon interstate cooperation peculiarities in the field of international air communication.

Current head problems related to the legal status of the airport of the Nagorno-Karabakh Republic (NKR) and applicability mechanisms of principles and norms of 1944 Chicago convention towards the issue of the airport of NKR are introduced as well.

A simultaneous reference is made to the legal settlement of disputes arising during air cargo transportation displaying the ratio of Chicago and Montreal conventions clauses.

Ани Хлгатыян
Аспирант кафедры европейского и международного права ЕГУ

МЕЖПРАВИТЕЛЬСТВЕННОЕ СОТРУДНИЧЕСТВО В ОБЛАСТИ МЕЖДУНАРОДНОЙ ВОЗДУШНОЙ КОММУНИКАЦИИ

В данной научной статье представлены особенности межправительственного сотрудничества в области международной воздушной коммуникации. Представлены также проблемы правового положения аэропорта Республики Нагорного Карабаха и механизмы применимости принципов и норм Чикагской конвенции 1944г. в отношении аэропорта РНК.

Одновременно обращается внимание на правовое регулирование конфликтов, возникающих во время авиаперевозок, при помощи сравнительного анализа положений Чикагской и Монреальской конвенций.

Բանալի բառեր՝ 1944թ. Չիկագոյի կոնվենցիա, միջազգային օդային իրավունք, օդանավակայան, ԻԿԱՕ, ավիացիա, 1919թ. Փարիզի կոնվենցիա, «բաց երկնքի» ռեժիմ:

Keywords: 1944 Chicago convention, the airport of the Nagorno-Karabakh Republic (NKR), international air communication, ICAO:

Ключевые слова: Международное воздушное право, аэропорт, Чикагская конвенция 1944г., ИКАО.

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ**

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և
հայցորդների 2013թ. նստաշրջանի
նյութերի ժողովածու**

Էջադրումը՝ Ա. Պետրոսյանի

**Չափսը՝ 60x84¹/₁₆: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 24 տպ. մամուլ:
Քանակը՝ 100:**

ԵՊՀ հրատարակչություն

0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1